Արտաշես Քալանթարյան

ԻՆՉՈ՞Ւ ՏՐՈՐԵՑԻՐ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Պատմվածքներ

Երևան «Արևիկ» 1988

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մուսա լեռան զորավարը 4

Եփրատը կարմիր կհոսեր 33

Հեռախոսագրքեր 60

Կոալաներ 69

Հայրը ժպտում էր 80

Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները 89

Լախտի 99

Վերջին նկարը 104

Ծերունին 108

Երգը 112

Պարտքը 116

Կսկիծ 125

Ձայներ 132

Իզաբել 144

Բարեւ, եղբայր 151

Նա նորից այնտեղ է, դահլիճում 167

Կոշիկներ 172

Հողի ոիժը 177

Տերեվաթափ 194

Ոչինչ չեմ հասկանում 196

Ուրախ ու տխուր մարդը 203

1. Կարճված գործը 211

2. Հրդեհը 236

3. Մատուցողը 248

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ոսկե ձկնիկը 273

Շերլոկ հոլմսը հրազդանի ձորոիմ 276

Անելանելի վիճակ 281

Հարգելի պատճառ 286

Հնազանդեցնողը 292

Իմ խելոք բալիկները 297

Երեք անհայտով հավասարում 302

Ինչ բան է ծիծաղը 318

Անակնկալ 323

Տառապանքի ուղիներով 330

Թույնի կաթիլներ 332

Նվերը 337

Համերգ պատշգամբիմ 340

Խղճի գիշերային այցը 345

Երբ լսափողը անբանի ձեռքին է 351

Դժբախտություն 356

Կատակ 364

Մո՞ւկ թե՛ կատու 368

Մանկության համը 372

Զրույց նարդու սեղանի շուրջը 375

Իմ շրջապատը 381

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մուսա լեռան զորավարը

Տարիներ առաջ, Երևանում, մայիսմեկյան շքերթին, հազար – հազար մարդկանց հետ մի ծերունի էլ կար: Իրար շտապեցնող, հրող, աղմկող խանդավառ մարդկային հեղեղի մեջ այդ մարդը նման էր անողորկ ու մամռակալ մի լեռնակտորի, որ կանգնած էր հաստատուն, հողին հենված, մի քիչ բարձր բոլորից ու բոլորից էլ մի քիչ թախծոտ: Զորավարի պես գլուխը վեր պահած, կկոցած, գնահատող աչքերով նայում էր մարդկանց, ու թվում էր, թե հիմա ուր որ է՝ կմեկնի ձեռքը ու կողջունի շարքերին, ու թվում էր, թե հենց ինքը, այդ լեռնոտ ծերունին է շքերթն ընդունում:

Երկնքում, օդը սուլոցով ճեղքելով եկան, ինքնաթիռներ անցան: Ծերունին բարձրացրեց գլուխը, ձեռքի ափով ճակատն ստվերած՝ նայեց վեր, շարժվեց անհանգստացած, ժպտաց խիստ աչքերով ու ինչ – որ խոսքեր ասաց թավ, երկար բեղերի մեջ: Որդին՝ Վարդգեսը, ականջ դրեց, մինչև որ ինքնաթիռների մի ցանց էլ անցավ ու լսեց, որ հայրը մրմնջում է:

— Եկուր, ձայնդ սիրեմ, ա՜խ, ձայնդ սիրեմ:

Զինվորական շքերթն սկսվեց: Հպարտ, վստահ քայլերով եկան ու անցան Երևանի կայազորի մարտիկները, սպաները՝ արևի տակ փայլող սրերով, զինվորները՝ նորագույն ավտոմատներն ամուր սեղմած, և ապա ավտոմեքենաներն ու զրահամեքենաները, տանկերն ու հրանոթները, ամենագնացներն ու կատյուշաները: Եվ այդ ամենը՝ ծնծղաների ցնծագին աղաղակների, ողջույնի հուժկու «ուռա» — ների ներքո: Սակայն ծերունին այդ ցնծագին աղաղակները չէր լսում, դրանց կարիքը չուներ: Տեղում տրորվելով, ոտքերի ծայրին բարձրացած, ագահ աչքերով անցնող զորքերին էր նայում, աշխատելով բաց չթողնել ոչինչ: Եվ նրա հոգում էին աղաղակում ծնծղաները, նրա հոգում էր հնչում «ուռան», նրա հոգում էր համաչափ, հաղթական օրորվում երաժշտապետի ծոպավոր կարմիր դրոշակը:

Տենդոտ, դողացող ձեռքով բռնեց մյուս որդու ուսը, բացականչեց ականջին.

— Հակոբ, օղլում, աս բոլորը մե՞րն է:

— Մերն են, բա ի՞նչ են,— ծիծաղեց որդին:

— Բոլո՞րը:

— Հա, իհարկե,— ասաց Հակոբը,— Երևանի զորքն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Վա՜խ, պատկերդ սիրեմ, պատկերդ սիրեմ:

Նա այլևս չէր մրմնջում: Ձենքերի տեսքից արբած, օրորվելով մոտենում էր շքերթից դուրս եկած ու հրապարակում զբոսնող սպաներին, գրկում, համբուրում էր նրանց, համբուրում էր կրծքներին շողացող շքանշանները, շոյում էր զենքերը, ժպտում էր թաց աչքերով: Սպաները ներողամիտ ժպտում էին, խփում էին նրա ուսին. «Շատ ես խմել,— ասում էին,— հայրիկ», բարեհոգաբար ծիծաղում էին. «Շատ ուրախ ծերուկ է»,— ասում էին: Ու հանկարծ լրջացան միանգամից, երբ ծերունին էլ լրջացավ ու նայելով նրանց մշուշված աչքերով, հառաչելով ասաց.

— Իսկ ես մի փամփուշտի համար Հալեպ կհասնեի:

Լռեցին, զգացին անմիջապես, որ իրենց առջև սովորական մեկը չէ կանգնած, այլ զինվոր, նախկին, ինչ – որ մի ժամանակի զինվոր, զենքի եղբայր: Բայց չգիտեին նրանք, և որտեղի՞ց կարող էին իմանալ, որ անողորկ, քիչ մամռապատ ծերունին սովորական զինվոր չի եղել միայն, այլ մի մարդ, որի անունը լսելիս սոսկում էին թշնամիները, մի մարդ, որի մասին հայ մամիկները երգեր էին հյուսում ճախարակների մոտ, կամացուկ երգում օրորոցների կողքին ու խնդրում աստծուց, որ իրենց երեխաներն էլ նմանվեն նրան, նրա պես պատվով լինեն ու բարի, խիզախ լինեն ու հեռատես: Չգիտեին նրանք, և որտեղի՞ց կարող էին իմանալ, որ ուրախությունից արբած այդ ծերունին Սուետիայի հայ բնակչության փրկարարներից մեկն է, Ֆրանց Վերֆելի հռչակավոր վեպի գլխավոր հերոս Գաբրիել Բագրատյանի նախատիպը, Մուսա լեռան լեգենդար պաշտպանների հրամանատար Եսայի Յաղուբյանը:

Սիրիայում, պատմական Անտիոք քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Մուսա (Մովսեսի) լեռան լանջին, հայկական հին Յողանօլուք գյուղում, արհեստավոր գյուղացու ընտանիքում 1877 թվականին ծնվեց մի մանուկ ևս: Հարևաններն աչքալուսանքի գնացին տուն, խավիծ եփեցին ու իրենց այգիներից խնձոր ու նարինջ տարան ծննդկանին, կապույտ հուլունք կապեցին թուխ տղայի կրծքին, որպեսզի չար աչք չդիպչի նրան, երգեցին հին – հին երգեր, խառնելով հեթանոսականն ու քրիստոնեականը ու մաղթեցին, որ նա երկար կյանք ունենա, բարի քրիստոնյա լինի, պինդ մեջք ունենա ու ճարպիկ ձեռքեր, որպեսզի իր պապերի պես կարողանա մշակել պստիկ հողակտորը և փայտից ու ոսկորից սանրեր պատրաստել՝ իր պապերի նման:

Եվ անունը Եսայի դրին:

Ու մեծացավ Եսային: Հուսախաբ չարեց ծնողներին ու հարևաններին, սովորեց մշակել հողը ու հասկանալ ծառերի լեզուն, սովորեց սանրեր պատրաստել փայտից ու ոսկորից, որ շատ լավ վաճառվում էին Սուետիայում, Անտիոքում ու Հալեպում: Հայրը երբեմն – երբեմն նրան էլ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հետն էր տանում շուկա, սակայն հետո դադարեց: Անընդհատ անախորժության ու կռվի մեջ էր ընկնում նրա պատճառով, ստիպված լինում տուգանք վճարել սրան ու նրան: Շուտ բռնկվող, անհնազանդ տղա էր: Բավական էր, որ մեկը թուրքերեն հայհոյեր նրա հորը, կամ որևէ հայի: Մեծերը ձայն չէին հանում հաճախ, կծկվում էին մի տեսակ, իսկ Եսային՝ չէ: Եթե հայհոյողն իրեն հասակակից էր, տեղն ու տեղը հարձակվում էր նրա վրա ու չէր հանգստանում, մինչև որ նրան չէր տեսնում գետնին տարածված: Իսկ եթե տարեց մարդ էր կամ նույնիսկ ոստիկան, հետևում էր վիրավորանքից այրվող աչքերով, որևէ տեղ, հոր աչքից հեռու, քարով հեռվից խփում էր անարգողի թիկունքին ու փախչում, խառնվում բազմությանը: Նրան հաճախ էին ծեծում ու մի անգամ էլ հայրը խփեց, երբ սանրերի վաճառքից գոյացած ողջ գումարը ոստիկանների չաուշին կաշառք տալով, պատառոտված շորերով որդուն դուրս բերեց ոստիկանատնից: Տղան երբեք լաց չէր եղել, բայց այս անգամ հեկեկաց վիրավորանքից ու հորը նայեց ատելությամբ, խղճահարանքով, արցունքոտ աչքերով:

— Թուրք ոստիկանն ալ կծեծե, դուն ալ, հա՞... Ինչո՞ւ էնոր ալ չես ծեծեր, կվախնա՞ս:

Հոր սիրտը ճմլվեց: Նա մի մարդ էր, որ երկար էր ապրել աշխարհում, լեռների վրա էր ապրել ու կարող էր չասել մտածածը: Սակայն, երբ դուրս եկան Սուետիայից և Յողանօլուքի բարակ ու փոշոտ ճամփան բռնեցին, երբ ողջ աշխարհում մնացին հայրը, որդին ու նիհար, ծեր ավանակը, նա այլևս չկարողացավ զսպել իրեն ու տղայի նկատմամբ ունեցած իր ողջ ցավը, ողջ գութը, ողջ տագնապը, ողջ քնքշությունը խոսքերի մեջ դրած՝ գոռգոռոցով բացատրեց նրան հայի անմեկնելի ճակատագիրը, այդ անարդար, անհասկանալի, անհեթեթ ճշմարտությունը: Նա ասաց, որ հայեր են իրենք, որ իրենց գյուղը հայկական է, որ հայկական են նաև Հաջի Հաբիբլին, Վաքըֆը, Խըդր Բեգը, Բիթիասն ու Քեբուսիեն, բայց դա ոչինչ չի նշանակում, որովհետև երկիրը հայկական չէ, որ թեև իրենք այստեղ շատ ավելի վաղուց են բնակվում, քան թուրքերը, սակայն դա էլ ոչինչ չի նշանակում, որովհետև սուլթանի հպատակներն են ու նրա ողորմածությամբ է, որ իրենց թույլ են տալիս ապրել ոչ միայն այս-տեղ, այլև աշխարհում: Նա ասաց, որ այդ պատճառով էլ իրենք պարտավոր են միշտ զիջող ու հնազանդ լինել, աշխատել չգրգռել իշխանություններին, ժամանակին վճարել տուրքերը,որքան էլ ծանր լինեն դրանք, համբերությամբ տանել անարգանքն ու վիշտը որպես խաչ, որովհետև այդպես է կամեցել աստված: Անեծք կա հայի վրա: Եվ աստված է՛լ բեթարից ազատի, ասաց նա, որովհետև լուրեր են հասնում, թե սուլթան Համիդի հրովարտակով հեռու, արևելյան շրջաններում հայերին հանում են իրենց գյուղերից, անապատ վայրեր են տանում ու տեր են դառնում նրանց ունեցվածքին, իսկ չենթարկվողներին կոտորում են:

— Ինչո՞վ:

— Ինչո՛վ, ինչո՛վ... թուր ու թվանքով, ինչո՞վ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տղան ապշեց: Իսկ հայերն ինչո՞ւ են թողնում, որ իրենց կոտորեն, իրենք թուր ու թվանք չունե՞ն, ինչ է: Թող պաշտպանվեն: Հայրը տխուր ժպտաց: Հայերին չի թույլատրվում զենք պահել, ասաց նա, և հետո ի՞նչ կարող են անել նրանք, երբ սուլթան կա, զորքեր կան...

Հեռվում երևաց Յողանօլուքը՝ անտառների ու այգիների մեջ կորած, լեռնալանջերից իջնող այծի հոտերով, կուշտ շների ծույլ հաչոցներով ու խաղաղ ծխացող երդիկներով, որ ասես բուրվառների խնկարկումը լինեին Մուսա լեռն ի վեր ձգված, իբրև փառաբանություն՝ անխոով իրիկնամուտի: Տղան մի պահ մոռացավ աշխարհում ամեն ինչ, կանգ առավ ու զմայլված, հափշտակված իրենց գյուղին էր նայում ու լեռան անառիկ, խիստ կատարներին, որ ամպերից ելել, երկնքի մեջ էին մխրճվել ու ձուլվել երկնքին: Հետո նայեց հորը՝ ճակատը կնճռոտած միանգամից մեծացած ու հարցրեց.

— Հապա, եթե թուրքերը մեզ Յողանօլուքից հանեն, ի՞նչ պիտի ընենք:

Հայրը կանգ առավ կաթվածահարի պես, խաչակնքեց արագ, ջերմեռանդորեն, սարսափած նայեց որդուն ու սրտի հին, ահավոր տագնապը խեղդելով, խռովված, խուլ ձայնով ասաց.

— Փառք աստծո, ինչո՞ւ պիտի հանեն, մենք խաղաղ, հնազանդ կապրինք մեզ համար:

— Եթե հանե՞ն,— համառ, չար կրկնեց Եսային, — ի՞նչ պիտի ընենք: Ո՛չ թուր ունինք, ո՛չ թվանք:

— Դե, դե, փակե բերանդ, վախցիր աստծուց, օղլում,— արդեն կոտրված, տխուր ասաց գեղջուկը՝ կրկին խաչակնքելով ու դեմքը երկյուղածությամբ դարձրած դեպի եկեղեցին, որի դեղնավուն խաչը հիմա, մթնշաղի մեջ, ասես Մուսա լեռան պարանոցին լիներ կախված, և որի զանգերը իրիկնային աղոթքի էին հրավիրում յողանօլուքցի հոգնած հավատացյալներին:

Իսկ տագնապալի լուրերը շարունակեմ էին գալ, ավելի ու ավելի որոշակի ձևեր առած, ավելի ու ավելի ահախառն: Եվ հարցը, որ տվեց պատանի Եսային խաղաղ, տաք մի իրիկուն, արդեն ուրիշներին էլ էր մտահոգում, արդեն ուրիշներն էլ էին տալիս: Իհարկե, դեռ շատ – շատ գյուղացիներ, հատկապես քիչ թե շատ հարուստները, Թուրքիայում կաշառքի ամենազոր ու փորձված ուժից ելնելով, վստահ էին, թե ոչինչ էլ չի պատահի Սուետիայի հայերին ու հայտնի թռչունի նման գլուխներն իրենց տներում թաքցրած, փորձում էին հեռու մնալ արհավիրքներից: Սակայն շուտով, շատ շուտով արհավիրքներն իրենք վրա հասան. 1894 — 97 թվերին, սուլթան Համիդի «ողորմածությամբ», թուրքիայի հայկական գյուղերն ու քաղաքները հազարավոր անմեղ հայերի արյունով օծվեցին և էլի ու էլի հազարավոր անմեղ հայեր, իրենց բարեբեր հողերն ու շենները թողած, բռնեցին անհույս ու օտար երկրների ճամփան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ արդեն... շատերի մեծ մասն էլ հասկացավ վերջապես, որ խոսքը լավ ու վատ հայերին չի վերաբերում, հնազանդ ու անհնազանդ հայերին չի վերաբերում, այլ ընդհանրապես հային: Եվ որ փրկվելու համար մի ելք կա միայն՝ չսպասել մորթվելու իր ժամին, այլ զինվել, դիմագրավ լինել, պաշտպանել իր իրավունքն ու պատիվը: Եվ Սուետիայի գյուղացիությանը այդ գաղափարին հասցնելու գործում մեծ երախտիք անեին Եսայի Յաղուբյանն ու նրա ընկերները: Նրանք արդեն այն պատանիները չէին, որ փայտե հրացաններով կռիվ – կռիվ էին խաղում Մուսա լեռան ծերպերում, ապա հաղթական հարձակում գործում սրա կամ նրա այգու վրա: Հիմա հաճախ լեռն էին բարձրանում նրանք, սակայն ո՛չ անհոգ խաղալու: Այլ որպեսզի մտածեն, մտածեն, մտածեն, թե ինչպես ընդդիմանան թշնամուն, որտեղից դրամ գտնեն զենք գնելու, սուետահայերին զինելու համար: Եվ այդ խորհրդակցություններից մեկում էլ որոշվեց մարդիկ ուղարկել աշխարհի այն երկրները, որտեղ նախկին, հարուստ մուսալեռցիներ կան, օգնություն խնդրել նրանցից:

1902 թվականին Եսայի Յաղուբյանը մեկնեց Ամերիկա: Ոսկու և գազազած տեխնիկայի երկիրն առանց որևէ հրճվանքի ընդունեց մուսալեռցի պատանուն: Պարզվեց, որ հեռվից հարուստ թվացող, լուսանկարներում ծովափին, արմավենիների տակ լայնեզր գլխարկ դրած ու պճնամոլի ձեռնափայտ բռնած հարազատներն ու բարեկամները, և հենց ինքը, Եսայու՝ Ամերիկայում ապրող եղբայրը, շատ էլ փայլուն վիճակում չէին, հազիվ էին պահպանում իրենց գոյությունը և չթաքցրած նախանձով էին նայում իրենց աղքատ հայրենակցի թուխ, քամահար, առողջ դեմքին: Սակայն մեծ էր Եսայու եռանդը և անհուն՝ վճռականությունը:

Երկար թափառումներից հետո, համառ թախանձանքներից հետո, նրան այնուամենայնիվ հաջողվեց որոշ գումար ձեռք բերել, որով կարելի էր զինել գոնե մի փոքրիկ ջոկատ, և վերադարձավ հայրենիք: Ընկերներն էլ քիչ բան չէին արել: Զենքերը խնամքով յուղեցին, փաթաթեցին անջրանցիկ նյութերով ու պահ տվեցին հողին, Մուսա լեռանը: Յաղուբյանի և նրա ընկերների գործունեությունը, սակայն, գաղտնի չմնաց: Եվ նրանք ստիպված էին ընդհատակ անցնել, տարիներ շարունակ ապրել լեռներում, հայդուկի կյանքով, ու հովիտ իջնել միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր վրեժ լուծեք այս կամ այն լկտիացած, հղփացած ոստիկանից ու հարկահավաքից, որ տանում էին մարդկանց վերջին ինչքը, ու տանելով՝ անարգում, ստորացնում նրանց միաժամանակ: Նման հարկահավաքներից մեկին Յաղուբյանը հանդիպեց Վաքըֆ գյուղում, ուր գնացել էր ընկերների համար ուտելիք բերելու: Նա գյուղի հայ մուխթարի (գյուղապետի) տուն մտավ այն ժամանակ, երբ նրա ընտանիքը ճաշում էր: Հինգ – վեց փոքրիկ երեխաներ, հաճույքից կարմրատակած, թանապուր էին ուտում փայտե ամաններից: Մուխթարը Եսայուն էլ հրավիրեց և ճաշելիս պատմեց, թե երեք օր է, ինչ լաց ու կոծ է գյուղում: Հարկահավաք է եկել զափթիեների մեծ ջոկատով, թուրքական գյուղերում խեղճ գյուղացիների վերջին ունեցվածքը խլելով, կողոպտելով եկել, հասել է այստեղ, շրջում է տները ու վերցնում այն ամենը, ինչ դուր է գալիս իրեն: Հայհոյում է,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հետապնդում հանդիպած սիրուն աղջիկներին, առանց որևէ առիթի հրամայում մտրակել մարդկանց:

— Փորձեցի կաշառել, որպեսզի մեզ հանգիստ թողնի, ոսկին վերցրեց ու հռհռաց. «Էս ի՞նչ է որ: Ես իմ կաշառքը ինքս կվերցնեմ ձեր տներից»: Մեր գյուղի հարուստներից մեկը աղ ու հացով նրա առաջը եկավ, խնդրեց շնորհ անել իրենց տուն, ասաց, որ ուզում է պատվել թանկագին հյուրին ու նրա ծառաներին: Հարկահավաքը ճչաց, քացով տվեց, գետնին նետեց աղն ու հացը. «Ի՞նչ, մենք ձեր ձեռքից հա՞ց ուտենք, խոզեր: Ծաղրո՞ւմ եք մեզ, հա՞»: Ու նրա հրամանով ծեծեցին մարդուն, քշեցին կովն ու այծերը: Ի՞նչ անես, ո՞ւմ բողոքես, ո՞ւմ դուռը գնաս:

Մուխթարը լաց եղավ երեխայի պես, ցուցամատով քամեց աչքերը, ու արցունքի կաթիլները, դանդաղ գլորվելով, անհետացան թուխ, դողդողացող մորուքի թելերում:

Եսայու դեմքը սարսափելի էր: Կատաղությունից ճերմակած շուրթերով ուզեց ինչ – որ բան ասել: Չկարողացավ, շնչահեղձ էր լինում: Հետո հևաց.

— Հապա որ ես կասե՞մ, հապա որ կասե՞մ: Ու մենք մարդ ենք, հա՞: — Հայհոյեց երկար, մոռանալով իրեն էլ, երեխաներին էլ, աշխարհին էլ: —Մեր հացը չեն ուտում: Իսկ մի հարցնող լինի, թե ո՞վ է լափում մեր տներից տարածը, մեր երեխաների հացը: Ես կսպանեմ էդ շան որդուն:

Ասես նախախնամության մատն էր, որ նույն պահին հարկահավաքին ստիպեց իր ջոկատով անցնել գյուղապետի տան մոտով:

— Սա է, հա՞,— իրեն կորցրած հարցրեց Եսային:

— Հա,— սարսափեց գյուղապետը,— հիմա որ քեզ տեսնի...

— Հիմա ե՛ս եմ ուզում նրան տեսնել, ե՛ս: Եվ դու կօգնես ինձ: Հենց հիմա դուրս եկ ու նրան տուն հրավիրիր: Ինչ ուզում ես հնարի, իմ գործը չէ, կանչի՛ր:

— Գժվե՞լ ես, այ տղա, — գունատվեց մուխթարը,— ուզում ես քանդե՞լ տունս:

— Քեզ կսպանեմ, եթե չկանչես, — սպառնաց Եսային, ու նայելով կատաղությունից աղավաղված նրա դեմքին, գյուղապետը երերուն քայլերով դուրս գնաց:

Քիչ հետո ճռճռաց արտասանդուղքը, բացվեց դուռը ու սենյակ մտավ հարկահավաքը, հարևանցի մի հայացք գցեց գեղջուկի շորերով, փափախավոր Եսայուն, ապա, ետ դառնալով, զայրացած դիմեց գյուղապետին, որը դողում էր դռների մեջ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Բա ո՞ւր է Ամերիկայից եկած պարոնը: Իսկ սա՞ ով է:

Հաջորդ վայրկյանին Եսայու ձեռքին կարճափող հրացան կար:

— Ես եմ այդ պարոնը, մոտ եկ, խնամի,— շշնջաց նա հոգուն հանկարծակի իջած թեթևությամբ ու իր սառնասրտությունից ինքն էլ շշմած: — Ձայն չհանես, թե չէ, կպայթեցնեմ գլուխդ: Մերոնք գյուղի տակ իմ կրակոցին են սպասում:

— Ախր, ի՞նչ ես ուզում, ա՛յ բալամ,— զինված մարդու առջև մի վայրկյանում խեղճացավ, դողաց, ծնկներին ընկավ հարկահավաքը:

— Նախ՝ ամբողջ անասունը կթողնեք ու կկորչեք գյուղից, թե չէ գիշերը շան պես կկոտորեմ բոլորիդ էլ: Իսկ հիմա՝ կեր:

Նա վախիցը պապանձված երեխաների առջևից վերցրեց նրանց թանապուրի կիսատ – պռատ ամանները, նրանց բրդած պարունակությունը մեկի մեջ լցրեց ու ձախ ձեռքով մեկնեց ծունկի եկավ հարկահավաքին:

— Դե կեր, շո՛ւն, կեր մեր հացը, չես սատկի:

— Ալլահ, ալլահ,— տրորվեց, աղերսանքով ձեռքերը երկինք պարզեց թուրքը,— ա՛յ բալամ, ախր մեր հավատն արգելում է...

— Իսկ մեր հավատը թույլ է տալիս: Կեր: Այսինքն՝ ինքդ որոշիր, գնդակ, թե թան:

Հարկահավաքն այլևս չտատանվեց: Իսկ երբ դուրս էր եկել արդեն ու առանց ետ նայելու, զափթիեների զարմացած, տարակուսած հայացքի տակ ձին նստած հեռանում էր, գյուղապետը նոր միայն խոսելու ընդունակություն ստացավ:

— Գի՛ժ, գի՛ժ, ես մեռա, էս ի՞նչ բերեցիր գլուխս: Բա որ հայտներ զափթիեներին: Ախր տուն – տեղով կկորչեինք:

— Չէր հայտնի: Լավ գիտեմ դրանց, — վրեժը լուծած մարդու երջանիկ ժպիտով ասաց Եսային: — Էդպիսի մեկը կմեռնի, բայց իր ենթակաների մոտ չի խոստովանի, որ հայը ստորացրել է իրեն, ստիպել, որ խախտի հավատը: Հավատը թույլ չի՛ տալիս: Իսկ թույլ տալիս է թալանել ու սպանել...

Մոտ քաշեց թանապուրի իր ամանը, լավ բրդեց ու կերավ՝ երկար ժամանակ լեռներում ապրած, ջրիկ ճաշի կարոտ գյուղացու ախորժակով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սև գիշեր, սև գիշեր, սև գիշեր... Քամին ծովափի ավազն է խախալոում, դիզում խոշոր շեղջերով, որպեսզի անմիջապես էլ ցրիվ տա նորից ու քշի, տանի, հեռացնի, ճամփա բացի ալիքների համար: Ու ալիքներն էլ չեն սպասեցնում, շառաչյունով զարկում են ափին, ետ քաշվում՝ դղրդյունով ծովը տանում ավազը, ծառս են լինում, կանգնում աներևույթ պոչերի վրա, քարանում մի վայրկյան, ու նորից զարկում ուժգնորեն, զարկում խելահեղ: Ու թվում է, թե ահա, հաջորդ հարվածին, Կիպրոսը չի դիմանա այլևս, թե ահա հիմա ուր որ է կղզին կպոկվի հիմքից ու հողմին գերի, հողմին խաղալիք, անտեր նավակի նման կտարուբերվի ալիքների վրա:

Ափին, ձկնորսական լքված մի խրճիթում, օջախի մոտ թիկնել, մտքերի մեջ է ընկել Եսայի Յաղուբյանը: Արդեն երկու օր է, ինչ փոքրիկ նավակը պատրաստ պահած, ծովի խաղաղվելուն է սպասում, որպեսզի տարերքից էլ խելահեղ մի որոշմամբ թիավարի դեպի Մուսա լեռ, դեպի իր հայրենիքը: Այլ ճանապարհ չկա: Եղբայրները, նախկին եղբայրները՝ երիտասարդ թուրքերը փակել են ճանապարհը: Ավելի ճիշտ, ոչ թե փակել, այլ սահմանային յուրաքանչյուր ուղեկալի հայտնել են նրա արտաքին նշանները ու պատվիրել խստորեն՝ նրան ձերբակալելուն պես ներկայացնել Անտիոքի գայմագամին (գավառապետին) կամ էլ անմիջապես Հալեպ:

Եղբայրնե՛րը... Այսինքն, շուտով, երիտասարդ թուրքերի՝ իշխանության գլուխ անցնելուց քիչ հետո, երբ Եսային ու նրա ընկերները իջան լեռներից, նրանց պարզ դարձավ, որ ոչ մի փոփոխություն էլ չի եղել փաստորեն: Սուլթանի կոշտ ու կոպիտ, անբարետես ծառայողների փոխարեն պաշտոնական սեղանների ետև հիմա կոկլիկ, եվրոպական հագուստներ հագած, նիհար ու բարեհամբույր մարդիկ էին նստած: Ահա՛ ողջ տարբերությունը: Մնացած ամեն ինչը նույնն էր. նույն արհամարհանքը, նույն ատելությանը, նույն հալածանքն ու կողոպուտը: Բայց առայժմ ո՛չ թացեիբաց, ո՛չ հրապարակայնորեն, ո՛չ մտրակի տակ, այլ բարեկիրթ շարժումներով սքողված, առանձնասենյակներում, օծանելիքի ու գերմանական սիգարների հոտով ու ծխով մշուշված:

Այդ պատկերը սկզբում շատ գայթակղեցուցիչ էր ու հավատ էր ներշնչում նաև այն պատճառով, որ երիտասարդ թուրքերի հետ միասին հայտնվել էին նաև հայեր: Էլի եվրոպական հագուստներով, թիթեռնիկ ժապավեններով ու ակնոցներով: Խոսում էին ուրիշ տեսակ, անուշ հայերենով, խոսում էին ոգևորված, ներշնչված, հավատով ու օգտագործում այնպիսի բառեր, որոնք անհասկանալի էին և գուցե հենց դրանով էլ տակնուվրա էին անում սուետահայերի հոգին: Եվ հիմա հաճախ էին սանրագործն ու մաղազործը, շերամաբույծն ու այգեգործը գյուղամիջյան ճանապարհներին միմյանց հետ խոսելիս՝ որպես շքեղություն, որպես փայլ, որպես հայելի կամ գրպանից հանած նորաձև հրահան՝ օգտագործում «մանդատ» և «պրոտեկտորատ», «անկախություն» և «եղբայրություն» բառերը: Խաղաղություն, հանգստություն իջավ Մուսա լեռանը: Եսային հարսնախոս ուղարկեց համագյուղացի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բողոքական Պողոս աղայի տուն, խնդրեց նրա աղջկա՝ Իսկուհու ձեռքը: Մեծ, լավ հարսանիք արեցին: Նվագը թնդում էր Յողանօլուքում, գյուղն ամբողջ գիշեր Յաղուբյանենց ծառերի տակ հավաքված խմում, պարում էր՝ դոփելով կանաչին ու շրջան գծելով ընկուզենու տակ: Ու երգում էին հին երգեր, պայծառ, զրնգուն ձայնով, երգում էին ուրախ, հարսանեկան երգեր:

Ու չգիտեին նրանք, որ իրենցից շատ հեռու, Ստամբուլում, հենց նույն օրերին, եվրոպական հագուստներ ու ազգային ֆեսեր հագած նիհար ու բարեհամբույր մարդիկ՝ երիտասարդ թուրքերը, եղբայրության մի կողմի «եղբայրները», նույնպես անքուն գիշերներ են անցկացնում, ծրագրելով սգատուն դարձնել Եսայի Յաղուբյանի հարսանքատունը, հայկական նահանգներն ու գյուղերը:

Չգիտեին նրանք: Բայց ոմանք զգում էին: Ոմանք ուշի – ուշով հետևում էին Թուրքիայի հայկական շրջաններում տեղի ունեցող իրադարձություններին, մտաբերում ոչ հեռու անցյալի նման «անդորր» ժամանակները և դրանց հետևող կոտորածները ու ժողովրդին համոզում աչալուրջ լինել, պատրաստ լինել ինքնապաշտպանության: Եվ նրանցից մեկը Եսայի Յաղուբյանն էր, իրադրության այդ նուրբ ու զգայուն չափող սարքը, կիսագրագետ ու տաղանդավոր գործիչը:

Շուտով ոստիկանությունը կրկին սկսեց հետաքրքրվել Յաղուբյանով: Մի քանի անգամ թերևս հրաշքով, կամ ավելի ճիշտ՝ ներքին զգացողությամբ, նա հազիվ կարողացավ խուսափել ծուղակներից: Սակայն դա երկար շարունակվել չէր կարող: Եվ ընկերների պահանջով Յաղուբյանը կրկին հեռացավ հայրական տնից ու կրկին հայտնվեց Ամերիկայում:

Երեք տարի շարունակ նա արեց այն ամենը, ինչ անում է Ամերիկայում հայտնված յուրաքանչյուր օտարերկրացի: Փորձեց միլիոնատեր դառնալ: Տասնյակ մասնագիտություններ փոխեց ու տասնյակ քաղաքներ անցավ, ամեն ինչ արեց, որպեսզի հարստանա: Բայց հարստանա ոչ թե ինչպես յուրաքանչյուր օտարերկրացի, այլ ինչպես ջեկլոնդոնյան մեքսիկացին, հեղափոխության զինվորը: Զրկեց իրեն ամեն ինչից, ամենածանր ու ամենավտանգավոր աշխատանքները հանձն առավ, որպեսզի շատ ստանա, շատ – շատ դրամ: Կիսաքաղց կյանք վարեց՝ կուտակելով կոպեկ առ կոպեկ՝ որպես փամփուշտ, որպես հրացաններ, հրացաններ, հրացաններ՝ Մուսա լեռան վրա...

Եսային բարձրացրեց գլուխը, ականջ դրեց քամու ձայնին ու ավելի շուտ սրտի տրոփյունից՝ զգաց, որ ծովը քիչ խաղաղվել է: Գուցե նորից փորձի: Երեք անգամ, երկու օրվա մեջ, նա փորձել էր փոքրիկ նավակը ծով դուրս բերել: Եվ երեք անգամն էլ ծովը չէր ընդունել մարդուն: Վերնաշապկի տակ կրկին ամուր, ցավեցնելու չափ ամուր սեղմեց լայն ու ծանր գոտին, իր երեք տարի կուտակած և հայրենակիցներից հավաքած ողջ հարստությունը, վերցրեց կապոցը, որի մեջ եվրոպական հագուստն էր, հացն ու ջուրը, ու դուրս եկավ խրճիթից: Քամին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կտրվել էր, ու ծովը կամաց – կամաց փախչում էր ափերից: Նա նավակը դեպի ջուրը քաշեց՝ կարոտից խելագար: Երեք տարի... Տեսնես ինչպե՞ս են մայրիկը, Իսկուհին, փոքրիկ աղջիկը, ընկերները: Հեռվում, օվկիանոսից այն կողմ և նույնիսկ վերադարձի երկար ու ծանր ճանապարհին, նա այդքան սուր չէր ապրել կարոտի զգացումը, որքան հիմա, երբ քիչ էր մնացել տուն հասնելուն, երբ տաք, փափուկ քամին արդեն նրան էր հասցնում հայրենի հողի շշմեցնող, քաղցր շունչը:

...Մի առավոտ, Մուսա լեռան ծովահայաց լանջի անտառում փայտածուխ պատրաստող երկու յողանօլուքցի զարմանքով մի նավակ տեսան, որ խաղաղ օրորվում էր ափից ոչ հեռու, ջրերի վրա: Նավակն առանց ղեկավարի սահում էր՝ քիչ թեքված մի կողմի, ջարդված միակ թիակի վրա: Իրար ձայն տալով ու հևոցով քննարկելով պատահարը, յողանօլուքցիները քարից քար ցատկելով ծովափ իջան: Մեկն ավելի շուտ հասավ նավակին, ձեռքով կառչեց կողքից, մի հայացք գցեց հատակին ու ճչաց: Երկրորդն էլ տեղ հասավ, քիչ անց, միմյանց օգնելով ու սրտապնդելով, նրանք նավակ բարձրացան: Հատակին, կիսով չափ ջրի մեջ, նավակի հետ տարուբերվում էր անկենդան մի մարմին, որը շրջելով, ածխագործները մեծ դժվարությամբ ճանաչեցին ամերիկայում կորած իրենց համագյուղացի Եսայի Յաղուբյանին:

Թե որքան ժամանակ էր մնացել ծովում, ինչերի էր հանդիպել և երբ էին ուժերը վերջնականապես լքել նրան, այդպես էլ չիմացան ոչինչ: Եսային չսթափվեց ոչ նավակում, ոչ էլ ծովափին: Մի քանի փորձից հետո համոզվելով, որ թեև կենդանի, բայց խոր ուշագնացության մեջ է, ածխագործները ուռենու ճյուղերից պատգարակ հյուսեցին և գիշերը նրան տարան Յողանօլուք:

Հազիվ էր ապաքինվել, երբ հայտնեց, թե մեկնում է Անտիոք: Ջուր անցան հարազատների խնդրանքը, Իսկուհու արտասուքն ու ընկերների հորդորները: «Ես Ամերիկայից նրա համար չեմ եկել, որ ձեռքերս ծալած նստեմ տանը,— կտրականապես հայտարարեց Եսային,— իսկ ինձ բռնելն այնքան էլ հեշտ չէ»:

— Զըղուր ձուգը, կտնձեն կը տինկվա (խորամանկ թռչունը կտուցի վրա կտնկվի),— ձեռքերը ծնկներին խփելով, վշվշաց մայրը:

Նրան պաշտպանեցին բոլորը: Ի՞նչ միտք ունի հենց այնպես թշնամու որջը մտնել, երբ այնտեղ շատերն են ճանաչում յողանօլուքցի «խառնակչին», երբ յուրաքանչյուր ոստիկան ու լրտես, պարգևատրության հեռանկարից խենթացած, նրան անմիջապես իշխանության ձեռքը կհանձնի: Եվ վերջապես, ի՞նչ նպատակ ունի Անտիոք գնալը: Այնտեղ, միևնույն է, մի հատիկ իսկ օրինավոր զենք չես կարող գտնել, բացի հնացած, իրենց դարն ապրած լայնափող չախմախավորներից: Եվ մեծ եղավ ներկաների զարմանքը, երբ Եսային հանգիստ պատաս-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խանեց, թե ինքը ոչ մի մտադրություն չունի Անտիոքից հրազեն գնելու: Պարզապես իրեն աղ է հարկավոր:

— Ա՞ղ,— կարծելով, թե կատակում է, հռհռացին բոլորը:

— Աղ,— լրջորեն հաստատեց Եսային:

Իսկուհին անմիջապես կողքի սենյակից քաշեց, ներս բերեց աղի փոքրիկ պարկը: Աղն ինչներիս է պետք, փառք աստծո, կես տարի հերիք կանի: «Գուցե վառոդ պատրաստելու մտադրություն ունի»,— եզրակացրին ոմանք: Եսային ծիծաղեց: Չէ, ի՞նչ վառոդ, ինչ բան: Պարզապես ինքը մտածում է աղի պաշար կուտակել, առանց որի ապրել չի լինի, երբ ինչ – որ ժամանակ ստիպված կլինեն Մուսա լեռ բարձրանալ: Ու հայտնեց, թե այդ միտքը իր մեջ ծագել է Չիկագո քաղաքում, երբ, ի համերաշխություն ամերիկյան պրոլետարիատի հետ, Չիկագոյի կաշեգործների նշանավոր գործադուլին մասնակցելու ժամանակ, ակամա, անգործությունից էժանագին կինոնկարներ էր դիտում: Կինոնկարներից մեկը պատկերում էր ոսկի որոնողների փոքրիկ մի համայնքի ծանր վիճակը: Հնդիկների բազմությունից պաշտպանվելու նպատակով, մի խոշոր քարայրում փակված, ունենալով մեծ քանակությամբ ուտելիք և ջուր, մարդիկ, սակայն, կործանվում են, որովհետև անտեսել էին աղը: Լնդախտից ու այլ համաճարակներից հյուծված, նրանք լիզում էին քարերը ու փորձում արտասվել, որպեսզի գոնե մասամբ հագեցնան սեփական արցունքով:

Պատմությունը խոր տպավորություն թողեց: Ընկերներից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցել այդ ձեռնարկին: Միայն առավել լավատեսները առարկեցին: Իհարկե, աղը շատ կարևոր բան է: Բայց ի՞նչ կարիք կա շտապելու, իշխանությունները դեռ առանձնապես չեն նեղում, ժամանակը կգա, աղ էլ կառնեն:

— Իսոր ընձի տէօր հուվ մը, վուղը ուտում քի կով մը (Այսօր ինձ հավ տուր, վաղը քեզ կով կտամ),— առածով հեգնեց Եսային, զգացնել տալով, որ ինքը չի հապաղելու, և որ իր վճիռն անխախտ է:

Հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում գավառի տարբեր վայրերից ջորիներն ու էշերը մանրիկ կտկտոցներով դեպի Յողանօլուք էին շտապում, համաչափ օրորելով քարաղի մեծ կտորներով լցված նախշուն խուրջինները: Եվ էլի մի շաբաթ յողանօլուքցի հարս ու աղջիկները, արցունքոտ աչքերով, կսկծացող մատներով, ձեռքերը փոխնիփոխ պտտեցնում էին երկանքները, աղում խոշոր քարաղը ու լցնում թիթեղյա մեծ ամանների մեջ, որ Եսային էր բերել ինչ – որ տեղից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ միայն այն ժամանակ, երբ աղով լի մոմապատված արկղները վստահելի տղաների օգնությամբ բարձրացված էին Մուսա լեռ, Եսային թեթևացած շունչ քաշեց ու ձեռնամուխ եղավ իր հիմնական՝ հրազեն գնելու գործի կազմակերպմանը:

Ձենք գնել… Թուրքիայում: Դրանից ավելի հանդուգն ու վտանգավոր արարք դժվար է պատկերացնել: Բայց, այնուամենայնիվ, Եսայի Յաղուբյանն ու իր ընկերները զենք էին գնում: Գնելը դեռ ոչինչ, փողով ամեն ինչ էլ կարելի է գնել աշխարհում, մանավանդ եթե հասնես Հալեպ կամ Անտիոք: Դժվարը այդ զենքը տեղ հասցնելն էր: Բոլոր ճանապարհներին և առանձնապես իջևանատներում վխտում էին ոստիկանները, զափթիեները, օրավարձով աշխատող լրտեսները: Եվ Եսային ու ընկերները անցնում էին նրանց արանքով, անցնում էին գիշերները, նեղ կածաններով, անցնում էին լայն ճանապարհներով՝ զենքերը մասերի բաժանած, թաքցրած հազար ու մի տեղ ու իրենք էլ հազար ու մի ձևի ծպտված: Ու այնպես պատահեց, որ առանց իրենց հեռավոր հայրենակցին ճանաչելու, նրանից մի քանի տարի հետո, կամ գուցե և հենց նույն տարիներին, սուետացի հերոսները մի քանի անգամ կրկնեցին հռչակավոր Կամոյի՝ Սիմոն Տեր —Պետրոսյանի խելահեղ սխրագործությունը:

Հալեպում զենքի գաղտնի առևտրով զբաղվող, մահմեդականությունն ընդունած տարեց մի հրեա Եսայուն հայտնեց, թե ինքը գերմանական քսան նոր հրացան է ստացել:

Քսա՛ն հրացան…

Ողջ գիշեր չքնեցին: Գտան երկու ջորի ու մի ավանակ: Գնեցին մեծ քանակությամբ խոզի կաշի ու ադամամութին, կաշիները բարձած, ու կաշիների արանքում՝ հրացանները, դուրս եկան Հալեպից: Երբ արեգակը ծագեց, փոքրիկ քարավանն արդեն հեռու էր քաղաքի դարպասներից: Առջևից արագ քայլում էր ավանակը, նրան հետևում էին ջորիները, որ բեռներից բացի, ջորեպաններին էլ էին տանում: Իսկ ամենից վերջում, սև, բարձրասրունք ձիուն նստած, ընթանում էր Եսային՝ եվրոպացի վաճառականի ճանապարհորդական հագուստով ու ծղոտե լայնեզր գլխարկով: Չնայած զենքի հետ կապված հաջողությանը, նա մռայլ էր մի փոքր, որովհետև ստիպված էր եղել սափրել բեղերը: Ու հիմա, շրթունքի վրա անընդհատ անսովոր զովություն զգալով, կամացուկ հայհոյում էր: Համարյա առանց որևէ պատահարի անցան ճանապարհի մեծագույն մասը: Եվրոպացի ճանապարհորդները, միսիոներներն ու վաճառականները հազվադեպ չէին Սիրիայի ճանապարհներին, այնպես որ անբեղ ու անմորուս վաճառականի ծղոտե գլխարկը ամենավստահելի անցագիրն էր:

Անտիոքում կանգ չառան, ուշադրություն չգրավելու նպատակով, և շարունակեցին ընթանալ դեպի Այներաբ: Բայց հազիվ էին դուրս եկել այդ փոքրիկ բնակավայրից, երբ հանդիպեցին զինվորական ջոկատի: Հրամանատարը տարեց մի յուզբաշի էր՝ երկար բեղ – մորուքով ու պարարտ փորով: Աշխատում էր իրեն ձիգ պահել թամբի վրա ու անընդհատ խոժոռ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հայացքներ էր նետում զինվորներին: Փոքրիկ քարավանը սկզբում որոշեց անտարբեր անցնել ջոկատի կողքով: Ջորեպանները, ըստ սովորության, բարևեցին զինվորներին, գլուխ խոնարհեցին յուզբաշու առջև: Զինվորները պատասխանեցին անկարգ, «վաճառականը» ձեռքը թեթևակի ծղոտե գլխարկին տարավ: Եվ արդեն անցել էին ջոկատից, երբ Եսային թիկունքին զգաց յուզբաշու սուր հայացքը: Հիմա ուր որ է կկանգնեցնի քարավանը: Եվս մի վայրկյան, և շրջվելով, Եսային մատով մոտ կանչեց յուզբաշուն:

Յուզբաշին տատանվեց: Ինքը որոշել էր ստուգել բեռները, բայց հիմա այդ գյավուրը մատով կանչում է իրեն: Եթե կանչում է մատով, ուրեմն կարևոր մարդ է, կոպտի՝ վայ թե գլխացավանքի մեջ ընկնի: Բայց չի էլ կարող մոտենալ, ի՞նչ կմտածեն զինվորները: Հեղինակության հարց է: Եսայու նշանով դրությունը փրկեց ջորեպաններից մեկը՝ միջահասակ, կրակոտ Պետրոս Տմլաքյանը: Նույն Պետրոս Տմլաքյանը, որ մի տարի հետո հերոսության հրաշքներ էր գործելու Մուսա լեռան վրա՝ որպես աշխարհազորի երեք հրամանատարներից մեկը, այն մարդը, որ մինչև վերջ հավատարիմ իր դավանանքին՝ պայքարեց Թուրքիայի կառավարական զորքերի դեմ և ընկավ հերոսաբար, 1921 թվականին, Մարաշի ճակատամարտում:

Պետրոսը ցած թռավ ջորուց, վազեց դեպի յուզբաշին, ձեռքը կրծքին դնելով խոնարհվեց ու հայտնեց, թե օտարականը, որ Հալեպի կուսակալի մոտ մարդն է և Անտիոքի գայմագամի թույլտվությամբ կաշվի առևտուր է անում, նրան բան ունի ասելու:

«Կուսակալ», «գայմագամ» բառերը մոգական ազդեցություն գործեցին: Յուզբաշու փայլուն այտերն այնպես շիկնեցին, ասես Հալեպի կուսակալն անձամբ ողջույն էր հղել նրան: Հետո հաղթահարեց հուզմունքը, խոժոռ հայացք նետեց զինվորներին, հրամայեց չշարժվել տեղից ու ինքը ձին դեպի Եսային քշելով, զինվորավարի պատվի բռնեց:

Յաղուբյանը ժպտաց բարեհամբույր ու Ամերիկայում սովորած իր անգլերենով ինչ–որ բան ասաց Տմլաքյանին, և վերջինս էլ նրան պատասխանեց նորից Ամերիկայում սովորած իր անգլերենով:

— Պարոնն ի՞նչ է հարցնում, — «պարոն» բառը շեշտելով, Պետրոսին դարձավ յուզբաշին, որ կյանքում Իզմիրի զինվորական դպրոցից այն կողմ չէր անցել:

— Հարցնում է, թե պարոն գնդապետը չի՞ համաձայնի արդյոք ուզեկցի իրեն դեպի հայկական գյուղերը: Պարոնն ասում է, թե վախենում է ավազակներից:

«Գնդապետ» բառի վրա դարձյալ մանկան պես շիկնած յուզբաշին խոր գլուխ տվեց Եսայուն և, շողոքորթ հայացքը նրանից չհեռացնելով, սկսեց երկար բողոքել հայերից: Անաղուհաց մարդիկ են, անընդհատ հարստանում են իրենց հաշվին, բայց չեն բավարարվում,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ավազակություն են անում: Դրա համար էլ իրենք ստիպված օգնում են ոստիկանությանը, հսկում ճանապարհները: Թուրքիայում ինչքան ավազակի հանդիպես, հայեր են: Եթե ինքը հիմա ծառայության մեջ չլիներ, իհարկե կուղեկցեր պարոնին, բայց... պարոնը կարող է հանգիստ լինել, որովհետև իրենց ետևից իր զորամասի մյուս ջոկատներն էլ են գալիս, զինավարժությունից են վերադառնում: Այնպես որ, վախենալու հարկ չկա...

Եսային գրպանից թուրքական մի ոսկեդրամ հանեց: Յուզբաշին ետ – ետ գնաց, ձեռքերը թափահարելով ու թախծոտ հայացքը չկտրելով դրամից: Հետո նորից մոտ եկավ, բայց դրամը վերցրեց միայն այն ժամանակ, երբ Պետրոսը բարձրաձայն ասաց.

— Վերցրու, վերցրու, աղա՛: Էս գյավուրը թեև շատ ազդեցիկ դեմք է, բայց միամիտ մարդ է, հերիֆ, մեր փողերից բան չի հասկանում: Արի մեզ հետ, էլի կտա...

Յուզբաշին քրքջաց՝ նայելով Եսայու իսկապես միամիտ դեմքին, ուրախ, որ օտարականը ոչ մի բառ չի հասկանում և դարձյալ ուրախ, որ իր մոտ ծաղրում են այդ միամիտ, ազդեցիկ գյավուրին:

Նա ջոկատի հրամանատարությունը օնբաշուն հանձնեց, երկու զինվորի հրամայեց հետևել իրեն, ու քարավանը, վստահելի պաշտպանության ներքո, շարունակեց իր ճանապարհը դեպի Յողանօլուք, անցնելով զինվորական մի քանի ջոկատների կողքով, որոնց զինվորները, իրենց հրամանատարին տեսնելով, ձգվում ու դոփում էին գետինը: Յուզբաշուն, ինչպես երևում է, շատ էին դուր եկել Պետրոսի խոսքերը, որովհետև մերթ ընդ մերթ հիշելով, քրքջում էր ու հարցնում.

— Ուրեմն, ասում ես, հերիֆ է, հա՞:

— Հերիֆ է, հերիֆ,— լուրջ պատասխանում էր «ջորեպանը»:

Երբ հեռվում երևաց գյուղը, հարյուրապետը կանգ առավ, հայտնեց, որ հիմա կարող են լիովին ապահով լինել, բայց չհեռացավ: Հրաժեշտի շարժումներ գործելով, անընդհատ «վաճառականի» գրպանին էր նայում: Եսային իշխանական շարժումով մի ոսկի էլ հանեց, մատների մեջ խաղացնելով՝ խցկեց հարյուրապետի գրպանը ու «Օլ ռայթ» բացականչելով, թփթփացրեց նրա ուսին:

Երբ յուզբաշին ու իր ուղեկիցները բավականաչափ հեռացել էին, Պետրոսը պոռթկաց.

— Փողերն այնպես ես բախշում, ասես վեզիր լինես: Դրանցով մի հրացան էլ կարող էինք առնել:

— Եվ կկորցնեինք քսանը, մեզ էլ հետը,— քմծիծաղեց Եսային:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Լավ, գոնե վերջինը չտայիր,— գյուղացու ժլատությունը չէր հանդարտվում:

— Նախ՝ դո՛ւ խոստացար: Եվ հետո՝ քո սիրտն ինչի՞ է ցավում, կեղծ փողեր էին, թող տանի, իրեն հալալ: Հրեան տվեց մի քանի ղուրուշի տեղ: Իսկ ես դեռ քեզ ցույց կտամ քո էդ «հերիֆ,» խոսքի համար:

Պետրոսը զարմանքից դեռ խոսք չէր գտնում ասելու, երբ հեռվից, ծառերի տակից լսվեց յուզբաշու ձայնը.

— Այ մարդ, հե՛յ, ուրեմն ասում ես՝ հերիֆ է, հա՞:

— Հերիֆ եք, հերի՛ֆ,— ուրախությունից իրեն կորցրած բղավեց Տմլաքյանը:

Այնինչ դեպքերը հասունանում էին, և յուրաքանչյուր օրը գալիս էր հաստատելու յաղուբյանների ու տմլաքյանների իրավացիությունը: Շշուկներ էին հասնում, թե արդեն որոշակիորեն դավեր են նյութվում հայերի դեմ, թե թուրքական կառավարությունը ինչ – որ հրաման է իջեցրել՝ հայերին կոտորելու վերաբերյալ: Պետք էր ստուգել այդ լուրերի ճշտությունը: Եվ Եսայի Յաղուբյանը, տեղացի թուրքի տարազով ծպտված, եղավ Սուետիայում ու Անտիոքում, ունկնդրեց մարդկանց զրույցները՝ շուկայում, բաղնիքում ու չայխանաներում: Այցելեց իր մի բանի թուրք բարեկամներին, որոնց ազնվությանն ու նվիրվածությանը վստահ էր, և նրանց կցկտուր խոսքերից, շփոթված, խուսափող աչքերից ու կարեկից հայացքներից կռահեց, որ նրանք ինչ – որ բան գիտեն, բայց չեն ուզում կամ վախենում են հայտնել: Միայն մեկը՝ չայխանայի մատուցող Ռզան, ի պատասխան Եսայու համառ հարցերի, գլուխը տխրությամբ օրորելով շշնշաց.

— Ալլահը վկա, հաստատ ոչ մի բան չեմ իմանում: Համա, դե գիտես, էլի՛, չայխանա է, օրական հարյուր մարդ մտնում է, հազարը դուրս գալիս: Խոսում են, ես էլ լսում եմ, էլի՛: Ասում են, թե ձեզ քշելու են ու ձեր տներն ու հողերը մեզ են տալու: Ինձ որ մնա, ես հարամ հաց ուտողը չեմ, բարեկամիս տղա, բայց լսիր ինձ, փախե՛ք...

«Էղբետեն խըրուտ տըվուղը շատ, հուց տվուղը քիչ կննօ»,— դառնացած մտածեց Եսային, նեղ սալարկած փողոցով դեպի իր հոր վաղեմի բարեկամի որդու և իր վաղեմի բարեկամի, մանր վաճառական Րաֆիգ աղայի տունը:

«Փախե՛ք: Հեշտ է ասել: Ո՞ւր փախչես: Ո՞ւր գնաս, ինչո՞վ գնաս: Փախե՛ք: Ի՞նչ են արել, որ փախչեն, ո՞ւմ են վատություն արել, վեց հարյուր տարի ապրում են այստեղ, գերեզմանատներն էլ մի – մի գյուղ են դարձել: Ո՞նց թողնեն այդ գերեզմանատները, ո՞ւմ թողնեն խաչքարերը, եկեղեցիները, հողերը, տները, ծառերը, շերամները, ո՞ւր գնան: Փախե՛ք: Մարդ ո՞նց փախչի իր տնից, իրենից: Փախե՛ք...»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երկար ժամանակ համոզված էր, որ մի օր գալու է այս արհավիրքը: Բայց հիմա, երբ արդեն հասել էր այդ օրը, նա իրեն անսահման խաբված ու դժբախտ էր զգում: Փորձում էր խաբել իրեն, հույսի մի փոքրիկ շյուղ գտնել ու կառչել, կառչել: Աշխարհը հո չի՞ գժվել: Ո՞նց կլինի այդպես, ո՞նց կլինի:

Րաֆիգ աղայի տան դարպասի թակը խփելիս՝ ձեռքերը դողում էր: Նրան թվում էր, թե ինքն այսպես անվերջ կարող է թակել դուռը, ու ոչ ոք չի գա, չի բացի, թե արդեն փակվել են բոլոր դռները, բոլոր դարպասները: Եվ զարմանալիորեն հանգստացավ, երբ Րաֆիգ աղայի թեթև ոտնաձայնը լսեց կարմիր սալերի վրա ու նրա երգեցիկ ձայնը.

— Օ՜, Եսայի եղբայր, նա՜ խեր, նա՜ խաբար:

Թևանցուկ արեց, սաստեց շանը, տարավ հյուրասենյակ, նստեցրեց օթոցին: Ինքն էլ նստեց նրա առջև՝ համակ սիրալիրություն, համակ ուշադրություն դարձած, սպասելով, որ նախ հյուրը խոսի: Ու Եսային խոսեց: Պատմեց ամեն ինչ, պատմեց իր տագնապները, խնդրեց իր բարեկամին, ճիշտն ասել իրողությունը, որքան էլ դառը լինի այն: Չէ՞ որ Րաֆիգ եղբայրը դատախազի փեսան է, մեծամեծների հետ է նստում, վեր կենում: Ով չէ, բայց Րաֆիգ աղան կիմանա ճշմարտությունը:

Աղան շարժվեց, ու Եսայուն թվաց, թե գունատվեց մի քիչ:

— Ո՞վ է այդպիսի հիմարություններ դուրս տվել,— գրգռված խոսեց նա,— ու դու էլ, իմ բարեկամ, հավատացել ես, հա՞, որ մեզ մոտ, մեր երկրում, արդեն իսկական դեմոկրատիայի, առաջադիմության երկրում նման վայրենություն թույլ տրվի: Երբե՛ք: Դա թշնամիների սարքած բանն է, իմ բարեկամ: Պատմության անիվը ետ չի կարող գլորվել:

Րաֆիգ աղան բարձրացավ տեղից, ձեռքի շարժումով հյուրին ստիպեց նստած մնալ, իսկ ինքը սկսեց քայլել սենյակում:

Եսային փորձեց բացատրել: Այդ լուրերը լիովին դատարկ լինել չեն կարող, քանի որ արդեն Զեյթունում ինչ – որ տեղահանություն է սկսվել: Մարդիկ են եկել, սարսափելի բաներ են պատմում:

— Սուտ է, սուտ, — գլուխը հանդիմանանքով շարժելով, կանգնեց աղան,— ես քեզ բան եմ ասում, եղբայր: Թշնամու գործ է դա: Ուզում են խառնակություն սկսել. մեզ՝ եղբայրներիս ու հարևաններիս գրգռել իրար դեմ: Դա եվրոպացիների ու ռուսների հնարածն է: Եթե որևէ բան լիներ, մի՞թե առաջիններից մեկը ես չէի իմանա և մի՞թե անմիջապես չէի ասի քեզ: Իսկ եթե ինչ – որ տեղ մի քանի հայ են բռնել, ապա ուրեմն մեղավոր են եղել նրանք: Միտք ունի՞ խուճապի մատնվել: Քիչ թուրքեր են բռնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եսային խաղաղվեց բավականին: Գտել էր փնտրած հույսի շյուղը: Գուցե և իսկապես դեռ ոչինչ էլ չկա: Ո՞վ գիտի, գուցե և ընդհանրապես չլինի ոչինչ: Երախտագետ ժպիտով շնորհակալություն հայտնեց Րաֆիգ աղային: «Սրտիցս մի մեծ քար ընկավ»,— ասաց: Հրաժեշտ տվեց, բայց աղան չուզեց էլ որևէ բառ լսել: Ի՛նչ, այսքան ժամանակ անհետ կորած թանկագին հյուրին բա՞ց թողնի: Չսպասես: Ինքը հիմա բակ կիջնի, մի բան կմորթի, կնստեն, կզրուցեն հանգիստ: Հյուրը իրավունք չունի առարկելու: Կնեղանա Րաֆիգ աղան: Ու Եսային, ընդհարձակ սենյակում միայնակ մնալով, թեթևացած հոգով սկսեց զննել պատին կախված նկարներն ու գորգերի նախշերը:

Սթափվեց թեթև մի շրշյունից: Կից սենյակի դուռը ծածկող վարագույրը բարձրացրել, ու ներս էր մտել Րաֆիգ աղայի մայրը՝ Արիֆա հանըմը: Եսային լայն ժպտալով քայլեց դեպի նա, կորացավ, համբուրեց խորշոմած ձեռքը, ճակատին դրեց, հետո գրկեց ուսերը:

— Անա,—ասաց նա սրտանց,— շատ էի կարոտել քեզ: Մերս բարևում է: Ո՞նց ես, ոնց, անա:

Ձեռքը գրպանը տարավ, մի բուռ կոնֆետ հանեց, տվեց հանըմին, ինչպես անում էր միշտ,նրան այց գալիս:

Առաջ, երբ շատ – շատ փոքր էր, ու հայրը այստեղ էր բերում նրան, Արիֆա հանըմը միշտ էլ նրա համար մի որևէ բան էր պահած լինում իր տասնյակ գրպաններից մեկում՝ մի խնձոր, մի տանձ, մի բուռ չամիչ կամ մատիտ: Երբ մեծացավ ու առաջին անգամ ինքը նվեր բերեց հանըմին, երկուսն էլ միաժամանակ հանեցին նվերները ու ծիծաղեցին: Ու փոխվեցին դերերը: Եսային երբեք չէր մոռանում (նույնիսկ նման տագնապալի մի օր) Րաֆիգ եղբորը այցի գալիս՝ մի բան գնել Արիֆա հանըմի համար:

Ծեր կինը մեքենաբար մեկնեց ձեռքը, վերցրեց կոնֆետը, ու Եսային զգաց, որ նրա մատները սառն են:

— Դե, դու գնա, բալա՛,— մրմնջաց Արիֆա հանըմը,— շուտ գնա, տուն գնա, բալա՛:

Եսային շփոթվեց: Ինչպե՞ս թե գնա: Րաֆիգ եղբայրը պատվիրեց սպասել, բան է ուզում ասել, շուտով կգա:

Հանըմի ծնոտը դողաց յազմայի տակ, աչքերն արցունքով լցվեցին:

— Էլ Րաֆիգ չկա, էլ ախպեր չկա,— ասաց նա, անսահման վշտով օրորելով գլուխը,— ախպերությունը պրծավ: Րաֆիգը գնաց, որ զինվոր բերի, քեզ բռնեն: Փախիր, բալա՛:

Եսային մի պահ կանգնեց շանթահարվածի պես, մտածելով, որ խելքը կորցնում է: Ուժեղ սրտախառնուք զգաց. ինչպես այն ժամանակ, նավակում, Միջերկրականի վրա: Հենվեց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատին: Հետո հանկարծակի սարսափելի պարզությամբ տեսավ ամեն ինչ, Րաֆիգ աղայի գունատվելը, խոսքերը, թափառող աչքերը, շտապով հեռանալը: Ակամա ձեռքը գոտկատեղին տարավ, շոշափեց մաուզերը, ապա հառաչեք, խոնարհվեց դեպի վշտահար, գունատ կինը:

— Ես ղուրբան քեզ, անա՛: Քեզ համար, քո խաթրու, մեռնեմ, թե առաջինը ձեռք բարձրացնեմ թուրքի վրա: Թող Րաֆիգն էլ ղուրբան լինի քեզ, մերիկ:

Հարբածի պես օրորվելով հեռացավ, նայեց ճանապարհին: Ոչ ոք չկար: Խորը շնչեց մաքուր օդը և դուրս եկավ դարպասից: Բայց ճանապարհով չգնաց, այլ թեքվեց վեր, քայլեց այգիների միջով, նեղլիկ արահետով, չշտապելով բոլորովին, չմտածելով, որ կհասնեն, կկրակեն իր վրա: Ինչ – որ բան խախտվել, ավերվել էր նրա հոգում, ու մի տեսակ անիմաստ էր այլևս թվում կյանքը:

Նույն գիշերն իսկ հանգիստ, կազմակերպված ձևով առաջին ընտանիքները բարձրացան Մուսա լեռ: Նրանց թվում էր Պետրոս Տմլաքյանի ընտանիքը, Եսայի Յաղուբյանի ընտանիքը, ինչպես և Իսկուհու հոր՝ բողոքական Պողոս աղայի ընտանիքը, որին Եսային համարյա զենքի ուժով լեռ բարձրացրեց: Նրանց սկսեցին հետևել նաև ուրիշները, շատերը, մեծ մասը՝ Սուետիայի հայկական բոլոր գյուղերի բնակիչներից: Նրանց երկմտությանը վերջ տվեց Զեյթունի ողբերգությանը մասնակցած, հրաշքով տարագրությունից փախած, իր ծննդավայր Յողանօլուք հասած խիզախ ու տաղանդավոր մի հովվապետ՝ Տիգրան Անդրեասյանը, որը ժողովրդին համոզեց ոչ թե գլուխ խոնարհել թշնամու առջև, ոչ թե բռնել տարագրության կործանարար ուղին, այլ զենք վերցնել, հետևել խիզախներին ու ապրել կամ մեռնել դիրքերով, պատվով, բարձրության վրա:

Եվ 1915 թվականի օգոստոսի 3 – ին Մուսա լեռան վրա սկսվեց անօրինակ սխրագործությունը մի բուռ ժողովրդի, որ գեղարվեստական վառ ճշմարտացիությամբ պատկերված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում: Կենաց ու մահու պայքար մղելով թուրքական կառավարության կանոնավոր զորքերի դեմ, վարձկանների ու խաժամուժի դեմ, որոնք թվական բազմապատիկ գերակշռություն ունեին,մի բուռ մուսալեռցիներ կարողացան հաղթանակով դուրս գալ այդ օրհասական կռվից, մի անգամ ևս հաստատելով ապրելու իրենց իրավունքը և գալիք սերունդներին իրավունք տալով՝ քայլելու հպարտ, քայլելու վստահ, բարձր ճակատով:

Ո՛չ, Եսայի Յաղուբյանը չմնաց լեռան վրա: Չընկավ թուրքի գնդակից:

Բայց և առանց որևէ հրճվանքի էր թողնում Մուսա լեռը:

53 օր ու գիշեր շարունակ, հրացանների խուլ որոտից, հարձակման մոլուցքով խենթացած մարդկանց խռպոտ ու հաղթական կանչերից, ծերունիների ու մանուկների հաց աղերսող,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

համառ, հուսահատ աղաղակներից, վիրավորների տնքոցներից, հեծեծանքներից ու անեծքներից, զոհվածների հարազատների բաց, թշնամական, խանդոտ հայացքներից խոցված, բզկտված, շիկացած նրա հոգուն ամայություն էր իջել այժմ: Ոչինչ չկար: Ոչի՛նչ:

Այնինչ որքա՜ն էր երազել այս օրը: Քանի – քանի անգամ գիշերները թաքուն, անձայն սահելով քաղցից ու անքնությունից տանջահար մարդկանց մարմինների մոտով, լեռան ծովահայաց լանջն էր բարձրացել, աստվածներին զոհ մատուցած ու հրաշքի սպասող քուրմի պես, ժամերով անթարթ նայել Միջերկրականի ջրերին, տենչալով փոքրիկ մի նավակ, հույսի, փրկության մի ճերմակ առագաստ:

Իսկ հիմա, երբ հինգ հսկա մարտանավեր խարիսխները նետած կանգնել, քարացել էին ծովի վրա, ափից քիչ հեռու, պատրաստ Պորտ – Սաիդ տանելու մուսալեռցիներին, նրա դեմքին ուրախության մի մկան անգամ չէր շարժվում: Մի՞թե վերջը սա էր, մի՞թե սա էր հաղթանակը, մի՞թե հաղթողը թողնում է իր տունը:

Մառախուղի բարակ շղարշը դեմքին, գունատ, խորշոմած ու մռայլ կանգնած էր Մուսա լեռը՝ որդուն պանդխտության ճամփող սգավոր մոր նման, ու ոչ ոք չկար, որ սրբեր նրա թաց այտերը: Ոչ ոք: Որդիները մեկնում էին: Նրանց հրճվագին աղաղակները ոլոր – մոլոր իջնում էին լեռան կածաններով, որոնում իրար, խառնվում ու բվվում ներքևում, ծովափին:

Այդ ցնծության աղմուկին անհաղորդ, Եսային կանգնած էր փոքրիկ մի բլուրի վրա ու լեռն ի վեր բարձրացող երեք պատգամավորներին էր սպասում, որոնք մերթ հայտնվում ու մերթ կորչում էին ծերպերում: Տեսնես ինչո՞վ են գալիս, տեսնես ի՞նչ պատասխան է տվել Ֆրանսիայի ռազմածովային նավատորմի փոխծովակալը: Այլևս չհամբերելով, Եսային ինքը ընդառաջ գնաց բանբերներին: Տեղերից բարձրացան նաև սպաները, որ նույնիսկ նման մի պահի չէին ուզեցել միայնակ թողնել իրենց հրամանատարին ու ննջում էին՝ քարերին նստոտած:

Պատգամավորներից մեկը՝ Պետրոս Տմլաքյանը, դեռ հեռվից օրորեց գլուխը:

— Ուրիշ ելք չկա, պիտի մեկնինք,— ասաց նա տխրությամբ:

— Ձենք չտվի՞ն,— մի վերջին հույսով հարցրեց Եսային, թեև քաջ գիտեր պատասխանը:

Պետրոսը կրկին օրորեց գլուխը.

— Շատ խնդրեցինք: Աղաչեցինք տանել միայն ծերերին, կանանց ու երեխաներին, իսկ մեզ զենք տալ՝ շարունակելու կռիվը: Ծովակալը հրաժարվեց: Նավապետներից մեկն ասաց, որ դա միջամտություն կլինի երկրի ներքին գործերին: Առանց այն էլ ծովեզերքի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ռմբակոծությունը միջազգային աղմուկ կհանի: Շատ խնդրեց նաև ֆրանսիական նավի սպաներից մեկը՝ հայազգի Տիրան Թեքեյանը, որը ցանկություն էր հայտնում ափ իջնել ու կռվել մեր կողքին: Սակայն նրան էլ չլսեցին:

«Ամեն ինչի մեջ հաշիվներ, հաշիվներ, հաշիվներ, — տնքում էր Յաղուբյանը, պղտորված հայացքը նավերին հառած: — Ուրեմն մեզ կոտորելը, մի ամբողջ ժողովուրդ կոտորելը ընդամենը Թուրքիայի կառավարության ներքին գործն է եղել: Եվ ուրիշ ոչինչ: Ասենք, ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել: Ֆրանսիային ի՞նչ, որ այս մի քանի գյուղը, որ այս փոքրիկ հողը քոնն է, և դու ուզում ես պաշտպանել քո հողը: Անգլիային ի՞նչ, որ այստեղ, Մուսա լեռան քարքարոտ լանջերին ընկան ու էլ երբեք չեն բարձրանալու «էլլեոն» Հակոբ Քարակյոզյանը, Պողոս էնտաքյանը, հարյուրապետ Գրիգոր Նգրուրյանը, Սարգիս Շաննագյանը, Հովհաննես Գուճանյանը, Գաբրիել Խայոյանը, Հաբեթ Վանանյանը և էլի տասնմեկ տղերք, հրաշալի, պայծառ տղերք, մի – մի օջախ: Օտարին ի՞նչ, որ Եսայի Յաղուբյանն իր միակ, հիվանդ, քաղցած աղջկան լեռանն է թողել և չգիտի, թե մեկ էլ կտեսնի՞ նրա թարմ, փոքրիկ, զարմացած հողաթումբը: Այո, դեռ պետք է շնորհակալ լինել աստծուց, որ ֆրանսիացի այս ծովայինները հանձն են առել փրկել, տեղափոխել մուսալեռցիներին: Պետք է շնորհակալ լինել:

— Գնանք, Եսայի եղբայր,— կամացուկ, համառ կրկնեց Պետրոսը — ֆրանսիացիները ծովափին մեզ են սպասում:

Եսային բարձրացրեց գլուխը ու առանց շուրջը նայելու, անկամ քայլերով թողեց Մուսա լեռը: Ներքևում, ծովափին խռնված բազմությունը լռեց վայրկենապես, տեսնելով իր հրամանատարներին: Զինվորները թողեցին իրենց կանանց ու երեխաներին և հրացաններն առած ընդառաջ վազեցին նրանց, և ֆրանսիական ռազմածովային նավատորմի սպա, հայազգի Տիրան Թեքեյանը ծոցատետրում արագ – արագ նկարագրեց այդ պահը:

«Ապստամբներու պետը Եսայի Յաղուբյանն էր. հանդարտությամբ և պարզուկ արժանավորությամբ հիանալի մարդ մը, ճակատը սեղմված կերպասով մը, որ ետևեն ծոծրակը կծածկեր, ինչպես Սասունի ապստամբները կկրեին, լանջը փամփուշտներով ակաղձուն, նայվածքը տրտում ու բռնկած միանգամայն: Գիսախոիվ հերոսներու սպայակույտ մը՝ կհետևեր իրեն: Եվ ան համրաքայլ կհառաջանար կամարին տակ հրացաններու՝ զորս իր մարդիկը կը խաչաձևեին իր գլխուն վերև, ամբողջ երկայնքն իր ճամփուն...»:

Եվ ապա, երբ մուսալեռցիներով լեցուն նավերը դեպի Պորտ – Սաիդ էին ուղղվել, Տիրան Թեքեյանը ավելացրեց ծոցատետրում.

«…Յաղուբյանին մոտեցա և անոր ձեռքերը խանդաղատագին սեղմեցի և իր քաջարի դիմադրության համար զինք շնորհավորելե ետք, պետերուս հրամանները հաղորդեցի իրեն»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սուեզի ջրանցքի ափին, ավազների վրա, Սուետիայի հայկական համայնքը իր թաղիքե նոր բույնը շինեց, ամեն մի վրան բարձրացնելիս կարոտով ու ցավով հիշելով իր հպարտ, քարաշեն տներն ու ծաղկուն այգիները՝ Մուսա լեռան լանջին: Կյանքով ու աղմուկով լցվեց ամայի ավազուտը, վիրավորներն իրենց հիվանդանոցն ունեցան, հեռուներից բերված աղբյուրները խոխոջեցին յուրաքանչյուր վրան – թաղամասում, գոլորշին ելավ փայտաշեն բաղնիքներից, փռից ու խոհանոցից տարածվեց նոր թխած հացի ու հարիսայի բույրը, նորակառույց խորանից հնչեց «տեր ողորմյան», անխոնջ ու եռանդուն գրասեր Վարդան Վարդերեսյանը կրկին ձեռնամուխ եղավ հրոսակների կողմից հրի ճարակ դարձած իր գրադարանը վերականգնելու գործին, մուսալեռցի տղաներն ու աղջիկները սկսեցին հաճախել բարեգործական ընկերության հիմնած «Սիսվան» վարժարանը՝ իրենց ուսումը շարունակելու: Մի քանի ամսվա ընթացքում վրանաքաղաքում բացվեցին կարուձևի, ասեղնագործության, ցանցահյուսության, հյուսնության, կոշկակարության արհեստանոցներ և նույնիսկ, ի մեծ զարմանք շրջակա գյուղերի բնակիչների, սկսեց գործել մի նոր ճաշարան, որտեղ ձրի ճաշեր էին բաց թողնում հիվանդներին ու վատառողջներին՝ բժիշկների կազմած հատուկ տոմսակներով:

Օրհնվա՛ծ, աշխատո՛ղ ձեռքեր: Նրանք չէին կարող պարապ մնալ, նրանք ափն ի վեր ուրիշին մեկնելու համար չէին ստեղծված, նրանք մաճի էին սովոր ու դանակի՝ փայտ ու ոսկոր տաշող, մազ կտրող, տրեխ սարքող, չորացած ճյուղեր հեռացնող դանակի, և իրենք չէին մեղավոր, որ սովորեցին հրացան բռնել:

Վրանաքաղաքն ապրում էր առօրյա, սովորական կյանքով: Երեխաներ էին ծնվում ու մեռնում էին ծերերը, բայց հայրենիքի կարոտն ու վրեժխնդրության ծարավը շարունակում էր ալեկոծել մարդկանց: Ահա թե ինչու, երբ ֆրանսիական կառավարությանը հարկավոր էր մարտական մի նոր միավորում ևս, և «մեծ դաշնակիցը» դիմեց իր փոքր դաշնակցին՝ հայերին, օգնություն խնդրելով, վեց հարյուր մուսալեռցի կամավորներ հրացան առան ձեռքները՝ թուրքական բանակի դեմ մարտնչելու համար ու կորիզը դարձան ապագա հռչակավոր «Հայկական լեգեոնի»:

Եվ նրանց հետ էր Եսայի Յաղուբյանը:

Կամավորները հերոսության հրաշքներ էին գործում ամենուրեք, սարսափ տարածելով թշնամիների վրա: Խիզախ ու արագաշարժ լեռնցիներից ավելի լավ ո՞վ կարող էր մագլցել անառիկ լեռներն ի վեր, կտրել թուրքական զորքերի ճանապարհը, հարձակվել անսպասելիորեն ու կռվել այդքան խելահեղ, այդքան քաջաբար, այդքան անձնազոհ: Սոսկ զինվորներ չէին նրանք, որ իրենց պետությունների կամքն էին կատարում, վարձկաններ չէին, որ սպանելու համար փող պիտի ուզեին, այլ վրիժառուներ, որ կրակում էին հանուն իրենց բզկտված ու անարգված հայրենիքի, հանուն կողոպտված ու ավերված գյուղերի, հանուն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խոշտանգված ծերունիների ու մանուկների, հանուն գնդակված եղբայրների ու ընկերների, հանուն ոտնահարված սրբությունների, պղծված արդարության: Եվ հանուն անկախ, հայկական Կիլիկիայի, որ ձեռքները խաչին խոստացել էին «մեծ դաշնակիցները»:

Ինչպիսի՜ ցասումով էին փայլում նրանց աչքերը, երբ Եսայու մոտ բերեցին 10 – 11 տարեկան թուրք մի պատանու: Բռնել էին առավոտ վաղ, մի կածանի վրա: Տղան սև, խոշոր աչքեր ուներ, որ հիմա երկյուղով փախցնում էր իրեն շրջապատող չար, թշնամական հայացքներից ու դողում էր:

— Լրտես է օձի ձագը, թե չէ՝ ի՞նչ գործ ունի լուսաբացին, կածանի վրա,— ասաց նրան բռնողներից մեկը:

— Երեխա է,— ասաց Եսային:

— Հրամայիր՝ թող սատկեցնեն, Եսայի աղբար,— ձեռքով ծնոտի դողը բռնած, բղավեց մի ուրիշը,— չեմ կարողանում դրանց նայել:

— Երեխա է,— մռայլվեց Յաղուբյանը:

Զինվորներն աղմկեցին, ավելի մոտ եկան, հևացին:

— Երեխա է, հա՞,— ձեռքը սպառնալորեն մեկնեց երրորդը: —Իսկ Հակոբս երեխա չէ՞ր, որ սվինը պստիկ սիրտը խրեցին, իսկ քո աղջիկը երեխա չէ՞ր, որ քաղցից մեռավ, իսկ նրանք բոլորը, բոլորը, որ հիմա անթաղ ընկած են ճանապարհներին, փոսերում, հարեմներն են քշված ու վառված են կրակների մեջ, երեխաներ չէի՞ն: Հը՞, ասա, է՛, Եսայի աղբար, ասա, հոգուդ մատաղ, երեխաներ չէի՞ն:

Ու հանկարծ զինվորը հեկեկաց երեխայի նման բարձրաձայն, ձեռքերով դեմքը ծածկելով, ցնցվելով ողջ մարմնով: Խոր լռություն տիրեց, ու մեկը այդ լռության մեջ ատելությունից հարբած շշնջաց.

— Անենք դրան այն, ինչ նրանք են անում մեր զավակներին:

Եսային բարձրացավ տեղից, լուռ նայեց բոլորին, հետո ձեռքի կոպիտ մի շարժումով տղային դեպի զինվորները հրեց:

— Դե, տարեք, արեք ինչ ուզում եք,— ասաց նա կամացուկ, տխուր: — Տար, Թովմաս, քեզ եմ տալիս սրան,— դիմեց նա լացող զինվորին: — Տար, սպանիր:

Զինվորներն ակամա ետ – ետ գնացին, իսկ Թովմասը մրմնջաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ե՞ս, ինչո՞ւ ես, Եսայի աղբար, ինչո՞ւ ես:

— Թող տանի, ով ուզում է,— կրկնեց Յաղուբյանը, տխուր ժպիտով նայելով ընկրկած, շփոթահար ու գլխիկոր իր զինվորներին: Եվ ասաց բարձրաձայն, ասաց հպարտ՝ այդ դժբախտ մարդկանց ու իր մեծ ժողովրդի համար,— ախր ես գիտեի, որ դուք ձեռք չեք բարձրացնի երեխայի վրա:

— Որովհետև մա՛րդ չենք,— արցունքի միջից ժպտալով ու ամաչելով իր արցունքից, հառաչեց Թովմասը,— որովհետև ազգ չենք, ժողովուրդ չենք, Եսայի աղբար: Մեզ սպանում են, իսկ մենք խղճում ենք նրանց: Բա մենք իրավունք ունե՞նք ապրելու:

— Դու գիտես, որ ես Քրիստոս չեմ, Թովմաս,— ասաց Եսային,— բայց մենք հենց դրանով էլ իրավունք ունենք ապրելու...

Երկար մտածելուց հետո, Յաղուբյանը որոշեց տղային անձամբ ճանապարհել այն գյուղը, որ ընկած էր ճակատային գծից աջ՝ այգիների մեջ: Նա գիտեր, որ իր վարմունքը առնվազն խելացնորություն է, բայց այլ կերպ վարվել չէր կարող: Չէր ուզում, որ այդքանից հետո տղան կորչի, ընկնի մյուս ջոկատների ձեռքը, կամ զոհ գնա թուրքական գնդակին: Եվ միաժամանակ հայհոյում էր իր քնքշությունը: Դրա համար էլ, երբ ճամբարն արդեն խոր մրափում էր, նա սովորականից էլ կոպտորեն արթնացրեց տղային ու հրամայեց անշշուկ հետևել իրեն:

Մթության մեջ նա չտեսավ տղայի դեմքը, բայց երբ արդեն բռնել էր նրա տաք, դողացող թաթը, սրտի մեջ հանկարծ շատ հին ու քաղցր մի կարոտ զգաց, ինչ – որ բան բարձրացավ ներքնից, կանգ առավ ու ցավեց կոկորդում: Կտրվեց շունչը: Աղջկան հիշեց: Շան լակոտների թաթերը ինչքան էլ նմա՛ն են իրար:

— Շուտ – շուտ քայլիր, տղա,— ասաց նա կոպիտ քնքշությամբ, հենց այնպես, որովհետև տղան առանց այդ էլ հնազանդ, մանրիկ վազում էր նրա կողքից: Քիչ անց նա գլորվող քարի ձայն լսեց ու ընկավ գետնին՝ իր հետ քաշելով նաև տղային: Տղան պառկել էր նրան սեղմված՝ իր փոքրիկ ու ջերմ մարմնով ու արագ – արագ, տաք շնչում էր ականջին: Եսային բնազդաբար փակել էր աչքերը, ու մի պահ նրան թվաց, թե Յողանօլուքում է ինքը, իրենց տանը, պառկել է կտուրին, տաք, նախշուն վերմակի տակ, ու աղջիկը սատանայորեն իր ծոցն է մտել: Քիչ մնաց աղաղակի ցավից: Ամուր սեղմեց տղայի ձեռքը, քարշ տվեց իր ետևից, այդպես էլ սողալով, սողալով ձորի պռունկը հասցրեց ու ասաց նրան նրա մայրենի լեզվով.

— Էնտեղ, ձորում ձերոնք են, հասկացա՞ր: Դե գնա, հենց որ ձեն կտան, անմիջապես պատասխանի, ասա՛ ով ես: Հասկացա՞ր: Դե գնա:

Բայց տղան չէր շարժվում: Ու հանկարծ կամացուկ աղաչեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դու էլ ինձ հետ արի, վախում եմ, ամի:

Չիմացավ ծիծաղի, թե բարկանա: Սա՞ ինչ կրակ էր: «Հիմար – հիմար մի խոսի, վախենալու ի՞նչ կա,— ասաց: Վախը մնաց էնտեղ, վերևում: Դե, գնա, շուտ»: Բայց տղան նրան էր սեղմվել ու դողում էր ձագի պես, կամացուկ ինչ – որ խոսքեր էր շշնջում ու ավելի էր սեղմվում, հետո թեքվեց, համբուրեց Եսայու ձեռքը:

— Մութն է, շատ եմ վախենում, դու էլ արի, էլի, ամի:

Ա՛յ քեզ փորձանք: Հիմա երևի լաց լինի բարձրաձայն:

Եսային հայհոյեց իր մայրենի լեզվով, հայհոյեց, որպեսզի ինքն էլ լաց չլինի այդ մեծ, համաշխարհային միամտության առաջ: Ի՞նչ անի: Ո՞նց բացատրի սրան, իր թշնամու որդուն, որ ինքը չի կարող ձորն իջնել: Ո՞նց հասկացնի, որ դրա իրավունքը չունի և մտադիր էլ չէ զրկվելու կյանքից:

— Խաթա ես, խաթա, այ օղլում, — ասաց նա շփոթված, աշխատելով պոկել ձեռքը տղայի շրթունքներից: Հետո մթության մեջ թափ տվեց ձեռքը՝ տղայի գլխի հետ ու հուսահատ վճռականությամբ ասաց,— դե, լավ, լավ, գնանք:

Հավանաբար կիրճը պաշտպանող զորամասը ետ էր քաշվել, որովհետև նրանք ոչ ոքի չհանդիպեցին նեղլիկ արահետի վրա ու քիչ անց արդեն բարձրանում էին գյուղամիջյան ճանապարհով: Գյուղն ասես քնած լիներ խոր ու անխռով քնով: Ոչ մի ձայն չէր խախտում ահավոր լռությունը, չէր փայլում ոչ մի լույս: Միայն հեռվում, ինչ – որ տեղ անընկեր ու անպատասխան, աղիողորմ ոռնում էր մի շուն:

— Այ, էն մյուսը մեր տունն է, ամի:

Եսային նայեց տղայի հայացքի ուղղությամբ, բայց ոչինչ չտեսավ, և փոխարենը միայն խուլ աղմուկ լսեց ու երգի, թե լացի ձայն: Հետո շատ մոտիկ, ինչ – որ տեղ ճռռաց դուռը, ու հաջորդ վայրկյանին տղան «բաբա, բաբա» գոռալով նետվեց դեպի լույսի մեջ հայտնված ստվերը: Երգը կտրվեց, ուժգին ճչաց մեկը, մեկը «ալլահ» գոռաց, հետո ուրիշ ճիչեր լսվեցին, ընկած կահ – կարասու ձայն, և նավթի ճրագները հանկարծ սկսեցին թռչկոտել օդում: Ապա ճրագներից մեկը օրորվելով մոտեցավ կանգնած, քարացած Եսայուն, ու խռպոտ, լացակումած մի ձայն հարցրեց.

— Հա՞յ ես, ա՛յ մարդ, ա՛յ աստված:

— Հա՛,— ասաց Եսային:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա գիտեր, որ հիմա շնորհակալություն են հայտնելու իրեն, տուն են կանչելու, բայց ոչ թե ուրախություն, այլ միայն նողկանք էր զգում դրանից: Ճրագները արյուն էին ծորում, ու ռունգները սեղմված էին դիահոտից: Աչքերի առջև հայկական գյուղերն էին՝ ավերակ ու խանձված, ու մերկ, սևացած մարդիկ՝ ծխացող գերանների մոտ: Աչքերի առջև Թովմասն էր՝ երեխայի պես բարձրաձայն լացող, ձեռքերով դեմքը ծածկած:

— Հայ եմ, հա՛,— ասաց Եսային:

Շրջվեց, որ հեռանա, բայց ճրագները շրջապատեցին նրան: Մայրը օրհնանքի խոսքեր աղաղակելով չոքեց, գրկեց ծնկները, ինչ – որ կանայք խոսեցին հազարաձայն, հայրը՝ հաղթանդամ մի երիտասարդ, բռնեց ձեռքը, ասաց շտապ – շտապ, կցկտուր.

— Ի՞նչ ես ուզում, որ տամ: Տա՛մ, — ասաց նա, — ես հարուստ եմ, ես շատ փող ունեմ: Ասա, ի՞նչ ես ուզում, որ տամ: Ասա, ա՛յ մարդ, ա՛յ աստված...

Եսային զգաց, որ ատելությունը խեղդում է իրեն, հրեց, ազատվեց նրանցից, ետ – ետ գնաց, ուզեց ինչ – որ բան ասել, երկար, այրող, թունավոր մի բան, բայց փոխարենը բղավեց խեղդվելով.

— Մենք մարդ ենք, մա՛րդ: Մենք մարդ ենք, մա՛րդ...

Նորից խաբեցին «եղբայրները»: Երբ թվում էր, թե հասել է երազած ժամը, թե արդեն ոչինչ չի խանգարում «ազատ, անկախ հայկական Կիլիկիայի» գաղափարը կենսագործելուն, «մեծ եղբայրները», մեծ դաշնակիցները՝ Անգլիան ու Ֆրանսիան հանկարծ մոռացան իրենց «փոքրիկ եղբորը»: Ինչ – որ մեկը աշխարհի քարտեզի վրա շախմատ էր խաղում, և նրան պետք էր մի զինվոր, որ քայլի, քայլի՝ հակառակորդի ուշադրությունն իր վրա բևեռելով: Այդ ժամանակ ինքը կզոհի զինվորը և փոխարենը կստանա մի նավակ, մի որակ կամ նեղուց:

Այդ զինվորը հայ էր:

Կռվեցին, կռվեցին ու ընկան, ծնկաչոք, արյունոտ մագլցեցին լեռներն ի վեր, հաղթեցին ու ընկան Արարայում, ընկան ու հաղթեցին ամենուրեք, փառք բերելով դաշնակիցների զորքերին: Եվ հանկարծ պարզվեց, որ այդ բոլորը խաղ է եղել, հենց այնպես է եղել: Եվ հանկարծ մեծ դաշնակիցները հայտարարեցին, թե որոշել են Կիլիկիան Թուրքիային հանձնել, դուրս գալ Կիլիկիայից և նույնն էլ բարեկամաբար խորհուրդ են տալիս հայերին: 1920 թվականին Ադանայում ֆրանսիական կոնսուլը Եսայի Յաղուբյանին տվեց կնքված թղթի մի կտոր, որով նա նշանակվում էր հայերի տեղահանման գործի նախագահ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Որոշեցին վերադառնալ Մուսա լեռ: Մուսալեռցիների մի մասն արդեն հայրենիք էր մեկնել, օգտվելով Սուետիայում բարձրացված ֆրանսիական դրոշակից: Այնտեղ գնաց նաև Եսայի Յաղուբյանը՝ իր ընտանիքով: Չուզեց, սակայն, Յողանօլաքում ապրել, թուրքերն ավերել էին տունը, կտրել այգին: Նոր տուն կառուցելու տրամադրություն չուներ այլևս: Իջավ հովիտ, ընտանիքով որոշ ժամանակ ապրեց Իսկուհու քրոջ տանը՝ Ջրեյրիա գյուղում, ապա է՛լ ավելի խորացավ հովտում՝ հասավ Ջեյթունիե, անընդհատ ու անընդհատ տագնապով սպասելով աղետի, անընդհատ ու անընդհատ սոսկալով այն մտքից, թե Ֆրանսիան մի օր էլ Սուետիան կթողնի ու թուրքական կառավարությանը հնարավորության կտա հաշվեհարդար տեսնելու անընկճելի մուսալեռցիների հետ:

Նրա անունն արդեն հայտնի էր աշխարհում, նրան գրում էին ժամանակի նշանավոր մարդիկ, հայտնում, որ հպարտանում են իրենց խիզախ հայրենակիցներով, նրա և նրա ընկերների լուսանկարները տպագրում էին Ֆրանսիայի թերթերը, սակայն դա Յաղուբյանին չէր օրորում: Պատասխան նամակներում Եսային խնդրում էր չհավատալ եվրոպական կառավարությունների կեղծ խոստումներին, օգտագործել իրենց ազդեցությունը, որպեսզի նորից արյունով չհեղեղվի Մուսա լեռը: Բայց ի՞նչ կարող էին անել անհայրենիք մարդիկ, ով էր լսում նրանց ահազանգն ու աղերսը, Ֆրանսիայի ինչի՞ն էր պետք հայերով բնակեցված այդ փոքրիկ հողը, Ֆրանսիան առայժմ կարիք չուներ մեռնող զինվորի:

Եվ 1939 թվականին, Սանճաքի նահանգը Թուրքիային հանձնելով, Ֆրանսիան լուծած համարեց հայկական «նոր հարցը», թեթևացած շունչ քաշեց ու անտարբեր հայացքով սկսեց դիտել տարաբախտ ժողովրդի կրկին, այս անգամ արդեն անվերադարձ գաղթը իր պապերի երկրից, իր հայրերի երկրից, իր տներից ու այգիներից, իր հարազատ գերեզմանաթմբերից դեպի օտար եզերքներ, դեպի նոր օտարություն՝ երկրագնդի անշարժ քառակուսիների վրայով:

Բնությունն էլ չէր գթում նրանց: Առաջին իսկ կանգառում, ծովեզրյա Պասիթ կոչվող ավազուտում, ուժասպառ, քաղցից ու հիվանդություններից հյուծված, անօթևան մարդկանց վրա տեղատարափ անձրև ու կարկուտ սկսեց: Յուրտ քամու տակ անշարժ պառկելը մահ էր նշանակում, և մարդիկ սկսեցին պարել: Զուռնայի տխուր, հուսահատ հնչյունների ներքո գաղթականությունը պարում էր ողջ գիշեր, սարսռեցուցիչ մի պար, որ աշխարհը չէր տեսել: Պարում էին բոլորը, տղամարդ ու կին, ծեր ու մանուկ, պարում էին իրար գրկած և պահելով իրար, լալիս էին ցավից ու հուսահատությունից, ու նզովում էին հայի աստծուն, հայի դառը, անհասկանալի ճակատագիրը, ու հայհոյում էին Եվրոպայի տմարդի քաղաքագետներին:

Անձրևը դադարեց միայն առավոտյան, և մարդիկ ուշակորույս մեկնվեցին թաց ավազին, որպեսզի հետո շարունակեն քայլել իրենց նոր ճակատագրին ընդառաջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մուսալեռցիների մի մասը նոր բույն շինեց Այնճարում, Բեյրութից դեպի հյուսիս, իսկ մյուս մասը հասավ Սուր: Սուրում հաստատվեց նաև Եսայի Յաղուբյանի արդեն բազմանդամ ընտանիքը և ապրեց անորոշության, օտարության և անուրախ կյանքի էլի մի քանի տարիներ, մինչև 1947 թվականը, մինչև այն օրը, երբ Յաղուբյանների ողջ ընտանիքը ու շատ – շատ մուսալեռցիներ «Պոբեդա» անունը կրող մի նավով առաջին անգամ ոչ թե հայրենիքից դուրս, այլ դեպի իրենց միակ, իսկական հայրենիքը լողացին:

Հայրենիք, Հայաստան, Սովետական Հայաստան... Գուցե քեզ ոչ ոք այնքան չի երազել, գուցե ոչ ոք այնքան չի հպարտացել քեզանով, չի պարծեցել քեզանով, չի ապավինել քեզ, որքան տարագիր հայը, օտար երկինքների տակ ապրող հայը: Երբ ծեծում կամ վիրավորում են երեխային, նա իր հորն է կանչում, իր մեծ եղբորն է կանչում կամ պարզապես սպառնում է.

— Հիմա հայրիկիս կասեմ, հիմա եղբորս կասեմ…

Եվ այդ երեխայի նման էլ հայերն էին ապրում օտար ափերի վրա, նոր վիրավորանքներին, նոր զրկանքներին ի պատասխան՝ ճակատագրի դեմ ծառանալով:

— Ալ բավ է, հայրենիք կերթամ:

— Գիտես քի անտե՞ր ենք, մենք ալ մեր հայրենիքն ունենք...

Եվ հայրենիքը գրկաբաց ընդունեց իր հալածական որդիներին: Ընդունեց, իհարկե, ոչ այնպես, ինչպես ուզում էր և ոչ այնպես, ինչպես կուզենար: Բայց ավելին չէր կարող: Հայրենիքն ինքն էլ պատերազմի դաշտից դուրս եկած մի զինվոր էր, հոգնած մի զինվոր, որը դեռ չի հանել վիրակապերը: Բայց հայը, հայրենիքից հեռու, ավազուտներում տներ կառուցած, արհեստանոցներ ու դիետիկ ճաշարան բացած հայը, Այնճարում, Սուրում, աշխարհի բոլոր անկյուններում բույն հյուսած աշխատող ձեռքերը ի՛նչ կանեին հիմա, իրենց հայրենիքում: Հայաստան պետության մեջ, սովետական երկրի մեջ, որի կառավարությունն ու կուսակցությունը հող էին տալիս պանդուղտ հային ու ասում՝ տուն շինիր, փող էին տալիս ու ասում՝ տուն շինիր, աշխատանք էին տալիս մարդկանց:

Եսայի Յաղուբյանն էլ հող ստացավ Շահումյան ավանում ու որդիների հետ սկսեց կառուցել իր իսկական տունը: Պետք էր մտածել նաև աշխատանքի մասին: Եվ այստեղ պարզվեց, որ ամենաղժվարը Եսայի Յաղուբյանի խնդիրն է: Զավակները՝ Հակոբը, Վեհանուշը, Վարդգեսը, Զոհրապը, Գևորգը, Մարին անմիջապես աշխատել սկսեցին կամ սովորել: Հետո աղջիկները տրիկոտաժի ֆաբրիկա մտան, Հակոբը շինարարություն գնաց, Վարդգեսը՝ պետական համալսարան, Զոհրապին ատոմեքենա տվեցին, Գևորգը ներկել սովորեց: Իսկ Եսային…

Աշխատանքի տեղավորման բաժնում նրան հարցրին.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ի՞նչ մասնագիտություն ունեք, հայրի՛կ:

— Զենք կսիրեմ,— ասաց նա:

Ծիծաղեցին բարեհոգաբար: Ի՞նչ զենք, ի՞նչ բան, ա՛յ քեզ ծերուկ, զենքերը նոր են ցած դրել, հոգնել են, անունը մի՛ տուր:

— Ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ, հայրիկ:

— Տարիքիս մի նայեք,— ասաց Եսային,— դիպուկ կկրակեմ:

Եսային նայում էր այդ ջահել առողջ, ծիծաղող մարդկանց ու խոսքեր էր փնտրում, որ բացատրի նրանց իր ցավը: Դե, ինչպես ասի նրանց, ինչպես հասկացնի, որ ինքը հազար մասնագիտություն է ունեցել առաջ, շատ առաջ, երբ խաղաղ ապրում էին Մուսա լեռան լանջին: Փայտից ու ոսկորից հիանայի սաներ էր սարքում: Չթողեցին: Ծառեր էր տնկում, այգի էր մշակում: Չթողեցին: Մաճ էր բռնում, հող էր վարում: Չթողեցին: Ստիպեցին զենք առնել ձեռքը, զենք սիրել, դիպուկ կրակել...

— Գուցե պահակ նշանակենք, ի՞ր,— առաջարկեց մեկը:

— Զենք կա՞,— հարցրեց Եսային:

Նրան մի հրացան տվեցին, ու նա այդպես էլ ապրեց զենքը ձեռքին՝ խաղաղված ու անխռով, իր մեծ գերդաստանով շրջապատված, իր և իր որդիների տան մեջ, իր ազատ, իր հզոր տան մեջ: Նրան հաճախ էին շուրջկալում երեխաները, խնդրում էին պատմել հին – հին օրերից, իր մասին, Մուսա լեռան ու մուսալեռցիների մասին, սակայն Եսային խուսափում էր միշտ:

— Ինձի ձեր պատմությունն ըրեք, օղլում,— ժպտում էր նա,— հինը մոռցեք, սրտերնիդ մի՛ ավրեք: Ինձի ձեր պատմությունն ըրեք: — Գրկում էր, ծնկանը դնում, խառնում մազերը: — Դուն, օղլում, ժեներալ պիտի դառնաս,— ասում էր,— իսկ դուն, օղլում, մարաջախտ, հասկցա՞ր:

Մի անգամ նրան հայտնեցին, թե դաշնակները չեն ընդունում, որ ինքը Մուսա լեռան հերոսներից է եղել, թե որպես այդպիսին մեջտեղ են բերել մեկին, որ հերոսամարտի ժամանակ քաջ պատանի է եղել միայն: Ինչո՞ւ չես գրում, բողոքում, ասացին նրան:

Սպասում էին, որ Եսային կզայրանա, բայց նա ժպտաց միայն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ես հերոս չեմ եղել,— ասաց նա,— այնտեղ հերոսներ չեն եղել: Մենք բոլորս էլ մուսալեռցիներ էինք: — Երկար լռեց, ապա ավելացրեց կամացուկ: — Հոգ չէ, օղլում, օր մը կփնտրեն ինձի, կգտնեն օր մը...

Շահումյանի ավանային գերեզմանատանը, ցանկապատով շրջապատված փոքրիկ մի հողաթումբ կա, կողքին տախտակ, վրան գրված. «Եսայի Յաղուբյան, 1877—1957»: Մի անուն ազգանուն կա և երկու թիվ, և այդ թվերի միջև ընկած կարճ գիծը երկար ու փառավոր կյանքն է այն մարդու, որ ապրեց աշխարհում խիզախ ու անընկճելի, ապրեց պատվով ու հպարտ և արդարության զինվոր մնաց միշտ:

Ամեն տարի աշնանը, սեպտեմբերի 15 – ին, Հայաստանի տարբեր ծայրերից դեպի այդ նվիրական հողաթումբն են շարժվում մուսալեռցի ծեր մարտիկները՝ իրենց ընտանիքներով, որդիներով ու թոռներով: Նստում են, զրուցում, հիշում անցած տխուր օրերը: Հարիսա են եփում, որ սուրբ ճաշ էր միշտ և ավելի սուրբ դարձավ Մուսա լեռան վրա, երբ ալյուր չկար: Բարձրացնում են գինու թասերը, թեքվում, մի փոքր հեղում են հողին ու խոնարհում գլուխները հիշատակի առջև այն հերոսի, այն մի բուռ հերոսների, որոնց հեռատեսությունն ու խիզախությունը բնաջնջումից փրկեց սուետահայերին, նրանց հնարավորություն տվեց հայ մնալու աշխարհում ու տեսնելու իրենց ազատ, վերածնված, երազի Հայրենիքը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եփրատը կարմիր կհոսեր

197... թվականի մայիսի տասներկուսն էր: Կեսօր:

Երբ «Բժիշկներն ընդդեմ պատերազմի» Դամասկոսյան միջազգային գիտաժողովում ընդմիջում հայտարարվեց, Վահան Վանյանը մի կողմ տարավ իր հին բարեկամին, կանադացի կենսաբան Ռոբերտ Փորթերին.

- Հիմա մեզ փոքրիկ խմբերի պիտի բաժանեն և ուղարկեն տարբեր շրջաններ,- ասաց նա:- Կուզե՞ս, որ միասին լինենք:

- Որտեղ քո կոնյակը, այնտեղ էլ ես,- կատակեց կանադացին:

- Ուրեմն պահանջի՛ր, որ մեզ ուղարկեն Ջզիրիե:

- Դա՞ որ գրողի ծոցն է,- զարմացավ Ռոբերտ Փորթերը:- Ինչո՞ւ անպայման Ջզիրիե:

... Երեկոյան այդ նույն հարցը կանադացուն գիտաժողովի արաբ կարգադրիչ-քարտուղարը տվեց.

- Ինչո՞ւ անպայման Ջզիրիե, պարո՛ն Փորթեր:

Ռոբերտ Փորթերն ի պատիվ իրեն կարմրեց:

- Ժամանակին ես զբաղվել եմ Եփրատի ավազանի աղտոտվածության հարցերով:

Կարգադրիչ-քարտուղարը տարեց մարդ էր: Նա սպիտակ արտևանունքների տակից թերահավատությամբ նայեց կանադացի գիտնականին, նայեց քիչ հեռու կանգնած Վահան Վանյանին և ասաց.

- Մեր կառավարությունը արգելում է այցելել Ջզիրիե և Դեր Զոր:

- Ո՞ւմ,- հոնքերը կիտեց կանադացին:

- Զբոսաշրջիկներին,- պատասխանեց կարգադրիչ-քարտուղարը:

- Բայց մենք զբոսաշրջիկներ չենք,- համառեց Ռոբերտ Փորթերը,- և Սիրիա ենք եկել աշխատելու և ոչ թե զբոսնելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ռոբերտ Փորթերը մեծ անուն էր գիտության աշխարհում: Նրա Նոբելյան մրցանակի առջև փակ դռներ չկային: Այնպես որ շատ շուտով տեղի տվեց նաև գիտաժողովի կարգադրիչ-քարտուղարը:

- Ձեր ցանկության մասին տեղյակ կպահեմ ուր հարկն է,- ասաց նա:- Ո՞ւմ կուզենայիք, որ ուղեկցեր ձեզ:

- Ինձ ուղեկցող պետք չէ,- ասաց Ռոբերտ Փորթերը:- Ինձ հետ կլինի դոկտորը Սովետական Միությունից:- Նա գլխով ցույց տվեց Վահան Վանյանին:

Կարգադրիչ-քարտուղարը շփոթվեց:

- Առանց տեղացի ուղեկցողի չի լինի, պարոն Փորթեր:

- Ես Դամասկոսում եմ ծնվել,- ասաց Վահան Վանյանը:

- Արա՞ք եք,- արաբերեն հարցրեց կարգադրիչ-քարտուղարը:

- Հայ եմ,- արաբերեն պատասխանեց Վահան Վանյանը:

Կարգադրիչ-քարտուղարը ուշադիր, նույնիսկ սևեռուն նայեց Հայաստանից եկած բժշկին:

- Ես ձեզ հետ առանձին կուզենայի խոսել,- ասաց նա արաբերեն:

- Ինձ թվում է, թե ես այստեղ արդեն ավելորդ եմ, եղբա՛յր,- բարձրաձայն ծիծաղեց Ռոբերտ Փորթերը, ելավ տեղից ու քայլեց դեպի ընդարձակ պատշգամբը, որտեղ փոքրիկ խայտանկար սեղանիկների շուրջը, գույնզգույն ամպհովանիների տակ նստոտած բազմալեզու վիճում և օշարակ ու ջրախառն գինի էին խմում գիտաժողովի մասնակիցները:

Արաբ պաշտոնյան գրասեղանի գզրոցից հանեց գիտաժողովի մասնակիցների ցուցակը, կարդաց, բարձրացրեց գլուխը, մի պահ խորին զարմանքով դիտեց իր առջև նստած ոչ երիտասարդ մարդուն, նորից կարդաց ու նկատելիորեն հուզված հարցրեց.

- Դոկտոր Վահան Վանյա՞ն:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը:

- Որդին արժանահիշատակ Արմեն Վանյանի՞:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը, և նրա աչքերն ակամա արցունքով լցվեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արաբ պաշտոնյան բարձրացավ աթոռից, խոնարհեց կարճ խուզած, ալեհեր գլուխը, աջ ձեռքի ափը աչքին տարավ:

- Ես մասնակցում էի ընկեր Արմենի հուղարկավորությանը,- ասաց նա: - 42 թվականին էր: Այսօրվա պես հիշում եմ: Ամբողջ Դամասկոսը հավաքվել էր իր հարգանքը մատուցելու հայ ժողովրդի նշանավոր զավակին: Ինքը՝ Խալեդ Բեքդաշը խոսք ասաց ձեր հոր աճյունի մոտ: Ասաց՝ ընկեր Արմենը կամուրջ էր հայ և արաբ ժողովուրդների մեջ: Դուք պետք է հպարտ լինեք, որ այդպիսի հայր եք ունեցել:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը:

- Հիշում եմ, լավ հիշում եմ: Հետո խոսեցին Նիկոլա Շավին, Ֆուրաժալլա Հըլուն, Հարություն Մադեյանը: Դուք գիտեի՞ք, որ ձեր հայրը կոմունիստ էր և Դամասկոսի հայ առաջադիմական միության նախագահը:

- Այո՛,- ասաց Վահան Վանյանը:

- Ես ձեզ հիշեցի,- ասաց արաբ կարգադրիչ-քարտուղարը:- Դուք երեխաներից մեծն էիք:

Վահան Վանյանը գլխով արեց:

Երեխաներից այդ մեծը ընդամենը ինը տարեկան էր, երբ ավտովթարի ենթարկվեց հայրը: Թաց նոյեմբեր էր, բայց լեփ-լեցուն էր գերեզմանատունը: Թաց էին նաև մարդկանց աչքերը: Առաջին անգամ Վահանն այդ օրը լսեց, որ հայրը Հայաստանի օգնության կոմիտեի կենտրոնական վարչության անդամ է եղել, սիրիահայ առաջադիմական միության ու Հայաստանի պաշտպանության լիգայի Դամասկոսի կազմակերպության նախագահը: Բոլոր ելույթ ունեցողները արաբերեն ու հայերեն կրկնում էին այդ բառերը և էլի շատ բառեր, որոնց իմաստն ու նշանակությունը դժվարությամբ էին հասնում նրա մանկական ուղեղին՝ հայրենասեր... անբասիր... հայ և արաբ բարեկամության դրոշակակիր... Մեծ կորուստ... անմոռաց հիշատակ... Սիրված զավակ...

Երբ ասում էին «սիրված զավակ», Վահանը ցնցվում էր ամեն անգամ, կարծելով, թե խոսքն իր մասին է, որովհետև Արմեն հայրը հաճախ էր նրան ասում՝ «դու իմ ամենա-ամենա-ամենասիրելի զավակն ես, տղա՛ս»:

Հետո Հարություն Մադեյանը խոսեց՝ ձեռքը փաղաքշանքով Վահանի գլխին դրած: Վահանը լավ գիտեր նրան, որովհետև ընկեր Մադեյանը միշտ ցանկալի և սպասված հյուր էր Արմեն Վանյանի տանը, երբ Բեյրութից Դամասկոս էր գալիս և այն ժամանակ Վահանի համար չգիտես ինչու բոլորը ընկեր Մադեյան էին կոչում նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մեր ընկեր Արմենը հեռացավ մեզնից, վառ հավատով, թե հեռու չէ այն օրը, երբ Կարմիր բանակը ոչնչացնող հաղթանակ կտանի անիծյալ ֆաշիզմի դեմ: Նա իր կողմից ամեն ինչ արեց այդ հաղթանակը է՛լ ավելի մոտեցնելու համար: Նրա վերջին խոսքերն էին,- ասաց ընկեր Մադեյանը:- Բարևներս տարեք կուսակցությանս հայ և արաբ ընկերներուն, մեր կուսակցության ղեկավարներուն...

Վահանը փորձեց բարձրացնել գլուխը և ասել, որ ընկեր Մադեյանը սխալվում է, որ Արմեն հայրիկի վերջին խոսքերը դրանք չէին: Ինքը հո բոլորից լավ գիտե: Իհարկե: Հայրը մեկնեց գունատ ձեռքը, Աննա մայրիկի ձեռքը բռնեց ու ասաց.

- Սիրելի՛ կին, վաղը, մյուս օրը կավարտվի պատերազմը... Ի՛մ միակ, իմ վերջին խնդրանքը քեզ՝ զավակներիս կտանես Հայաստան:

Ահա թե ինչ ասաց հայրը:

- Իսկ ձեզ հայտնի՞ է, որ ընկեր Արմեն Վանյանը պատահական ավտոարկածի զոհ չէր: Ավտոաղետը կազմակերպել էին անգլիացիները: Ձեր հայրը կուսակցության հանձնարարությամբ աշխատանքի էր անցել անգլիական ռազմական օդանավակայանում՝ իբրև թարգմանիչ: Նրան մատնել էին:

Վահան Վանյանը գիտեր այդ: Ավելի ճիշտ՝ հետո իմացավ: Իմացավ, մտածեց ու հասկացավ, որ հայրը պարզապես ուրիշ ելք չի ունեցել: Որ կուսակցությանը չափազանց անհրաժեշտ է եղել իմանալ, թե ինչ է կատարվում Դամասկոսի մոտ գտնվող անգլիական ռազմական օդանավակայանում: Ծայրաստիճան անհրաժեշտ է եղել: Այլապես ինչու պետք է Լայպցիգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտած մարդը, գերմանացի կոմունիստների առաջնորդ Էռնեստ Թելմանի ընկերն ու բարեկամը, 1929 թվականից Լիբանանի կոմունիստական կուսակցության անդամը, Դամասկոսի առաջադիմականների լիդերը որպես անգլերենի սովորական, համեստ մի թարգմանիչ աշխատանքի անցներ ինչ-որ օդանավակայանի շինարարությունում:

- Հուսով եմ, որ տիկին Վանյանը ողջ-առողջ է,- հարցրեց արաբ կարգադրիչ-քարտուղարը:

- Շնորհակալություն,- հուզված գլխով արեց Վահան Վանյանը:- Կա, ապրում է մայրիկս: Փա՛ռք աստծո:

- Մանկաբարձ էր, այնպես չէ՞: Դարձյալ աշխատո՞ւմ է, թե հանգստանում է երևի:

Վահան Վանյանը ժպտաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Աշխատում է,- ասաց նա,- մայրիկս ասում է՝ մինչև ձեռքերիս վերջին շարժումը երեխաներ պիտի բերեմ լույս աշխարհ: Մայրիկս ասում է՝ հայ երեխաներն առանց այդ էլ ծնվելուց հետո դժվար են ապրում աշխարհում, ես ամեն ինչ պիտի անեմ, որ գոնե նրանց ծնունդը դժվար չլինի:

- Այո՛,- միանգամից տխրած ասաց արաբ ծերունին,- ձեր մայրիկի սերունդը շատ դժվար լույս աշխարհ եկավ:

Վահան Վանյանը զգաց, որ ակամա խոր հարգանք է տածում այդ ծեր, բայց ամուր կազմվածքով արաբի նկատմամբ: Ո՞վ գիտե, երևի հոր ձգած երբեմնի կամուրջը նրա հոգու վրայով էլ էր անցել: Կամ պատճառն այն էր նաև, որ Արմեն Վանյանի ժառանգների տանը մինչև հիմա էլ արաբական կերակրատեսակների հետ շատ ուրիշ արաբական բառեր էին մնացել ու հուշեր տարբեր արաբ մարդկանց մասին, որոնցից մեկին հատկապես չէր մոռանում Աննա մայրիկը ու մեկ էլ ասում էր ժպտալով, ուրախացած, ինչպես հին մի թանկագին սնդուկից մի շատ հաճելի իր-հիշողություն հանես...

- Մենք մի արաբ բարեկամ ունեինք, Խալիֆ ալ Մահմուդ, շատ ազնիվ մարդ էր...

- Ներեցե՛ք, խնդրում եմ,- այլևս չդիմանալով՝ հարցրեց Վահան Վանյանը:- Ձեզ ինչպե՞ս են մեծարում... Ձեր անունը Խալիֆ ալ Մահմուդ չէ՞:

Արաբը լայն ժպտաց և աչքերի մոտ մանրիկ-մանրիկ կնճիռներ հավաքվեցին.

- Ո՛չ,- ասաց նա,- Խալիֆ ալ Մահմուդը ձեր հոր արաբերենի ուսուցիչն էր, լույս իջնի նրա գերեզմանին, և ձեր ընտանիքի բարեկամը, իսկ ես ջահել էի և ընդամենը կուսակցության մեջ ձեր արժանահիշատակ հոր կրտսեր գործընկերը լինելու պատիվն եմ ունեցել: Միայն այդքանը: Իմ անունն է Ռաշիդե Բեքքար:

Նա կիսաբաց դռնից պատշգամբի կողմը նայեց, որտեղ գիտաժողովի մասնակիցներն ուրախ աղմկում էին, որոնեց ու գտավ կանադացի հռչակավոր գիտնական Ռոբերտ Փորթերին, որը հավանաբար իր իսկ սրամտության վրա քրքջում էր բարձրաձայն, եկավ ու նստեց Վահան Վանյանի դիմաց.

- Բարեկամիս որդի,- ասաց նա:-Ինչո՞ւ ես ուզում Դեր Զոր գնալ: Զզիրիե մեկնելու մտահղացումը քոնն է, չէ՞:

- Այո՛,- հաստատեց Վահան Վանյանը:

- Ինչո՞ւ ես ուզում գնալ: Ինչո՞ւ ես ուզում պղտորել հոգիդ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեմ կարողանում ապրել: Չեմ կարողանում մոռանալ: Չեմ հանգստանում,- անկեղծորեն խոստովանեց Վահան Վանյանը: Ու նրա աչքերը արցունքոտվեցին կրկին:

- Բայց դու ի՞նչ ես տեսել,- զարմանք հայտնեց արաբ ծերունին:- Մարդիկ մոռանում են այն, ինչ տեսել են: Տեսածը կարելի է մոռանալ կամ չմոռանալ: Դու այդ ի՞նչն է, որ չես մոռանում:

- Մայրս հիշեցնում է,- ասաց Վահան Վանյանը:-Մայրս հիշում ու հիշեցնում է: Հիմա էլ թոռներին: Երբ շատ փոքր էինք, խնդրում էինք հեքիաթ պատմել: Ինչպես բոլոր փոքրերն իրենց մայրերին են խնդրում: Իսկ նա միայն մի հեքիաթ գիտեր, ընդամենը մի հեքիաթ: Փակում էր աչքերն, արտասվում էր ու ասում. «Եփրատը կարմիր կհոսեր»:

- Սոսկալի է,- ասաց ծերունին:

- Մայրիկ,- խնդրում էինք,- ուրիշ հեքիաթ պատմիր, ուրիշ հեքիաթ չգիտե՞ս, ա՛յ մայրիկ, Մոխրոտիկի մասին, քնած արքայադստեր մասին, երեք խոզուկների մասին: Աշխարհում քի՞չ հեքիաթներ կան: Իսկ մայրս փակում էր աչքերը, օրորվում էր տեղում ու ասում. «Եփրատը կարմիր կհոսեր»:

- Հիվանդություն է,- ասաց արաբ ծերունին:- Բժշկագիտությանը հայտնի՞ է նման հիվանդություն, դոկտո՛ր:

- Չգիտեմ,- ասաց Վահան Վանյանը:- Բայց մայրս այդ հիվանդն է: Ես այդ հիվանդն եմ: Եվ իմ երեխաներն էլ այդ հիվանդն են: Ներեցե՛ք ինձ, մեծապատի՛վ պարոն Ռաշիդե Բեքքար: Ներեցեք ինձ:

Ծերունին ձեռքը նրա դաստակին դրեց:

- Աստված տա, որ դուք կարողանաք ներել աշխարհին,- ասաց նա:- Ուրեմն անկասելի համարենք Դեր Զորը տեսնելու ձեր վճիռը:

- Մայրս սպասում է ինձ,- ասաց Վահան Վանյանը:

Ռաշիդե Բեքքարը երկար ժամանակ լուռ էր և Վահան Վանյանին էր նայում կկոցած բարի, կարեկից աչքերով՝ ինչպես իրոք անբուժելի հարազատին կնայեին:

- Դամասկոսում արաբ բարեկամներ ունե՞ք:

- Մանկության ընկերներ ունեմ: Նրանք ճանաչեցին ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վերցրե՛ք դեմքով ձեզ նման մեկի անձնագիրը ու մեկնեցեք թաքուն: Պաշտոնապես ձեզ ոչ մեկը թույլ չի տա: Գիտե՞ք, որ թուրքական կառավարությունը բավականին պատկառելի գումարներ է վճարում և պայմանագիր ունի Սիրիայի կառավարության հետ, որպեսզի ընդհանրապես օտարերկրացիներ չմտնեն Դեր Զոր: Ո՞ւր մնաց՝ հայեր:

- Ինչո՞ւ,- ասաց Վահան Վանյանը:- Ամաչո՞ւմ են:

Արաբ կարգադրիչ-քարտուղարը ժպտաց մեղմորեն, ասես ներողամտաբար.

- Չգիտեմ,- ասաց նա:- Երբ խոսքը նրանց մասին է, ես այդ բառը նույնիսկ հեգնանքով չէի օգտագործի: Կուզե՞ք իմ խորհուրդը լսել, բարեկամիս որդի: Քանի որ հաստատապես վճռել եք մեկնել, պարոն Ռոբերտ Փորթերին մի կանչեք ձեզ հետ: Նա ուշադրություն կգրավի: Այնինչ ձեզ պետք է ոչնչով աչքի չընկնել, տեղացի դառնալ, ինչպես մի ժամանակ էիք և անպայման տեղացի ուղեկցող ունենալ: Որովհետև,- ասաց Ռաշիդե Բեքքարը,- ձեր արաբերենը բառարանի լեզու է... Որովհետև ձեր արաբերենի ուսուցիչը այնուամենայնիվ Խալիֆ ալ Մահմուդը չի եղել:

- Մեծապես շնորհակալ եմ: Ես կկատարեմ ձեր բոլոր խորհուրդները,- ասաց Վահան Վանյանը՝ ծերունու մեկնած ձեռքը երախտագիտությամբ սեղմելով:

Ռաշիդե Բեքքարը անմիջապես բաց չթողեց նրա ձեռքը:

- Բայց եթե ես կարողանայի համոզել ձեզ...

- Չի լինի,-գլուխն օրորեց Վահան Վանյանը:- Չի լինի: Ես դրա համար եմ հասել Դամասկոս: Ես ասացի, չէ՞, որ այդ հիվանդն եմ, հայրիկի՛ս բարեկամ: Ես անպայման պիտի տեսնեմ այն տեղը, որտեղ մորս իմացած միակ, սարսափելի հեքիաթն է ծնվել: Այլապես չեմ հանգստանա: Ես ուզում եմ իմ աչքերով տեսնել, թե ի՞նչ հեքիաթ է եղել դա, որ արդեն երեք սերունդ պատմում է մայրս ու չի հանգստանում: Այդ ի՞նչ նզովյալ հեքիաթ է, որ հանգիստ չի տալիս մեզ ու վերջ չունի:

*

* *

Ավտոմեքենան ֆրանսիական փոքրիկ ու հին մի «պեժո» էր՝ ձևով ու գույնով ճիշտ զատկի նման և զատկի նման էլ ցատկոտելով էր գնում անհարթ ճանապարհի վրա: Ղեկի մոտ նստած էր արաբի պես թուխ, արաբի անուն-ազգանունով զտարյուն հայ Մովսես Աբաջյանը, որ հանգամանքների բերումով կամ նպատակահարմարության տեսակետից այս աշխարհում ապրում էր Մուսա Աբաջի անունով: Դամասկոսում ապրող նրա հարազատ եղբայրը՝ Գառնիկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբաջյանը, որ Վահան Վանյանի մանկության ընկերն էր եղել, հեռախոսով զանգել էր Հալեպ, որտեղ Մուսա Աբաջին էր բնակվում և խնդրել, որպեսզի նա ուղեկցի իրենց հայրենակցին դեպի Դեր Զոր:

Եվ ահա Սիրիայի բիբլիական ճանապարհների վրա, չոր դաշտերի, տատասկների ու ձիթենիների երկարությամբ նեղլիկ «պեժոյի» մեջ, ուս ուսի գրեթե կպած, փափուկ թափքին վերուվար էին անում՝ Երևանից Հալեպ հասած Վահան Վանյանը ու հալեպցի Մուսա Աբաջին: Մուսան այնքան հայերեն գիտեր, որքան Վահանն արաբերեն, բայց իր վիճակից նեղվում էր: Նեղվում էր ու մխիթարում իրեն:

- Գիտե՞ս ինձ հայերեն ովքեր կսովորեցնեն... Չգիտես: Իմ տղաքը: Հայկական դպրոց կհաճախեն:

Վահան Վանյանը վաղուց սրտնեղություն չէր զգում, երբ աշխարհի որևէ ծայրում հանդիպում էր հայի, որ հայերեն չգիտեր և հանգամանքների բերումով կամ նպատակահարմարության տեսակետից, ասենք, իր Թորոսյան ազգանունը Թրուայա էր դարձրել: Իսկ երբ շուրջ քսան տարի առաջ երիտասարդական մի խմբի հետ Անգլիայում էր, ձեռք չմեկնեց տարեց մի բժշկի, որը ներկայացավ որպես Ջոն Մարտիմեր, իսկ հետո հայտարարեց, թե ինքը հայ է և իր իսկական անունը Կիրակոս Մարտիրոսյան է: Չմեկնեց ձեռքը և ցասումից շողացող աչքերով ասաց, որ ինքը չի ցանկանում ծանոթ լինել մի հայի հետ, որն ամաչում է իր հայկական անունից: Նա սպասում էր, որ Ջոն Մարտիմերը կզայրանա, առնվազն կասի, որ դա նրա գործը չէ, բայց փոխարենը Կիրակոս Մարտիրոսյանը տխրությամբ ասաց հայերեն՝ տառապելով ու հեգելով.

- Եթե ես քեզ պատմեմ, տղա՛ս, թե ինչպես է պատահում, որ Կիրակոս Մարտիրոսյանը դառնում է Ջոն Մարտիմեր, թեթև զբոսանքի համար քեզ տրված երկու շաբաթը ոչ թեթև կթվա և ոչ էլ զբոսանք: Ապրի՛ր և ուրախացի՛ր ուրեմն, որ ոչ քո հայրը և ոչ էլ դու դրա հարկը ունեցած չեք:

Վահան Վանյանը այդ ժամանակ այնուամենայնիվ չհասկացավ, չուզեց հասկանալ և ընդունել որևէ պատճառաբանություն, նույնիսկ ասաց, որ կյանքում երբևէ չի հանդիպել որևէ անգլիացու, ամերիկացու կամ ֆրանսիացու, որը հանգամանքների բերումով ու նպատակահարմարության տեսակետից իր ազգանվանը «յան» ավելացներ:

Եվ հայրենիք վերադառնալուց հետո այդ միջադեպի ու իր հայրենապաշտ, ուղղամիտ դիրքորոշման մասին ոչ առանց հպարտության պատմեց մորը: Եվ հանկարծ Աննա մայրիկը, ճիշտ այն ծեր բժիշկ Կիրակոս Մարտիրոսյանի ձայնով, տխրությամբ ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եթե մի օր իմ քեռիները ձիերը հեծած չմտնեին Դեր Զոր, իմ ազգանունը, զավա՛կս, արաբական կլիներ և ինձնից ծնված երեխաները՝ արաբներ: Բայց մի՞թե դրանում մեղավորը ես կլինեի:

- Քոնն ուրիշ է, մայրի՛կ,- այն ժամանակ ասաց Վահան Վանյանը:

- Իսկ մենք ի՞նչ գիտենք, թե ուրիշներինն ինչ է,- ասաց մայրը:- Եվ ո՞վ կարող է իմանալ:

Այնպես որ, դոկտոր Վահան Վանյանը դառնությունից բացի սրտի խորքում որևէ դատ չուներ իր արաբացած հայրենակցի դեմ, և եթե դատ ուներ՝ ամենևին էլ նրա դեմ չէր, այդ պատճառով էլ ձեռքը Մովսես Աբաջյանի ուսին դրեց ու ժպտալով ասաց.

- Սովորաբար ծնողներն են մայրենի լեզու սովորեցնում իրենց զավակներին, Մովսե՛ս եղբայր, քեզ մոտ հակառակն է:

- Հա՛,- ասաց Մովսեսը:- Բայց ես օրինակի համար չեմ: Ուր որ հիմա կերթանք՝ շատ ընտանիքներ կան, որոնց ծնողները հայերեն չգիտեն, բայց հատուկ ուսուցիչներ են հրավիրել Հալեպից ու Դամասկոսից և հայերեն կսովորեցնեն իրենց զավակներին: Եվ ահա զավակներն ալ ծնողներին կսովորեցնեն:

- Դեր Զորո՞ւմ:

- Դեր Զորում:

- Դժվար թե որևէ ուրիշ տեղ նման բան լինի,- գլուխը թափահարեց Վանյանը:

- Չգիտեմ,- ասաց վարորդը:- Ես Հալեպից դուրս որևէ տեղ չեմ եղել:

Օրն սկսում էր իրիկնանալ: Մեքենային ընդառաջ վազող շրջապատի բնանկարը մգանում, խտանում էր հետզհետե, սևանում էին ձիթենիների առանց այդ էլ սև, պրկված, ջղաձգված, գալարված բները:

- Զարմանալու բան չէ՞,- հանկարծ ինքն իրեն ասաց Մովսես Աբաջյանը:-Ես տեսած չկամ Սիրիա եկած մի հայի, որ թույլատրելի և անթույլատրելի ամեն ինչ չանի՝ Դեր Զորը տեսնելու համար:

- Իսկ այդպիսի մի թուրքի տեսած կա՞ս:

- Չէ՛,- ատամների արանքից նետեց վարորդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուրեմն սուտ է, բարձրաձայն մտածեց Վահան Վանյանը: Սուտ են և՛ Դոստոևսկին, և՛ իրավագիտական հին ու նոր բոլոր անվերապահ տեսություններն այն մասին, թե հանցանքի վայրը ձգում, քաշում է հանցագործին: Ահա, եկեք, տեսեք ու համոզվեք, ամենագետ պարոն տեսաբաններ, աշխարհի ամենամեծ ոճիրներից մեկն այստեղ է կատարվել, բայց ոչ թե ոճրագործներն են մղվում դեպի իրենց հանցանքի վայրը, այլ՝ զոհերը: Եվ ոչ միայն զոհերը: Զոհերի ժառանգները: Իսկ զոհերից ոմանք նույնիսկ չեն էլ հեռացել նախճիրի վայրից: Մնացել ու ապրում են: Ու արաբական ազգանուններ կրելով հայկական դպրոց են բացում իրենց երեխաների համար: Դե եկ, եկ ու հասկացիր, թե այդ ի՞նչ մարդիկ են դրանք, թե ի՞նչ ժողովուրդ է սա: Եկ ու բացատրի...

Վահան Վանյանը փակել էր աչքերն ու մտքերի մեջ ընկել: Իսկ երբ բացեց աչքերը, նրան մի պահ թվաց, թե հեռվում տեսած լույսերն այն ցոլքերն են, որ ասես կոպերի տակ են լինում ու հայտնվում են, երբ ամուր փակելուց հետո միանգամից բացում ես աչքերդ: Նա փակեց աչքերն ու բացեց նորից: Լույսերը չանհետացան: Ընդհակառակը, ավելի ու ավելի պարզ ուրվագծվեցին երեք բլուրներ հեռվում, որ շրջապատի թանձր խավարի մեջ վառվում էին կանաչ կրակի նման:

- Սա՞ ինչ հրաշք է,- ակամա բացականչեց Վահան Վանյանը:- Սա՞ ինչ գեղեցկություն է...

Մովսես Աբաջյանը չպատասխանեց, բայց չգիտես ինչու ցնցվեց ու միաժամանակ արագացրեց մեքենայի ընթացքը:

- Ես նման գեղեցկություն չէի տեսել,- ամեն ինչ մոռացած, հիացմունքով շարունակեց Վահանը, հետն էլ զարմանալով ուղեկցի անտարբերության վրա:

Հետո անմիջապես էլ մտածեց, թե Մուսա Աբաջին երևի հարյուր անգամ տեսել է այդ կանաչ կրակները և գուցե դրանից է, որ բոլորովին չի զարմանում: Մի՞թե հիմա ինքը զարմանում է, երբ Գառնի է գնում կամ Էջմիածին: Երբ Արարատի գագաթներին է նայում կամ Սևանի ջրերին: Մտածեց ու անմիջապես էլ խոստովանեց, որ զարմանում է, որովհետև անհնարին է չզմայլվել կատարյալ գեղեցիկով, թեկուզ հարյուրերորդ անգամ տեսնես այն:

Իսկ բլուրներն ավելի ու ավելի էին մոտենում՝ պայծառ կանաչավուն լույսով ընդգծելով իրենց, ասես անթիվ անհամար լուսատիկներով պաշարված:

- Մի՞թե ֆոսֆորի բաց հանքեր են,- հանկարծ կռահեց ու կրկին սակավախոս ուղեկցին դարձավ Վահանը:

Մովսես Աբաջյանը նրա կողմը թեքեց մռայլված դեմքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այդ բլուրների մասին ձեզ ոչինչ չե՞ն պատմել, եղբա՛յր:

- Ո՛չ,- ասաց Վահան Վանյանը:- Զարմանալի է, բայց նույնիսկ մայրս չի պատմել:

- Երբ ձեր մայրն այստեղ է եղել, այդ բլուրները դեռ լույս չէին տալիս,- ասաց Մովսես Աբաջյանը:- Զոհված հայերի ոսկորներից են կազմվել այդ բլուրները, եղբա՛յր: Քամիները եկել, քշել տարել են դրանց վրայի հողը... Այդպես է եղել, եղբա՛յր...

Վահան Վանյանը միանգամից ծակոց զգաց սրտի մեջ ու զգաց, որ շունչը կտրվում է... Դեմքն այրվեց: Ասես ապտակեցին: Ինչպե՞ս թե... Իսկ ինքն ասում էր՝ գեղեցիկ է... ասում էր՝ հրաշք է... Ի՛նչ ահավոր սրբապղծություն... Երևի մարդիկ ճիշտ այսպես չհասկանալով, չըմբռնելով ոչինչ, զմայլվել են համակենտրոնացման ճամբարներում արտադրված մազե պայուսակնեերով, չիմանալով, որ դրանք զոհերի մազերից են հյուսված:

- Ուրեմն Եփրատը մոտերքում է,- որպեսզի չխեղդվի՝ սոսկալի ամաչելով ասաց նա:

- Հա՛,- ասաց Մովսես Աբաջյանը:- Կողքով ենք անցնում:

Վահան Վանյանը շրջվեց այն կողմը, որտեղ գետը պիտի լիներ, բայց ոչինչ չտեսավ: Անասելի մութ էր: Եվ լավ էր, որ մութ էր, որովհետև աչքերից արտասուքներ էին թափվում:

- Կողքին ծառեր կա՞ն,- հարցրեց Վահանը:

- Ի՞նչ,- չհասկացավ նրա ուղեկիցը:

- Ծառեր, ասում եմ, ծառեր կա՞ն:

Մովսես Աբաջյանը չափազանց զարմացավ ու տարակուսանքով թոթվեց ուսերը:

- Կան,- ասաց նա:- Այսինքն՝ կլինեն... Ես ուշադրություն չեմ դարձրել: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ տվեցիր այդ հարցը, եղբա՛յր:

- Է՛հ,- ասաց Վահան Վանյանը,- ինքս էլ չգիտեմ, թե ինչու:

Իսկ մտքում ասաց, եթե ասեմ՝ այս մարդը, որ թեև ստիպողաբար արաբ դարձած, բայց իմ եղբայրն է, ով գիտե, գուցե թե չհասկանա ու խելագարի տեղ դնի ինձ: Բայց ես ուզում եմ փնտրել ու գտնել այն ծառը, որից թուրքերը կապել են իմ տատին, իմ Աննա տատին, երբ մայրս ընդամենը երեք տարեկան է եղել և անունն էլ ոչ թե Աննա, այլ Արշալույս է եղել: Ի՞նչ անեմ, ես այն հիվանդի հիվանդն եմ: Հեռավոր այն օրերից բերած նրա հուշերի ցաք ու ցրիվ պատառիկների մեջ այդ ծառն է, որ մեխվել է նրա ուղեղում և ողջ կյանքում հանգիստ չի տալիս: Նա այդ ծառն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

այնքան մանրամասնորեն է նկարագրում. բունը մեջտեղից ճաքած, անջատված էր, ասում է, իսկ երկրորդ ճյուղը բարձրացել ու ձախ էր թեքվել միանգամից, կտրուկ, ու ծառը նմանվել էր մի հսկայական խաչի:

Վահան Վանյանին թվում էր, թե հազար հազարավոր ծառերի մեջ ինքը կգտնի այդ ծառը: Անհնար է, որ չգտնի: Հո բոլոր ծառերը խաչերի չեն վերածվել այդ անտեր անապատում: Նա քուն թե արթուն այնքան էր պատկերացրել այդ ծառը, որ նրան թվում էր, թե հեռվից էլ կճանաչի: Եվ երբ կարդում էր բանաստեղծի տողերը, մտածում էր, որ խոսքն անշուշտ այդ ծառի մասին է եղել. «Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»: Թեև գիտեր, անշուշտ, գիտեր, որ լրիվ հակառակն է, որ այդ ծառն է խաչ դարձել իր տարաբախտ Աննա տատի համար: Այստեղ, մոտերքում, մութի մեջ, ինչ-որ տեղ...

*

* *

Ամեն ինչ դիվորեն ճիշտ ու հստակ ծրագրավորված էր: Երբ գիշերը թուրք զափթիեները հայերի տները մտան ու հրամայեցին մեկ ժամվա մեջ ճանապարհ ընկնել, հետները վերցնելով միայն ոսկի, թանկագին իրեր և ուտելիք, նրանց ոչ ոք չդիմադրեց: Եվ ո՞վ պիտի դիմադրեր: Քաղաքում տղամարդ չկար: Տղամարդիկ բանակ էին կանչվել, որպեսզի կռվեն այն կառավարության համար, որը տեղահան էր արել նրանց ընտանիքները, բոլորին՝ մանուկ թե ծեր, ու ոչխարի հոտի նման քշում էր փոշոտ ճամփաներով՝ իրենց անորոշ ու սև ճակատագրին ընդառաջ:

Այդպես մի գիշերվա մեջ դատարկվեց, ամայացավ Կիլիկիայի Այնթափ գյուղաքաղաքը և ողջ հայկական Կիլիկիան:

Քայլում էին թափոր առ թափոր, յուրաքանչյուր թափորում երկու-երեք հարյուր հոգի:

- Ո՞ւր եք տանում մեզ,- հարցնում, հեծեծում էին մարդիկ:

- Դրախտ,- ծիծաղում էին զափթիեները:- Ուղիղ դրախտ ենք տանում: Ձեր աստծու մոտ:

Ու հայհոյում էին, մտրակում ետ մնացողներին, հրում, դուրս նետում ճանապարհից ու թրատում որևէ թփի տակ, որովհետև իրենք էլ չգիտեին, թե ինչ անեն պարապությունից և սաստիկ զայրացած էին, որ իրենք էլ ստիպված պիտի անցնեն նույն ճանապարհը՝ պառավ կանանց անեծքների, քաղցած ու հյուծված երեխաների լացի ու վայնասունի տակ:

Երեք տարեկան էր Արշալույսը, քայլել չէր կարողանում ու լաց էր լինում աղիողորմ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գրկի, մա՛...

Եվ Աննա մայրիկը գրկում էր Արշալույսին, զգուշորեն խոնարհվելով, որպեսզի Լուսնթագը կռնակից ցած չգլորվի և փեշերի մեջ առած մյուս հինգ երեխաներին, քերծված, արյունոտված ոտքերով շարունակում ճամփան: Չորս-հինգ ժամը մեկ զափթիեները թույլ էին տալիս հանգստանալ, ավելի ճիշտ՝ որպեսզի իրենք հանգստանան, և թափորը հենց կանգնած տեղն էլ ցած էր թափվում ճանապարհի փոշու մեջ ու նվվում քաղցից ու ծարավից:

Այսպես քսան օր ու գիշեր քայլելով հասան Եփրատի ափը և երբ հասան ու դեպի գետը վազեցին, որովհետև խելագարվում էին ծարավից, փոքրիկ Արշալույսը հարցրեց.

- Ինչո՞ւ գետը կարմիր կիոսե, մայրի՛կ:

Եվ Աննա մայրիկը լալով ասաց.

- Հայերու արյունով է կարմիր, զավա՛կս...

Հասկացա՞վ, թե հենց այնպես, պատկերավոր խոսքի համար ասաց: Ի՞նչ գիտեր, ինչպե՞ս իմացավ, որ իրոք իրենցից առաջ ընթացող թափորները հերթականությամբ մորթվում ու գետն են նետվում: Հերթականությամբ, ըստ սահմանված ժամկետների, որպեսզի իրար չխառնվեն: Որպեսզի ամեն ինչ հերթով, կարգ ու կանոնով լինի:

Իսկ հետո հերթը նրանց հասավ: Նախ կողոպտեցին բոլորին, ձեռքներից առան ոսկե դրամներն ու զարդերը և ծաղրեցին.

- Դրախտում դրամ պետք չէ: Դրամը մեզ՝ մեղավորներիս, այս դժոխքում է պետք:

Հետո ընտրեցին ամենագեղեցիկ երեխաներին և տեղն ու տեղը սակարկելով վաճառեցին թափորի կողքին գիշեր-ցերեկ թափառող, կողոպուտի հույսով թափորին ուղեկցող քուրդ խուժանին ու տեղաբնակ արաբներին: Իսկ երբ ոստիկանապետի առջև կանգնեցին այնթափցի դարբին Սեդրակ Ավյանի կինն ու յոթ չքնաղ մանուկները՝ չորս տղաներն ու երեք աղջիկները, մի իսկական աճուրդ սկսվեց: Գնորդներ շատ կային և լավ էլ գներ էին առաջարկում, բայց ոստիկանապետն այս անգամ հանուն իր երկրի արժանապատվության հրաժարվեց փողից.

- Այս կնոջ ամուսինը՝ դարբին Սեդրակ Ավյանը, ըստ մեզ հասած տեղեկությունների, փախել է մեր փառաբանված բանակից: Դրա համար էլ նրա ամբողջ ցեղը դատապարտվում է մահվան:

Այնժամ Աննա մայրիկը աչքերը երկինք բարձրացրեց ու ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Փա՛ռք աստծո, Սեդրակս կփրկվի... Սեդրակս կառնի մեր վրեժը, անգութ անօրեններ:

Նրան ծնկի իջեցրին ու կապեցին ծառից, տարօրինակ մի ծառից, որի բունը ճաքել էր մեջտեղից, անջատվել, երկրորդ ճյուղը բարձրացել, հետո ձախ էր թեքվել միանգամից, կտրուկ, ու ծառը նմանվել էր հսկայական խաչի: Տեսնելով իրենց մորն այդ վիճակում՝ մանուկները ճչացին սրտակեղեք: Սոսկալի էին նրանց աղաղակները, անհնարին էր լսելը, այնքան, որ նույնիսկ թուրք ոստիկանապետը չդիմացավ, ի վերջո մարդ էր, չէ՞, և հրամայեց վերջացնել այդ պատմությունը: Եվ վերջացրին: Վեց երեխաներին մեկիկ-մեկիկ, մեծից մինչև փոքրը հավի ճտերի նման մորթեցին մոր կապկպված ծնկների վրա: Իսկ երբ հերթը փոքրիկ Արշալույսին հասավ, ոստիկանապետը ձայն տվեց.

- Դրան ինձ մոտ բերեք:

Ու մինչ զափթիեները նրա հրամանով Աննա մայրիկի ստինքներն էին կտրում և հետաքրքրությամբ դիտում, թե ինչպես է արյունը հորդում մայրական կաթի փոխարեն, ոստիկանը Արշալույսին Եփրատի ափին մոտեցրեց, մի ձեռքից քաշելով պտտեցրեց աղջկան իր շուրջը ու գետը նետեց բղավելով.

- Սա էլ իմ մատաղը:

Եվ այստեղ էր, որ կատարվեց անսպասելին: Մանկամարդ մի արաբուհի անմիջապես գետը նետվեց ու քիչ հետո գրկած դուրս բերեց աղջկան:

- Սա իմն է,- ճչաց նա:- Դուք գցել եք, ես վերցրել եմ... Ուրեմն իմն է...

Ոստիկանապետի ձեռքի մի շարժումով զափթիեները արաբուհուց խլեցին աղջկան ու կրկին գետը նետեցին: Բայց արաբուհին կրկին հայտնվեց Եփրատի մեջ ու ափ հանեց աղջկան:

- Բավական է,-լաց եղավ նա:- Մեղք է, էլի...

Արշալույսին երրորդ անգամ նետեցին գետը: Իսկ երբ համառ արաբուհին կրկին նետվեց ալիքների մեջ ու աղջկան փրկեց երրորդ անգամ, թուրք ոստիկանապետը դա երկնային նշան համարեց:

- Թող տանի,- ասաց նա:- Ջհաննամը: Ալլահը չի ընդունում:

Եվ արաբուհին, որը Շաֆիա անունն ուներ, գրկի մեջ ամուր սեղմած գրեթե անշնչացած, ջրահեղձ եղած աղջկա փոքրիկ մարմինը, վազելով տուն գնաց՝ Մուրադ ամուսնուն ուրախացնելու, ասելու, որ աստված վերջապես խղճացել ու երեխա է պարգևել նրանց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

*

* *

Ողբերգական այդ դեպքերից չորս տարի հետո, երբ ավարտվել էր Համաշխարհային առաջին պատերազմը, և թուրքերն իբր թե ցած էին դրել զենքերը, ողջ մնացած հայ ֆիդայիները իջան լեռներից և զգուշությամբ իրենց նախկին բնակավայրերի կողմը գնացին, որպեսզի տեսնեն, թե հնարավորություն կա՞ արդյոք նորից տուն դառնալու: Եվ որպեսզի տեսնեն, թե որտեղ են իրենց ընտանիքները, ի՞նչ են անում, ո՞ւր են ծվարել և վերջապես ո՞վ է պատահաբար ողջ մնացել իրենց գերդաստաններից:

Այնթափցի դարբին Սեդրակ Ավյանը այդ փնտրողների մեջ չէր: Նա անցել էր հայ կամավորական զինվորի իր փառահեղ ճամփան ու զոհվել Սարդարապատի ճակատամարտում: Աստված, որ չէր խնայել նրա ընտանիքը, խնայել էր նրան՝ մարտի դաշտում մահ պարգևելով, որպեսզի նա այդպես էլ չիմանա, թե ինչ է կատարվել իր կնոջ ու զավակների հետ: Այնպես որ Սեդրակ Ավյանը հարազատներին փնտրողների մեջ չէր: Բայց նրա հարազատներին, որ նաև իրենց հարազատներն էին, եփրատամերձ ավազուտներում հարցուփորձ անելով փնտրում էին Աննա մայրիկի ֆիդայի եղբայրները՝ Մանասեն, Սարգիսը, Ղազարը և Հրանտը:

Եվ ահա 1919 թվականի մայիսյան մի օր նրանց զինավառ խումբը հայտնվեց Դեր Զորի աղմկոտ շուկայում: Նրանք անցնում էին շարքից շարք, ուշադրությամբ զննելով մարդկանց, հանդիպած երեխաների դեմքերին փնտրելով իրենց ծանոթ դիմագծերը: Ու հանկարծ եղբայրներից մեկը՝ Մանասեն, մատը մեկնեց յոթ-ութ տարեկան մի աղջկա կողմը ու բացականչեց հուզված.

- Աննա՛ն:

Աղջիկն իրոք որ, ինչպես ջրի երկու կաթիլ նման էր նրանց քրոջը՝ Աննային: Միայն թե նրա կողքին Աննան չէր, այլ գեղադեմ, թուխ մի արաբուհի, որ օտար հայացքներից անհանգստացած, ամուր բռնել էր աղջկա ձեռքը:

Մանասեն շուկայի փոշու մեջ ծնկի իջավ աղջնակի առաջ, մազերին մեկնեց ձեռքը:

- Դու Աննայի աղջիկներից ո՞րն ես, բալա՛:

Աղջիկը վախեցած ետ քաշվեց, հպվեց մորը ու ինչ-որ բան մրմնջաց արաբերեն: Կինը չարացած, թշնամանքով նայեց զինված օտարականներին:

- Ովքե՞ր եք դուք,- ասաց արաբերեն,- ի՞նչ եք ուզում իմ աղջկանից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանասեն հանեց գլխարկը, եղբայրներին դարձավ.

- Մեռնեմ, թե սա մեր Աննայի աղջիկը չէ: Նրա աղջիկների անունները ո՞վ գիտե, ասեք իրար ետևից.

- Լուսնթագ,- հիշեց Հրանտը:

- Անահիտ էլ կար,- ասաց Սարգիսը:

- Չէ՛, եղբայր, սա իմ հաշվով փոքրը պետք է լինի,- հաշվեց Ղազարը:- Չորս տարի չի՞ անցել: Ուրեմն այն ժամանակ երեք տարեկան է եղել: Սա Արշալույսն է:

Մանասեն կրկին նայեց աղջկան, որ սև, վախվորած աչքերով իր մոռացված քեռիներին էր նայում արաբուհի մոր թևի տակից:

- Լուսնթագ,- շշնջաց նա,- հիշեցի՞ր, աղջի՛կս: Անահիտ... քո քույրն է եղել... Արշալույս... Քո անունն Արշալույս է... Արշալույս, Արշալույս, Արշալույս,- կրկնեց նա իրար ետևից, զարմացած ու վախեցած, որ աղջիկը չի արձագանքում: -Քո մոր անունը Աննա էր... Աննա... հիշի՛ր, հիշի՛ր, զավա՛կս, հորդ անունն էլ Սեդրակ էր... Սեդրակ... Իսկ ես Մանասեն եմ... Ես քո քեռին եմ: Ես քեզ շատ եմ կռնակիս առել, աղջի՛կս... - ասաց նա հուսահատությամբ՝ ձեռքերով ցույց տալով, թե ինչպես էր այդ անում:

Աղջկան երևի թվաց, թե տարօրինակ այդ մարդը դիտմամբ է ծամածռվում, որպեսզի ինքը ծիծաղի: Ու հանկարծ ծիծաղեց մանրիկ՝ արաբուհու թևի տակից դուրս չգալով...

- Վա՛յ, մեռնեմ թե Աննայի ծիծաղը չէ,- աչքերն արցունքով լցրեց Մանասեն ու այս անգամ ուղիղ արաբ կնոջը դարձավ:

- Քույրի՛կ ջան,- ասաց նա թուրքերեն:- Վերև-ներքև աստված, սա մեր աղջիկն է:

Բայց կինն արդեն ուշքի էր եկել:

- Սխալվում եք,- ասաց նա շշնջալով,- շփոթում եք: Սա ի՛մ աղջիկն է, ի՛մ աղջիկը և անունն էլ Ալինա է:

Նա երևի այնքան ամուր էր սեղմել երեխային իր թևի տակ, որ աղջիկը ցավ զգաց ու լաց եղավ.

- Մայրի՛կ,- ասաց նա արաբերեն,- ես վախենում եմ, արի տո՛ւն գնանք:

Եվ արաբ կինը ժպտաց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Լսեցի՞ք, լսեցի՞ք, որ մայրիկ ասաց: Հիմա համոզվեցի՞ք... - ու աղջկա թաթն ամուր բռնած, արագորեն նրան դուրս տարավ շուկայից:

Եղբայրներն իրար նայեցին տարակուսած.

- Գուցե իսկապես սխալվում ենք, մե՛ծ եղբայր,- ասաց Ղազարը:

Մանասեն գլուխն օրորեց:

- Չէ, պատահակա՞ն էր, որ շշուկով էր խոսում: Եթե իսկական մայրը լիներ, գլխին կհավաքեր ամբողջ շուկան, աղմուկ-աղաղակով իրար կխառներ աշխարհը: Բայց նա փսփսալով էր խոսում, որովհետև վախենում էր, թե ուրիշները կլսեն իրենց խոսակցությունը: Իսկ շուկայում անկասկած մարդիկ կգտնվեն, որոնք գիտեն ճշմարտությունը:

- Մեծ եղբայրը ճիշտ է ասում,- համաձայնեց Հրանտը:

- Եթե ճիշտ եմ,- ասաց Մանասեն,- հետևի՛ր, տե՛ս թե ուր է տանում աղջկան այդ կինը:

Նրանք բավականին երկար սպասեցին հողաշեն, փոքրիկ խրճիթի մոտ, որովհետև չէին ուզում մտնել այն տունը, որտեղ արաբ կինը միայնակ էր: Արդեն գիտեին, որ ամուսին ունի: Սպասեցին մինչև տուն եկավ ամուսինը և դարձյալ սպասեցին մինչև որ ամուսինը տեղյակ դառնա պատահարին: Եվ ճիշտ վարվեցին: Երբ նրանք տուն մտան, արաբուհին լաց էր լինում սրտամորմոք՝ աղջկան գրկած, իսկ ամուսինը մռայլ քայլում էր փոքրիկ խրճիթի երկայնքով:

Մուրադ Վահիբի անունով արաբ տանտերը հյուրերին հրավիրեց նստել ու ասաց.

- Այսպես է բանը: Ալինան իրոք որ մեր աղջիկը չէ, բայց երկինքը վկա, որ եթե մերն ունենայինք, ավելի շատ սիրել չէինք կարողանա:

Իսկ Շաֆիա անունով կինը, կյանքում ով գիտե գուցե առաջին անգամ, ընդվզեց ամուսնու դեմ և ցավից խենթացած, ձեռքերը երկինք կարկառած, վշտահար աղաղակեց.

- Իմն է, իմ աղջիկն է սա: Որտեղի՞ց հայտնվեցիք: Երեք անգամ ես եմ նրան Եփրատից հանել: Այս ձեռքերով, այսպես... Որտե՞ղ էիք այն ժամանակ: Որտե՞ղ էիք, երբ սպանեցին նրա մորը, որտեղ էիք, երբ մորթեցին նրա եղբայրներին ու քույրերին: Ես եմ թուրքերից խլել նրան, ու նա իմն է: Նա հիմա ո՞վ ունի, որ տանում եք: Ասում եք, որ հայր էլ չունի, բա էլ ո՞ւր եք տանում: Իսկ ես նրա մայրն եմ, մենք սիրում ենք իրար: Թող ինքն ասի: Կուզե՞ս ինձնից հեռանալ: Առանց ինձ կարո՞ղ ես ապրել, աղջի՛կս...

Երեխան ամուր գրկեց արաբ մոր սև պարանոցը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես քեզ սիրում եմ,- ասաց նա արաբերեն:- Դու իմ անուշ մայրիկն ես:

- Տեսա՞ք,- արցունքներն աչքին հաղթական գոչեց արաբուհին ու անմիջապես էլ հույսի մի նոր տաշեղ գտավ:- Հետո՝ ինչո՞վ եք համոզված, որ նա ձեր փնտրած աղջիկն է: Դեր Զորում ու Ջզիրիեում հարյուր, հազար հայ երեխաներ կան, որ արաբների ու քրդերի տանն ապրում են: Ինչո՞ւ եք կպել մեզանից, ինչո՞ւ եք կարծում, թե հենց սա է ձեր քրոջ աղջիկը: Գուցե շփոթում եք: Անխիղճ բան մի արեք, վերևն աստված կա...

Եվ հանկարծ եղբայրներից փոքրը, որ Հրանտն էր, ու անընդհատ ինչ-որ բան էր ուզում հիշել, կամացուկ ձայն տվեց.

- Արշի՛կ...

Աղջիկը ցնցվեց ու նրան նայեց:

- Արշի՛կ,- ասաց Հրանտը:- Հիշո՞ւմ ես, որ խաղում էինք... Ես քո քեռի Հրանտն եմ: Հիշո՞ւմ ես, որ կանչում էի՝ «Մկնիկ, մկնիկ, տոտ, տոտ, տոտ, շուտ վազի քեռիի մոտ»: Հիշեցի՞ր դու ինչ է-իր անում, Արշի՛կ...

Եվ հանկարծ բոլորի զարմացական հայացքների տակ աղջիկը պոկվեց մոր ձեռքից ու վազելով քեռու գիրկն ընկավ: Ընկավ գիրկը, բարձրացրեց գլուխը և ինչ-որ բան շշնջաց...

- Ի՞նչ,- տեղից վեր թռավ Հրանտը:-Ի՞նչ ասացիր, աղջի՛կ ջան, ի՞նչ...

Եվ աղջիկը՝ կիտելով հոնքերն ու տառապելով, մոռացած հայերենով շշնջաց.

- Եփրատը կարմիր կհոսեր...

- Բավական է,- տեղից ելավ և օձիքը քանդեց արաբ Մուրադ Վահիբը,- լինելու բանը պիտի լինի, ա՛յ կին... Աղջկադ շորերը պատրաստիր թող գնա: Թող գնա ծխի իր կորցրած ընտանիքի ծուխը: Աստծո կամքն է...

- Տղամարդու խոսք է,- աչքերը թևքով սրբեց, գլուխը խոնարհեց Մանասե քեռին:

Եվ բոլոր քեռիներն էլ ոտքի կանգնեցին, ձեռքները կրծքներին դրեցին ու խոնարհեցին իրենց գլուխները:

Ողջ գիշեր չքնեցին:

Վաղ առավոտյան, աղամամութին, երբ դեռ շոգ չէր, անուրախ քարավանը ճանապարհ ընկավ դեպի Հալեպ: Հալեպ, որովհետև ըստ հասած լուրերի, թափառելով, թափառելով այնտեղ էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բուն գտել Մանասեի ու Սարգսի ընտանիքները: Մյուս եղբայրները դեռ ընտանիք չունեին: Գրեթե մինչև ճանապարհի կեսը Շաֆիան և Մուրադը ձիերով ուղեկցեցին նրանց և ամբողջ ճանապարհին Արշալույսը նստած էր իր արաբ մայրացուի թիկունքում, փոքրիկ ձեռքերով գրկած նրա մեջքը...

Անջատումը սոսկալի էր: Արշալույսը փարվել էր իր Շաֆիա մորը, ճչում էր սրտակեղեք և բաժանվել չէր ուզում: Չէր ուզում երկրորդ անգամ կորցնել մորը...

Հետո Մուրադ Վահիբը ձիու թամբին գցված խուրջինի միջից մի կապոց հանեց ու մեկնեց Մանասեին:

- Սա ի՞նչ է,- հարցրեց Մանասեն:

- Մեր աղջկա բաժինքն է,- չդիմացավ, փուլ եկավ Մուրադ Վահիբը:- Թող բախտավոր լինի մեր Ալինան ու հիշի, որ իր հարազատ ծնողներից բացի, իրեն շատ սիրող արաբ ծնողներ էլ է ունեցել: Է՛հ, աստված ձեզ հետ...

Քարավանը վաղուց կիսվել էր, ձիավորները վաղուց հեռացել էին իրարից, բայց Դեր Զորից Հալեպ տանող փոշոտ ճամփեքին դեռ երկար ժամանակ հնչում էր փոքրիկ Արշալույս-Ալինայի սրտակեղեք ձայնը, որն իր արաբ մայրացու Շաֆիային էր կանչում:

Եվ հենց այդտեղ, ճանապարհին էլ եղբայրները վճռեցին Աննա կոչել Արշալույս աղջկան, իրենց քրոջ անունը պահպանելու համար: Եվ Աննա անունով էլ հետագայում Բեյրութ տարան նրան, Բեյրութի մոտ գտնվող «Թռչնոց բույն» ավանը, որտեղ մեծահարուստ բարերար Մարի Յակոբսոնը հսկայական մի որբանոց էր բացել անտեր մնացած հայ մանուկների համար, հայկական դպրոց էր բացել ու արհեստանոցներ, որպեսզի դպրոցն ավարտելուց հետո հայ երեխաները նաև որևէ մասնագիտություն ունենան, կարողանան ապրել ու նորից չկորչեն աշխարհում: Իմաստուն ու մեծահոգի այդ կինը, որին բոլոր սաները երախտագիտությամբ «Մայրիկ» էին անվանում, մինչև վերջ էլ հետևում էր, թե ուր են գնում, ինչ են դառնում իր հոգեզավակները և իր միջոցներով օգնում էր նրանց մասնագիտական կրթություն ստանալու: Հենց նրա օգնությամբ և նրա միջոցներով էլ Աննան ավարտեց բժշկական ուսումնարանը, դարձավ մանկաբարձ և գործուղվեց Դամասկոս՝ բժիշկ Մելիքյանի հիվանդանոցում աշխատելու: Եվ Դամասկոսում էլ հետագայում հանդիպեց ու սիրեց իր ապագա ամուսնուն, կոմունիստ Արմեն Վանյանին: Եվ երեխաներ ունեցավ, որոնց հայերեն էր սովորեցնում ու հեքիաթներ էր պատմում և ամեն մի հեքիաթ սկսում էր նույն խոսքերով, նույն, նույն խոսքերով և դրա դեմ ոչինչ չէր կարողանում անել:

- Եփրատը կարմիր կհոսեր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

*

* *

- Հասանք, դոկտո՛ր,- ասաց Մովսես Աբաջյանը:

Վահան Վանյանը բացեց հոգնած, այրվող կոպերը:

«Պեժո» զատիկը դանդաղ առաջ էր սահում նեղլիկ մի փողոցով, փոքրիկ լապտերներով շոշափելով տների համարները: Հետո կանգ առավ, անշարժացավ երկհարկանի մի տան մոտ: Տանը լույս չկար:

Մովսես Աբաջյանը ցած իջավ ավտոմեքենայից, բարձրացրեց գլուխն ու ձայն տվեց կամացուկ.

- Վահրա՛մ:

Երկրորդ հարկում անմիջապես լույս վառվեց, և պատուհանի մեջ հայտնվեց տանտիրոջ գլուխը:

- Հրամմեցե՛ք:- «մ»-երը տարօրինակ ընդգծելով՝ առաջարկեց Վահրամը:

- Մա՛րդ աստծո,- ծիծաղեց Մովսես Աբաջյանը:- Չես էլ հարցնում՝ ով է:

Վահրամը ծիծաղեց.

- Երբ հայերեն կլսեմ, էլ ինչ հարցնեմ: Մուսա՞...

- Ես եմ, ես... Մովսեսն եմ,- ամաչեց Մուսա Աբաջին,- հյուր եմ բերել Հայաստանից... Վահրամ եղբայր:

Երբ Վահան Վանյանը լույսից կկոցած աչքերով դերզորցի Վահրամ Մուշեղյանի տան հյուրասենյակը մտավ, նրան մի պահ թվաց, Երևանում է, ինչ-որ տեղ՝ Բութանիա թաղամասում: Պատերին, թարեքների վրա, ամենուրեք, Հայաստանն էր: Նախ մեծ ու գունավոր Սովետական Հայաստանի քարտեզը: Հետո պղնձակոփ Սասունցի Դավիթը, Թամարը՝ գլխից վեր ջահը բռնած, Արարատի ճերմակ գագաթներն ու Գառնին, Էջմիածնի Մայր տաճարն ու Լենինի հրապարակը: Եվ շատ-շատ գունավոր բնանկարներ՝ հավանաբար պոկված պատկերազարդ հանդեսներից ու խնամքով շրջանակված:

- Գրքերիս տեղը նայեք,- հպարտ առաջ ընկավ Վահրամ Մուշեղյանը՝ արաբերենն ու հայերենը իրար խառնելով:-Շատ գրքեր ունենք, Րաֆֆիից մինչև Պարույր Սևակ: Տղաներս ամբողջ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ստացածը գրքի կուտան: Բայց ես ուրախ եմ, գիտե՞ք... Ես ալ կկարդամ... կկարդամ ու կզարմանամ, թե ինչ աղվոր լեզու ունենք:

Փարթամ մարմնով բարետես մի մերիկ գրեթե անշշուկ սեղան էր գցում:

- Կինս է,- ասաց Վահրամ Մուշեղյանը:- Կամաչի խոսել, որովհետև հայերեն քիչ գիտե: Ես ալ աղեկ չգիտեմ, սակայն չեմ ամչնար: Կուրախանամ:- Ու հանկարծ վախեցած դիմեց հյուրին:- Սխա՞լ կխոսեմ, դոկտո՛ր...

- Չէ՛,- ակամա ժպտաց Վահան Վանյանը:- Աննման է...

- Մեր տղաները մեզի հայերեն կսովորեցնեն,- ծիծաղեց Վահրամ Մուշեղյանը:- Մենք Դեր Զորի որբերից ենք: Ես արաբի տան մեջ եմ մեծացել, Սրբուկս՝ քրդի: Երբ մի քիչ մեծացանք ու իմացանք, որ հայ ենք, գտանք իրար ու ամուսնացանք: Եվ շատերը ճիշտ մեզ նման, հենց կիմանային, որ հայ են, շտապ-շտապ կամուսնանային իրենց նման մի որբ հայի հետ ու ընտանիք կկազմեին, որ հայ մնան: Թեև մեզանից ոչ մեկը հայերեն չգիտեր...

- Իսկ ինչպե՞ս էիք իմանում, որ հայ եք,- հարցրեց Վահան Վանյանը:

- Արաբի, քրդի երեխաներն էին մատնում ու մատնելով լավություն անում,- ծիծաղեց Վահրամ Մուշեղյանը:- Հենց որ խաղի ժամանակ կռվում էինք, ասում էին զայրացած. «Դու հայ ես, քեզ իմ հայրը փողով է առել թուրքերից»: Այնպես որ, վերջիվերջո բոլոր հայերն էլ իմացան, թե ով են իրենք և տեսան իրենց գլխի ճարը: Հիմա մենք բավական շատ ենք, գիտե՞ս, դոկտո՛ր,- հպարտ ասաց դերզորցի Վահրամ Մուշեղյանը:- Հայկական դպրոց ունենք, եկեղեցի ունենք, ակումբ ունենք...

- Իսկ երեխաները՞,- հարցրեց Վահան Վանյանը, շուրջը նայելով, զարմացած, որ ինչպես հաճախ է լինում, լի սեղանի հետ միաժամանակ չեն հայտնվում երեխաները:

Ու պարզվեց, որ ի՞նչ երեխաներ. Վահրամ Մուշեղյանի երեխաներից հինգն արդեն իրենք երեխաների տեր են: Վեց զավակ ունեն Վահրամն ու Սրբիկը («Թուրքերի ինատու» -ծիծաղեց Վահրամը): Բոլորն ամուսնացած են ու իրենց ընտանիքներով, որը Հալեպում է ապրում, որը Դամասկոսում («Բոլորին ծանոթ եմ,- հանկարծ ասաց Մովսես Աբաջյանը: Փնտրեց, փնտրեց հարկավոր մի բառ ու մեկ էլ ասաց,- շշմելու հայեր են»): Իսկ ամենափոքրն ու միակ չամուսնացածը հայրենիք է գնացել, Երևանի բժշկական ինստիտուտում է սովորում: Կավարտի, ետ կգա Դեր Զոր:

- Կուզեմ, որ քեզ նման մեծանուն դոկտոր դառնա,- ասաց Վահրամ Մուշեղյանը:- Մուսան... Մովսես եղբայրս ինձ պատմեց, թե ով ես դու հայրենիքի մեջ և ասաց, որ դու նույնպես որբի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

զավակ ես՝ ծնված Դամասկոսում: Սրանից հետո հայրենիքից ստացած լրագրերի մեջ մեծ սիրով քո անունը կփնտրեմ... Տղաս ինձ լրագրեր կուղարկե: Շատ բան չեմ հասկանա... բայց հոգ չէ: Կտեսնեմ, որ հայերեն է, կուրախանամ:

Թեև դպրոց ունեին, եկեղեցի ու ակումբ, բայց ինչպես երևաց, հայերենի շատ էր կարոտ դերզորցի Վահրամ Մուշեղյանը: Ողջ գիշեր չթողեց, որ հյուրը քնի, հարցեր էր տալիս,խնդրում Հայաստանի մասին պատմել ու լսում էր հիացած, հիացմունքից աչքերը փակ, օրորելով գլուխը, հետո ժպտաց գոհ ու բավարարված և ասաց.

- Տղայիս ե՛ս հայրենիք ուղարկեցի: Մայրը կուլար...

Վահրամ Մուշեղյանը լռեց միանգամից ու շրջվեց, որպեսզի թաքուն սրբի նաև իր աչքերին հայտնված արցունքը, և Վահան Վանյանը վերջապես ինքն էլ հարց տալու հնարավորություն ստացավ:

- Հորեղբա՛յր,- ասաց նա:- Այստեղ ժամանակին Մուրադ անունով մի արաբ է եղել, կնոջ անունը՝ Շաֆիա, կա՞ն այդ մարդիկ, ի՞նչ են անում, շատ կուզենայի տեսնել նրանց:

Վահան Մուշեղյանը հյուրին նայեց զարմացած.

- Դու նրանց որտեղի՞ց գիտես: Հարկավ կճանաչեի, պատվական արաբներ էին և Մուրադն էլ գյուղապետն էր, երբ մահացավ: Մեկ շաբաթվա մեջ մահացան, գիտե՞ս, 1955-ին:

- Ոչ ոք չունե՞ն իրենցից հետո,- հարցրեց Վահանը՝ հուզմունքից խռպոտած ձայնով:

- Ո՛չ,- ասաց Վահրամ Մուշեղյանը:- Շատ-շատ առաջ նրանք հայի մի աղջկա են խլել թուրքերի ձեռքից ու պահել: Բայց մի քանի տարի հետո հարազատները եկել, տարել են աղջկան: Այնպիսի մի հարված ու ցավ է եղել դա բարի մարդկանց համար, որ այլևս չեն փորձել նոր երեխա վերցնել ու այդպես էլ հեռացան կյանքից՝ անմխիթար ու անժառանգ: Ասում են, թե միշտ հետևել են այդ աղջկան, կապի մեջ են եղել, մինչև որ աղջիկն ամուսնացել ու գնացել է Հայաստան: Մինչև իրենց կյանքի վերջն էլ խեղճ ծերունիները նամակ կսպասեին Հայաստանեն:

- Նամակի փոխարեն ես եկա,- ասաց Վահրամ Վանյանը:- Նրանց պահած այդ աղջիկն իմ մայրն է...

Վահրամ Մուշեղյանը նրան նայեց զարմացած ու տրտմությամբ:

- Եվ ինչո՞ւ նամակ չգրեց,- հարցրեց նա մի այնպիսի ցավով ու հանդիմանանքով, ասես դրանից ամեն ինչ կարող էր փոխվել:- Ինչո՞ւ նամակ չգրեց, դոկտո՛ր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հետո մտածեց-մտածեց, իր համար պատասխան գտավ երևի, որովհետև մեղմացավ հանկարծ ու ասաց.

- Ափսո՛ս, գոնե ապրեին այնքան, որ քեզ տեսնեին, մեծ մխիթարություն կլիներ, դոկտո՛ր: Հազա՛ր ափսոս:

Առավոտյան նրանք դուրս եկան տնից, սուրճ խմեցին փոքրիկ պարտեզում, որ Վահրամ Մուշեղյանը իր ձեռքով պատրաստեց, հետո Վահրամն ասաց.

- Գնանք:

- Մովսեսը,- հիշեցրեց Վահան Վանյանը:

- Թող քնի,- ասաց Վահրամը:- Դժվար ճանապարհ պիտի գնա:

Նրանք քայլում էին դեպի բլուրները, և Վահրամ Մուշեղյանը հարցրեց.

- Լույսերեն վախեցա՞ր, դոկտո՛ր:

Վահանը հիշեց, թե ինչպես էր միամտորեն հիանում բլուրների կանաչ լույսով, շատ ամաչեց ու ասաց անկեղծորեն.

- Երբ իմացա, թե ինչ են, սարսափեցի, հորեղբա՛յր:

Գրեթե բլուրներին էին հասել, երբ Վահան Վանյանը նկատեց մի մարդու:

- Մեզնից ավելի շուտ եկած մարդ էլ կա այստեղ,- զարմացավ նա:

- Պահապանն է,- ասաց Վահրամ Մուշեղյանը, խոնարհվեց թեթևակի, ձեռքն աչքին դրեց ու ձայն տվեց արաբերեն:- Բարի լո՛ւյս, հայրենակի՛ց:

- Բարի լո՛ւյս, Վահրա՛մ եղբայր,- մոտեցավ արաբը և Վահան Վանյանին նայեց:- Ո՞վ է, քո հյո՞ւրն է:

- Իմ հյուրն է,- ասաց Վահրամը:

Արաբը ժպտաց ու օրորեց գլուխը:

- Ի՞նչ ես ուզում, Վահրա՛մ,- հարցրեց նա:- Ինչո՞ւ չես հանգստանում, ա՛յ մարդ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեն թողնում,- հառաչեց Վահրամ Մուշեղյանը՝ տխրած հայացքը բլուրներին:- Չեն թողնում, եղբա՛յր: Եվ նրան էլ չեն թողնում,- ասաց նա՝ հիմա էլ Վահանին ցույց տալով:-Դամասկոսից է եկել բարեկամս: Չի հանգստանում:

Նա սիգարետի մի տուփ մեկնեց պահապանին: Պահապանը շտապով մի սիգարետ հանեց միջից և տուփը ետ վերադարձրեց անկամ շարժումով, բայց Վահրամը տուփի հետ ետ մղեց նրա ձեռքը: Նրանք առաջ անցան նեղլիկ արահետով ու քիչ անց ինչ-որ քարանձավի հասան, որը շատ նեղ մուտք ուներ:

- Ի՞նչ է սա,- ակամա շշուկով հարցրեց Վահան Վանյանը:

- Դե որ եկել ես, պիտի տեսնես,- ասաց Վահրամը:- Նե՛րս մտիր:

Վահան Վանյանը դժվարությամբ, ուսերը քարերին քերծելով ներս մտավ քարանձավի մուտքից, բարձրացրեց գլուխն ու սարսռաց: Հսկայական մի քարանձավ, ավելի ճիշտ ահռելի մի կիրճ լցված էր մարդկային ոսկորներով, կմախքներով, անջատ-անջատ ոտքերով ու ձեռքերով, գանգերի բլուրներով:

Մեծ դժվարությամբ պահեց իրեն, որ ուշագնաց չլինի, ուժեղ սրտխառնուք զգաց և գլուխը հպեց կողքի սառը ժայռաբեկորին: Նա, որ բժիշկ էր երկար տարիներ և շատ բան էր տեսել աշխարհում, մնաց ապշած և զգաց, որ ցնորվում է: Հեղձուկը բարձրացավ, բռնեց կոկորդը, ու իր համար էլ անսպասելի, քանի որ կարծում էր, թե նախապատրաստված է, Վահան Վանյանը լաց եղավ բարձրաձայն, լաց եղավ ցնցվելով ու պոռթկալով, կռանալով ցավից ու գրկելով թուլացած ծնկները:

- Բայց ինչի՞ համար, ախր ինչի՞ համար,- գոռում էր նա հեկեկոցի միջից,- ախր ինչի՞ համար: Եվ ոչ ոք պատասխան չի՞ տալու: Ոչ մեկը՞... Ու սրանից հետո հանգիստ ապրո՞ւմ են...

Վահրամ Մուշեղյանը խոր հոգոց հանեց...

- Է՛, տղա՛ս, սա միակ կիրճը չէ,- ասաց նա:- Ամեն մեկի մեջ 15-20 հազար հայերի են լցրել և փակել քարանձավների բերանները: Ու մարդիկ խեղդամահ են եղել և մեռել քաղցից:

Վահան Վանյանն էլ լաց չէր լինում: Միայն տնքում էր ցավից, ասես կտոր-կտոր էլ լինում սիրտը: Հետո երևի հանգստացավ մի քիչ, որովհետև ասաց.

- Գնանք, Վահրա՛մ հորեղբայրս, ես ուզում եմ մյուս քարանձավներն էլ տեսնել:

- Պետք չէ,- մեղմությամբ առարկեց Վահրամը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինձ պետք է,- ասաց Վահան Վանյանը:

Երբ նրանք դուրս եկան վերջին քարանձավից ու թափ տվեցին շորերի փոշին, Վահանը կարծես թե նոր միայն ուշքի եկավ ու տեսավ, որ իրենցից քիչ այն կողմ անցնում է Եփրատը: Գետը հոսում էր հանդարտ, անալիք, լուռ ու անվրդով, ասես աշխարհում չէր կատարվել ոչինչ, ասես չէր տեսել, թե ինչպես է մորթվում մի ամբողջ անզեն ժողովուրդ, չէր լսել իրենց պատիվը պահպանելու համար ալիքների մեջ նետվող կույսերի ցավագին աղաղակները, չէր զգացել, թե ինչպես են վարարում ու կարմրում իր ջրերը հայ մարդկանց արյունից:

- Եփրատը կարմիր կհոսեր,- մրմնջաց Վահան Վանյանը:

Դերզորցի Վահրամ Մուշեղյանը հասկանում ու չէր խանգարում նրան, և Վահան Վանյանը դեռ երկար կանգնած էր Եփրատի ափին ու մանկական միամտությամբ այն ծառն էր որոնում գետամերձ ավազուտներում, այն ծառը, որ մոր պատմելով, հիսունհինգ տարի առաջ խաչի էր եղել նման:

Երբ վերադառնում էին, ամեն մեկն իր մտքերի մեջ, Վահան Վանյանը զգաց, որ արաբ պահապանը հեռվից հետևում է իրենց:

- Ի՞նչ է ուզում,- նեղսրտած հարցրեց նա Վահրամ Մուշեղյանին:- Այդ արաբն ինչո՞ւ է հետևում մեզ, հորեղբա՛յր:

- Իր գործը հսկելն է,- ասաց Վահրամը:- Քեզ չե՞ն ասել, դոկտո՛ր, որ այս վայրերը կառավարության հսկողության տակ են և պահպանվում են խստորեն:

- Ինչո՞ւ,- հարցրեց Վահան Վանյանը:- Սիրիայի կառավարությունն ինչո՞ւ է պահպանում այս ամենը:

- Հայերի խնդրանքն է: Որպեսզի մնա իբրև սոսկալի հիշեցում, իբրև զգուշացում:

Վահան Վանյանը թոթվեց ուսերը:

- Բայց օտարականներին չի թույլատրվում ձեր կողմերը գալ: Ուրեմն էլ ո՞վ պիտի տեսնի: Էլ ո՞ւմ համար են այս հիշեցումն ու զգուշացումը:

Վահրամ Մուշեղյանը խեղճացավ հանկարծ, կծկեց ծերունական ուսերն ու հառաչեց.

- Այդ հարցը տալու դու ուրիշ մի տեղ չունե՞ս, դոկտո՛ր...

*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

* *

Կանադացի կենսաբան Ռոբերտ Փորթերը այնպիսի մի հրճվագին աղմուկ-աղաղակով դիմավորեց նրան, ասես հույս չէր ունեցել այլևս հանդիպելու ընկերոջը:

- Եկա՞ր: Թող տեսնեմ ոնց ես: Ինչո՞ւ ինձ էլ չտարար քեզ հետ, Վահան: Այդ ի՞նչ խաղ էր: Դու ինձ բորբոքեցիր, տակնուվրա արեցիր հոգի՛ս, տրամադրեցիր ինձ ու... Ի վերջո քո գործն է... Բայց ի՞նչ է պատահել քեզ, այս ի՞նչ ես դարձել, երկու օրվա մեջ այդքան նիհարե՞լ կլինի... Ի՞նչ տեսար, Վահա՛ն, հաջողվե՞ց լինել այն վայրերում, որ մայրդ նկարագրել էր: Արաբ տատդ կա՞ր... Եփրատը տեսա՞ր... իսկ...

- Ամեն ինչ տեսա,- ասաց Վահան Վանյանը:

Նրա ձայնը այնքան տխուր ու խռպոտ հնչեց, որ Ռոբերտ Փորթերը լռեց անմիջապես ու սպասումով նայեց ընկերոջը:

- Ես տեսա ու հասկացա ամենակարևորը,- ասաց Վահան Վանյանը:- ... Ես հասկացա, թե ինչու էր իր հեքիաթը մայրիկս սկսում միշտ նույն բառերով՝ Եփրատը կարմիր կհոսեր: Մարդկային հիշողությունը կարճ է, և նա վախենում էր, թե մի օր, երբ ազգը երջանիկ կկարծի իրեն, հանկարծ կմոռանա Դեր Զորը: Եվ կրկնում էր, որպեսզի և՛ ինքը հիշի, և՛ իր զավակները... Ու հիմա էլ կրկնում է, որ թոռները հիշեն... չմոռանան...

Ռոբերտ Փորթերը սիգարետ վառեց ու խոր ներս քաշեց ծուխը:

- Ծանր ժառանգություն է,- ասաց նա:

Վահան Վանյանը տարուբերեց գլուխը...

- Ես շատ եմ ափսոսում, Ռոբերտ, որ քեզ ինձ հետ չտարա: Ես միայն այնտեղ հասկացա, թե ինչու էր իմ Աննա մայրիկը ուզում, որ ես իմ աչքերով տեսնեմ Դեր Զորը: Որովհետև ով իր սեփական աչքերով չի տեսել Դեր Զորը, Օսվենցիմն ու Բուխենվալդը, նա խաղաղության մասին կխոսի ընդհանրապես... Ընդհանուր առմամբ... Այնինչ խաղաղության մասին պետք է կոնկրետ խոսել, տեսածի մասին ասել և մարդկությանը զգուշացնել փաստերով: Ես ընդդեմ պատերազմի, ընդդեմ ցեղասպանության, հանուն խաղաղության մեր այս բոլոր գիտաժողովները Բաբյի Յարում կանցկացնեի և Դեր Զորում... Իսկ մենք հավաքվում ենք ժամանակակից հիանալի քաղաքներում, ապրում փարթամ հյուրանոցներում, ուտում կերակուրներից ամենաընտիրները և նորաձև հագնված, օսլայած վերնաշապիկներով ու մոդայիկ կարմիր փողկապներով ամբիոն ելնում, որպեսզի ընդհանրապես խոսենք խաղաղության մասին... Ընդհանրապես: Երբ պետականորեն կազմակերպված առաջին ցեղասպանությունը ուղիղ քո կողքին է

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կատարվել: Երբ պատերազմի բերած ամենամեծ աղետն ու ոճիրը որպես իրական փաստ, որպես ահեղ նախազգուշացում գտնվում է գրեթե քո աչքերի առաջ: Սակայն, ինչպես համոզվեցիր, մարդկանց չեն թողնում տեսնել այդ ամենը...

- Բայց ինչո՞ւ,- հարցրեց Ռոբերտ Փորթերը:- Ինչո՞ւ... Ուրեմն ինչ-որ ուժերի ինչ-որ պատճառով ձեռնտու չէ, պետք չէ, որ մարդիկ տեսնեն այդ ամենը:

Վահան Վանյանը իր բարեկամին նայեց անքնությունից ու ապրած տառապանքից այրվող աչքերով:

- Ես այդ հարցը դերզորցի մի ծեր որբի տվեցի:

- Եվ ի՞նչ...

- Եվ նա ասաց՝ այդ հարցը տալու դու ուրիշ մի տեղ չունե՞ս, դոկտո՛ր:

1987թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հեռախոսագրքեր

Արմեն Գասպարյանը մտավ հյուրանոցի իր սենյակը, շնորհակալություն հայտնեց սպասավորին, որը փայտե ցածրիկ պատվանդանին տեղավորում էր ճամպրուկները, մոտեցավ հեռուստացույցին, միացրեց ու նոր միայն նայեց շուրջը:

Հիանալի համար էր:

Պատուհանի տակ կամացուկ խշշում էր զովացնող սարքը, ռադիոբարձրախոսի վրայի կոճակները վկայում էին, որ միաժամանակ հաղորդվում է մի քանի ծրագիր: Մանուշակագույն կերպասով ծածկված լայն, փափուկ մահճակալը ձգում էր մագնիսի նման: Անկյունում հենված էր սառնարանը: Մահճակալի աջ կողմում, փոքրիկ պահարանիկի վրա հեռախոսի տափակ ու լայն մի սարք էր դրված:

Արմեն Գասպարյանը մոտեցավ հեռախոսի պահարանին, թեքվեց, բացեց հենց առաջին արկղը ու այնտեղից երկու հաստ գիրք հանեց: Նայեց գրքերին, մեկը զգուշությամբ դրեց մահճակալի վրա, մյուսը կրկին տեղավորեց դարակում և գնաց դեպի հեռուստացույցը, որպեսզի բարձրացնի ձայնը: Տարեց ու ճաղատ մի մարդ ինչ-որ բան էր համոզում հեռուստաղիտողներին, երբեմն-երբեմն մատնացույց անելով թվերով ծածկված աղյուսակները: Արմենը պտտեց կոճակը: Երկրորդ ծրագիրը գովազդներ էր հաղորդում: Երրորդում որոտում էին ատրճանակները. ամերիկյան կովբոյական նկար էր: Չորրորդ ծրագրում ստադիոնի ահավոր գոռում-գոչյունի տակ խաղում էին ավստրալական ֆուտբոլ՝ ձվաձև ինչ որ գնդակով: Հետո ֆուտբոլն անջատվեց, ու իրար հետևեցին մուլտիպլիկացիոն գովազդները. «Գնեցեք կոկա-կոլա», «Չմոռանաք ծխել «Փոլ Մոլ» և ուտել տարօրինակ անունով ինչ-որ մածուկ:

Արմենը կրկին պտտեց հեռուստացույցի կոճակը: Ողջ էկրանով մեկ կանգնած էր գերմանացի էսէսական մի սպա՝ սև համազգեստով, գանգեր ու խաչեր մերակներին և ձեռքին մտրակ:

- Դու խոզ ես,- գոռում էր նա՝ ատելությամբ նայելով իր ոտքերի տակ,- խոզ ես, խոզ, իսկական անգլիական խոզ: Քեզ մորթել է պետք:

Կամերան իջավ դանդաղ, և պարզվեց, որ էսէսական սպայի ոտքերի մոտ իսկապես պարարտ, սպիտակ մի խոզ է կանգնած:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շատ սրամիտ էր արված, կարելի էր ծիծաղել ամբողջ սրտով, բայց Արմենը չծիծաղեց: Նա միայն կրկին հայացք նետեց մահճակալին ընկած հեռախոսագրքին, մոտեցավ, վերցրեց, բացեց առաջին էջը, նայեց, հետո փակեց արագ, դրեց պահարանի վրա ու ետ տանելով մանուշակագույն ծածկոցը, պառկեց մահճակալին:

Ու նոր միայն զգաց, թե որքան հոգնած է:

Պատուհանից երևում էին ինչ-որ արտասովոր ծառերի բարձր սաղարթները՝ վառ կարմիր, խոշոր ծաղիկներով, իսկ նրանց արանքում, պատուհանով մեկ երկինքն էր՝ մաքուր, անամպ, երկնագույն:

«Երկնագույն երկինք»՝ իր մտքի վրա ժպտաց Արմեն Գասպարյանը, բայց ուրիշ ոչ մի պատկեր չգտավ: Ո՛չ լուրթը, ո՛չ լազուրը, ո՛չ կապույտը այն չէին: Իսկ ինքը քիչ առաջ թռչում էր այդ երկնքով:

Որքա՞ն տևեց թռիչքը: Մոսկվայից մինչև Դելի՝ վեց և կես ժամ: Հետո՞: Հետո Սինգապուր: Դելիից մինչև Սինգապուր ևս հինգ և կես ժամ: Չորս ժամ Սինգապուրից մինչև Ավստրալիա, Դարվին: Իսկ որքա՞ն էր Դարվինից մինչև այստեղ, Սիդնեյ: Հա, իհարկե, ուղիղ Երևան-Մոսկվա երթուղու չափ, եթե թռչում ես Իլ-18-ով: Երեք ժամ քսան րոպե: Չէ, այդքանը մինչև Բրիզբեն էր: Իսկ Բրիզբենից մինչև Սիդնեյ թռան ևս մեկ ժամ տասը րոպե:

Ուրեմն, թռել են ավելի քան քսան ժամ: Խելագարվե՛լ կարելի է:

Նրա մարմինը դեռևս ինքնաթիռի ցնցումներն էր կրում, և պտտվում էր գլուխը: Արմենը հանկարծ մտածեց, որ ինչ-որ տարօրինակ է պտտվում գլուխը, ասես սովորականին հակառակ: Գուցե նրանից է, որ հակոտնյա աշխարհում ենք գտնվում, մտածեց նա: Ախր սա հարավային կիսագունդն է:

Հեռախոսի զանգը պարզապես ցնցեց նրան: Սիրտն այնքան արագ էր բաբախում, որ նա չէր կարողանում վերցնել լսափողը: Ո՞վ կարող էր լինել զանգահարողը: Ի՞նչ լեզվով խոսի նրա հետ:

- Ալլո,- լսվեց լսափողի մեջ,- քնա՞ծ ես, տո:

- Թենգիզ, դո՞ւ ես,- ճանաչեց նա զբոսաշրջիկների իրենց խմբի վրացի տղաներից մեկի ձայնը:

- Չէ՛, Սիդնեյի քաղաքագլուխն է,- ծիծաղեց Թենգիզը,- ես եմ, բա ի՞նչ եմ: Չե՞ս գալիս մի քիչ դուրս գանք պտտվենք:

- Չէ՛,- ասաց Արմենը,- հոգնած եմ, ուզում եմ քնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գի՞ժ ես, տո,- հեռախոսալարի մյուս ծայրում գոռգոռաց Թենգիզը,- բա մարդ էստեղ հասնի ու քնի՞: Դու էլ Աբդուռահման աղան դարձար:

- Աբդուռահման աղա՞ն ով է:

- Մի ծեր նկարիչ էր Միջին Ասիայից: Իրար հետ Աֆրիկա էինք գնացել: Ամեն տեղ քնում էր: Ինքնաթիռում քնած էր: Հասանք Նիգերիա՝ քնեց, ավտոբուսում քնում էր, գնացքում քնում էր, հանդիպումների ժամանակ քնում էր: Մի օր ասացի. Աբդուռահման աղա, ի՞նչ է, ձեր տանը քունդ չէ՞ր տանում, որ հազար ռուբլի ծախսել, եկել այստեղ ես քնում:

- Եվ ի՞նչ ասաց,- ակամա ծիծաղեց Արմենը:

- Ի՞նչ պիտի ասեր, քնած էր,- ասաց Թենգիզը:- Հիմա ի՞նչ ես ասում: Գալի՞ս ես, թե չէ:

- Չէ՛,- ասաց Արմենը:

Նա ցած դրեց լսափողը ու կրկին ձեռքը վերցրեց հեռախոսագիրքը: Գիրքը ծանր էր, թեքվում էր մի կողքի վրա: Վեր կացավ, ծնկեց փոքրիկ գորգին, մահճակալի մոտ ու լայն բացեց գիրքը: Թերթեց, թերթեց ու հասավ «Գ» տառին:

Մի հայացքով արագ ընդգրկեց էջերը և ուրախացավ, տեսնելով, որ «Գասպար» ազգանուններ շատ կան: Խոր շունչ քաշեց:

«Տե՛ր աստված,-մրմնջաց նա,- ախր չէ որ ամեն հրաշք հնարավոր է այս աշխարհում: Ի՞նչ կլինի, որ լինի այս հրաշքը: Տե՛ր աստված: Նայեմ ու տեսնեմ՝ գրված է «Գասպարյան Մ. Պ.», ուրիշ ոչինչ, «Գասպարյան Մ. Պ.»: Մի՞թե հնարավոր չէ, որ այսքան, այսքան ազգանունների մեջ, այսքան-այսքան մարդկանց մեջ լինի մի «Գասպարյան Մ. Պ.», Տե՛ր աստված»:

Արմեն Գասպարյանը իր եղբորն էր փնտրում:

1971 թվականի սեպտեմբերի 20-ին, Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի «Թրեյվլոջ» այսինքն՝ «Իջևանատուն» հյուրանոցի իր համարում, թերթելով հեռախոսի գիրքը, երևանցի Արմեն Գասպարյանը փնտրում էր իր եղբորը, Հայրենական մեծ պատերազմում 1944 թվականին անհայտ կորած Մելիք Պետրոսի Գասպարյանին:

Խե՞նթ էր այդ մարդը, ինչ էր...

Նա ջահել չէր, նա արդեն քառասուն տարեկան էր: Երեք երեխաների հայր: Նոսրացել էին մազերը, ճերմակել քունքերի մոտ, կնճիռներն ակոսել էին ճակատն ու դեմքը, ոստայն հյուսել պարանոցին: Հեռախոսագրքի վրա սահող ձեռքի մաշկը բարակել էր արդեն ու պարզ երևում

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

էին կապույտ երակները: Նա ջահել չէր, չէ, բայց և այնպես, Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի 1971 թվականի հեռախոսագրքում փնտրում էր 1944 թվականին Արևմտյան Ուկրաինայում ինչ-որ տեղ անհետ կորած եղբոր ազգանունը:

«Մելիք Պետրոսի Գասպարյան»:

Երբ ստացան Մելիքի անհետ կորչելը հաստատող թուղթը, Արմենը տասներեք տարեկան էր: Ամբողջ ընտանիքը լաց էր լինում: Լաց էին լինում նաև հարևանները, բարձրաձայն «Մելիք» կանչելով ու հիշելով զոհված ու կորած իրենց հարազատներին: Իսկ Արմենը միայն զարմացած էր: Ինչպե՞ս թե անհետ կորել է: Ո՞նց կարող է անհետ կորչել մեծ մարդը, այն էլ Մելիքը՝ բարձրահասակ, ուժեղ Մելիքը: Ճիշտ է ասում պապը. ասեղ հո չի՞, որ կորչի: Երևի այնպիսի տեղ է ընկել, որ հնար չունի ձայն տալու: Եթե կորել է, ուրեմն կա, որ կորել է, ուրեմն կգտնվի: Այնքան մարդիկ են կորել ու գտնվել:

Հաղթահասակ, բարձր տղա էր Մելիքը: Կիրակի օրերին առավոտյան ուսերին էր դնում փոքրիկ Արմենին և Գնունի փողոցից գնում, հասնում էր Հրազդանի ձորը: Թիթեղյա փոքրիկ տուփից կարմիր որդեր էր հանում, կախում էր կարթից, երկար ճիպոտների ծայրերին մեծ քարեր էր դնում, պառկում էր Արմենի կողքին՝ խոտի վրա ու գրքեր էր կարդում, զարմանալի, զարմանալի բաներ:

Իսկ երեկոյան նրանք վերադառնում էին նույն ճանապարհով, երկար-երկար փողոցներով, քարե սև հուներ ունեցող, կատաղած հոսող առուների կողքով: Եվ Արմենի գլուխը պտտվում էր բարձրությունից: Երկու ձեռքով ամուր գրկած Մելիքի վիզը, ծնոտը նրա մազերի մեջ խրած, տղան անընդհատ, անընդմեջ հարցեր էր տալիս եղբորը, և Մելիքը պատասխանում էր ներքևից վեր, ծիծաղկոտ բերանով, և քայլում էր լայն-լայն քայլերով, երկար-երկար փողոցն ի վար:

Հիմա ասում են՝ կորել է:

Չէ, այստեղ Գասպարյան չկա: Ո՞ւր է: Ասում են աշխարհը լցված է հայերով: Որտե՞ղ են: Ահա, ոչ մի Գասպարյան: Ամեն ինչ կա, ամեն ինչ: Գասպար, Գասպար, Գասպար, ինչքան ասես: Ահա՝ Գասպարելլի, Գասպարիոն, Գասպարտ, իսկ Գասպարյան չկա: Ոչ մի հատ:

Իսկ գուցե... Նա տենդորեն բացեց, գտավ «Կ» տառը: Գուցե Կասպարյան են գրում այստեղ: Կասպարյան, ի՞նչ կա որ:

Գուցե գրում են, բայց չկա: Կասպարյան էլ չկա: Կասպար՝ խնդրեմ: Նույնիսկ ավտոսպասարկման ընկերություն՝ «Կասպար և Կ»: Իսկ Կասպարյան չկա: Ասենք, ո՞վ գիտե, գուցե և դեն է նետել հայկական «յան» մասնիկը ու դարձել է Գասպար: Ինչեր ասես, որ չեն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անում հայերը: Լոնդոնում պառավ մի հայուհի կար, երբ ծանոթանալու համար մեկնեց ձեռքը, ասաց՝ «Օրիորդ Կարապետ»: Կարապետը դեռ ոչինչ: Այն ո՞վ էր Կոպենհագենում: Հա, ինքնաթիռով միասին էին թռչում: Աղավաղված, ծամածռված հայերենով հազիվ հասկացրեց, որ ինքն էլ հայ է, և ասաց, որ եղբայրն էլ է Կոպենհագենում ապրում: Հեռախոսի համարը չի հիշում, բայց եթե հեռախոսագրքում նայես, իսկույն կգտնես: Պետերս: Ներսես Պետերս:

- Պետե՞րս,- հարցրեց Արմենը:

- Այո՛, այսինքն՝ Պետրոսյան: Հոստեղ Պետրոսյան չեն հասկնար, Պետրոս կգրեն. Ներսես Պետերս:

Արմենը Կոպենհագենում բացեց հեռախոսագիրքը: Նախ Գասպարյան որոնեց: Չկար: Հետո մտածեց գտնել Պետրոսյան-Պետերսին: Գրքում երեք հարյուր քսան Պետերս կար: Դե, եկ ու գտիր այդ միակ Ներսես Պետրոսյանին երեք հարյուր քսան Պետերսների մեջ:

Աշխարհը հայերով լցվա՛ծ է...

- Նայեմ տեսնեմ կա՞ «Գասպար Մ. Պ.»,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը, մատը զգուշությամբ սահեցնելով «Գասպար»-ների կողքով:

Ահա, երեք հոգի կան: «Գասպար Մ. Պ.»: Մեկ էլ հանկարծ պարզվի, որ նրանցից մեկը Մելիքն է: Տե՛ր աստված, ինչ ուրախություն կլինի: Այդ մտքից արագ խփեց սիրտը: Իսկապես, մեկ էլ տեսար...

Նա հավաքեց համարը, երկար, օտար մի համար, սկզբում՝ տառերով, հետո՝ թվերով: Ինչ-որ տեղ հեռվում բարակ ու ընդհատ հնչեց զանգը: Ձախ ձեռքի ափը քրտնել էր, նա լսափողը աջ ձեռքը վերցրեց, ցավեցնելու չափ ամուր սեղմեց ականջին:

- Հելլո՞,- լսվեց տղամարդու պարզ, հարցական, թավ մի ձայն:

- Ներեցե՛ք, դուք հա՞յ եք,- հայերեն հարցրեց Արմենը: Հետո վախեցավ, որ չեն լսի, որ ինքը կամաց է հարցնում և այնպես չի հարցնում, ինչպես պետք է, ու գրեթե գոռաց,- ասում եմ, դուք հա՞յ եք, հայ, հայ:

Սիդնեյում ինչ-որ տեղ, թե որտեղ՝ չկարողացավ պատկերացնել Արմենը, մի մարդ արագ-արագ ինչ-որ բան ասաց բարկացած ու ցած նետեց լսափողը:

Դե, իհարկե, ասաց ինքն իրեն Արմենը: Չէ՞ որ այս ամենը այնուամենայնիվ հիմարություն է: Հիմարություն է, հիմարություն է, հիմարություն է, ասաց նա: Հասկացիր, էլի, Մելիքը չկա: Չկա: Հո միայն նա չէ: Հարյուր հազարներ չկան, միլիոններ չկան: Բոլորն էլ անհետ կորել են,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չկան: Մարդ ես, էլի: Ի՞նչ ես ուզում աշխարհից, ի՞նչ ես ուզում քեզնից: Ապրիր, էլի, ինչպես մյուսները:

Եվ վերջապես, ի՞նչ ես աշխարհն իրար խառնել: Խնդրում, աղաչում ես սրան-նրան, քաղցած նստում ես ողջ տարին, ուղեգիր ես ձեռք բերում, գնում հասնում ես աշխարհի ծայրը և ի՞նչ ես տեսնում՝ հեռախոսագրքերից բացի: Ի՞նչ ես տեսնում: Ամեն հանդիպողի մեջ հայ ես փնտրում, եղբայր ես փնտրում, Մելիք ես փնտրում: Իսկ որ տեսնես՝ կճանաչե՞ս: Ութ տարեկան ես եղել, երբ վերջին անգամ տեսել ես: Երեսուներկու տարի է անցել, մա՛րդ: Հիմա նա հիսունմեկ տարեկան է: Որ տեսնես, կճանաչե՞ս:

Պատերազմի երկրորդ տարում Մելիքը մի նկար ուղարկեց ռազմաճակատից: Կանգնած էր բարձր ու հպարտ՝ մի փոքրիկ ինքնաթիռի մոտ, ոտքից գլուխ կաշվե փայլուն հագուստի մեջ: Ձախ ձեռքով ետ էր տարել կաշվե պիջակի փեշը ու ձեռքը հենել էր կողքին: Իսկ բացվածքի միջից բլուզի վրա երևում էր սպիտակ, կլոր մի մեդալ: Վրան գրված էր՝ «Խիզախության համար»:

Ինչպե՞ս են անհետ կորչում այդպիսի մարդիկ:

- Լավ,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը,- այս մեկն էլ փորձեմ և վերջ:

Նա դանդաղ, հատիկ-հատիկ հավաքեց համարը, վերջին թիվը հավաքելուց առաջ նայեց պատուհանից դուրս ու տեսավ, որ մթնում է: Դիմացի շենքի վրա վառվում-հուրհրում էր գովազդը: Գարեջրի մեծ գավաթը լցվում էր լույսով, և լույսը բարձրանում-բարձրանում էր, դառնում փրփուր, փրփրում էր ու ծորում էր գավաթի կողքերից: Զարմանալի նուրբ գովազդ էր:

- Լավ,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը,- միայն այս մեկը:

Նա բաց թողեց սկավառակը պահող մատը, և գրեթե անմիջապես էլ լսափողը վերցրին: Երևի սպասում էին ինչ-որ մեկի զանգին, որովհետև լսափողը բարձրացրած կինը սկսեց անմիջապես խոսել: Հավանորեն ինչ-որ բան էր խնդրում: Ձայնը մեղմ էր, հուզիչ ու աղերսով լի: Արմեն Գասպարյանը խղճի խայթ զգաց, քիչ մնաց անջատեր խոսակցությունը, բայց որովհետև գիտեր, թե որքան պատահական բաներ են լինում աշխարհում, սպասեց այնքան, մինչև որ կինը դադարեց խոսել, և ասաց շտապով:

- Ձեր տանը հայ կա՞: Հայ, Արմենիա: Մելիք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մի պահ ոչ մի ձայն չկար: Հետո ծիծաղ լսվեց, բարձր, լիաթոք, անկեղծ ծիծաղ: Ու անջատվեց հեռախոսը: Երևի կինը կարծեց, թե կատակում են: Կատակում են: Այնինչ ոչ ոք աշխարհում դեռևս այդքան լրջորեն ու այդքան հուզված չէր հավաքել Սիդնեյի այդ տան համարը:

Նա կրկին նայեց հեռախոսին ու զարմացավ, տեսնելով, որ մոխիր է թափվել սկավառակի վրա: Որտեղի՞ց կարող էր մոխիր թափվել, մտածեց նա և նոր միայն նկատեց, որ ծխում է: Նա հավաքեց երրորդ «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարի առաջին թիվը, բայց անմիջապես էլ ետ քաշեց ձեռքը, վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում:

- Ի՞նչ ես ուզում,- ասաց նա ինքն իրեն,- ի՞նչ ես ուզում, ա՛յ մարդ: Ուրեմն, քո կարծիքով, եթե Մելիքը ողջ լիներ, չէ՞ր հայտնվի: Լավ, տասը տարի կարելի էր սպասել, մտածելով, թե գերության մեջ է եղել ու վախենում է տեղեկություն տալ: Լավ, քսան տարի, հետո՞... Այսինքն ինչե՛ր ասես չեն լինում: Այն որտե՞ղ էր, հա, իհարկե Գվադալահարայում: Օլիմպիական խաղերի առիթով Մեքսիկա էր գնացել: Վերցրեց հեռախոսի գիրքը, թերթեց: Մի Գասպար կար և այն էլ Գասպար Մ. Պ.: Անմիջապես հավաքեց համարը ու հարցրեց.

- Ներեցեք, դուք հա՞յ եք: Հայ:

- Հա՞յ: Իսկ դուք ո՞վ եք:

- Մելի՛ք,- գոռաց Արմենը,- Մելիք, դո՞ւ ես:

- Չէ՛,- ասաց մարդը,- ես Միգել եմ, Մուշեղն եմ: Իսկ դուք ո՞վ եք: Ի՞նչ եք ուզում:

Նրանք հանդիպեցին: Գրեթե հասակակիցներ էին: Մուշեղը վախեցած չորս կողմն էր նայում անընդհատ ու Արմենին ստիպում էր երդվել, որ Բուլղարիայից չեն ուղարկել նրան հենց իր, Մուշեղի ետևից:

- Նրանք ի՞նչ են ուզում ինձնից,- քունքերը տրորելով անընդհատ հարցնում էր նա:

Ջահել լակոտ էր եղել, երբ սկսվել էր պատերազմը: Վառնայում էին ապրում: Ֆաշիստական կառավարությունը զորակոչել էր նրան, բայց նա ինչ-որ նավի հնոցատանը թաքնված փախել էր Արգենտինա: Հետո ուրիշ փախչողներից իմացել էր, որ հեռակա կարգով դատապարտել են գնդակահարության: Եղել էր ամեն տեղ ու ամեն ինչ, բեռնակիր էր աշխատել նավահանգստում, լրագրեր էր վաճառել, աշխատել էր խոհանոցում, ծխնելույզներ էր մաքրել: Պտտվելով եկել հասել էր Մեքսիկա ու ավտոբուս էր վարում Գվադալահարա քաղաքում: Ամուսնացել էր: Իսպանացի կին ուներ և երկու տղա՝ Անդրանիկ և Հոզե: Նկարները ցույց տվեց՝ հրեշտակներ էին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զգուշությամբ մարդկանց միջոցով իմացել էր, որ պատերազմից հետո ծնողները հայրենադարձվել են ու հիմա Երևանում են ապրում:

- Իսկ դու ինչո՞ւ ես այստեղ,- չգիտես ինչու բարկացած ասաց Արմենը:- Ինչո՞ւ չես գնում ծնողներիդ մոտ:

- Կբռնեն,- ասաց Մուշեղը,- ես գիտեմ:

- Ո՞վ պիտի բռնի, ա՛յ մարդ,- ասաց Արմենը,- նախ դու ֆաշիստներից ես փախել: Հետո դու հո Բուլղարիա չես վերադառնում: Հետո նույնիսկ, եթե որևէ մեղք ունեցել ես, արդեն կրել ես պատիժդ երկու և ավելի անգամ:

- Հազար անգամ,- ասաց Մուշեղը:- Անտեր եմ, օտար եմ, կարոտից մեռնում եմ:

- Դե, տեսնում ես,- ասաց Արմենը,- թո՛ղ ամեն ինչ, ընտանիքդ վերցրո՛ւ, հայրենի՛ք գնա: Գիտե՞ս ինչ ուրախություն կլինի,- ակամա նախանձով, աշխատելով լաց չլինել, ասաց Արմենը:- Նրանք գիտե՞ն, որ դու կաս:

- Չէ՛,- ասաց Մուշեղը:

- Հիմար մարդ ես,- գոռգոռաց Արմենը, գոռգոռաց այնպես բարձր, որ եթե որևէ տեղ Մելիքը կար, լսեր նրան:- Հիմար մարդ ես, քեզ անհետ կորած են համարում... լաց են լինում վրադ, իսկ դու քեզ համար ավտոբուս ես վարում Գվադալահարայի փողոցներում: Ազգանունդ ես փոխել, կուչ ես եկել, սենյոր Միգել Գասպար: Մենակ քո մասին ես մտածում: Հիմա ո՞վ գիտե քեզ որտեղ են փնտրում ձերոնք, եղբայրներդ ու քույրերդ, ամեն ծնունդիդ թաղում են քեզ, Գասպար... Մա՛րդ եղիր, մա՛րդ...

- Դուք չգիտեք, կգնդակահարեն,- երեխայի պես աչքերը տրորելով՝ լաց եղավ Մուշեղը:

Նա լաց էր լինում, իսկ Արմենը խղճահարությամբ ու զայրույթով նայում էր արդեն տարեց, խեղճ այդ մարդուն, աշխարհում կորած, աշխարհում ինքն իրեն կորցրած այդ խեղճ մարդուն: Համոզում էր թողնել ամեն ինչ, ետ դառնալ, գնալ իր ակունքը գտնել, իր անունը գտնել, իր ուրախությունը գտնել և ուրախացնել սգավոր, տխրած մարդկանց: Ուրախության սպասող, սպասումով ու հույսով ապրող, ուրախություն փնտրող մարդկանց: Համոզում էր նա, և նրան թվում էր, թե հիմա, հենց այս րոպեին, ինչ-որ մեկն էլ ինչ-որ տեղ Մելիքին է գտել ու համոզում է: Թե հիմա աշխարհում ամեն մարդ բռնել է մյուսին ու համոզում է: Համոզում է ապրել, չվախենալ, կուչ չգալ, չփոխել անունը, չկորչել անհետ, չկորչել անհետ, անհետ: Թե հիմա աշխարհում բոլորն էլ որոնում են, փնտրում են, կարոտում են, տառապում են, սպասում են, ուրախության են սպասում անակնկալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հարկավոր է վերջ տալ այս բոլորին,- ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը:

Նա վերադարձավ մահճակալի մոտ, հեռախոսագիրքը վերցրեց, դրեց պատուհանի վրա, միայն մի հայացք նետելով վերջին «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարին, հանեց հագուստը ու պառկեց մահճակալին:

Պատուհանի ետևում, ծառերից այն կողմ, համարյա քսվելով սաղարթներին, ասես ցուցադրաբար եկավ անցավ կլոր, դեղին լուսինը, և Արմեն Գասպարյանը նկատեց, որ դա միանգամայն ուրիշ, օտար լուսին է: Շրջված էր այնտեղ ամեն ինչ, ծանոթ բոլոր ստվերները շրջված էին:

- Հա, իհարկե,- մտածեց նա,- ախր սա հարավային կիսագունդն է, ախր ես Ավստրալիա եմ հասել, նավապետ Կուկի, աբորիգենների, նավապետ Գրանտի որդիների երկիրը: Հիմա մոտերքում ինչ-որ տեղ կենգուրուներ են վազում՝ լայն-լայն ցատկելով: Հիմա հեռուներում ինչ-որ տեղ աղիողորմ կլանչում են դինգո վայրի շները:

Ասում են՝ ապշելու երկիր է Ավստրալիան: Հարկավոր է մի լավ շրջել ու տեսնել, տեսնել այս երկիրը: Մարդիկ միայն մի անգամ են Ավստրալիա հասնում:

Նա իրեն լավ ծածկեց վերմակով, ձեռքը մեկնեց, որ հանգցնի լուսամփոփը և փոքրիկ պահարանի վրայից վերցրեց հեռախոսագիրքը:

- Լավ,- ասաց նա ինքն իրեն,- այս մեկն էլ փորձեմ, և վերջ...

1973թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կոալաներ

Փոքրիկ կենդանիները ծուլորեն շարժվում էին ծառի ճյուղի վրա՝ անդադար ծամելով ու անտարբերությամբ շրջվելով իրենց հառված լուսանկարչական սարքերից: Նրանք միամիտ, վախեցած աչքեր ունեին և թաց, խղճալի դնչեր:

- Ուշադրություն դարձրեք այս հազվագյուտ կենդանիներին, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր,- հանդիսավոր ու բարձր ասում էր թարգմանչուհին,- սրանք նշանավոր ավստրալական արջուկներն են և կոչվում են կոալա, որ աբորիգենների, այսինքն՝ բնիկների լեզվով նշանակում է՝ «Խմող չէ»: Կոալաներն իրոք ջուր չեն խմում և պատկանում են պարկավորների ընտանիքին: Նրանց միակ սնունդը էվկալիպտի տերևներն են: Նրանք ապրում են հենց էվկալիպտի ծառերի վրա և բացարձակապես զուրկ են պաշտպանության միջոցներից: Ի բարեբախտություն նրանց, Ավստրալիայում գիշատիչներ չկան, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր, եթե չհաշվենք մարդկանց:

Թարգմանչուհին ծիծաղեց իր կատակի վրա մի այնպիսի ծիծաղով, որից պարզ էր, որ միշտ այդ նախադասության վրա ծիծաղում է: Ծիծաղեցին նաև զբոսաշրջիկները:

- Դուք հանգիստ կարող եք նկարել կոալաներին, միայն սպառնալ չի կարելի: Տեսեք ինչպես են վախենում...

Թարգմանչուհին ճչաց հանկարծ ու մատը թափ տվեց արջուկների վրա: Նրանք դադարեցին ծամել ու փոքրիկ թաթերով ծածկեցին աչքերը: Դա իրոք որ ծիծաղելի էր ու խղճալի:

- Նկատի՛ ունեցեք, կոալաները միակ կենդանիներն են, որ Ավստրալիայից բացի ուրիշ ոչ մի տեղ չկան: Շատ են փորձել նրանց բնակեցնել այլ երկրներում, բայց կոալաները հայրենիքից դուրս չեն կարողանում ապրել, ոչնչանում են:

Արմեն Գասպարյանը մի քանի անգամ լուսանկարեց այդ զարմանալի կենդանիներին: Հետո երկար կանգ առավ կենգուրուների մոտ: Նա գրպանից հացի մի կտոր հանեց, որ թարգմանչուհու խորհրդով նախօրոք վերցրել էր հետը, և երբ ձեռնասուն կենգուրուներից մեկը անճոռնիորեն ցատկելով մոտեցավ նրան, մեկնեց հացը: Կենգուրուն հենվեց ամուր ու հաստ պոչի վրա և բարձրացրեց զարմանալիորեն քնքուշ, ասես կանացի թաթերը: Նույն վայրկյանին նրա պարկը զգուշությամբ բացվեց և հայտնվեց ճուտի սրադունչ գլուխը: Կենգուրուն մի թաթով բռնեց հացը, իսկ մյուսով ճուտին ետ՝ պարկը հրեց, օտար աչքերից ու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վտանգից հեռու: Նրա բնազդական շարժումի մեջ մայրական այնպիսի մի սրտաշարժ ու կոպիտ հոգածություն կար, որ Արմեն Գասպարյանը զգացված ժպտաց:

«Մայրն ամենուրեք ու ամեն ինչում մայր է»... - մտածեց նա:

Բայց որովհետև նրան շատ հասարակ ու ծամծմված թվաց այդ ձևակերպումը, ամաչեց մի տեսակ, ասես բարձրաձայն էր արտահայտել իր միտքը ու մոտեցավ վառ դեղինով ներկված նստարանին:

Նրա դեմքին խաղում էր օվկիանոսի հոտը, և մարմինն ասես օրորվում էր ալիքների ծփանքից: Կռալաների և կենգուրուների արգելանոցը գալուց առաջ նա մոտ երեք ժամ մեջքի վրա պառկած էր ծովածոցի ալիքների վրա՝ սքանչացած նայելով մաքուր երկնքին և աշխատելով աշխարհի քարտեզի վրա որոշել իր տեղը: Դա շատ հետաքրքիր էր և երազի էր նման:

Ո՞վ կմտածեր, թե երբևէ կհայտնվեր այստեղ, աշխարհի ծայրում, Խաղաղ օվկիանոսի ափին, ավստրալական այս փոքրիկ քաղաքում, որտեղ ընդամենը մի հայ կա: Զարմանալի բան է. հայերն առհասարակ մենակ չեն կարողանում ապրել, իսկ սա ապրում է:

«Հոյակապ մարդ է,- ասաց նրա մասին Մելբուռնի հայերից մեկը,- անպայման զանգահարիր: Շատ հայասեր մարդ է, թող առնի կարոտը»:

«Երեկոյան կզանգահարեմ»,- վճռեց Արմեն Գասպարյանը:

*

* *

- Ալլո՞:

Հեռախոսալարի մյուս ծայրում սկսեցին խոսել անգլերեն:

- Ես Պանդուխտ Չարեքյանին եմ ուզում,- հայերեն ասաց Արմեն Գասպարյանը:

- Ես եմ, Պանդուխտն եմ, դո՞ւք եք, պարոն Գասպարյան: Մելբուռնի բարեկամս զանգահարեց ինձ: Կսպասեի: Ե՞րբ եկաք: Շատ, շատ ուրախ եմ: Ինչպե՞ս եք: Մենք ալ աղեկ ենք: Կինս, գիտե՞ք, անգլուհի է, սակայն հայերեն քիչ ու միչ կհասկանա: Մեծ աղջիկս ալ կհասկանա, սակայն խոսել չգիտե, իսկ փոքրս բոլորովին չի հասկանա, անպիտանը: Քանի՞ օր պիտի մնաք: Որտե՞ղ իջած եք: «Պարկ ռոյա՞լ»: Հոթե՞լ է, թե՝ մոթել: Հոթե՞լ: Հա, աղվոր հոթել է: Շատ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սուղ չէ՞ վարձը: Չե՞ք գիտեր: Սուղ կըլլա, սուղ կըլլա... հոստեղ ամեն ինչ սուղ է, ջանմ, ապրելն ալ սուղ է, մեռնելն ալ սուղ է...

Հեռախոսալարի մյուս ծայրում Պանդուխտ Չարեքյանը ծիծաղեց.

- Կատակ պիտի ընեմ,- զգուշացրեց նա:- Հոստեղ կսեն՝ Ավստրալիո մեջ միայն ոչխարը սուղ չէ, ատոր համար ո՛չ մեկը կուզե ոչխար ըլլալ:

Եվ նա երկար ծիծաղում էր իր կատակի վրա, այնքան, որ Արմեն Գասպարյանը ժպտաց: «Կարոտած մարդ է,- ասաց նա ինքն իրեն»:

- Հիմա հոթե՞լն եք, պարոն Գասպարյան: Ուրեմն ես տասնհինգ վայրկյանեն ետքը կուգամ: Ափսո՛ս, քանի մը օր առաջ գալու էիք, ավելի շատ ժամանակ կրնայի անցուցել ձեզի հետ: Հակառակի պես երեկ մայրս մեռավ:

- Ի՞նչ: Ինչպե՞ս թե:

- Այո՛, երեկ մայրս մեռավ: Երկուշաբթի պետք է թաղենք:

Սա՞ ինչ բան է: Իսկ քիչ առաջ երկար խոսում, ծիծաղում էր, զգուշացնում էր, որ կատակ պետք է անի...

- Շատ, շատ վշտացած եմ,- շփոթված մրմնջաց Արմեն Գասպարյանը:- Ցավում եմ սրտանց:

- Է՛, հոգ չէ,- ասաց Պանդուխտ Չարեքյանը,- մայրս գրեթե ութսուն տարեկան էր...

- Դե մայրը մնում է մայր,- ասաց Արմեն Գասպարյանը և ակամա կարմրեց, սրտնեղելով, որ նորից օգտագործում է այդ բավականին հասարակ, ծամծմված, ասես այլևս իմաստազուրկ միտքը:

- Չէ՛, հոստեղ մի քիչ ուրիշ է: Արդեն ծեր էր մայրս: Տանը չէր կրնա օգնել: Որպեսզի բեռ չըլլա, քիչ ու միչ գործեր կներ, որովհետև այստեղ անգործ մարդկանց չեն սիրեր... Ծերանոց կուղարկեն:

Արմեն Գասպարյանը շփոթված լռում էր:

- Ես հիմա պատկերացնում եմ ձեր վիճակը,- ասաց նա:- Գիտեմ, թե որքան եք հուզված ու խառնված: Ներողություն, որ անհանգստացրի, ինչ ասեմ...

- Ո՛չ, ո՛չ,- հեռախոսալարի մյուս ծայրում անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը:- Հիմա կուգամ քեզ մոտ: Շատ կուզեմ խոսել հետդ, հայերեն խոսել: Ի՞նչ կըլլար մի քանի օր առաջ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գայիր, մա՛րդ աստծո, մայրս շատ կսիրեր հայերեն խոսել, բայց հետը խոսող չկար: Մի լավ երկար-երկար կխոսեիք: Գիտե՞ս, մայրս մինչև վերջ ալ հայերենից զատ ուրիշ լեզու չսովրեց, չէր ուզում սովորել... Ես հիմա կուգամ:

- Կարիք չկա, ձեր հոգսով զբաղվեք, խնդրում եմ,- սրտանց խնդրեց Արմեն Գասպարյանը:

Նա իսկապես, չգիտես ինչու, այլևս չէր ուզում տեսնել այդ մարդուն:

- Ո՛չ, ո՛չ, քեզ համար չէ, ինձի համար կուգամ,- պնդեց Պանդուխտ Չարեքյանը և, որպեսզի առարկություն չլսի, արագորեն կախեց լսափողը:

*

* *

Կես ժամ անց համարի դուռը բախեցին: Ներս մտավ բավականին բարեկազմ, ճերմակող մազերով ու բեղերով, նուրբ դիմագծերով, հին հայերի կապույտ աչքերով մի մարդ: Կասկած չկար, որ Պանդուխտ Չարեքյանն է: Նրա հետ եկել էր նաև դուստրերից մեկը, որ սպիտակ, կլորիկ, պարզ ու բարի դեմքով մի աղջիկ էր և հավանաբար շատ էր նման իր անգլուհի մորը:

- Պարո՛ն Գասպարյան, ծանոթացի՛ր, ավագ դուստրս է, Պանինան:

- Պանինա՞:

- Այո՛, առաջինն էր: Իմ անունը Պանդուխտ է: Կինս ասաց՝ եթե մանչ ծնվի, Պանդուխտ կդնենք անունը: Բայց աղջիկ ծնվեց: Եվ անունը դրեցինք Պանինա:

- Աղվոր ամ... անուն է, այո՞,- տանջալիորեն ձգելով բառերը՝ հայերեն հարցրեց աղջիկը:

Մենք նստեցինք, և Ավստրալիայի ծովեզրյա այս փոքրիկ քաղաքում ավելի քան տասներկու տարի ապրող Պանդուխտ Չարեքյանը երկար-երկար պատմում էր իր կյանքը: Տասը թվականին է ծնվել Սև ծովի ափին, Սամսուն քաղաքի մոտ ընկած մի գյուղում: Հետո սպանել են հորը, ու գաղթ է եղել: Մայրը հավաքել է որբերին ու տարել հասցրել Հունաստան, պահել է մի կերպ, մեծացրել է: Իր հացը վաստակելու համար ինչե՛ր ասես որ չի արել Պանդուխտը, որտեղ ասես չի թափառել: Գնացել, գնացել, հասել է Անգլիա: Մանր առևտրով է զբաղվել ու այնտեղ էլ ամուսնացել այս Պանինայի մոր հետ: Հետո դրամ վաստակելու հույսով նրանք գնացել, Աֆրիկայի խորքերն են հասել, երկար տարիներ դեգերել են Գանայի ջունգլիներում: Հետո ինչ-որ բանի տեր են դարձել և նորից գնացել, գնացել հասել են Ֆրանսիա: Հետո էլի են թափառել, էլի ինչ-որ երկրներում են եղել, մինչև որ այսպես գնալով, գնալով եկել հասել են

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ավստրալիա, ծովեզրյա այս փոքրիկ քաղաքը, հողակտոր են գնել, տուն են սարքել ու ապրում են:

- Սամսունին նման է, գիտե՞ս,- ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Ափին որ կնստեմ ու կփակեմ աչքերս, մեր Սև ծովը կտեսնեմ... Սև ծովը տեսած կա՞ս:

- Շատ,- ասաց Արմեն Գասպարյանը:

- Այս Ավստրալիան աղվոր երկիր է՝ գիտե՞ս,- ասաց Պանդուխտ Չարեքյանը: Հետո երևի մտածեց, թե Արմեն Գասպարյանը կնեղանա, կամ որ լավ չէ այդպես ասելը, երբ ինչ-որ տեղ հայրենիք ունես, ու ավելացրեց շտապով:- Եթե Հայաստանում չես, ուրեմն ամենալավ տեղը Ավստրալիան է: Այդպես չէ՞: Հոս խտրություն քիչ կա. ոչ մեկը չըսե՝ արմենիա՞ն ես, իռլա՞նդ ես...

- Արմենիան... Խա-յաս-տան... ամ... այո՞,- ինչ որ կերպ զրույցին մասնակցելու համար տառապանքով հեգեց Պանինան:

- Իսկ ես լսել եմ, որ իտալացիներին ու հույներին լավ չեն վերաբերվում այստեղ,- ոչ միտումնավոր, ուղղակի որևէ բան ասած լինելու համար ասաց Արմեն Գասպարյանը:

Պանդուխտ Չարեքյանը մի փոքր շփոթվեց:

- Ճիշտ է,- ասաց նա,- սակայն իտալացիների ու հույների աղքատը եկած է հոս ու անկիրթը: Անոնց չեն սիրեր... Դե, մենք՝ հայերս, ուրիշ ենք, աշխատող ենք, մեզի կսիրեն...

- Բախտավոր ժողովուրդ ենք,- չգիտես ինչու բարկացած նրան ընդհատեց Արմեն Գասպարյանը,- բոլորը սիրում են մեզ...

- Այո՛,- անվստահ հաստատեց Պանդուխտը:

Եվ որովհետև Արմեն Գասպարյանը այդ ամբողջ ժամանակամիջոցում Պանդուխտ Չարեքյանի մոր մասին էր մտածում, ակամա հարցրեց միանգամից, գրեթե անկապ.

- Իսկ ձեր մա՞յրը...

- Է՛, մայրս ինչ,- ասես սթափվելով զարմացած նրան նայեց մարդը:- Հիվանդ էր... Լավ էր, որ քիչ մնաց հիվանդ: Այսինքն՝ անկողին չընկավ գրեթե: Իհարկե, ես ամեն ինչ արեցի... Ձրի հիվանդանոց գտա: Գիտե՞ս, այնտեղ չեն բուժեր: Բայց կպահեն: Կուզես դրամ կուտաս, կուզես՝ չես տա: Հոստեղ դրամի խնդիրը շատ կարևոր է: Նարինջի կիլոն արժեք չունի, խնձորը արժեք չունի, ոչխարը, գիտե՞ս, երկու-երեք դոլլարով կառնինք... Բայց կյանքը սուղ է

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

և երթալով ավելի սուղ կդառնա: Շնորհք պիտի ունենաս, որ դրամ կուտակվի... Դրացիներ ունենք, որ օրվա վաստակածը կխմին, կուտին: Է՛, ատանկ կարելի չէ: Հոս բանկային մեջ դրամ չունենաս նե, մարդ չես...

- Եվ ձեր մայրը...

- Է, մայրս շատ խնդրեց, որ հիվանդանոց չտանինք: Է՛, ամ... սակայն ո՞վ կրնար խնամիլ ծեր կինը: Ես և տիկինս մեր խանութը կաշխատինք: Աղջիկներուս մեկը պետական օֆիսը կբանա, մյուսը կանացի վարսավիր է... Լավ գործ կընենք, փա՛ռք աստծո: Տանը չորս հոգի ենք, երեք օթո ունենք: Պստիկ աղջիկս ալ կկռվի, թե ես ինչո՞ւ չպետք է ունենամ... Իսկ մեզ մոտ օթոն սուղ է, գիտե՞ս: Երկու հազար դոլլարեն պակաս չկա: Հարկավ, քիչ մը բանցուցած որ առնիս, աժան է, սակայն...

- Եվ ուրեմն մայրիկը...

- Է՛, մայրիկի խնդիրը լեզվի խնդիր էր: Լեզու չգիտեր... Հիվանդանոց չէր ուզեր երթալ. քանի որ միայն հայերեն կխոսեր: Է՛, հայերեն խոսելով հոս կապրվի՞... Հոս ճարպիկ պիտի ըլլաս, հարյուր լեզու պիտի ունենաս...

- Ֆադր,- կամացուկ ասաց Պանինան: Հետո նայեց Արմեն Գասպարյանին, կարմրեց ու ասաց... - Խայրիկ... ա՛մ... այդպես չէ՞...

- Այո՛, այո՛,- անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը:- Աղջիկս օֆիսեն կուշանա: Հոստեղ շատ խիստ է, գիտե՞ս, վայրկյան մը ուշանաս, տնօրենը կըսե՝ այ ամ սորի... այսինքն թե ափսոսում եմ, սակայն այլևս միասին չենք կրնա աշխատել... Չեն գոռա, գիտե՞ս, շատ քաղաքավարի կըսեն...

*

* *

Պանդուխտ Չարեքյանի տունը մի շատ սիրունիկ բլրի վրա էր գտնվում, քաղաքից ավտոմեքենայի ճիշտ կես ժամվա ճանապարհի վրա, անտառի պռնկին: Չորս սենյականոց փոքրիկ, հարմարավետ ու թեթև տուն էր, լավ մշակված կանաչ բակով, մորու փոքրիկ թփերով և պապայայի վիթխարի ընկույզներով ծանրաբեռնված կարճլիկ, ծերատված ծառերով:

Մի փոքրիկ սեղան դրեցին վառ կանաչի վրա, նստեցին թեթև աթոռակներին ու ծխեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պարոնը ամ... քաղցած չէ՞,- երկար-երկար հայերենով հարցրեց շատ հաճելի դեմքով անգլուհի տանտիրուհին:

- Ո՛չ, ո՛չ,- ասաց Արմեն Գասպարյանը,- շնորհակալություն:

- Բրենդի չե՞ս ուզեր,- զարմացավ Պանդուխտ Չարեքյանը:

- Ընդհանրապես խմելու ոչինչ չեմ ուզում...

- Հոստեղ մեկ անգամ կհարցնեն, գիտե՞ս,- ժպտալով ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Կերար նե՝ կերար, չկերար նե՝ չկերար...

- Լավ եք անում,- ասաց Արմեն Գասպարյանը:- Թենքյու վերի մաչ...

- Պարոնը սփի՞ք ինգլիշ,- պայծառացավ տանտիրուհին: Արմեն Գասպարյանը տարուբերեց գլուխը:

- Այս ի՞նչ բան է,- հարցրեց նա,- մարդ չի՞ հավաքվելու: Որտե՞ղ է մայրիկի դին դրված:

Պանդուխտ Չարեքյանը բարձրաձայն ծիծաղեց:

- Է, ատանկ սովորություն չկա: Հատուկ տեղ կա թաղամասին մեջ: Հոն կպահեն, հետո կթաղեն...

- Հավատացյա՞լ էր մայրիկը:

- Հարկավ, շատ հավատացյալ էր...

- Բայց ձեր քաղաքում հայկական եկեղեցի չկա:

- Այո՛,- մեղավոր ձայնով ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Անգլիական եկեղեցում պիտի դնենք...

Խե՛ղճ, խե՛ղճ Հայկանուշ մայրիկ:

Արմեն Գասպարյանը նայում էր բլրի ստորոտում տարածված արմավենու անտառին: Ավելի հեռվում՝ կոկլիկ սարերի փեշերին, մրջյունների նման ցրված արածում էին ոչխարի անհամար հոտեր: Հետո ոտքերի տակ նայեց ու հարյուրերորդ անգամ զարմացավ, թե որքան խնամքով են այստեղ վերաբերվում խոտի մշակությանը: Խոտը հարթ ու համաչափ խուզված էր ամենուրեք: Հետո նա տեսավ, որ Պանդուխտ Չարեքյանի հարևան տան բնակիչները

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գնդակ են խաղում իրենց համաչափ խուզված խոտի վրա և ծիծաղում են զվարթ: Եվ նա հանկարծ վիրավորվեց, որ մարդ է մեռել, բայց հարևանները ծիծաղում են:

- Է՛, կկարծեք, թե հոստեղ կյանքը հե՞շտ է,- հանկարծ լսեց նա անգլուհի սիրունատես տանտիրուհու ձայնը:- Ամուսինս ինչի ասես ձեռք չզարկավ... Սկզբում խոզ կպահեինք, գրքով, գրքի մեջ կկարդայինք ու կպահեինք: Ամ... շահ չունեցանք: Սկսանք հավ պահել... Է՛, սակայն տեսանք, որ բան մը չէր: Հիվանդություն կար... հավերն սկսան ասանկ վեր-վեր թռչել ու իյնալ: Կհիշե՞ս,- ծիծաղելով դարձավ նա ամուսնուն:- Վնասը քիչ ընելու համար, պարո՛ն, ամբողջ օրը հավ կուտեինք...

Դա երևի շատ ծիծաղելի հուշեր էր արթնացնում, որովհետև անգլուհի տիկինը և նրա հայ ամուսինը զարմանալիորեն միատեսակ երկար ու բարձրաձայն ծիծաղում էին, մինչդեռ Արմեն Գասպարյանը մեղավորի պես, աչքի տակով հարևանների կողմն էր նայում:

- Այնուհետև փայնեփլի առևտուր սկսանք ընել: Ամ... փայնեփլի հայերենն ի՞նչ է, Պան...

- Անանաս կըսեն,- ասաց Պանդուխտ Չարեքյանը:

- Այո՛, փայնեփլ... Անտառը լիքն էր, սակայն քաղաքում գին չուներ: Բան դուրս չեկավ, է՛, լավ էր գոնե, որ մեծ-մեծ հողեր ունեինք, թանկացան, ծախեցինք մաս-մաս, օգուտ ունեցանք:

- Կապրինք նե, գոհություն աստծո,- գոհունակ ասաց Պանդուխտ Չարեքյանը:- Սակայն դրամի շատ-շատ պակաս ունինք: Հոստեղ առանց դրամի չես կըրնա ապրիլ, գիտե՞ս, առանց օթոյի ալ չես կրնա ապրիլ: Քաղաքը ցրված է, ավտոբուս չկա, տրամվայը հանել են... Է՛, օթոն ալ սուղ է... Այս տունն ալ վաճառեմ պիտի, քանի որ նոր տուն մը սարքել եմ, երեք-չորս շաբթեն պատրաստ կըլլա... Դրամի խնդիրը...

Եվ հանկարծ Արմեն Գասպարյանը կորցրեց իրեն.

- Մայրիկն ի՞նչ գործ ունի այդ բոլորի հետ,- գրեթե գոռաց նա:

Միանգամից լռություն տիրեց: Նույնիսկ լսվեց, որ հեռվում գնդակ խաղացող հարևանները իսպաներեն են խոսում:

Անգլուհի տանտիրուհին ոչինչ չհասկանալով սիրալիր տարակուսանքով թոթվեց ուսերը, և Արմեն Գասպարյանը սարսափելի շփոթվեց:

- Ախր հարևանները կլսեն, որ դուք ծիծաղում եք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պանդուխտ Չարեքյանը բարի, ներողամիտ ժպիտով, եղբայրավարի նայեց Արմեն Գասպարյանին...

- Հոգուդ շատ մոտ մի՛ ընդունիր,- ասաց նա,- հոստեղ ամեն ինչ ուրիշ կերպ է...

*

* *

Եկեղեցին փոքրիկ, սովորական մի շենք էր և թերևս միայն խաչով էր տարբերվում շրջապատի շենքերից: Արմեն Գասպարյանը շատ եկեղեցիներ էր տեսել աշխարհում, իրարից մեծ ու փոքր ու ոճով իրարից տարբեր, բայց առաջին անգամ էր այսքան պարզ մի եկեղեցում: Մարդիկ կորցրել են հավատը, ջերմեռանդ աղոթողների թիվը գնալով պակասում է, և հոգևորականներն ինչեր ասես չեն անում մարդկանց եկեղեցուն կապելու համար: Ժամանակակից ու վերացական ոճի եկեղեցիներ են կառուցում, աստծո տաճարներում թույլատրում են ջազային երաժշտություն և ռոկն ռոլ պարել, երիտասարդության համար կինոնկարներ են ցուցադրում, կրոնական թեմաներով զվարճալի ժամանցներ են կազմակերպում ու զեկուցումներ կարդում՝ «Աստված և ամուսնական բաժանությունները» կամ «Սերը մերձավորի նկատմամբ» թեմաներով: Սիդնեյի մի եկեղեցում նույնիսկ էժանագին ճաշեր են տալիս հավատացյալներին: Իսկ Սիդնեյից ոչ շատ հեռու, Ինգելսայդ վայրում հազվագյուտ մի տաճար կա, որ իր ստեղծողի անունով Բահալի է կոչվում: Այդ տաճարում կարող են աղոթել բոլորը, անկախ իրենց հավատից: Տաճարի ճակատին գրված է. «Բոլոր դարերում մարդիկ իրենց աստծուն են դիմել եկեղեցում, մզկիթում թե բուդդայական տաճարում: Նե՛րս մտիր, մա՛րդ, կարևորը հավատն է»:

Կարևորը հավատն է:

Աներևույթ մագնիտոֆոնից Մոցարտի ռեքվիեմն էր հնչում՝ զարմանալիորեն ահավոր ու սրտամաշ: Ցածրիկ պատվանդանի վրա, հասարակ ու սև դագաղում, մանրիկ ձեռքերն իրար վրա դրած, չորուկ-մորուկ մի պառավ էր պառկած, ասես հոգնությունից հենց նոր փակած կոպերով, խիտ կնճիռների մեջ տարակուսանքի, թե զարմանքի արտահայտություն:

Արմեն Գասպարյանը ետ նայեց ակամա: Ամբողջ սրահում երկուսով էին: Միայն բեմի վրա ինչ-որ դանդաղ արարողությամբ էր զբաղված հաճելի, սիրունատես մի հոգևորական:

- Է՛, խանութը փակել կարելի չէ,- ակամա արդարանալով շշնջաց Պանդուխտ Չարեքյանը:- Կինս առևտուր կընե: Աղջիկներս ալ իրենց գործին են: Բարեկամս պետք է գար Մելբուռնեն, կուշանա: Այստեղ ասանկ է... Շատ չի տևեր, գիտե՞ս, հիմա կվերջացնեն... Ծեր կին էր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այո՛,- ասաց Արմեն Գասպարյանը: Նրա ձայնը խռպոտ հնչեց: Կոկորդը քոր էր գալիս մի տեսակ:

Աներևույթ մագնիտոֆոնի մեջ կանանց երգչախումբը ամենաբարձր տոնի վրա ասես պահեց շունչը, և հանկարծ աստվածային երաժշտության ներքո բարձր ու հանգիստ հնչեց ջահել հոգևորականի ձայնը: Նա խոսում էր այնպես, ասես աստծո տունը հավատացյալներով լի էր, ու աշխարհը լի էր հավատացյալներով: Նա ինչ որ բան էր համոզում մարդկանց, հորդորում ու պահանջում էր մեղմ, երգեցիկ ձայնով, և նրա աչքերը հառված էին ցածրիկ պատվանդանի վրա, հասարակ ու սև դագաղի մեջ պառկած փոքրիկ պառավի դեմքին: Նա խոսում էր դանդաղ, հատ-հատ արտասանելով բառերը, և այդ բառերը հնչեղ արձագանքում էին կիսախավար սրահի ցածրիկ կամարների տակ:

Արմեն Գասպարյանը տեսավ, թե ինչպես իր կողքին խուլ հառաչով ծնկի իջավ սամսունցի Պանդուխտ Չարեքյանը: Եվ որովհետև անհարմար էր այդպես միայնակ կանգնելը՝ ինքն էլ ծնկի իջավ ամաչելով: Եվ հանկարծ լսեց, որ Պանդուխտ Չարեքյանը հեծկլտում է ու զարմացած նայեց նրան:

- Ախր չգիտես, թե ինչեր կըսե,- հեծկլտանքի միջից շշնջաց Պանդուխտ Չարեքյանը:- Գաղթի մասին կխոսե, հայերի ճակատագրի մասին կխոսե և ալելույա կըսե իմ անբախտ, անհայրենիք Հայկանուշ մայրիկիս հոգուն համար...

- Դո՞ւք էիք նրան այդ մասին պատմել,- հարցրեց Արմեն Գասպարյանը:

- Ո՛չ, ու հենց ադոր համար կուլամ... Այս ի՞նչ ճակատագիր է, տեր աստված... Ի՞նչ գործ ուներ Հայկանուշ մայրիկս այս անտեր Ավստրալիո մեջ: Ի՞նչ կըլլար մի քանի օր շուտ գայիր, մա՛րդ, մայրիկս հայերեն խոսեր հետդ: Ինծի համար խնդիր չէ, սակայն մայրիկս կմեռներ հայերեն խոսելու համար: Ողորմի հոգուդ, Հայկանո՛ւշ մայրիկ, հայերեն խոսող չեղավ քեզ հետ:

«Իհարկե, քեզ համար խնդիր չէ: Ոչ դու, ոչ էլ աղջիկներդ չեք մեռնի, հայերեն խոսելու կարոտից,- չգիտես ինչու չարացավ Արմեն Գասպարյանը:- Եվ այլևս ոչ ոք չի մեռնի: Ո՛չ ոք: Չեք ապրի, որ մեռնեք: Կջնջվեք, կանհետանաք: Կդառնաք անգլիացի, ֆրանսիացի, թուրք: Եվ ոչ մեկդ չեք մեռնի: Դուք նույնիսկ կոալա չեք... Դուք ճարպիկ եք, ձեզ բոլորը սիրում են: Դուք ամեն տեղ էլ կարող եք ապրել և ուտվել»:

*

* *

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա քայլում էր փողոցով արագ-արագ, շնչակտուր լինելով, քայլում էր մտքում խոսելով ու վիճելով ինքն իր հետ, Պանդուխտ Չարեքյանի հետ, աշխարհի հետ: Նա քայլում էր՝ չնկատելով գիշերային պայծառ ու նուրբ գովազդները, որոնք վառվում, հուրհրում, ճչում ու պտտվում էին: Քայլում ու զարմանում էր, որ պառավ մի կնոջ մահը կարող էր այդպես հուզել իրեն: Եվ մտածում էր, որ հարցը պառավ կինը չէ, որ զարհուրելի ու անարդարացի շատ բաներ կան այս տարօրինակ աշխարհում:

Բոբիկ ոտքերով իրենց գյուղի կանաչ արահետներով աղբյուրը վազող փոքրիկ Հայկանուշի մտքով կանցնե՞ր երբևէ, որ կյանքն ավարտելու է հեռո՛ւ-հեռվո՛ւմ, անիմանալի մի երկրում, որի անունը Ավստրալիա է, և որտեղ հայերեն խոսող չկա: Ոչ ոք չկա, որին հայրերիդ լեզվով պատմես ցավդ, ասես թե ինչեր ես քաշել, մղկտաս ու լաց լինես հայերեն:

... Արմեն Գասպարյանը քանդեց օձիքը, խորը շունչ քաշեց ու նորից արագ-արագ քայլեց Ավստրալիայի ծովեզրյա այդ փոքրիկ քաղաքի գիշերային աղմկոտ փողոցով: Նա քայլում էր այնպես, ասես փախչում էր: Եվ նրա աչքերի առաջ ամենուրեք կոալաներ էին երևում՝ խղճալի, միամիտ, անպաշտպան կոալաներ:

Կորած կոալաներ:

1976 թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հայրը ժպտում էր

Նա սպասեց այնքան, մինչև բարձրացան բոլորը, ապա ինքը բարձրացավ: Տրամվայը, ինչպես միշտ այդ ժամերին, լեփ – լեցուն էր: Մարդիկ վերադառնում էին աշխատանքից: Վերջանում էր ամիսը: Աշխատավարձի օրեր էին: Նա լավ գիտեր այդ: Ետին հարթակում շարժվելու տեղ չկար, թվում էր, թե մարդիկ կախված են օդի մեջ ու օրորվում են հոսանքից:

Նա ուշադրությամբ շուրջն էր դիտում՝ անտարբեր, սառը հայացքով: Սև ու շարժուն աչքերը շրջում էին այս ու այն կողմ՝ շոշափելով սահում մարդկանց գրպանների ու պայուսակների վրայով:

Հարթակում կանգնած մարդիկ բանվորներ էին՝ սև, փայլող ձեռքերով: Նրան ծանոթ թվացին այդ ձեռքերը: Իր հայրն էլ այդպիսի ձեռքեր ուներ: Նրա ափերի ծալքերի մեջ սևություն կար, որ ոչ մի օճառով չէր անցնում: Դեմքն էլ էր այդպես սև: «Նեգր ես, — ծիծաղում էր մայրը, — իսկական նեգր»: Հայրը ժպտում էր: Լավ էր ժպտում նա: Այդպես միայն ուժեղ մարդիկ են ժպտում: Նա ժպտում էր նաև, երբ ճակատ էր մեկնում: Ինքը լաց էր լինում՝ տեսնելով մոր արցունքները, իսկ հայրը ժպտում էր: Բայց ուրիշ տեսակ էր ժպիտը: Իսկ երբ մայրը գրկեց ու համբույրներով ողողեց նրա դեմքը, հայրն ասաց.

— Հը, կնիկ, արցունքովդ ուզում ես մաքրե՞լ երեսս: Ջուր բան: Ա՛յ, որ ետ գամ՝ կտեսնես, սպիտակ կլինի:

Բայց ետ չեկավ...

Տրամվայը հին էր ու գնում էր դղրդոցով: Մարդիկ իջնում էին, նորերն էին բարձրանում: Նրա աչքերը սահեցին, սահեցին ու կանգ առան մեկի վրա: Տարեց մարդ էր՝ մազերը նոսր էին ու կանոնավոր սանրված: Քթարմատին ակնոցը կարմիր հետք էր թողել: Պայուսակի վրա դրած ձեռքի մատները թանաքոտ էին: «Հաշվապահ է, — մտածեց տղան, — և ծոցագրպանն էլ ուռած է»: Նա բացեց թերթը՝ իբր թե կարդում է, դրա վերին մասը հենեց ծերունու կրծքին, որպեսզի նա ներքև չնայի ու աջ ձեռքով շոշափեց ծոցագրպանը: Վրան քորոց կար: Զգուշությամբ, տրամվայի մի ցնցումի հետ բացեց, իսկ հաջորդ ցնցումի հետ, երբ ետ քաշեց ձեռքը, ափի մեջ խոշոր, կաշվե դրամապանակն էր: Սիրտը տրոփեց ծանոթ հուզմունքից՝ հաճելի ու ահավոր: Բարձրացրեց գլուխը:

Մարդը ոչինչ չէր զգացել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տրամվայը հին էր ու անցնում էր դղրդոցով: Տղան կամացուկ դեպի դուռը քաշվեց, ապա հանկարծակի ցատկեց ցած՝ աջ ձեռքը չհանելով գրպանից: Գրպանում դրամապանակն էր:

Գնում էր նա՝ աչքի տակով նայելով ետ, ապա տեսնելով, որ չեն հետապնդում՝ արագացրեց քայլերը: Հանգստացավ միայն այն ժամանակ, երբ թեքվեց մի նեղ, ծանոթ փողոց: Կանգնեց: Նորից նայեց շուրջը: Ոչ ոք չկար:

Հանգիստ, ինչպես իր սեփականը, հանեց կաշվե հին, ուռած դրամապանակը: Պոկեց, դեն նետեց կապող կարմիր ռետինե ժապավենը ու բացեց: Առաջինը, որ տեսավ՝ արհմիության մի հին, մաշված գրքույկ էր, վրան՝ մուրճ ու մանգաղ: Արանքից մի նկար ընկավ: Ընտանեկան նկար էր: Հաշվապահը նստած էր կնոջ հետ: Նրանց գլխավերևում երկու փոքրիկ տղաներ էին կանգնած՝ ժպտուն աչքերով, կարճ, շեղ կտրած մազափնջերով: Ուզեց դեն նետել, հետո ինչ – որ բան մտածելով՝ տեղը դրեց նկարը ու նայեց դրամապանակի մյուս գրպանը: Ահա՝ թղթադրամներ են: Ձեռքերը հաճելի դողացին: Ափսոս, քիչ է, ընդամենը քսաներեք ռուբլի:

Դրամապանակը բազմաթիվ մեծ ու փոքր գրպաններ ուներ: Նրանց մի մասը դատարկ էր: Մեկում բնակարանի վարձի պահանջագիրն էր: Քմծիծաղ տվեց՝ «չտանե՞մ մուծեմ»: Հետո նկատեց մի շատ փոքր գրպան: Նրանում ինչ – որ բան կար: Գուցե ոսկի՞: Չէ, թուղթ է: Հանեց: Մի քանի անգամ ծալած, փայլուն թուղթ էր: Տակից երևում էր կնիքը: Թանաքը ներծծվել էր: Հիասթափված նորից տեղը դրեց, մռայլվեց ու ամբողջ թափով դրամապանակը նետեց կողքի միահարկ տան տանիքը...

Քայլեց: Մանր անձրև սկսեց տեղալ: Կաթիլները թրջեցին նրա մազերը: Դուրը եկավ: Գլուխը բարձրացրեց վեր, թողնելով, որ զովանա ճակատը: Ձեռքը գրպանում էր: Մատները շոշափում էին թղթադրամները: Քսաներեք ռուլբի: Շատ չէ, բայց ոչինչ: Հետո կանգնեց՝ մեխված հանկարծակի մի մտքից: Իսկ ի՞նչ, եթե այդ թուղթը բանկի չեկ էր կամ դրամ ցույց տվող մի այլ բան: Թափ տվեց ձեռքը ու առաջ անցավ: Բայց քայլերն այլևս վստահ չէին: «Չէ՛, թղթի մի կտոր էր», — հանգստացրեց նա իրեն ու շարունակեց ճանապարհը՝ հաստատ իմանալով, որ վերադառնալու է: Հետո միանգամից շրջվեց ետ ու վազեց:

Առաջվա նման փողոցում ոչ ոք չկար: Հասավ այնտեղ, ուր կանգնել էր՝ դրամապանակը ձեռքին: Նայեց վեր: Պատը բարձր է: Բայց ահա հեռագրասյունը. նրա վրայով կարելի է բարձրանալ:

Անձրևը շարունակում էր գալ մանր կաթիլներով, պատի կավահողը թրջվել էր: Ցեխոտելով պիջակը՝ վեր մագլցեց: Սիրտն անհանգիստ էր. իսկ եթե չգիտի՞, եթե մեկը նկատած լինի, որ ինքը նետեց ու… Բայց ոչ, ահա՝ ընկած է: Նա թեթևացած շունչ քաշեց, վերցրեց թրջված դրամապանակը ու նորից սյունը գրկած ցած իջավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բացեց դրամապանակը ու փոքր գրպանից դուրս քաշեց թուղթը: Չէր թրջվել: Գրված էր ռուսերեն: Տղան կարդաց.

«Հարգելի ընկ. (ազգանունը): Գիտենք, անչափ, անչափ ծանր կլինի Ձեզ համար, բայց թաքցնելն իմաստ չունի: Ձեր որդին (անուն ազգանունը) մեր սիրելի (անունը) ընկավ հերոսաբար, քաջի մահով՝ մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ, 1943 թվականի օգոստոսի 6 – ին: Ընկավ Հայրենիքի համար:

Նրա հիշատակը միշտ վառ, միշտ անմոռաց կմնա մեր սրտերում: Սփոփվեցեք: Ձեզ հետ սգացող, քաղբաժնի պետ (ստորագրությունը)»:

Նա ցնցվեց, այլայլվեց, դողացին ձեռքերը, ու թուղթը՝ զարկված թռչունի նման ընկավ ցած: Նրան թվաց, թե ինքը հոր մահվան գիրը կարդաց: Հայրը ժպտում էր… Ուրիշ տեսակ էր ժպիտը…

Մնաց կանգնած, քար կտրած, սփրթնած դեմքով՝ աչքը չկարողանալով հեռացնել վայր ընկած թղթից: Ուզեց փախչել, չենթարկվեցին ոտքերը: Կռացավ, վերցրեց թուղթը, նորից կարդաց ու… հեկեկաց երեխայի պես, թուլացած ու սրտամորմոք, ինչպես իր մայրն էր հեկեկում այն օրը: Իր աչքերը, որ տարիներ շարունակ արցունք չէին տեսել, հիմա վրեժխնդիր էին լինում ասես: Լալիս էր նա, ու մի տեսակ հաճելի էր լացը: Լալիս էր հոր համար, ժամանակից շուտ ծերացած մոր համար, որ տանջված, կոշտացած ձեռքեր ուներ ու տխուր –տխուր աչքեր, լալիս էր իր համար, որ ուրիշ, ուրիշ տեսակ դասավորվեց կյանքը…

Հանգստացավ: Թղթին զգուշորեն նախկին ծալվածքը տվեց ու տեղավորեց փոքրիկ գրպանիկում: Հետո վճռական մի շարժումով ձեռքը գրպանը տարավ, հանեց թղթադրամները ու դրանք էլ իրենց տեղը դրեց: Դուրս եկավ: «Փոստով կուղարկեմ իրեն»,— մտածեց նա: «Իսկ եթե չհասնի՞»: «Ինչո՞ւ չպետք է հասնի»,— պատասխանեց ինքն իրեն: «Իսկ եթե հիմա ուրի՞շ տեղ են ապրում»:

«Տար ինքդ, վախկոտ,— հրեց նրան մի ձայն, — տղամարդ չե՞ս: Տար ինքդ հանձնիր»:

Քայլեց փողոցով: Անձրևը կտրվել էր: Վառվել էին փողոցի լույսերը, թաց գետինը փայլում էր: Գնում էր: Գիտեր հասցեն: Գնում էր արագ – արագ: Շտապում էր, վախենում էր դանդաղեցնել քայլերը, հանկարծ կամքը կթուլանա, վճռականությունը կլքի…

Ահա և նրանց փողոցը: Տունը: Չէ, այս մեկը չէ: Ահա: Ջանգ էլ ունի՝ կարելի է սեղմել կոճակը: Պատուհանում լույս կա: Չեն քնել: Դե, իհարկե, ո՞վ է այս ժամին քնում: Երևի նստել է հայրը՝ տխուր ու գլխահակ ու սգում է որդու երկրորդ կորուստը: Կամ երևի պատմում է տնեցիներին: Նրանք լալիս են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Սեղմիր կոճակը,— հրեց նրան նույն ձայնը,— սեղմիր, ո՞ւմ ես սպասում»:

«Իսկ եթե հանկարծ մարդը միլիցիա կանչի՞, — սարսափեց նա, — ավելի լավ չէ՞ դնել այ այստե՛ղ, դռան մոտ, կտեսնեն կվերցնեն... »:

«Սեղմի՛ր, ասում եմ»:

Զանգը հնչեց ասես տղայի սրտում, ուժեղ, ցավով, երկար:

Հրավիրեցին: Ներս մտավ: Փոքրիկ, անշուք մի սենյակ էր: Պատերին երկու մեծադիր նկարներ կային: Նույն տղաներն էին՝ ժպտուն աչքերով, կարճ, շեղ կտրած մազափնջերով: Երևի այն նկարից էին հանած: «Տեսնես ո՞րն է զոհվածը»,— մտածեց տղան: Անկյունում, անկողնի մեջ պառկած էր մի կին: Գլուխը կապած էր:

«Մայրն է», — մտածեց տղան: Սեղանի մոտ նստած էր ծերունին: Տղան իսկույն ճանաչեց: Ականոցն աչքերին էր: Նրա առջև լրագիր կար ընկած:

— Հայրի՛կ…

Ինչ – որ բան սեղմվեց կոկորդում:

— Հայրի՛կ,— շշնջաց նա արցունքակալած աչքերով,— ես ձեր դրամա... ձեր որդու...

Ծերունին հանկարծ վեր թռավ տեղից.

— Ի՞նչ, Վարդանի ընկե՞րն ես, ուրախ եմ, ուրախ եմ, նստի՛ր, տղաս: Լսո՞ւմ ես, Մարո, տղան Վարդանի ընկերն է: Ղափանում միասին են աշխատում: Հիմա արձակուրդ ես վերցրել, հա՞, լավ է, լավ: Իսկ Վարդանս ինչպե՞ս է, առո՞ղջ է, — ծերունին գրկել էր տղային ու թափահարում էր նրա ուսը,— հը՞:

— Լավ է, — շփոթված ասաց տղան, — առողջ է, — ավելացրեց նա, տեսնելով, որ մայրը դեպի ինքն է շրջել դեմքը ու նայում է պայծառ, խաղաղ, երջանիկ աչքերով:

— Դե, փա՛ռք աստծո,— իսկույն շարունակեց ծերունին,— թե չէ անհանգստանում էինք: Դե, նստիր: Գուցե թեյ խմենք: Ափսոս, պառավս մի փոքր հիվանդ է:

Չէ՛, շնորհակալություն, — մրմնջաց տղան,— ես շտապում եմ, էլի՛ կգամ:

Անպայմա՛ն կգաս..., — ու էլի ինչ – որ բան էր ասում ծերունին, բայց տղան այլևս չէր լսում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իրեն կորցրած, շփոթված ու հուզված պատշգամբ դուրս եկավ: Քրտինքի կաթիլները թափվում էին նրա մազերի տակից, լցվում աչքերը, մղկտացնում: Գլուխը պտտվում էր:

Ծերունին բաց չէր թողել նրա ձեռքը:

— Տո՛ւր,— ասաց նա հանկարծ ընկճված, վշտոտ, ծերունական տկար ձայնով,— սա մե՛ծ որդիս է: Մայրը չգիտե...

Տղան ակամա, առանց ուշքի գալու, կատարեց նրա խնդիրքը:

— Գնա, տղա՛ս...

Տղան ցած իջավ աստիճաններից: Հասավ դռան մոտ, ետ նայեց: Ծերունին ասես միանգամից կոտրված, փոքրացած հենվել էր բազրիքին ու գլուխը ափերի մեջ էր առել: Նրա ուսերը ցնցվում էին:

Տղան փողոց դուրս ելավ: Քայլում էր նա դանդաղ, գլխիկոր, հարբածի նման օրորվելով, կանգնում, ետ էր նայում ու քայլում էր նորից՝ ուժասպառ ու հոգնաբեկ: Քայլում էր նա... Իսկ աչքերի առջև հայրն էր...

Հայրը ժպտում էր...

ՀԱՅՐԸ ԺՊՏՈՒՄ ԷՐ

Նա սպասեց այնքան, մինչև բարձրացան բոլորը, ապա ինքը բարձրացավ: Տրամվայը, ինչպես միշտ այդ ժամերին, լեփ – լեցուն էր: Մարդիկ վերադառնում էին աշխատանքից: Վերջանում էր ամիսը: Աշխատավարձի օրեր էին: Նա լավ գիտեր այդ: Ետին հարթակում շարժվելու տեղ չկար, թվում էր, թե մարդիկ կախված են օդի մեջ ու օրորվում են հոսանքից:

Նա ուշադրությամբ շուրջն էր դիտում՝ անտարբեր, սառը հայացքով: Սև ու շարժուն աչքերը շրջում էին այս ու այն կողմ՝ շոշափելով սահում մարդկանց գրպանների ու պայուսակների վրայով:

Հարթակում կանգնած մարդիկ բանվորներ էին՝ սև, փայլող ձեռքերով: Նրան ծանոթ թվացին այդ ձեռքերը: Իր հայրն էլ այդպիսի ձեռքեր ուներ: Նրա ափերի ծալքերի մեջ սևություն կար, որ ոչ մի օճառով չէր անցնում: Դեմքն էլ էր այդպես սև: «Նեգր ես, — ծիծաղում էր մայրը, — իսկական նեգր»: Հայրը ժպտում էր: Լավ էր ժպտում նա: Այդպես միայն ուժեղ մարդիկ են ժպտում: Նա ժպտում էր նաև, երբ ճակատ էր մեկնում: Ինքը լաց էր լինում՝ տեսնելով մոր արցունքները, իսկ հայրը ժպտում էր: Բայց ուրիշ տեսակ էր ժպիտը: Իսկ երբ մայրը գրկեց ու համբույրներով ողողեց նրա դեմքը, հայրն ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հը, կնիկ, արցունքովդ ուզում ես մաքրե՞լ երեսս: Ջուր բան: Ա՛յ, որ ետ գամ՝ կտեսնես, սպիտակ կլինի:

Բայց ետ չեկավ...

Տրամվայը հին էր ու գնում էր դղրդոցով: Մարդիկ իջնում էին, նորերն էին բարձրանում: Նրա աչքերը սահեցին, սահեցին ու կանգ առան մեկի վրա: Տարեց մարդ էր՝ մազերը նոսր էին ու կանոնավոր սանրված: Քթարմատին ակնոցը կարմիր հետք էր թողել: Պայուսակի վրա դրած ձեռքի մատները թանաքոտ էին: «Հաշվապահ է, — մտածեց տղան, — և ծոցագրպանն էլ ուռած է»: Նա բացեց թերթը՝ իբր թե կարդում է, դրա վերին մասը հենեց ծերունու կրծքին, որպեսզի նա ներքև չնայի ու աջ ձեռքով շոշափեց ծոցագրպանը: Վրան քորոց կար: Զգուշությամբ, տրամվայի մի ցնցումի հետ բացեց, իսկ հաջորդ ցնցումի հետ, երբ ետ քաշեց ձեռքը, ափի մեջ խոշոր, կաշվե դրամապանակն էր: Սիրտը տրոփեց ծանոթ հուզմունքից՝ հաճելի ու ահավոր: Բարձրացրեց գլուխը:

Մարդը ոչինչ չէր զգացել:

Տրամվայը հին էր ու անցնում էր դղրդոցով: Տղան կամացուկ դեպի դուռը քաշվեց, ապա հանկարծակի ցատկեց ցած՝ աջ ձեռքը չհանելով գրպանից: Գրպանում դրամապանակն էր:

Գնում էր նա՝ աչքի տակով նայելով ետ, ապա տեսնելով, որ չեն հետապնդում՝ արագացրեց քայլերը: Հանգստացավ միայն այն ժամանակ, երբ թեքվեց մի նեղ, ծանոթ փողոց: Կանգնեց: Նորից նայեց շուրջը: Ոչ ոք չկար:

Հանգիստ, ինչպես իր սեփականը, հանեց կաշվե հին, ուռած դրամապանակը: Պոկեց, դեն նետեց կապող կարմիր ռետինե ժապավենը ու բացեց: Առաջինը, որ տեսավ՝ արհմիության մի հին, մաշված գրքույկ էր, վրան՝ մուրճ ու մանգաղ: Արանքից մի նկար ընկավ: Ընտանեկան նկար էր: Հաշվապահը նստած էր կնոջ հետ: Նրանց գլխավերևում երկու փոքրիկ տղաներ էին կանգնած՝ ժպտուն աչքերով, կարճ, շեղ կտրած մազափնջերով: Ուզեց դեն նետել, հետո ինչ – որ բան մտածելով՝ տեղը դրեց նկարը ու նայեց դրամապանակի մյուս գրպանը: Ահա՝ թղթադրամներ են: Ձեռքերը հաճելի դողացին: Ափսոս, քիչ է, ընդամենը քսաներեք ռուբլի:

Դրամապանակը բազմաթիվ մեծ ու փոքր գրպաններ ուներ: Նրանց մի մասը դատարկ էր: Մեկում բնակարանի վարձի պահանջագիրն էր: Քմծիծաղ տվեց՝ «չտանե՞մ մուծեմ»: Հետո նկատեց մի շատ փոքր գրպան: Նրանում ինչ – որ բան կար: Գուցե ոսկի՞: Չէ, թուղթ է: Հանեց: Մի քանի անգամ ծալած, փայլուն թուղթ էր: Տակից երևում էր կնիքը: Թանաքը ներծծվել էր: Հիասթափված նորից տեղը դրեց, մռայլվեց ու ամբողջ թափով դրամապանակը նետեց կողքի միահարկ տան տանիքը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Քայլեց: Մանր անձրև սկսեց տեղալ: Կաթիլները թրջեցին նրա մազերը: Դուրը եկավ: Գլուխը բարձրացրեց վեր, թողնելով, որ զովանա ճակատը: Ջեռքը գրպանում էր: Մատները շոշափում էին թղթադրամները: Քսաներեք ռուլբի: Շատ չէ, բայց ոչինչ: Հետո կանգնեց՝ մեխված հանկարծակի մի մտքից: Իսկ ի՞նչ, եթե այդ թուղթը բանկի չեկ էր կամ դրամ ցույց տվող մի այլ բան: Թափ տվեց ձեռքը ու առաջ անցավ: Բայց քայլերն այլևս վստահ չէին: «Չէ՛, թղթի մի կտոր էր», — հանգստացրեց նա իրեն ու շարունակեց ճանապարհը՝ հաստատ իմանալով, որ վերադառնալու է: Հետո միանգամից շրջվեց ետ ու վազեց:

Առաջվա նման փողոցում ոչ ոք չկար: Հասավ այնտեղ, ուր կանգնել էր՝ դրամապանակը ձեռքին: Նայեց վեր: Պատը բարձր է: Բայց ահա հեռագրասյունը. նրա վրայով կարելի է բարձրանալ:

Անձրևը շարունակում էր գալ մանր կաթիլներով, պատի կավահողը թրջվել էր: Ցեխոտելով պիջակը՝ վեր մագլցեց: Սիրտն անհանգիստ էր. իսկ եթե չգիտի՞, եթե մեկը նկատած լինի, որ ինքը նետեց ու… Բայց ոչ, ահա՝ ընկած է: Նա թեթևացած շունչ քաշեց, վերցրեց թրջված դրամապանակը ու նորից սյունը գրկած ցած իջավ:

Բացեց դրամապանակը ու փոքր գրպանից դուրս քաշեց թուղթը: Չէր թրջվել: Գրված էր ռուսերեն: Տղան կարդաց.

«Հարգելի ընկ. (ազգանունը): Գիտենք, անչափ, անչափ ծանր կլինի Ձեզ համար, բայց թաքցնելն իմաստ չունի: Ձեր որդին (անուն ազգանունը) մեր սիրելի (անունը) ընկավ հերոսաբար, քաջի մահով՝ մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ, 1943 թվականի օգոստոսի 6 – ին: Ընկավ Հայրենիքի համար:

Նրա հիշատակը միշտ վառ, միշտ անմոռաց կմնա մեր սրտերում: Սփոփվեցեք: Ձեզ հետ սգացող, քաղբաժնի պետ (ստորագրությունը)»:

Նա ցնցվեց, այլայլվեց, դողացին ձեռքերը, ու թուղթը՝ զարկված թռչունի նման ընկավ ցած: Նրան թվաց, թե ինքը հոր մահվան գիրը կարդաց: Հայրը ժպտում էր… Ուրիշ տեսակ էր ժպիտը…

Մնաց կանգնած, քար կտրած, սփրթնած դեմքով՝ աչքը չկարողանալով հեռացնել վայր ընկած թղթից: Ուզեց փախչել, չենթարկվեցին ոտքերը: Կռացավ, վերցրեց թուղթը, նորից կարդաց ու… հեկեկաց երեխայի պես, թուլացած ու սրտամորմոք, ինչպես իր մայրն էր հեկեկում այն օրը: Իր աչքերը, որ տարիներ շարունակ արցունք չէին տեսել, հիմա վրեժխնդիր էին լինում ասես: Լալիս էր նա, ու մի տեսակ հաճելի էր լացը: Լալիս էր հոր համար, ժամանակից շուտ ծերացած մոր համար, որ տանջված, կոշտացած ձեռքեր ուներ ու տխուր –տխուր աչքեր, լալիս էր իր համար, որ ուրիշ, ուրիշ տեսակ դասավորվեց կյանքը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հանգստացավ: Թղթին զգուշորեն նախկին ծալվածքը տվեց ու տեղավորեց փոքրիկ գրպանիկում: Հետո վճռական մի շարժումով ձեռքը գրպանը տարավ, հանեց թղթադրամները ու դրանք էլ իրենց տեղը դրեց: Դուրս եկավ: «Փոստով կուղարկեմ իրեն»,— մտածեց նա: «Իսկ եթե չհասնի՞»: «Ինչո՞ւ չպետք է հասնի»,— պատասխանեց ինքն իրեն: «Իսկ եթե հիմա ուրի՞շ տեղ են ապրում»:

«Տար ինքդ, վախկոտ,— հրեց նրան մի ձայն, — տղամարդ չե՞ս: Տար ինքդ հանձնիր»:

Քայլեց փողոցով: Անձրևը կտրվել էր: Վառվել էին փողոցի լույսերը, թաց գետինը փայլում էր: Գնում էր: Գիտեր հասցեն: Գնում էր արագ – արագ: Շտապում էր, վախենում էր դանդաղեցնել քայլերը, հանկարծ կամքը կթուլանա, վճռականությունը կլքի...

Ահա և նրանց փողոցը: Տունը: Չէ, այս մեկը չէ: Ահա: Զանգ էլ ունի՝ կարելի է սեղմել կոճակը: Պատուհանում լույս կա: Չեն քնել: Դե, իհարկե, ո՞վ է այս ժամին քնում: Երևի նստել է հայրը՝ տխուր ու գլխահակ ու սգում է որդու երկրորդ կորուստը: Կամ երևի պատմում է տնեցիներին: Նրանք լալիս են:

«Սեղմիր կոճակը,— հրեց նրան նույն ձայնը,— սեղմիր, ո՞ւմ ես սպասում»:

«Իսկ եթե հանկարծ մարդը միլիցիա կանչի՞, — սարսափեց նա, — ավելի լավ չէ՞ դնել այ այստե՛ղ, դռան մոտ, կտեսնեն կվերցնեն... »:

«Սեղմի՛ր, ասում եմ»:

Զանգը հնչեց ասես տղայի սրտում, ուժեղ, ցավով, երկար:

Հրավիրեցին: Ներս մտավ: Փոքրիկ, անշուք մի սենյակ էր: Պատերին երկու մեծադիր նկարներ կային: Նույն տղաներն էին՝ ժպտուն աչքերով, կարճ, շեղ կտրած մազափնջերով: Երևի այն նկարից էին հանած: «Տեսնես ո՞րն է զոհվածը»,— մտածեց տղան: Անկյունում, անկողնի մեջ պառկած էր մի կին: Գլուխը կապած էր:

«Մայրն է», — մտածեց տղան: Սեղանի մոտ նստած էր ծերունին: Տղան իսկույն ճանաչեց: Ականջն աչքերին էր: Նրա առջև լրագիր կար ընկած:

— Հայրի՛կ…

Ինչ – որ բան սեղմվեց կոկորդում:

— Հայրի՛կ,— շշնջաց նա արցունքակալած աչքերով,— ես ձեր դրամա... ձեր որդու...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ծերունին հանկարծ վեր թռավ տեղից.

— Ի՞նչ, Վարդանի ընկե՞րն ես, ուրախ եմ, ուրախ եմ, նստի՛ր, տղաս: Լսո՞ւմ ես, Մարո, տղան Վարդանի ընկերն է: Ղափանում միասին են աշխատում: Հիմա արձակուրդ ես վերցրել, հա՞, լավ է, լավ: Իսկ Վարդանս ինչպե՞ս է, առո՞ղջ է, — ծերունին գրկել էր տղային ու թափահարում էր նրա ուսը,— հը՞:

— Լավ է, — շփոթված ասաց տղան, — առողջ է, — ավելացրեց նա, տեսնելով, որ մայրը դեպի ինքն է շրջել դեմքը ու նայում է պայծառ, խաղաղ, երջանիկ աչքերով:

— Դե, փա՛ռք աստծո,— իսկույն շարունակեց ծերունին,— թե չէ անհանգստանում էինք: Դե, նստիր: Գուցե թեյ խմենք: Ափսոս, պառավս մի փոքր հիվանդ է:

Չէ՛, շնորհակալություն, — մրմնջաց տղան,— ես շտապում եմ, էլի՛ կգամ:

Անպայմա՛ն կգաս..., — ու էլի ինչ – որ բան էր ասում ծերունին, բայց տղան այլևս չէր լսում...

Իրեն կորցրած, շփոթված ու հուզված պատշգամբ դուրս եկավ: Քրտինքի կաթիլները թափվում էին նրա մազերի տակից, լցվում աչքերը, մղկտացնում: Գլուխը պտտվում էր:

Ծերունին բաց չէր թողել նրա ձեռքը:

— Տո՛ւր,— ասաց նա հանկարծ ընկճված, վշտոտ, ծերունական տկար ձայնով,— սա մե՛ծ որդիս է: Մայրը չգիտե...

Տղան ակամա, առանց ուշքի գալու, կատարեց նրա խնդիրքը:

— Գնա, տղա՛ս...

Տղան ցած իջավ աստիճաններից: Հասավ դռան մոտ, ետ նայեց: Ծերունին ասես միանգամից կոտրված, փոքրացած հենվել էր բազրիքին ու գլուխը ափերի մեջ էր առել: Նրա ուսերը ցնցվում էին:

Տղան փողոց դուրս ելավ: Քայլում էր նա դանդաղ, գլխիկոր, հարբածի նման օրորվելով, կանգնում, ետ էր նայում ու քայլում էր նորից՝ ուժասպառ ու հոգնաբեկ: Քայլում էր նա... Իսկ աչքերի առջև հայրն էր...

Հայրը ժպտում էր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները

Աղջիկը նայեց ժամացույցին: Դեռ տասը րոպե կա: Ինքը դարձյալ շուտ է եկել: Հիմա եթե Գոհարին պատմի, կրկին նախատելու է: «Այդպես հո տղան քեզնից կհիասթափվի, դու չես հասկանում, թե ինչ ես անում: Երբեք ժամանակից շուտ մի՛ արի: Աշխատի՛ր նույնիսկ ժամանակին չգալ, այլ մի քիչ ուշ: Թող անհանգստանա, թող ինքը նայի ժամացույցին, թող կարծի, թե այլևս չես գա: Ա՛յ, այն ժամանակ երբ գաս՝ նա այնպես կուրախանա, ասես նոր է քեզ տեսնում: Ես գիտեմ դրանց»:

Աղջիկը ժպտաց: Դե, ինչո՞ւ ձևացնել, թե չի շտապում, երբ ինքը ամբողջ օրը հենց այս ժամին էր սպասում: Ու ինչքան էլ դանդաղ են սահում սլաքները: Ինչ էլ լավ երեկո է: Եվ ինչո՞ւ, երբ ժամադրված ես, այդքան բարձր է լինում տրամադրությունդ ու բոլորի տրամադրությունը:

«Ինչ ահավոր սխալ կլիներ, եթե չուշանար գնացքը», - ասաց այն ժամանակ տղան:

«Ինչո՞ւ»:

«Որովհետև մենք չէինք հանդիպի»:

Աղջիկը շիկնեց, ինչպես այն ժամանակ:

Ի՛նչ համարձակն է: Այդ և՛ վիրավորեց նրան, և՛ միաժամանակ դուր եկավ:

Տղան բարձրահասակ էր, թիկնեղ, շերտավոր բաճկոնով, որն այնպես սազում էր: Աչքերը պայծառ էին ու հեգնոտ: Ամբողջ կեցվածքը մի տեսակ ինքնավստահություն էր արտահայտում: Եվ աղջիկը անմիջապես զգաց, որ տղան իրեն անչափ դուր է գալիս: Ուղղակի անտանելի է: Առաջին անգամ են հանդիպում, բայց չի կարողանում հեռացնել աչքերը: Հիմա ի՞նչ կմտածի իր մասին:

Լավ էր, որ վերջապես եկավ գնացքը:

Նրանք պատահականորեն դիմավորում էին միևնույն մարդուն: Գնացին իրենց այդ ընդհանուր բարեկամի տուն: Աղջիկը կարող էր չգնալ, բայց ուզում էր և գնաց: Ու այնտեղ էլ տղան ասաց.

- Խնդրում եմ, հանդիպենք մի անգամ: Դուք չե՞ք սիրում զբոսնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սիրում եմ,- շառագունեց աղջիկը՝ ասես խոստովանում էր:

*

* *

Եվ ինչպես միանգամից լցվեց կյանքը:

Այդ արահետով շատերն էին գնացել, դրա համար էլ տրորվել էր կանաչը, դեղնել: Բայց շուրջը, ինչպես միշտ, այնպիսի գույներ էին, այնքան սուր էր ծաղիկների հոտը, որ աղջկա գլուխը պտտվում էր: Նա կանգ առավ ու խոր շունչ քաշեց:

- Ի՞նչ պատահեց,- անհանգստացավ տղան,- գուցե օգնե՞մ ձեզ:- Ու ժպտալով, առանց պատասխանի սպասելու, թևանցուկ արեց աղջկան:

- Ոչինչ, ոչինչ,- աղջիկը խայթվածի նման ետ քաշեց ձեռքը: Հետո զգալով, որ կոպիտ ստացվեց, ավելացրեց մի տեսակ վախով,- պետք չէ, ես ինքս... ծաղիկները... պետք չէ...

- Դե ես քաղաքավարության համար... - ուսերը թոթվեց տղան,- քաղաքավարության կանոնները են այդպես պահանջում:

«Ինչ լավ է, որ այդպիսի կանոններ կան»,- մտքում չարաճճիորեն ծիծաղեց աղջիկը՝ թևի վրա դեռ զգալով տղայի լայն ափի հաճելի հպումը:

- Դե եթե կանոններն են այդպես պահանջում... - նա ծալեց ձեռքը, որը տղան բռնեց զգուշությամբ:

Ու երկուսն էլ ծիծաղեցին սրտանց, երկար, առանց իրար նայելու:

Ինչո՞ւ ծիծաղն այդքան արագ է մտերմացնում մարդկանց:

Հետո կատարվեց մի անչափ հաճելի բան: Պարզվեց, որ երկուսն էլ հիացած են Սարյանով և նույնիսկ վիճելու ոչինչ չունեն Ներսիսյանի մասին: Այսինքն, ճիշտն ասած, աղջիկը չէր էլ խոսում, խոսում էր միայն տղան, և անհնար էր նրան չհավատալ: Դեմքը շառագունել էր, ավելի պայծառացել, աչքերը ոգևորությամբ փայլում էին: Եվ աղջիկը չէր կարողանում հայացքը հեռացնել նրանից: «Որքա՛ն գեղեցիկ է,- իրեն մինչ այդ անծանոթ մի առանձին հպարտությամբ նկատեց աղջիկը,- և ինչպես մի քանի խոսքով կարողանում է բնորոշել մարդկանց»:

- Սարյանի արևը ավելի վառ է, քան իսկական արևը,- ասաց տղան,- նրա նկարների առջև ես շոգում եմ,- ու հանկարծ դարձավ աղջկան.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դու սիրո՞ւմ ես արև,- հարցրեց նա:

Աղջիկն ուզեց ասել «շա՛տ», բայց որովհետև ջահել էր և որովհետև մանկությունն անցկացրել էր սարերում, որտեղ ավելի շատ են անձրևները, դրա համար էլ ասաց.

- Այո՛, բայց ես սիրում եմ նաև անձրևը, որ գալիս է մեղմիկ, կամացուկ: Այդ ժամանակ բոլոր գույները մգանում են:

- Ա՛, Տերյան,- ասաց տղան,- հին է, շատ հին, չի կարդացվում:

- Ինչո՞ւ: Երևի խնջույքներո՞ւմ եք կարդում:

- Դե, չէ... Ուղղակի՝ անշշուկ քայլերո՛վ, գրկիր ինձ, քո՛ւյր, շշունջ, շրշյո՛ւն... Անչափ շատ են զգացմունքները... հին է:

Աղջիկը տխրեց:

- Դե լավ, չկռվենք Տերյանի համար: Նա ինքն էլ չէր ուզի,- տղան ծիծաղեց,- բայց խոստովանիր, որ հին է, տխուր է: Դե ո՞ւմ են պետք այդ զգացմունքները մեր դարում: Հիմա հրթիռները... արբանյականավերը...

- Ո՛չ,- ասաց աղջիկը, նա չէր ուզում վիճել տղայի հետ: Նա այնքան գեղեցիկ էր և այնքան վստահ էր խոսում:- Ո՛չ,- կրկնեց աղջիկը,- ուրեմն դու կարծում ես, թե այդ նավերն ստեղծողները երբեք չե՞ն տխրում, չե՞ն սիրում երբեք: Կարծում ես նրանք լաց չե՞ն լինում, երբ մեռնում է իրենց հարազատը... - աղջիկն ուզում էր շատ բան ասել, բայց չէր կարողանում ու լռեց:

- Դե լավ,- ասաց տղան մի տեսակ շփոթված,- միտք ունե՞ր Տերյանի համար...

Աղջիկը կնճռոտեց դեմքը: Մի՞թե նա չի հասկանում, որ հարցը այստեղ Տերյանը չէ: Բայց որքա՛ն գեղեցիկ է նա: Երբ անցնում էին փողոցով, շատերը պարզապես շրջվում ու նայում էին իրենց: Զարմանալի աղջիկներ կան: Գալիս են դիմացից ու այնպես երկար են նայում տղային: Ուղղակի անտանելի է: Ինչպե՞ս կարելի է: Ինքն, օրինակ, երբեք այդպես չէր նայի, որքան էլ գեղեցիկ լիներ: Հետո՞ ինչ: Դե, իհարկե, նա էլ կկարծի, թե իր նմանը չկա:

«Չկա՛,- մտքում հառաչեց աղջիկը,- չկա՛»:

Տղան աշխատեց փոխել խոսակցության նյութը: Այնքան էլ ճարպկորեն չստացվեց: Բայց աղջիկը ևս չէր ուզում տխրել, դրա համար էլ նրանք խոսեցին ուրիշ շատ բաների մասին, այնպիսի հեռավոր, տարբեր ու հաճելի բաների մասին, որ կարող են խոսել միայն աղջիկն ու տղան,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

երբ անցնում են ծաղկազարդ դաշտի միջով, նեղ ու տրորված մի արահետով, որով շատերն են անցել, երբ քայլում են թևանցուկ և երբ անչափ հաճելի է այդպես քայլելը:

Տղան պատմում էր իր աշխատանքի մասին, և աղջիկը պատկերացնում էր նրան այնպես հպարտ ու բարձրահասակ անցնելիս մեքենաների կողքով, որոնց մոտ բանվորներն են աշխատում: Տղան պատմում էր իր գյուտարարական մի փորձի մասին, և աղջիկը քնքշությամբ մտածում էր, թե որքան դժվար է գիշերները շարունակ գծել ու փորփրել մեքենայի մասերը: Այն էլ մենակ: Չգիտես ինչու, աղջկան թվում էր, որ եթե ինքը տղայի մոտ չէ, ուրեմն նա սարսափելի մենակ է:

- Եվ այդ բոլորը միայնա՞կ,- հարցրեց նա:

- Համարյա թե,- ասաց տղան,- ճիշտ է, մի բանվորի համահեղինակից եմ վերցրել, բայց միայն ձևի համար: Նա գծագրերից ոչինչ չի հասկանում: Դե, հասարակ բանվոր է,- ավելացրեց նա:

Աղջկան դուր չեկավ «հասարակ» բառը: Բայց նա ոչինչ չասաց, որովհետև ուզում էր անընդհատ լսել տղայի ձայնը: Իսկ տղան շարունակում էր խոսել: Որքա՜ն գեղեցիկ է նրա ձայնը: Աղջիկը բռնեց իրեն այն բանում, որ չի լսում տղայի խոսքերը: Եվ անչափ զարմացավ, երբ տղան հանկարծ լռեց, իսկ հետո հարցրեց համարյա շշուկով.

- Ի՞նչ, մի՞թե ես քեզ դուր չեմ գալիս:

Սիրտը բաբախեց ուժգին, տագնապով, հաճելի: Դեմքը ջերմացավ:

- Ինչո՞ւ... Դուք մեքենաների... Ի՞նչ էիք ուզում ասել: Պետք չէ:

- Ուրեմն ինձ չէի՞ք լսում,- տղան ակնհայտորեն հիասթափված էր: Նույնիսկ բաց թողեց աղջկա ձեռքը,- թե՞ ձևանում եք: Բայց, միևնույն է, դուք ինձ դուր եք գալիս, հասկանո՞ւմ եք, դուք լավն եք ինձ հանդիպած բոլոր աղջիկներից: Հասկանո՞ւմ եք: Բոլորից գեղեցիկը:

- Իսկ ձեզ շատե՞րն են հանդիպել,- կամացուկ հարցրեց աղջիկը:

- Շատե՛րը,- չկարողանալով նահանջել՝ համարյա գոռաց տղան,- շատերը: Բայց ոչ ոք ինձ այնպես դուր չի եկել, ինչպես դուք: Ոչ ոքի մոտ գնալիս ես չեմ շտապել, չեմ հուզվել, հասկանո՞ւմ եք,- նա խլեց աղջկա ձեռքերը,- դուք ինձ անչափ դուր եք գալիս: Ես ձեզ կարող եմ ասել, որ սիրում եմ, բայց պարզապես այդ բառը չեմ սիրում, հասկանո՞ւմ եք:

Աղջիկը չգիտեր ինչ անել, նա կանգնած էր գլխահակ, ցնցված, շփոթված ու երջանիկ, չգիտեր որտեղ թաքցնել ձեռքերը: Հետո նկատեց, որ ձեռքերը տղայի ձեռքերում են ու փորձեց ետ քաշել: Միայն թե չնայի վեր, չնայի տղային, որովհետև այլևս անհնար է այսպես... Ու առաջին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անգամ աղջիկը կյանքում զգաց, որ միաժամանակ թե ուզում է փախչել, թե մնալ, թե ուզում է անընդհատ, անվերջ լսել տղայի խոսքերը՝ սիրո առաջին խոսքերը կյանքում, թե փակել ականջները, ոչինչ, ոչինչ չլսել... ոչի՛նչ: Ու ոչ ոք թող ոչինչ չլսի, թող ոչ ոք չտեսնի ոչինչ, որով-հետև ինքը միաժամանակ ուզում է ծիծաղել և լաց լինել երջանկությունից...

*

* *

- Օ՛, ինչ ծանր է, ինչո՞ւ ես ուշանում, սիրելի՛ս:- Մի խումբ էր, ծիծաղելով անցավ փողոցով՝ նայելով աղջկան:

Աղջիկը սթափվեց, բայց չբարկացավ, այլ ծիծաղեց ինքն էլ: Չէ՛, անհոգ եղեք, չի ուշանում: Աղջիկը նայեց ժամացույցին: Հիմա կգա: Ու հանկարծ պարզապես սրտի տրոփյունից զգաց, որ տղան գալիս է: Ավելի շուտ զգաց, քան տեսավ, որ գալիս է արագ-արագ, աշխատելով անցնել մարդկանց, աշխատելով նրանց գլուխների վրայից տեսնել, թե արդեն եկե՞լ է աղջիկը: Ահա տեսավ, ձեռքով է անում հեռվից, զգուշությամբ: Գալիս է:

Ինչո՞ւ այդքան երկար է թվում ճանապարհը:

- Վաղո՞ւց ես եկել,- արագ քայլելուց դեռ հևալով հարցրեց տղան:

- Ո՛չ,- աղջիկը ստեց ոչ թե իր, այլ տղայի համար:

- Իսկ ես այնպես վախենում էի, որ դու չես գա,- տղան թևանցուկ արեց նրան:

- Նույնիսկ վախենո՞ւմ,- աղջիկը հիշեց«ինձ հանդիպած բոլոր աղջիկներից» խոսքը ու վրեժ լուծեց:

- Այո՛,- ասաց տղան,- այն օրը... - հետո անմիջապես շտապով ավելացրեց,- դե լավ, թողնենք: Ո՞ւր գնանք այսօր:

- Ինձ համար միևնույն է:

- Իսկ ես ուզում եմ, որ միևնույն չլինի: Ես ուզում եմ, որ ամեն ինչ շատ-շատ հաճելի լինի քեզ համար: Ես ուզում եմ, որ դո՛ւ ուզես:

- Իսկ դու բոլո՞ր աղջիկներին էիր այդպես ասում,- աղջիկն զգում էր, որ զզվելի են իր խոսքերը, որ պետք չէ այդպես, բայց չէր կարողանում: Ուղղակի անհնար էր չասելը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչ հիշաչարն ես,- ծիծաղեց տղան,- ոչ ոքի չեմ ասել, ազնիվ խոսք, ոչ ոքի, միայն քեզ: Դե գնա՞նք,- նա ձգեց աղջկա ձեռքը:

- Ո՞ւր:

- Ա՛խ, իսկապես,- տղան մտածեց,- գիտե՞ս ինչ, եկ գնանք ընկերոջս տուն: Վաղուց չեմ տեսել, կուրախանա: Այնտեղ միշտ հավաքվում են մերոնք:

- Չե՛մ,- աղջիկը ետ քաշվեց,- անհարմար է:

- Դե այստեղ անհարմար ոչինչ չկա, մի կուրսում ենք սովորել, հիանալի տղա է:

Թեև աղջկան դուր եկավ, որ տղան ընկերոջը «հիանալի» անվանեց, բայց և այնպես առարկեց կրկին.

- Իսկ եթե հարցնեն, թե ո՞վ եմ ես:

- Չեն հարցնի,- ասաց տղան,- հիմա չեն հարցնում,- ավելացրեց նա:- Դե հետո, վերջապես, դու իմ ... իմ ընկերուհին ես:

Նրանք քայլեցին իրիկնային փողոցներով, որոնք բոլորովին ուրիշ են ցերեկը: Թեքվեցին մի փոքրիկ փակուղի, որտեղ ծառերի վրայից հոսում էին սառը, մածուցիկ անտեսանելի կաթիլ-ներ ու կանգ առան մի դարպասի մոտ, որի վերևում գրված էր. «Բակում կծան շուն կա»:

Աղջիկը ինքնաբերաբար, երկյուղով հպվեց տղային:

- Ա՛,- տղան ծիծաղեց սրտանց,- երանի ամենուրեք կծան շներ լինեին:

Ինչ լավ էր, որ մութ էր, և նա չտեսավ, թե ինչպես վառվեցին աղջկա այտերը:

Դարպասը բացվեց:

- Այս ո՞ւմ եմ տեսնում, այս ի՞նչ լավ հյուրեր են,- կարճահասակ, թիկնեղ, նոսրացած մազերով երիտասարդը գրկեց ընկերոջը,- նե՛րս եկեք, նե՛րս եկեք, խնդրում եմ:

Բակում ծիծաղ հնչեց:

- Հյուրեր ունե՞ս, Հակո՛բ,- տղան անվճռականությամբ կանգ առավ, նայեց աղջկան:

- Դե ի՞նչ հյուրեր, մեր ակումբի անդամներն են,- ծիծաղեց Հակոբը,- հենց լավ ժամանակին եք եկել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այգում, ծառից կախված մեծ լապտերը լուսավորում էր սեղանը, որի շուրջը մի քանի տղաներ ու աղջիկներ կային: Աղջիկը զգաց, որ հավաքվածների տրամադրությունը բարձր է: Նրան անչափ դուր եկավ, որ նստածները բարձրացան տեղերից, առաջարկեցին իրենց աթոռները:

Որքան հաճելի է խնջույքը իրիկնային այգում, երբ կողքիդ է քո մտերիմը, քո սիրելին: Իսկ ձեզնից այն կողմ ամենուրեք մութ է, խորհրդավոր, անշարժ մութ: Աղջիկը զգաց, որ գլուխը հաճելիորեն պտտվում է ու երբ երգեցին բոլորը՝ ինչ-որ հին, տխուր մի երգ, ինքն էլ երգեց կամացուկ, գոհ, որ երգում են բոլորը, և որ ինքն էլ, այ այսպես, բոլորի հետ կարող է երգել:

Եվ եթե դժգոհ էր, միայն նրա համար, որ տղայի խոսելու ժամանակ ամաչում էր նրան նայել: Ինչո՞ւ, երբ ինքն այնքան ուզում է: Բայց ինչո՞ւ բոլորը կարող են նայել նրան, նույնիսկ հիացած՝ ինչպես այն աղջիկը, իսկ ինքը չի կարող: Նրան, ճիշտ է, անչափ շոյում էր, որ բոլորի ուշադրությանը արժանացածը հենց իր տղան է, մտերիմը, որի հետ, եթե ուզենա,կարող է բարձրանալ ու հենց այնպես ինչպես եկել են, դուրս գալ, երկուսով միասին, առանց բոլորի, բայց և միաժամանակ խանդում էր...

Դե ինչպես բռնանաս սեփական սրտիդ:

Ահա, ընկերներից մեկը թեքվեց դեպի տղան: Աղջիկը շիկնեց, մտածելով, որ իր մասին է հարցնելու: Մարդը աշխատում էր կամաց խոսել, դրա համար էլր աղջիկը լսեց.

-Էլի՞ այնպես... թեթև... ժամանակա...

- Սուս, ի՞նչ ես ասում... սա բոլորովին ուրիշ է:

Ես էլ այդ եմ ասում,- թույլ-թույլ ծիծաղեց տղան,- բայց, ազնիվ խոսք, Սոնան էլ լավն էր:

Աղջկան թվաց, թե լապտերն օրորվում է, և ամեն ինչ օրորվում է իր շուրջը, ամեն ինչ՝ շշերը, սեղանը, մարդիկ, մութը: Նա զգաց, որ նույնիսկ մի վայրկյան ավելի չի կարող մնալ ու հանկարծ բարձրացավ տեղից:

Միանգամից լռություն տիրեց այգում:

Հետո ինչ-որ մեկը, կարծես Հակոբն էր, բացականչեց.

- Մի նվա՛գ, մի նվա՛գ, հիմա պարենք:

Ինչ-որ մեկը շտապեց նվագարկիչի մոտ: Հաջորդ վայրկյանին աղջիկը հանգիստ ասաց տղային.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես ուզում եմ գնալ:

- Գնանք, իհարկե,- տղան արագությամբ վեր կացավ,- ես ինքս էի ուզում ասել,- նրա դեմքը աղջկան գունատ թվաց:- Գնա՛նք:

Նվագը մի քանի վայրկյան տևեց: Երբ տղան ու աղջիկը դարպասի մոտ էին, ընդհատվեց մի-անգամից, ու լսվեցին խեղդված մի քանի ձայներ.

- Հիմար, ի՞նչ արեցիր... Դե, լավ, է՛...

Ինչ-որ մեկը արդարանում էր:

Աղջկան թվում էր, թե չի կարող քայլել, բայց քայլում էր սովորականից արագ: Եվ հանկարծ զգաց, որ հանգստացել է: Ոչ մի չարություն չկար տղայի նկատմամբ, բայց սրտում ինչ-որ տեղ դատարկվել էր: Իսկ իրեն թվում էր, թե կխելագարվի:

Տղան փորձեց թևանցուկ անել նրան: Աղջիկը ետ չքաշեց ձեռքը: Տղան ինքը բաց թողեց մի քա-նի քայլ հետո: Անհնար էր այդպես քայլելը:

- Հարբա՛ծ էր,- հանկարծ բղավեց տղան:

- Ո՞վ,- աղջիկը կանգ առավ: Նա այդ պահին այն աղջկա՝ Սոնայի մասին էր մտածում:

- Ո՞վ, այն ապուշը... այն,- տղան կակազեց,- դու էլ կկարծես, թե ինչ-որ լուրջ բան է եղել:

- Չեմ կարծում,- ասաց աղջիկը:

- Դե իհարկե,- չհասկացավ տղան,- ես մեղավո՞ր եմ, որ սիրում էր ինձ, որ... ընկնում էր ետևիցս:

- Պետք չէ,- հևաց աղջիկը:

- Ի՞նչը:

- Մի՛ պատմիր:

- Ո՛չ, ես ուզում եմ, որ դու իմանաս: Ինքս էի պատմելու քեզ: Ես նրա հետ մտերմություն էի անում, որովհետև խղճում էի... Հարցրո՛ւ իրեն,- տղան այլևս չէր մտածում, թե ինչ է խոսում,- հետո զգացի, որ այլևս չեմ կարող... այնքան սահմանափակ էր... Հետո նա ինձ առաջ ավելի գեղեցիկ էր թվում... Հարբա՛ծ էր հիմարը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նրանք անցնում էին մի փոքրիկ ծաղկանոցի մոտով: Վառ լույսերի տակ ասես սքանչելի գորգ լիներ ծաղկանոցը:

- Ինչ լավ ծաղիկներ են,- ասաց աղջիկը:

Տղան կանգ առավ զարմացած՝ ականջներին չհավատալով: Ինչ... ուրեմն չի՞ բարկանում, ուրեմն մոռացե՞լ է, ուրեմն ներո՞ւմ է: Ինչ հրաշալի, ինչ սքանչելի մարդ է այս աղջիկը:

- Ծաղի՞կ... Հիմա ես քեզ կբերեմ ամենալավը, այն վարդը,- տղան թռավ փոքրիկ ցանկապատի վրայով ու վազեց ծաղիկների միջով:

- Սպասի՛ր,- աղջիկը տեսավ, որ տղայի ճանապարհին տրորվել են ծաղիկները, խառնվել հողին,- ի՞նչ ես անում:- Նրա աչքերը արցունքով լցվեցին:

Տղան թեթև ոստյունով կրկին թռավ ցանկապատից ու կանգնեց աղջկա դիմաց, վազքից հևալով, ձեռքին բռնած մի վառ, մի հրաշալի վարդ:

- Վերցրո՛ւ,- ասաց տղան: Հետո հանկարծ նկատեց, որ աղջիկը լալիս է ու շփոթվեց սաստիկ: Չիմանալով, թե ինչ է անում, այլևս ոչնչի մասին չմտածելով տղան գրկեց աղջկան:- Դե պետք չէ,- ասաց նա շտապով, քնքշությամբ:- Պետք չէ հասկանո՞ւմ ես, սիրելի՛ս, լա՞վ, պետք չէ, ինչո՞ւ, ախր ես քեզ սիրում եմ, հասկանո՞ւմ ես...

Աղջիկն արդեն հեկեկում էր, հեկեկում էր՝ այլևս չկարողանալով պահել իրեն, հեկեկում էր՝ ձեռքերով դեմքը ծածկած: Հետո անսպասելիորեն բարձրացրեց գլուխը:

- Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները,- պոռթկաց նա ցավով, տրտմությամբ ու նախատինքով նայելով տղային,- ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները... ինչո՞ւ...

Տղան անշարժացել էր:

Իսկ աղջիկը լալիս էր, իր առաջին սիրո, Տերյանի, հասարակ բանվորի, այն աղջկա համար, որ լավն էր, նրա համար, որ այդքան ցավոտ է սերը: Նա լալիս էր, որովհետև տղան չէր հասկանում: Նա ուզում էր ասել այդ բոլորը, նա ուզում էր, որ տղան հասկանա, որ ցավ զգա...

Բայց նա մի աղջիկ էր, որ ծնվել էր պարզ ու հպարտ սարերում, անտառների մոտ, որտեղ հաճախ են անձրևները, և որտեղ մարդիկ չեն սիրում խոսել, դրա համար էլ միայն լալիս էր, նայելով տղայի ցեխոտ կոշիկներին ու հեկեկում էր ուժգին:

- Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տղան ապշած էր: Բայց և այնպես հասկացավ, որ աղջիկը ծաղիկների համար չէր լալիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լախտի

— Խփի՛ր:

— Գծից դուրս էր:

— Նայիր, տարավ գոտին:

— Ոտքս կպավ:

— Չկպավ:

— Ո՞նց չկպավ, ահա հետքը:

— Ի՞նչ հետք, սա հին է:

— Դե ասա հորս արև...

Լախտի են խաղում մեր բակի տղաները: Մոռացել են ամեն ինչ, փոշոտ, խառնված մազերով, կաս – կարմիր դեմքերով, հևիհև հետապնդում են իրար, դարանում, խաբուսիկ շարժումներ անում, հրճվանքով աղաղակում են, երբ մի գոտի են թռցնում հակառակորդից ու խփում են դրանով, խփում են անողոք, անզիջում ու վազում, իրար հրում, պտտվում են վաղուց ջնջված, ծուռումուռ կավճե գծի շուրջը:

Կրակի կտոր է Հրանտը, ճարպիկ ու խենթ, հարձակվում է ուղիղ, սպառնալից դեմքով, ձեռքերը պարզած, հարձակվում է առանց խորամանկության, վստահ իր ուժին, հաճախ է հաղթում, բայց հաճախ էլ պարտվում է: Ուրիշ է Սուրիկը: Նա արտաքնապես կարծես թե ծույլ է, շարժումները դանդաղ են ու ծանր, կանգնում է աննկատ ինչ – որ տեղ ու մեկ էլ տեսնում ես առանց որևէ ջանքի մի գոտի է ձեռք գցել: Նա ավելի հաճախ սպասում է այնքան, մինչև որևէ մեկը սխալվի և իրեն հանգիստ ու ապահով զգա: Անպայման պետք է սխալվի մեկը, որպեսզի Սուրիկը հաղթի: Իսկ Վաչի՛կը… Վաչիկը ո՛չ Հրանտի խենթությունն ունի, ո՛չ էլ Սուրիկի խորամանկությունը և նախանձում է երկուսին էլ: Համառ է: Բայց անօգուտ համառ: Գոտին դնում է ոտքերի արանքում ու սպասում: Երբեք ինքը չի հարձակվում, բայց չի էլ թողնում, որ հարձակվողները խլեն իր գոտին: Եվ նրա վրա բոլորից շատ են հարձակվում: Հարձակվում են ոչ թե գոտին խլելու, այլ պարզապես Վաչիկին ծեծելու համար, որովհետև չեն սիրում նրան: Խաղի օրենքով նրանք իրենց գոտիներով պետք է Վաչիկի պաշտպանած գոտուն հարվածեն և դուրս հանեն գծից, որպեսզի տեր դառնան գոտուն: Բայց ոչ ոք գոտուն չի խփում, որովհետև

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նրա գոտին թույլ է ու անպետք: Հատկապես Վազգենը: Նա խփում է ուղիղ Վաչիկի ոտքերին, ծնկից քիչ բարձր, որը սոսկալի ցավ է պատճառում: Վաչիկի աչքերը արցունքոտվում են, շրթունքները սկսում են դողալ, բայց գոտուց ետ չի քաշվում, և հարվածներն իջնում, հա՛ իջնում են նրա ոտքերին:

Եվ ի՞նչ. խաղը վերջանալուց հետո ամենահպարտ քայլողներից մեկը հենց ինքը՝ Վաչիկն է: Շրջում ու բոլորին ցույց է տալիս իր կապտուկները և մանրամասն, հաճույքով բացատրում, թե որ կապույտը ով է հասցրել: Նա շատ է սիրում խոսել և, ամենայն հավանականությամբ, դիտմամբ է լախտի խաղում, որպեսզի ծեծվի և խոսելու առիթ ունենա: Սերգեյը մտքում ծիծաղում է Վաչիկի վրա: Բա մարդ էլ մի գոտու համար ծե՞ծ ուտի: Նա գոտու մոտ կանգնում է հպարտ, ցնցում է մազափունջը ու սպառնալից գոչում.

— Դե թող մեկը մոտենա ի՛նձ: Դե, եկեք, է՛, փորձեք խլել գոտիս: Եկեք, խփելու նոր ձև եմ գտել, — հայտարարում է նա:

Եթե հարձակվողը գոտի չունի և կռացած, ձեռքերով է ուզում փախցնել Սերգեյի գոտին, ապա Սերգեյը համարձակ նետվում է նրա վրա, ավելի շուտ՝ հակառակորդի ձեռքը տրորելու նպատակով: Եվ երբեմն էլ տրորում է: Իսկ երբ հակառակորդը գոտի ունի իր ձեռքին և Սևակի նման այդ գոտին սպառնագին շաչյունով պտտեցնում է օդում, Սերգեյն անմիջապես թողնում է իր գոտին, փախչում ու կանգնում շրջագծի կենտրոնում, որպեսզի հարվածները չդիպչեն իրեն:

— Բա մարդ էլ գոտու համար ծեծ ուտի, քմծիծաղ է տալիս նա՝ խուսափելով ավելի համարձակ դարձած Սևակի հարվածներից:

Սևակի հետ, խաղալը դժվար է: Ճիշտ է, նրա հարվածներն առանձնապես ուժեղ չեն, բայց միշտ էլ անսպասելի են, արագ են հաջորդում իրար և տպավորություն են թողնում շենքի պատշգամբներից ցած նայող աղջիկների վրա: Նա և՛ դյուրաշարժ է, և՛ խորամանկ, պտտվում է հոլի նման ու ճարպկորեն խուսափում հակառակորդներից: Խաղի ժամանակ սովորաբար նրան հաղթել չի հաջողվում, դրա համար էլ նրա հակառակորդնորը իրենց վրեժն այլ կերպ են լուծում: Բակի մեծ տղաներին ասում են, թե Սևակն ամեն տեղ ծաղրում է նրանց, և նրանք էլ հավատալով, ամեն օր ճաշից հետո նրան վերև՝ ձեղնահարկ են կանչում ու ծեծում առանց գոտիների:

Բայց, հաջորդ օրը, ասես ոչինչ էլ չի եղել, մոռացած ամեն ինչ, փոշոտ, խռիվ մազերով, շիկնած, քրտնաթոր դեմքերով, հևիհև հետապնդում են իրար, դարանում խաբուսիկ շարժումներ են անում, աշխատում են գոտի փախցնել իրարից և պտտվում են, պտտվում են վաղուց ջնջված, ծուռումուռ կավճե գծի շուրջը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լախտի են խաղում մեր բակի տղաները:

Որ թողնես՝ ամբողջ օրը կխաղան, կխաղան առանց ծուլանալու, առանց հոգնության: Շատ են սիրում լախտի խաղալ մեր բակի տղաները: Ու թեև անգիր գիտեն իրենց և բոլորի ուժեղ ու թույլ կողմերը, բայց միշտ էլ խաղում են իրար հետ և չեն ուզում, որ որևէ մեկը բացակայի խաղից: Սովորել են միմյանց ու փորձով գիտեն, որ երբ մեկը բացակայում է, լավ խաղ չի ստացվում, փչանում է լախտին: Ու խաղում են միասին, անընդհատ, խաղում էն մոլեգնաբար, ասես վախենում են, որ չբավականացնի ժամանակը:

— Խփի՛ր:

— Գծից դուրս էր:

— Ոտքս կպավ:

— Չկպավ:

Շտապում են, որովհետև գիտեն՝ միևնույն է, շուտով խանգարվելու է խաղը: Ամեն ինչ էլ վերջ ունի, Լախտին առավել ևս: Եվ բոլորից շատ տագնապով ու տագնապախառն անձկությամբ այդ վերջին սպասում է Հրանտը՝ ճարպիկ ու խենթ Հրանտը, որ հարձակվում է ուղիղ, ձեռքերն առաջ պարզած, հաճախ է հաղթում, բայց հաճախ էլ պարտվում է: Ինչ – որ մի պահ նա արդեն մոռանում է խաղը ու սարսափով սպասում առաջին կանչին: Եվ այդ կանչը երբեք չի ուշանում:

— Սուրի՛կ, — չորրորդ հարկի պատշգամբից հնչում է Սուրիկի մոր ձայնը, — տուն արի, հայրիկդ եկել է:

Հրանտը նայում է Սուրիկին, բայց նա արդեն իրենց մուտքի մոտ բլուզն է ուղղում ու կապում գոտին:

Ահա, վե՛րջ, գործարաններում ու հիմնարկներում ավարտվել է աշխատանքը: Հայրիկները տուն են վերադառնում:

— Վաչի՛կ, — երկրորդ հարկից զիլ ձայնով ճչում է Վաչիկի քույրը, — հայրիկն ասում է, թող շուտ տուն գա: Ծիրան է բերել:

— Դե, ես գնացի, — ասում է Վաչիկը ու շալվարի փողքերը բարձրացրած, կապտուկներին նայելով, դանդաղ ու հպարտ տուն է գնում:

— Ես էլ գնացի, տղե՛րք,— մեղավոր ժպիտով հայտարարում է Վազգենը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դո՞ւ ինչու ես գնում,— կամացուկ, աղերսանքով հարցնում է Հրանտը,— հո քեզ չկանչեցի՞ն: Մնա, ես ու դու հավալա կխաղանք:

— Չէ՛, — ասում է Վազգենը,— գնամ՝ քանի հերս չի եկել: Կծեծի: — Գլուխն օրորում է նա:

— Սերգե՛յ, Սերգե՛յ, — տատը ձեռքը ճակատին է դրել, որպեսզի գտնի Սերգեյին, — Սերյոժա, հայրիկդ եկել է, արի ճաշենք:

Սերգեյը գոտին գետնին մոռացած վազում է տուն, բայց ճամփին կանգ է առնում, ետ է դառնում, վերցնում է գոտին ու ավելի արագ վազքով մտնում իրենց մուտքը:

Հիմա Հրանտն ու Սևակն են մնացել կավճե գծի մեջ կանգնած: Չեն խաղում: Երկու հոգով ի՞նչ լախտի: Գոտիները ձեռքներին կանգնել են ու չեն նայում իրար: Երկուսն էլ սպասում են:

— Սևա՛կ:

Սևակը չի պատասխանում, այնպես է ձևացնում՝ իբր չի լսում: Կամացուկ, տխուր շվոցով պտտեցնում է գոտին ու աշխատում է Հրանտին չնայել:

— Սևա՛կ,— կրկին կանչում է մայրը:

— Դե, ի՞նչ է, է՛:

— Տուն արի, պապան եկել է:

— Ի՞նչ անեմ, որ եկել է, ես սոված չեմ,— հանդգնորեն շենքն ի վեր նետում է նա:

— Դե, լա՛վ, — սպառնում է մայրը, — հիմա պապային կասեմ, կտեսնես:

— Ասում ես՝ ասա՛, — բղավում է Սևակը և աննկատ ընկերոջը՝ Հրանտին է նայում:

— Գնա՛, գնա՛, — մռայլ շշնջում է Հրանտը, — գնա՛:

Սևակը չի շարժվում տեղից:

— Դե մի շուտ վերև թռի, — բակով մեկ թնդում է մի թավ ձայն:

Նա որևէ անուն չի տալիս, բայց Սևակն էլ, Հրանտն էլ լավ գիտեն, թե ում է ուղղված խոսքը:

— Շուտ արա, թե չէ կիջնեմ ու ականջներդ կպոկեմ, — ավելի ահեղ է որոտում ձայնը:

— Գնա՛, գնա՛,— մռայլ ու հուսահատ շշնջում է Հրանտը, — գնա՛:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու Սևակը քայլում է դանդաղ ու անկամ, առանց շուրջը նայելու, առանց նայելու Հրանտին:

Խաղաղվում է մեծ բակը, լռություն է իջնում շրջապատին: Ճաշի ժամն է, նույնիսկ քամի չկա, որ խոսի ծառերի տերևների հետ: Այնպիսի անդորր է տիրում, որ լսվում է, թե ինչպես են բաց դռների հետևում չխկչխկում դանակներն ու պատառաքաղները, տեղափոխվում ափսեները:

Լայն բակի մեջտեղում, վաղուց ջնջված, ծուռումուռ կավճե գծի մեջ, գոտին ձեռքին, գլխահակ կանգնած է Հրանտը: Ու սպասում է: Գիտի, վաղուց գիտի, որ իրեն երբեք չեն կանչելու, որ մայրը երբեք չի կանչելու, ինչպես ուրիշ մայրերը:

— Հրա՛նտ, հայրիկդ եկել է, արի՛...

Արի՛... Թող իր համար ծիրան չբերի, թող ոչինչ չբերի իր համար, թող սպառնա, թող ծեծի, թող պոկի ականջները, միայն թե գա, միայն թե հանկարծ մայրը կանչի մի օր.

— Հրա՛նտ, հայրիկդ եկել է, արի՛...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վերջին նկարը

Նկարիչը կուրանում էր…

Նա այդ վաղուց էր զգացել, բայց չէր հավատում:

Չէր ուզում հավատալ, որ ամեն ինչ անդառնալիորեն վերջանալու է, որ ինքն այլևս չի կարողանալու տեսնել աշխարհին այնպես, ինչպես տեսել ու պատկերել էր իր կտավներում՝ թավիշ կանաչը գետափի ու ծաղիկները երփներանգ, երկնքի կապույտն անորսալի ու ծառերի դեղինը, այն ծերունու աչքերը, որն աշխատում էր այգում ու որի որդին հեռվում ինչ – որ տեղ սպանվել էր… Չէր ուզում հավատալ, որ այլևս չի կարողանալու տեսնել բամբակ հավաքող այն կնոջ ձեռքերը, որ պատգամավոր էր եղել, հետո այն ջահել որմնադիր աղջկան, որ հենց նոր իջել էր վիթխարի շենքի բարձունքից ու հիմա վեր է նայում անսահմանորեն հպարտ, հետո այն քանդակագործին, որը վշտահար ու հուսահատ կանգնած էր իր ավարտած ու անզգուշորեն տապալած գլուխգործոցի բեկորների առջև…

Չէր ուզում հավատալ: Եվ ինչպես հավիտենապես անկողնին գամված անդամալույծը, որն ամեն գիշեր մտածում է, թե գուցե առավոտ վաղ կարողանա վեր ցատկել տեղից ու վազել բակում՝ ջահել ու առողջ, այնպես էլ նկարիչը ամեն գիշեր փակում էր աչքերը, սրտի խորքում հուսալով, որ բնությունն այդքան դաժան չի լինի, որ իրենից չի խլի այն թանկագինը, որով ապրում է նկարիչը: Աչքերը…

Նա պառկել էր անկողնում ու չէր բացում կոպերը: Վախենում էր ամեն օրվա նման հուսախաբ լինի, որ նորից զգա, թե ինչպես է իրենից անվերադարձ հեռացել լույսի աննշմարելի մի շող ևս:

Եվ ավելի շուտ զգաց, քան տեսավ, որ առավոտ է, թոռնիկը աղմուկով այս ու այն կողմ էր վազում կողքի սենյակում: Սպասեց, որ արևի ծանոթ ճառագայթը գա ու ջերմացնելով անցնի դեմքի վրայով, հետո ցավեցնելու չափ ուժեղ բացեց աչքերը:

Նայեց մի պահ ու նորից փակեց: Նույնն է՝ մութը մոտենում է դանդաղ, դաժան քայլերով, և ոչինչ անել հնարավոր չէ: Նա սովորականի պես, հենց այնպես, մեքենաբար, դեղ կաթեցրեց աչքերին, հագնվեց ու սկսեց շրջել ընդարձակ արվեստանոցում:

Պատերին, անկյուններում, հենատախտակներին, մեծ սեղանի վրա նրա ողջ կյանքի մի մասն էր: Մյուս մասը պատկերասրահում էր կամ ճամփորդում էր ինչ – որ տեղ, հեռուներում՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դիմանկարները, բնանկարները, գրաֆիկ աշխատանքները, այն ամենը, ինչ կարող է ստեղծել նկարիչը չորս տասնամյակի ընթացքում:

Եվ հանկարծ նա անասելի ցանկություն զգաց նորից մեկ – մեկ դիտել այդ բոլորը: Բոլորը, ինչ որ կար, անգամ էսքիզները...

Ողջ կյանքը...

Ամեն ինչ կա այստեղ. և՛ զրկանք, և՛ հույս, երբ սովորում էր ինստիտուտում ու միաժամանակ ամեն գիշեր երկաթուղային կայարան գնում՝ ճամպրուկներ տեղափոխելու: Ե՛վ առաջին բնորդուհու անհոգ, գեր ուսերը, և՛ մոր դեմքը, որ նկարել էր հեռվում՝ անհուն կարոտի պահին: Մոր դեմքը՝ զարմանալի նման ու զարմանալի տարբեր:

Ողջ կյանքը...

Իսկ այնտեղ ծաղիկներ են: Շատ, շա՛տ ծաղիկներ: Հազարագույն: Մեխակնե՞րը, դե, իհարկե, իր հետ տարավ՝ նվիրելու այն աղջկան: Բայց աղջիկը չեկավ ոչ այդ և ոչ էլ մյուս օրերին: Ինքը աղջկան էր ուզում նկարել, բայց նկարեց մեխակները: Դրանք փոքր – ինչ թառամած էին: Հետո մեծ քաղաքի մշուշը, աղոտ լապտերներ, հեռվում մի անցորդ միայնակ քայլում է գետափնյա ամայի փողոցով: Ինքն է: Ահա և մի ուրիշը՝ երկընտրանքի մեջ, ո՞ւր գնա՝ իր տո՞ւնը, որ թույլ լուսավորված է հեռվում, թ՞ե այս կողքի պանդոկը...

Ողջ կյանքը...

Դեմքը աղավաղված է ցավից ու զայրույթից, ձեռքին հրացան ունի: Նրա կողքին, նրա շուրջը մարդիկ են ու հրացաններ, անթիվ, անհամար հրացաններ: Մարդիկ ընկել են, բայց բարձրանում են նորից: Գնում են դեպի մեծ շենքը՝ թաղված խավարի մեջ:

Նկարիչը ժպտաց: Նա եկավ գիշերը: Միասին էին սովորել: Խնդրեց հասցնել մինչև առավոտ: «Շատ – շատ շտապ է,— ասաց, — հեղափոխության անունից եմ խնդրում»: Իսկ ձեռքի վիրակապի տակից արյուն էր հոսում: Հետո ասաց, որ դժվար է, որ անթիվ են թշնամիները: Իսկ դեմքը աղավաղված էր ցավից ու զայրույթից, ու ձեռքին հրացան ուներ: Եվ ինքը նկարեց այդ դեմքը և էլի անթիվ նման դեմքեր... Հետո տեսավ, որ պլակատ է դարձել իր նկարը և բոլոր պատերի վրա է:

Ողջ կյանքը...

Ճրագը հազիվ է լուսավորում սենյակը: Մեկը գրատախտակին ինչ – որ պարզ թվեր է գրում: Աթոռներին բանվորներ են նստած, հոգնած, մրոտ դեմքերով: Մեկը անկյունում քնած է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ ապա դեմքե՛ր, դեմքե՛ր, դեմքե՛ր, աշխատանք, մարդիկ, պատկերներ, բնություն: Օ՛, որքան գեղեցիկ ես դու, կյա՛նք, ու թեև ստվերներդ շատ են, բայց դրանք ավելի են ընդգծում լույսդ: Օ՛, որքան լավ է ապրելը, շնչելը, զգալը, տեսնելը...

«Տեսնե՛լը, — մտածեց նկարիչը,— իսկ ես ահա որոշ ժամանակ անց ոչինչ չեմ տեսնելու: Ոչի՛նչ: Ոչի՞նչ,— կրկնեց նա,— ո՛չ, անհնար է, խաբում ես դու,— ասաց նա ինչ – որ մեկին սպառնալով,— եթե ես միայն անցյալը հիշեմ, ա՛յ այսպես, իրար հետևից, ես կտեսնեմ նաև այն, ինչ կգա: Խաբո՛ւմ ես...»:

Հետո ափսոսանքով մտածեց, որ այլևս երբեք, երբեք չի կարող նկարել, չի կարող ստանալ իր գույները: Ափսոս: Իսկ ինքը միշտ մտածում էր, որ դեռ ժամանակ ունի, ուժ ունի նկարելու մի քանի գործ, կտավին հանձնելու երկար տարիների մտքերը: Ո՛ւժ... Դե, իհարկե, ուժ ունի, միայն թե աչքերն են հոգնել, չեն ենթարկվում, մարում են:

Ու անասելի ատելությամբ լցվեց նկարիչը խավարի դեմ, որ գալիս է հենց այնպես, առանց հարցնելու, որ ուզում է վարագուրել աչքերը, իրար խառնել, սևով պատել բոլոր գույները: Ինչու: Որ նկարիչը չտեսնի՞ ոչինչ:

Չէ...

Նկարիչը մի տեսակ առույգ զգաց իրեն, մոտեցավ շրջանակների կույտին, ընտրեց ամենամեծը: Հետո երկար նայեց վրան:

Նա խորհում էր: Նա գիտեր, վերջին գործն է լինելու դա, վերջին նկարը:

Բայց ի՞նչ նկարի, ի՞նչ, որ շատ հին լինի և միաժամանակ հավետ նոր, որ ծանոթ ու հարազատ լինի և միաժամանակ անծանոթ ու խորախորհուրդ, որ դառն ու դժվարին լինի և միաժամանակ անուշ, գեղեցիկ, ցանկալի… ինչպես կյանքը: Կյա՞նքը...

Հանկարծ նկարիչը ժպտաց ու ձեռքն առավ վրձինը:

Ու նկարեց զարմանալի կանաչ մի մարգագետին: Երկինք նկարեց անամպ ու ապշեցնող կապույտ: Ճամփա նկարեց, որ ոլորուն հեռուներն էր գնում: Եվ օդ նկարեց, առատ, թա-փանցիկ, արծաթագույն: Եվ արև նկարեց, որ ջերմ էր, լուսառատ ու պայծառ բոլոր արևներից...

Իսկ երբ ավարտել էր ամեն ինչ, սաղարթախիտ մի ծառ նկարեց արևոտ ճամփեզրին ու մի փոքրիկ աթոռ ծառի տակ: Հետո իրեն նկարեց՝ ուժեղ, առողջ ու ջահել, ինչպես տարիներ առաջ: Փոքրիկ կտավ ուներ դիմացը ու ձեռքին վրձին, և շուրջն էր նայում անհագ, հմայված, հպարտ աչքերով, և լույս էր նկարում կտավի վրա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նկարիչը իջեցրեց վրձինը, ետ – ետ գնաց ու թիկնեց աթոռին:

Վերջապես... Սա այն է… Ողջ կյանքը: Ինչքա՞ն տևեց... Ինչ էլ անասելի են ցավում աչքերը, և սենյակն էլ կարծես լավ չի լուսավորված.

Նկարիչը թեքվեց ու սեղմեց էլեկտրական լամպի կոճակը: Լույսը չավելացավ: «Փչացե՞լ է, ինչ է»,— քրթմնջաց նա ու հանկարծ հասկացավ ամեն ինչ:

Փակեց աչքերն ու խավարն զգաց: Բայց չզարմացավ բոլորովին: Սպասում էր:

Հետո քմծիծաղ տվեց:

— Ուշացար,— ասաց նա կամացուկ, հեգնորեն,— միևնույն է, ես ամեն ինչ տեսնում եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ծերունին

Նոր էի ավարտել Գեղարվեստի ինստիտուտը և պետք է ասեմ, որ վատ չէի ավարտել: Դիպլոմային աշխատանքս գնահատվեց գերազանց, ընկերներս ու դասախոսներս շնորհավորեցին ինձ, իսկ պրոֆեսորը, որը միշտ էլ բարեհաճ էր իմ նկատմամբ, քննություններից հետո երկար զրուցեց հետս:

Վերջում նա հետաքրքրվեց, թե ի՞նչ կտավի վրա եմ մտածում աշխատել կամ ունե՞մ որևէ նոր բան: Ես ասացի, որ ինձ ամենից շատ հրապուրում է փոթորկած ծովը: Դա նրան ուրախացրեց: Գուցե ի՞նքն էլ էր մտածել...

Նա ասաց, որ ուրախ կլինի, եթե իմ այդ նկարը տեսնի մի քանի ամիս հետո բացվող քաղաքային ցուցահանդեսում: Ես հուզված խոստացա հասցնել և պայմանավորվեցի, որ նրան ցույց կտամ վերջին էսքիզները: Այո՛, խոստացա, ու պարզվեց, որ ինձ այլևս ոչինչ չի մնում, քան հրաժեշտ տալ ազատությանս, փակվել աշխատասենյակում ու կտավին հանձնել հոգուս ու մտքիս մեջ արդեն մշակված, արդեն ծանոթ պատկերները:

...Ծովն անասելի հուզված է: Սև – գորշավուն ալիքները ծառս են եղել կատաղած: Մի հարված ևս, և նավակը, որին ալիքն իր կատարն է շպրտել՝ փշուր – փշուր կլինի: Տարերքն իր կույր ուժի հիմնն է երգում: Բայց կա մեկը, որը հանգիստ է նայում մահվան: Դա ծեր, ուժասպառ ձկնորսն է: Սարսափի փոխարեն նրա դեմքը միայն արհամարհանք ու զայրույթ է արտահայտում: Նա շատ անգամ է հաղթել այս նույն ծովին, հաղթել է, երբ ջահել էր, իսկ հիմա, ճիշտ է, հաղթել չի կարող, բայց և չի էլ վախենում:

Ամեն ինչ պարզ էր ինձ համար՝ ծովը, ալիքները, նավակը: Բայց մարդու դեմքը մինչև վերջ չէր բացվում իմ դեմ: Ես նրան չէի տեսնում: Ելք չկար: Հարկավոր էր մեկը, որն ինձ բնորդ ծառայեր այդ ծերունուն ներկայացնելու համար, հարկավոր էր մեկը, որի դեմքը նման լիներ իմ երազի ծերունուն:

Բայց նա չկար:

Ես շրջում էի քաղաքում, հասնում ամենահին թաղամասերը, հարցնում մարդկանց... Իհարկե, ես տեսա մի քանի ինքնատիպ դեմքեր, բայց դրանք բոլորովին էլ այն չէին, ինչ ուզում էի: Այն չէին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ ժամանակն անցնում էր: Մի քանի օր հետո ես պետք է պրոֆեսորին ներկայացնեի նկարի վերջնական էսքիզները: Բայց ի՞նչ կարող էի ներկայացնել: Մի կերպ կատարել աշխատանքը՝ չէի ուզում ու չէի էլ կարող: Իսկ իմ ուզածը չկար: Ու ես շարունակում էի մոլոր քայլերով շրջել փողոցներով, ուշադիր դիտել մարդկանց, որոնել...

Ու մի օր էլ, երեկոյան, երբ ես սովորականի պես անհույս թափառում էի փողոցներով, բոլորովին պատահական, անսպասելիորեն գտա նրան:

Նա փայտ էր ջարդում: Կացնի յուրաքանչյուր հարվածի հետ նրա կրծքից դուրս էր թռչում խուլ, խեղդված մի հնչյուն, որը մատնում էր նրա ծերությունը: Ամենօրյա քրտինքից ու կեղտից փայլ ստացած նրա գլխարկը ընկած էր կողքի կոճղին, իսկ մազերը՝ ճերմակ – մոխրագույն, նոսրացած մազերը, ցնցվում էին ամեն մի հարվածի հետ:

Նա ինձ այնքան ծանոթ թվաց: Մտածեցի, թե որտե՞ղ եմ տեսել ու հանկարծ հիշեցի՝ ախր սա իմ ծերունին է, ձկնորսը, նավաբեկյալը:

— Հայրի՛կ,— կանչեցի ես:

Նա չլսեց ինձ:

—Հայրի՛կ, — ես բարձրացրի ձայնս:

Կացինը կոճղի վրայից այլևս ետ չեկավ: Ու ծերունին գլուխը ինձ դարձրեց: Սիրտս տրոփեց ուժգին: Սա է:

Այո՛, սա է: Կնճռապատ, մազակալած, աշխատող մարդու դեմքը. հար և նման իմ ծերունուն: Կարճ, ցանցառ մորուքը ծվեններով կախվել էր ցած ու թույլ – թույլ օրորվում էր: Նա դժգոհ էր, որ անհարկի ընդհատել էի իրեն ու ինձ էր նայում աչքերի խոժոռ հայացքով, հոնքերի տակից:

— Ի՞նչ կա,— հարցրեց նա կոպիտ, խզված ձայնով,— փա՞յտ ունեք ջարդելու:

Ես անկարող էի որևէ բան ասել ու նրան էի նայում ուրախությամբ, չթաքցրած հիացմունքով: Դա նրան ավելի զարմացրեց:

— Ի՞նչ կա,— կրկնեց նա, ու նրա հայացքն ավելի խոժոռ դարձավ:

Ա՛յ, հենց այդպես էլ ուզում էի տեսնել նրան: Մի ակնթարթում ես նրան ծով տարա, դեպի նավակը, որ խորտակվում էր ալիքների վրա: Դա նա էր, խոժոռ հայացքով, մազակալած դեմքով անպարտ ծերունին, որը հոնքերի տակից ահռելի տարերքին էր նայում ու ասում էր կարծես. «Դու ինձ չես վախեցնի, ծո՛վ...»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հայրիկ,— դիմեցի նրան, — ես նկարիչ եմ, ուզում եմ ձեզ նկարել, ի՞նչ կասեք:

Ծերունին ինձ նայեց զարմանքով ու թերահավատությամբ, հետո ասաց.

— Մեծ մարդ եմ, հանաք մի անի, տղա՛:

— Կատակ չեմ անում, հայրիկ,— անկեղծ հուզված ասացի ես, — հավատացեք, ես շատ եմ ուզում ձեզ նկարել, ես խնդրում եմ, կարող եմ նույնիսկ փող տալ…

Ես նրան առաջարկեցի այնքան գումար, ինչքան ունեի, հանեցի, ստիպում էի, որ վերցնի, աղաչում էի: Ու էլի թե ինչ հիմարություններ եմ արել, ոչինչ չեմ հիշում: Միայն, ի վերջո, ծերունին համաձայնեց և ուրախացավ: Չգիտեմ՝ հասկացա՞վ, թե այդպես ասաց՝ ինձ հանգստացնելու համար, բայց խոստացավ կատարել խնդիրքս, միայն թե անպայման իրենց տանը: Գուցե դեռ կասկածում էր:

Ես պատրաստ էի համաձայնվել ամեն ինչի:

Տուն վերադարձա երջանկությունից հարբած և ուժասպառ: Երկար ժամանակ քնել չէի կարողանում: Աչքերիս առջև անընդհատ ծերունին էր: Հետո կարծես քնեցի:

…Ամբողջ գիշեր քամին ոռնում էր խելագար, դիզում ալիքները, բարձրացնում, տանում ու փշրում ժեռուտ ափին: Նավակը սաստիկ թեքվել էր մի կողքի ու տաշեղի նման պարում էր ալիքների վրա. մերթ վեր էր ելնում, ձուլվում սևակնած երկնքին, մերթ կորչում ծովի անհունում, որպեսզի նորից վեր բարձրանա: Հետո ես տեսնում էի ծերունուն: Նա գլխաբաց ու զարմանալիորեն ուղիղ կանգնած էր նավակում: Ձեռքերը կրծքին խաչած:

Ալիքները ծառս էին լինում կատաղած, լեռնանում էին նրա շուրջը, գալիս զարկում էին նրան: Քամին հարվածում, ուզում էր թեքել, ընկճել նրան, խորտակել խղճուկ նավակը: Բայց ծերունին կանգնած էր հպարտ, մռայլ ու անշարժ: Ես ուզում էի տեսնել նրա դեմքը, նրա մազակալած, կնճռապատ այտերը և մորուքը՝ քամուց ծվեն – ծվեն եղած: Ես ամեն կերպ ձգտում էի նրա հայացքը որսալ, խոժոռ, հպարտ հայացքը: Բայց դա ինձ չէր հաջողվում: Նրա դեմքը ստվերով էր ծածկվել:

Իսկ ալիքները շարունակում էին լեռնանալ, ծառս լինել և կրկին ու կրկին նետվել դեպի նավակը…

Արթնացա քրտինքի մեջ կորած: Հասկանո՞ւմ եք, ես տեսել էի ամբողջ իմ ապագա կտավը, նրա բոլոր մանրամասները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արագորեն հագնվեցի, վերցրեցի ներկատախտակն ու վրձիններս և դուրս եկա: Տրամադրությունս անասելի բարձր էր: Իսկական ստեղծագործական ոգևորություն էի ապրում: Մտա նեղլիկ ու հին փողոցը: Գտա բակը: Ուզում էի ներս մտնել, երբ մի խումբ երեխաներ շրջապատեցին ինձ:

— Նկարիչը, նկարիչը եկել է պապիկին նկարի:

— Տա՞նն է,— հարցրեցի ես անորոշ մի տագնապով:

— Տանն է, վաղուց է արթնացել, ձեզ է սպասում:

Ես գրեթե վազելով բարձրացա երկրորդ հարկ տանող աստիճաններով, բացեցի սենյակի դուռը ու կանգ առա քարացած:

— Զարմացա՞ր,— ինքնագոհ ծիծաղեց ծերունին:

Նա տոնականորեն հագնված նստել էր սեղանի առջև ու ժպտուն, ուրախ հայացքով, որը նրա դեմքից հեռացրել էր կնճիռները, ինձ էր սպասում:

Եվ որպեսզի զեղեցիկ երևա, ծերունին մաքուր սափրվել էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երգը

Լսեցի, որ երիտասարդ, շնորհալի մի երգչուհի ապահարզան է պահանջել իր ամուսնուց, պատճառաբանելով, թե նա երաժշտությունից քիչ բան է հասկանում: Եվ այդ այն դեպքում, երբ տղան ծանր ու ազնիվ աշխատանքով տարիներ շարունակ պայմաններ է ստեղծել կնոջ երաժշտական կրթության համար:

Ու հիշեցի տրակտորիստ Գառնիկին:

Ոչ բոլոր մարդիկ են լավ երգում: Ուզես թե չուզես, կան նաև այնպիսիները, որոնք զուրկ լինելով հանդերձ երաժշտական լսողությունից, անչափ սիրում են երգել: Թե հանդիպեցիր նրանցից մեկին, նա, օրինակ, քեզ կպատմի, թե ինչ տպավորություն ստացավ Ալեքսանդրովիչի համերգից. «Ի՛նչ կատարում, ի՛նչ կատարում,— հիացմունքից հալված, շառագունած դեմքով կպատմի նա,— ինձ հատկապես դուր եկավ «Բարկարոլան», մանավանդ այս մասը...»: Ու դու սարսափով ու տանջանքով կլսես ինչ – որ աղավաղված կտորներ Մերանգուլյանի «Այ գառներ», հունգարական «Մարինիկե» և վրացական հանրահայտ «Սուլիկո» երգերից:

Բայց հեռու չգնանք: Մոտավորապես այդպիսի մարդ էր տրակտորիստ Գառնիկը: Ասում եմ մոտավորապես, որովհետև ընկերներից շատերի անկեղծ զգուշացումները ստիպեցին նրան ընդհատակ անցնել, այսինքն՝ երգել միայն իր համար: Բայց, չնայած այս բոլորին, թե՛ նրա և թե՛ առանձնապես նրա ընկերների բախտից էր, որ Գառնիկը տրակտորիստ էր: Իսկ տրակտորի հոնդյունի տակ երգիր ինչքան սիրտդ ուզում է և ինչ կտորներ ուզում է՝ լսող չկա:

Բայց, ինչպես ասում են, ամեն ինչ միասին չի տրվում մարդուն: Տրակտորիստ Գառնիկն էլ իր վիշտն ուներ ու այն էլ մեծ վիշտ: Դե, չեմ ուզում երկարացնել: Նա մինչև ականջները սիրահարված էր… հիմա կմտածեք, Սոցիալիստական աշխատանքի հերոսուհի Արմիկի՞ն: Չէ՛: Կթվորուհի Սեդա՞յին: Էլի չիմացաք: Կոլտնտեսության հաշվետար Աշխեն Սահակյանին: Չեք ճանաչում: Դե, նա, որ անցյալ տարի օլիմպիադայում առաջին տեղը վերցրեց, մեր երգչուհին: Այո՛, սիրահարված: Դրա համար է տխուր այսօր Գառնիկը: Դրա համար է նա հիմա ամբողջ ձայնով ինչ – որ քայլերգ երգում, այն նմանեցնելով «Մայր Արաքսի ափերով» երգի մեղեդուն:

Երգում է Գառնիկը ու մտածում. «Ինչո՞ւ բացի պլանների կատարումից, ինչ – որ ուրիշներին հաջողվում է, ինձ չի հաջողվում»: Այս «ինչ – որ» - ի տակ նա միայն սերն էր հասկանում: «Ախր ի՞նչս է պակաս, որ այդ Աշխենը ինձ բանի տեղ չի դնում»: Ու նա հաճույքով հիշեց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տատի խոսքերը. «Ցա, էդ ո՞վ է, որ Գառնիկիս չի հավանում: Իմ շիմշատ բալի ի՞նչն է պակաս՝ բոյը, բուսաթը, աչքերը, ունքերը...»: Ու այսպես տատին թոռան գլխից մինչև ոտքերն իջավ: Էհ, ո՞ւր էր՝ Աշխենը լսեր այդ խոսքերը:

Բայց Աշխենը տատի խոսքերը չի լսել, ինքն էլ այդ մասին ոն՞ց ասի Աշխենին: Իսկ խոսելու նյութը վերջանալու մոտ է, ցավով մտածում էր Գառնիկը: Առաջին երկու օրը իր կենսագրությունը պատմեց, թեև Աշխենը, իրենց հարևանը լինելով, իրենից լավ գիտեր նրան: Հետագա օրերին խոսեց իր հարազատների, փոքր եղբոր մասին, որը օդաչու է ուզում դառնալ, իր տրակտորի մասին՝ բոլոր մանրամասնություններով, իրենց կովի ու ոչխարների սովորությունների մասին, այն մասին, որ ինքը օրական երկուսից – երեք նորմա է կատարում, թեև թղթերը հենց Աշխենից էր վերցնում շաբաթը մեկ անգամ: Հետո անցավ գրքերին, բայց որի մասին պատրաստվում էր խոսել, Աշխենը կարճ՝ թե կարդացել եմ:

Մի բան էր միայն փրկում Գառնիկին, որ նա օր ու մեջ գիշերներն էր աշխատում: Իսկ դա նրան հնարավորություն էր տալիս գիշերը, երբ շուրջդ լռություն է, ու ոչ ոք քեզ չի խանգարում, մտածել, որոշել, թե վաղն ինչի մասին ես խոսելու: Բայց արդեն հոգնել էր Գառնիկը: Ախր հեշտ բան չիմանաք՝ տասը ամսից հինգում մտածել, թե մնացած հինգ ամսում ինչի մասին խոսես: Իսկ այդ «անաստվածն էլ» (Գառնիկը ուրիշ հարմար բառ չէր գտնում ասելու իր ընտրյալին) այսքան ժամանակ ոչ մի անգամ չասաց, թե սիրում եմ քեզ: Ի՞նչ է գնում քեզանից: Մի բառ ու կես է, էլի՛, ասա ու պրծի:

Իսկ գյուղում բոլորն էլ խոսում են, բոլորը՝ վերջացրած Շուշան տատով, բոլորն էլ իրար աչքով են անում, երբ Գառնիկը տուն է գալիս, աչքով են անում, երբ դուրս է գալիս տնից, աչքով են անում, երբ Գառնիկին ու Աշխենին միասին են տեսնում: Մի խոսքով, ամբողջ գյուղը ամբողջ օրը աչքով է անում... Իբր մենք ամեն բան գիտենք: Մի օր էլ վարպետ Սերոբը՝ Գառնիկի հայրը, լուրջ – լուրջ, թե. «Այ տղա, էլ ինչի՞ ես ձգձգում, պսակվիր ու պրծի, էլի, աղջիկն էլ լավն է»:

Ու Գառնիկը երկու կրակի արանքում մնաց: Ոնց որ ասում են՝ «դրսից էլ էր վառվում, ներսից էլ»:

Մեկ – մեկ էլ մտածում էր, թե կամքի ուժ ունեմ, ետ կանգնեմ էս գործից: Բայց զգում էր, որ արդեն ուշ է, ամբողջ գյուղը գիտե այդ մասին, միայն Աշխենն ու ինքը չգիտեն:

«Վաղը ինչ ուզում է լինի, թեկուզ աշխարհը փուլ գա, թեկուզ ստիպված լինեմ խնդրել, մեկ է՝ ամեն ինչ կասեմ Աշխենին: Ու շատ չլինի, կփախչեմ:

Բայց ո՞նց ասեմ,— ու Գառնիկը, տրակտորի ղեկը շրջելով, սկսեց վաղվա պարապմունքը: — Աշխեն, ես սիրում եմ քեզ... չէ, չոր է: Լսիր, Աշխեն, ուշադիր լսիր՝ ես ուզում եմ խոսել մեր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

երջանիկ այսօրվա և էլ ավելի պայծառ ապագայի մասին, մենք որպես երկու փայլուն աստղեր… է՛, այսպես գրողներն են գրում: Կամ՝ տես, գիշեր է, լուսին, ու այսպես մեր սերը… Չէ, այդպես էլ երգերում է լինում: Չէ, կասեմ՝ դե էլ հերիք է, Աշխեն, տես՝ ինչ օրն եմ ընկել ու դեռ այնպիսի խոսքե՛ր կասեմ… Վաղը, վաղը, ա՛խ, երբ կգա այդ վաղը…»:

Բայց վաղը չուշացավ, ու արդեն այսօր է:

Ինչպես ասվում է սովորաբար, երբ իջավ խաղաղ երեկոն, ու վառվեցին սոցիալիստական գյուղի էլեկտրական լույսերը, գյուղի կենտրոնական փողոցով դեպի լուսավոր ակումբ շտապեցին կոլտնտեսականները…

Իհարկե, Աշխենն ու Գառնիկը դեպի այդ լուսավոր կողմերը չգնացին: Մեղմ, մանրակաթիլ անձրև էր գալիս, խշխշացնելով գետնի փարթամ կանաչը ու ծառերի տերևները: Իրարից պատշաճ հեռավորության վրա քայլում էին տրակտորիստ Գառնիկն ու հաշվետար Աշխենը:

Գառնիկն արդեն մտքում վերջացրել էր ամբողջ ասելիքն ու դեռ զարմանում էր, որ Աշխենի դեմքի հոգնած արտահայտությունը չի փոխվում:

— Աշխեն,— վերջապես հառաչելով սկսեց Գառնիկը: Աղջկա դեմքը աշխուժացավ: — Գիտե՞ս… մեր Վարդանը…

— Գիտեմ, գիտեմ,— հիասթափված կտրեց Աշխենը,— օդաչու է ուզում դառնալ:

Մի րոպե լռություն տիրեց:

— Իսկ մեր Ջեյրանը…

— 20 լիտր կա՞թ է տվել:

— Չէ, 22,— կոտրված ուղղեց Գառնիկը:

Նորից լռություն…

— Դե որ էդպես է, ինչ ուզում ես ասա,— բռնկվեց Գառնիկը,— բայց ես քեզ կասեմ, — նա գլուխը բարձրացրեց ու նայեց Աշխենի գեղեցիկ, ծիծաղկոտ աչքերին,— կասեմ,— կմկմաց տղան, — որ ես այսօր…

Աշխենը չսպասեց նրա պատասխանին: Նա գրպանից մի քառածալ թուղթ հանեց ու մեկնեց տղային:

— Վերցրու, այսօր երեք նորմա ես կատարել, տեղեկանքդ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու այստեղ կատարվեց մի այնպիսի անսպասելի բան, որ ոչ մեկի մտքով չէր կարող անցնել: Չգիտես ծայրաստիճան լարված դրությո՞ւնն էր պատճառը, երկարաձգվող լռությո՞ւնը, թե՞ աղջկա գեղեցիկ, հեգնոտ աչքերը, բայց Գառնիկը հանկարծ ինչ – որ մի երգ սկսեց: Երգում էր մեղմ, սրտաբուխ ու սխալ: Երգում էր ու զգում, որ փախչում է հողը ոտքերի տակից, որ ամեն ինչ կորավ՝ Աշխենը կհեռանա հիմա ուր որ է ու թերևս սա վերջին, վերջին հանդիպումը կլինի…

Բայց Աշխենը չհեռացավ: Գուցե նա տղայի անորոշ երգի մեջ միայն իր համար հասկանալի, իրեն ուղղված ջերմ ինչյունննե՞ր գտավ:

Երգը… բայց ի՞նչ կարևոր է այստեղ երգը: Գուցե աղջիկը չէր էլ լսում նրան: Աշխենի առջև կանգնած էր ջլապինդ, թուխ դեմքով, մի փոքր վարանոտ, բայց առողջ ու գեղեցիկ տղան, առողջ ու գեղեցիկ, ինչպես ինքը՝ սերը:

Էլեկտրական լապտերները հեռվից՝ լուսատտիկների նման մերթընդմերթ աչքով են անում ծառերի թաց, փայլուն տերևների արանքից: Ասես «Մենք գիտենք» — և են կրկնում նրանք:

Գառնիկը բարձրացրեց գլուխը: Աղջիկը կանգնած էր ծառին հենված: Տղայի բաճկոնի կոճակին հառված նրա աչքերը կիսախուփ էին: Նա ձեռքը դրեց տրակտորիստի թաց, լայն ուսին.

— Մի երգիր, մի խոսիր, ամեն ինչ գիտեմ, ամեն ինչ…

Ծառը երերաց, ու անձրևի ծանր կաթիլները տեղացին իրար հակված գլուխների վրա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պարտքը

Հիվանդանոցում շուտ են մտերմանում:

Միագույն խալաթները միանգամից հավասարեցնում են մարդկանց: Եվ արդեն անհետանում են մաթեմատիկոսն ու բանվորը, հողի մշակն ու ուսուցիչը: Նրանք հիվանդներ են:

Եվ, այնուամենայնիվ, մեր մեջ առանձնանում էր մի բարձրահասակ, պարթև տղամարդ: Վաթսունն անց կլիներ, բայց քայլում էր աշխույժով, գլուխը բարձր պահած: Հետաքրքիր դեմք ուներ՝ գծերը կոպիտ էին, խիստ, ասես ուրագով տաշած: Բայց երբ ժպտում էր, փոխվում էր անմիջապես, երեխա էր դառնում և երեխայի նման էլ ծիծաղում էր բարձր:

Երևի մեր հարկաբաժնի հիվանդներին, միասին վերցրած, այդքան մարդ չէր այցելում, որքան նրան: Գալիս էին ամեն տեսակի մարդիկ և առավելապես երեխաներ: Երեխաները պապիկ էին կանչում նրան, իսկ մնացած բոլորը՝ ուստա Գուրգեն: Պարզ էր, որ արհեստավոր է:

Սակայն մյուս օրը զարմանքով իմացա, որ նա մի խոշոր ֆաբրիկայի դիրեկտոր է: Ուրեմն ին-չո՞ւ ուստա Գուրգեն: Եվ որովհետև հիվանդանոցում գաղտնիքներ չկան, երեկոյան շենքի շուրջը զբոսնելու ժամանակ հարցրի նրան:

- Բա ի՞նչ պիտի ասեն,- անկեղծորեն զարմացավ նա:- Բոլորն իմ աշակերտներն են եղել:

- Ձեր երեխանե՞րն էլ:

- Դե նրանք մանկուց այդ են լսել:

Մտերմացանք, ամեն երեկո միասին էինք զբոսնում հիվանդանոցի շենքի շուրջը: Զբոսնելու ժամանակ էլ հանգիստ չէին թողնում նրան, մոտենում էին, գրկում, մի քանի խոսք փոխանա-կում և ասում էին հրաժեշտի ժամանակ.

- Դե, չհոգնեցնենք, առողջացի՛ր, ուստա՛ Գուրգեն:

Ու նա ժպտում էր: Իսկ երբ ժպտում էր, փոխվում էր անմիջապես, երեխա էր դառնում:

Մի անգամ լսեցի, որ գեղեցիկ մի պատանի հրաժեշտի ժամանակ նրան ասաց.

- Ձեր արածը կյանքում չեմ մոռանա, ուստա՛ Գուրգեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուստա Գուրգենը ժպտաց, ձեռքով խառնեց նրա մազերը...

- Ես քո պապին պարտք եմ, բալա՛,- ասաց նա:

Ես նայեցի նրան: Բայց նա այլևս ուրիշ տեղ էր, շատ հեռու, երևի այդ տղայի պապի հետ, ու երևի խոսում էր մտքում, որովհետև ինչպես լինում է ոմանց հետ՝ ակամա շարժվում էին շրթունքները:

- Այդ ի՞նչ պարտք է եղել, ուստա՛ Գուրգեն:

Ուստա Գուրգենը միանգամից իմ կողմը շրջվեց...

- Ի՞նչ պարտք: Ախ, հա՛... Դե լավ, ուզո՞ւմ ես պատմեմ... Ինձ էլ է պետք: Գիտե՞ս, քառասուներկու տարի ոչ ոքի չեմ պատմել:

Ու մենք սկսեցինք դանդաղ պտտվել հիվանդանոցի շենքի շուրջը:

Ուրեմն, 1928 թվականին էր: Նոր Բայազետում էինք ապրում: Հայրս չկար, իսկ մենք շատ էինք, մայրս չէր կարողանում պահել: Լսել էինք, որ Երևան քաղաքում լավ փող են աշխատում: Ու ես մի օր ասացի իմ Վանիկ ընկերոջը.

- Ա՛յ տղա, արի գնանք Երևան, աշխատանք ճարենք:

Վանիկը իմ տարիքի տղա էր, տասնչորս տարեկան:

Այն ժամանակ Նոր Բայազետից Երևան երկու ճանապարհ կար: Մեկը մայրուղին էր: Սևանի միջով էր անցնում, իսկ մյուսը համարյա արահետ էր, սարերի արանքով դուրս էր գալիս Կոտայքի գյուղերը: Այդ արահետից հիմնականում իշապաններն էին օգտվում: Քթոցներով ձուկ էին տանում Երևան:

Դուրս էին գալիս երեկոյան և առավոտին հասնում Երևան քաղաք: Քթոցների մեջ ձկները դեռ խլդրլդում էին: Հա՛: Աչքովս եմ տեսել:

Երբ իմացավ, որ որոշումս հաստատ է, մայրս լաց եղավ, լաց եղավ ու գնաց մեր հարևան իշապան Նիկոլի մոտ, խնդրեց, որ քաղաք գնալիս ինձ էլ հետը տանի:

Երեկոյան դուրս եկանք Բայազետից: Նիկոլ բիձան ավանակին նստած առջևից էր գնում: Նրան հետևում էին հինգ ավանակները՝ իշխանով ու կողակով լի քթոցներով: Իսկ ամենավերջից քայլում էինք ես ու իմ ընկեր Վանիկը, իրար ձեռք բռնած:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մենք առաջին անգամ էինք քաղաք գնում: Այնինչ ավանակները հիանալի գիտեին արահետը: Սարերն անցանք թե չէ, Նիկոլ բիձան քնեց, իսկ նրա ավանակը մանրիկ կտկտացնելով գնում էր իր ճանապարհը: Գիշեր էր, վախենում էինք ու հոգնել էինք սաստիկ, այնքան էինք հոգնել, որ երբ վերջնականապես համոզվեցինք, որ Նիկոլ բիձան խոր քնի մեջ է, մենք էլ անաղմուկ ցատկեցինք վերջից գնացող անասունների վրա: Բայց ափսոս որ ուշ էինք գլխի ընկել: Շուտով Նիկոլ բիձան հազաց, մենք հասկացանք, որ տեղ ենք հասել ու գլորվեցինք ավանակների վրայից:

- Սա Պլանի գլուխն է,- ասաց Նիկոլ բիձան,- էստեղ մնացեք, մինչև լուսանա: Ես ուրիշ ճամփով եմ գնալու:

Մենք մնացինք մի սև պատի տակ: Մեր գլխավերևում խշշում էին բարդիները, և տերևները անձրևի նման թափվում էին մեզ վրա: Աշուն էր:

Վանիկն ու ես ոտքերով հավաքեցինք տերևները, լցրեցինք մի բարդու բնի տակ, փոսի մեջ, պառկեցինք ու գրկեցինք իրար, ծածկվելով մեր երկար վերարկուներով: Վերևում ուրիշ էին երկինքն ու աստղերը:

Երբ արթնացանք, այսինքն՝ ավելի ճիշտ, երբ զայրացած մի դռնապան ցախավելի կոթով մեզ հանեց փոսից, պարզվեց, որ քնած ենք եղել համալսարանի շենքի պատի տակ: Արևը վաղուց դուրս էր եկել ու անխղճորեն չորացրել մեր տրեխները: Հոգիներս դուրս եկավ՝ մինչև որ հագանք նորից:

Գրկախառնվեցինք Վանիկի հետ, պայմանավորվեցինք հանդիպման համար ու ամեն մեկս գնաց իր ճանապարհով: Ես՝ Ամիրյան փողոց, հորս հորեղբոր աղջկա տուն, իսկ Վանիկն էլ իր հորեղբոր տուն՝ ինչ-որ տեղ Սպանդարյան փողոցում:

Ամեն հանդիպածի հարց ու փորձ անելով՝ գտա Ամիրյան փողոցը և երկհարկանի այն սև շենքը, որի երկրորդ հարկի սենյակներից մեկում ապրում էր Երան հորաքույրս: Երան հորաքույրս ճանաչեց ինձ...

- Գուրգե՛ն ջան, ո՛րբ ջան,- մղկտաց նա:

Գրկեց, ներս տարավ, հաց տվեց:

- Մնա մեր տանը,- ասաց նա:- Գործ կգտնես, մի բան կմտածենք:

Երեկոյան Երան մայրիկի փեսան տուն եկավ: Ես այդքան գեր մարդ կյանքումս չէի տեսել: Բայազետում չկային: Եկավ, նայեց ինձ, նայեց Երան մայրիկին, ու ես նկատեցի, որ հորաքույրս կծկվեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դրա տեղը դրսո՛ւմ գցիր, հետը ոջիլ բերած կլինի,- ասաց նա:

Երկու շաբաթ քնեցի պատշգամբում: Ցուրտ էր: Ես ծածկվում էի բարակ մի վերմակով ու վրայից էլ վերարկուս էի գցում: Իսկ շորերս դնում էի բարձիս տակ:

Մի գիշեր հանկարծ զգացի, որ մեկը ձեռք է տալիս վերմակիս: Քունը գլխիս էր, ինձ թվաց, թե բացվել եմ, ու մայրս ծածկում է ինձ:

- Ծածկված եմ, մա՛մ ջան,- շշնջացի ես:

Հետո նորից զգացի, որ մեկը շարժում է վերմակս ու վեր թռա: Մի ստվեր արագ իջնում էր փայտե սանդուղքով: Վախից սրտապատառ ծեծեցի տան դուռը:

- Հորքո՛ւր, հորքո՛ւր...

- Ի՞նչ կա, ա՛յ տղա,- ձայնեց հորաքույրս:

- Գող կա էստեղ, հորքո՛ւր:

- Աչքիդ երևացած կլինի, բալա՛ ջան,- ասաց հորաքույրս,- բայց դե որ վախենում ես, տեղաշորդ վերցրո՛ւ, նե՛րս արի:

Ես եկա, գրկեցի անկողինս ու ... տեսա, որ հագուստս չկա: Բարձիս տակից տարել էին շալվարս ու բլուզս: Հա՛:

Ի՞նչ պետք է անեի: Առավոտ շուտ վերարկուս հագա շապիկիս վրա ու սրթսրթալով գնացի, գտա Վանիկին: Բարի մարդ էր նրա հորեղբայրը, լույս իջնի գերեզմանին, մի հին շալվար տվեց ինձ ու մի հին բլուզ:

Մինչ այդ ես արդեն աշխատում էի կանաչապատման գրասենյակում: Կայարանի մոտ էր: Մատաղ տնկիներ էինք մշակում ու տեղափոխում, ծառ տնկում: Գործի մի մասը կապալով վերցրել էին վեց գաղթական պոլսեցիներ: Հին տների կարոտը սրտներում, տանջված ու տխուր մարդիկ էին: Ես օգնում էի նրանց, և նրանք օրվա վերջում մի քիչ փող էին տալիս ինձ: Եվ ոչ միայն փող:

Ընդմիջմանը նրանք բացում էին իրենց կապոցները, ամեն մեկը կավե մի փոքրիկ թաս էր հանում՝ մածնով լի: Ուտում էին լուռ, խորասուզված իրենց դառը հուշերի մեջ, բայց ամեն մեկը չէր մոռանում իր պնակում երկու գդալ մածուն թողնել: Էցնում էին մի թասի մեջ, ինձ էին տալիս: Բարի մարդիկ էին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ ուշացած գործի տեղը հասա և արդարանալու համար ասացի, որ գողացել են հագուստս, պոլսեցիների ավագը, մի խոժոռ ծերունի հարցրեց.

- Գրել գիտե՞ս, տղա՛:

- Գիտեմ,- ասացի ես՝ զարմանալով, թե նրա ինչին է պետք իմ գրել իմանալը:

- Դե մի դիմո՛ւմ գրե,- ասաց նա,- աս երկրում ոչ մեկը իրավունք չունե նեղացնելու որբին:

Նրանք վերցրին դիմումս և ողջ խմբով դիրեկտորի սենյակը մտան: Ես նրանց չէի տեսնում, բայց դռան ետևից լսում էի նրանց գոռգոռոցը: Նրանք պահանջում էին օգնություն ցույց տալ ինձ և անընդհատ կրկնում էին, որ ես որբ եմ: Իսկ ամենավերջում լսվեց ծերունու ձայնը...

- Դուն գիտե՞ս, թե ինչ բան է անտուն ու որբ մանուկը: Մենք գիտե՛նք:

Հետո բոլորն էլ դուրս եկան հաղթական աղմուկ-աղաղակով, ինձ խանութ տարան ու նոր շալ-վար առան ինձ համար, նոր բլուզ առան ինձ համար, հանեցին, դեն նետեցին տրեխներս ու կոշիկներ առան ինձ համար:

Դա կյանքիս ամենաուրախ օրն էր, և ես ճիշտը որ ասեմ, այլևս մի առանձին չարություն չու-նեի գիշերն իմ շալվարն ու բլուզը գողացած մարդու նկատմամբ:

Ես այլևս չգնացի Երան հորաքրոջս տուն, ես չէի կարող իմ նոր հագուստով պատշգամբում քնել: Երկրորդ փորձությանը այլևս չէի դիմանա:

Գիտեի, որ Ղանթարի շուկայում է լինում իմ տատի եղբոր տղան՝ Ավետիքը: Նա յուղի առևտուր էր անում: Շրջաններից եկած գյուղացիներից յուղ էր առնում, ճրագու խառնում հե-տը, վաճառում ու մի կերպ պահում իրեն:

Շատ ման եկա նրան այդ երեկո Ղանթարի շուկայում, բայց նա չկար:

Ի՞նչ անեի: Մութն ընկել էր արդեն, իսկ ես քնել էի ուզում: Ո՞վ չգիտե, որ ամենքից շատ քնել է ուզում անտուն մարդը:

Մտածեցի, մտածեցի ու գնացի Զարաբի խան, որ այսօրվա Գերագույն դատարանի շենքի բա-կի կողմերում էր: Դա աշխարհի ամենակեղտոտ իջևանատունն էր, բայց ես ելք չունեի: Հողե պարիսպ ու մի մեծ կարմիր դարպաս, հողե ախոռներ ձիերի ու ավանակների համար ու մի գոմ էլ մարդկանց համար: Եվ համատարած ցեխ, համատարած կեղտ ու գարշահոտություն: Ահա՛ Զարաբի խանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ինձ այդտեղ էլ ներս չթողեցին: Նույնիսկ սպառնացին կտրել ականջներս, եթե անմիջապես չկորչեմ: Բայց ես հեռանալ չէի կարող: Աշուն էր, ցուրտ էր, իսկ ես քնել էի ուզում: Եվ, այնուամենայնիվ, զուր չեն ասում երևի, թե որբի աստվածը մեծ է: Իմ բախտից մի սայլ եկավ, ու բացեցին դարպասը: Ես կպա սայլին ու ականջներիս մեջ սրտի զարկերը լսելով, ներս մտա Զարաբի խան:

Մութ էր: Ոչ մի տեղ լույս չկար: Շոշափելով պատերը՝ մի դուռ գտա, բացեցի ու հայտնվեցի էշերի ախոռում: Տաք էր: Կողմնորոշվելով գտա մսուրը, անկյունում խոտը ետ տարա, պառկեցի մսուրի մեջ, ինձ ծածկեցի խոտով ու քնեցի անմիջապես: Երևի ոչ մի թագավոր իր անկողնում այդքան հանգիստ քնած չլիներ: Հա՛:

Դեռ լույսը չէր բացվել, երբ ավանակները սկսեցին ուտել իմ վրայի խոտը ու ինձ հանեցին անուշ քնից: Ես անմիջապես դուրս նետվեցի ախոռից ու գնացի աշխատանքի: Իսկ երեկոյան Ղանթարի շուկայում գտա Ավետիքին:

- Ավետի՛ք ջան, մի բա՛ն արա, վիճակս էս է, քնելու տեղ չունեմ,- աղաչեցի ես:

- Հիմա գործս պրծնում եմ, Գուրգե՛ն,- ասաց Ավետիքը:- Գնանք մեր տուն, տես, չասես թե մի կողմ եմ քաշվում:

Բարձրահասակ, շիկահեր, սիրուն մարդ էր Ավետիքը: Քիչ հետո նա վերցրեց դատարկված յուղի պուլիկը, ու մենք դուրս եկանք շուկայից: Նրանց տունը Ղանթարի շուկայից հեռու չէր, գտնվում էր Ցախի մեյդան կոչվող վայրում՝ «Արարատ» գինու գործարանի մոտերքում: Մենք քայլում էինք իրար գլխի կիտված հողաշեն տների արանքով, նեղլիկ ու ցեխոտ քուչաներով:

Քիչ հետո նա կանգ առավ հողե մի մարդահասակ տան առաջ, բացեց դռան կախովի կողպեքն ու ասաց.

- Դե մտի՛ր, սա է իմ տունը:

Հողե հատակով ու հողե պատերով մի նեղլիկ, երկարավուն բուն էր դա: Մի բարձր թախտ կար այդ բնում և հիսուն-վաթսուն լիտրանոց մի կարաս՝ թախտի գլխավերևում: Թախտի մոտով կողքի վրա քայլելով կարելի էր միայն հասնել կարասին: Ուրիշ ոչինչ չկար: Աթոռի տեղ էլ չկար:

- Ավետի՛ք,- ասացի ես,- Ավետիք, որ թողնես, թախտի տակ կքնեմ:

- Թախտի տա՞կ,- զարմացավ նա,- կտեղավորվե՞ս:

Մի քիչ խոտ, մի քանի փալաս գցեցինք հատակին, հողի վրա, ու ես սողացի թախտի տակ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդտեղ էլ ապրեցի մինչև գարուն:

Հիմա հասնում եմ այն դեպքին, որի համար սկսեցի այս երկար պատմությունը:

Արդեն չորս-հինգ ամիս էր, ինչ Ավետիքի թախտի տակ էի ապրում: Ամեն երեկո, աշխատանքից հետո գնում էի Ղանթարի շուկան, որպեսզի Ավետիքի հետ տուն գնանք: Հա՛, չմոռանամ ասել, որ արդեն Վանիկի հետ բանվոր էի աշխատում Դավայաթաղ կոչված թաղամասում նոր կառուցվող էժանագին շենքերի վրա: Գալիս էինք, Ավետիքը բացում էր կախովի կողպեքով դուռը, ու մենք պառկում էինք քնելու: Բայց ի՞նչ քնել: Չորս-հինգ ամիս դիմացել էի, այլևս դիմանալ չէի կարող: Երևի նրանից էր, որ գարուն էր, իսկ ես երեխա էի: Ոչ, ոչ, հարցը թախտի տակ քնելը չէր, սովորել էի: Ուղղակի չէի դիմանում մեր գլխավերևում դրված կարասից եկող յուղի հոտին: Խելագարվում էի:

Բայազետում մենք կով ունեինք: Երբ տանը ոչինչ չէր լինում, Շուշանիկ մայրս թասով յուղ էր դնում սեղանին, ու մենք ուտում էինք հացով: Հիմա գրեթե վեց ամիս յուղի երես չէի տեսել: Այսինքն՝ տեսնում էի ամեն օր, բայց հնարավորություն չկար ուտելու և դրանից ավելի էի տառապում: Երբեմն-երբեմն երեխայի համառությամբ ես երկար նայում էի կարասին: Ավետիքը տեսնում էր իմ հայացքը, բայց շրջում էր գլուխը ու անկողին մտնում: Ի՞նչ աներ խեղճը. հնար չուներ, հազիվ էր ծայրը ծայրին հասցնում:

Բայց ե՞ս ինչ անեի: Գիշերները այլևս չէի կարողանում քնել: Ինձ խենթացնում էր յուղի հոտը:

Ու որոշեցի գողանալ: Ինչպես հիմա իրավաբանները կասեն՝ դա կանխամտածված գողություն էր: Աշխատանքի վերջում Վանիկին ասացի.

- Առավոտ շուտ փուռ կգնաս, ինչքան էլ հերթ լինի կկանգնես ու երկու կիլո սանգակ կառնես...

- Վա՛հ,- զարմացավ Վանիկը,- Մանթաշո՞վն ես, ինչ ես...

Մի քանի հատ լրագիր գնեցի, թաքցրեցի բլուզիս տակ, որ Ավետիքի կասկածը չշարժեմ ու թախտի տակ մտա՝ չքնելու հաստատ վճռականությամբ:

Անհանգիստ էր Ավետիքը, չէր կարողանում քնել, իսկ ես շունչս պահած սպասում էի, որ կարողանամ իրագործել ծրագիրս:

Հասկանում էի, որ ստորություն է արածս: Բա մարդը քեզ տուն թողնի, քնելու տեղ տա, իսկ դու... Բայց ոչինչ չէի կարողանում անել ինձ հետ: Յուղի հոտը հետապնդում, հալածում էր ինձ, հանգիստ չէր տալիս: Իմ ուժերից վեր էր դիմադրելը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վերջապես լսեցի Ավետիքի խաղաղ, հանդարտ շնչառությունը: Բայց դեռ երկար ժամանակ սպասում էի՝ շունչս պահած, սիրտս տրոփում էր տագնապով ու անհանգստությամբ, ձեռքերս դողում էին: Ու հենց այդ դողացող ձեռքերից մեկը թախտի տակից պարզելով, մտցրեցի կարասի մեջ ու մի մեծ բուռ յուղ վերցնելով դրեցի նախօրոք փռած թերթերի վրա: Հետո մտածեցի, մտածեցի, տանջվեցի, հայհոյեցի ինձ ու ձեռքս նորից մեկնեցի կարասին...

Անաղմուկ փաթաթեցի թուղթը ու ականջ դրեցի: Ավետիքը խոր քնի մեջ էր: Յուղը հիմա ինձ մոտ էր, կողքիս, թղթի մեջ, ու ես այլևս համբերել չէի կարող: Հագնվեցի անձայն, վերցրեցի փաթեթն ու դուրս ծլկեցի կիսաբաց դռնից, այլևս այս տունը չվերադառնալու հաստատ վճռականությամբ:

Վազելով հասա շինարարություն, թռա մեր փորած հիմքի մեջ ու սպասեցի: Քիչ հետո եկավ Վանիկը:

- Հաց բերե՞լ ես,- հարցրեցի անհամբեր:

- Հա՛,- ասաց Վանիկը ու ինքն էլ թռավ փոսի մեջ:

Բացեց տոպրակը: Հացի հոտը աշխարհը բռնեց:

Հացերը տաք-տաք էին: Մենք յուղը բռերով դնում էինք սանգակ հացի վրա, արագ-արագ փաթաթում և ուտում էինք ագահաբար, հալածվածի նման, շնչասպառ լինելով ու խեղդվելով հաճույքից:

Դե տարիքով մարդ եմ, շատ եմ ապրել աշխարհում, մի քանի անգամ արտասահմանում էլ եմ եղել, կերել եմ ինձ ծանոթ ու անծանոթ շատ ուտելիքներ, բայց այդ տաք հացի ու յուղի համը ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ այլևս չեմ զգացել: Դա ուրիշ էր: Դա հրաշք էր:

Դրանից հետո, իհարկե, Ավետիքին չտեսա:

Հենց շինարարությունում էի քնում: Աշխատանքից հետո ավազ մաղելու ցանցը դնում էի տաշված չորս տուֆ քարի վրա, մի քիչ թեփ էի լցնում վրան ու քնում էի: Արդեն գարուն էր, տաք էր, հեշտացել էր ապրելը:

Մինչև 1933 թիվը բանվորություն արեցի: Հետո Թբիլիսիում ամուսնացած քույրս իր մոտ կանչեց ինձ: Կոշկակարություն սովորեցի, արհեստավոր դարձա, բանֆակ էի հաճախում... Արդեն դասավորում էի կյանքս: Բայց պատերազմն սկսվեց:

Պատերազմից Երևան եկա իբրև պահեստի սպա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Առաջին գործս այն եղավ, որ գտնեմ Ավետիքին:

Գնացի Ցախի մեյդան ու ... տեսա, որ ոչ Ցախի մեյդանը կա, ո՛չ կախովի կողպեքով փոքրիկ դուռը, ու ո՛չ էլ հողե այն տունը, որի մեջ ես մեծ մեղք գործեցի:

Շատ ման եկա շուկայում, բայց յուղ վաճառող Ավետիքը ոչ մի տեղ չկար: Մտածեցի, որ գյուղում կլինի: Ավարտվել էր պատերազմը, բայց շատ ծանր օրեր էին, գուցե գյուղ է գնացել ու կարտոֆիլ է մշակում, որ պահի ընտանիքը, ո՞վ գիտե:

Մի մեծ զամբյուղ միրգ առա, օղի վերցրի, երկու բոքոն հաց ու մի փոքրիկ կճուճ յուղ, վեր կացա ու գնացի Բայազետ, այն ժամանակ Զեյնալ կոչվող գյուղը, որտեղ նրա ծնողներն էին ապրում:

Ձայն տվեցի, դուրս եկավ մայրը, ճանաչեց ինձ, գրկեց ու ճչաց աղեկտուր, քանդեց մազերը ու սկսեց բարձր աղաղակել՝ երգելով, խոսելով ու լալով:

Ու ես իմացա, որ պատերազմում զոհվել է Ղանթարի շուկայում պուլիկով յուղ վաճառող իմ բարեկամ Ավետիքը: Եվ մայրը հիմա պահում է նրա որբերին:

Ու ամեն տարի առիթով, թե անառիթ, երբ Բայազետ էի գնում, անպայման մտնում էի նաև Զեյնալ՝ երեխաներին միրգ ու նվերներ էի տանում... հին մեղքս քավելու, պարտքս հատուցելու համար... Բայց ամեն անգամ քիչ էր թվում իմ արածը: Եվ մինչև հիմա էլ քիչ է թվում:

Ուստա Գուրգենը վերջացրեց իր պատմությունը, ժպտաց:

- Ահա՛, պատմեցի ու թեթևացավ հոգիս:

- Ուրեմն այդ պատանին...

- Ավետիքի թոռն էր,- ասաց ուստա Գուրգենը:

1980թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կսկիծ

Անելկայի Հիշատակին

Նա բացեց դուռն ու պատշգամբ դուրս եկավ: Աստղազարդ, խաղաղ գիշեր էր: Դիմացի շենքում՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ մարում էին լույսերը: Ցածում փողոցն ամայի էր ու անկյանք, և միայն ջրող ավտոմեքենան էր երկար շոշափուկները տարուբերելով, հոնդալով թրջում փոշոտ մայթերը... ամայությունն ասես ավելի ընդգծելով:

«Բայց հիմա ի՞նչ պետք է անեմ»,- մտածեց Շավարշ Արամյանը: Ավելի ճիշտ՝ նա սկզբում մտածեց, թե Աննան հիմա այնտեղ ի՞նչ պետք է անի, հետո զգաց, որ դա անհեթեթություն է և նոր միայն ասաց ինքն իրեն՝ բա հիմա ես ի՞նչ պետք է անեմ:

Ցերեկը հողին էին հանձնել նրա կնոջը, որի հետ ապրել էր քսանութ տարի: Վերջին մարդիկ քիչ առաջ հեռացան՝ արագ-արագ մաքրելով ափսեներն ու դանակ-պատառաքաղները, ծալելով ու սանդղահարթակում կիտելով, չգիտես որտեղից տանը հայտնված, ալյումինե ոտքերով սեղաններն ու աթոռները: Հետո մոտեցան նրան, սեղմեցին ձեռքը, ինչ-որ խոսքեր ասացին ու գնացին:

Հիմա տունն առաջվա նման էր, բայց հուսահատության աստիճանի դատարկ:

Աննան չկար:

Հոգեհանգստի և հուղարկավորության այդ ամբողջ ծիսակատարությունից Շավարշ Արամյանի հոգում ինչ-որ դառը նստվածք էր մնացել: Ո՛չ այն պատճառով, որ Աննան մահացել էր, ո՛չ: Աննայի մահը նա դեռ չէր ընկալում և ավելի շատ զարմացած էր: Անդարձ կորստի ցավը չէր զգում դեռ: Դա երևի հետո պիտի գար: Նրան ավելի շատ դառնություն էին պատճառել հուղարկավորների անհարկի իրարանցումը, բարձրաձայն խոսակցությունները, ինչ-որ անծանոթ ու օտար մարդկանց գործնական միջամտությունները, վիրավորական շտապողականությունը: Կարծես թե բոլորը շտապում էին: Շավարշ Արամյանին թվում էր, թե նույնիսկ քառյակը ասես ընդունվածից ավելի արագ էր նվագում: Արագ էր նվագում նաև փողային նվագախումբը, և մարդիկ ոչ թե քայլում էին, այլ վազում և վազելով էլ տարան դագաղը: Եվ Շավարշին այդ պահին մի միտք էր զբաղեցնում միայն. հանկարծ չսայթաքի որևէ մեկը: Իսկ դիակառքը արդեն սլանում էր և նույնիսկ անհանգիստ ազդանշաններ էր տալիս խաչմերուկներում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ այնտեղ, գերեզմանոցում... բոլորը շտապում էին, ամեն ինչ արվում էր արագ-արագ, հևալով և այնքան արագ փոսն իջեցրին դագաղը, որ ցած թափվող քարերի շրխկոցից միայն նա հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է արդեն: Նա միանգամից հիշեց Աննայի վերջին խոսքերը ու շատ տխրեց: Աննան այն ժամանակ ասաց.

- Շավա՛րշ ջան, խնդրում եմ, երբ իմ դագաղը կիջեցնեն, ասա թող աղմուկով չլցնեն քարերը...

Նա ուզեց ասել, նույնիսկ բարձրացրեց ձեռքը, բայց երևի ուշ էր արդեն, որովհետև ցած նետվող քարի մի վերջին շրխկոցից հետո սկսեցին հող լցնել: Իսկ հողը չէր շրխկում այլևս: Բանվորները ձեռքերով, ոտքերով ուղղակի հրում, թափում էին փոսի մոտ կուտակված փափուկ շիկահողը: Իսկ հետո շատ արագորեն բլուր կազմեցին և, աղմուկով կոտրատելով պսակները՝ շիրիմը ծածկեցին ծաղիկներով...

- Կոտրատում են, որ չգողանան,- իր հարևանուհուն բարձրաձայն բացատրեց երևի խուլ մի պառավ:- Հա, տանում են ու նորից ծախում: Ես չեմ իմանո՞ւմ...

Հուղարկավորների մեծ մասին Շավարշ Արամյանը չէր ճանաչում և չէր էլ փորձում հիշել: Միայն զարմացած էր, որ այդքան մարդ է հավաքվել: Եվ ավելի շատ զարմանում էր, տեսնելով, թե որքան սգացողներ կան: Ինքն էլ էր ուզում լաց լինել, բայց ամաչում էր: Իսկ ուրիշները չէին ամաչում և լաց էին լինում սրտանց: Հատկապես մի դեռատի աղջիկ: Ձեռքերով գրկել էր հողաթումբը, համբուրում էր ու չէր թողնում, որ իրեն հեռացնեն գերեզմանից: Եվ լաց էր լինում սրտակեղեք, անմխիթար, մորմոքալով, հողոտ ձեռքերով սրբելով արցունքները: Շավարշը որքան էլ փորձեց, չկարողացավ հիշել դեռատի այդ աղջկան, բայց որովհետև վստահ էր, թե ինչ-որ տեղ տեսել է, ենթադրեց, որ Աննայի ուսանողուհիներից մեկը կլինի: Հետո չհամբերեց ու հարցրեց Աննայի եղբորը.

- Այն աղջիկն ո՞վ է, Լիպարի՛տ:

- Քո հորաքրոջ աղջիկն է, Շավա՛րշ,- զարմացած նրան նայեց Լիպարիտը:

- Որի՞,- հարցրեց նա:

- Յողիկի:

Հա, իհարկե, Յողիկի աղջիկը պետք է, որ լաց լիներ: Հանկարծակի նոպա էր ունեցել և գյուղից անմիջապես բերել էին հանրապետական հիվանդանոց: Երկու թե երեք ամիս մնաց: Եվ Աննան ամեն օր այցի էր գնում նրան: Ամեն օր: Յողիկը ինչ-որ առիթով պատմեց:

Զարմանալի կին էր: Ինչպես էր հասցնում ամեն ինչ: Տունը միշտ մաքուր էր և երեխաներն էլ միշտ հագնվում էին պարզ ու անթերի: Այդ միակ բանն էր, որ կարող էր նկատել Շավարշ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյանը: Մնացածը նրան չէր հետաքրքրում: Եվ, այնուամենայնիվ, երեխաների ինչ-որ խոսակցություններից, հեռախոսազանգերին Աննայի շշուկով տված պատասխանների պատառիկներից, ճաշի սեղանի շուրջ երբեմն-երբեմն ծայր առած զրույցներից Շավարշ Արամյանը կռահում էր, որ սոսկալի ծանրաբեռնված է Աննան: Գիտությունների թեկնածու էր, համալսարանում քիմիա էր դասախոսում, պարապում էր ասպիրանտների հետ, երեխաների հետ պատրաստում էր դասերը, ամեն օր հատուկ ճաշ էր պատրաստում ու տանում հորը, որովհետև մահացել էր մայրը, իսկ հայրը ուրիշների եփած ճաշերը չէր հավանում, աղջկան դաշնամուրի դասի էր տանում մի դպրոց, տղային մի այլ դպրոց՝ ջութակի... Եվ դարձյալ հասցնում էր հետաքրքրվել իր և Շավարշի հարազատներով ու բարեկամներով, օգնության հասնել հազար ու մի հարցում...

Մի օր հորեղբոր տղան հուզված ասաց.

- Շատ շնորհակալ եմ, Շավա՛րշ, դու փաստորեն փրկեցիր իմ Արմենին... Դե, նոր ամուսնացած տղա է, որ կինը չաշխատեր, ո՞նց պիտի ապրեին:

- Բայց ես ի՞նչ եմ արել,- զարմացավ Շավարշը:

- Բա որ աշխատանքի ես ընդունել տվել, քի՞չ է, ցավդ տանեմ,- ասաց հորեղբոր որդին:-Աննան ամեն ինչ պատմեց:

Աննա՞ն: Ճաշի ժամանակ հիշեց պատահածը ու հարցրեց: Աննան այնպես կարմրեց, ասես թե բռնվել էր հանցանքի պահին:

- Երեխաները կարիքի մեջ էին, ի՞նչ անեի,- ասաց նա ամաչելով:- Մեր կուրսի Գիմային խնդրեցի, լաբորանտ ընդունեց իր մոտ:

- Հա, բայց ինչո՞ւ ես ասել, թե ես եմ արել,- զարմացավ Շավարշը:

- Քո ազգականն է, Շավարշ ջան, մտածեցի, որ ավելի լավ կլինի, եթե կարծի, թե դու ես արել: Եվ, ի վերջո, ես, թե դու՝ ի՞նչ տարբերություն:

Այսինքն, եթե Աննան չլիներ, Շավա՛րշ Արամյանը վաղուց կտրած կլիներ կապերը և՛ գյուղի հետ, և՛ ազգականների ու բարեկամների հետ: Հազվադեպ ընդհարումները, որ նա ունենում էր կնոջ հետ, հիմնականում հենց իր ազգականների պատճառով էին լինում:

- Եղբորդ ծնունդն է այսօր, Շավա՛րշ ջան, գոնե մի հինգ րոպեով մտնենք:

- Այսօ՞ր... այսօր ինչպե՞ս գնանք,- փրկարար օղակ գտած խեղդվողի ուրախությամբ բացականչում էր Շավարշը - ... խանութները հիմա փակ են...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես նվերը գնել եմ արդեն,- կամացուկ խնդրում էր կինը:- Ուրիշ դեպքում քեզ հո չեմ անհանգստացնում, չեմ կտրում գործից: Դու գիտես, մերոնց տները միշտ մենակ եմ գնում կամ երեխաների հետ: Իսկ այստեղ չի կարելի, Շավարշ, եղբայրդ է...

Շավարշ Արամյանը ինժեներ-կոնստրուկտոր էր աշխատում գիտահետազոտական ինստիտուտում: Նրա մտահղացումները միշտ թարմ էին ու ինքնատիպ, դրա համար էլ, որպես կանոն, ընդունվում էին թերահավատությամբ, անբարյացակամությամբ, երբեմն նաև թշնամանքով: Աշխատելով գիշեր-ցերեկ՝ նա կարողանում էր մի քանի օրվա մեջ մի խոշոր հայտնագործություն կատարել, բայց տարիներ էին անցնում, մինչև որ ընդունում էին նրա այդ հայտնագործությունը: Եվ գյուտի հաստատման ժամանակ սովորաբար միակ դեմը հենց ինքը՝ Շավարշն էր լինում, որովհետև հնացած էր համարում իր իսկ գյուտը և փոխարենն անմիջապես առաջարկում շատ ավելի կատարելագործված մի նոր տարբերակ, որը կրկին դիմավորում էին անբարյացակամությամբ ու գրեթե թշնամանքով:

Ամենակարող՝ իր մասնագիտության մեջ, նա բացարձակապես անօգնական էր առօրյա կյանքում և հիմնարկային-գործնական փոխհարաբերությունների մեջ: Նա ամեն օր աշխատանքի էր գնում ավտոբուսով, բայց եթե հարցնեին ինչ շենքեր կան իր երթուղու վրա, չէր իմանա: Նա ճանապարհը չէր նկատում, նա գիտեր միայն նպատակակետը: Երբ նոր էին ամուսնացել, մի քանի անգամ շուկա և խանութ գնաց: Բայց որովհետև ամենուրեք շփոթում էր հաշիվները և գնում այնպիսի ապրանքներ, որոնք ոչնչի պետք չէին, Աննան ժպտալով նրա ձեռքից վերցրեց ցանցազամբյուղը:

- Դա քո գործը չէ, Շավա՛րշ ջան,- ասաց նա:

- Լավ, մի՞թե ես ոչ մի բանի պետք չեմ,- ընկճվեց Շավարշը:

- Դու հիանալի կոնստրուկտոր ես, դա քի՞չ է, ինչ է,- ծիծաղեց Աննան:- Միայն թե աշխատի՛ր: Մնացած մանր-մունր բաները թող ինձ:

Եվ Շավարշ Արամյանն այդպես էլ չիմացավ, որ էլեկտրաէներգիայի համար պետք է վարձ մուծել, որ պետք է երբեմն-երբեմն քիմիական մաքրման տանել հագուստները և վաղ առավոտյան թափել աղբը:

- Դու աշխատի՛ր, Շավա՛րշ ջան: Քո գործը ժողովրդին է պետք, իսկ իմը՝ միայն մեր ընտանիքին:

Այդպես էր ասում Աննան: Նա ինքն էր ամուսնու համար հագուստ ընտրում և գնում, որովհետև եթե թողներ ամուսնու հույսին, Շավարշը տարիներ շարունակ աշխատանքի կգնար նույն կոստյումով, նույն վերնաշապիկով և փողկապով, առանց զգալու, թե ինչ է հագել: Նույ-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նիսկ ծխախոտն էլ Աննան էր գնում, և անպայման Շավարշի սիրած «Ախթամար» ծխախոտը: Եվ հաճախ էր պատահում, որ առանձնասենյակի բացված դռան մոտ ճաշասենյակ խուժած ծխի մշուշի միջից մեկ էլ հնչում էր Շավարշի ձայնը.

- Աննա՛, Աննա՛ ջան, ես սիգարետ չունեմ...

- Ունես, ունես, հիմա կբերեմ,- ծիծաղում էր Աննան:

Շավարշ Արամյանը պիջակի գրպանից հանեց ծխախոտի տուփը, մի սիգարետ վերցրեց ու հանկարծ մտածեց, որ ահա ինքը չգիտի էլ, թե որտեղ էր պահում Աննան սիգարետները: Հիմա տանն արդյոք սիգարետ կա՞ և եթե կա, որտե՞ղ է:

- Միայն թե դու աշխատի՛ր, Շավա՛րշ ջան:

Նա սովորություն չուներ տանը պատմելու հիմնարկի և իր աշխատանքի մասին, բայց Աննան չգիտես որտեղից մանրամասն տեղյակ էր, թե ինչ է կատարվում գիտահետազոտական ինստիտուտում: Եվ մի օր, մի մղձավանջային օր, երբ Շավարշ Արամյանը հուսահատության մեջ նույնիսկ մի հիմար, անհեթեթ վճիռ էր ընդունում՝ այս նույն պատշգամբից երկար, շատ երկար նայելով փողոցի մայթին, ուսին զգաց Աննայի ձեռքի թեթև հպումը:

- Ես քեզ հո վաղուց եմ ճանաչում, Շավա՛րշ,- ասաց նա:- Դու աշխարհում ինձ հանդիպած ամենաազնիվ ու աշխատասեր մարդն ես: Դու ինչի՞ց ես վախենում և ումի՞ց ես վախենում: Վաղը մտի՛ր քո պետի մոտ և ասա՝ ինչ որ մտածում ես: Ասա՛ համարձակ, առանց ամաչելու... Ասա՛ անձամբ, և ոչ թե որևէ մեկի միջոցով, որը կարող է նույնիսկ քո՛ բառերը, բայց ա՛յլ շեշտադրությամբ հաղորդել: Դու ի՞նչ ունես կորցնելու, սիրելի՛ մարդ: Դու ընկճվելու ի՞նչ ունես: Դու միշտ ավելի շատ տվել ես՝ քան վերցրել: Եվ ուրեմն իրավունք ունես ասելու այն, ինչ մտածում ես: Երբեք չխեղճանաս, երբեք չնվաստանաս որևէ մեկի առաջ, որովհետև նախ դու մեծ տաղանդ ունես, որն ամենուրեք պետք է, և հետո տուն ունես, որտեղ հավատում ու սիրում են քեզ: Դու տուն ունես, Շավա՛րշ:

Հետո նրանք երբեմն-երբեմն հիշում էին այդ օրը և ծիծաղում էին սրտանց, իրար ուսի հենված՝ հենց այդ նույն պատշգամբից նայելով փողոցի փոշոտ մայթին:

- Դու ինձ այնքան անվանեցիր տաղանդավոր, որ ի վերջո համոզեցիր,- ասաց մի անգամ Շավարշը:- Ես ուրիշ ելք չունեի, ստիպված էի տաղանդավոր դառնալ:

Իհարկե դա հետո էր, շատ հետո, տարիներ անց, երբ հանկարծ պարզվեց, որ ուրիշ ոչ մեկը չի կարող այնպես կատարել գլխավոր կոնստրուկտորի պարտականությունները, քան Շավարշը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լեգենդ էր, թե իրականություն, բայց պատմում էին, թե այնտեղ, որտեղ պետք է վճռվեր այդ հարցը, խորհրդականներից մեկը փորձում է զգուշացնել նախագահին.

- Ոչինչ չունեմ առարկելու, բայց ասում են, թե... ինչպես ասեմ... ասում են, թե տարօրինակ մարդ է այդ Շավարշ Արամյանը... Ասում են, թե... մի խոսքով՝ խենթ է:

- Վերջնականապես համոզեցիք ինձ,- ժպտում է նախագահը:- Մեզ հենց նման խենթեր են պետք:

Բոլորը զարմացած էին այդ ընտրությունից, բոլորը՝ Աննայից բացի, որովհետև, երբ շփոթված և երջանիկ Շավարշ Արամյանը մի օր տուն մտավ միայն վերնաշապիկով, որովհետև ըստ սովորության, աստիճաններով բարձրանալիս արդեն հանել էր վերարկուն ու պիջակը, և կնոջը ասաց գրեթե շշուկով.

- Աննա՛, Աննա՛, դու հասկանո՞ւմ ես, ինձ առաջարկեցին աշխատել որպես գլխավոր կոնստրուկտոր...

- Իսկ ինչո՞ւ ես զարմանում,- հանգիստ ասաց Աննան,- այդպես էլ պետք է լիներ:

- Չէ, դու հասկանո՞ւմ ես,- կնոջ մազերը համբուրելով, հուզված շարունակեց Արամյանը,- ախր ես հիմա առանց խոչընդոտի կարող եմ իրականացնել իմ բոլոր հայտնագործությունները:

- Իհարկե,- ասաց Աննան,- ես շատ-շատ ուրախ եմ քեզ համար: Բայց որ ասեմ, չե՞ս նեղանա, Շավա՛րշ:

- Ե՞ս՝ քեզանի՞ց,- ծիծաղեց Շավարշը:

- Քո նախորդն էլ էր կարողանում իրականացնել իր բոլոր մտահղացումները, սիրելի՛ս: Բայց չէ՞ որ դու ուրիշ ես: Դու Շավարշ Արամյանն ես և կարող ես առանց երկյուղի Շավարշ Արամյան փնտրել քո յուրաքանչյուր կոնստրուկտորի մեջ և իրականացնել նրա մտահղացումները նաև... Որովհետև,- ասաց Աննան,- հիմա մարդիկ բոլորն էլ ժամանակակից քաղաքում են ապրում, ժամանակակից շենքերի մեջ և բոլորն էլ դժբախտաբար պատշգամբներ ունեն...

- Ա՛խ դու իմ փոքրիկ, իմ հիշաչար ավազակ,- ծիծաղեց այն ժամանակ Շավարշ Արամյանը և երեխայի նման գրկելով՝ սենյակից պատշգամբ դուրս բերեց կնոջը:

Շավարշ Արամյանը զգաց, որ մրսում է ու զարմացավ, որ Աննայի ձայնը չի լսում: Որտեղ էլ լիներ, նա անպայման կզգար, որ ինքը մրսում է և պիջակը ձեռքին պատշգամբ դուրս կգար...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հո երեխա՞ չես, Շավա՛րշ, կմրսես...

Եվ հրաշքի նման նրան հանկարծ թվաց, թե ինչ-որ տեղից լսեց կնոջ ձայնը: Նույնիսկ պահեց շունչը՝ սպասելով, թե հիմա ուր որ է պիջակը կիջնի ուսերին և թիկունքին կզգա Աննայի ձեռքերի ջերմությունը:

Հետո միանգամից գլուխը ձեռքերին իջեցրեց ու լաց եղավ: Լաց եղավ այնպես, ինչպես ողջ կյանքում լաց չէր եղել: Եվ ափսոսաց, որ ամաչել է այնտեղ, գերեզմանատանը, որ ինքը չի գրկել ջարդոտված ծաղկեպսակներով ծածկված հողաթումբը, որ իրեն չեն փորձել պոկել գերեզմանից, որ ի՛նքը չէր լաց լինում այնտեղ՝ բարձրաձայն ու անմխիթար, հողոտ ձեռքերով սրբելով արցունքները:

1983 թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ձայներ

-Բարի լույս,- ասաց Վահրամն ինքն իրեն:

Միջանցքի հայելու միջից նայող մարդը անմիջապես պատասխանեց նրան: Վահրամը ափով շոյեց այտը, ծնոտը, հետո թափ տվեց ձեռքը ու երբ ուզում էր շրջվել, նրան թվաց, թե ինչ-որ բան ասացին իրեն:

- Ի՞նչ,- հարցրեց նա ու ավելացրեց,- դե լավ, լավ:

Հայելու կողքին, փոքրիկ մեխից կախված էր էլեկտրական ածելին: Դանդաղ սափրվեց՝ սառն ու ողորկ սայրերը սեղմելով փափուկ կնճիռներին, իսկ երբ հասավ կոպի մոտ, ուշադիր նայեց աչքերին ու տեսավ, որ իրեն էլ են նայում ուշադիր ու տխուր: Ածելին աղմկեց կզակի վրա ու այդ աղմուկի միջից նրան թվաց, թե խոհանոցում զնգզնգացին կաթսաները: Նա նույնիսկ սարքը ականջից հեռու պահեց ու թեքեց գլուխը, որպեսզի զնգզնգոցը կրկնվի, բայց խոհանոցում ոչ մի ձայն չկար, և Վահրամը կամացուկ ասաց.

- Հիմա կվերջացնեմ:

Նա վաղուց էր զգացել, որ տանը խոսում է ինքն իր հետ, բայց ոչինչ անել չէր կարող և չէր ուզում: Նա հենց այնպես չէր խոսում: Խոսում էր, որովհետև հարցեր էին տալիս և որովհետև ինքն էլ հարցեր ուներ տալու: Տունը ձայներով լի էր: Յուրաքանչյուր իրի, առարկայի վրա հետքեր կային, հին, ծանոթ հետքեր, որ ցավեցնելու չափ իրական հուշեր էին պահում: Պատշգամբ տանող դռան մոտ բազկաթոռն էր դրված մեծ-մեծ վարդերով, թիկնակի մեջտեղում վարդերը խունացել, թերթիկները չորացել, հեռացել էին իրարից: Երբ Սոֆին նստում էր բազկաթոռին, խունացած վարդերը չէին երևում: Սոֆին սիրում էր նստել այդ բազկաթոռին ու ասում էր՝ «Իմ գահը»:

Վահրամ Ռշտունին նկատեց, որ պատշգամբ տանող դուռը ամուր չի փակել: Սառը հոսանք էր գալիս ու փչում էր ուղիղ բազկաթոռի վրա:

- Ըհը, միշտ այդպես է,- քրթմնջաց նա,- դռները միշտ ես պետք է փակեմ:

Հագնվեց, կոճկվեց ամուր, դրեց փափուկ լայնեզր գլխարկը և այդպես էլ կանգնած մնաց սենյակի կենտրոնում, ուսերը ետ գցած, ուղիղ ու ձիգ և միայն բարձր հայելու մեջ նկատեց, որ ինքն ուղիղ ու ձիգ չէ այլևս: Հայելու վերևում փակցված նկարից նրան էին նայում որդին, թոռն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ու հարսը: Որդին խոժոռ հայացք ուներ: Հա, իհարկե, նա ուզում էր, որ բոլորը միասին նկարվեն, բայց կինն ասաց. «Լավ կլինի այս անգամ միայն մեր ընտանիքով, իսկ մյուս անգամ հայրիկի ու մայրիկի հետ, հա՞»: Հետո նրանք երկար ժամանակ խնդրում էին, որ հայրիկն ու տիկին Սոֆին էլ գնան, բայց Վահրամ Ռշտունին լսել էր այդ խոսքերը ու չգնաց: Դրա համար էլ որդին խոժոռ է:

- Դե ես գնացի,- ասաց նա՝ նայելով նկարին,- գնամ հեռագիր տամ ձեզ:

Գրեթե անաղմուկ փակեց դուռն ու ցած իջավ աստիճաններով: Աստիճանավանդակի պատերից հանգիստ կարելի էր իմանալ, թե քանի երեխա է ապրում այս մուտքում, ինչ անուններ ունեն, ինչ հասակ և ինչ թվանշաններ են ստանում մայրենի լեզվից: Բոլորից ներքևում Արմենի ստեղծագործությունն է: Թոռնիկը տուն էր նկարել և մոռացել էր դուռը, իսկ ծուռ ծխնելույզից ծուխը ոչ թե բարձրանում, այլ կողքի վրա գնում, հասնում էր մինչև անկյունը:

- Հիմա երևի ձեռքը հասնի ու ծուխը վեր բարձրանա,- մտածեց պապը:

Նա արդեն դուրս էր գալիս մուտքից, երբ դեմ դիմաց հանդիպեց հարևանին: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Միքայելյանի ձեռքերը ցրտից և լարվածությունից ճերմակել էին: Գրկին սեղմած թափանցիկ տոպրակների միջից երևում էին մրգեր, շշեր, ինչ-որ փաթեթներ, ինչ-որ պահածոներ...

- Ողջո՛ւյն, Վահրա՛մ Սմբատի,- ասաց նա՝ ինչպես միշտ խուսափելով հայրանվան «չ» վերջնատառից:- Օ՛, այս Ամանորը կրակ ու պատիժ է: Տեսնես Եզնիկ Կողբացին ու Փավստոս Բուզանդն է՞լ են ստիպված եղել շուկա գնալ:

- Բա՛րև, Ստեփա՛ն,- ասաց Վահրամ Ռշտունին:

- Ես կարճ կխնդրեմ, դուք երկար ընդունեք,- ասաց Ստեփանը,- որովհետև ձեռքերիցս կաղանդները վայր են թափվում: Եթե գաք մեր տուն և Նոր տարին միասին դիմավորենք, գիտցեք, որ ե՛ս էլ, մերոնք էլ երջանիկ կլինենք: Մենակ մ՛ի մնացեք, Վահրա՛մ Սմբատի...

- Շնորհակալություն,- ասաց Վահրամ Ռշտունին,- շնորհակալություն, Ստեփա՛ն:

Դրսում նա ոտքը ամուր դրեց ձյան վրա ու քայլեց մայթի աջ կողմով, պատերի տակով, նայելով տոնականորեն զարդարված ցուցափեղկերին, որոնց հետ ինքը ոչ մի գործ չուներ: Դռները բաց էին, որովհետև անընդմեջ հոսանքով ելումուտ էին անում մարդիկ՝ զամբյուղներով ու արկղերով ծանրաբեռնված, երջանիկ ու հուզված դեմքերով, վերարկուների օձիքները բաց: Մայթին՝ տրորված ձյան վրա, թափված էին նարնջի կեղևներ, կոնֆետի փաթեթաթղթեր, թեփ: Մեծ խանութի ցուցափեղկի մոտ մորթե մուշտակներ հագած երկու տղա քաշքշում էին իրար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վախենալով, որ կընկնեն - Վահրամ Ռշտունին մոտեցավ, բռնեց նրանց: Նրանք դեռ գրգռված էին կռվից, իրար դեմ էին մղվում և գրեթե կախվել էին մուշտակներից, որոնց օձիքները ամուր բռնել էր լայնեզր գլխարկով անծանոթ ծերունին:

- Դե, պապիկի՛ն հարցրու,- բղավեց տղաներից փոքրը՝ վեր քաշելով կարմիր ու թաց քիթը և վշտացած աչքերով նայելով ծերունուն:

- Ես գիտեմ, դո՛ւ հարցրու,- ասաց մեծը,- դու հարցրո՛ւ ու տե՛ս ոնց կծիծաղի:

- Լավ,- ասաց փոքրը,- վիզս բաց թող, պապի՛: Լավ,- ու ավելացրեց հևալով ու շնչասպառ,- ես ասում եմ, որ ձյունը Ձմեռ պապիկի մորուքից է թափվում, իսկ Աշիկը ծիծաղում է:

Աշիկը իսկապես ծիծաղում էր: Նա ծերունուն էր նայում ծաղրական աչքերով ու սպասում էր, որ փոթկար նրա ծիծաղի հետ: Եվ Վահրամ Ռշտունին մի քիչ մտածեց:

- Ծիծաղելու ի՞նչ կա,- ասաց նա՝ տխուր ու լուրջ հայացքով նայելով փոքրերից մեծին:

- Յա՞,- զարմացավ մեծը,- ուրեմն ձյունը մորուքի՞ց է թափվում:

- Իհարկե,- գլխով արեց նա:

- Տեսա՞ր,- հրճվանքից պայծառացած աչքերով, հաղթական բացականչեց փոքրը:- Ուրեմն, սո՞ւտ էին նկարել:

Վահրամ Ռշտունին առաջ շարժվեց տոնականորեն զարդարված ցուցափեղկերի կողքով, մի քիչ շտապելով, որպեսզի նոր հարցեր չտան, մի քիչ ուրախանալով թաց քթով փոքրիկի համար, մի քիչ ամաչելով այդ Աշիկ տղայի հուսախաբված աչքերից և տխրելով, որ նա այդքան շուտ է մեծացել ու արդեն չի հավատում սիրուն - սիրուն հեքիաթներին:

Նա հանկարծ պարզ, ուղղակի կողքից լսեց թոռնիկի ձայնը.

«Պա՛պ, իսկ ինչո՞ւ Ձմեռ տատի չկա: Ինչո՞ւ բոլոր տատիները թողնում գնում են, իսկ պապիկները մնում են»: Այն ժամանակ նա Արմենի համար հորինեց Ձմեռ տատի հեքիաթը: Ասաց՝ բարի տատիկները գնում են, որ իրենց թոռնիկների համար նվերներ ուղարկեն: Եվ Արմենն ասաց. «Ես նվեր չեմ ուզում, ես իմ Սոֆի տատիկին եմ ուզում»: Ու լաց եղավ: Ու ինքն էլ լաց եղավ, որովհետև ինքն էլ ոչինչ չէր ուզում:

Հետո, առավոտյան հանկարծ նկատեց, որ Արմենը որոնում է բարձի տակ և վշտացավ, որ տղան, այնուամենայնիվ, նվերներ էր ուզում: Ու թեև հեքիաթում Ձմեռ տատին միայն Նոր տարվա գիշերն էր թաքուն նվերներ բերում, բայց Վահրամ Ռշտունին սկսեց ամեն օր ինչ-որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բան պահել թոռնիկի բարձի տակ: Մի խնձոր, մի տանձ, մի մատիտ: Որովհետև դա առիթ էր դառնում Սոֆի տատիկի մասին խոսելու, և որովհետև մյուսները խուսափում էին հիշել նրան՝ չտխրելու, չտխրեցնելու համար, ապրելու համար: Եվ նա ամեն գիշեր նվերներ էր դնում Արմենի բարձի տակ, մինչև որ մի առավոտ իր բարձի տակ ինքը մի կոնֆետ նկատեց: Արմենը պապիկին էր նայում տխուր, հասկացող աչքերով ու հանկարծ ասաց. «Ձմեռ տատին է քեզ նվեր ուղարկել»:

- Չէ՛, երեխաները հիմա շուտ են մեծանում,- ասաց ինքն իրեն Վահրամ Ռշտունին:

- Էլ մի՛ ասեք,- արձագանքեց նրան շալի մեջ փաթաթված փոքրիկ մի կին,- արի ու ամիսը մեկ նոր կոշիկ առ դրանց համար:

- Իհարկե, իհարկե, դժվար է,- ամաչելով անմիջապես համաձայնեց Վահրամը:

Փոստի հեռագրական բաժանմունքում նա երկար ժամանակ նստած էր հեռագրաթղթի առջև ու գրիչն աննպատակ թաթախում էր թանաքի մեջ: Նա մտքում երկար խոսում էր որդու, հարսի ու թոռնիկի հետ, հարցեր էր տալիս ու լսում էր, և այնքան էր մոտեցել նրանց, որ սիրտը ուռչում էր: Սեպտեմբերին Կիևից եկել էին նրան տեսնելու, մի քանի օր մնացին, և Վահրամ Ռշտունին նկատեց, որ այլևս ինքն իր հետ չի խոսում: Տունը աղմուկով էր լցվել, հյուր էին գնում ու հյուր ընդունում: Իսկ մի անգամ էլ հայր ու որդի մինչև ուշ գիշեր խոսեցին, խմում էին քիչ-քիչ ու խոսում:

Ինչի՞ մասին էին խոսում... Մեծացել էր որդին, սպիտակ մազեր կային ճակատին թափված գանգուրների մեջ ու աչքերն էլ իր աչքերի նման բաց շագանակագույն էին դարձել: Այդպիսի բան չէր եղել: Այնքան զուսպ, այնքան հանդարտ տղա էր, բայց մեկ էլ հանկարծ գրկեց հորը, սեղմեց, գլուխը ուսին դրեց ու ասաց մի տեսակ խռովված ձայնով. «Ես քեզ շատ եմ սիրում, հայրի՛կ: Եվ ուզում եմ էապես բռնել, բռնել, բռնել...»:

- Ես էլ ձեզ, բոլորիդ եմ սիրում,- աչքերը հեռագրաթղթին հառած շշնջաց Վահրամ Ռշտունին,- շատ եմ սիրում:

Նա ոչ մի տեղ չէր շտապում ու հանդարտ քայլում էր փողոցով աչքերը կկոցած, որովհետև ձյունը փայլում էր արևի տակ: Իսկ շուրջը բոլորն անցնում էին հուզված,արագ-արագ, ասես թե մոռացել, կիսատ էին թողել կարևոր շատ գործեր ու հիմա շտապում էին ավարտել այդ գործերը, որպեսզի հանկարծ երեկոյան, երբ տասներկու անգամ խփեն ժամացույցի զարկերը, երբ ռադիոն ասի «Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ», իրենք հանգիստ սրտով, առանց պարտքի բարձրացնեն բաժակները: Միայն ավտոմեքենաներն էին շարժվում դանդաղ, երբեմն-երբեմն կողքի վրա սահելով սառցակալած ասֆալտի վրայով: Եվ գրեթե բոլոր ավտոմե-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քենաների կիսաբաց ետնապահեստներից կամ լուսամուտների միջից եղևնու ճյուղեր էին կախված:

- Տոնածառը վերջին օրը չեն առնի,- ասաց Վահրամ Ռշտունին:

Նա ուզեց հիշել, թե կյանքում քանի անգամ է տոնածառի մոտ եղել, բայց չկարողացավ: Եղևնիները շատ էին, տարբեր տեսակի էին և տարբեր մեծության, տարբեր ձևով էին զարդարված և տարբեր դեմքեր էին պտտվում նրանց շուրջը: Եղևնիները կանգնում, շարվում էին իրար կողքի ու ձգվում, ձգվում էին ու պսպղում էին խաչերով, աստղերով, մոմերով, լապտերիկներով, և անհնարին էր դառնում հաշվելը:

Ճաշեց դանդաղ, իսկ երբ կում-կում խմում էր դառը սուրճը, տարեց մատուցողը եկավ նստեց կողքին: Ռեստորանում գրեթե հաճախորդ չկար, և մատուցողը նեղսրտում ու ձանձրանում էր: Մի քանի անգամ բղավեց ջահել աղջիկների վրա, որոնք սկուտեղներ էին տանում հարևան սրահը: Հետո եկավ, նստեց ծանոթ հաճախորդի կողքին:

- Ո՞նց եք, ընկե՛ր Ռշտունի,- հարցրեց նա:

Հաճախորդը հասկացավ, որ մատուցողը այդ հարցը տվեց թերևս միայն նրա համար, որպեսզի ինքն էլ նույն հարցը նրան տա: Մարդը ուզում էր խոսել, և Վահրամ Ռշտունին չուզեց վշտացնել նրան:

- Լավ եմ,- ասաց նա շտապով,- իսկ դո՞ւք ինչպես եք, Գարեգի՛ն:

- Էքհ,- աշխուժացավ Գարեգինը,- որ ասեմ լավ եմ, կհավատա՞ք: Քսանութ տարի մատուցող եմ այս ռեստորանում և... զարմանալի բան: Տարին կարճ լինի, թե երկար, երկու օրը մեկ աշխատեմ, թե երեք օրը մեկ, միևնույն է: Հերթը պտտվում, պտտվում ու էլի Նոր տարվա գիշերն ինձ է բաժին ընկնում: Բայց ես էլ մարդ եմ, չէ՞: Ես էլ եմ ուզում Նոր տարին տանը անցկացնել, ընտանիքիս հետ: Ճի՞շտ է, թե չէ: Իհարկե: Առավոտյան մեր վարիչին հենց այդպես էլ ասացի: Ասացի՝ բավական է, ես ծեր եմ ու հոգնած եմ: Իսկ նա ծիծաղում է, ասում է՝ ընկեր Գարեգին, մատուցողների մեջ թե ամենաջահելը, թե ամենաարագաշարժը, թե ամենաշնորհքովը դու ես: Գիտես, որ մեծ խնջույք է լինելու, առանց քեզ ո՞նց կլինի: Դե դո՛ւք ասեք, ընկե՛ր Ռշտունի, ես նրան ի՞նչ կարող էի ասել:

- Ոչ մի բան,- ասաց Ռշտունին,- ճիշտ է ասել. չէ՞ որ դուք իսկապես ամենալավ մատուցողն եք, Գարեգի՛ն:

Մատուցողը շիկնեց տղայի պես, ժպտաց՝ գոհ հանդիմանանքով օրորելով գլուխը.

- Ըհը՛, դուք էլ նույնն եք ասում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հետո նայեց իր մշտական հաճախորդին, ուզեց ինքն էլ իր հերթին մի լավ ու հաճելի բան ասել նրան: Նայեց, նայեց ու ասաց.

- Գուցե դուք էլ երեկոյան գաք, հը՞: Շատ հետաքրքիր է լինում: Գալիս են բոլորն էլ շքեղ հագնված, ուրախ երգում, պարում են տոնածառի չորս բոլորը: Մեծ տոնածառ ենք դրել դահլիճի հենց կենտրոնում: Հետո ասեմ, որ Վարդանն էլ է լինելու: Գիտեք, չէ՞, այնպիսի բաներ է ասում, որ ծիծաղից թուլանում ենք: Քսանութ տարի անընդհատ ես եմ աշխատել Նոր տարվա գիշերը, բայց ամեն անգամ...

Գարեգինը կտրեց խոսքը, մի քիչ կմկմաց, աշխատելով կռահել, թե Վահրամ Ռշտունին զգա՞ց արդյոք, որ ինքն իր կամքով է ամեն անգամ աշխատում Նոր տարվա գիշերը: Բայց հաճախորդի աչքերը բարի ու ժպտուն էին, և տարեց մատուցողը ավելացրեց հանգստացած.

- Անպայման եկե՛ք: Ես ձեզ համար մի աթոռ կպահեմ: Հա՞... Հետո գիտե՞ք ինչ, գուցե և ոչ մի հաճախորդ էլ չգա: Կնստենք, կխոսենք: Կգաք, հա՞, ընկե՛ր Ռշտունի: Կսպասեմ:

Երբ ռեստորանից դուրս եկավ, ձյուն էր գալիս՝ հանդարտ ու փափուկ, և Վահրամն զգաց, որ տրամադրությունը բարձր է: «Ասես թե խմած լինեմ»,- քմծիծաղեց նա: Հետո մտածեց, թե ինչից այդպես բարձրացավ տրամադրությունը, և իբր չհասկանալով, օրորեց գլուխը: Թեև հաստատ գիտեր, որ պատճառը հին մատուցող Գարեգինի վերջին խոսքերն էին: «Կսպասեմ»,- ասաց նա: Մեկն էլ այդպես ասաց: Ո՞վ էր: Հա, իրենց հարևանն էր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսորը: «Մենակ մի մնացեք, Վահրամ Սմբատի...»,- ասաց նա:

- Զարմանալի մարդիկ են: Ինչո՞ւ են մտածում, թե ես մենակ եմ,- ասաց Վահրամ Ռշտունին:

Նա հանկարծ սկսեց պատկերացնել, թե իր բարեկամներից, հարևաններից, ընկերներից ում տուն կարող է գնալ, եթե ուզենա: Եվ այնպես, ինչպես որդու հետ խոսելիս, մի տեսակ լայնացավ սիրտը: Իհարկե, շատերը կան: Բայց թե, միևնույն է, ինքը ոչ մի տեղ էլ չի գնա: Չի կարելի: Նոր տարվա գիշերն ուրիշ է: Մարդիկ ուզում են իրենց տանը լինել, ընտանիքով լինել, բաժակները ձեռքներին հաշվել հին տարվա վերջին վայրկյանները: Հետո ճչալ ուրախացած, համբուրվել, բաժակներն իրար խփել ու շտապով, շտապով շատ կարևոր խոսքեր ասել իրար, շատ հաճելի, անձնական, միայն այդ վայրկյանի համար պահված խոսքեր: Նրանց խանգարել չի կարելի: Չի կարելի: Եվ հետո ինչո՞ւ պետք է ինքը ուրիշի տանը լինի: Իսկ իրե՞նց տունը: Իսկ եթե հանկարծ մեկը նայի Վահրամ Ռշտունու տան պատուհանին ու տեսնի, որ հանգած է լույսը: Ի՞նչ կմտածի: Իսկ եթե հին, հին օրերի նման, երբ տասներկուսից հետո շրջում էին ընկերների տները, մեկը վճռի այցելել նրան: Ի՞նչ կստացվի: Չէ: Նա գիտեր, որ դա վաղուց, շատ վաղուց էր, որ քանի-քանի տարի այլևս երբեք արթուն չէին մնում մինչև առավոտ, բայց այդպես մտածելը հաճելի էր, և Վահրամ Ռշտունին ժպտաց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Թե ինչպես էր հասել Կարապի լճի մոտ, ինքն էլ չզգաց: Օպերայի փոքրիկ պուրակը մարդկանցով լի էր: Երեխաները սահնակ էին քշում և չմուշկներով սահում լճակի սառցե հատակին: Նրանց պապիկներն ու տատիկները համբերատար դռփդռփում էին լճափին, բարձրաձայն խոսում իրար հետ, զրույցն ընդհատելով միայն մի վայրկյան, որպեսզի ձայն տան իրենց անդադրում թոռնիկներին.

- Զույշ, չընկնես...

Քիչ այն կողմ, բաց բեռնատարի վրայից եղևնու ճյուղեր էին վաճառում: Ջահել մի կին, երեխան գրկած, պարզել էր ձեռքը, բայց չէր կարողանում վաճառողի մեկնած եղևնին բռնել: Վահրամը մոտեցավ, օգնեց, և արդեն ուզում էր հեռանալ, երբ մեկը ձայն տվեց նրան.

- Ընկե՛ր Ռշտունի, ընկե՛ր Ռշտունի, վերցրե՛ք:

Նա տեսավ, որ վաճառող տղան թափքից կռացած իրեն է մեկնել եղևնու փոքրիկ ու փարթամ մի ճյուղ: Նայեց նրան, չճանաչեց, բայց բարևեց շփոթված, հետո տարածեց ձեռքերը, նայեց եղևնու ճյուղ գնողների հերթին ու նորից տարածեց ձեռքերը՝ ուզենալով ասել, որ իրեն ճյուղ հարկավոր չէ: Բայց վաճառող տղան սխալ հասկացավ նրան:

- Ի՞նչ է, ես իրավունք չունե՞մ իմ ուսուցչին առանց հերթի մի տոնածառ տալու,- ասաց նա մարտահրավերով, ցրտից խզված ձայնով,- վերցրե՛ք, ընկե՛ր Ռշտունի:

- Վերցրե՛ք, վերցրե՛ք,- լսվեց հերթի միջից:

Եվ Վահրամ Ռշտունին վերջնականապես շփոթված վերցրեց եղևնին ու, ճյուղի մեջտեղից բռնած, դուրս եկավ պուրակից:

- Ա՛յ քեզ պատմություն,- ծիծաղեց նա,- հիմա ես ի՞նչ անեմ այս եղևնին:

Ճյուղերին թանձր խեժահոտ կար, անտառային սառնություն ու թացություն: Ձյունը շարունակում էր իջնել հանդարտ, և փաթիլները գալիս, պտտվելով, խաղալով թառում էին եղևնու սուր ասեղներին: Ասես աներևույթ մեկը բամբակի քուլաներ էր փչում, նետում տոնածառի վրա:

Մթնում էր: Ավելի ու ավելի քիչ էին ավտոմեքենաներ հանդիպում: Հետզհետե դատարկվում էին մայթերը: Նորանոր լուսավոր քառանկյունիներ էին հայտնվում շենքերի պատերին: Երկար փակված էին մնում խանութների դռները:

Քայլում էր Վահրամ Ռշտունին և ժպտում ինքն իրեն: Լավ, հիմա ի՞նչ անի այս եղևնին: Տուն տանելը միտք չունի: Չէ: Ինչի՞ նման կլինի դատարկ ծառը: Իսկ սա ընդամենը ծառ է, ծառի մի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ճյուղ, և մարդիկ պետք է նրան տոնածառ դարձնեն, երեխաները պետք է դարձնեն տոնածառ ու պտտվեն չորս բոլորը շրջան կազմած ու երգեն զիլ ու սխալ, թլիկ լեզուներով.

«Տոնածառ ջան, տոնածառ...»:

Չէ, տուն տանելը միտք չունի: Իսկ գուցե թողնի մի տեղ ու գնա՞: Գուցե հենի այս պատի՞ն: Այնինչ երևի մարդիկ կան, որ չեն կարողացել եղևնի գնել ու հիմա դեռ որոնում են: Ո՞վ գիտե: Մի՞թե նրանք չէին, որ հերթ էին կանգնել բաց բեռնատարի մոտ: Վահրամ Ռշտունին հանկարծ հիշեց իրենց հավաքարարուհուն: Նա, օրինակ, եղևնի գնած կլինի՞: Ամուսինը պառկած է հիվանդանոցում: Հինգ, թե վեց երեխա ունի, որ ամբողջ օրը վազվզում են դպրոցի բակում: Սատանի ճտեր են, ձյան վրա բոբիկ են ման գալիս: Մայրն ամբողջ օրը բղավում է, որ հագնվեն, իսկ նրանց պետքն էլ չէ: Ուսուցչուհիները նախանձում են՝ նայելով նրանց կարմիր ու կլոր այտերին, դասամիջոցներին իրենց նազուկ ու քմահաճ երեխաներից են խոսում ու... տրտնջում: Հի՞նգն են, թե վեցը: Վահրամ Ռշտունին ամաչեց, որ նրանց ինչպես հարկն է չի հիշում և արդեն տրամվայում, սառը աթոռին նստած, մտքում մեկ-մեկ տալիս էր անունները.

- Խաչիկ, Վաչիկ, Հրաչիկ, Սիրանուշ, Մայրանուշ...

Չէ, իհարկե, մեկն էլ կա: Մի տղա էլ կա՝ Սիրանուշից փոքր ու Մայրանուշից մեծ: Ուրեմն վեցն են: Լավ է, որ շատ են: Մարդ պետք է շատ երեխաներ ունենա: Որ ինչքան էլ տանեն,մեկն այնուամենայնիվ մնա: Թե չէ ինչի՞ նման է սա: Դողում ես ամբողջ կյանքում ու մեկ էլ տեսար՝ թռավ: Իսկ նրանք վեցն են: Ափսոս, որ հիվանդ է հայրը: Տոնածառ հավանաբար չեն ունենա և տխուր կլինեն: Իսկ ինքը հանկարծ ներս կմտնի՝ եղևնու ճյուղը ձեռքին և....

Տրամվայը գրեթե դատարկ էր ու սլանում էր մեծ արագությամբ. մեկ աջ, մեկ ձախ հրելով երկաթե գծերը: Վերջին կանգառում ցած իջավ, աջ ձեռքով շարունակ բռնած եղևնու ճյուղը: Դանդաղ, մանրիկ քայլերով անցավ սառցակալած փողոցն ու հայտնվեց իրենց դպրոցի մոտ: Հավաքարարուհին բակի կողմից դպրոցի առաջին հարկում էր ապրում, և նրա տան պատուհանները լուսավորված էին: Կամացուկ ծիծաղելով իր դրության վրա, Վահրամ Ռշտունին անաղմուկ մոտեցավ առաջին պատուհանին, կռացավ ու ներքև նայեց: Եվ տեսավ տոնածառը: Մեծ լապտեր էր վառվում եղևնու գլխին, տղաներից մեկը կանգնել էր աթոռի վրա ու շարժում էր բերանը, երևի արտասանում էր: Աթոռներին, թախտի վրա ,ամեն տեղ երեխաներ կային: Ռշտունին ուղղեց մեջքը և ծիծաղեց:Հոգնել էր սաստիկ, ցավում էր աջ ձեռքը, ոտքերը սառել էին և վառվում էին ականջները: Բայց նա ծիծաղում էր, որովհետև ուրախ էր: Որովհետև երկար ու սրտաշարժ բաներ մտածելով եկել-եկել հասել էր աշխարհի ծայրը, բայց պարզվել էր, որ աշխարհի ծայրում էլ ամեն ինչ կարգին է, և տոնածառ ունեն հիվանդ մարդու երեխաները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկե՛ր Ռշտունի, դո՞ւ ես, ա՛յ քեզ բան:

Նա այնպես շրջվեց, որ քիչ մնաց վայր ընկնի: Եղևնու ճյուղի կոթը աղմուկով քերեց ձյունը:

- Ա՛ա, դո՞ւք եք, Հրանո՛ւշ:

- Ես էլ կանգնել, կանգնել նայում եմ, թե էս ո՞վ է կեսգիշերին մեր պատուհանից ներս նայում: Դուք է՞լ էիք եկել դպրոցից ծառ տանելու: Ի՞նչ անես, ոչ մի տեղ չկար: Իսկ ավազակները կյանքս ուտում էին: Ու մեկ էլ առավոտը տեսնեմ ընկեր Ավագյանը մի լավ տոնածառ է բերում: Ապրեն նրա բալեքը, վատ օր չտեսնի կյանքում, ցամաք աչքով մնա: Ասում է՝ Հրանուշ քույրիկ, վերցրո՛ւ, թող երեխաներն ուրախանան: Ասում է՝ դպրոցի համար շատ են բերել, քո երեխաներն էլ մեր դպրոցի երեխաներն են: Ապրի նրա արևը...

- Ձեր ամուսինը ինչպե՞ս է,- նոր միայն նկատելով կնոջ ձեռքի ցանցազամբյուղից կախված ալյումինե կաթսան ու դատարկ ափսեները հարցրեց Ռշտունին, աշխատելով մարմնով ծածկել եղևնու ճյուղը:

- Լավ է, լավ է, շնորհակալ եմ, մոտիցն եմ գալիս: Ներս գնանք էլի, բա դու չես մրսո՞ւմ:

- Չէ՛, չէ՛,- հրաժարվեց Ռշտունին,- չեմ մրսում:

Նա իսկապես այլևս չէր մրսում, երբ վերադարձի երկար ճամփան անցնելուց հետո տրամվայից ցած իջավ Բարեկամության փողոցի անկյունում և քայլեց դեպի իր տունը: Տաք էր: Կտրվել էր ձյունը: Շուրջն ամեն ինչ մաքուր ու սպիտակ էր: Ոտնահետքեր համարյա չէին երևում: Նա քայլում էր զգուշորեն, շրջվում նայում էր իր մենավոր հետքերին ու նորից առաջ էր շարժվում՝ ձեռքին բռնած եղևնու ճյուղը: Մի քանի անգամ մտածեց թողնել որևէ տեղ, մի անգամ նույնիսկ իբր մոռացավ կանգառի նստարանին, բայց տասը-քսան քայլ անելուց հետո վերադարձավ ու նորից վերցրեց եղևնու ճյուղը: Ափսոսում էր, հետո խղճում էր մի տեսակ:

- Կտանեմ տուն,- ասաց նա,- թող մեր տանը մնա:

Իրենց տան ներքևում գտնվող մեծ խանութին մոտենալով, Վահրամ Ռշտունին բոց նկատեց ու կանգ առավ ակամա: Բոցը դույլի միջից էր ելնում ու ծածանվում,ալեկոծվում էր վերևում: Դույլի մոտ նստել, մատները կրակի վրա ծիծաղելիորեն շարժում, ասես խորովում էր խանութի պահակ Թաթոսը: Կողքին, պատին հենված, սևին էր տալիս հին հրացանը: Ոտնաձայն լսելով, Թաթոսը բարձրացրեց գլուխը ու ճանաչելով հարևանին, ձայն տվեց ուրախացած.

- Բարի երեկո, Վահրա՛մ եղբայր, ժամը քանի՞սն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բարի երեկո, Թադևո՛ս,- ասաց Ռշտունին: Նա եղևնու ճյուղը հենեց ծաղկանոցի փոքրիկ ցանկապատին, ձախ թևն ու դաստակը թեք պահեց լույսի տակ:- Տասնմեկն է:

- Պահ, ուրեմն, մեկ ժամ հետո Նոր տարի է,- զարմացավ պահակը, և նկատելով եղևնու ճյուղը, ավելի զարմացավ:- Ո՞ւմ համար եք տանում, Վահրա՛մ եղբայր:

- Այնպե՛ս,- ձգեց ուսուցիչը:- Գուցե ձեզ պե՞տք է, այո՞: Վերցրե՛ք, վերցրե՛ք, խնդրեմ...

- Չէ՛,- ասաց պահակը,- մերոնք առել են, նախշել են արդեն:- Նա արկղի մի անկյունը քաշվեց:- Եթե չեք նեղվի, նստե՛ք, տաքացե՛ք, Վահրա՛մ եղբայր: Իսկական կրակն ուրիշ է:

Վախենալով, որ եթե հրաժարվի, պահակը կարող է սխալ հասկանալ, Վահրամ Ռշտունին նստեց նրա մոտ, շրջված արկղի վրա ու կրակին մեկնեց ձեռքերը : Տաքը դուր եկավ, հին, անցած օջախներ երևացին մատների արանքից, թվաց, թե ծուխը խտղտացրեց աչքերը: Նա հազաց և երախտագիտությամբ լցվեց պահակի նկատմամբ:

- Լավ է,- ասաց նա՝ քանդելով վերարկուի կոճակները և լայնեզր գլխարկը քիչ վեր բարձրացնելով:

- Իհարկե,- ուրախ արձագանքեց Թաթոսը,- զուր չեն ասում, թե կրակը ձմեռվա վարդն է:

- Իսկ ձեր քունը չի՞ տանում, Թադևո՛ս... Դժվար է այսպես, ամեն գիշեր...

- Չէ՛,- ասաց պահակը,- իմ քունը ցերեկներն է տանում: Սովորել եմ: Մարդս ամեն ինչի սովորում է, մարդս ամեն ինչ տանում է...

«Այդպես է,- մտածեց Վահրամ Ռշտունին,- շատ տարօրինակ է, բայց այդպես է: Երբ փոքր էի և հանկարծ մտածում էի, թե մի օր ծնողներս չեն լինելու, քիչ էր մնում խելագարվեմ: Որովհետև գիտեի. ապրել չեմ կարող առանց նրանց: Բայց ահա ապրում եմ, ապրում եմ, թեև վաղուց նրանք չկան, թեև չկան եղբայրներս, ընկերներիցս շատերը, թեև չկա Սոֆին... Մտածում էի, թե մի օր անգամ չեմ կարող ապրել առանց որդուս, հետո թոռնիկիս... Եվ այնուամենայնիվ ապրում եմ: Սա չի կարող մի ինչ-որ հասարակ բան լինել, չէ: Այստեղ մի շատ մեծ գաղտնիք կա, որ ես չեմ հասկանում և ոչ ոք չի հասկանում: Անհնարին է, որ մարդիկ հենց այնպես վերանան, չլինեն: Երևի ինչ-որ բան մնում է: Մնում են, չէ՞, հուշը, գործը, հետքերը, ձայները... Եվ դրանք էլ պահում են մարդկանց: Եվ դրանով էլ կապվում են հեռացածը, ներկան, եկողը և նորից հեռացածը, ներկան, եկողը... և այսպես անվերջ: Եվ դու մենակ չես: Ու հենց սա էլ է պահում: Ո՞վ է ինձ համար մատուցող Գարեգինը, եղևնիներ վաճառողը, պրոֆեսորը, հավաքարարուհին, այս պահակ Թադևոսը: Մարդիկ են: Եվ նրանք այսօր պահեցին ինձ, տարան իրենց հետ: Եվ բոլորը, որոնց չես ճանաչում, չես խոսել հետները, բայց կան, պահում են քեզ, տանում

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

են իրենց հետ՝ առօրյա մեծ ու փոքր գործերով, մեծ ու փոքր հոգսերով: Եվ դու էլ երևի նրանց ես պահում, նրանց ես տանում»:

... - Մեր գործն էլ սա է, Վահրա՛մ եղբայր,- ասաց պահակը:- Բայց հիմա մի բան պիտի խնդրեմ, չպիտի մերժես: Քանի որ գիշերը տասներկուսին մերոնց հետ տանը չեմ լինելու, կնիկս հաց-մացի հետ մի շիշ գինի էլ դրեց: Որ խմեմ ու իրենց հետ լինեմ, որ ասեմ՝ շնորհավոր Նոր տարի: Չէ՛, չէ՛, չպիտի մերժես: Կնեղանամ: Կմտածեմ, որ հասարակ մարդ եմ, դրա համար էլ ինձ հետ հաց չես կտրում:

Ռշտունին ծիծաղեց բարձրաձայն պահակի պարզ խորամանկության վրա և ձեռքը նրա ուսին դրեց: Թաթոսն անխոս ժպիտով բացեց փաթեթը, մեջտեղ դրեց մի քիչ միս, մի քիչ լոբի, մի քիչ թթու, երկու խնձոր: Բացեց գինին, լցրեց միակ բաժակն ու մեկնեց ուսուցչին:

- Խմի՛ր, եղբա՛յր, Նոր տարվա կենացը:

- Ո՛չ,- ասաց Ռշտունին:- Դեռ տասներկուսը չկա: Խմենք հին տարվա կենացը, հին տարիների կենացը:- Հանկարծ նա զգաց, որ կոկորդը սեղմվում է, և այլևս ոչինչ չասաց: Ձախ ձեռքով հանեց փափուկ, լայնեզր գլխարկը ու խմեց գինին դանդաղ, հետզհետե բարձրացնելով գլուխը, աչքերը միշտ հառած եղևնու փոքրիկ, թեքված ճյուղին:

- Անուշ լինի:

Նա նորից լցրեց բաժակը...

- Հիմա մերոնք արդեն հավաքվել են սեղանի մոտ: Տղաներիս գիտես, չէ՞, Վահրա՛մ եղբայր, պինդ տղաներ են, գոհություն աստծո: Աղջիկներս էլ՝ սիրուն, խոնարհ: Հիմա մեր տանը շատ լավ կլինի, Վահրա՛մ եղբայր:

Նա ինչ-որ բաներ մրմնջաց՝ հայացքը երկնքին, հետո միանգամից խմեց գինին, ու մնաց հպարտ, գոհ, ձգված դեմքով, աչքերը ինչ-որ տեղ հառած: Երևի իրենց տանն էր, կնոջ, տղաների, աղջիկների հետ: Եվ Վահրամ Ռշտունին չդիմացավ:

- Թադևո՛ս,- ասաց նա,- հիմա ե՛ս պիտի մի բան խնդրեմ ձեզնից:

- Ինձնի՞ց,- զարմացավ պահակը,- համարիր եղած:

- Ուրեմն, գնացե՛ք տուն: Դեռ ժամանակ կա: Գնացե՛ք, միասի՛ն եղեք:

- Է՛, չեղավ,- ծիծաղեց պահակը,- ես ի՞նչ իրավունք ունեմ կետս թողնելու: Մեր գործը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ձեր փոխարեն ես կմնամ,- ասաց Վահրամ Ռշտունին,- դուք էլ գիտեք, որ ինձ ոչ ոք չի սպասում, ինձ համար ոչ մի նշանակություն չունի: Որտեղ ես՝ այնտեղ էլ մերոնք: Շատ եմ խնդրում: Գնացե՛ք, շնորհավորե՛ք Նոր տարին ու եկե՛ք: Հա՞:

Պահակը հին հարևանին էր նայում զարմանքով, տարակուսած, նրա նուրբ, փափուկ լայնեզր գլխարկին էր նայում և սև փողկապին: Հետո ասաց գրեթե կակազելով.

- Այդպես ո՞նց կլինի:

- Ոչինչ էլ չի լինի, գնացե՛ք: Եթե չգնաք, կմտածեմ, թե ինձ չեք վստահում:

- Յա,- շփոթված ծիծաղեց Թաթոսը:- Չգիտեմ էլ, թե ինչ ասեմ:

Պահակը դոփդոփում էր տեղում, չիմանալով ինչ անել, հետո հանկարծ կանգ առավ, նայեց ծեր ուսուցչին.

- Դե լավ,- ասաց նա,- զարմանալի մարդ ես: Հիմա ես գնում եմ, շուտ կգամ ու մինչև առավոտ մենք իրար հետ կլինենք, հա՞:

- Իհարկե,- ասաց Վահրամ Ռշտունին:- Գնացե՛ք, եղբա՛յր:

Նա վերցրեց հրացանը և արագ-արագ գնաց, համարյա վազեց փողոցով, իսկ երբ իրենց մուտքին հասավ, կանգնեց ու ետ նայեց:

Բայց Վահրամ Ռշտունին այլևս չէր նայում: Նա նստել էր՝ կռացած կրակով լի դույլի վրա, ձեռքերով խառնում էր տաք օդը ու նայում էր կարճ ցանկապատին հենված եղևնու ճյուղին: Ու որովհետև կկոցել էր աչքերը՝ նրան թվում էր, թե դա մի եղևնի չէ, այլ շատ են, շատ-շատ: Եղևնիները հեռագրասյուների նման ուղիղ շարքով ձգվում-ձգվում, հեռուներն էին գնում՝ հետզհետե փոքրանալով, ու խաղում, պսպղում էին անթիվ-անհամար խաչերով, աստղերով, մոմերով, լապտերիկներով...

Եվ ձմեռային տաք օդը ձայներով լի էր:

1967թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իզաբել

Շառլ Ազնավուրին

-Ափսոս, որ խոսքերը չեմ հասկանում,- ասաց Լևոնը:

Ռաֆիկը ծիծաղեց միայն աչքերով.

- Չհասկանալու ի՞նչ կա,- ասաց նա,- մի քանի անգամ ու այն էլ շատ հստակ, մարդն ասում է. «Իզաբե՛լ, Իզաբե՛լ, Իզաբե՛լ»:

- Իզաբե՛լ,- կրկնեց Լևոնը՝ մի պահ ուշադիր դիտելով ընկերոջը, աշխատելով կռահել՝ կատակո՞ւմ է, թե՝ ոչ,- Իզաբե՛լ: Դա հասկանում եմ: Իսկ հետո՞...

- Իսկ հետո ի՞նչ կուզեիր, որ լիներ:

- Կուզեի հասկանալ մնացած խոսքերը, չէ՞ որ նա ինչ-որ բան է ասում:

- Նա ասում է Իզաբել: Մի՞թե դա քիչ է:

- Դե, գիտե՞ս ինչ,- բարկացավ Լևոնը,- թե կատակում ես, ասա՛, տասը տարվա ընկերներ ենք ու մինչև հիմա էլ չեմ կարողանում որոշել՝ կատակում ես, թե ոչ: Ուրեմն էլ ինչո՞ւ են երգերի համար խոսքեր գրում:

- Այ, այդ մեկը չգիտեմ,- քմծիծաղեց Ռաֆիկը,- ազնիվ խոսք՝ չգիտեմ, թե ինչու են գրում: Ես, օրինակ, խոսքերի կարիքը չեմ զգում: Ու հավատա՛, ավելի շատ այն երգերն եմ սիրում, որ կամ խոսքեր չունեն, կամ էլ երբ խոսքերը չեմ հասկանում:

- Ստում ես,- բարկացավ Լևոնը,- նորություն չէ, ուզում ես ամեն ինչում ինքնատիպ երևալ: Եթե ես ասեի՝ խոսքերը պետք չեն, դու կապացուցեիր, որ առանց խոսքերի երգն անմտություն է: Դու միշտ այդպես ես:

- Չէ՛,- Ռաֆիկն այս անգամ կամացուկ ծիծաղեց:- Դու ինձ խառնում ես մեր հին դասախոսի հետ: Նա ասում էր, թե ինքը շատ սկզբունքային մարդ է, ասում էր, որ եթե ատրճանակ էլ պահեն իր կրծքին, առանց աչքերը թարթելու կպնդի, որ «Քառսը» Շիրվանզադեն է գրել և ոչ թե մի այլ գրող: Դա նրա խորին համոզմունքն էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լևոնը չկարողացավ չծիծաղել, բայց նա ուզում էր շարունակել խոսակցությունը, այդ պատճառով էլ բարձրացրեց ձեռքը՝ ընկերոջ ուշադրությունը գրավելու համար: Սակայն արժանացավ մատուցողուհու ուշադրությանը:

- Շամպա՞յն,- հարցրեց նա՝ արագորեն մոտենալով:

Լևոնը զարմացած նայեց ջահել, շիկահեր աղջկան, հետո՝ վեր տնկված իր ձեռքին ու ժպտաց.

- Իհարկե,- ասաց նա,- իհարկե, շամպայն:

Խմեցին լուռ - բարակ բաժակները խուլ զնգոցով խփելով իրար: Մինչ այդ Ռաֆիկը առաջարկեց.

- Դե, մի բա՛ն ասա, խմենք, Լևո՛ն:

- Ի՞նչ ասեմ,- մտածեց Լևոնը,- պարզ է, էլի:

- Դե որ պարզ է, խմենք,- ասաց Ռաֆիկը:

Ու խմեցին լուռ՝ բարակ բաժակները խուլ զնգոցով խփելով իրար:

- Իսկ ի՞նչն էր պարզ,- հարցրեց Ռաֆիկը՝ բաժակը քիչ հեռու տանելով,- ես որտեղի՞ց իմանամ, թե ի՞նչ պիտի ասեիր: Չէ, չէ, սպասի՛ր: Հարցը հո միայն «ողջ լինենքը» չէ: Ես չեմ խոսում, բայց դու արդեն կռահում ես, թե ինչ կարող էի ասել, այնպես չէ՞: Դու ըստ քո տրամադրության ենթադրում ես իմ ասելիքը, չէ՞: Այ, ես երգն էլ հենց այդպես եմ հասկանում,առանց խոսքերի: Ես գիտեմ, թե հիմա ինչ է ասում ինձ: Վաղը այս երգը ուրիշ տեղ, ուրիշի կատարմամբ, կամ հենց նույնի կատարմամբ, սակայն իմ այլ տրամադրության դեպքում, ինձ բոլորովին ուրիշ բան կասի: Նա այլևս այսպես չի ասի՝ «Իզաբե՛լ». նա պարզապես կասի՝ «Իզաբե՞լ»: Գուցե ես բոլորովին ուրիշ նվագ լսեմ, առանց խոսքերի, սակայն ինձ կթվա, թե նա ասում է «Իզաբե՛լ»: Հայրս մի հին ընկեր ուներ: Երեսուներկու տարի միասին էին աշխատել. հայրս դարբին էր, իսկ նա մուրճ էր խփում: Տրամվայ նստելու փոխարեն հայրս ամեն օր մի մեծ շրջան էր գծում, որպեսզի իր ընկերոջ տան մոտով անցնի ու նրա հետ միասին ոտքով գնա գործարան:

«Քեզ չես ափսոսում,- ասում էր մայրս,- տրամվա՛յ նստիր, էլի»:

«Ընկերոջ հետ լավ է,- ասում էր հայրս,- զրույց անելով գնում ենք»:

Մի քանի անգամ ես նույն ճանապարհով հորս հետ գործարան եմ գնացել: Ամբողջ ճանապարհին նրանք ոչ մի բառ չէին փոխանակում: Միայն երբեմն-երբեմն նայում էին իրար: Այդքանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դա բոլորովին ուրիշ բան է,- ասաց Լևոնը:

- Նույնն է,- պնդեց Ռաֆիկը:- Մենք մի հին ձայնապնակ ունեինք: Փոքր ժամանակ պատեֆոնը միացնում, ամեն օր լսում էի այդ երգը: Տխուր երգ էր, անհասկանալի լեզվով, լսելիս ամեն անգամ բանակում զոհված եղբորս էի հիշում ու լաց էի լինում՝ նայելով սև ժապավենով երիզված, պատից կախված նրա նկարին: Ինձ թվում էր, թե եղբայրս է երգել այդ երգը՝ անտառի մեջ միայնակ, անընկեր, վիրավոր ընկած: Հետո մի անգամ հայրս ինձ թարգմանեց այդ երգի խոսքերը: Պարզվեց, որ ուրախ երգ է: Մարդիկ բամբակ են հավաքում ու հրճվում, որ առատ է բերքը: Եվ ի՞նչ, կարծում ես հիասթափվեցի՞: Չէ: Մի քանի շաբաթ չէի միացնում պատեֆոնը: Իսկ հետո, երբ մի օր լսեցի ուրիշի տանը, ես կրկին եղբորս հիշեցի ու լաց եղա և մտածեցի, որ կամ սխալմամբ ուրիշ բառեր են դրել երաժշտության մեջ, կամ իմ հայրը ճիշտ չի հասկացել այդ երգի խոսքերը: Տխուր երգ էր դա:

Նրա աչքերը հանկարծ փայլեցին խոնավությունից, ու Լևոնը նրանից հեռացրեց հայացքը: Սրճարանում կիսախավար էր ու ծուխ: Նվագախումբը ինչ-որ դանդաղ պար էր նվագում: Սրահի հենց մեջտեղում նվաղուն օրորվում էին մարդիկ: Անկյունի սեղանից ջահել մի տղա մերթընդմերթ երկարում էր գլուխը ու խնդրում բարձրաձայն. «Իզաբե՛լ»:

- Աչքերդ մի՛ փախցրու, հարբած եմ,- հայտարարեց Ռաֆիկը,- հարբած եմ, բայց ճիշտ եմ ասում, և դու էլ գիտես, որ ճիշտ եմ ասում:

- Հարբած չես, սենտիմենտալ ես,- ժպտաց Լևոնը,- աշխատանքային հիվանդություն է, բոլոր դատախազներն էլ ի վերջո սենտիմենտալ են դառնում: Արտաքին խստությանը նյարդերը չեն դիմանում, ախպե՛ր:

- Փչում ես,- առաջ թեքվեց Ռաֆիկը, բայց նախքան շարունակելը, մի քիչ շամպայն խմեց - մատների մեջ պտտեցնելով բաժակը,- փչում ես: Եթե ճիշտը կուզես իմանալ, սենտիմենտալը հենց ինքդ ես: Սպասի՛ր: Ինչո՞ւ ես ամեն անգամ լցնում այս երրորդ բաժակը: Հը՞:

Նրանք նայեցին ազատ աթոռի առջև դրված բաժակին, որի մեջ շամպայնը շարունակում էր մանրիկ եռալ: Փոքրիկ պղպջակները պոկվում էին հատակից, սրընթաց վեր բարձրանում մարգարտաշար դարձած ու պայթում բաժակի դեղնավուն մակերեսին: Նրանք մի պահ լուռ դիտում էին պղպջակների խաղը՝ փորձանոթին դողով հետևող ալքիմիկոսների պես, որ հրաշքի են սպասում: Բայց հրաշք չկար: Երրորդ բաժակը միշտ լի էր, սկսած այն պահից, երբ նրանք սեղան նստեցին և սկսած այն ժամանակներից, երբ նրանք այս սրճարանը մտան մի-այն երկուսով: Երրորդը չկար, երրորդը այլևս երբեք չէր բարձրացնելու իր բաժակը:

*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

* *

Նրանք ջահել չէին արդեն: Նրանցից յուրաքանչյուրը մոտ քառասուն տարեկան էր: Այդ տարիքում սովորաբար նոր ընկերներ չեն փնտրում ու նույնիսկ խուսափում են ծանոթություններից: Այդ տարիքում սովորաբար գերադասում են լռել ընկերոջ հետ, քան նոր զրուցակից գտնել: Երկու տարի առաջ նրանց երրորդ ընկերը ավտոաղետի էր ենթարկվել: Երկրաբան էր: Մի խենթ, պայծառ, հրաշալի տղա: Ալավերդու լեռներում էր աշխատում և այնտեղ էլ ապրում էր ընտանիքով: Ամիսը միայն մի անգամ էր կարողանում Երևան գալ - ընկերներին հանդիպելու: Այդ օրը ընկերների տներում ասում էին՝ «Սերգեյի օրն է»: Այդ օրը կանայք չէին տրտնջում, որ ամուսիններն առանց իրենց են տնից դուրս գալիս: Շրջում էին քաղաքում, խոսում ու լռում էին, լռում ու խոսում էին և առանց պայմանավորվելու մտնում «Գռունկ»: Նստում էին անկյունում, պատուհանի տակ և ուրախանում էին աղմուկով: Ուրախանում էին ամեն ինչով: Կենացներ էին ասում վայրիվերո: Ընկերության կենացը, շամպայնի տվյալ շիշը մշակողի կենացը, մատուցողուհու կենացը, փողոցով անցնող այ այն զույգի կենացը, պատուհանի ապակու կենացը, որի միջով երևում են նրանք, Իզաբելի կենացը և կենացը նաև այն հայազգի երգչի, որ հեռու հեռվում տառապանքով կանչում է նրան. «Իզաբե՛լ, Իզաբե՛լ, Իզաբե՛լ»:

Մի օր, «Սերգեյի օրը» նրանք երկար սպասեցին իրենց ընկերոջը փոքրիկ հրապարակում: Չեկավ: Դա անլուր բան էր: Եվ նրանք որոշեցին սպասել: Նույնիսկ այն ժամանակ, երբ Ռաֆիկի կինը հասավ նրանց ու խեղդվելով հայտնեց, որ Սերգեյը ծանր վիրավոր պառկած է հիվանդանոցում, նրանք դա մի պահ ընդունեցին, որպես օտարի մասին հայտնված մի լուր և ուզում էին էլի սպասել իրենց ընկերոջը՝ փոքրիկ հրապարակում:

Հիվանդանոց չէին թողնում, և Ռաֆիկը ցույց տվեց դատախազի իր զրքույկը: Սերգեյը պառկած էր պատգարակին: Բժիշկը չէր թողել, որ նրան մահճակալին փոխադրեն: Սպասում էին, որ մեռնի: Երևում էին միայն աչքերն ու բերանը: Լևոնը շրջվեց, հենվեց դռանը ու տնքաց ահավոր վշտից: Ռաֆիկը մեռնողներ շատ էր տեսել, նա նայում էր Սերգեյի փակ աչքերին ու ձեռքով սրբում էր արցունքները: Նրանց ոչ ոք չէր խանգարում: Բժիշկները գնացել էին այնտեղ, որտեղ պետք էին: Ծեր մի մայրապետ էր միայն ննջում պատուհանի տակ: Արևը ընկել էր նրա գլխին, ու նա իր բեկված մարմնով՝ մութ խորանում աղոթողի էր նմանվել:?Հետո Լևոնը հանկարծ նկատեց, որ վիրավորի կոպերը դողում են ու կիսաձայն շարժվում են շրթունքները:

- Ի՞նչ, ի՞նչ Սերգե՛յ ջան,- թեքվեց նա պատգարակին:

- Հիմար մի՛ եղեք,- ասաց Սերգեյը,- գնացե՛ք:

- Ո՞ւր, ո՞ւր,- կռացավ Ռաֆիկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- «Կռունկ», դմբո,- ասաց Սերգեյը,- խմեք իմ կենացը: Ես շատ եմ հոգնած, ես ուզում եմ քնել:

*

* *

- Այստեղ ոչ մի սենտիմենտալություն չկա,- ասաց Լևոնը,- ուղղակի սովորություն է: Ես տեսել եմ, թե ինչպես են ուրիշներն անում, նրանք էլ երևի ուրիշներին են տեսել: Հնուց եկած սովորություն է: Ի՞նչ սենտիմենտալ: Գիտե՞ս, թե ինչու եմ գժվում: Որ Սերգեյը չկա ու էլ երբեք չի լինելու: Հասկանո՞ւմ ես, ամեն ինչ կա, ամեն ինչ մնում է՝ մարդուց բացի: Չէ, ինձնից ի՞նչ փիլիսոփա, անկեղծորեն կնեղանամ: Ախր ինչո՞ւ մարդը չի մնում, իսկ նրա գրիչը մնում է ու հազար տարի հետո ասում են, թե տեսեք, սա այն մարդու գրիչն է: Ինչո՞ւ քարը մնում է, կոճակը մնում է, գիրքը մնում է, կոշիկը մնում է, ամեն մի աղբ մնում է, իսկ... Է՛:

- Ուզո՞ւմ ես բացատրեմ,- ժպտաց Ռաֆիկը:

- Դե՛, վերջ տուր,- բարկացավ Լևոնը,- ես քեզնից լավ գիտեմ, թե ինչու:

- Բա էլ ինչո՞ւ ես հարցնում,- ծիծաղեց Ռաֆիկը:

- Քեզ չեմ հարցնում,- ասաց Լևոնը:

Հետո նրանք երկար լռեցին:

- Այնուամենայնիվ դու իրավացի ես,- ասաց Ռաֆիկը,- դա բոլորն էլ հարցնում են, բայց սովորաբար ոչ բարձրաձայն: Բարձրաձայն ուրիշ հարցեր են տալիս: Աշխարհում շատ հարցեր կան, ու մարդիկ տալիս են բոլոր հարցերը, որպեսզի այդ միակ հարցը չտան: Ու ճիշտ են անում:

Նրանց կողքով մի ջահել աղջիկ անցավ՝ հպարտ ուսերը ճոճելով, գլուխը բարձր բռնած, անցավ՝ ոչ ոքի չտեսնելով, իրենով հմայված: Եթե մարդկանց աչքերից լույս ցայտեր, նա կնմանվեր բեմում քայլող դերասանուհու՝ լուսարձակներով ողողված:

- Մի՛ նայիր,- ասաց Ռաֆիկը:

Լևոնը զարմացավ.

- Ինչո՞ւ:

- Ի՞նչ միտք ունի,- ասաց Ռաֆիկը,- երբ գիրքը մնում է, կոճակը մնում է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լևոնը ծիծաղեց, մեկնեց ձեռքը, խփեց Ռաֆիկի պարզած ափին, ու նրանք խմեցին այդ աղջկա կենացը, «Կռունկի» տանիքը պահող երկաթբետոնե սյուների կենացը՝ առանձին-առանձին:

Ինչպես միշտ՝ ոտքով գնացին կենտրոնական փոստատուն: Ռաֆիկը մի անդորրագիր վերցրեց պատուհանի ետև նստած նիհար ծերունուց, դրեց հենատախտակին ու լրացրեց՝ «Ալավերդի, երկրաբանական ավան, Սեդա Օլթեցյանին»:

- Տո՛ւր,- ասաց նա Լևոնին:

Լևոնը գրպանից հանեց կարմիր թղթադրամը, դրեց ընկերոջ առջև: Ռաֆիկը լրացրեց գումարը ու ձեռքը ներս տարավ փոքրիկ պատուհանից:

- Վաղը պիտի բերեիք,- ասաց ծերունին:

Երկու տարի, ամեն ամսվա նույն օրը, նա որոշ գումար էր փոխանցում Ալավերդու երկրաբանական ավան, մի կնոջ, որի անունը Սեդա Օլթեցյան էր:

- Կներեք,- ծիծաղեց Լևոնը,- այսպես ստացվեց:

Ծերունին մեքենայի տակ կնքեց անդորրագիրը, պոկեց կտրոնը, կրկին զննեց ու ձեռքը երկարեց դեպի պատուհանը: Բայց նախքան հանձնելը, հազաց.

- Տղե՛րք,- ասաց նա,- երեսունչորս տարի այստեղ եմ աշխատում, այս նույն աթոռին: Առաջ ձեռքի կնիք ունի, հիմա մեքենա է: Ըհը՛: Երեսունչորս տարի դրամական փոխադրումներ եմ կատարում: Միլիարդներ են ձեռքովս անցել: Իհարկե,- երկարացրեց նա հպարտ:- Հենց մարդու երեսին նայեմ, կիմանամ, թե ինչ փող է ուղարկում: Հաստատ: Բայց ձեզնից գլուխ չհանեցի: Ինձ միայն մի բան ասեք, Սեդա Օլթեցյանը հո ձեր ընկերոջ կինը չէ:

- Ընկերոջ կինն է,- զարմացած հաստատեց Լևոնը:

- Ձեր ընկերն ուրեմն չկա՞:

- Չէ՛,- ասաց Ռաֆիկը,- չկա:

Ծերունին հաղթականորեն հազաց.

- Հա՛,- ասաց նա,- այդպես էլ գիտեի:

Փոքրիկ հրապարակում կանգ առան: Պիտի բաժանվեին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բայց և այնպես զարմանալի էր, չէ՞,- ասաց Լևոնը,- ծերուկը ո՞նց իմացավ, որ մենք դրամը ոչ թե ուրիշ որևէ մեկի, այլ հենց մեր ընկերոջ կնոջն ենք ուղարկում:

- Զարմանալու բան չկա,- ասաց Ռաֆիկը:

- Դարձյա՞լ սկսեցիր,- ծիծաղեց Լևոնը,- ուրեմն որտեղի՞ց իմացավ: Գուցե այստե՞ղ էլ... Իզաբել...

- Ամեն տեղ,- ասաց Ռաֆիկը,- առանց դրա չի լինի, անհնար է, խոսքերը կվերջանային: Մի՛ ծիծաղիր, ախպե՛ր ս, աշխարհում ամեն մարդ իր ձևով է ասում «Իզաբել»: Աշխարհում ամեն մարդ իր «Իզաբելն» ունի:

1962թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բարեւ, եղբայր

Հիվանդացել էի: Անտանելի ցավում էր գլուխս: Բժիշկը հիվանդաթերթիկ գրեց, մնացի տանը, բայց դրանից գլխացավս ավելի ուժեղացավ: Ամեն ինչ նյարդայնացնում էր ինձ. տնեցիների ցուցադրական հոգատարությունը, հարևանի երեխայի դաշնամուրային վարժությունները, բակում նարդի խաղացող թոշակառուների անմիտ ճիչերն ու զառերի չխկոցը, հեռուստատեսային անվերջանալի հաղորդումները՝ հասցեագրված դիմորդներին... «Անգլերենը բոլորի համար», «Ֆիզիկան բոլորի համար»...

Ինչպես գրողները կնկարագրեին, վանդակն ընկած առյուծի նման երկու օր սենյակի մի պատից մյուսն էի նետվում՝ մռնչյունով դիմավորելով յուրաքանչյուր այցելուի:

Երրորդ օրն առավոտյան ինձ բուժելու բոլոր հնարավոր միջոցները ապարդյուն փորձելուց հետո, կինս ասաց.

— Վեր կաց, վեր կաց, գնա Թբիլիսի:

— Թբիլիսի՞,— զարմացա ես:— Թբիլիսիո՞ւմ ինչ կա:

Եվ միաժամանակ զգացի, որ գլխիս ցավը կարծես թե մեղմանում է:

...

Երբ գնացքը կանգ առավ, համարյա թե լուսանում էր: Վագոնի լուսամուտից տեսա, որ Ջուրաբը մենակ է կառամատույցում և ժպտացի: Նա էլ ինձ տեսավ, ժպտաց, ձեռքով արեց: Հենց որ գրկեցի նրան, ամեն անգամվա պես սիրտս ուռավ մի տեսակ:

— Բարև, ախպե՛ր,— ասացի ես վրացերեն:

— Ո՞նց ես, ո՞նց,— հարցրեց նա հայերեն:— Լա՞վ ես:

Ու երկուսս էլ ծիծաղեցինք: Ծիծաղեց նաև փայտե ցախավելով կառամատույցի փոշին բարձրացնող երկար բեղերով ծերունին: Ո՞վ գիտե, գուցե վաղուց ճանաչում էր մեզ, կամ գուցե իսկապես ծիծաղելի էր տեսնելը, թե տարեց, ալեհեր մարդիկ ինչպես են գրկել իրար ու պտտվում երեխաների նման:

— Գնացինք տուն,— թևանցուկ արեց ինձ Ջուրաբը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Բա եղա՞վ,— առարկեցի ես,— իրեն հարգող մարդը այս ժամին ընկերոջ տուն կմտնի՞, երեխաներին քնահարա՞մ կանի:

— Իսկ իրեն հարգող գնացքը ինչո՞ւ է այս ժամին ուրիշ քաղաք մտնում,— ծիծաղեց Զուրաբը:

— Սա ձեր գնացքն է,— ասացի ես,— երբ ուզի՝ տուն կվերադառնա: Իսկ մերը հյուրի նման համեստորեն երկու–երեք ժամից հետո տեղ կհասնի: Այդ ես էի անհամբեր:

— Ուրեմն մնաց Սանդրոն,— ասաց Զուրաբը:

— Ի՞նչ է անում, ո՞նց է,— հարցրեցի ես:

— Իրեն կհարցնես:

Մենք անշտապ քայլեցինք սալահատակ փողոցով, մի ժամանակ իրենցով հիացած երկհարկանի զարդանախշ տների արանքով, քաղցր քնից նոր–նոր արթնացող, ճմլկոտացող փայտե պատշգամբների կողքով և իջանք անկյունի շենքի ներքնահարկը, որի կաղնե դռանը ձեռագրով գրված էր վրացերեն՝ «Բարի լույս», իսկ ռուսերեն տեքստը բավականին պատկառելի բովանդակություն ուներ «Թբիլիսիի առևտրի վարչության Շահումյանի շրջանի ճաշարանների և խորտկարանների 6–րդ միավորման № 181 կետ»:

Չորս–հինգ սեղան հազիվ էին տեղավորվում փոքրիկ սրահում: Վաճառասեղանի ետևում հազիվ էր տեղավորված նաև № 181–կետի տնօրենը՝ Աանդրո Մաճավարիանին: Նա իր հսկայական մարմինը թեթևորեն, սակայն մեծ արժանապատվությամբ ընդառաջ բերեց մեզ, գրկեց, համբուրեց եղբոր նման, արջի թաթերով քնքշորեն տեղահան արեց ոսկորներս, նորից տեղը գցեց ու որոտաց.

— Հա, ես էլ հենց նոր նստած էդ մասին էի մտածում: Վերջն ի՞նչ է ստացվում. ես վրացի՞ եմ, թե հայ:

Քսանութ տարի շարունակ նա տալիս էր մեզ նույն հարցը և ստանում միշտ տարբեր պատասխաններ: Նայած մեր տրամադրությանը: Մեկ համոզում էինք, թե հայ է, մեկ էլ տաք-տաք ապացուցում, որ վրացի կլինի: Այսինքն, անկեղծորեն ասած, դժվար էլ է որոշակի պատասխան տալը, որովհետև Սանդրոյի պապը վրացի է եղել, իսկ տատը՝ հայ: Հետո քաղաքացիական կռիվների ժամանակ ջահել-ջահել զոհվել է պապը, և տատը ամուսնացել է Քոլոզյան ազգանունով մի հայի հետ, որը կնոջ մահից հետո որդեգրել է Սանդրոյի հորը, պահել հարազատ որդու պես ու տվել նրան իր ազգանունը: Իլյա Քոլոզյանը ևս իր Մաճավարիանի հոր ճանապարհով գնալով ամուսնացել է մի Քնարիկ անունով հայ աղջկա հետ և ունեցել տասը երեխա, ութը տղա և երկու աղջիկ: Վերջին երեխան Սանդրոն էր: Եվ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հենց այստեղ Իլյա Քոլոզյանի խիղճը տանջել է: Էդ ո՞նց կլինի, մտածել է նա, որ իմ հեղափոխական վրացի հոր անուն–ազգանունը լիովին ջնջվի: Եվ պահանջել է, որ Սանդրո դնեն իր վերջին զավակի անունը և ազգանունն էլ հոր ազգանունը դնեն՝ Մաճավարիանի:

Եվ հիմա ինը Քոլոզյան քույր–եղբայրների կրտսեր եղբայր Սանդրո Մաճավարիանին արագ–արագ ծանրաբեռնելով սեղանն ու բաժակները թեյ լցնելով, կապույտ, տխուր աչքերը մեզ հառած, հարցնում է արդեն որերորդ անգամ.

— Հիմա ի՞նչ եք ասում՝ ես վրացի եմ, թե՝ հայ...

— Դու,— ասաց Զուրաբ Չիլավան,— դու իսկական Թիֆլիսեցի ես, Սանդրո: Եվ երանի քեզ, որ քեզ համար միակ ցավն այս աշխարհում քո ազգային պատկանելությունը ճշտելն է մնացել:

Ես ծիծաղեցի, իսկ Սանդրոն տխուր–տխուր մեզ նայեց ու հառաչեց.

— Է՛, վերջնականապես ձեռքից գնացել եք, հարգելի Զուրաբ և հարգելի Առաքել... Ամեն ինչի հետ համաձայն եք... Էդ ո՞նց միանգամից ծերացաք, ա՛յ ես ձեր ցավը տանեմ, էն ե՞րբ էր, որ տապակած ճուտը մրսում էր...

Մենք քրքջացինք, բռունցքներով խփեցինք Սանդրոյի թիկունքին, քսանութ տարով ետ գնացինք, ջահելացանք միանգամից...

...

Մենք ծանոթացանք որովհետև Երևանն ու Թբիլիսին եղբայր քաղաքներ էին դարձել: Ես «Երեկոյան Երևան» թերթում էի աշխատում: Մի օր խմբագիրը կանչեց ինձ, թե.

— Գիշերվա գնացքով մեկնիր Թբիլիսի: Մի լավ էջ պատրաստիր՝ «Թբիլիսին այսօր»:

Վերադարձա բաժին, որ հավաքեմ թղթերս, տեսնեմ ինձ է սպասում գրեթե իմ տարիքի, առատ մազերով, խոշոր, թաց աչքերով ու թավ բեղերով մի երիտասարդ:

— Ծանոթանանք,— ասաց նա:— Զուրաբ Չիլավա: «Երեկոյան Թբիլիսի» թերթի խմբագրությունից եմ: Խնդրում եմ օգնեք: Ինձ հանձնարարել են էջ պատրաստել «Երևանն այսօր» թեմայով:

— Պայմանով, որ վաղն էլ դուք ինձ օգնեք,— ծիծաղեցի ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մենք ընկերացանք: Զարմանալի տղա էր Զուրաբը: Իսկական վրացի, սրտաբաց, ուրախ, կարեկից, շռայլ, խենթ… Նրա համար աշխարհում վատ մարդ գոյություն չուներ. ամեն մեկի մեջ էլ նա գտնում, ընդգծում էր լավը:

— Մեծ խելք ունի,— ասում էր մեկի մասին:

— Հոյակապ հայր է:

— Ընկերոջ համար կյանքը կտա:

— Որ իմանաս ինչ քնքշությամբ է խնամում հիվանդ մորը:

Թբիլիսիից վերադառնալուց հետո մեկ էլ զգացի, որ կարոտում եմ Զուրաբին: Կարոտում եմ ոնց որ եղբորս: Ուզում եմ տեսնել: Եվ սկզբում, երբ սովորություն չունեինք իրար տեղեկացնել, թե գալիս ենք, երկու անգամ բավական ծիծաղելի բան ստացվեց: Ես գնում էի Թբիլիսի՝ սրտատրոփ սպասելով, թե ուր որ է տեսնելու եմ Զուրաբին, բայց պարզվում էր, որ Զուրաբն էլ Երևան է մեկնել՝ ինձ տեսնելու: Եվ երկուսիս հետ էլ կատարվում էր նույնը, իմ ընկերները ամուր բռնում էին Զուրաբին, թե սպասիր, Առաքելն ուր որ է ետ կգա: Զուրաբի ընկերներն էլ ինձ բաց չէին թողնում:

— Տարրական տրամաբանություն է,— ասում էին նրանք, — Զուրաբը, որ իմանա դու Թբիլիսիում ես, ինչո՞ւ պիտի մնա, անմիջապես ետ կդառնա, պարզ չէ՞: Գնանք մի տեղ մի քիչ նստենք, մինչև որ գա… Նա մեզ կգտնի…

Խրատվեցինք, դրանից հետո զանգահարում կամ հեռագրում էինք իրար:

Զուրաբի միջոցով, Զուրաբի աչքերով ես ճանաչեցի Թբիլիսին: Նա ամեն անգամ կարողանում էր մի նոր Թբիլիսի ցույց տալ ինձ, որի կողքով անցել էի, բայց չէի տեսել: Մենք քայլում էինք հին Թիֆլիսի նեղ փողոցներով, մտնում էինք վանքերը, հիմա թող ծիծաղելի չթվա, այնուամենայնիվ զգուշությամբ մեր շուրջը նայելով, մոմ էինք վառում ու ակնածանքով համբուրում հավատից ու աղոթողների տաք շնչից սևացած քարերը: Հետո դուրս էինք գալիս մաքրված, իջնում Քոռի ափը, հոսում գետի հետ՝ մեր գլխին կախված ցուպավոր ամեհի տների տակով ու քայլում էինք, քայլում, քայլում… Տե՛ր աստված, այդ ինչի՞ց էր, որ հոգնել չգիտեին մեր ոտքերը: Իսկ վերջում Զուրաբն ինձ որևէ դուքան էր տանում, փոքրիկ, աննկատ մի խորտկարան, որ մենք անվանում էինք «Վայդուքան»: Ոչ թե ծաղրելու համար, ոչ թե այն պատճառով, որ վատն էր, չէ՛, այլ որովհետև դրսից գրեթե չէր երևում: Անցնում էինք որևէ շենքի կողքով, ու մեկ էլ Զուրաբը բացականչում էր.

— Վա՛յ, դուքան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու ես իսկապես տեսնում էի, որ ճիշտ մեր ոտքերի տակ, քարե սանդուղքն իջնում է, իջնում ու դեմ առնում փայտե կոշտ տախտակներից սարքված մի դռան, որի վրա ծուռտիկ–մուռտիկ գունավոր թասեր են նկարված ու խորովածի շամփուրներ։

— Վա՛յ, դուքան,— ծիծաղում էի ես։

Մենք մտնում էինք քարե պատերով նկուղը, որտեղ ամռան ամենաշոգին անգամ զով էր, մի անկյուն էինք ճարում, որտեղից ավելի լավ երևային պատերին արված սրտաշարժության աստիճանի պարզունակ ու հանճարեղ նկարները, որ ո՞վ գիտե գուցե թե մեծ Փիրոսմանին էր նկարել, կամ նրա աշակերտներից մեկը, գինի էինք խմում, խինկալի ուտում ու լսում, թե ինչպես են անկյունում հավաքված ծերունիները կերկերուն ձայներով զարմանալի տխուր ու զարմանալի համերաշխ իրենց մանկության երգերը երգում։

Հենց այդպիսի մի դուքանում էր, որ առաջին անգամ հանդիպեցինք Սանդրոյին՝ բուֆետապանին։

— Տղե՛րք,— ասաց նա,— եթե գաղտնիք չունեք, ես էլ ձեր կողքին նստեմ։ Դուք ինձ դուր եկաք։ Հետո, ձեր ցավը տանեմ, խնդրում եմ ամեն օր եկեք ինձ մոտ... կերեք, խմեք... իմ հաշվին, հա՛...

— Շատ թանկ չի՞ նստի,— ծիծաղեց Զուրաբը։

— Չէ՛ ախպեր ջան,— ասաց Սանդրոն լրջորեն,— ամեն ինչ հաշվված է... Աննման ռեկլամ եք, է՛... Տեսեք, տեսեք, բոլորն էլ ձեզ են նայում...

Իսկապես, արդեն տաքացել էր դուքանը։

— Մի բան էլ հարցնեմ, չնեղանաք,— ասաց Սանդրոն,— էդ ինչի՞ եք ռուսերեն խոսում։

Զուրաբը ծիծաղեց.

— Բա ի՞նչ լեզվով խոսենք, իմ ընկերը հայ է, Երևանից է։

— Ոնց թե հայ է,— զարմացավ Սանդրոն լրիվ վրացերեն է խմում։ Ուրեմն հայ ես, հա՞, ախպեր ջան,— հայերեն հետաքրքրվեց Սանդրոն, մտածեց, մտածեց ու... հա՛, հա՛, հենց այդ օրն էր, որ հարցրեց առաջին անգամ.

— Դե հիմա իմ կյանքը լսեք ու որոշեք՝ ես ո՞վ եմ։ Հա՞յ եմ, թե՞ վրացի։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երգելով, աղմուկ–աղաղակով մի զվարթ խումբ էլ ներս մտավ: Սանդրոն ոտքի կանգնեց, սիրալիր դիմավորեց նոր հաճախորդներին, ազատ սեղան ցույց տվեց, բայց նրանց առաջնորդն արդեն գրկել էր Զուբարին.

— Զուրիկո, ախպերս...

Նա ինչ–որ բան ասաց իր մայրենի լեզվով, և նրա հետ եկած տղաները հերթով գրկեցին ու համբուրեցին Զուրաբին: Հետո Զուրաբն ինչ–որ բան ասաց, ու նույն տղաները հերթով ինձ գրկեցին ու համբուրեցին: Եվ տեղավորվեցին մեր սեղանի շուրջը: Թե ոնց տեղավորվեցին՝ ապշել կարելի էր: Մենք նստել էինք ամուր գրկած իրար, գինի էինք խմում ու երգում էինք վրացերեն: Ու ես էլ բոլորի հետ... Ու ինձ թվում էր, թե դրանք մորիցս լսած, հին ու հարազատ երգեր են... Թե ես բոլոր եղանակները գիտեմ, միայն թե, չգիտեմ ինչու, խոսքերն եմ մոռացել:

Մենք շատ ջահել էինք ու անփորձ: Մեր այն տարիքն էր, երբ համոզված էինք, թե մեր կարդացած գիրքը ամենահավաստին է, և մեր սիրած աղջիկը ամենագեղեցիկը: Եվ դա էր պատճառը երևի, որ շուտով հիմար ու անվերջանալի մի վեճ սկսվեց իմ ու իմ վրացի սեղանակիցների միջև, մոտավորապես այն տրամաբանությամբ, թե ո՞ր քարն է ավելի հին՝ հայկակա՞նը, թե վրացականը:

Մենք կռվում էինք տաքացած, հեգնում էինք իրար ու ծիծաղում էինք կեղծ, անապացուցելի փաստեր էինք հորինում և կատաղի հայացքներ նետում միմյանց, իբրև ազգերի արտակարգ և լիազոր դեսպաններ բողոքի նոտաներ էինք ներկայացնում իրար և հանդես գալիս հայտարարություններով, ու ամեն մեկիս թվում էր, որ եթե հարմար պատասխան չգտնենք անլուր մեղադրանքները հերքելու համար, մեր ազգը անդառնալիորեն կկորչի:

Սանդրոյի վիճակը թերևս ամենատխուրն էր. նա մեկ իրեն հայ էր զգում ու անցնում իմ կողմը, մեկ էլ իր հեղափոխական վրացի պապին էր հիշում և մարտնչում էր իմ դեմ: Ի վերջո դրությունից դուրս գալու համար, նա թափ տվեց ձեռքը, անհետացավ մի քանի րոպեով, իսկ երբ հայտնվեց՝ ձեռքին բռնած ուներ հսկայական մի տապակարան, որի մեջ դեռևս եռում, թշշում էին ճտերը:

— Մի տեսեք ի՛նչ եմ բերել, մի տեսե՛ք,— կեղծ աշխույժով բղավեց նա՝ տապակարանը տեղավորելով սեղանի կենտրոնում:

Բայց մենք չնայեցինք էլ նրա բերած ճտերին: Մենք ազգային հարցեր էինք լուծում:

Եվ հանկարծ Սանդրոն ասաց տխրամած ձայնով.

— Ախր կերեք, ա՛յ ձեր ցավը տանեմ, թե չէ հրես ճտերը կմրսեն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա ուզում էր ասել՝ կսառչեն, բայց որովհետև շատ էր հուզված, որովհետև որպես իսկական տանտեր իրեն պատասխանատու էր զգում բոլորի տրամադրության համար, շփոթվեց, խառնեց իր իմացած– չիմացած ռուսերենը ու կրկնեց նորից.

— Ախր ճտերը հրես կմրսեն...

Մենք վեր թռանք տեղերից, սկսեցինք քրքջալ, հետո գրկեցինք Սանդրոյին, համբուրեցինք, հետո իրար գրկեցինք ու ազգային հարցերը մոռացած մարդավարի մի այնպիսի քեֆ արեցինք, որ Սանդրոյի դուքանն իր պատմության ընթացքում երևի չէր տեսել։

— Հիմա գնում ենք տուն,— ասաց Զուրաբը։

— Չէ՛, Զուրաբ,— առարկեցի ես։— Հիմա դու գնում ես աշխատանքի, իսկ ես գնում եմ ձեր տուն։ Գործից մի ընկիր, հո մենք նոր չենք ծանոթանում։ Դու գնա աշխատանքի, ես գնամ համբուրեմ մայրիկի ձեռքը, հետո կգնամ մի լավ կթափառեմ, կմտնեմ պատկերասրահ, լսել եմ, որ Գուդիաշվիլի կա։ Իսկ աշխատանքի վերջում քեզ կսպասեմ փողոցում, դուրս կգաս, նոր կորոշենք ինչ անել։

Զուրաբը ծիծաղեց.

— Ի՞նչ աշխատանք,— ասաց նա,— հիվանդ եմ, քանի օր է գլուխս անտանելի ցավում է։ Վա՛յ, էլ չի ցավում,— զարմացած ավելացրեց նա՝ շոշափելով գլուխը։— Նույնիսկ մոռացել էի։

Ազնիվ խոսք՝ սարսափեցի։ Այդքան պատահականություններ չեն լինում։ Չպետք է լինեն։

... Նախախնամության մի արտասովոր քմահաճույքով ինչ պատահում է ինձ հետ Զուրաբին էլ է պատահում։ Եվ հակառակը։ Ինչպես արդեն ասել եմ, մենք նույնատիպ թերթում էինք աշխատում, նույն գործով։ Մի տարի անց ինձ բաժնի վարիչ նշանակեցին։ Զանգեցի Թբիլիսի տեսնեմ ինչ կա–չկա, պարզվեց, որ Զուրաբին էլ են բաժնի վարիչ նշանակել։ Եվս երկու տարի անց ինձ տեղափոխեցին մի այլ թերթ՝ արդեն իբրև խմբագրի տեղակալ։ Երեկոյան տուն զանգահարեց Զուրաբը։

— Ախպեր ջան,— ասաց,— մտածեցի, թե գուցե զանգ կտաս ու չես գտնի։ Իմ հեռախոսի համարը փոխվել է։

— Քեզ նշանակել են խմբագրի տեղակալ,— ծիծաղեցի ես։

— Ո՞րտեղից իմացար,— զարմացավ Զուրաբը,— հրամանն այսօր են տվել։

Եվ այդպես տասնյակ անգամ, և այդպես համարյա ամեն ինչում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես երկու տարով արտասահման գնացի աշխատելու: Զուրաբն էլ Թբիլիսիում չմնաց: Ուղիղ երկու տարի սովորում էր Մոսկվայում, գրական բարձրագույն դասընթացներում: Վերադարձանք գրեթե միասին: Եվ շատ ծիծաղելի էր մեր հանդիպումը: Արտասահմանից տուն եկա ծանր մի հիվանդությամբ, որը սակայն չափազանց քնքուշ անուն ուներ՝ լյումբագո: Մի քանի օր լրիվ գամված էի անկողնուն, ուղղակի չէի կարողանում շարժվել, անասելի ցավում էր ողնաշարս: Մի խոսքով այդ լյումբագո կոչվածը ռադիկուլիտի սուր երևույթներից մեկն էր: Ցավերը հազիվ էին որոշ չափով մեղմացել, երբ զանգահարեց Զուրաբը:

— Վաղն ինքնաթիռով ուզում եմ Երևան գալ, ի՞նչ ես ասում,— հարցրեց նա:

— Հրաշալի ես մտածել,— ուրախացա ես:— Շատ եմ կարոտել, եղբայր:

— Հո քեզ չե՞մ խանգարի, շատ զբաղված չե՞ս:

Չուզեցի հիվանդությանս մասին ասել:

— Ի՞նչ ես խոսում, արձակուրդի մեջ եմ: Արի, Զուրաբ:

Հաջորդ օրը մի կերպ գնացի օդանավակայան: Սպասում եմ՝ ձեռնափայտիս հենված: Նստել չեմ կարողանում: Ինքնաթիռը վայրէջք կատարեց. կարծես թե իջան բոլոր ուղևորները, բայց Զուրաբը չկար: Անհանգստացա: Չլինի՞ թե ուշացել է ուղերթից կամ որևէ բան է կատարվել: Ու հանկարծ տեսա, որ մեկը երամից ետ ընկած կռունկի նման, միայնակ իջնում է սանդուղքով, ոտքերը հազիվ քարշ տալով, ձեռնափայտին հենված:

— Զուրա՞բ...

— Մի քանի օր պառկեցի, շունչս կտրվեց,— ասաց Զուրաբը:— Քե՞զ ինչ է պատահել,— հարցրեց նա՝ ապշած նայելով իմ ձեռնափայտին:

Դե եկ ու մի հավատա նախախնամությանը:

...Տուն գնացինք տաքսիով: Մետեխի բերդի ստորոտում, ժամանակակից ոճով կառուցված հիանալի թունելն անցնելուց հետո, ես վարորդին խնդրեցի կանգ առնել, որովհետև անխիղճ բան է սլանալը հրաշքների մոտով: Քուռ գետի մյուս ափին նորից հառել էր հին Թիֆլիսը, հեքիաթից իջած գույնզգույն դղյակներով, փայտե խայտանկար պատշգամբներով ու հարկեհարկ մագլցող փայտե սանդուղքներով: Ասես կախարդական գավազանով միանգամից քարացած ոսկե քաղաքի միջով անցնեիր:

Ու հանկարծ օդի մեջ պարզ, զրնգուն հնչեց–տարածվեց Սայաթ–Նովայի երգը... ասես մեղմ հովն անցներ տոթակեզ տների վրայով...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միանգամից բացվեցին փակ դռներն ու պատուհանները: Օջախների ծուխը պալան–պալան վեր բարձրացավ, հսկայական պղինձների մեջ եռալ սկսեցին անուշահամ, անուշահոտ ճաշերը, կարմիր պոմիդորները շարվեցին խորովածի շամփուրների վրա: Բակերը լցվեցին մանուկների զվարթ ճիչ–աղաղակով: Գլուխների վրա հսկայական սինիներ պահած կինտոները փառաբանել սկսեցին արևելքի հեքիաթային մրգերը: Մինչև ծնկները ծալած շալվարներով ձկնորսները հենց անցորդների ոտքերի տակ փռեցին իրենց թաց թաշկինակները՝ գետից նոր բռնած խլդբլդացող ձկներով լի... Պարկապզուկի ու շարմանկայի մելամաղձոտ ձայները միախառնվեցին իրար... Խաս ու ատլաս հագած փանջարա դուրս եկավ գյոզալը, սանդուղքից իջավ նազելով, սև հոնքերի տակից նայեց հմայված երգչին: Այրեց: Ու արար աշխարհի հետ հառաչեց, ա՜խ քաշեց բանաստեղծը.

— Դուն կրակ, հագածդ կրակ, վո՞ւր մե կրակին դիմանամ...

...— Հը՞,— արմունկով հրեց ինձ Զուրաբը:

— Դուք իրավունք ունեք ապրելու, ախպե՛ր,— ասացի ես:

Երբ հասանք այն շենքը, հին Ռազմավիրական ճանապարհի վրա, որտեղ Զուրաբն էր ապրում, ընկերս հանկարծ թողեց ինձ ու շտապ–շտապ առաջ ընկավ:

— Ո՞ւր,— զարմացա ես,— միասին չե՞նք գնում, ինչ է:

Զուրաբը խորամանկ ժպտաց թավ բեղերի տակ:

— Ուզում եմ տեսնել, թե Ժենյան կզգա՞, որ եկել ես:

Մինչ ես դռանը հասա, Զուրաբն արդեն ներսից դուրս էր գալիս քրքջալով, և նրա թիկունքում երևում էր Ժենյա մայրիկի պայծառ դեմքը:

— Ըհը, ըհը,— ծիծաղում էր Զուրաբը,— մտա տուն, ասում եմ, մայրիկ, գիտե՞ս ով է եկել:

— Առաքելը,— ասում է մայրս:

— Որտեղի՞ց իմացար, ա՛յ մեր,— հարցնում եմ:

— Դեմքիդ գրված է,— ասում է նա,— էս քանի օրը ո՞վ էր երեսիդ ժպիտ տեսնում:

Ես գրկում եմ Ժենյա մայրիկին, համբուրում նրա խորշոմած ձեռքը, գլուխս գնում եմ նրա կրծքին ու փակում աչքերս: Ներսից մի բան է բարձրանում, կանգնում կոկորդումս ու խեղդում

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

է ինձ: Ախր Զուրաբի մորից իմ Անուշ մայրիկի հոտն է գալիս: Սա հենց այնպես, սիրուն խոսքի համար չեմ ասում: Հարցրեք երեխաներիցս, նրանք հիշում են, կհաստատ են:

... Մորիցս ես վաղուց եմ զրկվել, երբ երեխաներս շատ փոքր էին, բայց ոչ այնքան, որ չզգային տատիկի բացակայությունը ու ամեն օր չպղտորեին հոգիս:

— Բա ո՞ւր է գնացել տատիկը...

— Տատիկիս եմ ուզում...

Ես Զուրաբին չէի տեղեկացրել մորս մահը: Գիտեի, որ հոգսերի մեջ է: Նա մի ֆելիետոն էր գրել ինչ–որ տրեստի կառավարչի դեմ՝ պաշտպանելով նրա կողմից հալածված մի բանվորուհու: Իր կաշին փրկելու համար տրեստի կառավարիչը կանգ չէր առնում ոչ մի ստորության առաջ, զրպարտագրեր էր հղում վերադաս կազմակերպությունները. շանտաժի ենթարկում Զուրաբին, նույնիսկ ինչ–որ լակոտների էր ուղարկել նրա հետ հաշվեհարդար տեսնելու: Ոչնչի չհասնելով, նա հիմա էլ հայտարարել էր, թե թղթակիցը մտերմական կապերի մեջ է բանվորուհու հետ և ֆելիետոնով, փաստորեն իր սիրուհուն է պաշտպանում: Եվ ահա նրա հովանավորները՝ այդ վերադաս կազմակերպություններում, այսինքն նրանք, ովքեր իրենց ընկերոջը տրեստի կառավարիչ էին դարձրել, ֆելիետոնի փաստերը մի կողմ թողած, Զուրաբից պահանջում էին արդարանալ, ապացուցել, որ բանվորուհու հետ կապված չէ:

— Եթե շահագրգռված չէիք, ինչո՞ւ գրեցիք այդ ֆելիետոնը,— հարցնում էին նրանք՝ իրենց հատուկ երկաթյա տրամաբանությամբ:

Միտք ունի՞ նման վիճակում գտնվող մարդուն տեղեկացնել մեզ հասած դժբախտության մասին, նրան նոր ցավ պատճառել:

Եվ, այնուամենայնիվ, չգիտես որտեղից Զուրաբն իմացել էր այդ մասին: Մի քանի օր անց, երեկոյան, երբ տխուր–տխուր նստած էինք տանը, հանկարծ դուռը բացվեց ու ներս մտան Զուրաբն ու սևեր հագած Ժենյա մայրիկը:

Զուրաբը գրկեց միանգամից ծերացած, որբացած հորս, և նրանք լուռ լաց եղան իրար հետ: Ժենյա մայրիկն էլ ինձ գրկեց ու վրացերեն միայն մի բառ էր կրկնում, միայն մի բառ.

— Տղա՛ս, տղա՛ս, տղա՛ս...

Ու հենց այդ պահին էր, որ կատարվեց ամենազարմանալին ու ամենաահավորը: Երկու–երեք տարեկան պստիկներս ճչացին երջանիկ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Տատին եկավ, տատի՛ն եկավ…

Ու հրելով իրար, գլորվելով ու իրարից առաջ ընկնելով, վազեցին գրկեցին Ժենյա մայրիկի ոտքերը:

Այդ օրը ես առաջին անգամ հասկացա, որ երբ մարդիկ մեծ վիշտ են ունենում, ակամա ոռնում են խելագար… Ով գիտե, երևի իրենց վայրի նախահայրերի նման…

Երեխաները վախեցան, լաց եղան բարձրաձայն և ավելի ամուր գրկեցին Ժենյա մայրիկի ծնկները: Հետո վեր պարզեցին ձեռքերը.

— Գրկի, տատի ջան, գրկի,— աղաղակում էին նրանք:

Զուրաբը չէր կարող մնալ և միտք էլ չուներ նրա մնալը, բայց

ինչ արեցինք, Ժենյա մայրիկը չհամաձայնեց վերադառնալ:

— Մի քիչ մնամ, հանգստացնեմ բալիկներին,— ասաց նա,— հետո կգամ…

— Հետո էլ քեզ կսովորեն,— ծիծաղեց Զուրաբը:— Իմ երեխաների հա՞լն ինչ կլինի:

— Ես էլ ուզում եմ, որ ինձ սովորեն,— ասաց Ժենյա մայրիկը:— Որ մինչև հասկանալը համոզված լինեն, թե իրենց տատին կա, Թբիլիսիում է և երբ որ ուզեն կտեսնեն:

Այդպես էլ տատի մնաց իմ երեխաների համար Ժենյա Չիլավան և մայր մնաց ինձ համար:

— Բա երեխաներն ո՞ւր են,— հարցրեցի ես:

— Երեխաներ էլ ասում ես…— ծիծաղեց Ժենյա մայրիկը,— Էկան արդեն ավարտում է Համալսարանը՝ հոր գծով, իսկ Ուչան Պոլիտեխնիկում է: Իմ դարդը նրանք չեն, նրա՛նք, իմ դարդը իմ ամենամեծ երեխան է, իմ ամենաղժվար երեխան…

— Ըհը, էլի գտան իրար,— փնթփնթաց Զուրաբը, պահարանի վրայից վերցրեց դատարկ սափորը ու գնաց մառան՝ թան բերելու:

— Էլի ի՞նչ է արել,— Զուրաբի ետևից կատաղի հայացք գցելով հարցրեցի ես:

— Ի՞նչ պիտի անի, ա՛յ բալա,— խռոված ձայնով խոսեց Ժենյա մայրիկը՝ խոսելու հետ միաժամանակ տարիքին անհարիր թեթևությամբ ներս ու դուրս անելով ու դասավորելով սեղանը:— Իրեն բոլորովին չի հետևում: Հիսուն տարեկան մարդ է, բայց կյանքում մի անգամ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանգստյան տուն գնացած չկա։ Ինչքան ուղեգիր են տալիս՝ կամ ինձ է զոռով ուղարկում, կամ Մակվալային։ Հենց խոսում եմ, ասում է, որ դուք գնում եք, ես հանգստանում եմ։

— Տեսնում ես դրան,— բարկանում եմ ես։

— Բա՛,— ոգևորվում է Ժենյա մայրիկը։— Հանգստանալն էլ ո՞րն է, որ ոչ մեկը չստիպի հաց ուտել։ Օդով է ապրում էդ տղան, օդով։ Տես, էլի, վրան հալ չկա։ Երեսին մենակ բեղերն են մնացել։

— Եվ աչքերը,— հիշեցնում եմ ես։

— Հա՛,— վրդովմունքը մոռացած, հիացած ժպտում է Ժենյա մայրիկը ու ավելացնում է մի տեսակ ամաչելով։

— Աստծո կամքն է... որ Շալվային չմոռանամ... Առաքել, տղա ջան,— շարունակում է նա։— Զուրիկս լսում է քեզ։ Մի քիչ խրատ տուր, որ հետևի իրեն։

Ես ինձ պատկերացնում եմ Զուրաբին խրատելիս ու ծիծաղս գալիս է։

— Էս ի՞նչ եք անում, Ժենյա մայրիկ,— բողոքում եմ ես, տեսնելով, թե ինչպես են սեղանի վրա կիտվում խաչապուրին ու սածիվին, լոբին ու տաքտաք ղոմին, տղեմալին ու թթուն, խաշած հավի ու տապակած գոճու կտորները։— Էս ո՞ւմ համար է, մենք նոր ենք վեր կացել սեղանից։

— Էդպիսի բան չասես, Առաքել,— վախեցած մառանի կողմն է նայում Ժենյա մայրիկը։— Դու կեր, որ ինքն էլ ուտի, ցավդ տանեմ։ Կեր ու մի լավ խրատի էդ տղին։ Ասա, որ ջահել չես, է՛, խելքի արի։ Բարեկամների, ընկերների համար քուն ու դադար չունի, մեկ սրա համար է վազում, մեկ նրա համար է վազում... Վաղը որ, աստված չանի, ընկավ, ո՞վ է նրա ետևից վազողը... Ո՞վ է նրա երեխաներին պահողը...

— Հիմա ես նրա հետ կխոսեմ ոնց որ պետք է,— սպառնալի դեմքով ասում եմ ես։— Երեխա՞ է, ինչ է...

— Ասա է՛, ասա,— հառաչում է Ժենյա մայրիկը։— Երեխա չէ, ի՞նչ է...

Մառանի շեմքին հայտնվում է Զուրաբը՝ սափորը ձեռքին։

— Գա՞մ, թե դեռ բամբասում եք,— հարցնում է նա գործնականորեն։

— Էլ բան ու գործ չունենք,— ասում եմ ես,— երեխաներից էինք խոսում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ժենյա մայրիկը ձեռքերը խփում է ծնկներին, հիշելով, որ կրակի վրա երևի վառվում է տասներորդ ճաշատեսակը և իրեն խոհանոց է նետում։ Զուրաբը խնդմնդալով նստում է իմ առձև ու բաժակները սառը թան է լցնում։

— Դե սկսիր, սկսիր,— ասում է նա։

— Զուրաբ,— ասում եմ ես բարձրաձայն, այնպես որ խոհանոցում Ժենյա մայրիկի հոգին խաղաղվի։— Շա՞տ ես նիհարել, թե ինձ է թվում։ Կներես, բայց ինձ թվում է, թե դու քեզ բոլորովին չես հետևում։ Այդպես չի կարելի…

— Խոսիր, խոսիր, կեղծավոր,— ժպտում է Զուրաբը։

— Ողջ լինես, Զուրաբ ջան,— շշնջում եմ ես։— Դե մի բան կեր, իմ հեղինակության հետ մի խաղա։

— Ո՞նց ուտեմ,— ձեռքերն անօգնական տարածում է Զուրաբը։— Դե դու կեր։

Մենք ծիծաղում ենք՝ բռունցքներով բերաններս փակած։

— Գտա,— ուրախացած շշնջում է Զուրաբը։ Գրասեղանի դարակից հանում է իր «դիպլոմատ» պայուսակը, բացում, ինչ հնարավոր է վերցնում է սեղանից, արագ–արագ փաթաթում անձեռոցիկներով ու տեղավորում պայուսակի մեջ։

— Հիմա տես ինչ ենք անում։ Ինձ շտապ պետք է Էդվարդին հանդիպել։

Ես տեղից վեր եմ թռչում։

— Բա ե՞ս։ Ես էլ եմ ուզում Էդվարդին տեսնել։

— Ուրեմն հիանալի է,— ասում է Զուրաբը… Հասկանո՞ւմ ես՝ մեր Շոթայի Իլիկոն հիվանդացել է, բժիշկը մի դեղ է գրել, որ նույնիսկ դեղատանը չգիտեն, թե ինչ է։ Նման դեպքերում ո՞վ է մեր փրկարարը, սիրելի Առաքել, իհարկե՝ Էդվարդը։ Գիշերը զանգ տվեց, թե դեղը գտել եմ, բայց ժամանակ չունեմ տեղ հասցնելու, եկեք տարեք։

— Էլի՞ ժամանակ չունի։

— Իսկ նա ե՞րբ է ժամանակ ունեցել,— կամացուկ ծիծաղում է Զուրաբը։— Ուրեմն, տե՛ս, միանգամից երեք ազնիվ արարք ենք կատարում՝ Էդիկին նախաճաշ ենք տանում, դեղը հասցնում ենք Շոթային, իսկ Ժենյային էլ համոզում ենք, թե կուշտ կերել ենք։ Ո՞նց էր։

— Հանճարեղ,— շշնջում եմ ես,— միայն թե ափսեները…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խե՛ղճ Ժենյա մայրիկ: Մենք անգթորեն ապականում ենք ափսեները, դանակներն ու պատառաքաղները, ճմրթում ենք անձեռոցիկները: Իսկ Ջուրաբը նույնիսկ ստորության է հասնում՝ մի քանի կաթիլ տղեմալի է թափում սփռոցին:

— Մինչև Ժենյան սփռոցը կեղտոտված չտեսնի, չի հավատա, որ ես բան եմ կերել,— արդարանում է նա:

Ժենյա մայրիկը կավե թասի մեջ տժվժացող ինչ–որ բան է բերում ներս, բայց մենք արդեն ոտքի վրա ենք:

— Վա՞յ, էս ո՞ւր,— զարմացած մեզ է նայում նա: Թասը ցած է դնում ու այս անգամ էլ զարմացած դիտում ավերված սեղանը: Նայում է մեզ, բայց մենք դերասանական դպրոցը հո նոր չենք ավարտել: Նայում է տղեմալիի հետքերին ու ժպտում է:— Էս ե՞րբ կերաք,— բավարարված, բայց դեռ կասկածով հարցնում է նա:

— Նա իմ ձեռքից ո՞ւր պիտի փախչեր,— առանց Ժենյա մայրիկին նայելու, հաղթական ձայնով ասում եմ ես:

Ու մենք արագորեն տնից դուրս ենք ծլկում՝ դասից փախչող անկարգ աշակերտների նման:

...

Մենք Էդվարդին նախաճաշ տարանք տեքստիլ կոմբինատ և նրանից դեղը վերցնելով հասցրինք Շոթային: Շոթան ասաց, թե Շալվան Էդվարդից իմացել է, որ եկել եմ, ու խիստ նեղացել է, որ զանգ չեմ տվել: Իսկապես, հիմար բան էր ստացվել և այլևս զանգ տալը իմաստ չուներ: Միանգամից նախագծային ինստիտուտ, Շալվայի մոտ գնացինք ու քանի որ նրա հիմնարկից երկու քայլի վրա էր երկաթուղու միլիցիայի բաժանմունքը՝ մի քանի րոպեով ներս մտանք ու Նոդարին էլ տեսանք: Նոդարը հայտնեց, որ Սիդամոնի կնոջ դոկտորական դիսերտացիան երկրաբանության գծով հաստատվել է, ու թեև Սիդամոնի բնակարանը քաղաքի մյուս ծայրում էր, բայց ինչպե՞ս կարելի էր գոնե մի քանի րոպեով չայցելել նրանց ու չհամբուրել Խաթունայի դոկտորական ձեռքը: Խաթունան անկեղծորեն հուզվեց և ասաց, որ քիչ առաջ զանգահարեց ու շնորհավորեց նաև Ջումբերը:

— Հա, բատոնո Առաքել, Ջումբերն ասաց, որ քեզ համար ինչ–որ հին հայկական գիրք է գտել,— հայտնեց Խաթունան:

Հիմա էլ իմ հերթին ես շատ հուզվեցի: Ի՛նչ զարմանալի մարդ է Ջումբերը: Ամեն անգամ քրքրում է բուկինիստական թանկ ու կրակ գրքերը ու հենց որ հայերեն հին ու արժեքավոր գիրք է գտնում, անմիջապես գնում է ինձ համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես առանց այդ էլ ուզում էի հանդիպել Ջումբերին, դրա համար էլ Սիդամոնենց տնից Ջուրաբի հետ ուղիղ «Արվեստ» ամսագրի խմբագրություն գնացինք: Գլուխս պտտվեց: Ջումբերի գտած գիրքը Նարեկացու «Մատյանի» վենետիկյան հրատարակությունն էր:

— Ջումբեր, ախպեր ջան,— ասացի ես,— այս գիրքը ես քեզնից չեմ վերցնի: Ինքդ պիտի բերես Երևան ու քո ձեռքով հանդիսավոր հանձնես ինձ… հանդիսավոր պայմաններում:

— Ես հանդիսավոր պայմանների համար էլ եմ արդեն մի գիրք պատվիրել,— ծիծաղեց Ջումբերը:— Ջանսուղն է խոստացել: Կվերցնեմ ու կբերեմ:

Ջանսո՛ւղը: Ո՞նց կարելի է առանց նրան տեսնելու Երևան վերադառնալ… նրա լեզվից հուր–հավիտյան չեմ պրծնի: Բայց մինչև գրողների միություն հասնելը, «Թբիլիսի» ռեստորանի մոտ Ջոնին հանդիպեց… Թե՞ գրողների միությունից հետո էր: Չէ, առաջ էր: Է՛, ինչպե՞ս կարող էր առաջ լինել, երբ Ջանսուղը մեզ հետ էր ռեստորանում: Դե, իհարկե, ինձ էլ ծանոթացրեց կոմպոզիտոր Ցաբաձեի հետ: Գնչուհու աչքերով Նինիկոն ի՛նչ հրաշալի էր կատարում նրա «Փանջարա» երգը: Չէ՛, այնուամենայնիվ խառնում եմ: Դա արդեն ուրիշ ռեստորան էր՝ ինչ–որ տեղ Քուռ գետի ափին: Գերմանի թոռնիկի ծնունդը շնորհավորելուց հետո եկանք: Այդպես էր, այդպես էր… հիշեցի… նեղլիկ կամրջակով էինք անցնում: Դե իհարկե, դիմացն էլ լույսերի մեջ թաթախված Վախթանգ թագավորի արձանն էր: Ճիշտ է, ճիշտ է, վերջում մենք հոտնկայս խմեցինք նրա կենացը, ավելի ճիշտ՝ նրա ուղեղի հանճարեղ փայլատակման համար, որ հանկարծ որոշել է աշխարհի հենց այս անկյունում կառուցել այն քաղաքը, որը համայն Վրաստանի մայրաքաղաքը պիտի դառնար:

— Գնացինք, Ջուրաբ ջան,— կամացուկ խնդրեցի ես:

— Հա՞,— հարցրեց Ջուրաբը, — տո՞ւն:

— Տուն,— ասացի ես,— գնացքի մեկնելուն ուղիղ մի ժամ է մնում:

Ջուրաբն ըմբոստացավ, բողոքեց, սպառնաց պատասխանել նույնատիպ անազնվությամբ՝ Երևանում, բայց ես համառեցի:

— Ես երջանիկ եմ, Ջուրաբ,— ասացի,— ու գլուխս է՛լ բոլորովին, հասկանո՞ւմ ես, բոլորովին չի ցավում: Իսկ եթե այդպես է, անխիղճ բան է աշխատանքի չգնալը: Հազար գործ ունեմ: Հիմա գնացք կնստեմ, օրորվելով կքնեմ հանգիստ և առավոտյան կայարանից ուղիղ աշխատանքի կգնամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջուրաբը մի քիչ էլ համառեց ու հանձնվեց։

— Այսինքն, քանի որ իմ գլխի ցավն էլ է անցել, ես էլ վաղը աշխատանքի կգնամ,— ժպտաց նա։

Երբ Նավթլուղ հասանք, «Թբիլիսի–Երևան» գնացքն արդեն դողում էր առաջին գծի վրա։ Մենք գրկախառնվեցինք։ Ի՛նչ երջանկություն է այսպիսի ընկեր ունենալը։ Սիրտս լցված էր։ Ես նրան շատ–շատ բաներ էի ուզում ասել, շատ քնքուշ, շատ... բայց ոչինչ չկարողացա ասել ու միայն ասացի վրացերեն։

— Մնաս բարով, ախպե՛ր։

— Գնաս բարով, ախպե՛ր,— հայերեն ասաց Ջուրաբը։— Գնաս բարո՛վ։

Ես գնացք բարձրացա, ձեռքով արեցի, որ հեռանա Ջուրաբը։ Բայց նա շարունակում էր կանգնած մնալ ու լուռ ինձ էր նայում իր Շալվա հոր խոշոր, թաց աչքերով։

Գնացքը ցնցվեց, հիմա կպոկվի տեղից ուր որ է։

— Ջուրա՛բ, — ձայն տվեցի ես։

— Հա՛,— արագ մոտեցավ նա։

— Քեզ լավ պահիր, ախպե՛ր, — ասացի ես։

— Ի՞նչ,— չլսեց, թե չհասկացավ Ջուրաբը։

— Քեզ լավ պահիր,— ասացի ես։— Լավ պահիր նաև ինձ համար։ Չե՞ս տեսնում, ինչ պատահում է քեզ, նույնը ինձ հետ էլ է պատահում։

1983թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա նորից այնտեղ է, դահլիճում

Հրաչյա Ներսիսյանին

— Զարմանալի բաներ են պատահում երբեմն, մոռանալ չես կարող, հանկարծ խոսեց դերասանը, ասես միանգամից որոշելով մեզ էլ մասնակից դարձնել իր լուռ մտորումներին:

Նա մի կողմ հրեց սուրճի դատարկ բաժակը ու հայացքը չհեռացնելով պատուհանի ապակուց, որը միալար աղմկում էր աշնանային անձրևի մանրիկ կաթիլների տակ, ավելացրեց.

— Այս անձրևը ինձ մի դեպք հիշեցրեց: Անցած – գնացած մի պատմություն: Ջահել էի…

Նա բարձրացրեց գլուխը ու նկատելով մատուցողուհուն, նշան արեց:

— Մի բաժակ սուրճ, աղջիկս:

Հետո կրկին շարունակեց.

— Օթելլո էի խաղում: Այսօրվա պես հիշում եմ: Ես արդեն սկսել էի խանդել, և իմ ամեն մուտքը դահլիճն ընդունում էր քար լռությամբ, հուզված, սպասումով: Առաջին անգամը չէր, որ մավրի դերն էի տանում: Շատ էի վստահ, և թերևս հենց դա էլ պատճառ դարձավ, որ մենախոսության մեջ մի տեղ վրիպեցի:

Անմիջապես զգացի, իհարկե, բայց մտածելով, որ դժվար թե նկատեն, շարունակեցի: Ու հենց նույն վայրկյանին էլ ինձ թվաց, որ դահլիճի աջ անկյունում, բեմին բոլորովին մոտիկ, մեկը կամացուկ «ահ» ասաց: Ակնթարթորեն նայեցի այն կողմը ու տեսա մանկամարդ մի կնոջ: Զարմանալի չթվա, բայց անմիջապես նկատեցի, որ նա շիկնեց ու կախեց գլուխը:

«Ամաչեց ինձ համար»,— մտածեցի ես ցավով ու շարունակեցի դերս, թեև զգում էի, որ ես էլ եմ շիկնել՝ հանցանքի վայրում բռնված տղայի նման:

Հաջորդ մուտքերի ժամանակ աշխատում էի ոչ մի կերպ չնայել նրա կողմը, բայց, միևնույն է, անընդհատ ինձ հառված էի տեսնում նրա սևորակ և, ինչպես համոզված էի, մեղադրող աչքերը: Դա չէ՞ր արդյոք պատճառը, որ խաղում էի սովորականից զգույշ ու հուզված:

Ու, հավատացնում եմ, անչափ լավ էր ստացվում: Անհամեմատություն չհամարեք: Յուրաքանչյուր դերասան լավագույն քննադատից էլ անսխալ կարող է ասել, թե ինչպես էր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կատարում իր դերը: Այդպես է: Գոհ էի ինձանից, և ամենայն հավանականությամբ գոհ էին նաև հանդիսատեսները, որովհետև գործողության վերջում, վարագույրի փակվելու հետ, ծափահարեցին ջերմությամբ, ուժգին, պահանջելով կրկին ու կրկին բացել վարագույրը:

Ես կանգնել ու լռելյայն շնորհակալություն էի հայտնում դահլիճին, բայց ոչ ոքի չէի նկատում, բացի իմ անծանոթ «քննադատից»: Նա ևս ծափահարում էր բոլորի նման, բայց նրա ծափն ինձ տարբեր էր թվում բոլորից, ամենից անկեղծն ու ջերմը: Եվ ժպտում էր իր պայծառ հայացքով: Նա հասկացել էր ինձ, ներել էր ինձ:

Երբ ներկայացումն ավարտվեց, դահլիճը ոտքի կանգնեց ու անընդհատ ծափերով վերջին գործողության մեջ զբաղված բոլոր դերասաններին ստիպեց բեմ դուրս գալ:

Ես կրկին նայեցի նրան: Նա ոտքի չէր կանգնել: Ծափահարում ու ժպտում էր՝ արցունքոտ աչքերով, բայց շարունակում էր նստած մնալ, երբ ողջ դահլիճը հոտնկայս «բարի գիշեր» էր մաղթում մեզ...

Դերասանը մի ումպով դատարկեց արդեն սառած սուրճը և դառնալով մատուցողուհուն, խնդրեց.

— Մի բաժակ սուրճ ևս, աղջիկս:

— Հաջորդ օրը «Կենդանի դիակ» — ն էր: Պրոտասով էի խաղում: Բեմ մտնելուն պես, չգիտեմ ինչու, ակամայից նայեցի այն կողմը, որտեղ երեկ անծանոթ գեղեցկուհին էր նստած: Եվ պատկերացնո՞ւմ եք իմ զարմանքը ու, չեմ թաքցնի, ուրախությունը, երբ նրան նորից այնտեղ տեսա, նույն շարքի նույն աթոռին, բեմի մոտ, դահլիճի աջ կողմում:

Եվ ինչպես նախորդ օրը, ինձ մի տեսակ ավելի պատասխանատու զգացի: Ուզում էի, որ նա գոհ մնա, իմանա, որ միայն «Օթելլո» - ում չեմ այդպես խաղում, որ բոլոր դերերն էլ ինձ համար սիրելի են:

Ու ինչպե՞ս էր նա ապրում իմ խաղով... Ինչպես էր հասկանում... Ես այդպիսի բան մինչև այդ չէի զգացել: Հետևում էր իմ խոսքի յուրաքանչյուր շեշտին, իմ ձեռքի յուրաքանչյուր շարժումին: Հուզվում էր ինձ հետ, ծիծաղում միասին, լաց էր լինում, երբ ես տխրում էի, պայծառանում, երբ ժպտում էի, տանջվում էր նրա համար, որ ոչ ոք ինձ՝ իմ հերոսին, չի հասկանում:

Այդ բանն առանձնապես սուր զգացի պանդոկի տեսարանում, երբ խմում էի աղքատ նկարչի հետ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աղջիկը համակ ուշադրություն էր դարձել: Նրա դեմքը այնպիսի տանջանք, այնպիսի ցավ էր արտահայտում, որ... ես ուզում էի մխիթարել, սփոփել նրան: Նա այնպիսի ափսոսանքով, այնպիսի հավատով էր ինձ նայում, որ ես քիչ էր մնում մի կողմ թողնեի դերս և ասեի. «Այդքան մի հավատա ինձ, ախր ես խաղում եմ, կյանքում ես այդպիսին չեմ, ազնիվ խոսք…»: Ծիծաղելի է չէ՞: Բայց ինձ համար ծիծաղելի չէր:

«Ո՞վ է վերջապես այդ կինը, — մտածում էի ես խորին հետաքրքրությամբ, երբ ընդմիջմանը, գրիմանոցում փակված, ավելի էի խտացնում դեմքիս գույները, — կամ բոլոր խաղերի մշտական աբոնեմենտ ձեռք բերած մեկն է, որը մեծ վիշտ ունի և այստեղ աշխատում է մոռացության տալ դրանք: Կամ պարզապես սիրահարվել է ինձ: Ախր պատահում են այդպիսիները: Մի – երկու անգամ լսում են քեզ, ապա մինչև գրիմանոց են հասնում կամ սպասում թատրոնի ելքի մոտ, որպեսզի ծաղիկներ տան քեզ ու ասեն, որ ավելի լավ դերասան չկա աշխարհում, որ դու միակն ես և որ իրենք... սիրում են քեզ»:

Բայց նա ոչ առաջինն էր և ոչ էլ երկրորդը: Մյուս ներկայացմանը, որտեղ ես զբաղված չէի, դիտավորյալ եկա, որպեսզի տեսնեմ նրան և իմանամ, թե ուրիշների խաղերի՞ն էլ է գալիս: Բայց նա չկար:

«...Այլևս ոչ մի կասկած, նա միայն ինձ տեսնելու, ինձ լսելու համար է գալիս», հրճվեցի, երբ հաջորդ ներկայացմանը բեմ ելնելով՝ կրկին տեսա նրան իր մշտական տեղում, բեմի մոտ, դահլիճի աջ անկյունում:

Ավելորդ եմ համարում ասել, որ խաղում էի մեծ ոգևորությամբ, ինքնամոռաց և եթե որևէ բանի մասին, բացի իմ դերից, մտածում էի, ապա միայն նա էր:

«Ո՞վ է այդ խորհրդավոր աղջիկը: Եթե սոսկ թատրոնի սիրահար չէ, այլ միայն տարված է իմ խաղով, ինչո՞ւ հապա ոչ մի անգամ չի մոտենում, չի գալիս ինձ մոտ, չի խոսում, ինչո՞ւ չի կազմակերպում այնպես, որ հանկարծակի, «պատահաբար» հանդիպի ինձ: Չէ՞ որ կանայք նման հարցերում վարպետներ են»:

Բայց ինչպես այդ, այնպես էլ հաջորդ խաղերին նա ոչ մի անգամ չփորձեց մոտենալ կամ սպասել, որ ես զգեստափոխվելուց հետո գտնեմ իրեն, մի բան, որ ուզում էի անել ամբողջ հոգով:

Ես շատ էի ուզում տեսնել նրան, մոտենալ ու կամացուկ, անկեղծորեն շնորհակալություն հայտնել ուշադրության համար, ասել, որ նա իմ ոգևորության աղբյուրն է, հասկացնել, որ իմ հաջող ելույթների համար նրան եմ պարտական, որ ես գոնե կուզեի իրեն միշտ տեսնել դահլիճում, իր տեղում, միևնույն աթոռին...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես չէի պատկերացնում այնս դահիճն առանց նրա:

Ու նա հասկանում էր այդ, զգում էր, թե ինչ է կատարվում իմ հոգում և շարունակում էր թատրոն գալ ինձ հետ, խաղալ, ապրել ու տառապել ինձ հետ ու հեռանալ ինձնից առաջ, թաքուն, գաղտագողի:

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ էր նա ուզում մոտ լինել ինձ և միաժամանակ հեռու, ինչո՞ւ էր, խուսափում ինձնից այդ աղջիկը:

Եվ ի վերջո ես խոսեցի նրա հետ:

Մի նոր պիես էինք բեմադրում, որտեղ ես վերջին գործողությունում զբաղված չէի: Պրեմիերային, օգտվելով այն բանից, որ իմ տարօրինակ երկրպագուհին չգիտեր այդ մասին, ես ընդմիջմանը իսկույն զգեստափոխվեցի և դահլիճ մտա՝ իմ սովորական հագուստով:

Նա այնտեղ էր՝ իր աթոռին: Սիրտս բաբախում էր ուժգին, երբ մոտեցա: Որքա՜ն սքանչելի էր նա:

— Օրիորդ,— դիմեցի նրան, — ծանոթանանք վերջապես, մոտիկից...

Նա մի պահ ինձ նայեց զարմացած հայացքով, հետո ճանաչեց ու զունատվեց միանգամից, և ինձ թվաց, թե հիմա կնվաղի…

— Օրիորդ,— կրկնեցի ես վախեցած ու հանկարծ շփոթվեցի, սիրտս ասես դադարեց բաբախելուց, կանգ առավ, ապա առաջ շարժվեց արագ, ուժգին, ցավոտ զարկերով:

Աղջիկը հաշմանդամ էր: Փոքրիկ մի հենակ շեղակի ընկած էր աթոռի առջև:

— Օրիորդ, ներողություն... ներողություն չիմանալով ասելիքս ծայրաստիճան շփոթված մրմնջացի ես, —ներողություն, — ավելացրի հիմարի համառությամբ, օգնություն հայցող հայացքով նայելով շուրջս և հանկարծ նկատելով մի ծանոթի, բղավեցի. «Ողջո՜ւյն, հիմա կգամ», ու շփոթված, երկչոտ քայլերով վազեցի դեպի նա:

«Ահա թե ինչու ներկայացումների վերջում նա երբեք ոտքի չէր կանգնում»,— շշնջացի ես, նստելով ծանոթիս կողքին, աշխատելով ուշքի գալ:

«Ո՞վ»,— զարմացած հարցրեց նա:

Չպատասխանեցի: Ապշած էի: Բարկացել էի սաստիկ ինքս ինձ վրա և ոչինչ անել չէի կարող: Ինչո՞ւ այդպես շփոթվեցի, ինչո՞ւ: Ի՜նչ վատ ստացվեց: Հետո՞ ինչ, որ ոտք չուներ: Կարող էի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չտեսնելու տալ, չէ՞ կարող էի այնպես անել, որ չզգար, չէ՞: Բայց առաջինն ախր ինքը գունատվեց, չէր ուզում, որ ես տեսնեի նրան… այդ վիճակում: Ահա թե ինչու էր խուսափում ինձնից ամիսներ շարունակ… Ու ո՜նց ես չէի կռահում…

Առավել քան երբեք հիմա ուզում էի խոսել նրա հետ: Ուզում էի ասել, որ դա ոչ մի նշանակություն չունի, որ նա իզուր էր նույնիսկ թաքցնում, հետո՞ ինչ: Ի վերջո կարևորը հո դա չէ, սիրելի, լավ աղջիկ:

Ես շրջվեցի դեպի նա: Աթոռը թափուր էր: Դուրս եկա ճեմասրահ: Նա այնտեղ էլ չէր: Շրջեցի բոլոր հարկաբաժինները՝ ոչ մի տեղ չկար: Մի վերջին հույսով նորից դահլիճ դարձա՝ աթոռը, իմ սիրելի, ծանոթ աթոռը դատարկ էր բեմի մոտ, դահլիճի աջ կողմում:

Ես հասա թատրոնի մուտքի դռանը: Ապակիներից այն կողմ անթափանց մութ էր, վարար անձրև էր գալիս՝ շափշափելով շրջապատին: Մի պահ պատկերացրի նրան միայնակ, հենակով քայլելիս պուրակի ցեխոտ ծառուղիներով, հորդ անձրևի տակ՝ տխուր ու ընկճված:

Բացեցի դուռը, վազեցի խավարի և անձրևի միջով: Անունն անգամ չգիտեի, որ կանչեի, միայն վազում էի… Բայց նա չկար:

Հետո մտածեցի, որ գուցե գա հաջորդ ներկայացմանը: Բայց իզուր: Ես նրան չտեսա ոչ այդ և ոչ էլ մյուս ներկայացումներին: Շատ որոնեցի, բայց այլևս չգտա:

Գուցե նա այլևս ուրիշ աթոռի էր նստում, բեմից հեռու, վերջին շարքերում… Ո՞վ գիտե…

Տարիներ են անցել: Բայց հիմա էլ, ամեն անգամ, երբ բեմ եմ բարձրանում, ամեն անգամ, երբ խաղում եմ իմ սիրած դերերը, մի տեսակ հույզով ու ոգևորությամբ է լցվում հոգիս: Ես նորից ջահել ու առույգ եմ զգում, ինչպես տարիներ առաջ, ու ինձ թվում է, թե նորից ինձ է նայում սևորակ աչքերով այն աղջիկը, որ նորից նա այնտեղ է, դահլիճում…

Դերասանը բարձրացրեց ալեհեր գլուխը, հայացքը կտրեց պատուհանի ապակուց, որի ետևում անձրևը թափանցիկ վարագույր էր կախել, ու նկատելով մատուցողուհուն, մոտ կաչեց.

— Մի բաժակ սուրճ ևս, աղջի՛կս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կոշիկներ

Արհեստանոցի ցուցափեղկում, փոքրիկ, բայց բարձր պատվանդանի վրա դրված էին մի զույգ կոշիկներ: Այնքան մեծ էին, որ անցորդները չէին կարողանում անտարբեր անցնել ու ամբողջ օրը հավաքվում էին ցուցափեղկի մոտ, ծիծաղում, ցույց տալիս միմյանց, պատկերացնում իրենց ոտքերին:

Ահռելի կոշիկներ էին:

— Ես ամեն օր հետևում եմ, թե ով պետք է տանի,— հավաքվածներին խառնված, ասում էր դիմացի մայթին օշարակ վաճառող ծերունին,— ով որ այդ կոշիկները վերցնի, կոշիկների հետ նրան էլ պետք է ցուցահանդես տանել:

Շատ մեծ կոշիկներ էին:

Լենան համարյա ամեն օր այդ արհեստանոցն էր գալիս: Իհարկե, ոչ թե կոշիկների համար, այլ այն պատճառով, որ արհեստանոցի վարիչն իր ընկերն էր, մտերիմը, գուցե և ապագա ամուսինը: Բայց նա էլ չէր կարողանում անտարբեր անցնել, կանգնում էր ցուցափեղկի մոտ, ծիծաղում ու նոր միայն մտնում ներս:

— Ո՞նց թե ինչի համար են, ռեկլամ է, էլի՛,— պատասխանում էր արհեստանոցի ձևարար Պարգևը,— արտասահմանում ավելի մեծերն են դնում, շենքի ճակատով մեկ, որ ժողովուրդ հավաքվի: Կնայեն, կծիծաղեն, կհամեմատեն իրենց կոշիկների հետ ու հանկարծ կնկատեն, որ իրենց կոշիկները մաշված են, որ հարկավոր է նորը պատվիրել ու արհեստանոց կմտնեն:

— Ինչպես դո՛ւ մտար... ավելացնում էր նա: — Իսկ եթե այդ կոշիկները թեկուզ միայն քեզ բերած լինեին, ինձ այլևս ոչինչ պետք չէր, ոչի՛նչ:

— Դե, լա՛վ,— կիսաբաց դռնից ներսում աշխատող կոշկակարներին ցույց տալով, շառագունում էր աղջիկը,— վերջ տուր, ամոթ է:

— Ի՞նչ ամոթ, շուտով ամուսնանալու ենք, չէ՞, երկու ամիս, ընդամենը երկու ամիս: Հետո կավարտես և... խմում ենք երկու ծաղիկների կենացը:

— Միայն այդ բառերի համար հարսանիք չենք անելու,— բարկանում էր աղջիկը, — տանել չեմ կարողանամ երկու ծաղիկներն ու մի բարձի ծերանալը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դե, լավ, լավ, ոնց որ դո՛ւ ես ուզում: Միայն թե շուտ անցնի երկու ամիսը:

Լավ տղա է Պարգևը: Մինչև նրան հանդիպելը, Լենային թվում էր, թե անհնար է կոշկակարի հետ կոշիկներից բացի էլի ինչ – որ բանի մասին խոսելը: Բայց այդպես չէ: Պարգևի հետ ամեն ինչի մասին կարելի է խոսել, ու նա կհասկանա: Երկար կմտածի, բայց կպատասխանի ճիշտ, հաստատուն, վճռական: Երևի հենց դա էր, որ դուր էր գալիս աղջկան:

Դեռ առաջին օրը, երբ Պարգևը Լենային հայտնեց, որ անչափ ուրախ կլինի նրա հետ երեկոյան թափառել փողոցներում, և Լենան համաձայնեց, տղան հենց սկզբից ասաց.

— Գիտե՞ս ինչ, ավելի լավ է պարզ խոսենք: Ես մի անգամ արդեն ամուսնացել եմ: Բաժանվել եմ կնոջիցս, որովհետև չհասկացանք իրար: Մի փոքրիկ աղջիկ էլ ունեմ, մոր մոտ է: Ալիմենտ եմ տալիս: Եթե այս բոլորը քեզ շատ տհաճ է, միտք չունի անգամ մեր թափառելը: Բայց ես շատ կտխրեմ:

Աղջիկը շատ հուզվեց և կյանքում առաջին անգամ զգաց, թե ինչպես է ցավում սիրտը: Ուզեց հեռանալ, բայց ամաչեց: Փոքրություն կլիներ իր արածը, երբ տղան այդքան անկեղծ էր իր հետ, այդքան պարզ, երբ տղան առանց այդ էլ շատ էր վշտացել կյանքում ու հիմա փաստորեն ոչ ոք չունի:

Ու աղջիկը ոչինչ չասաց:

Հետո նրանք հանդիպում էին համարյա ամեն օր, բայց ինչ – որ անձայն պայմանավորվածությամբ այլևս ոչ մի անգամ չխոսեցին այդ մասին: Տղան ցանկություն չուներ, իսկ աղջիկը գերադասում էր խոսել ինքն իր հետ: Այդպես ավելի լավ էր: Միայն այդ էր թույլ տալիս հպարտությունը:

«Ի՞նչ արած, ամեն ինչ լինում է կյանքում: Հարյուրավոր օրինակներ գիտեմ, երբ մարդիկ ամուսնացել են երկրորդ անգամ, երջանիկ են և էլի՛ հարյուրավոր օրինակներ, երբ մարդիկ չեն բաժանվում միմյանցից, բայց դժբախտ են: Ի՞նչ իմանաս, ո՞րն է ճիշտը, ի՞նչ իմանաս, որտե՞ղ է քո երջանկությունը և եթե ունես, արդյո՞ք երկար կտևի: Կարևորն այն է, որ մենք հասկանում ենք իրար ու սիրում: Կարևորը սերն է: Եթե մի անգամ դժբախտացել է մարդը, դա հո չի նշանակում, որ դժբախտ է լինելու ամբողջ կյանքում, մինչև վերջ»:

Նա չեր կարողանում պատկերացնել, թե ինչպես է ապրել տղան այն մյուսի հետ: Մի՞թե նույն ձևով հանդիպել են, խոսել իրար հետ, թափառել... Անհնար է, որ այդպես եղած լինի: Դա բոլորովին ուրիշ տեսակ է եղել, և շատ վաղուց: Պարգևը երևի չի էլ հիշում ոչինչ, հատկապես հիմա, երբ իրենք միասին են: Եվ ի՞նչ կարող էր լինել նրանց միջև, երբ չեն հասկացել իրար, երբ այն մյուսը չի կարողացել հասկանալ այսքան լավ, այսքան պարզ մարդուն: Դա նույնն է,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

թե նայես գրքին, երբ կարդալ չգիտես: Դա նույնն է, թե գիշերով անցնես ծաղկանոցի մոտով ու չզգաս, որ կողքիդ ծաղիկներ կան: Դա նույնն է, թե քայլես այս փողոցով ու չժպտաս՝ տեսնելով ցուցափեղկում դրված մեծ կոշիկները...

Լենան ժպտաց, բայց ոչ թե կոշիկներին, այլ փոքրիկ մի աղջկա: Աղջիկը կանգնել էր ոտքերի ծայրերին ու զարմացած, կիսաբաց բերանով հսկայական կոշիկներին էր նայում: Նա մեծ – մեծ ժապավեններ ուներ, որոնք ծածկում էին ուսերը: Լենան կանգնեց աղջկա մոտ, հազիվ զսպելով իրեն, որպեսզի չխաղա նրա հյուսերի հետ: Աղջիկը դեռ զարմացած՝ կոշիկներին էր նայում, հետո ապակու մեջ տեսնելով Լենայի պատկերը, դեպի նա դարձավ ու հարցրեց.

— Մորաքույր, ինչի՞ համար են այս մեծ կոշիկները:

Լենան արդեն կարող էր բռնել փոքրիկի ժապավենը:

— Որպեսզի մարդիկ տեսնեն, զարմանան ու արհեստանոց մտնեն, — ասաց նա:

— Իսկ որ չտեսնեն, չե՞ն մտնի, — հարցրեց աղջիկը, ինչպես աշխարհի բոլոր երեխաները կհարցնեին:

— Չէ...

— Ուրեմն հորաքույր Լուսիկը դրա համա՞ր մտավ:

— Չգիտեմ, — ասաց Լենան՝ բաց չթողնելով աղջկա ժապավենը: — Չգիտեմ, սիրուն աղջիկ, հավանաբար:

— Ուրեմն դու է՞լ ես ներս մտնելու:

— Անպայման,— ծիծաղեց Լենան, — դե գնանք ինձ հետ:

— Չէ՛, — ասաց աղջիկը, — ես կոշիկներին եմ նայում: Լենան բաց թողեց աղջկա ժապավենը ու արհեստանոց մտավ:

Պարգևը թիկունքով էր կանգնած դեպի դուռը և լսում էր մի կնոջ, որն անչափ նման էր նրան: Կինը տխուր էր ու շփոթված:

— Շատ է հարկավոր, հասկանո՞ւմ ես,— ասում էր նա,— վաղը դպրոց է գնալու:

— Դե ես ի՞նչ անեմ, — սրտնեղած պատասխանում էր Պարգևը, — ալիմենտ եմ տալիս, թող առնի, էլի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Նա չգիտի էլ, թե ես այստեղ եմ բերել Սուսիկին, — Լենային նկատելով, ձայնը ցածրացրեց կինը, — գնացել էի երեխային տեսնելու, լաց էր լինում: Վաղը դպրոց է գնալու, կոշիկ չունի: Ամբողջ օրը շրջել են խանութներում, ոչ մի տեղ չկա: Երեխան լաց է լինում: Քոնն է, չէ՞, որ ուզենաս...

Ետ դառնալն անհնար էր, բայց անհնար էր նաև այսպես կանգնել, թիկունքից լսելը: Ու Լենան առաջ անցավ, առանց Պարգևին ու Պարգևին շատ նման այդ կնոջը նայելու, ներսի կողմից մոտեցավ ցուցափեղկին ու սկսեց կոշիկներին նայել:

— Ա՛ Լենա, ես հիմա, — նրան նկատելով, առույգ բացականչեց Պարգևը: — Ես հիմա կվերջացնեմ: — Հետո ցածրացրեց ձայնը ու ավելի սրտնեղած, շշուկով ասաց.

— Դե լավ, ես ի՞նչ անեմ, որ չկա: Երեխայի կոշիկ հիմա ոչ մի տեղ չկա: Բոլորը երեխայի կոշիկ են ուզում: Չկա: Ես ի՞նչ անեմ:

— Ձեր արհեստանոցում կարել տայիր, էլի՛ ,— կամացուկ խնդրեց կինը, — ախր լաց է լինում:

— Չկա, հասկանո՞ւմ ես, կոշիկ չունեմ, ո՛չ մի տեղ չկա, ուրիշ արհեստանոցներում էլ չկա, գուցե հետո ստանանք, էդպես մեկ, երկու ամիս հետո, գուցե...

Լենան նայում էր մեծ կոշիկներին ու կոշիկների միջով՝ մեծ ժապավեններով աղջկան: Աղջիկն էլ էր կոշիկներին նայում, իսկ նրա կողքին՝ դիմացի մայթին օշարակ վաճառող ծերունին էր: Երևի նա կրկին ցուցահանդեսի մասին է խոսում, իսկ աղջիկը մտածում է, թե ո՞նց է, որ աշխարհում այսպիսի մեծ կոշիկներ կան, իսկ փոքրիկ կոշիկներ չկան: Ո՛չ մի տեղ:

Լենան նայում էր կոշիկներին ու կոշիկների միջից՝ մեծ ժապավեններով այն աղջկան, որ վաղը դպրոց է գնալու և կոշիկներ չունի: Ու մտածում էր. «Ուրեմն միշտ չէ, որ մարդիկ բաժանվում են միմյանցից՝ իրար չհասկանալու պատճառով: Այս աղջկա մայրը բաժանվել է Պարգևից նրա համար, որովհետև հասկացել է նրան: Հասկացել է»:

— Իսկապես չկա, գիտե՞ս, — Լենայի ականջի մոտ կամացուկ, շփոթված ասաց Պարգևը,— կաշի չունեմ: Ոչ մի տեղ չկա, ո՛չ մի արհեստանոցում:

Լենան մեծ կոշիկների միջից տեսավ, թե ինչպես Պարգևին նման կինը մոտեցավ ժապավեններով աղջկան, բռնեց նրա ձեռքը ու տարավ իր հետ: Եվ աղջիկը վազեց նախ մեկ, ապա մյուս ոտքի վրա ցատկոտելով, հետո կանգնեց ու ետ՝ մեծ կոշիկներին նայեց:

— Ո՞ւր ես գնում,— զարմացավ Պարգևը՝ դռան մոտ Լենայի թևը բռնելով,— երկու րոպե, և կվերջացնեմ: Մենք միասին …

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Չէ՛ ,— ասաց աղջիկը՝ զգուշորեն թևն ազատելով, — ես բոլորովին ուրիշ կողմ եմ գնալու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հողի ոիժը

Տառերը խոշորացան, շարժվեցին, խառնվեցին իրար, ու Սերոբ ամու դեմքի խորշոմների միջով աղի կաթիլները դանդաղորեն գլորվելով ընկան ճերմակ թղթին:

— Ա՛խ, Գեղամ, Գեղամ, դու էդ ի՞նչ արիր, — շշնջաց ծեր այգեպանը և ուժասպառ նստեց դեռ ցողաթաթախ, կանաչ խոտին:

— Ա, Սե՛ր, Սերոբ, ի՞նչ պատահեց,— անհանգստացավ փոստատար Նիկոլը, — վատ լուր է՞ր, Գեղամը հո հիվանդ չի՞:

— Հիվանդ չի,— տնքաց Սերոբ ամին,— գրել է, թե քաղաքում պաշտոն է ստացել... — ու նորից կախեց գլուխը:

— Վայ քո տունը չքանդվի, Սերոբ, տղեդ պաշտոն է ստացել, հեռախոս ունի, էգուց — էլօր «Պոբեդա» —ով կգա, իսկ դու լաց ես լինո՞ւմ: Վայ, աշխա՛րհ, աշխա՛րհ, էստեղ են ասել՝ «փլավն ումն են տվել, իշտահն ումն»: — Ու փոստատար Նիկոլը կռնակն առնելով իր կիսամաշ, ուռած պայուսակը, հեռացավ:

Սերոբ ամին աջ ձեռքը նեցուկ արեց ու փորձեց բարձրանալ տեղից, բայց ոտքերը չենթարկվեցին, պտտվեց գլուխը: Նա հազիվհազ իր հոլիկը հասավ, որը պատած էր դեռ անցյալ տարվա չոր, անուշաբույր խոտով ու թիկնեց թախտին: «Ծերացե՞լ եմ, թե ինչ, հը՞»,— ինքնիրեն հարցրեց նա: Սակայն չուզեց պատասխանել: Իսկ մի ուրիշ ձայն ներսից խոսում էր այնպես բարձրաձայն, որ Սերոբ ամուն թվում էր, թե բոստանում աշխատող կանայք էլ են լսում: Իսկ այդ ձայնն ասում էր. «Խաբում ես, նամակն է, նամակն է պատճառը»: Ու ծեր այգեպանը նորից աչքերը հառեց փայլուն թղթին, որի վրա կապույտ շրջանակների նման չորացել էին արցունքները...

— Է՛, Գեղամ, դու ինձ սպանեցիր...

— Երբ Այգուտում կոլտնտեսություն կազմակերպվեց ու չքավոր, Վարդան աղայի նոքար Սերոբը կոլտնտեսություն մտավ, նրան ասացին.

— Սերոբ, հիմա էլ դու նոքար չես ու իշխանությունն էլ մեր՝ չքավորներիս ձեռքամն է, ինչո՞վ ես ուզում զբաղվել, ասա, ի՞նչ անենք, որ քո կյանքը լավանա:

Սերոբն ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Էլի թողեք, որ բաղումն աշխատեմ:

Ամբողջ հոգով կապված էր Սերոբ ամին այգու հետ, այստեղ իր հայրն էլ էր աշխատել Վարդան աղայի հոր մոտ. բոլոր ծառերը նրա տնկածն են ու թե ծառերից որևէ մեկին մի բան պատահեր, կսկծում էր այգեպանի սիրտը:

Ու շարունակեց աշխատել Սերոբը կոլտնտեսության այգում, շաբաթը մեկ անգամ միայն այցելելով գյուղ, իր տուն՝ կնոջը տեսնելու, սպիտակեղենը փոխելու համար: Ասենք մնացած օրերին էլ կինն էր այգի իջնում: Եվ ապրում էր այգեպան Սերոբը կյանքից գոհ, մինչև որ անակնկալ դիպվածը դժբախտացրեց նրան: Արուսը, Գեղամին ունենալուց հետո, մի շաբաթ անց մրսեց, նորից անկողին ընկավ ու փետրվարյան մի ցրտաշունչ երեկո մեռավ: Մի գիշերում ճերմակեցին Սերոբ ամու մազերը: Հաջորդ օրը այգում, իր հոլիկի մոտ, կտրելով սառը հողը, նա մի գերեզման փորեց… որպեսզի կինը մոտ լինի իրեն, որպեսզի կարողանա խնամել Արուսի գերեզմանը այնպես, ինչպես կյանքում չկարողացավ խնամել ու պաշտպանել նրան…

Իսկ փոքրիկ Գեղամը, ցավին անտեղյակ, սրա — նրա գրկում շրջում էր տնից տուն ու տարբեր մայրերի կաթն ուտում, որոնք օրոր էին ասում ու լալիս որբացած մանկան վրա: Մի երկու տարի հետո միայն, երբ փոքրիկ Գեղամը թոթովելով պարծենում էր թե «ես քսանելկու մոլ ծիծ եմ կելել», այգեպանն իր մոտ այգի տարավ տղային:

Նրանի՞ց էր արդյոք, որ փոքրիկը զարմանալիորեն նման էր մորը, որ Սերոբը մոտ տասը տարի սպասել էր որդուն, թե՞ նրանից, որ երեխան մայր չէր տեսել, երևի բոլորն էլ միասին, որ այգեպանը ինքնամոռացության աստիճանի սիրում էր որդուն, կապված էր նրա հետ, ուրախանում էր նրա ամեն մի նոր խոսքով, ամեն քայլով: Սերոբ ամին նրա մեջ տեսնում էր իր օջախը ծխացնողին, երազում, որ նա էլ այգեգործ դառնա, միայն այնպիսինը, որ ավելի լավ հասկանա ծառերի լեզուն, կարողանա բուժել նրանց ցավերը:

Տարիներ անցան, ծառերի տակ, գետի ափին, անհոգ ու ազատ մեծացավ Գեղամը, ու Սերոբ ամին նրան գյուղի ծայրին բացված միջնակարգ դպրոցը տարավ:

Մի օր էլ այգեպանը նկատեց, որ հիվանդացել է հոլիկի դիմացի մեծ խնձորենին: Սկզբում միայն ծառի բարակ ճյուղերը դեղնեցին, տերևները խամրեցին ու կուչ եկան, հետո խնձորենին սկսեց արագորեն չորանալ: Սերոբ ամին ցավով մտածեց մեծ ճյուղը կտրելու մասին, բայց ուրիշ ճանապարհ չկար, հարկավոր էր հեռացնել, անջատել հիվանդ մասը, որպեսզի ամբողջ ծառը չփչանար:

Ու կտրում էր Սերոբ ամին չորացած ճյուղը, կտրում ու ափսոսանքի խոսքեր մրմնջում, բարկանում իր անզորության վրա, նրա համար, որ գյուղում մի խելքը գլխին գյուղատնտես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չկա, երբ Գեղամը, որը ուշադիր հոր ձեռքի անկամ շարժումներին ու վշտոտ դեմքին էր նայում, հանկարծ ձգեց նրա արխալուղի թևքը ու մանկական լրջությամբ ասաց.

— Հայրիկ, որ մեծանամ, անպայման գյուղատնտես կդառնամ, չեմ թողնի, որ մեր ծառերը չորանան...

Ու մեծացավ: Տարիներ անցան: Կյանքն ավելի լավացավ: Ընդարձակվեցին կոլտնտեսության այգիները, սկսեցին մեծ եկամուտ տալ: Հետո մրրիկի նման եկավ պատերազմն ու անցավ, կնճռոտեց մարդկանց ճակատները, առատ արցունքներ խլեց մայրերի աչքերից, ու նորից, ինչպես ամենուրեք՝ խաղաղություն հատատվեց Այգուտում:

Գեղամն ավարտեց գյուղի միջնակարգ դպրոցը և, ի ուրախություն Սերոբ ամու, ընդունվեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական ֆակուլտետը: Կատարվեց այգեպանի իղձը: «Հըրես ուսում առած, գյուղատնտես դարձած կգա մեր տղեն, կսարքի իր տունը, Ալեքսանանց Անուշին էլ աչք եմ դրել, թե սիրի՝ կպսակվի ու... էլ չեն չորանա ծառերը», — հուզված, մտորում էր Սերոբ ամին, նստած կնոջ գերեզմանի մոտ՝ փոքրիկ նստարանին:

Ամեն անգամ, երբ գյուղում խոսք էր բացվում քաղաքում ուսում առած և «Նոյի ագռավ» դարձած տղաների ու աղջիկների մասին, երբ ոմանք տրտնջում էին, թե իրենց զավակները թռչում են քաղաք, մի կերպ այնտեղ գլուխ պահում ու էլ չեն վերադառնում գյուղ, Սերոբ ամին ծանրորեն օրորում էր գլուխն ու նախատում բողոքողներին.

— Ինչի՞ եք տրտնջում, մեղավորը դուք եք, չեք կարողացել երեխեքին հողի հետ կապել, սիրել տալ մեր գյուղի կյանքը:

— Էդ խի՞ ես ըտենց ասում, Սերոբ,— ամենից հաճախ ընդդիմախոսում էր դարբին Վարդանը, որի տղան Երևանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո շրջանից խուսափելու նպատակով հանրապետական դատախազի տեխնիկական քարտուղարն էր դարձել,— հիմի ես ի՞նչ մեղավոր եմ, որ իմ տղեն գյուղ չի գալիս, բա ես նրան է՞դ եմ սովորեցրել: Էնա բեդովլաթ ա, էլի՛:

Ու հիմա այս նամակի պատմությունը: Ի՞նչ անել, ինչո՞վ արդարացնել որդու քայլը, ի՞նչ անուն դնել նրա արարքին: «Խայտառակվեցի բոլոր գյուղացիների մեջ, վա՛յ, Գեղամ, Գեղամ»,— ծանր հառաչեց այգեպանը՝ նոր միայն նկատելով, որ մթնել է, որ սովորականի պես չի բոցկլտում կրակն օջախում ու մրով պատած սև թեյնիկը թափուր է...

— Էհե՛յ, Սերոբ ամի, Սերոբ ամի, — մոտիկից, ինչ – որ տեղից լսվեց մի թավ ձայն, ու արձագանքը հնչեց դիմացի քարափում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հե՛յ,— մոռացավ այգեպանն ամեն ինչ ու դուրս թռավ հոլիկից:

Գիշերային լռության մեջ պարզ լսվեցին պայտերի զարկերը քարերի վրա: Ձիավորը թափով վայր ցատկեց թամբից:

— Բարի երեկո, Սերոբ ամի:

— Բարի ըլի գալդ, Մացակ ջան:

— Բարին բարի է, անցնում էի, տեսնեմ այգու դռները բաց, քո հոլիկումն էլ լույս չկա: Ասացի՝ մի տեսնեմ ինչ է եղել: Հիվանդ հո չե՞ս, Սերոբ ամի, էդ ո՞ւր:

— Գնամ բաղի դռները փակեմ:

— Ես փակեցի,— կոլտնտեսության վարչության նախագահը ձիու սանձը կապեց ծառին ու այգեպանի հետքով հոլիկը մտավ: Ծղրիդներն արդեն սկսել էին իրենց միօրինակ երգը:

— Է՛, այգու գործերը ո՞նց են, Սերոբ ամի, — հարցրեց Մացակը, իսկ մտքում ասաց. «տեսնես գլխի՞ է ընկել, թե ինչի եմ եկել»:

— Լա՛վ ա,— ծոր տվեց այգեպանը,— էս տարի բերքը չտեսնված կլինի, ընկեր նախագահ, սկի չլինի՝ մի միլիոնի եկամուտ կունենանք,— ու յուրովի մտածեց. «տեսնես լսե՞լ է նամակի մասին»:

Մի պահ ծանր, ճնշող լռություն տիրեց: Երկուսն էլ կեղծել չէին կարող: Բայց ավելի շուտ հանձնվեց Մացակը:

— Սերոբ ամի, ականջովս ընկավ, թե Գեղամից նամակ ես ստացել: Ի՞նչ է գրում, ո՞նց է:

«Մերդ չմեռնի, փոշտալյոն Նիկոլ, արդեն տարածել է ամեն տեղ», — մտածեց այգեպանն ու պատասխանեց ոչ միանգամից.

— Մացակ, քեզանից չեմ պահի, դու, ճիշտ է, իմ տղից երկու տարի շուտ ես ավարտել, բայց նրա ընկերն ես, իրար հետ եք մեծացել, — նրա ծնոտը դողաց, — ու հիմի սաղ շուռ եկավ, — նա նորից ինչ – որ բան ուզեց ասել, բայց չկարողացավ, թափ տվեց ձեռքը ու նամակը մեկնեց կոլտնտեսության նախագահին,— առ, կարդա՛:

Մացակը վերցրեց նամակը: Գեղամը կարճ էր գրել: Գերազանց քննություններով ավարտել է ինստիտուտը, նշանվել բժշկական ինստիտուտն ավարտած իր մի քանի տարվա մտերիմ ընկերուհու հետ, որի հայրը գյուղատնտեսության մինիստրի տեղակալն է, և աշխատանքի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նշանակվել գյուղմինիստրությունում: Առայժմ հանրակացարանում է ապրում, բայց որ հայրը համաձայնվի քաղաք գալ, ինքը սենյակ կստանա ու կամուսնանա շուտով: Վերջում Գեղամը շատ – շատ ներողություն էր խնդրում, որ այսքան ժամանակ թաքցրել է հորից վերջին դեպքերը, ու նորից պնդում, որ հայրը Երևան գա: «Հայրիկ ջան,— գրում էր նա, — ճիշտ է, գիտեմ, որ ծանր կլինի քեզ համար գյուղից հեռանալը, բայց դե ինչ անես, հանգամանքներն այդպես դասավորվեցին որ գաս, մանրամասն կպատմեմ: Սպասում եմ»:

— Կգնա՞ս, — նամակը վերադարձնելով, հանկարծ հարցրեց Մացակը ու իսկույն զղջաց հարցի համար:

— Դու էլ ես էդպես մտածում, հա՞, — Սերոբը շեշտակի նայեց կոլտնտեսության նախագահի աչքերին, — ուրեմն դրա համա՞ր եմ ամբողջ կյանքումս քրտինք թափել էս հողերի վրա: Ինչո՞վ է պակաս մեր գյուղը: Ումի՞ց ենք վատ ապրում…, — ծեր այգեպանը հուզված լռեց, ապա ավելացրեց, — իսկ դու ինչո՞ւ չմնացիր, հը՞, մնայիր, էլի՞, փառք աստծո, ծնողներդ մենակ չէին, չորս երեխա էլ տանը կար, չկարողացար, չէ՞, հողը քաշեց: Ես էլ էդ եմ մտածում, թե ոնց մեր Գեղամը մոռացավ իր գյուղը…

Հեռախոսի զանգը սթափեցրեց Գեղամին: Նա արագ շարժումով վերցրեց լսափողը: Արտաշատի մեքենատրակտորային կայանից հացահատիկի բերքահավաքի կատարողականն էին հաղորդում: «Արդեն մթերակայանն է հանձնվել 300 տոննա ցորեն, բերքահավաքը շարունակվում է»: Կողմնակի մարդու համար բոլորովին չոր ու անհետաքրքիր այս բառերի մեջ Գեղամը հասուն արտերի, դաշտամիջյան փոշոտ արահետի ծանոթ բույրն զգաց, լսեց կոմբայնի համաչափ թփթփոցը ու կալերում աշխատող արևառ դեմքերով կանանց աղմուկը, որոնց մազերը միշտ ծղոտի մանրիկ կտորտանքներով են զարդարված, ու մտքով Այգուտ սլացավ՝ իրենց գյուղը լեռան լանջին: Ծովի պես անսահման ու ծփուն արտերը հիշեց, որոնցից մանուկ հասակում ընկերների հետ փունջ էր կապում և «հեղի» անում, հետո էլ իրենց հոլիկը հիշեց՝ այգիների մեջ թաղված, միշտ բարի ու աշխատասեր հորը ու ճերմակ, մենավոր քարը՝ խնձորենու տակ…

Առանձնասենյակի դուռը կիսաբաց եղավ: Երևացին երկու գլուխ:

— Կարելի՞ է, ընկեր Դալլաքյան, պահ, պահ, պահ, տեսնո՞ւմ ես մեռածին, իրե՛ն, կաբինե՛տը, էլ հետը խոսել չի լինի,— թնդաց ներս մտնողի բարիտոնը:

— Չե՞ք տեսնում, որ զբաղված եմ, ընդունելությունը 2 — ից 4 — ն է, — կատակին կատակով պատասխանեց տեղից վեր թռած Գեղամը ու ծիծաղելով ողջագուրվեց ընկերոջ հետ, — Լուսիկ, նստիր, ի՞նչ ես կանգնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Նստելու ժամանակ չունենք, երեք ժամից հետո մեկնում ենք, ասացի գնանք Գեղամին հրաժեշտ տանք:

— Արդեն գնո՞ւմ եք, — Գեղամի դեմքով տխրության ստվեր անցավ, — բա քեզ ո՞նց թողեցին, Տիգրա՛ն:

— Ըս՛ս, — մատը վեր տնկեց Տիգրանը, — հիմա, քո կարծիքով, մեր ինստիտուտի դիրեկտո՞րն է ուժեղ, թե Լուսիկը: Ինքը չկարողացավ ասպիրանտուրա ընդունվել, ինձ էլ չի թողնում:

— Բա կթողնե՞մ,— մեջ ընկավ Լուսիկը, — առանց այն էլ կուրսում մի քանիսը մեզ բամբասում են, թե ամուսնացել են, որ քաղաքում մնան: Հիմա թող տեսնեն, որ թե՛ ես եմ գյուղ գնում, թե՛ քեզ հետս եմ տանում:

«Էլի նույնն են մնացել, — դասընկերներին նայելով, գորովանքով մտածում էր Գեղամը, — ամեն ինչի մեջ կատակ ու ծիծաղ: Ծիծաղով սովորում էին, ծիծաղով ավարտեցին ու հիմա էլ ծիծաղով գյուղ են մեկնում աշխատելու, այ իսկապես բախտավոր մարդիկ»: Ու կարծես ինչ – որ բանում բռնեց իրեն. «նախանձո՞ւմ եմ» և բարձրաձայն ասաց.

— Տիգրան, Լուսիկ, ազնիվ խոսք, նախանձում եմ ձեզ, ինձ թվում է, թե ձեզ համար ամեն ինչ մի տեսակ հեշտ է:

— Իսկ ես կարծում էի, թե Վախթանգի պես պիտի սեղմես ձեռքս ու ասես. հպարտանում եմ քեզանով, սիրելի եղբայր, որ ասպիրանտուրան զոհեցիր կուսակցության կենտկոմի հունվարյան պլենումի որոշումը կենսագործելու համար: Բայց ես, ցավոք սրտի, չեմ կարող հետևել քեզ, ստիպված եմ ինստիտուտի լաբորատորիայում մի տարի աշխատել, որպեսզի մյուս տարի նորից բախտս փորձեմ ասպիրանտուրա ընդունվելու համար, քանզի զգում եմ, որ իմ կոչումն է գիտնական դառնալը: Այո, այո՛, գիտնական դառնալը…

Տիգրանը այնպես հաջող ընդօրինակեց իրենց մեծախոս կուրսեցուն, որ Գեղամի ու Լուսիկի աչքերից արցունքներ ցայտեցին: Հետո միանգամից լրջացավ ու աջ ձեռքը մտերմաբար դնելով ընկերոջ ուսին, ասաց.

— Գիտե՞ս ինչ, Գեղամ ջան, ինչ գործ ուզում է լինի, եթե սրտով կպչես, կդառնա հեշտ ու հաճելի: Է՛, իսկ գործերդ ո՞նց են, յոլա գնո՞ւմ ես,— ու ասես կռահելով, թե Գեղամն ինչ պետք է պատասխանի, ավելացրեց, — դե, ոչինչ, աշխատիր, այստեղ էլ քիչ գործ չկա անելու: Իսկ եթե հանկարծ սիրտդ մածուն ուզի, հեռու չէ քո գոված Այգուտը:

— Տիգրան, ուշանում ենք:

— Հա՞, դե գնացինք, ցտեսություն, Գեղամ, թե հիշես, նամակ գրի, իսկ ես քեզ կգրեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գեղամը մինչև աստիճանները ուղեկցեց ընկերներին և առանձնասենյակ վերադարձավ հոգին լի ճնշող թախիծով:

«Ինչո՞ւ հայրս չպատասխանեց նամակիս... Իսկ ի՞նչ պատասխանի, — հանկարծ նրա հոգու խորքից խոսեց թաքնված, ասես ուրիշ մի ձայն, — ի՞նչ պատասխանի, գրի, թե երախտագիտությամբ ընդունում եմ հրավերդ, որովհետև ուզում ես ինձ բաժանել իմ գյուղից, տնից, այգուց ու հարազատների՞ց: Ի՞նչ գրի, գրի, թե, ապրես, տղա՛ս, որ այդքան շուտ մոռացար խոստումներդ... ծննդավայրդ...»:

...Իսկ հեռախոսը զնգում էր, զնգում էր անընդհատ: Գեղամը դժկամությամբ վերցրեց լսափողը:

— Գեղամ, այդ դո՞ւ ես... հենց հիմա գնա ու սիմֆոնիկի տոմս վերցրու...

— Գոհարիկ Ստեպանովնա, — անհույս առարկեց Գեղամը,— բայց այսօր սիմֆոնիկ համերգ չկա:

— Դե, ինչ ուզում է լինի, միայն համերգային մեծ դահլիճում:

— Լավ, բայց աշխատանքի ժամին ո՞նց դուրս գամ:

— Վահ, ա՛յ քեզ նորություն... դե, լավ, բարձրացիր Կարոյի մոտ, ես զանգ կտամ նրան... Պադումայե՛շ, աշխատանքի ժամին...

Երբ Գեղամը թթված դեմքով բացեց իր հարսնացուի հոր՝ մինիստրի տեղակալի առանձնասենյակի դուռը, Կարապետ Սամսոնիչը ականջից բավականաչափ հեռու բռնել էր լսափողը ու ձանձրույթ և հոգնածություն արտահայտող դեմքով անընդհատ գլխով էր անում: Հետո բնավ իսկ չփոխելով դեմքի մռայլ արտահայտությունը, հանկարծ քնքշորեն ասաց.

— Հրամանդ իսկույն կկատարվի, ջանս, դե, իհարկե, մեծ բան չէ:

Գեղամը զարմանքով շուրջը նայեց: Նրան թվաց, թե մեկ ուրիշը արտասանեց այդ խոսքերը, այնքան հակադիր էին Կարապետ Սամսոնիչի դեմքն ու ձայնը:

Մինիստրի տեղակալը զգուշորեն վար դրեց լսափողը, մատներով այն ամուր սեղմեց լծակին, ասես վախենալով, թե կարող է նորից ինքն իրեն բարձրանալ տեղից, ու դարձավ դեպի փեսան.

— Դե, ի՞նչ, պիտի գնաս, ախպերս, ընկել ես, պիտի քաշես, հրամանը հրաման է, — հետո հանկարծ ավելացրեց, — հայրիկիցդ պատասխան չստացա՞ր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գեղամը կարծես դրան էր սպասում, որ ասի այն ամենը, ինչ կուտակված էր սրտում:

— Ո՛չ, հայրս չի պատասխանում: Բայց անկեղծ ասեք ինձ. չէ՞ որ դուք ավելի քան քսան տարի շրջանում եք աշխատել և միշտ հաճույքով եք հիշում այդ տարիները, ինչո՞ւ Գոհարիկ Ստեպանովնան թույլ չի տալիս, որ Իվետայի հետ գյուղ գնանք, չէ՞ որ ինքը՝ Իվետան, դեմ չէ, իսկ հայրս մենակ է այնտեղ: Ախր հետո դուք էլ լավ գիտեք, որ այս աշխատանքը սրտովս չէ, իմ տեղը չէ: Հիմա շատ — շատերը, նույնիսկ ոչ մասնագետներ, գյուղ են մեկնում՝ կոլտնտեսությունները ուժեղացնելու նպատակով, ինչո՞ւ ես չգնամ, երբ հաստատ գիտեմ, որ այնտեղ ավելի պետք կգամ, քան այստեղ:

Կարապետ Սամսոնիչը աջ ձեռքը բաճկոնի կոճակին տարավ: Այդ նրա հուզված լինելու նշանն էր: Եվ կամացուկ, ասես որևէ մեկը կարող էր լսել նրան, ասաց.

— Գեղա՛մ, դու գիտես, որ Իվետայից բացի ոչ ոք չունեմ ես, նա մեր միակ զավակն է, և ավելորդ կլինի ասելը, որ անպայման նրա երջանկությունն եմ ուզում: Բայց եթե քո տեղը լինեի ու քեզ նման ջահել, չգիտեմ ինչպես, բայց անպայման կաշխատեի համոզել Իվետային՝ հեռանալու ինձ հետ: Եվ... և չգիտեմ ինչու՝ ես հավատացած եմ, որ Իվետան չի մնա այստեղ, նա կգա քո ետևից... Միայն խնդրում եմ, — Կարապետ Սամսոնիչը անսպասելի կարմրատակեց, — մեր մեջ մնա: Ես քեզ հետ չեմ խոսել: Հանկարծ Գոհարիկի մոտ չվկայակոչես ինձ,— նա կմկմաց ու ավելացրեց,— մահու չափ ատում եմ ընտանեկան տեսարանները…

Համերգի առաջին բաժինը վերջացավ: Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճի կամարների տակ թնդաց ծափերի որոտը: Ամառային թեթև շրջազգեստներ հագած տղամարդիկ ու կանայք սկսեցին դուրս դալ դահլիճից:

— Քայլիր երկուսիս մեջտեղով և թևանցուկ արա մեզ,— լսեց Գեղամը Գոհարիկ Ստեպանովնայի առարկություն չվերցնող ձայնը, — այդպես սիմետրիկ կլինի:

Գեղամը հնազանդվեց ու որպես սիմետրիայի առանցք առաջ շարժվեց վառ գույնզգույն ու մեծ ծաղիկներով չինական շրջազգեստներ հագած Գոհարիկ Ստեպանովնային և Իվետային թևանցուկ արած: Կարապետ Սամսոնիչը ինչ – որ ընկեր էր գտել ու իջել ներքև՝ բուֆետ: Տիկին Գոհարիկը իր տարերքի մեջ էր: Նա խոսում էր, ժպտում, ծիծաղում՝ ցույց տալով կանոնավոր դասավորված, ճերմակ ատամները, Գեղամի կրծքի վրայով թաքուն ինչ – որ բան ասում Իվետային ու նրա աչքերն ուղղում դեպի այն կինը կամ տղամարդը, որոնք հետաքրքրությամբ նայում էին անսովոր ու տարօրինակ շրջազգեստներին:

— Ասես մանեկեններ լինեն,— ծիծաղեց մեկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գեղամի համբերությունը գնալով սպառվում էր: Նա իրեն բոլորովին ավելորդ զգաց այստեղ ու առիթից օգտվելով, որ Գոհարիկ Ստեպանովնան բաց թողեց նրա թևը և միացավ ընկերուհուն, մի կողմ տարավ Իվետային:

— Իսկապե՞ս դու քեզ լավ ես զգում նոր հագուստիդ մեջ:

— Դե, ինչպես ասեմ, այնքան էլ չէ, բայց դու հասկացիր, մաման է կարել տվել. հո չէի՞ կարող մերժել: Հետո ախր նա ամեն ինչ ինձ համար է անում, որպեսզի ես լավ երևամ, ետ չմնամ ոչ ոքից:

— Իսկ ինչի՞դ է հարկավոր լավ երևալը, ո՞ւմ ես ուզում զարմացնել, մի՞թե կարծում ես, թե դրանով է որոշվում որևէ մեկից ետ մնալը կամ չմնալը, — ոչ այն է բարկացած, ոչ այն է համոզելով, հարցրեց Գեղամը,— լավ, դու չե՞ս զգում, որ աչք եք ծակում...

— Դե դու էլ ի՞նչ ես կպել հագուստից, Գեղամ, ով ինչ ուզում է, թող ասի, նրանց ինատու վաղը մի ավելի անսովոր բան կհագնեմ: Ճիշտ է ասում մաման, բոլորն էլ նախանձում են:

— Լավ, այդ մասին հետո, — Գեղամն այս խոսքերն այնպես չոր ու կտրուկ ասաց, որ Իվետան վախեցած նրա դեմքին նայեց,— այդ մասին հետո: Իսկ հիմա լրջորեն մի հարց եմ ուզում տալ: Այ, ես երեկ դիմում տվեցի աշխատանքից ազատվելու համար ու վերադառնալու եմ գյուղ, իմ վաղուցվա վճիռը արագացրեց այն, որ ես իմացա, թե հայրս հիվանդ է: Գալի՞ս ես ինձ հետ գյուղ:

— Հայրդ հիվա՞նդ, է,— այնպես վշտացած ու անկեղծ հարցրեց Իվետան, որ Գեղամի մեջ հօդս ցնդեցին ամբողջ չարությունն ու վճռականությունը, — որտեղի՞ց իմացար:

— Մեր գյուղացիներից մեկն ասաց ու ակնարկներով էլ հասկացրեց, որ իմ գրած նամակն է հիմնական պատճառը, այնպես որ ես չեմ կարող մնալ, չեմ մնա և ոչ մի օր, ինձ թվում է, թե դու կհասկանաս: Ի՞նչ ասեմ, կգա՞ս, հա՞...

— Դու կարծում ես, թե ես խուսափո՞ւմ եմ գյուղ գնալուց,— Իվետան լայն բացեց իր նշաձև, սև աչքերը, որից նրա դեմքն ավելի գեղեցկացավ,— ի՞նչ է, ես լրագիր չե՞մ կարդում, ես ինստիտուտ չե՞մ ավարտել: Այդ բոլորը ես շատ լավ եմ հասկանում, բայց դու մի մեղադրիր ինձ, Գեղամ ջան, ես չեմ ուզում վշտացնել մորս, նա լսել անգամ չի ուզում գյուղի մասին:

— Ախր ինչո՞ւ:

— Այո՛, լսել անգամ չեմ ուզում գյուղ գնալու մասին,— ընկերուհու հետ զրուցելն ավարտելուց հետո ու անչափ վշտացած, որ նա ոչ միան չշնորհավորեց իր նոր շրջազգեստը, այլև վրան իսկ չնայեց, խոսակցությանը խառնվեց տիկին Գոհարիկը,— ճիշտ է, լսել անգամ չեմ ուզում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գյուղ… քաղաքացի աղջիկ, նախանձելի շրջապատ, հիանալի առանձնատուն, բարձրագույն բժշկական կրթություն, զարգացած, կուլտուրական ծնողներ… Թողնել այս բոլորը ու ինչ – որ գյուղ գնալ, ուր աքաղաղներն են կանչում և միահարկ, հողաշեն տնե՞ր կան, ա՛յ քեզ ճաշակ, այստեղ են ասել…

Գոհարիկ Ստեպանովնան կծեց շրթունքը, բայց արդեն ուշ էր:

Գեղամի դեմքը ճերմակեց: Նա զգում էր, որ եթե սկսի խոսել, ապա կանպատվի, բայց հարկավոր էր մի բան ասել: Գեղամը խոսք չէր գտնում ասելու ու հանկարծ հանգստացավ, և նրա ամբողջ զայրույթը փոխվեց խորին արհամարհանքի դեպի պճնված, անսիրտ, դատարկ ու մեծամիտ այդ կինը:

— Տիկին,— ասաց նա, հանդարտությամբ ետ տանելով Իվետայի ձեռքը,— իմ ընկերներից շատերն արդեն գյուղ են մեկնել: Մի փոքր ուշացումով, բայց վաղը մեկնելու եմ նաև ես, որովհետև կոլտնտեսությունում ավելի շատ է զգացվում մեր կարիքը, քան այստեղ: Բայց ի՞նչ եմ ասում, միևնույն է, դուք դա չեք հասկանա:

— Ինչպե՞ս ես համարձակվում, ինչպե՞ս ես համարձակվում,— հիստերիկայի մեջ ընկավ Գոհարիկ Ստեպանովնան,— դու ծաղրո՞ւմ ես ինձ: Ո՞ւր է, ո՞ւր գնաց Կարոն, թող լսի, թե ինչպես է խոսում ինձ հետ իր գոված «խելոք ու պարկեշտ» փեսացուն…

Բայց եթե տիկին Գոհարիկը այդքան հուզված չլիներ, եթե նա իր մատները կոտրատելու հետ միաժամանակ նայեր ետ, ապա երևի տեսներ, թե ինչպես իրենցից մի քանի քայլ հեռու, սյունի ետևում Կարապետ Սամսոնիչը խորին բավականությամբ ականջ է դնում վեճին և Գեղամի արտասանած ամեն մի նախադասության վերջում ուղղում փողկապը, ինչպես անում էր սովորաբար, երբ ինքն էր խոսում:

— Ես ասացի այն, ինչ մտածում եմ, — վերջացրեց Գեղամը ու դառնալով դեպի Իվետան, որը ափի մեջ տրորում էր թաշկինակը, նույն հանգիստ տոնով հարցրեց, — դե, ի՞նչ որոշեցիր, Իվետա, գնո՞ւմ ենք:

Իվետան չպատասխանեց: Նա մինչ այդ երբեք չէր հավատում, որ Գեղամը կարող է գնալ ու այն էլ առանց իրեն: Առաջին անգամը չէր, որ Գեղամը այդ հարցը տալիս էր նրան, բայց մի ժպիտ, մի խոստումնալից հայացք բավական էին, որպեսզի դա մոռացվեր: Իսկ հիմա Իվետան նայում էր տղային՝ հաստատ համոզված, որ նա կգնա, կգնա ու նույնիսկ ետ չի նայի: Եվ չսխալվեց:

Տիկին Գոհարիկը աղջկա փոխարեն անմիջապես վրա տվեց, թե ինքը աղջիկ չունի գյուղացու տալու, և նա կարող է գնալ ուր ուզում է: Իվետան միայն տրտմությամբ ու նախատինքով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նայեց մորը ու վար կախեց գլուխը: Գեղամը միայն մի վայրկյան կանգ առավ, ցավի, ափսոսանքի ու հիասթափության զգացումներով խառը մի հայացք ձգեց Իվետայի վարանոտ, հուսահատ կերպարանքին, թաշկինակը դեմքին սեղմող այնքան հարազատ ու սիրելի ձեռքերին, որոնք դեռ երեկ շոյում էին իր մազերը և հանդարտ քայլերով իջավ աստիճաններից:

Հնչեց երրորդ զանգը:

Հարուստ ու գեղեցիկ են Այգուտի այգիները: Հեռվից նրանք նման են հովասուն, կանաչ օազիսի՝ հասուն արտերի բաց դեղնավուն ֆոնի վրա: Տարվա այն եղանակն է, երբ արևն ավելի ու ավելի առատորեն է իր շողերը սփռում թավիշ կանաչին, ալ – կարմիր գույն տալիս կեռասին ու բալին, կապույտ գույնը՝ սալորին, և շիկնեցնում խնձորի ու տանձի այտերը: Իսկ ծառերի տակ, երկար, կանոնավոր մարգերում հասնում են պոմիդորն ու բադրիջանը, վարունգն ու բիբարը, սեխն ու ձմերուկը: Առատ, շա՛տ առատ բերք է սպասվում այս տարի:

Բայց առաջվա նման այդ ամենով չի հրճվում ու մանկան պես ուրախանում Սերոբ ամին: Ոչ ոք չի կարող ասել, թե Սերոբ ամին թերանում է իր պարտականությունները կատարելու մեջ: Ամեն ինչ իր ժամանակին անում. հենակներ է դնում խնձորի կամ տանձի ծանրաբեռնված, գետին կռացած ճյուղերի տակ, ճիշտ ժամին ջուրը դեպի մարգերն է բաց թողնում, ընթացք տալիս, ուշադիր հետևում կեռասն ու բալը քաղող այգեգործական բրիգադի անդամներին՝ հո չե՞ն վնասել ճյուղերը, իսկ երեկոները ամուր – ամուր փակում է այգու դռները:

Բայց տխուր էր Սերոբ ամին: Նրա թախիծն ավելի էր սաստկանում, երբ մենակ էր մնում, երբ կոլտնտեսականները վերջացնում էին իրենց աշխատանքներն ու երգելով սարն ի վեր, դեպի գյուղ բարձրանում ու երբ գորշ կապտավուն մթնշաղն էր իջնում այգիների վրա:

Այնժամ Սերոբ ամին իր հոլիկն էր քաշվում, առանց ճրագ վառելու թիկն տալիս թախտին, աչքերը երդիկից երևացող երկնի կապույտին հառում ու սուզվում մտածմունքների մեջ: Կրկին ու կրկին հիշում էր մանկական ինչ – որ աղոտ դեմքեր, իր մորն էր հիշում՝ արծաթե թագով ու շալի ծայրը միշտ սեղմած բերանին, Արուսին էր տեսնում՝ բարությունը դեմքին, որը նրանից չէր հեռացել մահվան ժամին անգամ: Բայց Սերոբ ամուն ամենից շատ վիշտ էր պատճառում այն, որ նա Արուսի հետ անցկացրած իր տասներկուամյա կյանքի լավ, ուրախ դեպքերը չէր հիշում, այլ, ընդհակառակն, հիշում էր միայն այն դեպքերը, երբ ինքը վիրավորում, կոպտում էր նրան, չափից ավելի խանդում, տանջում ու տանջվում նրա հետ:

Կոպերը ծանրանում են, հիշողությունները մեկը մյուսի ետևից անցնում արդեն փակված, հոգնած աչքերի առջևով, գլուխն անուժ թեքվում է ձախ ուսին: Սերոբ ամուն թվում է, թե ինքը հանեց շորերը, ետ տարավ վերմակի սառը կողը ու պառկեց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

… Ու թվաց նրան, թե ինքը նորից ջահել է, ինչպես տասնյակ տարիներ առաջ, կանգնել է Կիյուկի առվի մոտ ու Արուսին է սպասում: Հետո Արուսին տեսավ ասես շղարշի մեջից՝ դեմքը գունատ, տխուր ու գեղեցիկ: Նա դեպի Սերոբն էր գալիս՝ ձեռքերին բռնած փոքրիկ, շատ փոքրիկ մի երեխա…

— Ա՛ռ,— լսեց Սերոբ ամին ծանոթ ու հեռավոր մի ձայն, — սա քոնն է, Գեղամն է:

Սերոբ ամին նայեց Գեղամին ու տեսավ նրան բռնող ձեռքերը, որ երկար — երկար էին ու ձգվում էին հեռու, դեպի ամպի մշուշը, որտեղից իրեն էին նայում Արուսի տխուր, մելամաղձոտ աչքերը:

— Բա դո՞ւ,— ինչքան ուժ ուներ գոչեց նա, գրկելով որդուն,— ու՞ր ես գնում, — ու սարսափով զգաց, որ ձայնը դուրս չի գալիս կոկորդից: — Արո՛ւս — հեկեկաց նա, — մի՛ գնա: — Իսկ ամպերը գլորվում էին, խառնվում իրար, արագորեն հեռու սլանամ՝ իրենց հետ տանելով նրան:

— Հեյ վա՛խ,— գոչեց Սերոբ ամին,— Արուս, ինձ մենակ մի թող, ու զարմանքով լսեց հեռավոր մի ձայն՝ «Սերոբ, Սերոբ, վեր կաց, Սերո՛բ»:

— Սերոբ, ա՛ Սեր, վահ, ես մարդը ուշաթափ ա՞, — համբերությունից դուրս եկած բղավեց փոստատար Նիկոլը,— այ մարդ, վեր կաց, Գեղամը գալիս ա:

Սերոբ ամին երազի ազդեցության տակ մի րոպե ոչինչ չըմբռնող, ոչինչ չարտահայտող աչքերով նայեց փոստատարին:

— Գեղամը գալիս ա, Սերո՛բ,— կրկնեց նա:

— Ո՞ւր է,— հանկարծ այնպես բացականչեց Սերոբ ամին, որ Նիկոլին թվաց, թե սա խելքը թռցրեց,— ո՞ւր է Գեղամը:

— Կամաց, այ մարդ, կայարանումն է:

— Բա ինչի՞ չի գալիս: Մենակ է՞:

— Մենակ է, ասացի իրար հետ գնանք, թե՝ չէ, մեծ քեռիս՝ Ասատուրը սայլով ցորեն է բերել մթերակայան, շուտով ետ կդառնա, նրա հետ կգամ: Դե, սայլն ուր, ես ուր, եկա, որ աչքալուսանք տամ:

— Վայ, աչքդ միշտ բարին տեսնի, ուրախանաս երեխեքովդ, թոռներովդ,— սրտանց մաղթեց Սերոբ ամին, — Նիկոլ ջան, մրգից — բանից վերցրու, երեխեքին տար…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սերոբ ամին անճանաչելի դարձավ: Նա իր տարիքին անհամեմատ արագ ու աշխույժ շարժումներով կարգի բերեց անկողինը, ծաղիկներից հյուսված ավելով մաքրեց հողե հատակը, առվակից ջուր բերեց, ցայեց հատակին ու հոլիկի շուրջը:

Ձորից սայլանիվների ականջ ծակող ճռինչ լսվեց: Սերոբ ամին ֆռֆռացնելով արխալուղի փեշերը դուրս թռավ այգուց ու արագաքայլ սայլին ընդառաջ գնաց:

Գեղամը տեսավ հորը: Նա ցատկեց սայլից ու մեծ – մեծ քայլերով մոտեցավ նրան.

— Հայրի՛կ:

— Ջա՛ն, — կարողացավ միայն արտասանել Սերոբ ամին: Նա վեր կռացրեց որդու գլուխը ու կրծքին սեղմեց: Հետո ներքևից վերև նայելով Գեղամին, ասես վախենալով հարցրեց.

— Մշտակա՞ն:

— Մշտական, հայրիկ:

Օջախի վրա աշխույժ երգում է թեյնիկը: Օճորքից կախված լամպը լուսավորում է փոքրիկ սեղանը, որի վրա նկարիչն ասես նատյուրմորտ նկարած լինի: Սերոբ ամին սեղանին է դրել մի տարվա իր հոգեպահուստը ու հորդորում է որդուն.

— Եկար թե չէ, էլ դաշտ չթողեցիր, պտույտ եկար, կարծես փախչում էին դրանք իրենց տեղից: Գեղամ ջան, էս թիքեն կեր, այ հիմա էլ էս, այ՝ ըտենց, որ ջանովս անցնի, դե մի բաժակ էլ էս հոնի արաղից՝ անցյալ տարի իմ ձեռքով են քաշել:

— Հայրիկ, էլ տեղ չկա, — վերջապես բողոքեց Գեղանը, — ախր մի թող խոսեմ, է՛, գիտես Մացակն ինչ ասաց:

— Ի՞նչ, բալա ջան:

— Ասաց շրջկոմի հետ խոսեցի, չեն առարկում, վաղվանից կանցնես աշխատանքի:

— Որտե՞ղ:

— Էլ որտե՞ղ, այգիներում, գյուղատնտես են նշանակել:

— Լուս իջնի գերեզմանիդ, Արուս, — արցունքակալեց Սերոբ ամին, մտաբերելով երազը, ու ավելացրեց,— հետո՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դե, ի՞նչ հետո, հայրիկ, կաշխատենք, կապրենք իրար հետ, ախր ահագին տեղ կա, մյուս տարի այնտեղ էլ այգի կգցենք, նոր, դիմացկուն ծառատեսակներ կբերենք, կտնկենք, հետո մի բան էլ եմ մտածել, թե որ այն էլ անենք, ոչ թե մեկ, այլ երկու միլիոնի եկամուտ կստանանք:

— Ի՞նչ,— աշխուժացավ Սերոբ ամին:

— Այսօր ես լավ նայեցի: Մեր այգիներից այն կողմ՝ երեք տանձենիների ուղղությամբ, մոտ չորս հեկտար խամ հող կա, ինչո՞ւ այնտեղ թթենիներ չտնկենք ու չզարգացնենք շերամապահությունը: Ինչքան գիտեմ՝ թութը մեզ մոտ լավ է աճում:

— Էն էլ ո՛նց,— Սերոբ ամին հիացած ու ոգևորված որդուն էր նայում, ասես առաջին անգամ էր տեսնում նրան, — տնամերձերումը շատ կա, իսկ կոլխոզի բաղերում չենք փորձել:

— Դե, ուրեմն, մենք կփորձենք, — Գեղամը հոր առջև բացում էր իր ծրագրերը, վիճում նրա հետ, իսկ Սերոբ ամին անընդհատ առարկում էր, ինչպես ինքն էր հետո ասում՝ տղային խոսեցնելու, գիտելիքները ստուգելու համար:

Կատարվեց Սերոբ ամու փափագը: Բայց դե հազար ու մի բան տեսած այգեպանը չէր կարող չնկատել, որ որդին այնքան ուրախ չէ, ինչքան հոր սիրտը կուզեր, որ նա ժամանակ առ ժամանակ մռայլվում է՝ ինչ – որ բան մտաբերելով:

— Գեղամ, — գյուղացու պարզությամբ ու անկեղծությամբ հարցրեց Սերոբ ամին, — բա նշանածդ ի՞նչ եղավ: Ինչի՞ չեկավ:

Գեղամը ցնցվեց: Նա սպասում էր նման հարցի ու նախապատրաստվել էր, ինչ – որ մշուշապատ, երկիմաստ խոսքերով հոր ուշադրությունը շեղի, բայց հարցն այնպես շեշտակի ու անկեղծ տրվեց, որ երիտասարդը չկարողացավ ոչինչ թաքցնել ու ասաց.

— Հայրիկ, չեկավ... Ավելի շուտ՝ մայրը չթողեց:

Սերոբ ամու աչքից չվրիպեց որդու ցնցվելը:

— Որ սիրում ես, ոտքով էլ լինի, կգնամ, կգնամ ու զոռով կբերեմ, դարդ մի անի, Գեղա՛մ,— միամտության հետ խառնված հաստատակամությամբ ասաց Սերոբ ամին:

Բայց ոտքով գնալու ու զոռով բերելու հարկ չեղավ: Մի քանի օր անց, կեսօրին, երբ Գեղամը գործով կոլտնտեսության նախագահ Մացակի հետ մեքենատրակտորային կայան էր գնացել, իսկ Սերոբ ամին հոլիկի մոտ, գետնին թափված խնձորներն ու տանձերն էր մեծ կարասների մեջ լցնում՝ օղի քաշելու համար, այգու մոտ, խճուղու վրա մի ավտոմեքենա արգելակվեց: «Շրջանից եկած կլինեն»,— մտածեց Սերոբ ամին ու բացեց այգու դուռը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ավտոմեքենայից մի աղջիկ դուրս եկավ ծղոտե գլխարկով:

Սերոբ ամին պատիվ առավ՝ արևից պաշտպանվելու համար ու նայեց աղջկան:

— Քեռի, այստե՞ղ է ապրում Գեղամ Դալլաքյանը,— հարցրեց վերջինս, բայց հանկարծ շիկնեց ու մի քայլ առաջ եկավ,— դուք նրա հա՞յրն եք:

— Հայրն եմ, — հազաց Սերոբ ամին: «Ո՞վ կլինի, յարաբ»,— մտածեց նա ու հանկարծ սիրտը թունդ եղավ,— Իվե՞տ, — բացականչեց նա,— վահ, էս հո մեր հարսն է:

Արի, հարս ջան, արի,— ու համբուրեց աղջկա ճակատը,— Գեղամս ինչքան կուրախանա…

— Հայրիկ, ճամպրուկներս…

— Էդ թող, ես կբերեմ, դու գնա միրգ կեր, բաղը քեզ դուրբան, — հուզվեց Սերոբ ամին ու ոտքի տակ հող չզգալով, մեքենավարի օգնությամբ ճամպրուկները հոլիկ տեղափոխեց: — Տղա ջան, — դարձավ նա մեքենավարին, — դե արի, ներս մտի, սոված կլինես:

— Չէ, հայրիկ, ես ուշանում եմ, — առարկեց մեքենավարը:

— Ի՞նչ, հլա իմ տան մոտով մարդ չի անցկացել առանց մեր հացը կտրելու, դե արի, արի, մի ընենց արագ խմացնեմ, որ հարյուրի վրա քշես:

Ավտոմեքենավարը ոտքի վրա մի բաժակ օղի խմեց, հաց ու վարունգ կերավ ու շնորհակալություն հայտնելով, դարձավ Իվետային.

— Կարապետ Սամսոնիչին ի՞նչ ասեմ:

— Պապայիս ասա, որ հաջողությամբ տեղ հասանք,— Սերոբ ամուն նայելով, ամոթխածությամբ ասաց Իվետան:

— Պապայի՞դ,— հարցրեց Սերոբ ամին, — տղա ջան, կասես, որ Սերոբ ամին նախ շատ – շատ բարև ա անում, հետո կասես, որ հարսիս մասին չմտածի՝ վարդի պես կպահեմ, հետո ասա, թե Սերոբ ամին ասում ա, որ շուտով հարսանիք պիտի անեմ ու նրա ամբողջ ընտանիքին հրավիրեմ:

Դժվար է բառերով նկարագրել այն ուրախությունը, որ պատել էր Սերոբ ամուն: Նա պտույտ էր գալիս հարսի շուրջը, ամենալավ ու համեղ մրգերից հյուրասիրում, պատմում իր «պլանների» մասին, այն մասին, որ գյուղի տունը կվերանորոգեն, որ կողքին էլ մի տուն կավելացնեն, որ ձմեռն արդեն գյուղում կապրեն…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դրսում, խճուղու վրա ձիու ոտնաձայն լսվեց, ու ավելի շուտ նետվեց, քան թե հոլիկ մտավ Գեղամը: Նա ճանապարհին հանդիպել էր ծանոթ ավտոմեքենային ու վարորդից իմացել ամեն ինչ:

— Իվետա,— դեռ շեմքից բացականչեց նա, բայց տեսնելով հոր ժպտուն, ծիծաղկոտ աչքերը, շփոթվեց ու զսպեց իրեն, — եկար, հա՞:

Սերոբ ամին վեր կացավ տեղից, խորամանկորեն աչքով արեց որդուն ու թե՝

— Վահ, մոռացել եմ կաղամբը ջրել, հիմա կգամ:

— Հայրի՛կ,— իրեն կորցրած, գրկեց հորը Գեղամը ու մոտեցավ աղջկան:

— Եկա, Գեղամ, ի՞նչ ասեմ,— Սերոբ ամու գնալուց հետո ասաց Իվետան,— եկա, ինչ ուզում ես մտածիր, բայց… բայց առանց քեզ չեմ կարող:

— Իսկ մա՞յրդ:

— Նա չիմացավ: Առավոտյան, երբ իր դերձակուհու մոտ գնաց, հայրս մոտեցավ ինձ, թե՝ «Իվետա, տեսնում եմ, որ տխրել ես Գեղամի հետ չգնալուդ համար, բայց ուշ չէ, եթե ուզում ես, հենց հիմա գնա իմ մեքենայով, մեր աշխատողներից մեկը նրանց շրջանն է մեկնում»: «Բա մամա՛ն, — հարցնում եմ ես»: «Այդ թող ինձ, — ասաց նա, — էլ հերիք է, ես նրան ամեն ինչ կհասկացնեմ»: Դե, ես էլ վերցրի անհրաժեշտ իրերս ու ահա այստեղ եմ:

— Մշտակա՞ն,— հոր տոնով հարցրեց Գեղամը:

— Մշտական,— ժպտաց Իվետան:

Գիշեր է: Լուսավոր ու աստղազարդ այն գիշերներից մեկը, երբ ավելի շատ խորհում ես, քան քնում: Լուսնի մահիկը մեկ հայտնվելով, մեկ կորչելով, դանդաղորեն սահում է ամպերի ճերմակ — մոխրագույն քուլաների միջով: Ոչինչ չի խանգարում բնության անդորրը, բացի ծղրիդներից, որոնք մեկ այս, մեկ այն կողմից, իրար հաջորդելով ու ընդհատելով՝ իրենց անտեսանելի ժամացույցներն են լարում, հնչեցնում իրենց երգը՝ միօրինակ ու խորհրդավոր:

Սերոբ ամին չուզեց խանգարել երիտասարդներին՝ առանց այն էլ նեղ, փոքրիկ հոլիկում: Նա վերցրեց իր թիկնոցը ու գցեց մեծ խնձորենու տակ, որից մի փոքր աջ, լուսնի լույսով ճերմակին էր տալիս ողորկ ու տառազարդ մի քար… ու պառկեց:

Պառկել էր Սերոբ ամին: Իր կյանքի լավ դեպքերն էր մտաբերում ու ժպտում: Մտածում էր, որ այս օրվա համար արժեր ապրելն, աշխատելն ու տանջվելը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ հոլիկից լսվում էր երիտասարդների զսպված խոսակցությունն ու ծիծաղը և օրորում
Սերոբ ամու խաղաղված հոգին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տերեվաթափ

Նրանք քայլում էին փողոցով՝ նկարիչն ու անվանի գիտնականը: Քայլում էին լուռ ու դանդաղ, ինչպես կարող են միասին քայլել ու լռել մարդիկ, որոնք խոսքերի կարիք չունեն՝ իրար ինչ-որ բան ասելու, իրար հասկանալու համար:

Նրանք երկար էին քայլել աշխարհի վրա և շատ աշուններ էին տեսել, բայց ամենուրեք երազել էին Երևանի աշունը, որովհետև ոչ մի տեղ աշունն այնքան հարուստ, այնքան բարի, այնքան ջերմ չէ, որքան Երևանում:

Ու կրկին ու կրկին զարմանում էին ու զարմանալով հիանում բնության իմաստությամբ ու գեղեցկությամբ: Որտեղի՞ց է նա գտել այս ներկերը, այս գույները, այս երանգներն ու նրբերանգները, որ հիմա սիրող պատանու շռայլությամբ նետել է այս ու այն կողմ ու զարդարել աշխարհը՝ հրդեհել այն մենավոր ծառը, կարմիրով ներկել այս թփերը, նարնջին թափել ցանկապատին:

Տաք աշուն էր:

Հետո նրանք դիտում էին, թե ինչպես են անաղմուկ ու հանդարտ պոկվում տերևները՝ մի վերջին անգամ քնքշորեն շոյելով ճյուղերը ու զգվելով դեռ ամուր, դեռ դիմացող տերևներին: Ու երկար, սքանչացած նայում էին, թե ինչպես են նրանք խաղում, տարուբերվում օդում ու մեղմիկ շրշալով իջնում իրար ետևից, անդադար հոսանքով, իջնում ու կլիտվում իրար վրա, մի փափուկ, նրբահյուս գորգի վերածվում, զարդարում քաղաքի մայթերը ու հաճելիորեն խշշում ոտքերի տակ:

- Հրաշալի աշուն է:

Դա ասաց գիտնականը: Ասաց ո՛չ նկարչին, ո՛չ անցորդներին: Ասաց իրեն, բայց ասաց բարձրաձայն:

Նկարչի աչքերը շողացին:

- Հրաշք է,- ասաց նա՝ կանգ առնելով,- չգիտեմ ով ոնց, բայց ես ամենից շատ աշունն եմ սիրում, տերևաթափը... Դե նայի՛ր,- ասաց նա,- մի՞թե սրանից ավել սքանչելիք կարող է լինել աշխարհում: Եվ գիտե՞ս միայն ինչն է պակասում,- նա մտերմորեն բռնեց գիտնականի արմունկը,- անձրևը, այո՛, այո՛, աշնան անձրևը, որ բարակ, աննշմար շղարշի պես իջնում է, հա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

իջնում, ու մեկ էլ տեսնում ես՝ փայլ է տվել ամեն ինչին և ավելի ընդգծել գույները: Այնպես չէ՞...

Գիտնականը լուռ էր:

- Այնպես չէ՞,- կրկնեց նկարիչը՝ մտածելով, թե գիտնականը չլսեց իր խոսքերը,- այն լուսավոր, բարակ անձրևը, որ միայն աշնանն է լինում:

- Չէ՛,- հանկարծ ասաց գիտնականը:

- Ի՞նչը:

- Չէ՛,- կրկնեց գիտնականը,- անձրևը լավ չէ: Իսկ դու գիտե՞ս, որ երբ անձրևը թրջում է թափված տերևները, դրանք շատ ամուր են կպչում ասֆալտին, անհնար է լինում պոկելը:

Նկարիչը ապշեց:

- Սպասի՛ր, բայց դա ի՞նչ նշանակություն ունի, թող չպոկվեն:

- Դռնապանները պարտավոր են մաքրել մայթերը,- կամացուկ պատասխանեց գիտնականը:

Նկարչին թվաց, թե իրեն ապտակեցին: «Չէ՞ր լսում, թե ծաղրում է ինձ,- մտածեց նա խռովելով,- ես խոսում եմ այս հրաշալի գույների մասին, իսկ նա ասում է՝ դռնապանները... Դռնապանները, դռնապանները... » - ակամա մտքում զայրացած կրկնեց նկարիչը ու հանկարծ...

Ու հանկարծ հիշեց, որ այս մեծ գիտնականը իր ողջ մանկությունն անցկացրել է դռնապան ծնողների հետ, մեծ քաղաքի ասֆալտե մայթերին:

Նա կամացուկ տնքաց, ավելի ամուր սեղմեց ընկերոջ արմունկը, ու նրանք կրկին քայլեցին փողոցով, որը աշնանային հրաշալի գույներ ուներ հագին և ուր տերևները հաճելիորեն խշշում էին մարդկանց ոտքերի տակ:

Բայց չգիտես ինչու, նկարչին աշունն այլևս առաջվա պես հրաշալի չէր թվում...

Աշուն էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ոչինչ չեմ հասկանում

Ամեն ինչ միանգամից տակնուվրա է եղել այս տանը: Բոլորն էլ խելագարվե՞լ են, ինչ է: Ոչինչ չեմ՝ հասկանում: Առաջ ամեն ինչ հասկանալի էր ինձ, պարզ, հիմա ոչինչ չեմ հասկանում:

Աղջիկս ահա դեռ լաց է լինում կողքի սենյակում ես լսում եմ նրա հեծկլտոցը: Կինս էլ քիչ առաջ նրա մոտ էր, հետո փակվեց իր սենյակում: Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, մի՞թե մի հիմար բանից կարելի է այսքան պատմություն սարքել: Եվ այն էլ ինչի՞ համար: Կամ գուցե դա միայն առիթ էր, գուցե ինչ-որ լուրջ բան է պատահել: Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում, ազնիվ խոսք:

Դե հիմա եկ ու շարունակիր աշխատել: Ինչպե՞ս աշխատես այս տրամադրությամբ, ինչպե՞ս աշխատես, երբ կողքի սենյակից անընդհատ լսվում է նրա լացի ձայնը: Եվ ինչու է նա այդպես բարձրաձայն լաց լինում:

Ու ես ակամա մտածում եմ. գուցե ճիշտ են նրանք, ովքեր ասում են թե գիտության մարդը իրավունք չունի ամուսնանալու, թե ընտանիքը բոլոր դեպքերում կաշկանդում է գիտնականին, խանգարում, ստիպում մտածել գիտության հետ բոլորովին առընչություն չունեցող զանազան երկրորդական, երրորդական խնդիրների մասին, շեղում ուշադրությունը:

Անկեղծորեն ասած, դրա հետ կարելի է համաձայնել:

Ընտանիքը, իհարկե, դրական որոշ կողմեր ունի՝ մի տեսակ հանգստություն է տալիս քեզ, աշխատելու հնարավորություն… Կարող ես, օրինակ, աշխատանքից չկտրվել՝ մի բաժակ ջուր խմելու համար, այլ միայն ձայնել կնոջդ.

— Սե՛դա, ջուր…

Եվ քիչ անց նա կբերի ջուրը:

Կարող ես չմտահոգվել նախաճաշի մասին (աշխատելու հետ միաժամանակ կարելի է թեթև նախաճաշել): Քաղցա՞ծ ես՝ գի¬տես որ պատրաստ է ճաշը: Դուրս ես գալիս տանից՝ ուրեմն մաքուր և արդուկված են շորերդ, կոշիկներդ փայլեցրած և քառածալ թաշկինակը անպայման ձախ գրպանումդ է: Դե, իհա՛րկե, դրանք մանրուքներ են: Ի վերջո էականը դրանք չեն անշուշտ: Բայց և այնպես ընդունենք, որ դրանք կարևոր են: Հետո՞, հետո ուրիշ ոչինչ: Միայն այդքանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ անհանգստություն, որքա՞ն կամենաս, իսկ աշխատանքի ընդհատում եթե թողնես սովորության կվերածեն, իսկ զանազան ընտանեկան, կենցաղային, ծնողական հոգսեր… թի՞վ չկա:

Սկզբում, իհարկե, շատ ավելի ծանր էր և երկար ժամանակ հարկ եղավ, մինչև որ կինս վերջնականապես համոզվեց, կամ ավելի ճիշտ հաշտվեց այն մտքի հետ, որ ամեն մի դատարկ առիթով չի կարելի ընդհատել ինձ:

Որքա՛ն ենք վիճել, որքա՛ն ժամանակ են խլել ինձանից այդ վիճաբանությունները: Կնոջս չգիտեմ ինչու թվում էր, օրինակ, որ եթե եղբայրս գյուղից մեր տուն հյուր է եկել, ապա ուրեմն ես անպայման պետք է թողնեմ աշխատանքս ու ստիպված կեղծ զրույց սկսեմ նրա հետ գյուղի մեր բարեկամների այդ տարվա բերքի, սարում անցկացրած օրերի մասին, երբ միասին գառներ էինք պահում:

— Եղբայրդ է, չէ՞,- ասում էր նա, ի՞նչ կմտածի քո մասին:

— Իսկ ի՞նչ պետք է մտածի,— համոզում էի ես,— մի՞թե նա չգիտի, որ ես գիտնական եմ, որ ինձ համար թանկ է յուրաքանչյուր վայրկյանը: Հյո՞ւր է եկել, խնդրեմ, լավ հյուրասիրիր, կարող ես նույնիսկ մի շիշ գինի գնել այդ առիթով: Գուցե դրա՞մ է պետք նրան, մի քանի ռուբլի տուր, թող երեխաների համար կոնֆետ գնի: Մի՞թե ես որևէ բան խնայում եմ: Բայց ինչո՞ւ անպայման հանդիպել նրան, ինչո՞ւ զրուցել և ինչի մասին: Մի՞թե քեզ համար պարզ չէ, սիրելիս, որ ես նրա հետ ոչնչի մասին չեմ կարող խոսել: Դե հո չե՞մ զրուցելու նրա հետ ասենք, Չերնիշևսկու էսթետիկական հայացքների մասին: Նույնիսկ ծիծաղելի է:

Եվ այս բոլորը ես ասում էի ամենացածր և համոզիչ ձայնով: Ես ընդհանրապես չեմ սիրում բարձր խոսել, երբեք չեմ բարկանում և ոչ մի բան չի կարող ինձ հավասարակշռությունից հանել: Այո, այո, ես երբեք նման չեմ եղել այն մարդկանց, ովքեր սիրում են խմել, տուն են գալիս հարբած, գոռում են իրենց կանանց վրա, խփում են երեխաներին… Խփե՛լ երեխային… անգամ այն ժամանակ, երբ աղջիկս՝ Հասմիկը, կոտրեց իմ ինքնա¬հոսի ծայրը, ես նրան չապտակեցի: Նույնիսկ չխոսեցի էլ հետը: Եվ միայն կնոջս ամենայն համբերատարությամբ բացատրեցի որ նա, ինչպես երևում է անհրաժեշտ ուշադրություն չի նվի¬րում երեխայի դաստիարակության հարցերին:

Ո՛չ, ես նման չեմ ուրիշ ամուսինների…Մեր ինստիտուտում, օրինակ, մարդիկ կան, որ աշխատավարձը կնոջը չեն հանձ¬նում և իրենք են ամեն օր շուկա գնում, իրենք են հագուստներ ընտրում, իրենք են տանն անհրաժեշտ իրեր ձեռք բերում: Ես դա փոքրություն եմ համարում: Ինչու՞ պետք է տղամարդը այն էլ գիտնականը,, նման մանր-մունր հոգսերով ծանրաբեռնի իրեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբեք այդպես չեմ վարվում: Ես հաշվել եմ, մոտավորապես գիտեմ, թե որքան գումար է անհրաժեշտ մեր ընտանիքի նորմալ ապրուստի համար (տանել չեմ կարողանում ավելորդ ծախսերը, շքեղությունն ու շռայլությունը) և ահա այդ անհրաժեշտ գումարը կնոջս եմ հանձնում, իսկ մնացածը փոխադրում խնայդրամարկղի իմ ընթացիկ հաշվին: Ո՞վ գիտե ինչ անակնկալներ կարող են լինել:

Եվ այսքանից հետո, երբ ես կարծում էի, թե կինս՝ անկասկած երջանիկ պետք է զգա իրեն, պարզվում է, որ նա գոհ չէ: Զարմանալի է դեռ որքան խորն են մեզ մոտ քաղքենիության արմատները…

Մի անգամ, սովորականի պես փակվել եմ իմ առանձնասեն¬յակում, և հանկարծ ներս է մտնում կինս, նստում է բազմոցի ծայրին ու լռում է: Ես աշխատելու ժամանակ տանել չեմ կարողանում ուրիշի ներկայությունը, բայց ամենայն քնքշությամբ կնոջս ասում եմ.

— Սիրելիս, մի՞թե չես տեսնում, որ ես աշխատում եմ, չէ՞ որ ես բազմիցս խնդրել եմ…

— Այսօր ամսի քանի՞սն է, — ընդհատում է ինձ կինս:

— 16-ը՞ ,— ասում եմ ես,– մի՞թե մենք օրացույց չունենք:

— Այդ թիվը քեզ ոչինչ չի՞ ասում:

— 16-ը՞ ,– հարցնում եմ ես,– 16-ը… Իսկ ինչ պետք է ասի 16-ը:

— Այն, որ այսօր իմ ծննդյան օրն է,– ասում է նա ու իս¬կույն աչքերը լցնում արտասուքով,— այն, որ ես ուզում եմ, որ դու գոնե մի անգամ հիշես այդ օրը, որ դու քո կնոջ համար գոնե ծաղիկների մի փոքրիկ փունջ բերես այս օրը, իմ ծննդյան օրը…

— Դե, հո մենք երեխա չենք, Սեդա,— հանգստացնում եմ ես,— ներիր, խնդրում եմ, բայց դա մանրուք է ախր: Ինչո՞ւ ծաղիկներ: Դու կարող ես քո ծննդյան օրվա առթիվ որևէ ավելի թանկարժեք բան գնել քեզ համար: Գնիր ինչ ուզում ես, սիրելիս, մի՞թե ես երբևէ որևէ բան խնայել եմ քեզ համար: Տանը կարծեմ դրամ կա…

Իսկ նա հեկեկում է ու դուրս է գնում իմ առանձնասենյակից: Տարօրինակ բնավորություն ունի: Ոչինչ չեմ հասկանում: Հանգիստ, համեստ աղջիկ էր, երբ ամուսնացանք: Ինչո՞ւ փոխվեց, ինչո՞ւ է այդպես ջղային դարձել, չէ՞ որ նա ամեն ինչ ունի երջանիկ լինելու համար, իսկ ահա հեկեկում է երեխայի պես, որովհետև, գիտե՛ք ինչ ես մոռացել էի նրա ծննդյան օրը:

Շատ երկար ժամանակ կորցրեցի ես՝ հենց կնոջս դաստիարակելու համար: Եվ ի վերջո հաջողության հասա: Ես կարծում եմ նա համոզվեց, որ գիտնականի կինը չպետք է մտածի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

այնպես, ինչպես սովորական կանայք, որ նա չպետք է ամուսնուն ստիպի կինո, թատրոն, համերգ գնալ: Կյանքից ե՞տ կմնա: Երբեք: Ես մտածել եմ նաև այդ մասին, ես առաջիններից մեկը նրա համար ամենալավ հեռուստացույցն եմ գնել, իսկ հեռուստացույցով որքան գիտեմ ամեն ինչ էլ հաղորդում են:

Եվ վերջապես ամեն ինչ խաղաղվեց մեր տանը, այլևս ոչ մի բողոք, ոչ մի վեճ, ոչ մի ընդհարում, եթե իհարկե չհաշվենք այն չարաբաստիկ միջադեպը, որ տեղի ունեցավ մեր հարևանի մահվան պատճառով: Կինս փորձում էր ինձ ստիպել մյուս հարևանների հետ ցավակցություն տալ թերթում և ներկա լինել նրա հուղարկավորու-թյանը, երբ ես այդ մարդուն համարյա թե չէի ճանաչում, երբ մենք միայն թեթևակի բարևում էինք միմյանց, երբ այդ օրը ես հոտված պետք է գրեի ռեսպուբլիկական թերթի համար: Ուրեմն ինչո՞ւ պետք է ես ներկա լինեի նրա հուղարկավորմանը: Ինչո՞ւ, պետք է նրա մասին ցավակցություն տայի թերթում:

Սեդան կարծում էր, թե ես դրամն եմ ափսոսում: Այնինչ բոլորովին ուրիշ հարց կար: Ես պարզապես գտնում էի, որ իմ ազգանունը ոչ մի իմաստ չունի տեղադրելու մեր մյուս հարևանների ազգանունների կողքին, որոնք աստված գիտե, թե ինչ զբաղմունքի տեր մարդիկ են:

Այո, կնոջս սովորեցրի միշտ զգույշ, հեռատես ու ողջամիտ լինել, հարյուր անգամ մտածել, մինչև աբևէ որոշում ընդունելը: Նա լռեց և կարծես թե համոզվեց: Բայց ի՞նչ: Որքան ժամանակ ու եռանդ վատնվեց այդ բոլորի վրա:

Այնինչ ամենապարզ տրամաբանությամբ այդ ողջ ժամանակա-հատվածը ես կարող էի իմ աշխատանքին նվիրել, եթե… ամուսնացած չլինեի: Ահա ճշմարտությունը:

Ինչևիցե, այդ մասին խոսելն արդեն ուշ է, և գուցե բոլորովին հարկ չլիներ, եթե այս անգամ ասպարեզ չգար դուստրս: Փոքրիկ, խելոք աղջիկ էր և, անկեղծորեն ասած, ես նրան բոլորովին չէի նկատում, որովհետև շատ հազվադեպ էր խանգարում ինձ: Երբեք լաց չէր լինում, և դրանում զարմանալի ոչինչ չկար: Իմ աշխատանքի և բավականին պատկառելի աշխատավարձի շնորհիվ նա բնականաբար ոչ մի բանի պակասություն չէր զգում, դրա համար էլ թերևս… պատճառ չուներ լաց լինելու: Հիշում եմ, երբ դեռ շատ փոքրիկ էր, օգտվելով մեր անուշադրությունից նա մի քանի անգամ բացեց իմ առանձնասենյակի դուռը՝ փաստորեն ինձ կտրելով աշխատանքից: Ես նրան միշտ, իհարկե շատ զգուշությամբ, հեռացնում էի և ապա այդ կապակցությամբ զրուցում Սեդայի հետ, այնպես որ աղջիկս այլևս դադարեց խանգարել ինձ: Այո՛, աղջիկս դադարեց խանգարել ինձ, բայց նրան անմիջապես փոխարինեց մայրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկապես տարօրինակ են մայրերը…

Ես խորասուզված, կլանված աշխատում եմ, իսկ Սեդան սենյակ է մտնում՝ Հասմիկի ձեռքը բռնած, մոտենում է ինձ ու ցույց է տա¬լիս գունավոր մատիտներով խզբզած մի թուղթ:

- Վարդան, ներիր, որ խանգարում եմ,– ասում է,– բայց տես թե Հասմիկը ինչ հրաշալի է նկարել:

Նայում եմ, ոչ մի հրաշալի բան չկա, փաստորեն նկար էլ չկա՝ մի ձվաձև արեգակ է երեք-չորս ճառագայթով և ցախավել հիշեցնող ձեռքերով մի տձև տիկնիկ:

Դե, ի՞նչ կարող եմ ասել: Ստիպված կրկին ու կրկին խնդրում եմ ամեն մի դատարկ առիթով չխանգարել ինձ և ապա բացատրում, որ այստեղ ոչ մի հրաշալի բան չկա, որ արևը չի կարող կապույտ լինել, որ ոչ մի չափ պահպանված չէ, որ դրանից շատ ավելի լավ նկարներ կան հենց «Պիոներ» ամսագրի էջերում: Եվ ի՞նչ, աղջիկս կարծես թե հասկանում է, ոչ մի ձայն չի հանում, բայց Սեդան դարձյալ արտասվակալում է: Եվ ահա նորից ստիպված ես բացատրել, համոզել, դաստիարակել…

Որոշ ժամանակ կարծես խաղաղվում է ամեն ինչ, բայց հանկարծ կրկին անախորժ մի խոսակցություն է սկսվում:

- Հայր ես,— չգիտես ինչու հուզված ասում է ինձ Սեդան,– երևի չգիտես էլ թե աղջիկդ որ դասարանում է սովորում:

- Ինչու՞ չգիտեմ, 6-րդ դասարանում է,- սրտնեղում եմ ես:

- Այո՛, անցյալ տարի 6-րդ դասարանում էր,- հառաչում է կինս:

Եվ ես, պատկերացնո՞ւմ եք, ստիպված եմ ամեն ինչ նորից սկսել: Ես նրան բացատրում եմ, որ եքկրագնդի վրա մոտ մեկ միլիարդ երեխաներ կան, որ նրանց մեծ մասը սովորում է, որովհետև յուրաքանչյուր երեխա պետք է սովորի: Հատկապես մեր երկրում, ուր երեխաների համար ստեղծվել են բոլոր-բոլոր պայմանները, սո-վորելը այլևս պրոբլեմ չէ: Եվ վերջապես, ասում եմ, ի՞նչ կա դրա¬նում, ո՞վ չի սովորում, չէ՞ որ ես էլ եմ սովորել, դու էլ ես սովորել: Իմ սովորելու մասին, օրինակ, ծնողներս ենթադրել են միայն նրա¬նով, որ ցերեկը որոշակի ժամերի տանը չեմ եղել: Ի՞նչ մի արտա¬կարգ բան կա հիմա սովորելու մեջ:

Այո՛, չնայած իմ համբերատարությանը և բոլոր ջանքերին, եր¬բեմն ես չեմ կարողանում խուսափել նման տհաճ խոսակցություն¬ներից: Բայց այն, ինչ կատարվեց այսօր, քիչ առաջ, անսպասելի էր և աներևակայելի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ինձ ընդամենը մի նախադասություն էր մնացել գրական ամ¬սագրի հանձնարարած նոր հոդվածս ավարտելու համար, երբ հան¬կարծ ուժգին շրխկոցով բացվեց առանձնասենյակիս դուռը և հայտնվեց Հասմիկը ձեռքին մի թուղթ բռնած: Նրա ետևում, հրճվանքից փայլող դեմքով, կանգնած էր կինս՝ Սեդան:

Ես արդեն ուզում էի հազարերորդ անգամ զգուշացնել նրանց, որ… Բայց հանկարծ աղջիկս ճչաց.

- Հայրի՛կ, ես ավարտեցի դպրոցը, ահա՛ իմ վկայականը, ահա՛ իմ հասունության վկայականը:

- Արդե՞ն,— քիչ զարմացած հարցրի ես:

Եվ, իհարկե, անհրաժեշտ գտա անմիջապես էլ հասկացնել նրան, որ աղջկա համար, այն էլ հասունության վկայական ունեցող աղջկա համար, բոլորովին էլ սազական չէ այդպես ճչալը, դուռը շրխկոցով բացելը, առանց թույլտվության ներս մտնելը… Մի խոս¬քով ասացի այն ամենը, ինչ յուրաքանչյուր ծնող պարտավոր էր ասել նման պարագայում:

Եվ ի՞նչ, աղջիկս անսպասելիորեն ավելի բարձր ճչաց, հետո լռեց ու գունատվեց միանգամից.

- Դու վատ… շատ վատ մարդ ես,– շշնջաց նա ատելությամբ, - դո՛ւ… դո՛ւ… ինչպե՛ս քեզ չեմ սիրում, ինչպե՛ս եմ ատում քեզ…

Եվ սկսեց բարձրաձայն հեկեկալ ու ինչ-որ անկապ բառեր բղավել սեղմելով բռունցքները:

Ճիշտն ասած, ես սաստիկ անակնկալի եկա և հազիվ միայն կարողացա խնդրել, որ նա չբղավի: Ինչո՞ւ է բղավում, հարևանները կլսեն և ո՞վ գիտե, գուցե մտածեն, թե ես ծեծում եմ նրան: Այնինչ ես կյանքումս երբեք չեմ խփել նրան…

- Երանի խփե՛ր… – շարունակում էր բղավել Հասմիկը,- գոնե դրանով կզգայի, որ հայր ունեմ…

Հետո նա, շարունակելով բղավել, դուռը փակեց շրխկոցով ու վազեց դեպի իր սենյակը: Ու ահա դեռ հեկեկում է, նրա ձայնը մինչև ինձ է հասնում իր սենյակից:

Եվ ինչո՞ւ… ի՞նչ է պատահել, ոչինչ չեմ հասկանում: Ինչ ատելությամբ էր նայում ինձ, ի՞նչ խոսքեր էր ասում: Եվ այն էլ ի՛նձ, իր հորը, որը ողջ կյանքը ազնվորեն նվիրել է գիտությանը, որը ամեն ինչ արել է իր ընտանիքի բարօրության և պատվի համար:

Այո՛, ճիշտ են ասում, այսօրվա վկայականները նախկինների արժեքը չունեն, չէ: Ոչ, այս պատմությունը այսպես թողնել չի կա¬րելի: Ստիպված եմ նորից կտրվել աշխատանքից և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ամենայն լրջությամբ ու համբերատարությամբ խոսել Սեդայի հետ… Մի՞թե կարելի է երեխային այսպես դաստիարակել…

Կամ գուցե սա մի առի՞թ էր: Գուցե ինչ-որ ավելի լուրջ բա՞ն է պատահել:

Չեմ հասկանում, ոչի՛նչ չեմ հասկանում, ազնիվ խոսք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուրախ ու տխուր մարդը

Եթե Ալավերդյան փողոցով ցած իջնեք, Կոմայգի չհասած, աջ կողմում կհայտնվի երկհարկանի մի շենք: Կանգ առեք մի պահ ու նայեք:

Դուք տեսնում եք հին Երևանը:

Սա ժամանակին Երևանի ամենանշանավոր շենքերից մեկն է եղել:

Անանուն վարպետը շենքը կառուցել է խստորեն, ըստ տանտիրոջ ցուցումների: Իսկ տան տերը զարգացած մարդ էր, Պետերբուրգում, Մոսկվայում, Ռոստովում կրթված ու սովորած, գինեգործ և գործարանատեր Թովմաս Ռշտունին: Ու թեև նրա արտադրած գինու շշերի վրա գրված էր. «Էրիվանսկիյ վիննիյ զավոդ: Տ. Ռշտունի և Կ0»: Բայց դա սոսկ ժամանակի տուրք էր, ոչ մի «Կ0» էլ չկար: Եվ գործարան էլ չկար: Այսինքն՝ ինչ կար չկար, այդ մի շինությունն էր, որի խոր ու ընդարձակ ներքնահարկում ամռան ամենաշոգին անգամ սառն էր մնում գինին, լայն, սալահատակ բակն էր, որտեղ բեռնաթափվում էր Դալմայի այգիներից բերված խաղողը և սև տուֆից սարքված տունն էր, որի երկրորդ հարկի սրահներում բնակվում էր Ռշտունին իր գեղեցկուհի կնոջ ու զավակների հետ:

Այսօր եթե մի քիչ ավելի երկար կանգնեք այդ տան մուտքկամարի մոտ, անպայման կտեսնեք գործարանատիրոջ որդիներից մեկին: Ավելի ճիշտ՝ նա՛ ձեզ կտեսնի, երկրորդ հարկի վանդակաճաղ պատուհանից կհանի գլուխը ու կասի այնպես, ասես հին ծանոթներ եք ու վերջին անգամ հենց երեկ եք բաժանվել իրարից:

- Համեցե՛ք, վե՛րև բարձրացեք, սուրճն արդեն կրակին է:

Ես նրա հետ հենց այդպես էլ ծանոթացա՝ երևի մի տասնհինգ տարի առաջ: Կանգնել ու շատ ուշադիր շենքին էի նայում: Իմ առաջին կինոնկարի համար մի հին շենք էր պետք, որ փոքրիկ խոյակներ ունենար և կամարաձև մուտք: Իսկ այդ շենքն ասես հատուկ կինոյի համար կառուցված լիներ: Կանգնել ու դիտում էի հմայված: Եվ որովհետև ըստ սցենարի երկրորդ հարկի վանդակաճաղ պատուհանից իմ հերոսուհին մեկնելու էր նուրբ ու սպիտակ ձեռքը և մի երկտող էր ցած նետելու, ակամա նայեցի պատուհանին: Պատուհանից ինձ էր նայում քունքերի մոտ ճերմակած, նուրբ դիմագծերով, փոքրիկ բեղերով մի մարդ:

- Ուշանում ես, ուշանում,- գլուխը հանդիմանանքով օրորելով՝ասաց նա,- բարձրացի՛ր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ե՞ս:

- Իհարկե,- լրջորեն ասաց նա:

- Կներեք,- կակազեցի ես,- բայց դուք երևի ինձ ուրիշի հետ եք շփոթում: Ես... Ես ձեզ չեմ ճանաչում:

- Եթե ճանաչեիր, չէիր ուշացնի, անմիջապես վերև կբարձրանայիր: Առաջին անգամ է, դրա համար էլ ներում եմ,- ժպտաց տարօրինակ մարդը:- Դե շուտ արա, սուրճը սառչում է:

Կես ժամ հետո մենք արդեն իրար գրկած հին երևանյան երգեր էինք երգում: Հին, կորած, մոռացված, երևի միայն արյան մեջ մնացած երգեր...

- Չէ՛, չէ՛,- մեկ էլ հանկարծ ասում էր տանտերը,- առաջ սա այսպես չէին երգում, սպասի՛ր, քամանչայի վրա ցույց տամ:

Սեղանից վերցնում էր քամանչան, պոչն ականջին էր հենում, սկզբում միայն իր համար գրեթե անլսելի դուրս էր բերում մեղեդին, ապա բարձրացնում էր ձայնը ու գլուխն էլ հետը թափահարելով ասում՝ գնացինք...

Ու մենք երգում էինք հին երևանյան, կորած, մոռացված, երևի միայն արյան մեջ մնացած երգեր:

Իհարկե, մեզ հաճախ էին ընդհատում, փողոցից մեկ էլ ձայն էին տալիս.

- Վարպե՛տ Վանյա, տանն ե՞ս:

Վանյան, կամ գինու նախկին գործարանատեր Թովմաս Ռշտունու Հովհաննես որդին, քամանչան ձեռքին պատուհանին էր մոտենում ու գլխով էր անում միայն:

- Երեկոյան գալու ենք:

Հովհաննես Ռշտունին գլխով էր անում, շարունակելով նվագել, ու քամանչան նրա ձեռքին խաղում ու խոսում էր, ծիծաղում ու լալիս էր:

Քանի դեռ չէր նվագել, ես հարցրի, թե ինչու են բոլորը վարպետ ասում նրան: Ինքը ե՞ս հոր նման գինեգործ է:

Վանյան ծիծաղեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եթե մեր տնից եկող գինու հոտը նկատի ունես, ապա դա հորիցս մնացած ժառանգությունն է:- Ասաց նա:- Հորիցս ինձ ժառանգություն է մնացել այդ հոտը, որ այդպես էլ վաթսուն տարվա ընթացքում խնկահոտի նման բռնել է մեր ներքնահարկը, այս քամանչան ու մեկ էլ առանց ընկերոջ սեղան չնստելու պատգամը:

Երևի ինքն էլ զարմացավ, որ այդքան երկար նախադասություն առանց կատակի է արտասանել, որովհետև հանկարծ խստորեն դիմեց կնոջը, որը սեղան էր գցում.

- Նորա՞, էլի դո՞ւ ես չարչարվում, կոտորվե՞լ են սպասավորները...

Նորան միայն ժպտաց մեղմիկ, ինչպես մայրերը զավակների խենթության վրա են ժպտում:

- Վաթսուն տարվա գինի՛ բեր, հորս կարասներից,- կարգադրեց Վանյան:

- Բերել եմ,- ասաց Նորան՝ սեղանին դնելով «Հրազդան» գինու շիշը:

- Սա նրանի՞ց է, թե՞ այն մյուսից,- խստորեն հարցրեց Վանյան:

- Նրանից է, նրանից,- ծիծաղեց կինը:

- Ձախ կողմի կարասին հո ձեռք չե՞ս տվել, Լյալյայիս հարսանիքի համար եմ պահում:

- Առանց քեզ հարցնելու ես կարասի՞ ձեռք կտամ,- խաղին մասնակցելով լրջացավ կինը, հետո չդիմացավ, ծիծաղեց ու ասաց սիրով, քնքշությամբ.

- Ա՛խ, Վանյա՛, Վանյա՛, ուրախությունն անպակաս լինի քեզնից:

- Ուրեմն ամփոփենք,- ասաց Վանյան,- կինը կա, գինին կա, ընկերը կա: Ի՞նչը մնաց... Նորա, բեր քամանչաս:

Ու սկսեց նվագել:

Ու ես հանկարծ զգացի, որ իմ առջև մեր ժամանակի նշանավոր մարդկանցից մեկն է նստած, մի մեծ մարդ, որովհետև իմ կարծիքով մեծ են բոլոր այն մարդիկ, ովքեր ամաչում են իրենց մեծությունից:

Նա նվագում էր զարմանալի վարպետությամբ և զարմանալի նուրբ, անկեղծ ու բաց, առանց թաքցնելու ոչինչ, առանց հավակնության և առանց սեթևեթանքի: Նա նվագում էր ու քեզ թվում էր, թե հին ու հարազատ ձայներ ես լսում. քեզ տուն կանչող մորդ ձայնն ես լսում, Ղանթարի շուկայում կուլայով ջուր ծախող ոտաբոբիկ փոքրիկ տղաների կանչերը, որոնց մեջ քո ձայնն էլ կա, և հեռու հեռվում ձյունոտ սարերից պոկված հովի սոսափն ես լսում, որ գալիս

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սրբում է հին Երևանի հին այգիների, հին ծիրանիների փոշին: Լսում ես ու խաղաղվում, հոգիդ բարությամբ և տաքությամբ է լցվում: Լսում ես և դես ու դեն են փախչում մանրիկ ցավերդ ու հոգսերդ: Ու մի պայծառ, լուսավոր թախիծ է պատում քեզ, և ինչքան որ մաքուր, անապական բան կա քո մեջ, խտանում, դառնում է ցող, դառնում է արցունք, գալիս հավաքվում է կոպերիդ տակ... ու դու նվագողին ես նայում հմայված, գերված, երախտագիտությամբ լի:

Ահա հենց այդ ժամանակ էլ փոխվում է նվագը: Քամանչան սկսում է կատակել, ծիծաղել, ցատկոտել, ճչում, պարի է կանչում: Ու քեզ թվում է, թե սրբապղծություն տեղի ունեցավ:

- Վանյա, Վանյա, ի՞նչ ես անում, անուշ ախպեր, էն նվագը շարունակիր...

Իսկ Վանյան արդեն դեն է նետել կնտնտոցը ու մատներով է նվագում, աճպարարի ճարպկությամբ այս ու այն կողմ շրջում քամանչան, մեկ թառ է դարձնում, մեկ դահիրա...

Որովհետև նա տեսել է, որ դու իրեն ես նայում հմայված, գերված, երախտագիտությամբ լի և ամաչում է...

*

* *

Ոչ մի տեղ այնպիսի խնջույք չի ստացվում, ինչպես Վանյայենց տանը: Եվ ով կասի, թե լավ տրամադրության համար խմիչքը պարտադիր է, կսխալվի:

Այդ տանը ամեն երեկո ուրախություն է, հնչում են նվագն ու երգը, ծիծաղի համազարկեր են լսվում, ոտքերի դոփյունից ճոճվում են ջահերը, մարդիկ հուզված կենացներ են ասում... իսկ վերջում պարզվում է, որ ոչ ոք էլ գրեթե ոչինչ չի խմել, որովհետև դեռ սեղանին է «Հրազդանի» կիսատ շիշը:

Ասենք, եթե մարդիկ խմում են, որ բարձրացնեն իրենց տրամադրությունը, էլ ինչո՞ւ խմեն, երբ տրամադրությունն առանց այդ էլ բարձր է, երբ օդը զնգում է նվագից, կատակից, երգից, սիրուց: Ասենք, եթե մարդիկ խմում են իբր այն պատճառով, որ իրենց հասկացող չկա, էլ ինչո՞ւ խմեն, երբ նրանց հասկանում են:

Այս զարմանալի դարում խոսել շատերն են սիրում: Լսող չկա:

Իսկ Վանյան կարողանում է լսել: Եվ անվանի շատ երաժիշտներ նրա մոտ են գալիս, որպեսզի նվագի այդ համեստ դասատուի մոտ կատարեն իրենց նոր գործերը:

Ասես քննության են գալիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ երևանյան այդ հին տունը նորից նվագով է լցվում:

*

* *

Մի քանի ամիս քաղաքում չէին: Վերադարձա թե չէ, շտապեցի Ալավերդյան փողոց: Եվ հանկարծ բժշկական օգնության մի մեքենա տեսա սև տուֆից կառուցված մուտք-կամարի մոտ:

- Վանյա՛, ի՞նչ է պատահել, ախպե՛ր ս...

Վանյան պառկած է դեմքով դեպի պատը ու չի խոսում: Նրա գլխավերևում պատից կախված գորգին որսորդական զանազան հրացաններ ու դաշույններ կան, որ ինչքան հիշում եմ, իրենց ստեղծման օրից այդ գորգին էլ եղել են: Իսկ ոտքերի մոտ, մահճակալին քամանչան է, կողքի աթոռին դրված է դհոլը, քիչ այն կողմ պատուհանի գոգին թառն է, բոլորն էլ նրա ձեռքի գործը:

Առաջին անգամ է, որ այդ գործիքները լուռ են այս տանը, և առաջին անգամ է, որ լուռ է Հովհաննես Ռշտունին:

- Քնա՞ծ է,- հարցնում եմ Նորային:

- Չէ՛,- ասում է նա,- խռոված է:

Ծիծաղս գալիս է: Բարձրանում է տրամադրությունս: Ուրեմն վիճակը վատ չէ:

- Ո՞ւմից է խռովել:

- Աշխարհից,- ասում է Նորան:

Արդեն ծիծաղում եմ:

- Է՛, լավ, աշխարհն ի՞նչ է արել նրան:

- Իսկ դու չգիտե՞ս, որ նրա աշխարհը ընկերներն են,- ասում է Նորան:

- Իսկ ընկերներն ի՞նչ են արել, ինչո՞ւ է խռովել նրանցից...

Եվ հանկարծ Վանյան շրջվում է դեպի ինձ:

- Լավ եմ արել,- ասում է նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նիհարել է Վանյան և գունատ է: Նորան դեռ միջանցքում դուռը բացելիս ասաց, որ ուժեղ ցավեր ունի գոտկատեղում: Այդ ցավերը կնճիռներ են դարձել, ակոսել են դեմքը, բայց, փառք աստծո, աչքերին չեն հասել: Այդ աչքերն ինչպես միշտ խելոք են, տխուր են ու միաժամանակ ինչ-որ ներքին ուրախությամբ լի:

Հակասություն մի փնտրեք, հենց այդպես էլ կա:

- Դո՞ւ ինչ ես բերել,- հարցնում է Վանյան:

- Ե՞ս:

Չէ, նրան իրոք ինչ-որ բան է պատահել, որովհետև առաջին անգամ է, որ այս տանը որևէ մեկին նման հարց են տալիս:

- Ես հենց այսօր եմ եկել, ոչինչ չգիտեի, հասկանո՞ւմ ես, Վանյա՛: Իսկ քեզ ի՞նչ է պետք:

- Հը՛մ, որ հարցնում ես, ուրեմն ամեն ինչ կորած չէ: Հը՛մ: Տեսնո՞ւմ ես, Նորա՛, նա հարցրեց:

Վանյան կռանում ու մահճակալի տակից մի մեծ տուփ է հանում, որ բերնեբերան դեղերով լի է:

- Մի տուփ էլ գլխիս տակ կա, հանի՛ր,- ասում է նա:

Ես նրա բարձի տակից մի ուրիշ տուփ էլ եմ հանում, որը նույնպես լի է բազմազան, բազմաձև, բազմագույն հաբերով ու սրվակներով:

- Տես թե ինձ ինչ են բերում իմ ընկերները,- ասում է նա,- քո կարծիքով այս դեղերով քանի՞ մարդու կարելի է սպանել: Մենակ ինձ համար շատ չէ՞: Տես թե ինչ են բերում... Ու առանց գործիքի են գալիս: Խնդրում եմ, թե մի բան նվագեք, չեն նվագում: Քեզ անհանգստացնել չի կարելի, ասում են... Մեկն ասող լինի, հեռու ձեզանից, շան տղերք, որ դուք հիվանդ եք եղել, անտրամադիր եք եղել և վերջապես մեռել եք, ես ձեզ դե՞ղ եմ բերել: Նվագել եմ ձեզ համար, չէ՞: Այդ ինչպե՞ս պատահեց, որ նվագը ձեզ համար հանգստություն էր, իսկ ինձ համար, անհանգստություն է: Ախր ամբողջ կյանքում ես նվագել եմ ձեզ համար, հիմա որտե՞ղ եք, մարդ եմ, հիվանդացել եմ, ինչո՞ւ չեք գալիս մի անգամ էլ ինձ համար նվագեք, հը՞, ճիշտ չե՞մ...

Նորան թեքվեց, զգուշությամբ ուղղեց բարձը...

- Չեն գալիս նվագելու, որովհետև բժիշկները չեն թողնում, քեզ հուզվել չի կարելի, Վանյա՛:

- Իսկ ես նրանց բժիշկներին հարցնո՞ւմ էի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հովհաննես Ռշտունին երկար ժամանակ լուռ էր:

- Իսկ էդ ո՞վ է աշխարհում որոշել, թե մարդ ինչից է հուզվում, Նորա՛... Ես օրինակ, հուզվում եմ, երբ հուզվելու բան չկա...

Եվ որովհետև այնուամենայնիվ աշխարհը լի է գեղեցկություններով ու հրաշքներով, դրանցից մեկը կատարվեց անմիջապես: Փողոցից դուդուկի մի մեղմ ձայն եկավ, ասես հեռու հեռվից, ձյունոտ սարերից հովի մի պատառիկ պոկվեց ու եկավ սրբելու հին Երևանի հին այգիների հին ծիրանիների փոշին, եկավ մեղմիկ շոյելու հին երաժշտի խոնավ ճակատը:

- Վարպե՛տ Վանյա, տա՞նն ես...

- Նո՛րա,- բացականչեց Հովհաննես Ռշտունին,- շուտ, ասա տանն եմ, ասա տանն եմ ու գնա մեր մառանից, հորս կարասներից ամենահին գինին բեր, գիտես որը, չէ՞, այն մեկը, որ հատուկ այսօրվա համար էի պահել: Չէ, չէ, ձախ կողմինը չէ...

- Գիտեմ, գիտեմ,- ժպտաց Նորան: Նրա աչքերից արցունքներ էին թափվում, բայց նա ժպտում էր:- Գիտեմ, Վանյա՛...

- Կոստյո՛ւմս,- բղավեց Վանյան,- սիրուն Աբոյի դուդուկն է, երևի նոր բան է բերել: Ասա տանն եմ, Նորա՛, բոլորին ասա, որ տանն եմ...

1978թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երեք արկածային պատմվածք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

1. Կարճված գործը

Ամպրոպից հետո վարար անձրև տեղաց, ապա խաղաղվեց ամեն ինչ: Անցորդները, որ խոհեմաբար պատսպարվել էին մեծ շենքերի շքամուտքերում ու խանութներում, նորից փողոց դուրս եկան ու շարունակեցին իրենց կիսատ գործը, իրենց ճանապարհը: Ասես թե չէր էլ եղել ամպրոպը, ասես անձրևը չէր թափվել հեղեղի նման:

Թաց ասֆալտը թափանցիկ էր դարձրել փողոցը, որտեղ այժմ արտացոլվում էր մեծ քաղաքի այդ հատվածի կյանքը, ամբողջ շարժումը՝ գլխիվայր:

Մարդիկ, իհարկե, դրա մասին չէին մտածում, նրանք ժամանակ չունեին, և վերջապես դա կարևոր էլ չէր: Նրանք քայլում էին: Աբովյան փողոցով, որը օրվա բոլոր ժամերին քաղաքի ամենաաղմկոտ փողոցն է՝ քայլում էր միջահասակ, ամրակազմ մի երիտասարդ: Նա հագին սրճագույն կոստյում ուներ, որը թերևս մի քիչ լայն էր: Կոստյումի տակից երևում էր սպիտակ վերնաշապիկը՝ օսլայած օձիքով և նեղ, խայտաբղետ փողկապը:

Երիտասարդը ակնհայտ հուզված էր: Երբեմն – երբեմն նա ձեռքը պիջակի ձախ գրպանն էր տանում. մատներով շոշափում փոքրիկ, կարմիր գրքույկը, որի մեջ գրված էր. «Աշոտ Գնունի, կրտսեր լեյտենանտ, աշխատում է միլիցիայի հանրապետական վարչության քրեական հետախուզության բաժնում որպես օպերատիվ լիազոր»:

Առջևից մարդիկ էին գալիս ու անցնում և երբեմն նույնիսկ հրում նրան. նեղ են Աբովյան փողոցի մայթերը: Բայց Գնունին այդ բոլորը չէր զգում, նա իրեն դեռ պատկերացնում էր քրեական հետախուզության բաժնի պետ, գնդապետ Սահակյանի առանձնասենյակում և վերապրում նրա հետ քիչ առաջ ունեցած խոսակցությունը:

Նրանք մենակ չէին: Գնդապետը նստած էր մեծ սեղանի հետևում, և շատ փոքրամարմին էր թվում: Դա հիասթափեցրեց նրան: Փոքրիկ, տգեղ դեմք, շարժումները դանդաղ ու խիստ հավասարակշռված, չի ժպտում, խոսելու ժամանակ նայում է ուղիղ աչքերիդ, այնքան ուշադիր, որ չգիտես ինչու քեզ մեղավոր ես զգում:

Հենց այդ աչքերով էլ նա նայեց Աշոտին ու հարցրեց միանգամից.

— Ուզում ես հետախո՞ւյզ դառնալ: — Ու առանց սպասելու, որ Գնունին պատասխանի, ավելացրեց.— Ի միջի այլոց քրեական հետախուզության մասին շատ շատերը ոսկեգույն կարծիքներ ունեն, այնպես չէ՞, Ստեփան Սիմոնիչ, — դարձավ նա բազմոցին նստած

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կապիտանին, — նույնիսկ զարմանում ես. որտեղից են հնարում: Հենց վերցնենք գրքերն ու կինոները: Եթե հետախույզ է, ապա ուրեմն անպայման սև անձրևանոց պետք է ունենա, լայնեզր գլխարկը պետք է ծածկի աչքերը, ծխախոտը անընդհատ պետք է երևա գլխարկի տակից, ու նա շուրջը պիտի նայի կասկածով, աչքի պոչով և անմիջապես հետևի ինչ – որ մեկին: Ո՛չ, ո՛չ, երիտասարդ, — շարունակեց Սահակյանը, — հավատացնում եմ, հետախուզությունը ամեն ինչի հետ կարելի է համեմատել, բայց ոչ նման ուրախ դիմակահանդեսի: Եվ եթե դու մտադիր ես իսկույն ձերբակալել քաղաքի ամենամեծ հանցագործին ու հերոս դառնալ, խորհուրդ եմ տալիս մի ուրիշ ճանապարհ ընտրել: Հետախուզությունն առաջին հերթին սև, ձանձրալի, դժվար ու անշնորհակալ աշխատանք է:

Գնունին ակամա ժպտաց: Գնդապետը հետախուզությունը գնահատելիս այդ «ձանձրալի, սև, անշնորհակալ» բառերն այնպիսի մի ջերմությամբ էր արտասանում, ասես ուզում էր ասել. չհավատաս, ճիշտ չեմ ասում, հետախուզությունը հետաքրքիր, սիրելի, այո՛, դժվարին, բայց շատ մեծ գործ է, միայն հարկավոր է սիրել այդ աշխատանքը, ապրել դրանով:

Ու Գնունին ասաց.

— Ինձ թվում է, թե ես կսիրեմ այդ աշխատանքը, ընկեր գնդապետ:

Սահակյանի հայացքը ջերմացավ:

— Եթե այդպես է, — ասաց նա քիչ լռելուց հետո, — ստիպված ենք համաձայնել: Քո անմիջական պետը կլինի կապիտան Բաբայանը,— նա աչքերով ցույց տվեց բազմոցին նստածին, որին քիչ առաջ Ստեփան Սիմոնիչ կոչեց:

— Միայն մի պայման…

Հեռախոսի զանգը կտրեց նրա մտքի թելը: Գնդապետի դեմքը իսկույն խստացավ:

— Այո, լսում եմ, լեյտենանտ, այո, այո, այո: Կգա կապիտան Բաբայանը:

Նա լսափողը ցած դրեց, ասես չտեսնող աչքերով նայեց կապիտանին, որը բարձրացել ու հրամանի էր սպասում, և ասաց դանդաղ, հատ – հատ.

— 4 – րդ շինվարչության բազայից գողություն է կատարվել: Թաղային տեսուչն էր զանգահարում: Զբաղվիր…

… Գնունին քայլում էր փողոցով: Նրա կողքով, դիմացից ու մյուս մայթով անցնում ու դառնում էին մարդիկ: Գնունին կարծես առաջին անգամ էր տեսնում նրանց, նայում էր ուշադիր, ժպտուն հայացքով: Անցնում են… Ամեն մեկն իր զբաղմունքն ունի ու իր հոգսը, ամեն մեկն իր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ընտանիքն ունի ու իր ընկերները: Բոլորն էլ հագնված են աշնանային, մեկն, իհարկե, ավելի լավ, քան մյուսը, բայց հագուստով չես կարող որոշել, թե որն է այսքան բազմության միջից, որ վատ հոգի ունի, որ հենց հիմա քայլում է արյունոտ ձեռքերով, կեղտոտ հոգով ու մտածում է մեկին, գուցե այս գեղեցկադեմ կնոջը կամ այս կնճռապատ դեմքով մարդուն վնասելու մասին...

Անցնում են... Ահա վաղն ինքը անցնելու է աշխատանքի: Ավարտվեց Գնունի — ուսանողի կյանքը, սկսվեց Գնունի — հետախույզի կյանքը: Արդյոք ա՞յս էլ այնպես հաջող կընթանա, ինչպես առաջինը: Երբ հանձնում էր առաջին կարգի դիպլոմը, իրավաբանական ֆակուլտետի դեկանը, իր դասախոսը, սեղմեց Գնունու ձեռքը և ասաց.

— Գերազանցության դիպլոմ ես ստանում: Լավ է: Միայն թե աշխատիր, տղաս, լավ աշխատիր: Քսան տարի էլ կարդաս, չես կարող սովորել այն, ինչ կյանքը, մարդիկ մեկ տարում կտան քեզ: Համալսարանում խնդիրներ էին, դրանք սխալ լուծելու դեպքում անգամ՝ ոչ ոքի վնաս չէիր տա: Հիմա մարդիկ են, քեզ նման մարդիկ են, տղաս...

... Դուռը բացեց կինը՝ Սեդան: Նա մինչև հողաթափերը հասնող խալաթ ուներ հագին, որի ամբողջ երկարությամբ կոճակներ էին շարված: Դեմքը փոքր – ինչ նիհարավուն էր, և գուցե դա էլ ընդգծում էր աչքերի խոշորությունը, որոնք հիմա հարցականորեն ուղղված էին ամուսնուն:

— Դե, ասա...

— Միլիցիա, — ժպտաց Աշոտը և գրկեց հարևան սենյակից դեպի իրեն վազող դստերը՝ Լիլիթին:

— Ո՞ւր է,— հարցրեց աղջիկը,— ուր է միլիցիոները, ես վախենում եմ: Մաման ասում է՝ նա ինձ կտանի:

— Եվ կտանեմ,— ծիծաղեց Աշոտը՝ գրկից բաց չթողնելով աղջկան:

Նա աշխատանքի գնաց վաղ առավոտյան, մտածելով, որ մինչև աշխատակիցների գալը կարգի կբերի գրասեղանը, բայց մեծ եղավ նրա զարմանքը, երբ իր առանձնասենյակի դուռը բաց տեսավ և ներս մտնելով լսեց, որ կից սենյակից, որը կապիտան Բաբայանի առանձնասենյակն էր, խոսակցության ձայներ են լսվում: Նա իսկույն զատորոշեց կապիտանի ձայնը, որովհետև Բաբայանը սովորաբար խոսում էր ուսուցչի նման բառերը անջատ – անջատ արտասանելով, ասես թելադրում էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Ուրեմն, ճիշտ էին ասում, որ նա պատերազմից առաջ հայոց լեզվի դասատու է եղել», — հիշեց Գնունին:

— Յուցակները մանրակրկիտ ստուգեցի՞ք,— հարցնում էր Բաբայանը:

— Ստուգեցինք, բայց ի՞նչ... գուցե կասկածել ու փոխել են…— ասում էր անծանոթ մի ձայն:

Մտածելով, որ ինքը անհարմար վիճակի մեջ է, որովհետև լսում է իրեն չվերաբերող խոսակցություն, Գնունին ներս մտավ ու բարևեց ներկաներին:

— Ծանոթացիր, Գնունի, — առաջարկեց կապիտանը, — սոցիալիստական սեփականության հափշտակիչների դեմ պայքարի բաժնի աշխատակից, լեյտենանտ Մարկոսյան: Դուք հիմա հաճախ կհանդիպեք:

— Ուրախ եմ,— Գնունու ձեռքը ամուր սեղմելով, ժպտաց լեյտենանտը, և նայելով նրա հոգնած դեմքին՝ Աշոտը զգաց, որ Մարկոսյանը չնկատեց էլ իրեն: Այդ այդպես էր, որովհետև լեյտենանտը անմիջապես դարձավ կապիտանին:

— Ուրեմն բանից դուրս է գալիս, որ մենք ուշացել ենք:

Բաբայանի դեմքը մռայլվեց:

— Այդ մասին հետո: Հիմա գնանք շինհրապարակ, ես ուզում եմ զննել դեպքի վայրը: Նկատի ունեմ մի երկու հանգամանք,— ասաց նա ու դառնալով Գնունուն, ավելացրեց,— ահա թե ինչ, ընկեր կրտսեր լեյտենանտ, դուք այսօր… Նա չհրկիզվող պահարանից հանեց բարակ մի թղթապանակ ու մեկնեց Գնունուն, — զբաղվեք, այ, սրանով: Կարճված գործ է: Մեկ տարվա հնություն ունի: Բայց ուշադիր նայեք: Կզեկուցեք:

Կապիտան Բաբայանը և Մարկոսյանը դուրս եկան: Աշոտն իր սենյակը վերադարձավ, նստեց գրասեղանի մոտ ու ձեռքի թղթապանակը անփութորեն նետեց սեղանի հաստ ապակուն: Նա իրեն վիրավորված էր զգում, հիասթափվել էր: «Չեն վստահում,— մտածում էր նա, աննպատակ ետ ու առաջ տանելով գրասեղանի զզրոցները,— իրենք իսկական գործի են դուրս գալիս, իսկ քեզ, խնդրեմ, կարդա անցյալ տարվա ահա այս փոշեպատ թղթերը: Սովորիր»:

Դանդաղորեն մաքրեց սեղանի զզրոցները, թանաք լցրեց չորացած թանաքամանի մեջ, փայլեցրեց գրիչի ծայրը և դրանից հետո միայն մոտ բերեց թղթապանակը, որի վրա գրված էր՝ «Գործ № 312 Աստղիկ Գորյան՝ կերակրողին պատասխանատվության կանչելու մասին»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գործն սկսվում էր նույն այդ Աստղիկ Գորյանի դիմումով, որն ուղղված էր միլիցիայի վարչության պետին: Աստղիկը հայտնում էր, որ խորթ հայրը՝ Տրդատ Գորյանը, վերջին ժամանակներս չէր աշխատում, զբաղվում էր հարբեցողությամբ, տուն էր գալիս միշտ ուշ, ամենափոքր իսկ առիթով վիճում էր մոր հետ, կռվում և նույնիսկ ծեծում: Բանն այնտեղ էր հասել, որ չկարողանալով տանել ամենօրյա վիրավորանքներն ու հալածանքը, մայրը՝ Սոնան, փոքրիկ աղջկա հետ թողել էր տունն ու գնացել գյուղ՝քրոջ մոտ:

Այդ բոլորի մասին լսում է ընտանիքի մեծ որդին՝ Դանիելը, որն աշխատում էր Քաջարանի հանքերից մեկում: Նա իսկույն արձակուրդ է վերցնում, գալիս է տուն և մանրամասն տեղեկանալով ընտանիքի վիճակի մասին, հորը համոզում է տուն վերադարձնել մորն ու քրոջը:

Տրդատը չի համաձայնում, և նրա ու որդու հարաբերությունները ծայրաստիճան սրվում են: Ի վերջո, չկարողանալով հաշտության ուղի գտնել, հոկտեմբերի 5 – ին, վաղ առավոտյան Տրդատ Գորյանը մոտենում է աղջկա մահճակալին, արթնացնում նրան ու հայտնում, որ այս ամենը իրեն զզվեցրել է, և որ ինքը վճռել է մեկնել խամ և խոպան հողերը ու աշխատել այնտեղ: Իսկ նրանք թող ապրեն իրենց մոր հետ, ինչպես ուզում են:

Աստղիկը սկզբում լավ չի հասկանում խորթ հոր խոսքերի իմաստը, որովհետև դեռ լիովին արթնացած չի լինում, իսկ երբ սթափվում է, տեսնում է, որ հայրը չկա: Տրդատ Գորյանը հեռանում է տնից, անգամ առանց հրաժեշտ տալու որդուն, Դանիելին, որը քնած էր հարևան սենյակում:

Մտածելով, որ հայրը հավանաբար իր ծանոթներից մեկի տանն է գիշերում և այդ բոլորն արել է, որպեսզի որդին ներողություն խնդրի նրանից, Աստղիկը մի քանի օր սպասում է՝ առանց որևէ մեկին հոր անհետանալու լուրը հաղորդելու: Բայց անցնում է մի շաբաթ, իսկ Տրդատ Գորյանից ոչ մի տեղեկություն:

Եվ ահա աղջիկը դիմում է միլիցիայի վարչությանը, խնդրելով հայտնաբերել խորթ հորը, որը լքել է իր ընտանիքը:

Ահա ողջ պատմությունը:

Գործի մյուս թերթերը առանձնապես ոչինչ չէին ավելացնում աղջկա նամակին: Միլիցիայի քննիչը բարեխղճորեն գրի էր առել աղջկա ասածները, ինչպես նաև մի քանի վկաների ցուցմունքներ, տեղեկանքներ էր հավաքել միութենական հետախուզական բաժինների կողմից կատարված անարդյունք որոնումների մասին և ապա կարճել էր գործը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աշոտ Գնունին ծածկեց թղթապանակը, գործը մի կողմ հրեց ու մնաց հենց այդպես էլ նստած, հայացքը մի կետի: «Ահա թե ինչպիսի մարդիկ կան դեռ, — մտածում էր նա,— կին, երեխաներ ունի, իր տունը, իր ընտանիքը, իր շրջապատը... Եվ թողնել այդ բոլորը ու հեռանալ: Ինչքա՜ն փոքրոգի պետք է լինի մարդ, ինչքա՜ն եսասեր: Եվ ինչի՞ համար է ապրելու այլևս»:

Նա վեր կացավ տեղից ու պատշգամբ դուրս եկավ: Դիմացը փռված էր Երևանի մի արևոտ հատվածը՝ վարդագույն, խաղաղ շենքերով ու աղմկոտ փողոցներով:

«Տեսնես ինչպես են ապրում հիմա նրա երեխաները, հավանաբար դժվար կլինի», — մտածեց Գնունին: Ու վճռեց գնալ նրանց տուն: «Ո՞վ գիտե, գուցե նրանք ինչ – որ նոր լուր ունեն»:

Տրդատ Գորյանի տունն ընկած էր քաղաքի ծայրամասում, և Գնունին դժվարությամբ գտավ: Մենավոր, երկհարկանի մի հիանալի առանձնատուն էր դա, հարևաններից անջատված ընդարձակ հողամասով:

Գնունին նայեց ցանկապատի վրայով ու նկատեց, որ շենքին կից կան նաև ցախանոց ու հավաբույն: Բակում ոչ ոք չէր երևում: Նա կրկին պտտվեց շենքի շուրջը, ապա քայլերն ուղղեց մոտակա տունը, մտածելով, որ ավելի լավ է նորությունները հարևաններից իմանալ, քան թե անհանգստացնել Գորյաններին և հիշեցնել նրանց ոչ շատ վաղուց ունեցած անախորժությունը:

Դուռը բացեց նիհար, տարեց մի կին:

— Աստղիկ Գորյանին էի ուզում, տանը չէր, որոշեցի քեզ անհանգստացնել, մայրիկ,— ասաց Գնունին, չգիտե՞ս որտեղ կլինի:

— Ինչպե՞ս թե որտեղ,— հարցին հարցով պատասխանեց կինը, միաժամանակ ետ – ետ գնալով ու Աշոտին մատնացույց անելով թախտը, — աշխատանքի տեղում, էլ որտե՞ղ:

— Իսկ ի՞նչ է, մենա՞կ է ապրում: Որքան գիտեմ, նա մայր ունի, եղբայր, փոքր քույր...

— Դե, Դանիելը հենց նույն օրն էլ գնաց: Այսինքն՝ դու երևի չգիտես, որդի, որ Տրդատը փախել է: Սոնան էլ, այսինքն Աստղիկի մայրը, շուտվանից քաղաք չի գալիս, գյուղում է: Դե, նա էն ժամանակ էլ այստեղ չէր:

— Քայքայվեց ընտանիքը, — կամացուկ արտասանեց Աշոտը:

— Չքայքայվեց: Իրենք քայքայեցին: Հենց իրենք՝ Տրդատն ու Սոնան: Նոր պատմություն չի: Ինչքան ժամանակ է բաժանվել են: Ու ես քեզ կասեմ, որդի, երեխեքին էլ դժբախտացրին: Լավ մարդիկ չեն դարձել: Սիրտ չունեն: Ամեն մեկը իր մասին է մտածում: Ի՞նչ է դրանց կյանքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աշոտը, որ սկզբում անտարբեր սպասում էր, թե երբ կինը կվերջացնի, որ ինքը դուրս գա, հիմա սկսեց ուշադրությամբ լսել. ինչպես երևում է, այս կինը լավ գիտե Գորյանների ընտանիքի պատմությունը: Կարծես կռահելով, թե ինչի մասին է մտածում երիտասարդը, կինը շարունակեց.

— Դե, ես նրանց լավ եմ ճանաչում: Տրդատը լավ արհեստավոր էր, ոսկի ձեռքեր ուներ: Էդ պատմությունը որ եղավ, այսինքն, երբ Տրդատը ճամփից դուրս եկավ, ու Սոնան էլ փոքրին վերցրեց ու գնաց, Տրդատը ընկավ մի տեսակ, խեղճացավ, գործը թողեց ու սկսեց խմել: Մի օր էլ եկավ ինձ մոտ, նստել է էդտեղ, քո տեղը ու ձայն չի հանում: Նստեց, նստեց ու վեր կացավ, ուզեց գնալ.

— Տրդատ,— ասի,— թող էդ խմելդ, տեսնո՞ւմ ես ինչ օրն ես ընկել:

Բան չասաց. քեֆ չուներ: Հետո դարձավ, թե.

— Սիրանույշ մայրիկ, երեխեքն ինձ չեն սիրում: Օր ու գիշեր աշխատել եմ, ինձ չեն տեսել, չեն ճանաչում, թշնամու պես են նայում: Մի տարի է բաժան ենք Սոնայի հետ, հետս խոսած չկան: Այ թե ինչի եմ խմում:

— Նորից միանայիք, լավ կլիներ,— ասացի,— գնա Սոնայի մոտ, ո՞վ գիտե:

— Չէ, որոշել եմ, Սիրանույշ մայրիկ, նորից ամուսնանալ, մի խելոք կնիկ կա: Բերելու եմ: Վե՛րջ:

— Այ Տրդատ,— ասացի,— էդ էն խելոք կնիկը չի՞, որ ձեր ընտանիքի քայքայման պատճառը դարձավ: Հետո երեխեքը մեծացել են արդեն: Ի՞նչ կասեն:

— Իրենց ի՞նչ գործն է:

Չվիճեցի: Տրդատը մի քիչ, այսինքն՝ ի՞նչ մի քիչ, իր ասածի էր: Բան չասացի, վեր կացավ գնաց:

— Ու այդպես էլ անհետացա՞վ, — հետաքրքրվեց Գնունին:

— Չէ, դեռ մի քանի ամիս մնաց: Դրանից հետո Դանիելը գնաց Քաջարան՝ աշխատելու: Ոնց որ ամեն ինչ խաղաղվեց: Բայց էդպես չէր: Մի երեք ամիս անց էս մեր պատուհանից տեսա, որ Տրդատը մի ջահել կնկա բերել ու ցույց է տալիս տունը, հողամասը: Էստեղ ես մատս կծեցի: Կա, չկա էս էն կինն է, մտածեցի: Հիմա նորից ղալմաղալ կբարձրանա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ու ճիշտ որ, իրիկունը Աստղիկը տուն եկավ: Թե որտե՞ղ էր իմացել, չգիտեմ, բայց գոռում էր հոր վրա ու էնպիսի խոսքեր էր ասում, որ մազերդ բիզ – բիզ կկանգնեին: Թե որտե՞ղ էր սովորել էդ խոսքերը: Իհարկե, Տրդատն էլ ետ չէր մնում: Ասում էր՝ հերիք է, ինքը ուրախություն չունի էս տանը: Ասում էր, որ անպայման, հենց իրենց ինատու մի քանի օր հետո ամուսնանալու է:

— Իսկ այն կինն ո՞վ էր, — ասես ի միջի այլոց, հարցրեց Գնունին:

— Վարդուշ է անունը: Հացի խանութում է աշխատում, կինոյի մոտ,— պատասխանեց ծեր կինը: — Հա՛, ինչ էի ասում...

«Երևում է, որ դու, մայրիկ, քիչ առիթ ես ունենում խոսելու»,— մտքում ծիծաղեց Գնունին, ականջ հիացած այն եռանդով, որով ծեր կինը պատմում էր:

— Էդ դեպքից մի բանի օր առաջ Տրդատը նորից մեր տուն եկավ: Մի քիչ խմած էր,— շարունակում է նա,— քեֆը լավ էր: Ծիծաղում էր, խոսում, հետո գրպանից մի թուղթ հանեց, ցույց տվեց ու ասաց, որ նորից աշխատանքի է ընդունվել և այս երկու օրը ամուսնանալու է: Մի քանի օր չտեսա Տրդատին: Հետո, երբ միլիցիա եկավ նրանց տուն, ասացին, որ փախել է: Այ, էդպես էր բանը:

Համոզվելով, որ կինը սպառել է իր իմացած տեղեկությունների ամբողջ պաշարը, Աշոտը վեր կացավ տեղից, շնորհակալություն հայտնեց, հետո գրպանից հանեց ծանուցագրի մի թերթիկ, գրեց ու դրեց սեղանին.

— Այստեղ իմ հասցեն է, մայրիկ,— ասաց նա, — Աստղիկը որ գա, իրեն կտաս, կասես, որ սպասում եմ:

Հիմնարկ վերադառնալու ամբողջ ճանապարհին Աշոտը տխուր էր: Նա, իհարկե, էլի էր լսել նման պատմություններ, բայց դրանք բոլորն էլ ուրիշ էին: Ինքը սոսկ միայն լսող էր: Բայց հիմա ահա հանձնարարում են նրան մտնել մի անծանոթ տուն, բացել վարագույրները, անգամ փոշեպատ գրքերը: Եվ ինքը պարտավոր է անել այդ, այդպիսին է նրա աշխատանքը: Ստիպված ես հիմնական գործող անձ լինել հանձնարարված բոլոր գործերում:

«Եթե անգամ ես գտնեմ այդ մարդուն,— մտածում էր նա, — ի՞նչ օգուտ դրանից: Եթե մարդը չի սիրում իր ընտանիքը, խորթ է, մի թե կարող ես ստիպել նրան»:

Հետո նա զարմանքով հիշեց, որ գործում ոչ մի տող չկար հացավաճառ Վարդուշի մասին: Ուրիշ ո՞վ, եթե ոչ նա, որի հետ Տրդատը մտադիր էր սկսել իր երկրորդ կյանքը, կիմանար, թե որտեղ է Գորյանը: Կամ գուցե նրանք միասի՞ն են հեռացել քաղաքից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գնունին նայեց ժամացույցին: Ժամը երկուսն անց էր: «Կհասնեմ»,— մտածեց նա: Հետո շրջվեց առաջին իսկ փողոցով ու անմիջապես նկատեց կինոթատրոնի շենքը: Նա առանց դժվարության գտավ նաև հացի փոքրիկ խանութը:

Ներս մտնելով ու առաջին հայացքը գցելով վաճառողուհուն, Գնունին իսկույն զգաց, որ դա հենց նույն Վարդուշն է, թեև հիմա շատ էր ուզում, որ սխալված լինի ինքը:

Աշխույժ, փոքր – ինչ գեր մարմնով և բավականին գեղեցկադեմ այդ կինը հենց առաջին հայացքից դուր չեկավ նրան: «Ահա թե ով է քայքայել Գորյանների ընտանիքը, — զայրացավ Աշոտը,— հիմա տես. ասես ոչինչ էլ չի եղել, հաց է վաճառում»:

Նա չնկատեց էլ, որ ինքը ակամայից հերթ է կանգնել ու հիմա գտնվում է հացավաճառուհուն դեմ – դիմաց: Եվ սթափվեց միայն այն ժամանակ, երբ կինը բարկացած ասաց.

— Դե, խոսեք, ի՞նչ եք ուզում, բոքո՞ն, թե՞ մատնաքաշ:

Գնունին շփոթվեց, բայց միայն մեկ վայրկյան.

— Ձեր անունը Վարդո՞ւշ է:

— Այո,— զարմացավ կինը:

— Ես միլիցիայի վարչությունից եմ, ահա իմ փաստաթղթերը, կուզեի մի երկու րոպե խոսել ձեզ հետ:

Կնոջ դեմքը մի վայրկյանում փոխվեց ու սկսեց այնպես ճառագել, ասես իր ամենամտերիմ, հարազատ մարդուն էր տեսնում երկար անջատումից հետո:

— Խնդրեմ, խնդրեմ, սիրելի՛ս,— ասաց նա: — Լավ էլ ժամանակ է, ես հիմա ընդմիջում էի ուզում անել:

Նա իր մարմնին անհարիր արագությամբ մոտեցավ դռանը, փականը գցեց ու կրկին մոտեցավ Աշոտին:

— Գիտեմ, գիտեմ, հացի գործարանի հաշվով, հա՞: Ես ամեն ինչ կասեմ, ես ոչ մի անգամ դրանց հետ գործ չեմ ունեցել: Էքսպեդիտոր Վաղոն ճիշտ չի ասում, ցավդ տանեմ:

Աշոտն ակամայից ժպտաց:

— Դե, չէ, բոլորովին այլ բան է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ի՞նչ,— միանգամից հանգստացավ Վարդուշը:

— Որտե՞ղ է Տրդատ Գորյանը:

Ախ Տրդա՞տը: Դե, այդպես ասեք, էլի: Իսկ ինքը քիչ մնաց վախենար: Իհարկե, ճանաչում է: Անազնիվ, վատ մարդ էր: Հինգ տարի խաբեց իրեն, իր հաշվին էր ապրում: Ասում էր, թե ամուսնանալու է ու մեկ էլ թողեց՝ ոտքով ու գլխով կորավ: Խեղճ կին էր գտել (այստեղ նա նույնիսկ փորձեց արտասվել): Եվ քիչ էր կարծես դա, որ թողեց գնաց: Աղջիկն էլ (մի լաչառի մեկը), եկավ ինչ ասես ասաց: Հիմա ինքն արդեն հինգ ամիս է, ինչ ամուսնացել է, դա հո կարելի է ստուգել...

Երբ Գնունին հիմնարկության շենքը հասավ, աշխատանքային օրն արդեն ավարտվում էր: Ելքի դռան մոտ սպասում էին ավտոմեքենաները, դուռն անընդհատ բացուխփ էր լինում՝ դուրս թողնելով նորանոր մարդկանց՝ համազգեստներով և առանց համազգեստների:

Գնունին դժգոհ չէր, որ ուշ հասավ վարչություն: Ընդհակառակն, մտածում էր, որ եթե շուտ հասներ, ի՞նչ պատասխան պետք է տար: Միևնույն է, էական ոչինչ չունի ավելացնելու Տրդատ Գորյանի անհետանալու առթիվ արդեն հայտնի պատմությանը: Ավելի լավ, երեկոյան կխոսի Աստղիկի հետ, գուցե նա որևէ նոր բան գիտե, իսկ առավոտյան կարելի է արդեն զեկուցել ու նոր, քիչ թե շատ հետաքրքիր գործ խնդրել:

Նա արդեն իր սենյակն էր մտնում՝ թղթերը տեղավորելու համար, երբ կից սենյակից դուրս եկավ կապիտան Բաբայանը:

— Եկար, հա՞,— հարցրեց նա, բանալիով կողպելով դուռը:

— Այո, ընկեր կապիտան:

— Նոր բան կա՞:

— Համարյա ոչինչ: Մեռած գործ է: Թույլ տվեք պատմել...

— Մի շտապիր եզրակացություն անելու, երիտասարդ,— սառը կտրեց Բաբայանը: — Աղջկա հետ խոսեցի՞ր:

— Չհասցրի գտնել, կանչել եմ այստեղ երեկոյան:

— Իզուր, երեկոյան աշխատանքի եկ միայն ծայրահեղ կարևոր և շտապ գործերով: Եվ հետո կարող էիր ինքդ գնալ նրա մոտ: Իսկ հիմա ցտեսություն, ուշանում եմ, տղայիս մանկապարտեզից տուն եմ տանելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գնունին վիրավորվեց: Թեև ինքն այսօր չէր ուզում հանդիպել Բաբայանին, բայց հանդիպումից հետո արդեն կարծում էր, թե կապիտանը անմիջապես կլսի իրեն, կիմանա, թե ինչ տարբերություն կա նախկին քննիչի և իր միջև: Չէ՞ որ նա բոլորովին էլ չէր հետաքրքրվել հացավաճառ կնոջով: Ճիշտ է, իր ուսումնասիրությունը ոչինչ չտվեց, բայց գուցե և տար...

Իսկ հիմա... երեխային մանկապարտեզից տո՛ւն եմ տանելու, մեծ բան, շտապում է:

Հետո նա միանգամից հիշեց, որ կնոջ հետ պայմանավորվել էր այսօր երեկոյան կինո գնալ: Եվ ո՞նց ինքը չի հիշել: Դե, ի՞նչ արած, ոչինչ անել հնարավոր չէ:

— Աշխատանքիս հենց առաջին օրը նշանավորվում է Սեդայի հետ ունենալիք ճակատամարտով, — ծիծաղեց նա՝ միանգամից մոռանալով վիրավորանքը,— ի՞նչ արած, պատասխանատու աշխատող ես, ընկեր Գնունի, դիմացիր:

Գնունին կանգնել էր պատուհանի մոտ, քաղաքի լույսերին էր նայում ու ժպտում էր: Հիշում էր քիչ առաջ Սեդայի հետ ունեցած խոսակցությունը:

«Իհարկե, — ասում էր Սեդան,— հիմա քեզ համար հիանալի պատրվակ ստեղծեցիր: Գիտե՞ք ինչ, նա երեկոյան գբաղված է, կնոջ հետ կինո գնալ չի կարող, մի աղջկա է կանչել իր մոտ, վարչություն»:

«Պաշտոնական պարտականությունս է ստիպում...»,— կատակում էր ինքը:

«Անշուշտ, պաշտոնական պարտականություն, — շարունակում էր Սեդան,— ամբողջ քաղաքում մի տղամարդ չգտնվեց, որ դու նրան կանչեիր»…

Ինքը ծիծաղեց ու գրկեց Սեդային: Ծիծաղեց նաև Սեդան, բայց ինչպես միշտ, ինչպես տարիներ շարունակ, արագորեն չորս կողմը նայեց, երբ Աշոտը համբուրում էր նրան:

Այդ սովորությունը դեռ Ղուկասյանի այգուց էր գալիս...

Զարմանալի է, թե ինչո՞ւ էին նրանք հանդիպում հատկապես Ղուկասյանի այգում: Սեդան մանկավարժական ուսումնարանն էր ավարտում, իսկ ինքը սովորում էր համալսարանում: Կարող էին, իհարկե, ուրիշ տեղ էլ հանդիպել: Բայց մի տեսակ սովորել էին: Ամեն անգամ բաժանվելիս ասում էին, գրեթե միասին.

— Ուրեմն, ութին, Ղուկասյանի այգում:

Ու ծիծաղում էին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դուռը թակեցին: Աշոտը արագորեն իր սեղանին մոտեցավ, նստեց ու նոր միայն ձայն տվեց.

— Համեցեք:

Աստղիկ Գորյանը ուներ շիկավուն, առատ մազեր, որ խնամքով հավաքված էին գլխի ետևում: Աչքերը երկնագույն էին և փոքր – ինչ շեղ: Բարձրահասակ էր ու սլացիկ: Հագնված էր շքեղ ու ճաշակով: Իսկ երբ ժպտաց, փոքրիկ մի փոս գոյացավ աջ այտին:

— Դուք ինձ կանչե՞լ եք:

— Աստղիկ Գորյա՞ն: Նստեցեք, խնդրեմ:

Գնունին չգիտեր ինչպես սկսել և աննպատակ, նյարդայնացած թերթում էր գործը, առանց նայելու, առանց կարդալու և ավելի էր շփոթվում:

Դրությունը փրկեց աղջիկը, որը մի թեթև հայացք գցելով թղթապանակին, հարցրեց.

— Գուցե լո՞ւր կա իմ հո... Տրդատ Գորյանից:

— Բանն էլ այն է, որ չկա,— թեթևացած շունչ քաշեց կրտսեր լեյտենանտը,— չկա, հասկանո՞ւմ եք, բոլոր տեղերից բացասական պատասխան ենք ստացել: Այդպես չի կարող լինել: Ասեղ հո չէ՞ր: Ես ձեզ մի ուրիշ բան եմ ուզում հարցնել. նա քաղաքում կամ ընդհանրապես թշնամի ունե՞ր: Ինձ հասկանո՞ւմ եք՝ անձնական թշնամի, գուցե լսել եք, գուցե ինքն է պատմել...

Հինգ րոպե առաջ նա չգիտեր, որ տալու է այդ հարցը և ինքն էլ զարմացավ: Բայց միաժամանակ հրապուրվեց այդ հանկարծահայտ մտքով: Իսկապես, գուցե նա որևէ թշնամի է ունեցել, որը նրան զրկել է կյանքից: Հաջորդ վայրկյանին Գնունին արդեն շոգում էր: Ի՛նչ հիմարություն, չէ՞ որ աղջիկն ինքն է պատմել, թե ինչպես է հայրը վաղ առավոտյան արթնացրել իրեն ու հայտնել, որ Ղազախստան է մեկնում:

— Չգիտեմ,— ասաց աղջիկը,— ես ի՞նչ գիտեմ, մենք երկար ժամանակ իրար հետ չէինք խոսում: Երբ նա լքեց մորս...

— Չէ, ինչո՞ւ,— ընդհատեց Գնունին, — դրանից հետո դուք բավականաչափ խոսել եք նրա հետ, համոզել եք գնալ մայրիկի ետևից, հետո կռվել եք, երբ նա խոսել է նոր ամուսնության մասին, հատկապես այն օրը, երբ նա Վարդուշին տուն է բերել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դուք Վարդուշին էլ եք ճանաչում,— արագ հարցրեց Աստղիկն ու ավելացրեց,— դե, իմացեք, նա էր մեր դժբախտության պատճառը: Հայրս տարվել էր նրանով: Թուլակամ մարդ էր, դե, ի՞նչ պետք է լիներ հարբեցողը…

Ու նա կրկին սկսեց խոսել խորթ հոր մասին՝ համարյա բառ առ բառ կրկնելով առաջին դիմումը: Խոսում էր զայրագին, հուզված, վշտացած, ցավով նկարագրում իրենց երբեմնի լավ ընտանիքի քայքայումը:

Չնայելով աղջկան, գլուխը սեղանին հակած, Գնունին նշումներ էր անում թղթին: Իսկ երբ աղջիկը սկսեց խոսել մոր մասին, Գնունին նրա ձայնում լացի հնչյուններ նկատեց: Նա բարձրացրեց գլուխը, նպատակ ունենալով սփոփել Աստղիկին, և ապշեց: Աղջկա աչքերը ոչինչ չէին արտահայտում: Այդպիսի բան նա կյանքում չէր տեսել: Աղջիկը խոսում էր՝ արտահայտելով ամենատարբեր զգացմունքներ, նրա այտերը, շուրթերը, հոնքերը, ճակատը խոսում էին, իսկ աչքերը սառն էին, անտարբեր, անշարժ և ամենայն ուշադրությամբ հետևում էին իրեն:

Գնունին հանկարծ վատ զգաց ու չգիտես որտեղից երկյուղի հետ խառն ինչ – որ հակակրանքով լցվեց Աստղիկի նկատմամբ, այդ աչքերի նկատմամբ:

— Դուք այնպես եք խոսում ձեր հոր մասին, ասես հանգուցյալի մասին եք խոսում. «նա այսպես էր, այնպես էր…»: Բոլոր դեպքերում նա ձեր հայրն է, թող որ անարժան, բայց հայրն է,— սրտնեղած, չարությամբ պոռթկաց Գնունին, ու ինքն էլ վախեցավ իր թողած խոսքերի տպավորությունից:

Աստղիկն անասելի գունատվեց և գլուխը հենելով ձեռքերին, սկսեց հեկեկալ: Ու նայելով նրա ցնցվող թիակներին, Գնունին շփոթահար վեր կացավ տեղից՝ չիմանալով ինչ անել, սարսափելով, որ հիմա մեկն ու մեկը ներս կմտնի ու կտեսնի այս պատկերը: Ու սկսեց կցկտուր, ցածրաձայն խնդրել, որ աղջիկը դադարի լալ, ասաց, որ ինքը մտադիր չէր վիրավորել նրան, որ դա հենց այնպես ստացվեց:

Բայց աղջիկը չէր հանգստանում:

— Հանգուցյալ է, բա ի՞նչ է,— ասում էր նա,— մեզ համար հանգուցյալ է, եթե չէ, որտե՞ղ է նա, ասեք՝ որտե՞ղ: — Հետո շեշտակի բարձրացրեց գլուխը ու ճչաց.— Եվ ի՞նչ եք ուզում ինձանից, դուք պարտավոր եք գտնել նրան, մի տարի է չեք գտնում ու դեռ վիրավորում եք մարդկանց…

Ու Գնունին կրկին տարակուսանքով նրա աչքերին էր նայում. այդ աչքերը դարձյալ չոր էին ու չար: Ու զարմանալի բան՝ ասես այդ խոսքերը իրեն չէին վերաբերում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աշոտն այլևս ոչինչ չուներ հարցնելու, բայց չէր ուզում աղջկան ազատ արձակել: Նրան անընդհատ թվում էր, թե ինքը մի շատ, շատ կարևոր հարց ունի տալու ու չի կարողանում հիշել այդ հարցը: Նրան թվում էր, թե այստեղ ինչ – որ բան իր տեղում չէ, ինչ – որ բան պարզ չէ: Բայց ի՞նչը...

Եվ հիշեց միանգամից: Հիշեց, բայց, չգիտես ինչու, չկարողացավ այդ հարցը տալ: Հետո վճռեց, որ հարկ չկա: Իսկ երբ աղջիկը հեռացել էր, նա այդ հարցը տվեց բարձրաձայն, ինքն իրեն:

— Ինչո՞ւ Աստղիկը կամ իր եղբայրը հոր անհետանալուց հետո այլևս երբեք չեն հետաքրքրվել նրանով: Ինչո՞ւ:

— Կրկին շտապում ես: Հետաքրքրվել են,— լսվեց մի ձայն:

Գնունին անակնկալի եկած ոտքի կանգնեց: Կապիտան Բաբայանն էր: Բաժնի պետը փութկոտ քայլերով իր առանձնասենյակը մտավ և քիչ հետո դուրս եկավ այնտեղից՝ մի գրություն ձեռքին:

— Հետաքրքրվել են,— կրկնեց նա, գրությունը մեկնելով շփոթված Գնունուն:

Դիմում էր: Մեկ շաբաթ առաջ գրել էին Աստղիկ և Դանիել Գորյանները: Դիմումը հասցեագրված էր քաղսովետի գործկոմի նախագահին: Գորյանները համառոտակի պատմում էին իրենց հոր անհետանալը և խնդրում նրա անվամբ հաստատված տունը, այգին և ընդհանրապես ողջ ժառանգությունը ձևակերպել իրենց անունով: Դիմումին կցված էր նաև մոր թույլտվությունը: Քաղսովետի նախագահն այդ կապակցությամբ հարցում էր արել միլիցիայի վարչությանը...

— Դե, ի՞նչ կասես,— կապիտանը կիսախուփ աչքերով թիկնել էր բազմոցին:

— Կրկին նույնը,— համառեց Գնունին, — և այս անգամ ավելի վճռական: Ինչո՞ւ նրանք դատախազությանը առաջին անգամ դիմելուց հետո, մեկ տարի շարունակ այլևս չեն հետաքրքրվել իրենց հոր բախտով: Երբ իմ նախորդը թեթևակիորեն ուսումնասիրելով գործը, կարճել է այն, ինչո՞ւ նրանք չեն բողոքել վերադաս օրգաններին, ինչո՞ւ են լռել: Եվ ինչո՞ւ են միայն հիմա հիշել, երբ պետք է տունը նրանց անվամբ ձևակերպել:

— Նրանք միշտ էլ չեն սիրել իրենց հորը, — աչքերը չբացելով, հատ – հատ արտասանեց կապիտանը:

— Դա նշանակություն չունի: Չէ՞ որ մարդ էր անհետացել:

— Նրանց ինչի՞ն էր պետք այդ մարդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ինչպե՞ս թե,— կակազեց Գնունին, — այսպես թե այնպես՝ հայր է:

— Այո, հայր, որը թունավորել է նրանց կյանքը, անընդհատ ծեծել է կնոջը, հարբեցողությամբ է զբաղվել, ոչ մի կոպեկ տուն չի բերել, չի լսել որդիների հորդորները, հայհոյել է նրանց, միշտ սպառնացել է հեռանալ տնից և վերջապես թքել է տան վրա էլ, բոլորի վրա էլ ու մի առավոտ անհետացել: Այս հոր համար հետաքրքրվե՞ն...

— Թույլ տվեք հարցնել, ընկեր կապիտան, դուք Գորյանների անունի՞ց եք խոսում:

— Այո,— նույն տոնով պատասխանեց Բաբայանը:

Այդ նրա սովորությունն էր: Երբ ուզում էր որևէ գործի ճշմարտությունը լիովին վեր հանել և ստուգել իր կարծիքը, նա զուտ տրամաբանությամբ հակադրվում էր իր աշխատակիցներին և ստիպում, որ համոզեն իրեն:

— Այդ դեպքում մի փոքր ուղղում,— հաղթական ժպտաց Գնունին,— Տրդատ Գորյանը մինչ այդ երբեք էլ չի ուզեցել հեռանալ տնից:

Կապիտանը աչքերը բացեց:

— Ապացույց,— համարյա շշնջաց նա:

— Նա ուզում էր կրկին ամուսնանալ: Նա վաղուց կապված է եղել Վարդուշ անունով մի կնոջ հետ: Անհետանալուց մի քանի օր առաջ նրան տուն է բերել, ցույց տվել իր ունեցվածքը...

Ու կրտսեր լեյտենանտը մանրամասն նկարագրեց Գորյանների հարևանուհու հետ ունեցած իր զրույցը, հետո հանդիպումը հացավաճառ կնոջ հետ, Աստղիկի զարմանքը, երբ ինքը խոսք բացեց Վարդուշի մասին:

— Ուրեմն, ինչո՞ւ պետք է Տրդատ Գորյանը փախչեր տնից, առանց գոնե Վարդուշին որևէ բան ասելու: Եվ ընդհանրապես ինչո՞ւ պետք է անհետանար: Մի՞թե միայն նրա համար, որ աղջկան հասնող ալիմենտից ազատվի: Իսկ տո՞ւնը, իսկ այգի՞ն, իսկ ունեցվա՞ծքը, իսկ նոր ամուսնությո՞ւնը...

Գնունին խոսում էր և ինքն էլ էր զարմանում այն մտքերի վրա, որ արտահայտում էր: Չէ՞ որ դրանց մեջ ճշմարտություն կար, չէ՞ որ դրանք տրամաբանված էին: Ու նա նոր միայն զգաց, թե ինչպես է կապիտանը հետզհետե, առանց որևէ ջանքի բացում իր հոգին, ստիպում մտածել, ի մի բերել տպավորությունները, քայլել բոլորովին ուրիշ ուղղությամբ, ինքը չասելով ոչինչ, ոչ մի խնդիր չառաջարկելով, ոչ մի կարծիք չհայտնելով...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Եվ վերջապես ինչի՞ համար է Տրդատ Գորյանը դեպքից երկու օր առաջ աշխատանքի ընդունվել գործարանում: Նախօրոք անհետանալու մտադրություն ունեցող մարդը մի՞թե աշխատանքի կընդունվի:

Կապիտան Բաբայանը դադարեց քայլել ու կանգնեց պատուհանի մոտ, թիկունքով դեպի Գնունին: Սենյակում մինգամից լռություն տիրեց:

— Փաստը փաստ է, որ Տրդատ Գորյանը չկա,— խուլ ձայնով արտասանեց կապիտանը: Նա քիչ սպասեց, որ Գնունին խոսի, բայց կրտսեր լեյտենանտը լուռ էր: — Չկա, — կրկնեց կապիտանը, ապա միանգամից շրջվեց,— և ի՞նչ է քո կարծիքը, Գնունի:

— Դուք ճիշտ եք ասում, ընկեր կապիտան, — հոգնած, այրվող աչքերը թաքուն տրորելով, մրմնջաց Գնունին:

— Փաստը փաստ է, որ Տրդատ Գորյանը անհետացել է:

— Ես չասացի անհետացել է,— անասելի մռայլված խոսեց կապիտանը: — Ես ասացի, որ Տրդատ Գորյանը չկա: Տրդատ Գորյանը մեռած է:

— Ի՞նչ,— Գնունին ցնցվեց, գունատվեց վայրկենապես ու հենվեց սեղանին: — Ի՞նչ, ո՞վ ասաց ձեզ:

— Դու, — պատասխանեց միլիցիայի կապիտանը:

Որքան մոտենում էին մենավոր, երկհարկանի տանը, այնքան վճռականությունը լքում էր Գնունուն և կապիտանի ահավոր եզրակացությունը անհավատալի էր թվում: Իսկ ի՞նչ, եթե իրենք սխալվում են, եթե այդ բոլորը պատահականություններ են: Այն ժամանակ ինչպե՞ս նայես այդ մարդկանց: Ի՞նչ պատասխան տաս:

Նա ուզում էր կրկին խոսել այդ մասին, վիճել և դարձավ իր ուղեկիցներին: Կապիտանը մռայլ էր ու խորասուզվել էր մտքերի մեջ: Լեյտենանտ Սիմոնյանը կիսախուփ աչքերով թիկնել էր ավտոմեքենայի բազմոցին ու կամացուկ սուլում էր: Գնունուն զայրացնում էր այպիսի կարևոր, պատասխանատու պահին լեյտենանտի սուլոցը և չկարողանալով համբերել, նրան ասաց այդ մասին:

— Ոչինչ, հետո դու էլ կսուլես, — թավ, համարյա քառակուսի բեղերի տակ քմծիծաղ տվեց Սիմոնյանը, — դեռ ջահել ես, առաջին գործդ է: Դեռ էնքա՜ն կսուլես…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Չէ, այդ երբեք չի լինի»,— ուզեց պատասխանել Գնունին, բայց մեքենան միանգամից թեքվեց աջ ու կանգ առավ տուֆակերտ առանձնատան ցանկապատի առաջ: Դա Տրդատ Գորյանի տունն էր:

Միլիցիայի աշխատողները ցած իջան մեքենայից ու մոտեցան փայտե դռանը: Գնունին ուզեց սեղմել զանգի կոճակը, բայց նկատեց, որ դուռը կիսաբաց է ու փոքր – ինչ տատանվելով ներս մտավ: Բաբայանն ու Սիմոնյանը հետևեցին նրան, իսկ վարորդը մնաց ավտոմեքենայի մեջ:

Վաղ առավոտ էր: Պարտեզի դեղնած խոտը դեռ ցողով էր պատած: Փոքրիկ մի արահետ, սկսելով դռնից, նրանց մոտեցրեց առանձնատանը: Դռան վրա մի քանի կողպեքներ կային: Գնունին դողացող ձեռքով սեղմեց զանգի կոճակը:

Ներսից ոչ մի ձայն:

— Դեռ քնած է, ասաց նա՝ վարանելով:

— Սեղմիր ավելի երկար, — ձայնեց լեյտենանտ Սիմոնյանը:

Լսվեց, թե ինչպես ներսում բացվեցին ինչ – որ դռներ, հետո մեկը կամացուկ կանգնեց շքամուտքի ետևում:

— Ո՞վ է, — հարցրեց մի կին, և Գնունին ճանաչեց Աստղիկի ձայնը:

— Ն՞ա է, — կամացուկ հարցրեց կապիտանը:

— Այո՛, — պատասխանեց Գնունին, ջանալով հանգիստ ձևանալ և հաղթահարել հանկարծակի սկսած անտանելի դողը:

— Բացեք, խնդրում եմ, միլիցիայից ենք, — արտասանեց կապիտան Բաբայանը:

Դռան ետևում կրկին լռություն տիրեց, ապա նույն ձայն ասաց.

— Ես հիմա, հագնվեմ ու...

Բաբայանը լեյտենանտ Սիմոնյանին կարգադրեց անմիջապես գտնել ու հրավիրել միլիցիայի տեղամասային լիազորին, թաղային կոմիտեի նախագահին և հարևան մի երկու բնակչի, իսկ ինքը շրջվեց և ուշադիր սկսեց դիտել բանջարանոցը, օժանդակ կառույցները:

Դուռը բացվեց ու երևաց Աստղիկը: Գնունուն նա արտասովոր գունատ թվաց ու ընկճված: «Նա էլ ինձ նման գիշերը չի քնել», — մտածեց կրտսեր լեյտենանտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ի՞նչ է պատահել, ինչի՞ համար եք եկել, —շփոթված մրմնջաց աղջիկը:

— Ձեր և ձեր եղբոր դիմումի, — կապիտանը Աստղիկի կողքով ներս մտավ ու ձեռքի մի շարժումով Գնունուն հրամայեց հետևել իրեն: Հյուրասենյակում կապիտանը կանգ առավ ծոցագրպանից քառածալ մի թուղթ հանելով, մեկնեց տանտիրուհուն:

Դա խուզարկության արտոնագիրն էր:

— Ինչո՞ւ այլալվեց Աստղիկը, — մեր տունը խուզարկե՞լ, ի՞նչ նպատակով, ո՞վ է ձեզ իրավունք տվել:

— Իրավունքը արտոնագիրն է, կտրեց Բաբայանը, — իսկ խուզարկությունը կատարվում է ձեր հոր անհետանալու հետ կապված որոշ հանգամանքներ պարզելու համար:

— Իմ հո՞ր, — արյունը վայրկենապես ողողեց աղջկա գեղեցիկ դեմքը, աչքերը չարությամբ, ցասումով փայլատակեցին, — ի՞նչ, իր տունը լքած Տրդատ Գորյանին հենց իր տա՞նն եք որոնում: Մի տարի ոչինչ չեք արել և հիմա մե՞զ եք ուզում վարկաբեկել… Դուք… դուք, — թվում էր, թե նա հիմա շնչահեղձ կլինի… — Գիտեք, թե ինչ կանեն ձեզ դրա համար: Ահա քեզ մեր միլիցիան… — ճչում նա: — Դրա համար էլ բոլորը ծիծաղում են ձեզ վրա, միլիցիա… կողոպտիչի փոխարեն կողոպտվածին են բռնում…

Գնունին կանգնած էր գլխահակ, ամոթահար, մերթ ընդ մերթ ցնցելով գյուխը՝ ասես աղջկա ապտակներից խուսափելով: «Եթե նա անմեղ է,— մտածում էր նա, — ապա ես չգիտեմ, թե ինչ կանեմ, ես բացեիբաց կասեմ կապիտանին, որ նա մարդ չէ, որ միլիցիայում աշխատելու տարիները քարացրել են նրա սիրտը»: Նա նայեց կապիտանին: Բաբայանը կանգնած էր գլուխը բարձր, սառը, անթափանց հայացքով Աստղիկին էր նայում, և երբ վերջին մի վայրկյան շունչ առավ՝ լուտանքների տարափը վերսկսելու համար, կապիտանը կամացուկ, բայց վճռական ասաց.

— Կաշխատենք, որ մեզ վրա չծիծաղեն: Իսկ հիմա թույլ տվեք աշխատել, թե չէ ստիպված կլինեմ մեկուսացնել ձեզ: — Նա արագորեն մոտեցավ սեղանին, նստեց, բացեց պայուսակը ու հանկարծ հարևանցիորեն հարցրեց.

— Ո՞վ կա ննջարանում:

Գնունին զարմանքով կողքի դռանը նայեց և նկատելով մի ստվեր՝ կաթնապակու, ետևում, դեպի դուռը նետվեց:

— Սպասեք, — Աստղիկը կտրեց նրա ճանապարհը, — այդ ո՞ւր, կրտսեր, դա է՞լ է ձեզ վերաբերում, թե իմ ննջարանում ով կա: Իմ… ընկերն է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դա մեզ չի վերաբերում,— առանց գլուխը բարձրացնելու, ասաց կապիտանը,— միայն թե ձեր գիշերային ընկերոջը խնդրեք, որ հեռանա այստեղից:

Անծանոթը կարծես այդ խոսքերին էր սպասում: Նա արագորեն բացեց դուռը և առանց հարցնելու, թե ովքեր են, ինչի համար են եկել, նույնիսկ առանց բարևելու, գլուխը կախ, քսվելով պատին, փութկոտ քայլերով հեռացավ:

— Ներքևում պահեցեք նրան,— կարդադրեց կապիտանը:

Չնայած դրության ողջ լարվածությանը, Գնունին քիչ մնաց ծիծաղեր: «Գիշերային ընկեր», որտեղից էլ գտավ Բաբայանը:

Խուզարկությունն սկսվեց: Կապիտանը քիչ առաջ հայտնված թաղային կոմիտեի նախագահի և միլիցիայի տեղամասային լիազորի հետ իջավ առաջին հարկ՝ երկու սենյակը և նկուղները խուզարկելու, իսկ Սիմոնյանին կարգադրեց Գնունու հետ խուզարկել վերին հարկի երեք սենյակները: Այնուհետո խմբերը պետք է միանային և հարկ եղած դեպքում խուզարկեին բակն ու օժանդակ շենքերը...

Սիմոնյանը հանգիստ, ուշադիր բացում էր բոլոր փակ պահարանները, շարունակելով կամացուկ սուլել, և դա կրկին նյարդայնացնում էր Գնունուն:

Կարծես դա բավական չէր, բազմոցին նստած Աստղիկն էլ ակնդետ նրան էր նայում, երբեմն – երբեմն հեգնորեն նետելով.

— Այդ պահարանը ավելի ուշադիր դիտեցեք, Տրդատ Գորյանն այնտեղ կլինի:

— Չմոռանաք թերթել գրքերը: Բոլոր կինոներում այդպես է:

Սիմոնյանը, որ արդեն զգեստապահարանն էր ուսումնասիրում, դադարեց սուլել ու դուրս բերեց ծանր, համարյա բոլորովին նոր, մորթե օձիքով մի վերարկու, պահեց մի ձեռքով գլխից բարձր, շրջեց, նորից նայեց ու հարցրեց.

— Ո՞ւմ վերարկուն է:

— Հորս վերարկուն էր: Իսկ ի՞նչ կա:

Երբ Սիմոնյանը վերարկուն ոչ թե կրկին զգեստապահարանում կախեց, այլ, ընդհակառակն, հանեց կախիչից, խուզարկեց գրպանները ու ոչինչ չգտնելով, խնամքով կողքի աթոռին դրեց, Գնունին նոր միայն հասկացավ լեյտենանտին, հասկացավ, մի տեսակ նախանձախառն համակրանք զգաց նրա հանդեպ ու չհամբերելով հարցրեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Իսկ եթե ձեր հայրը ուշ աշնանը խամ ու խոպան հողերն էր գնում, ինչո՞ւ վերարկուն չվերցրեց: Չէ՞ որ ձմեռը մոտենում էր:

Աղջիկը լռեց միայն մի վայրկյան:

— Իսկ դուք նրա՛ն հարցրեք,— հանդգնաբար պատասխանեց նա,— կամ գուցե այստե՞ղ էլ խաբել է ինձ, գուցե ասել է խոպան եմ գնում, բայց Աֆրիկա՞ է գնացել:

Աստղիկի պատասխանը Գնունուն անպատկառ թվաց, բայց նա ստիպվուծ էր խոստովանել, որ աղջիկը իրավունք ունի այդպես պատասխանելու... եթե անմեղ է: Այո՛, եթե անմեղ է:

Կեսօրին վեր բարձրացան կապիտան Բաբայանը և նրա ուղեկիցները: Կապիտանը ձեռքին թղթի մեջ փաթաթած մի երկարավուն ու ծանր իր ուներ: Նա հայացքով ընդգրկեց սենյակը, աչքերը սահեցրեց իրերի վրայով, հետո այդ աչքերը մի ակնթարթ կանգ առան վերարկուի վրա:

— Նրա՞նն է:

Նրանք մի անգամ էլ շրջեցին սենյակները և էական ոչինչ չգտնելով, բակ իջան: Սանդուղքի վրա Աշոտ Գնունին ուրիշներից աննկատ կապիտան Բաբայանին մեկնեց մի նարնջագույն ծրար:

— Կասկածելի թվաց, ընկեր կապիտան, եղբայրն է գրել Քաջարանից, բայց «ցպահանջ»: Ինչո՞ւ: Հետո էլի մի տեղ կա...

— Որտեղի՞ց վերցրիր:

— Օծանելիքի մի հին տուփի մեջ էր, ուրիշ նամակներ էլ կային, բայց սա «ցպահանջ» — ի համար վերցրեցի...

Բակում կանգնած էին նախօրոք հրավիրված երկու հողափոր՝ քլունգներով ու բահերով: Նրանց ցույց տալով նկուղի այն հողածածկ մասը, որը պետք էր քանդել, կապիտանը մի կողմ քաշվեց, Սիմոնյանին ու Գնունուն կանչեց իր մոտ ու անշտապ հանեց ծրարը: Վրան շեղ տառերով գրված էր. «Երևան: Կենտրոնական փոստ: Ցպահանջ: Աստղիկ Գորյանին»: Ստորագրություն չկար: «Քաջարան»:

— Դանիել Գորյան,— արտասանեց կապիտանը,— և ի՞նչ է գրում նա:

Նամակը սովորական կարելի էր համարեր: Այն սկսվում էր «Նախ և առաջ» բարևներով: Եղբայրը հարցնում էր քրոջ որպիսության մասին, տան վիճակի մասին: «Ռեմոնտ անելու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ժամանակը չէ՞»: Հետո Դանիելը պատմում էր իր մասին, անհանգստանում, թե ինչո՞ւ քույրը իր վերջին նամակին չի պատասխանել, ի՞նչ է կարծում, հիմա գա՞, թե՞ դեռ մի քիչ էլ աշխատի: Այո՛, սովորական նամակ էր դա, եթե չլինեին հետևյալ տողերը: «Ի՞նչ նորություն կա: Դու գրի, ես կհասկանամ…»:

Ինչո՞ւ է Դանիելը քրոջը ուղղված նամակը հասցեագրում ոչ թե տուն, այլ «ցպահանջ», ի՞նչ նորության մասին է հարցնում: Եթե նրան անհանգստացնում է հոր անհետանալու խնդիրը, ինչո՞ւ է առաջարկում, որ Աստղիկը «գրի, ես կհասկանամ»: Ի՞նչը կհասկանա: Եթե Աստղիկը գրելու է, թե հորից լուր կա կամ չկա, ինչո՞ւ պետք է այնպես գրի, որ «հասկանա»…

Ահա այս հարցերն էին, որ միաժամանակ պտտվում էին երեք հետախույզների ուղեղներում: Եվ որքան ավելի էր խորհում, այնքան ավելի էր Գնունին համոզվում, որ թերևս կապիտանը իրավացի է, թեև անհավատալի, աներևակայելի է դա, բայց այդպես է:

— Դե՞,— այդ Բաբայանն էր հարցնում:

— Այս ցանկապատից դուրս հարց չկա,— ասաց լեյտենանտ, Սիմոնյանը:

— Գնունի՞ …

— Ես էլ եմ այդպես կարծում,— դժվարությամբ արտասանեց Աշոտը:

Հողափորները նկուղում ոչինչ չգտան և կապիտանի կարգադրությամբ փորում էին տանը հենված մառանի հողե հատակը: Իսկ երբ ձեռնունայն դուրս եկան մառանից, կապիտանը ցույց տվեց ցանկապատի մոտ գտնվող ցածրահարկ ցախանոցը: Դա վերջին «կառույցն» էր: Գնունին հոգնած էր, անասելի քաղցած և գնալով հուսահատվում էր: Միայն այն միտքը, որ բոլորն էլ նույն վիճակի մեջ են, բայց չեն տրտնջում, նրան պահում էր հողափորների մոտ: Եվ քլունգի յուրաքանչյուր հարվածը խուլ արձագանքում էր երիտասարդ հետախույզի սրտում… Իսկ եթե հիմա, այս անգամ քլունգը «նրա՞ն» դիպչի…

— Իսկ եթե այստեղ էլ չլինի՞, — վերջապես համարձակվեց հարցնել կապիտանին:

Կապիտանը չպատասխանեց: Նա չոքել էր փոսի պռունկին և ուշադիր ներսն էր նայում: Հետո բարձրացավ տեղից, թափ տվեց ծնկների հողը ու ասաց առաջվա հանգստությամբ.

— Կշարունակենք որոնել:

— Գուցե բանջարանոցո՞ւմ:

— Ոչ,— ձեռքը վճռականորեն թափ տվեց կապիտանը,— անհնար է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Որ Տրդատ Գորյանը սպանված է, կապիտանը կասկած չուներ դրանում, որ նա թաքցված, թաղված է այստեղ, մոտիկ ինչ – որ տեղ, ծածկի տակ, դրան հանգեցնում էր նրա սառը տրամաբանությունը: Մարդասպանը կամ մարդասպանները ուրիշ կերպ չէին կարող վարվել, նրանք սպանվածի դիակը բաց տեղում չէին թաղի, որովհետև նույն պահին կնկատվեին կամ թեկուզ մի քանի օր անց՝ թարմ սևահողի հատվածը աչքի կընկներ: Ուրեմն նրանք պետք է աշխատեին դիակը դուրս բերել քաղաքից, որը մեծ փորձության հետ էր կապված: Հնարավոր էր, որ տեսնեին, կասկածեին (հետո դա անհնար է առանց գործակցի, իսկ հանցագործները սարսափելի խուսափում են յուրաքանչյուր ավելորդ ականատեսից): Կամ էլ, որ ամենահավանականն էր, պետք է աշխատեին դիակը թաքցնել ինչ – որ ծածկի տակ փորած փոսում: Այդպիսի ծածկ կարող էին հանդիսանալ, թե՛ նկուղը, թե՛ մառանը, թե՛ ցախանոցը: Ուրիշ ծածկ չկար:

Որքան էլ միլիցիայի աշխատողները շրջապատից աշխատել էին թաքցնել իրենց խուզարկության նպատակը, նրանց այդ ամբողջությամբ չէր հաջողվել: Ինչպես հաճախ է լինում, ինչ – որ ներքին բնազդով կռահելով, ինչ – որ շշուկից հասկանալով կամ պարզապես հետաքրքրությունից դրդված, ցանկապատի ետևում՝ մերթ այստեղ, մերթ այնտեղ մարդիկ էին հայտնվում: Երկու թե երեք անգամ Գնունին նկատեց նաև Գորյանների ծեր հարևանուհուն, որը ձեռքն աչքերին հովանի արած, ապշած աշխատում էր հիշել այս ջահել տղային, որին կարծես ինչ – որ տեղ տեսել էր:

Բայց հետաքրքրասեր հարևաններից հատկապես մեկը գրգռում էր Գնունուն: Ճաղատ գլխով, փոքրամարմին, բայց երկար թևերով այդ մարդը պարզապես երեխայի նման կառչել էր ցանկապատից և ամբողջ օրը հետևում էր, թե ինչ է կատարվում ներսում: Մի քանի անգամ Գնունին սաստեց նրան, առաջարկեց ցած իջնել, բայց հենց որ շրջվում էր, ճաղատ գլխով մարդու երկար թևերը կրկին կախվում էին ցանկապատից: Այնպես որ դա ի վերջո զզվեցրեց Գնունուն, ու նա սրտնեղած թափ տվեց ձեռքը... Սատանան հետը, ինչքան ուզում է թող նայի:

Հարևանի երանությունը իր գագաթնակետին հասավ, երբ փորում էին ցախանոցի հատակը: Դա հո իր աչքի առաջ էր: Եվ այնքան էր թեքվել ցած, որ թվում էր, թե հիմա ուր որ է կգլորվի:

— Գուցե ծածկի տակ չէ, այլ բանջարանոցում, ինչ – որ տեղ, — ասաց Գնունին կապիտանին, որը ցախանոցից դուրս եկող հողափորներին էր նայում այնպիսի մռայլությամբ, ասես նրանք էին ողջ անհաջողության պատճառը:

— Չէ,— համառեց Բաբայանը՝ աջ քունքը ցավեցնելու չափ տրորելով,— չէ, անհնար է, ծածկի տակ պետք է լինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Բայց ինքներդ եք տեսնում, որ չկա,— նկատելով, թե ճաղատ մարդը ինչպես է լարված ուշադրությամբ լսում իրենց զրույցը, ձայնը ցածրացրեց Գնունին,— համենայն դեպս փորձենք:

— Փորձելը կփորձենք, իհարկե,— նույն մռայլ հանգստությամբ ասաց կապիտանը,— բայց արդեն ուշ է, մթնում է: Դու գնա զանգահարիր, թող մեքենան գա: Ավտոմատ հեռախոսը տեսար չէ՞, փողոցի անկյունում է: Հա, իսկ Սիմոնյանին ասա թող այդ կնոջը նախապատրաստի, մեզ հետ տանել է պետք...

Դեպի փողոցի անկյունը քայլելիս, Գնունուն թվաց, թե ինչ – որ մեկը համառորեն իր ծոծրակին է նայում: Դա մի այնպիսի տհաճ, անտանելի զգացում էր, որ նա այլևս չհամբերեց ու ետ նայեց:

Ցանկապատից կախված ճաղատ մարդն էր: Նրա ոտքերին միայն կրկնակոշիկներ էին ու քայլում էր զգուշությամբ, դանդաղ, մի տեսակ ի միջի այլոց, մերթ այս, մերթ այն կողմ նայելով:

«Ի՞նչ է սա ուզում ինձանից, ինչո՞ւ է հետևում,— բարկացած մտածեց Գնունին, — ախր լինում են այդպիսիները: Կբռնեն ու կսկսեն հարցնել՝ ի՞նչը, ինչո՞ւ, ո՞նց... ու չես կարող օձիքդ ազատել»:

Գնունին արագացրեց քայլերը ու քիչ անց փողոցի անկյունում էր: Հեռախոսի խցիկում ոչ ոք չկար, նա արագորեն հավաքեց անհրաժեշտ համարը, շրջվեց ու սպասեց ազդանշանին: Ճաղատ մարդը խցիկի առջև էր կանգնած, այնքան հեռու, որքան թույլ էր տալիս պատշաճությունը, և հավանաբար մտադիր էր զանգահարել, որովհետև ձեռքին ցուցադրաբար վեր – վեր էր թռցնում պղնձե մի դրամ:

«Գուցե իսկապես ինքն էլ է ուզում ինչ – որ տեղ զանգահարել» — մտածեց Գնունին, բայց անմիջապես էլ քմծիծաղ տվեց: Մարդու ձեռքից ընկած կոպեկանոցը գլորվելով մոտեցավ խցիկին ու երբ շրջվեց, Գնունին տեսավ, որ երեք կոպեկանոց էր:

Ուրեմն մարդն անպայման ուզում է խոսել իր հետ: Նա ավտոմեքենա խնդրեց, կախեց լսափողը և երբ խցիկի դուռը բացեց, նրան ընդառաջ եկավ ճաղատ մարդը, կողքով սեղմելով աշխատեց ներս մտնել ու առանց Գնունուն նայելու, արագորեն շշնջաց.

— Գլխի ընկա, որ հին բան եք ման գալի, հող եք փորում ծածկի տակ: Էդ ցախանոցը առաջ էդտեղ չէր, գարնանն են փոխել տեղը, էդտեղ ի՞նչ եք փորում: Առաջ տանը կպած էր, ծառի տակ, պատշգամբից մի քիչ ձախ... Դե էլ ի՞նչ ես կանգնել ինձ նայում,— ձայնը քիչ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բարձրացրեց նա՝ վերցնելով լսափողը և աննպատակ ինչ – որ համար հավաքելով,— ինձ մի նայիր, ես մաքուր մարդ եմ, քսանչորս տարի տրամվայ եմ քշում: Ասի զուր չչարչարվեք…

Եթե այդ ճաղատ, ազնիվ մարդու վրա որևէ կասկած գցելու հարցը չլիներ, Աշոտ Գնունին հեռախոսի խցիկի մոտից մի շնչով կհասներ կապիտանին: Ու նա քայլեց սովորականից էլ դանդաղ, զգալով, թե ինչպես է քունքերում արագ, անսովոր տրոփում արյունը, զգալով, թե ինչպես է սիրտը ուռչում հուզմունքից ու տագնապից:

Մութը միանգամից էր ընկել, ինչպես լինում է ուշ աշնանը, և բակը դանդաղորեն ընկղմվում էր խավարի մեջ:

— Ուշանում ես,— հնչեց կապիտանի անբավական ձայնը, բայց երբ փողոցում հնչեց միլիցիայի գազիկի ծանոթ շչակը, այդ ձայնը մեղմացավ, դե, ի՞նչ, գնանք:

— Ո՛չ,— ասաց Գնունին,— ո՛չ, հենց հիմա պետք է փորել տան պատի մոտ, ծառի տակ, պատշգամբից քիչ ձախ…

Կապիտանը ոչ մի հարց չտվեց, այլ ձայնեց Սիմոնյանին ու հրամայեց լապտեր կախել պատշգամբից: Իսկ երբ աղոտ լույսը խաղում էր մռայլ ու հոգնած բանվորների դեմքին, կապիտանը հրամայեց փորել հողը…

Հինգ րոպե, տասը րոպե, տասնհինգ… խուլ թնդում է քլունգը, բահը աշնան տերևները նետում է մի կողմ… քսան րոպե, քսանհինգ… ու մեկ էլ քլունգը անձայն ինչ – որ բանի է դիպչում: Հանկարծ քլունգի հարվածի հետ պատշգամբից հնչում է անմարդկային, աղեկտուր, սարսափախառն մի ճիչ ու տապալվող մարմնի ձայն: Լապտերն օրորվում է սաստիկ ու դիպչելով պատին՝ փշրվում է աղմուկով: Այդ Սիմոնյանն էր, որ բաց էր թողել լապտերը՝ Աստղիկ Գորյանին բռնելու համար:

— Դե, ի՞նչ կասես: Մեռա՞ծ գործ էր:

— Երանի մեռած գործ լիներ, — տխրությամբ պատասխանեց Գնունին:

Նրա դեմքը երկու օրվա ընթացքում դեղնել էր, սրվել և ճակատի ուղիղ մեջտեղում հայտնվել էր առաջին կնճիռը: Երկու օրվա ընթացքում նա ոչ մի անգամ չէր ժպտացել, և դա շատերին անչափ տարօրինակ էր թվում: Նրան մոտենում էին ընկերները, շնորհավորում առաջին իսկ գործի հաջող ավարտի համար, խփում էին ուսին, ծիծաղում էին: «Եվ ինչո՞ւ են նրանք ուրախանում, — մտածում էր նա,— ուրախանալու ի՞նչ կա, ախր կատարվել է ամենասարսափելի մի ողբերգություն»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա այդ օրերին անընդհատ իր ընկերներին, իր բարեկամներին էր հիշում, նրանց ընտանիքները, իր ծանոթներին էր հիշում, որոնցից ոմանց չի էլ համակրում, իսկ ոմանց նույնիսկ տանել չի կարողանում այս կամ այն վատ արարքի կամ բնավորության ինչ – ինչ գծերի համար... Եվ կրկին ու կրկին համոզված մտածում էր, որ նրանցից ոչ ոք սակայն նման քայլի մասին անգամ չէր մտածի: Ուրեմն որտեղի՞ց են եկել այս երկուսը՝ քույր և եղբայր, որտեղի՞ց է նրանց մեջ խտացել այլասերվածությունը, նույնիսկ հանցագործության միջոցով ինչ – որ մեկի կայքին տիրելու մոլուցքը:

— Ի՛նչ մարդիկ կան դեռ — բարձրաձայն մտածեց Գնունին:

— Դե, դու այդ թող,— ասաց կապիտան Բաբայանը՝ կամացուկ ցնցելով Գնունու ուսը,— բավական է: Ես հասկանում եմ քեզ: Գիտե՞ս ինչ, Աշոտ, մենք բոլորս էլ անցել ենք այդ նախասրահով: Կանցնի: Իսկ այդպիսի մարդիկ դեռ կան: Այո: Դրա համար էլ կանք մենք: Երբ վերանան նրանք, մենք էլ հանգիստ կառնենք ու մեր գործին կգնանք: Ես իմ դպրոցը...

Իսկ դո՞ւ:

— Ես էլ կուսումնասիրեմ իրավունքի պատմությունը,— ակամա ժպտաց Գնունին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

2. Հրդեհը

... Կապիտան Բաբայանը մենակ չէր: Նրա գրասեղանը շրջապատել էին լեյտենանտ Սիմոնյանը, լեյտենանտ Մարկոսյանը և էլի մի լեյտենանտ, որին Գնունին չէր ճանաչում:

— Նստիր,— ասաց կապիտանը,— ավելի շուտ, նստելու կարիք էլ չկա: Մարկոսյանի հետ անմիջապես մեկնիր Ֆիզիկայի ինստիտուտի բազա: Այնտեղ հրդեհ է ծագել, կասկածներ կան: Մարկոսյանը ճանապարհին կպատմի քեզ: Գործողությունները կատարիր ինքնուրույն:

... Հրդեհը ծագել էր անհասկանալի հանգամանքներում: Կիրակի օրը, բազայի պահակ Գերասիմ բիձան, սովորականի պես առավոտյան շրջում է բոլոր շենքերը, ոչ մի կասկածելի կամ անսովոր բան չի նկատում և վերադառնալով պահակատուն՝ սկսում է օրվա լրագիրը կարդալ: Ժամը 11 – ի մոտ բազա է գալիս պահեստապետ Վարդան Շատվորյանը: Դա զարմացնում է Գերասիմ բիձային, որովհետև դիրեկտորի կարգադրությամբ՝ կիրակի օրը ոչ ոք իրավունք չուներ բազա մտնելու: Նա այդ մասին հիշեցնում է Շատվորյանին:

—Ոչինչ, Գերասիմ բիձա, — հանգստացնում է ծերունուն պահեստապետը,— ես վաղը դիրեկտորին կասեմ: Հիմա անհետաձգելի գործ ունեմ: Երեկ շատ ապրանք ստացանք, ժամանակ չեղավ մի մասը գրանցելու: Գնամ մի քիչ աշխատեմ:

Պահակը չի կարողանում առարկել: Ուղիղ մեկ ժամ անց Վարդան Շատվորյանը կրկին պահակատուն է մտնում, մի քիչ զրուցում է Գերասիմ բիձայի հետ, ու մեկ էլ, թե.

— Լավ է, արևը դուրս եկավ, մրսում եմ, գնամ շրջեմ մի քիչ:

Իսկապես, քանի օր արև չկար: Մշուշ էր, անընդհատ բարակ անձրև էր մաղում և, ինչպես միշտ ամպած եղանակին, ցավում էին Գերասիմ բիձու ոտքերի հոդերը: Արև է, ուրախացած՝ պահեստապետ Վարդանի ետևից նա էլ փողոց է դուրս գալիս, մոտ կես ժամ նստում փոքրիկ նստարանին՝ վայելելով աշնան արևի վերջին ջերմությունը, երբ փողոցով անցնող փոքրիկ մի տղա ձայնում է.

— Քեռի, քեռի, էն շենքից ծուխ է բարձրանում, ոնց որ վառվում է:

Գերասիմ բիձան ներս է նետվում և սարսափով տեսնում, որ կրակը օղակել է հիմնական պահեստը: Սև ծուխը առատորեն դուրս էր հորդում պատուհաններից: Միայնակ չէր կարող ոչինչ անել, դրա համար էլ անմիջապես զանգում է հրշեջ պահպանության բաժին: Բայց մինչև

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հրշեջները հասնում են և հանգցնում կրակը, շատ բան է այրվում: Հեռախոսազանգով բազա է գալիս նաև ինստիտուտի դիրեկտորի տնտեսական գծով տեղակալ Վարդանյանը և հրդեհի մասին անմիջապես տեղեկացնում միլիցիայի բաժնի օրապահին...

— Հարկ կլինի ստուգել նյութական արժեքները և թղթերը, — ասաց Գնունին:

— Թղթերը այրվել են,— ատամների արանքից նետեց Մարկոսյանը:

Երբ նրանք տեղ հասան, հրշեջներն արդեն հեռացել էին: Գորշ ու մռայլ կանգնած էին պահեստի շենքի քարե պատերը, գետնին ջրի լճակներ էին գոյացել՝ ուշացած հրշեջների ջանասիրության առհավատչյան:

Նրանց դիմավորեց դիրեկտորի տեղակալը՝ կարճահասակ, շարժուն աչքերով, անհանգիստ մի մարդ: Իրեն ներկայացնելուց անմիջապես հետո նա Գնունուն ու Մարկոսյանին, չգիտես ինչու, մի կողմ տարավ ու կամացուկ, թեև մոտակայքում ոչ ոք չկար, հարցրեց.

— Իսկ ձեր կարծիքն ի՞նչ է:

— Կարծիքը գործի ուսումնասիրությունն ավարտելուց հետո կլինի, հիմա ի՞նչ կարող ենք ասել — պատասխանեց Մարկոսյանը:

— Ախր, ես միշտ էլ ասում էի, որ Շատվորյանին չի կարելի վստահել — առանց ուշադրություն դարձնելու Մարկոսյանի սառը տոնին, շշնջաց Վարդանյանը: — Բայց, դե, մեր դիրեկտորին գիտեք, խոշորագույն գիտնական է, բայց շատ միամիտ մարդ է: Շա՛տ – շատ միամիտ է: Իսկ այստեղ բարդ բան չկա: Տարեվերջ է, ընդհանուր ինվենտարիզացիա… Դուք ուշադրություն չե՞ք դարձրել այն բանին, որ ուշ աշնանը հրդեհների թիվը սովորաբար ավելանում է:

Նրա ասածը ճշմարտություն էր: Հետախույզները գիտեին այդ: Որոշ հանցագործ տնտեսվարներ, տարեվերջին զգալով, որ նյութական արժեքների խոշոր պակասորդ են ունենալու, հրդեհ են ցուցադրում կամ կազմակերպում, որպեսզի թաքցնեն պակասորդի հետքերը:

— Իսկ հիմա դերասանություն է անում, լաց է լինում,— շարունակեց դիրեկտորի տեղակալը, — կարծում է մարդիկ այնքան միամիտ են, որ կհավատան իրեն: Տեսե՛ք, տեսե՛ք:

Նայելով նրա հայացքի ուղղությամբ, Գնունին ու Մարկոսյանը տեսան արդեն տարեց, ճաղատ մի մարդու, որը պատի տակ, քարին նստած, գլուխը ձեռքերի մեջ էր առել:

— Պահեստապե՞տն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ինքը՝ տեղկոմի նախագահը,— հեգնեց Վարդանյանը,— բայց հավատացեք, ես էլի նրան չեմ մեղադրում: Ու բացեիբաց կասեմ, այո՛, մեր դիրեկտորը հանճարեղ, համաշխարհային գիտնական է, բայց շատ միամիտ մարդ է, շա՛տ, իր կադրերին չի ճանաչում:

Նրանք նստած էին դեմ – դիմաց՝ հետաքննիչը և ծանր հանցագործության մեջ մեղադրվող Շատվորյանը: Նա անչափ ընկճված, խղճալի տեսք ուներ, աչքերը կարմրած էին ու վախվորած:

— Դատարկեցեք գրպաններդ,— հրամայեց Գնունին:

— Ինչո՞ւ:

— Արագ:

Պահեստապետը դողդողացող ձեռքով ծոցագրպանից հանեց մի քանի թղթադրամ, արհմիութենական մի հին, մաշված գրքույկ, կողքի գրպանից՝ ակնոցի պատյանը, մի թաց թաշկինակ և լուցկու մի տուփ:

— Ուրի՞շ…

— Էլ ոչինչ չունեմ,— ասաց նա:

— Իսկ ծխախոտն ո՞ւր է,— հարցրեց Գնունին:

— Չեմ ծխում, կյանքումս չեմ ծխել:

— Իսկ լուցկի պահո՞ւմ եք:

— Այո՛,— ասաց Շատվորյանը,— գիտեք ինչ, երբեմն պետք է գալիս:

— Ինչպես այսօր առավոտյան, — այլևս չհամբերելով, հեգնեց Գնունին:

Մարդը ոչինչ չպատասխանեց, միայն տնքաց խուլ ու ծանր և ավելի կախեց գլուխը: Գնունին արագորեն վերցրեց լուցկու տուփը, բացեց: Նոր տուփ էր, վրայից երկու հատիկ էր պակաս միայն:

— Երկու հատիկ, և պահեստը չկա,— շարունակեց Գնունին:

Մարդը բարձրացրեց գլուխը:

— Ուրեմն դուք էլ եք մեր Վարդանյանի պես կարծում, որ ես եմ արել, հա՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Իսկ ո՞վ է արել,— տեղից բարձրացավ Գնունին, — պատասխանեք, ո՞վ է արել, ո՞ւմ էր անհրաժեշտ պահեստի հրդեհումը: Եթե աշխատանքային օր լիներ, ուրիշ հարց: Կարելի էր մտածել, թե բանվորներից որևէ մեկը անզգուշաբար ցած է նետել ծխախոտը կամ վառվող լուցկին: Իսկ հիմա՞…

— Չգիտեմ, չգիտեմ, — կմկմաց պահեստապետը:

— Չգիտեք… Բայց գուցե պատահականությո՞ւն է, գուցե դո՞ւք եք ինչ – որ բանի համար վառել լուցկին, հետո…

— Ո՛չ, ես լուցկի չեմ վառել, ես ոչինչ չեմ արել:

— Ինչի՞ համար էիք կիրակի օրը բազա գնում: Դուք տեղյակ չէի՞ք դիրեկտորի հրամանին:

Ու կրկին Գերասիմ բիձայի ցուցմունքից արդեն ծանոթ բացատրությունը: Գործ ուներ, ո՛չ բոլոր ապրանքներն էին գրանցված, մտածեց, որ լավ կլինի ժամանակ չկորցնել: Եթե ինքն իմանար…

Այս ձգձգվող հարցաքննությունը արդեն զայրացնում ու հուսահատեցնում էր Գնունուն: Իսկ սկզբում թվում էր, թե ամեն ինչ պարզ է և պահեստապետը ապացույցների ծանրության տակ ճնշված՝ կխոստովանի հանցանքը: Իհարկե, կասի, որ հարբած է եղել, որ հուզված է եղել և այլն, բայց ի վերջո կխոստովանի: Եվ ինչպե՞ս կարող է չընդունել հանցանքը, երբ ողջ ապացույցները նրա դեմ են: Այն էլ զորավոր ապացույցներ: Տարեվերջ է, մոտենում է գույքը ցուցակագրելու ժամանակը: Նոր ապրանքներ են ստացել, այն էլ թանկարժեք լուսանկարչական ապարատներ և նյութեր: Իսկ այդ նյութերը գրանցված չեն, և, ուրեմն, հաշիվը կխառնվի: Բացի Վարդան Շատվորյանից, ուրիշ ոչ ոք մինչ այդ բազա չի մտել: Հրդեհը նկատվել է նրա հեռանալուց անմիջապես հետո: Հրդեհը ծագել է պահեստի ներսում, կողպված դռների պայմաններում, այնպես որ բացառվում է պահակի՝ Գերասիմ բիձայի անփութության պատճառով հրդեհի առաջացումը: Ինստիտուտի աշխատողները նրա մասին լավ կարծիք չունեն (դիրեկտորի տեղակալ Վարդանյան): Ամենայն դիտավորությամբ հրդեհի օջախը կազմակերպվել է փաստաթղթերի պահարանի մոտ, որպեսզի անմիջապես ոչնչացվեն փաստաթղթերը…

— Դե, ընկեր Շատվորյան, ինչո՞վ եք առարկում այս բոլորին:

— Հավատացեք, խնդրում եմ, ես երեխաներ ունեմ, երդվում եմ, ես ոչինչ չգիտեմ, ես ոչինչ չեմ արել, թող ես

զրկվեմ իմ երեխաներից, եթե…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Այդ մասին ապահով մնացեք,— արդեն չարացած ասաց Գնունին,— եթե այդպես շարունակեք, երկար ժամանակ կզրկվեք ձեր երեխաներից:

Մարդը փլվեց միանգամից, գլուխը սեղանին հենեց ու սկսեց լուռ հեկեկալ:

Այդ արդեն անտանելի էր: Եվ նայելով նրա ցնցվող ուսերին, Գնունին համարյա բղավեց.

— Լավ, ես հավատում եմ, դուք անմեղ եք: Դե հիմա ինձ ապացուցեք, որ անմեղ եք: Դե խոսեք, ինչ – որ բան ասացեք, ստեք, մեղքը ուրիշի վրա գցեք, սատանան տանի, ինչ ուզում եք ասեք, բայց արդարացեք, փորձեք արդարանալ, խոսե՛ք:

Գնունին, իրեն լիովին կորցրած, ցնցում էր պահեստապետի ուսը, աշխատում բարձրացնել գլուխը, բայց մարդը «չգիտեմ» — ից բացի ուրիշ ոչինչ չէր ասում, և խոր վշտից ավելի էին ցնցվում նրա ուսերը:

— Կնստես գիշերը, կհիշես, կխոսես,— մոլտաց կրտսեր լեյտենանտը,— միայն քեզ նմանները չեն, որ խոսել են: Կխոսե՛ս, — նա սեղմեց զանգի կոճակը և անմիջապես հայտնված հերթապահ միլիցիոներին հրամայեց,— իջեցրեք կալանատուն:

Վարդան Շատվորյանը վեր թռավ տեղից, ասես անսպասելի հարված էր ստացել.

— Ի-ինչի՞ համար,— կակազեց նա,— ես մեղավոր չեմ, երդվում եմ, հավատացեք, իմ պատիվը... Իմ երեխաները ի՞նչ կմտածեն, եթե ես տուն չգնամ...

Գնունին առավոտյան աշխատանքի գնաց սարսափելի գլխացավով: Ողջ գիշեր չէր քնել: Երեկվա իր վերաբերմունքը՝ պահեստապետի նկատմամբ, նրան զզվելի էր թվում և անպատվաբեր: Ի՞նչ տոնով էր խոսում ինքը, ինչպե՞ս էր իրեն թույլ տալիս ցնցել նրա ուսը, բղավել: Հետո՛ ինչ, որ հանցագործ է: Ապացուցիր հանցանքը, գործը ուղարկիր դատարան, թող ազատազրկեն և նույնիսկ գնդակահարեն: Ինչո՞ւ ես բղավում նրա վրա, ինչո՞ւ ես ցնցում ուսը...

Բայց ինչպիսի՛ համառություն: Մի՞թե նա՝ այդ Վարդան Շատվորյանը չի հասկանում, չի զգում, որ նույնիսկ ծիծաղելի է կատարած հանցանքից հրաժարվելը, երբ մոտ մի տասնյակ անառարկելի ապացույցներ կան, երբ բոլոր փաստերը, իր իսկ ցուցմունքները իր դեմ են խոսում, իրեն են մերկացնում, իրեն են մեղադրում:

«Ես ոչինչ չեմ արել»... Իսկ ո՞վ կարող էր հրդեհել պահեստը, ուրիշ ո՞ւմ էր պետք ոչնչացնել փաստաթղթերը: Ինչ է, հրդեհն ինքն իրե՞ն է ծագել, պահեստն ինքն իրե՞ն է այրվել: Չէ, այսօր իսկապես այլ տոնով կխոսես դու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միլիցիայի բաժնի շքամուտքի մոտ Գնունին հանդիպեց կապիտան Բաբայանին: Կապիտանի տրամադրությունը ակնհայտորեն բարձր էր: Նա աչ ձեռքով գրկեց Գնունու ուսը ու այդպես էլ գրկած՝ բարձրացավ աստիճաններով:

— Հասկանո՞ւմ ես, Աշոտ,— ասաց նա, առաջին անգամ Գնունուն անունով կոչելով,— այսօր շատ ուրախ օր է ինձ համար: Ես քեզ չէի պատմել, կինս երկու ամիս հիվանդ էր, կարծում էին, թե ահավոր հիվանդություն ունի: Եղբայրը տարել էր Մոսկվա: Եվ ահա հեռագիր եմ ստանում, ամեն ինչ լավ է, հիվանդությունը չի հաստատվել: Հասկանո՞ւմ ես:

Շոյված պետի մտերիմ վերաբերմունքից և անկեղծորեն ուրախացած նրա համար, Գնունին շնորհավորեց կապիտանին:

— Իսկ դու ինչ – որ մի տեսակ ես երևում, — հանկարծ նկատեց Բաբայանը: —Չե՞ս քնել:

— Ո՛չ,— խոստովանից Գնունին,— չեմ կարողացել: Շատ տանջեց ինձ այդ պահեստապետը: Բոլոր փաստերը նրա դեմ են, բայց չի ընդունում:

—Ահա թե ի՛նչ,— բազմոցին տեղավորվելով, կապիտանը Գնունուն էլ հրավիրեց նստել,— իսկ հիմա պատմիր ինձ ամենայն մանրամասնությամբ, ողջ գործը: Աշխատիր ոչինչ, ոչ մի բառ բաց չթողնել:

Գնունու պատմելու ընթացքում կապիտանը լուռ էր, բայց գնալով նրա տրամադրությունը ընկավ, դեմքը մռայլվեց:

— Այո՛,— ասաց նա,— տարօրինակ պատմություն է:

— Միայն տարօրինա՞կ,— զարմացավ Գնունին:

— Առայժմ միայն տարօրինակ, — հաստատեց կապիտանը,— տասնհինգ տարի է, ինչ հետաքննությամբ եմ զբաղվում և առաջին անգամ եմ հանդիպում նման միամիտ հանցագործի:

— Ինչպե՞ս թե միամիտ:

— Ավելի քան միամիտ: Դե, հիմա պատկերացրեք, որ պահեստապետը դուք եք, — ակամա «դուք» — ի անցավ կապիտանը,— պակասորդ ունեք և մտադիր եք վերացնել հանցանշանները, որպեսզի պակասորդը չհայտնաբերվի: Ի՞նչ կանեք:

— Հանցագործության տասնյակ միջոցներ կան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ճիշտ է: Բայց ընդունեք, որ տասնյակ այդ միջոցներից նախընտրել եք հրդեհը, հնարավոր է, չէ՞: Ահա: Ի՞նչ պայմաններում ձեռնամուխ կլինեք ձեր մտադրության իրականացմանը: Մտածենք միասին: Առաջին հերթին կձգտեք, որպեսզի այդ մասին ոչ ոք չիմանա, այնպես չէ:

— Այո՛:

— Երկրորդ. կաշխատեք, որ պահեստը հրդեհելու պահին ձեզ ոչ ոք չնկատի: Ճի՞շտ է: Այլապես ձեր ինչի՞ն էր պետք հանցագործություն կատարելը:

Գնունին շփոթված գլխով արեց:

— Երրորդ. հրդեհը կկազմակերպեք այնպիսի ժամանակ, երբ բացի ձեզանից էլի ուրիշ մարդիկ լինեն բազայում, որպեսզի հրդեհի առաջացումը բացատրեք որևէ մեկի անփութությամբ, անուշադրությամբ, կամ թեկուզ դիտավորությամբ: Բնակա՞ն է: Չորրորդ. երբեք այդ բանը չէիք անի կիրակի օրը, երբ բազայում ոչ ոք չկար, երբ դիրեկտորը կարգադրել է ոչ ոքի բազա չթողնել: Ճշմարի՞տ է: Հակառակ դեպքում գոնե կփորձեիք թաքուն ներս մտնել ու դուրս գալ ցանկապատի վրայից կամ ինչ – որ ետնամուտքից: Եվ ոչ թե կմոտենայիք պահակին, կզրուցեիք նրա հետ, հետո էլ դուրս գալիս քաղաքավարությամբ հրաժեշտ կտայիք:

— Բայց...

— Ես չվերջացրի: Հինգերորդ. շենքը կհրդեհեիք դրսից, որպեսզի ոչ մեկը չկասկածի ձեզ վրա: Եվ ոչ թե ներսից, երբ դուռը փակված է և միակ բանալին գտնվում է ձեզ մոտ: Դե, հիմա ի՞նչ կասեք:

Գնունին լուռ էր:

— Տեսնո՞ւմ եք, թե ինչպես ձեր «ապացույցները» հենց ձեր դեմ ուղղեցի: Լիովին տրամաբանական է, այնպես չէ՞: Ես դա արեցի միայն նրա համար, որ ընդհանրապես սովորություն դարձնեք ամեն տեսակ փաստերին, ապացույցներին քննադատաբար, բոլոր կողմերից նայելը և ոչ թե բռնեք մի փաստի պոչից ու առանց շուրջը նայելու առաջ գնաք:

— Թեև,— շարունակեց կապիտանը՝ մեղմությամբ նայելով տղայի քրտնած ճակատին, — թեև պատահում է, որ շատ փորձված հանցագործը վարվում է ճիշտ այս պահեստապետի նման, օգտագործում է ամենապարզ միջոցը, որպեսզի մեզ ստիպի, այ, այսպես վիճել և եզրակացություններ անել իր օգտին: Իհարկե, իմ և ձեր եզրակացությունները միայն այն ժամանակ պետք կգան, երբ ապացուցվի, որ պահեստում պակասորդ կա: Ամենակարևորը դա է: Սպասենք ՕԲԽՍՍ — ի ստուգման արդյունքներին: Իսկ հիմա, խնդրում եմ, զանգահարիր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բազա և պահեստապետ Վարդան Շատվորյանին հրավիրիր ինձ մոտ: Ես էլ եմ ուզում նրա հետ զրուցել:

— Պահեստապետն այստեղ է,— ասաց Գնունին:

— Կանչե՞լ եք, շատ լավ է, ներս հրավիրեք:

— Ո՛չ,— ասես աղետի սպասելով, շփոթվեց Գնունին,— ես նախընտրեցի պահեստապետին գիշերը կալանատանը պահել, որպեսզի...

— Ի-ի՞նչ,— կապիտան Բաբայանը այնպիսի թափով բարձրացավ տեղից, որ գրասեղանի պարագաները զրնգացին: —Ի՞նչ, — զայրույթից գունատված հարցրեց նա, — ո՞վ է ձեզ թույլ տվել նման ապօրինի գործողություն: Ինչպե՞ս եք կալանավորել մարդուն՝ ձեր այդ օդային ապացույցներով: Իսկ եթե նա անմե՞ղ է: Դուք մտածո՞ւմ եք, թե ինչ եք արել:

— Իսկ եթե մեղավո՞ր է,— կապիտանի զայրույթը ոչ այնքան իրավացի գտնելով, այլևս չհամբերեց Գնունին:

— Մեղավո՞ր է: Ապացուցիր, նոր միայն կալանավորիր: Ես ինքս կստորագրեի: Կալանավորե՛լ մարդուն հենց այնպես, միայն թույլ կասկածների հիման վրա: Միայն նրա համար, որ չի ասում այն, ինչ դուք եք ուզում...

Կապիտանը նկատելի ճիգով զսպեց ցասումը ու ասաց համարյա տխրությամբ.

— Այսինքն՝ այստեղ ավելի շատ ես եմ մեղավորը: Չէ՞ որ ասացի. «ինքնուրույն գործիր»:

— Ընկեր կապիտան,— կոտրված սրտով շշնջաց Գնունին,— բայց դեռ կարիք չկա այդքան հուզվելու: Շատ հնարավոր է, որ հենց պահեստապետը հրդեհած լինի: Ես կաշխատեմ ամեն կերպ ապացուցել այդ:

— Դուք ինձ ավելի եք վշտացնում, Գնունի,— դեմքը կնճռոտեց Բաբայանը,— երբեք, հատկապես նման անորոշ գործերում, չպետք է աշխատեք ապացուցել, որ որևէ մեկը հանցագործ է: Ընդհակառակը, պետք է ձգտեք հիմնավորել, որ անմեղ է, պետք է վերսիաներ մշակեք նրա օգտին: Եվ երբ, չնայած ձեր բոլոր ջանքերին, չկարողանաք ապացուցել մարդու անմեղությունը, չկարողանաք արդարացնել նրան, նո՛ր միայն համոզված պիտի լինեք, որ գործ ունեք հանցագործի հետ: Զարմանում եմ՝ դուք պետք է գիտենայիք այս ամենը: Իսկ հիմա Շատվորյանին կանչեք և հետևեք, որ միլիցիոները չուղեկցի նրան:

Մի քանի րոպե անց Բաբայանի առանձնասենյակը մտավ Վարդան Շատվորյանը՝ տրորված հագուստով, գիշերային անքնության ստվերներն աչքերի տակ, տխրամած ու հուսահատ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հավատացեք, ես ոչինչ չեմ արել, ես չեմ հրդեհել պահեստը,— առանց նախաբանի սկսեց նա,— ընկեր կապիտան, ես չորս երեխա ունեմ, երդվում եմ, հավատացեք:

Կապիտանը լուռ էր, միայն ուշադրությամբ պահեստապետին էր նայում:

— Ես գիշերը շատ եմ մտածել, հասկանում եմ, որ ինձ անհնար է արդարացնելը, ամեն ինչ իմ դեմ է դասավորվել, բայց ես անմեղ եմ: Որպես մարդ հավատացեք:

— Նստեք, ընկեր Շատվորյան,— մեղմությամբ առաջարկեց Բաբայանը և ուզում էր ինչ – որ հարց տալ, երբ ներքին կապի հեռախոսը զանգեց: Նա անմիջապես վերցրեց լսափողը: — Կապիտան Բաբայանը լսում է: Այո՛, լեյտենանտ: Շնորհակալություն, ես այդպես էլ կարծում էի: Ուրեմն կրկնօրինակները պահպանվա՞ծ են: Շնորհակալություն:

Նա ցած դրեց լսափողը, և ժպիտը ցրեց նրա հոնքերի մռայլը, կնճիռներն անհետացան: Կապիտանը բարձրացավ տեղից:

— Ընկեր Շատվորյան, — դարձավ նա պահեստապետին,— դուք ազատ եք:

— Ե՞ս,— ալեկոծվեց մարդը,— ազա՞տ եմ, ո՞ւր գնամ:

— Ո՞ւր,— ուրախ ծիծաղեց կապիտանը,— ուր ուզում եք: Տուն գնացեք, հիմնարկ գնացեք, վերջապես, կինո գնացեք: Ուր ուզում եք...

Տարեց պահեստապետի աչքերը կրկին արցունքով լցվեցին.

— Ախր ես ասում էի... ես չորս երեխա ունեմ... ես... Ուրեմն իսկական հանցագործը բռնվա՞ծ է:

— Ո՛չ,— ասաց կապիտանը, — ՕԲԽՍՍ — ից հայտնեցին, որ ձեր պահեստում պակասորդ չի եղել, ապրանքները հնարավոր է եղել հաշվել: Բացի դրանից, բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները հաշվապահությունում կան, ստուգվել են: Այնպես որ, դուք անմեղ եք: Շնորհավորում եմ: Կրտսեր լեյտենանտ Գնունու և իմ կողմից ներողություն եմ խնդրում: Գնացեք, եղբա՛յր:

— Ինչի՞ համար... ոչինչ, շատ – շատ շնորհակալ եմ... փաստաթղթերի պատճենները... ես գիտեի, որ հաշվապահությունում կան... Խելքս կորցրել էի...— դեպի դուռը ետ – ետ գնալով մրմնջում էր Շատվորյանը:

Երբ նա բացում էր դուռը՝ դուրս գալու համար, կապիտանը հանկարծ ձայնեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ընկեր Շատվորյան, ձեր պահեստում կա՞ն նյութեր, որոնք ընդունակ են ինքնուրույն բռնկվելու: Զանազան քիմիական նյութեր…

Կապիտանի ձայնը լարվեց:

— Ո՛չ,— անմիջապես արձագանքեց պահեստապետը: — Ո՛չ չկան:

Նրա հեռանալուց հետո կապիտանը երկար ժամանակ լուռ էր, խորասուզվել էր մտքերի մեջ և կարծես մոռացել Գնունու գոյությունը: Հետո բարձրացրեց գլուխը, փակեց զզրոցները և վեր կացավ:

— Լեյտենանտ Սիմոնյանին խնդրեք, որպեսզի փորձագետի հետ ներքև իջնի: Գնում ենք բազա՝ կրկնակի տեղազննության:

— Իսկ ես՞…

— Դուք ազատվում եք այս գործի հետագա քննությունը վարելուց: Քննությունը կկատարենք մենք:

Իսկապես առեղծվածային հրդեհ…

Կապիտան Բաբայանը, լեյտենանտ Սիմոնյանը և միլիցիայի բաժնի փորձագետ Հովհաննիսյանն արդեն երեք ժամ էր, ինչ ուսումնասիրում էին հրդեհի վայրը: Այնքան շատ բան չէր այրվել, որքան կարծում էին սկզբում: Փորձագետը առանց դժվարության հաստատեց նաև Գնունու ենթադրությունը: Այո՛, հրդեհը ծագել էր պահեստի ապակեծածկ նախասրահում: Նավթի, բենզինի կամ այլ այրող նյութի օգտագործումը բացառված էր: Բայց փաստը փաստ է, որ հրդեհված է պահեստը: Ուրեմն ի՞նչն է եղել հրդեհի պատճառը, ինչի՞ց է հրդեհվել պահեստը:

Հետաքննիչները բազմաթիվ ենթադրություններ էին անում և անմիջապես էլ հերքում դրանք: Նրանք անասելի հոգնած էին, նրանց ձեռքերն ու դեմքերը մրոտվել էին, սևացել: Ու կարծես դիտմամբ՝ պայծառ ու տաք օր էր: Արևի շողերը սրահի ապակե ծածկից անարգել ընկնում էին նրանց վրա, այրում:

— Հուսահատվելու կարիք չկա, իհարկե,— ընկերների քրտնած, ընկճված ու մրոտ դեմքերին նայելով, ասաց փորձագետը,— անհրաժեշտ է լուրջ փորձաքննություն: Ես հիմա հրդեհի օջախից մի քանի տուփ մոխիր կվերցնեմ ու վաղը լաբորատորիայում անհրաժեշտ ստուգումներ կանեմ: Անհնար է, որ չպարզվի, թե ինչով են հրդեհել պահեստը:

Կապիտանը համաձայնեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իր հետ բերած պայուսակից հանելով փոքրիկ, դատարկ տուփեր, Հովհաննիսյանը մի լրագիր փռեց գետնին ու արմունկները հենելով լրագրին, սկսեց ետ տալ մոխրի հաստ շերտը՝ մի քանի տեղից մոխիր վերցնելու համար: Քիչ անց նրա մատները շոշափեցին ինչ – որ սառը, ողորկ իր: Հովհաննիսյանը բարձրացրեց ձեռքը: Նա բռնել էր լայն տրամագծի մի խոշորացույց:

— Սա՞ որտեղից է այստեղ ընկել, — մրմնջաց նա՝ խոշորացույցը կապիտանին պարզելով, ու նորից չոքեց լրագրին:

Բաբայանը վերցրեց խոշորացույցը, սկսեց ուշադրությամբ դիտեք նրա պողպատե օղը, որը գորշացել էր կրակից, հետո ձախ ձեռքով խոշորացույցը պահեց ծածկից թափանցող արևի շողի տակ, իսկ աջը ցածր՝ ապակու կիզակետին:

Մի քանի վայրկյան անց նա խոշորացույցի տակից փախցրեց այրվող ձեռքը ու կիսաբաց դռնից կանչեց.

— Ընկե՛ր Շատվորյան:

Պահեստապետը, որ ազատվելուց հետո անմիջապես բազա էր եկել և շրջում էր պահեստի մոտակայքում, մտածելով, թե ինչ – որ բանով կարող է օգտակար լինել հետաքննիչներին, արագորեն մոտեցավ:

— Այս ի՞նչ խոշորացույց է, որտե՞ղ էր դրված, — հարցրեց կապիտանը հուզմունքով:

— Ապարատ էր՝ ինչ – որ ուսումնասիրությունների համար, արկղի մեջ էր,— չհասկանալով, թե ինչու է կապիտանը հետաքրքրվում, բացատրեց Շատվորյանը: — Շաբաթ օրը ստացանք: Դիրեկտորն էլ եկավ տեսնելու, վաղուց էր սպասում, քանդեց արկղը, բամբակի միջից հանեց ապարատը, նայեց, հետո թե՝ «երկուշաբթի կուղարկես ինձ»:

— Ու ապարատը այդպես էլ բաց թողեցիք բամբակի վրա՞:

— Պետք է ծածկեի, հա՞, — մտահոգված հարցրեց պահեստապետը:

— Իսկ երբ կիրակի օրը դուրս եկաք պահեստից, արդեն արև էր, — առանց Շատվորյանին պատասխանելու, ասես ինքն իրեն խոսեց Բաբայանը:

— Այո, իհարկե, հետո Գերասիմ բիձայի հետ...

Կապիտանը ծիծաղեց բարձրաձայն.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ահա՛ իսկական հանցագործը,— դարձավ նա ներկաներին՝ գլխից բարձր պահելով չարաբաստիկ խոշորացույցը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

3. Մատուցողը

Նրանք զբաղեցրել էին «Հայաստան» ռեստորանի սեղաններից մեկը, որն անմիջապես պատուհանի մոտ էր և որտեղից հիանալիորեն երևում էր հրապարակը: Ձյուն էր գալիս: Փաթիլներն իջնում էին այնպես ծանրաբար ու հանդարտ, ինչպես թատերական ներկայացման մեջ է լինում, միայն թե այնտեղ անհամեմատ ավելի բնական է թվում այդ ամենը:

Սեդան երջանիկ էր: Վերջապես, այս մի քանի ամսվա ընթացքում առաջին անգամ, նրան հաջողվեց մի ամբողջ երեկո անցկացնել Աշոտի հետ, առանց տագնապով սպասելու հեռախոսի զանգին կամ կարմրաերիզ գազիկի ականջ ծակող շչակին: Դրա համար, սակայն, նա Աշոտին չէր պարտական, այլ կապիտան Բաբայանին, որը կնոջ ապաքինման կապակցությամբ որոշել էր մի փոքրիկ խնջույք կազմակերպել և հրավիրել էր Աշոտին ու լեյտենանտ Սիմոնյանին՝ իրենց կանանց հետ: Բայց հենց սկզբից, երբ տարեց մատուցողը վարժ շարժումներով ու ցուցադրական քաղաքավարությամբ սեղան բացեց ութ հոգու համար, Սեդան կռահեց, որ հյուրեր էլի են լինելու:

— Գնդապետը ուշանալու է,— կարծես Սեդայի չտված հարցին պատասխանելով, հայտարարեց Բաբայանը,— նա մի փոքր գործ ուներ: Այնպես որ, մենք կարող ենք սկսել: Ես ինձ հայտարարում եմ թամադա և մատռվակի պարտականությունները դնում եմ Աշոտի վրա: Գնունի, սկսիր...

Մի քանի րոպե անց, արդեն նոր ծանոթացող մարդկանց ակամա պաշտոնականությունն ու սառնությունը չքացել էր և կանայք աշխույժ զրույցի էին բռնվել այն խայտաբղետ ու բազմաթռիչք թեմաներով, որին աշխարհում միայն կանայք են ընդունակ: Սեդան, օրինակ, արդեն պարզել էր, որ իր քրոջ ամուսինը լեյտենանտ Սիմոնյանի կնոջ՝ Կարինեի հետ միևնույն շինարարական վարչությունում է աշխատում, որ տիկին Ծովինարը մինչև Մոսկվայից վերադառնալը չգիտեր, որ կասկածում էին, թե ինքը քաղցկեղ ունի, որ կոմպոտի համար սալորի մեկ կիլոգրամին հազար անգամ լավ է նույն քանակությամբ շաքար խառնել, քան թե շաքարավազ, և որ մի քանի օր առաջ Խարկովից եկող ինքնաթիռը մառախուղի պատճառով հարկադրական վայրէջք է կատարել մի ամայի ավտոխճուղում (ափսոս չի՞ գնացքը)...

Սեդային միայն մի բան դուր չէր գալիս, որ Կարինեն յուրաքանչյուր նախադասության վերջում անպայման ավելացնում էր՝ «պրեդստավլյա՞յեշ» և հազիվ էր զսպում ծիծաղը՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հիշելով լեյտենանտ Սիմոնյանի զգուշացումը, թե թող ոչ ոքի տարօրինակ չթվա, եթե Կարինեն հաճախ օգտագործի ռուսերեն իր իմացած միակ բառը:

— Իմ ամուսինը այսպես ամեն տեղ ինձ խայտառակում է, պրեդստավլյա՞յեշ, — ակամա, դարձյալ ավելացրել էր Կարինեն, դրանով ծիծաղի մի նոր ալիք առաջացնելով:

Տղամարդիկ լուռ խմում էին փառահեղ երեքաստղանին, աննշան խոսքեր փոխանակելով, որովհետև Բաբայանը հենց սկզբից կտրականապես արգելել էր աշխատանքի մասին որևէ բառ ասել: Նրանք պարզապես հանգստանում էին: Գնունին զարմացել էր, խմելու առիթ էլի էր եղել, բայց կապիտանը երբեք չէր մասնակցել: Ասենք, նրա մասին բոլորն էլ այն կարծիքին էին, թե խմիչք ընդհանրապես չի օգտագործում: Բայց այսօր... Այսօր Բաբայանը Սիմոնյանից ետ չէր մնում: Եվ զարմանալով հանդերձ, Աշոտը հասկանում էր նրան: Երկու տարվա մեջ առաջին անգամ նա կնոջ հետ սեղան էր նստել, երկու տարվա մեջ առաջին անգամ նա կնոջը նայում էր ոչ որպես հիվանդի:

Սիմոնյանի տրամադրությունն արդեն բավականաչափ բարձր էր:

— Ախր սուտ բան է,— ասում էր նա,— ես էս ռեստորաններից բան չեմ հասկանում: Ինչ ուտում ես՝ համ չունի: Դե, ասեք, բա սա իշխա՞ն է, ես հո Սևանից եմ: Իշխա՛ն...— քմծիծաղ տվեց նա,— իշխանի բնավորությունը ես գիտեմ: Իշխան ձուկը սիրում է, որ իրեն հենց իր ջրով եփեն:

— Իսկ դու երբևէ իշխան ձկանը հարցրե՞լ ես այդ մասին, իսկապե՞ս այդ կարծիքին է,— լսվեց մի հեգնական ձայն:

Բոլորն ակամա, ասես հրամանով, ոտքի կանգնեցին: Գնդապետ Սահակյանն էր՝ կնոջ հետ:

— 0՛, ինչպես տեսնում եմ, վատ չեք սկսել,— ծիծաղեց նա, և Գնունին մեկ անգամ ևս մտածեց, որ մարդիկ ծիծաղելիս գեղեցկանում են: — Սիմոնյա՞ն, ուրեմն, ասում ես, թե իշխանը տանել չի կարողանում, երբ իրեն ուրիշ ջրով են եփում: Հա՞: Ինչպիսի՛ նուրբ ճաշակ կամ, ավելի ճիշտ՝ ինչպիսի՛ կամակորություն, ձկներն էլ են մեզ իրենց կամքը թելադրում:

Բոլորը ծիծաղեցին և բոլորի հետ՝ իր սրամտությունից գոհ՝ գնդապետ Սահակյանը:

«Եվ մարդիկ ծիծաղելու ժամանակ անկասկած ավելի բարի են դառնում, քան թե կան», — շարունակում էր խորհել Գնունին, կոնյակից մեղմ, թեթևակի գլխապտույտ զգալով: — Ի՛նչ լավ բան է ծիծաղը, ինչպես է բացում մարդկանց, միանգամից մոտեցնում, հարազատ դարձնում: Անհնար է, որ այսպես սրտանց, այսպես ինքնաբուխ ծիծաղող մարդը վատը լինի: Եվ ինչ հետաքրքիր ու զարմանալի իմաստուն է բնությունը, որ միայն մարդուն է տվել այդ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մենաշնորհը... Ուրիշ ոչ մի կենդանի էակ ծիծաղել չգիտե: Ինչ ահավոր բան կլիներ, եթե օրինակ՝ ծիծաղեր ուղտը,— քմծիծաղ տվեց նա, պատկերացնելով այդ տեսաբանը:

Նրան սթափեցրեց կապիտանի ձայնը, որը տարեց մատուցողին ասում էր.

— Հիմա, ընկեր, մեզ համար սուրճ բերեք, իսկ ընկեր Սահակյանի և նրա տիկնոջ համար... Ասենք, ավելի լավ կլինի իրենց հարցնենք:

Մատուցողը թեթևակի խոնարհվեց և ուղղվեց դեպի գնդապետը, որը թեքվել էր կնոջ կողմը և կամացուկ ինչ – որ բան էր ասում նրան.

— Լսում եմ:

Գնդապետը շրջեց դեմքը: Մատուցողը սպասողական նրան էր նայում:

— Ուրեմն այսպես, խնդրում եմ մեկ բա...— Սահակյանը հանկարծակի լռեց, շփոթվեց նկատելիորեն, բայց միայն մի պահ: — Բարի երեկո, ընկեր Թելունց,— փոքր – ինչ կկոցած աչքերը մատուցողից չհեռացնելով, հանգիստ ձայնով ասաց նա:

Մատուցողը վայրկենապես գունատվեց:

— Ընկե՛ր մայոր...— համարյա հառաչեց նա,— քաղաքացի քննիչ... ա՛յ քեզ հանդիպում,— նրա ձեռքի բաժակները կամացուկ զրնգացին. նա ցած դրեց ճիգով, աշխատելով թաքցնել ձեռքերի դողը: — Ընկե՛ր մայոր... ասենք հիմա երևի...

— Այո, տասներեք տարի է անցել, — ժպտաց Սահակյանը,— հիմա արդեն գնդապետ...

— Իհարկե, իհարկե, գնդապետ... — մրմնջաց մատուցողը,— իսկ ես տեսնում եք էլի՛, մատուցող եմ...

— Դե, դա ոչինչ,— Սահակյանը թափ տվեց ձեռքը,— աշխատանքը՝ աշխատանք է, դա ոչինչ: Դուք ինձ ուրիշ բան ասեք, ինչպես են ձեր կինը, որդին: Սիրուն տղա էր. կարծում եմ, որ միասին եք, այնպես չէ՞:

— Իհարկե, իհարկե, միասին ենք, ընկեր մա... գնդապետ: Բանակում է տղաս: Դե, ես էլ աշխատում եմ, սպասում եմ, որ գա: Վա՛հ, այս ի՞նչ եմ անում,— հանկարծ ավելի շփոթվեց նա: — Կներեք, ես հիմա: — Նա նորից վերցրեց բաժակները և փութկոտ քայլերով համարյա վազեց՝ դիպչելով սեղաններին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բոլորը լուռ էին: Աշոտը հետաքրքրությամբ Սահակյանին էր նայում, հազիվ զսպելով իրեն, որ որևէ հարց չտա: Սիմոնյանն իր բաժակը կոնյակ էր լցնում՝ չնկատելով, որ խմիչքն արդեն թափվում է սփռոցին: Կապիտան Բաբայանը ծխում էր: Ինչպես և սպասելի էր, առաջինը հարց տվեց Կարինեն:

— Սարգիս Արտաշեսովիչ,— հուզմունքով ասաց նա,— ո՞վ էր այդ մարդը, պատմեք, խնդրում եմ, երևի շատ հետաքրքիր կլինի: Պրեդստավլյայու:

Սիմոնյանն անհանգիստ շարժվեց տեղում ու հանդիմանական մի հայացք նետեց կնոջը, բայց Կարինեն հետաքրքրությունից այրվելով ոչինչ չէր տեսնում և անմիջապես կրկնեց խնդրանքը:

Ու գնդապետը խոսեց.

— Այդ մա՞րդը… Դե ի՞նչ, եթե չեք ձանձրանա, կարող եմ պատմել: Անցած բան է: Նրա անունն է Արմենակ Թելունց:

Արմենակ Թելունց… Առաջին անգամ այս անունը ես լսեցի 1946 թվականին, երբ աշխատում էի Սպանդարյանի շրջանի միլիցիայի բաժնում որպես քննիչ: Բոլորդ էլ կհիշեք անշուշտ: Ծանր օրեր էին: Պատերազմը նոր էր ավարտվել, բայց տարբերությունն առանձնապես մեծ չէր: Հյուծված ու կիսաքաղց էր ժողովուրդը, կիսաքաղց կյանք էինք վարում նաև մենք՝ միլիցիայի աշխատողներս, բայց ստիպված էինք աշխատել բառացիորեն գիշեր ու ցերեկ, առանց հանգստի: Սոսկալի չափեր էր ընդունել հանցագործությունը: Այո, ժողովուրդը կիսաքաղց էր, սակայն, փոխարենը՝ այս կամ այն պատրվակով բանակից խուսափած մի խումբ մարդիկ իրենց հիանալի էին զգում: Օգտվելով այն բանից, որ պետության ուշադրությունը հիմնականում պատերազմին է ուղղված, նրանք խոշոր հափշտակումներ էին կատարում ու վարում զեխ կյանք…

Ահա հենց այդ օրերին էր, որ մեր միլիցիայի բաժինը սկսեց ահազանգեր ստանալ «Արարատ» տրեստում բուն դրած հանցագործների մի խմբի չարանենգ գործողությունների մասին: Տրեստի կառավարիչի թույլտվությամբ, մատակարարման բաժնի աշխատողներն ամիսներ շարունակ խոշոր չափերի հասնող հափշտակություններ էին կատարել՝ հանցագործ կապի մեջ մտնելով Մոսկվայի, Ռոստովի, Թբիլիսիի իրենց ներկայացուցիչների և զանազան առևտրական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Հարկավոր էր ինչ էլ լինի քանդել հանցագործության շղթան, առանձին – առանձին շոշափել բոլոր օղակները, հարկավոր էր գործել ծայրաստիճան զգուշորեն, որպեսզի հնարավոր լիներ մերկացնել բոլոր հանցագործներին, որպեսզի ոչ ոք չկարողանար խուսափել քննությունից: Գործի բարդությունը բխում էր նաև նրանից, որ հանցագործները տարբեր քաղաքներում էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ապրում ու գործում: Դա էր պատճառը, որ շրջանի դատախազն ինձ հանձնարարեց անմիջապես զբաղվել այդ գործով և միաժամանակ երեք քննիչ ուղարկեց միլբաժին՝ ինձ օգնելու համար: Եվ պետք է ասեմ, որ գործերը սկզբից շատ լավ էին գնում: Մեզ հաջողվեց առանց տրեստի աշխատողներին կասկածի որևէ առիթ տալու, Ռոստովում և Թբիլիսիում ձերբակալել նրանց հանցակիցներին, իհարկե, այդ քաղաքների միլիցիայի օրգանների օգնությամբ, և բոլորին տեղափոխել Երևան: Երրորդ գիշերը նրանցից մեկը՝ Ռոստովի սննդառի դիրեկտոր Վոլկովը, այլևս չդիմացավ.

— Թուղթ տվեք, — ասաց նա, ես խոստովանում եմ: Մի օր պետք է լիներ սա:

Ու կայծակնային արագությամբ մերկացրեց իր բոլոր համախոհներին, անընդհատ հիշեցնելով, որ ինքն առաջինը խոստովանեց, իր կամքով, անընդհատ խնդրելով հաշվի առնել դա: Նա մասնավորապես հայտնեց, որ ինքը Երևանում միայն «Արարատ» տրեստի մատակարարման բաժնի պետ Թելունցին է ճանաչում և բոլոր գործարքները, առանց միջնորդի, նրա հետ է կատարել՝ փոստով, հեռախոսով կամ անձնական հանդիպումների միջոցով:

Թելունցին կարելի էր կալանավորել: Ես այդպես էլ որոշեցի: «Վաղն առավոտյան կկանչեմ նրան, եթե չխոստովանի՝ առերեսում կկազմակերպեմ Վոլկովի հետ, տեղն ու տեղը մեղադրանք կառաջադրեմ ու կձերբակալեմ»:

Ավելորդ է ասել, որ ողջ գիշեր չքնեցի: Այսինքն՝ գիշեր էլ չէր մնացել: Տուն գնացի առավոտյան հինգին, իսկ ժամը իննին արդեն հիմնարկում էի:

Անմիջապես զանգահարեցի Թելունցին ու առաջին անգամ լսեցի նրա ձայնը:

— Լսում եմ:

Դա մի բարձր, կարգադրելու սովոր, ինքնաբավական ձայն էր:

— Միլիցիայի բաժնից է, ավագ լեյտենանտ Սահակյանն է անհանգստացնում ձեզ, — ասացի ես, — ձեր բաժնի աշխատողներից մեկը (ես տվի անուն ազգանունը) երեկոյան հարբած վիճակում խուլիգանություն է կատարել փողոցում և մեր կալանատանն է, խնդրում եմ, եթե ժամանակ ունեք, ժամը 10 – ին անցեք մեզ մոտ:

Ես չէի խաբում: Իսկապես, միանգամայն պատահաբար, նրանց աշխատակիցներից մեկին մեր հերթապահ տեսուչը բռնել էր՝ հայհոյանքներ տալու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Հարբածներին դաստիարակելն իմ պարտականությունների մեջ չի մտնում, իհարկե,— հեռախոսաթելի մյուս ծայրում հեգնեց Թելունցը,— բայց եթե հարկավոր է, կգամ, ես շատ եմ հարգում մեր միլիցիային:

Նոր էի լսափողը ցած դրել, երբ դուռը բացվեց և իմ առանձնասենյակը մտավ մանկամարդ, շիկահեր մի կին, առանց ձևականությունների հայտնեց, որ ինքը կալանավոր Վոլկովի նախկին կինն է և եկել է կարևոր տեղեկություններ հաղորդելու ամուսնու գործի վերաբերյալ:

Դա անսպասելի հաջողություն էր:

Նրա պատմածներն այնքան հետաքրքրեցին ինձ, որ ես ակամա մոռացա Թելունցին և նրան մտաբերեցի միայն այն ժամանակ, երբ դուռը կիսաբաց եղավ և արդեն ինձ ծանոթ ձայնը հարցրեց.

— Թույլ կտա՞ք, պետ:

Արմենակ Թելունցն էր: Նկատեցի, որ Վոլկովան ետ շրջվեց ու կարճատես աչքերը կկոցելով նայեց նոր այցելուին: Ես մոտեցա Թելունցին, խնդրեցի մի քանի րոպե պատշգամբում սպասել և շարունակեցի լսել Վոլկսվային, որի պատմածներից հետզհետե համոզվում էի, որ Ռոստովի սննդառի դիրեկտորն «ամոթխածորեն» հարկ չի համարել իր մեղայականի մեջ շոշափել մի քանի շատ կարևոր կետեր իր կենսագրությունից և, մասնավորապես, լռության է մատնել իր ոչ պակաս արատավոր գործունեությունը Ռոստովի ճաշարանների տրեստում…

Գնդապետը լռեց ու սպասեց, որ մատուցողը արագորեն դասավորի նոր սկահակները:

— Բոլորդ էլ տեսած կլինեք մեր միլիցիայի բաժնի շենքը: Այո՛, այո՛, Մայիսյան փողոցի վրա: Այնտեղ հիմա Սպանդարյանի շրջանի միլբաժանմունքն է տեղավորված: Ահա, ուրեմն, իմ սենյակի պատուհանը բացվում էր մեծ պատշգամբի վրա, և Վոլկովայի հետ զրուցելիս ես ժամանակ առ ժամանակ լուսամատից հետևում էի Արմենակ Թելունցին: Նա կարծես ինչ – որ բանից մտահոգված էր և հուզված, մի երկու անգամ էլ պարզապես մոտեցավ պատուհանին, ներս նայեց: Սակայն, ի մեծ ամոթ ինձ, ես դրան կարևորություն չտվի և վերադրեցի նրա անբարտավանությանը: «Զարմանում է, որ սպասեցնել եմ տալիս: Սովոր չէ: Ոչի՛նչ, թող սպասի»,— մի տեսակ տղայական չարախնդությամբ մտածում էի ես:

Եվ հանկարծ մի քանի րոպե անց, իմ առջև նստած շիկահեր կինը հարցրեց.

— Ընկեր քննիչ, այն մարդը, որ քիչ առաջ ներս մտավ, «Արարատ» տրեստում չի՞ աշխատում:

— Այո,— ասացի ես,— դուք ճանաչո՞ւմ եք նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Եթե նա Թելունցն է, լավ եմ ճանաչում, տարիներ առաջ մի քանի անգամ եղել է մեր տանը: Ամուսնուս ընկերն էր…

— Ի՞նչ,— ինձ կորցրած վեր ցատկեցի աթոռից,— ուրեմն նա ձեզ ճանաչո՞ւմ է,— և պատասխանի չսպասելով, նետվեցի դեպի պատուհանը:

Պատշգամբը դատարկ էր:

Վոլկովային խնդրելով սպասել մի քիչ, ես դուրս նետվեցի սենյակից և սլացա փայտե սանդուղքով: Արմենակ Թելունցն անհետացել էր:

Իսկ էլի տասը րոպե հետո, քրեական հետախուզության աշխատողների հետ բարձրանում էի Ալավերդյան փողոցի № 62 շենքի երկրորդ մուտքի աստիճաններով: Դուռը բացեց ջահել, գեղեցկադեմ մի կին: Նա մի ձեռքով ամուր գրկել էր նորածին երեխային, իսկ մյուսով անընդհատ սրբում էր վար հոսող արցունքները:

— Գնաց,— փղձկաց կինը:

— Ո՞ւր:

— Ես ի՞նչ գիտեմ: Ասաց՝ էլ ինձ չես տեսնի: Մի փոքրիկ ճամպրուկ ուներ, վերցրեց ու գնաց: Բայց ինչո՜ւ, ինչո՜ւ… Ո՞ւր կարող էր գնալ:

Ո՜ւր կարող էր գնալ: Ես ամեն ինչ կտայի՝ այդ իմանալու համար:

Տան խուզարկությունը ոչինչ չտվեց: Չեմ ուզում երկարացնել, տղաները լավ գիտեն, թե ինչ պետք է անել բոլոր այն դեպքերում, երբ հանցագործը ճողոպրում է: Կասեմ միայն, որ բնակարանը՝ Ալավերդյան փողոցի № 62 շենքում և Երևանում գտնվող մի շարք այլ բնակարաններ, ուր կարող էր հայտնվել Թելունցը, օրեր շարունակ խստագույն հսկողության տակ էին: Ու թեև արագորեն հայտնաբերեցինք Թելունցի բոլոր բարեկամներին ու մոտ ընկերներին Միություն ամենատարբեր քաղաքներում, ու թեև հնարավոր բոլոր հանգույցներով մի ամբողջ ամիս ճամփորդում էր հատուկ այդ նպատակով գործուղված հանրապետության դատախադության կարևորագույն գործերի քննիչը, բայց այդպես էլ Արմենակ Թելունցին չկարողացանք, հայտնաբերել և նույն տարվա վերջին նրա վերաբերյալ քրեական գործը ստիպված եղանք կասեցնել…

Հայտարարվեց համամիութենական հետախուզում:

Եվ այդ բոլորը միայն այն պատճառով, որ ես անբարեխղճություն էի հանդես բերել, որ միայն մի քանի րոպե կորցրել էի զգոնությունս, որ փաստորեն անձնական մի հիմարավուն վրեժ էի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ուզեցել լուծել Թելունցից, նրան ստիպելով սպասել պատշգամբում: Դա մեծ դաս էր ինձ համար, և ես երբեք չմոռացա: Արդարացի լինելու համար պետք է ասեմ, որ այդ դեպքի պատճառով ինձ հանգիստ խղճով կարելի էր հեռացնել աշխատանքից, եթե ոչ ավելի: Բայց իմ ղեկավարները ներողամիտ գտնվեցին, գուցե և հաշվի առան իմ տառապանքները, իմ անկեղծ զղջումը և բավարարվեցին խիստ նկատողության հայտարարելով: Այո՛, այն ժամանակ լավ դաս տվեց ինձ մեր այս հարգելի մատուցողը:

Գնդապետը լռեց միայն մի վայրկյան՝ սառած սուրճը խմելու համար, բայց, անմիջապես ժպտալով, հեռացրեց բաժակը շրթունքներից, լսելով սեղանակիցների միահամուռ հարցը.

— Հետո՞:

— Հետո՞... հետո ինձ ուղարկեցին Մոսկվա, Ներքին գործերի մինիստրության բարձրագույն դասընթացներում սովորելու, որտեղից վերադարձա չորս տարի անց և նշանակվեցի միլիցիայի քաղաքային վարչության քննչական բաժնի պետի տեղակալ…

Ռեստորանի նվագախումբը մեծ եռանդով հնչեցնում էր «Ջամայկա» նորահայտ երգը, որը երևանցիներն առաջին անգամ լսել էին Ռոբերտինոյի կատարմամբ: Ռիթմը վարակել էր մարդկանց, յուրաքանչյուր փոքրիկ տարածության մեջ ինքնամոռաց շարժվում էին պարող զույգերը: Միայն մի սեղան չգիտեր, որ նվագախումբը կատարում է «Ջամայկան»: Եվ եթե մի քանի վայրկյան անց սեղանի շուրջը նստած մարդիկ զգացին այդ, ապա մեղավորը ջահել մի տղա էր, որ թեթևակի օրորվելով բարձրացավ անկյունի սեղանի ետևից ու մոտեցավ Սեդային.

— Ընկերուհի, պարենք:

Գնդապետը լռեց, և բոլորը մի այնպիսի սրտնեղությամբ ու զարմանքով շրջվեցին դեպի պարի ջահել երկրպագուն, որ վերջինս անակնկալի եկավ, շփոթվեց ու մի քանի անգամ ներողություն խնդրելով, ետ – ետ գնաց:

Հաջո՛րդ վայրկյանին բոլորը ծիծաղում էին, նոր միայն զգալով, թե ինչ կատարվեց, նոր միայն մտածելով, որ մոռացել էին ամեն ինչ, և՛ այն, թե որտեղ են գտնվում, և՛ այն, որ շատ հուզիչ, շատ վարակիչ երգ է «Ջամայկան»:

— Իսկապես, եկեք պարենք,— հանկարծ առաջարկեց գնդապետը,— վերջին անգամ կարծեմ մեր հարսանիքին եմ պարել, չէ՞, Նիկիտիչնա:

— Գնդապետի կինը ծիծաղեց թույլ – թույլ: Նա կարծես դեմ չէր: Բայց մյուսներն աղմուկով բողոքեցին, և Սահակյանը տեղի տվեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Անշուշտ, չեք զարմանա, եթե ասեմ, որ Արմենակ Թելունցին չէի մոռացել: Այդպիսի մի դեպք դժվար է մոռանալը:

Սակայն, չգիտեմ ինչու, ինձ թվում էր, թե նրան վաղուց ձերբակալած պետք է լինեին: Եվ ի՞նչ, իմ նոր աշխատանքի տասը, թե տասնմեկերորդ օրը, երբ սովորականի պես կարդում էի նոր ստացված նամակներն ու գործերը, ուշադրությունս գրավեց փոքրիկ մի գրություն, որն ուղարկված էր իմ նախկին աշխատանքի վայրից: Սպանդարյանի շրջանի միլիցիայի բաժինը տեղեկացնում էր ինձ, որ Արմենակ Թելունցը մինչև օրս գտնվում է ազատության մեջ և որ այդ կապակցությամբ մի շարք գրավոր հարցումներ կան Միության տարբեր քաղաքներից: Ես պահանջեցի այդ գրությունները, որոնցում, սակայն, մխիթարական ոչինչ չկար: Ռոստովի, Թբիլիսիի, Մոսկվայի և այլ քաղաքների միլիցիայի վարչությունները հայտնում էին, որ իմ հետախուզական պահանջագրի համաձայն արդեն մի քանի տարի է, ինչ նրանք ապարդյուն որոնում են Արմենակ Թելունցին և խնդրում էին հաղորդել, թե անհրաժե՞շտ է այդ աշխատանքը շարունակել:

Եվ ես հանկարծ որոշեցի անձամբ զբաղվել Թելունցին որոնելու հարցով, անմիջապես պահանջեցի այդ գործի հետ առնչվող բոլոր փաստաթղթերը, դեռևս 1946 թվականին իմ հավաքած նյութերը, պարզ ասած՝ ինչ – որ կար, ու հետագա որոնումների ծրագիր կազմեցի:

Ես պետք է գտնեի Արմենակ Թելունցին:

Առաջին հերթին, իհարկե, անհրաժեշտ էր պարզել, թե որտե՞ղ է Թելունցի ընտանիքը, արդյոք նույն շենքո՞ւմ է բնակվում:

— Թելո՞ւնց: Այստեղ այդպիսի մարդ չկա,— ասաց ակնոցավոր մի ծերունի, երբ ես սեղմեցի ինձ ծանոթ բնակարանի զանգի կոճակը: — Չէ, տղա ջան, չորս տարի է արդեն, ինչ այստեղ եմ ապրում, շենքի ապրողներին մեկ – մեկ գիտեմ: Մենք Թելունց չունենք:

— Բայց այստեղ բնակվում էր նրա կինը՝ Նվարդը:

— Ախ, Նվա՞րդը, դե այդպես ասեք, նա Թելունց չէ, այլ Սիրավյան: Նվարդը, ո՞նց չգիտեմ, ես նրա՛ բնակարանն ստացա:

— Իսկ ի՞նքը…

— Ինքը գնաց:

— Ո՞ւր…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ո՞ւր… ինչ իմանաս, տղա ջան, երևի մի ավելի հարմար տուն: Ի՞նչ իմանաս, բոլորն էլ լավ տուն են ուզում: Ես էլ մինչև հիմա Զարաբիխանի…

— Ուրեմն Երևանո՞ւմ է:

— Չգիտեմ, տղա ջան, ի՞նչ իմանաս՝ Երևանում է, թե…

Շարունակելը միտք չուներ:

Երևանո՞ւմ է նա, թե մեկնել է քաղաքից, հասցեների սեղանը կիմանա, մտածեցի ես: Եվ իսկապես, հասցեների սեղանից ինձ հայտնեցին, որ Նվարդ Սիրավյանը 1948 թվականի մայիսի 12 – ին դուրս է գրվել տնային գրքույկից և մեկնել Երևանից, բայց թե ո՞ւր, ոչինչ հայտնի չէ:

Թեև բարկացած էի սաստիկ, բայց, ազնիվ խոսք, ծիծաղս գալիս էր: Ախր մի պատկերացրեք. մինչև հիմա Թելունցին էի որոնում, հիմա էլ ստիպված պետք է կնոջը գտնեմ: Խոստովանեք, որ դրությունս նախանձելի չէր: Ինչևիցե, նախկինում իմ հավաքած տեղեկություններից գիտեի, որ Նվարդի ավագ քույրը ապրում է Կիրովականում և որ նրա ամուսինը քիմիական կոմբինատում ցեխի պետ է: Նույն գիշերն իսկ գնացք նստելով, մեկնեցի Կիրովական:

Ես, ճիշտն ասած, նպատակահարմար չգտա անձամբ լինելու Նվարդի քրոջ տանը, բայց միլիցիայի բաժնի աշխատողների օգնությամբ իմանալով, որ Նվարդն այնտեղ չէ, այնուամենայնիվ որոշեցի խոսել նրա քրոջ ամուսնու հետ: Չգիտեմ ինչու, բայց համոզված էի, որ այդ անվանի կարբիդագործը կասի այն ամենը, ինչ գիտի: Եվ չսխալվեցի:

— Չէ, Նվարդը մեր տանը չի եղել,— վճռականորեն ասաց ցեխի պետը,— մի երեք տարի առաջ, հենց դրա համար մի լավ կռվեցի կնոջս հետ: Զարմանալի մարդիկ են: Դե, ես արդեն գիտեի, որ նրա մարդը սրիկայի մեկն է դուրս եկել, թողել է կնոջն ու մատղաշ երեխային ու փախել, դրա համար էլ մի օր կնոջս ասացի. բա դու խիղճ չունե՞ս, էստեղ առոք – փառոք ապրում ես, իսկ խեղճ քույրդ էնտեղ երեխայի հետ երևի չի իմանում, թե գլուխը որ պատովը տա: Ինչի՞ չես գրում, որ գոնե ամռանը գան այստեղ անցկացնեն: Կինս թե՝ կանչել եմ, որ չեկավ, ի՞նչ անեմ: Նորից կանչիր, ջղայնացա ես, հենց հիմա զանգ տուր, ես ինքս կխոսեմ հետը: Չէ, ասաց նա, Նվարդը հիմա Երևանում չի ապրում: Ո՞նց թե, զարմացա ես, բա որտե՞ղ է: Ի՞նչ գիտեմ, ասաց նա, մինչև հիմա մի նամակ գոնե չի գրել, չեմ էլ իմանում տե՛ղ է հասել, ինչ է եղել: Իսկ որտե՞ղ պետք է հասներ: Կարագանդա, ասում է, էնտեղ մենք մի հեռու բարեկամ ունենք, լավ պաշտոնի է: Ինքն է փող ուղարկել Նվարդին, թե երեխային վերցրու, արի էստեղ, մի լավ գործի կդնեմ, կապրեք: Դե, դու նամակ գրի, ասում եմ կնոջս: Հասցե – բան չգիտեմ, ասում է, ես նրան իսկի չեմ էլ տեսել, փոքր երեխա եմ եղել, երբ նրան գյուղից աքսորել են որպես կուլակի տղայի… Արսեն էին ասում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդքանն էլ բավական էր ինձ: Այն, ինչ չգիտեր կարբիդագործը, այն, ինչ հավանաբար իսկապես չգիտեր նրա կինը, վաղուց հայտնի էր ինձ՝ Արմենակ Թելունցի տան խուզարկության ժամանակ գտնված նախապատերազմյան մի հին նամակից, որի ծրարի տակ գրված էր՝ «Կարագանդայի մարզ, քաղաք Սևրինսկ, Արսեն Ամիրբեկով»:

Այո, ես գիտեի Արսեն Ամիրբեկովի մասին, գիտեի, որ նա երեսնական թվականներին արտաքսվելով գյուղից, այլևս երբեք չի վերադարձել Հայաստան, ամուսնացել է ռուս մի կնոջ հետ, երեխաների տեր դարձել և ընդմիշտ հաստատվել Սևրինսկ քաղաքում: Գիտեի, որ նա Սևրինսկի կենցաղ — սպասարկման կոմբինատի դիրեկտորն է եղել առնվազն մինչև 1939 թվականը, այսինքն մինչև այն օրը, երբ գրել է իր նամակը՝ ուղղված Նվարդ Սիրավյանին:

Դեռ այն ժամանակ, երբ ուսումնասիրում էի հավաքված նյութերը, ես բնականաբար հետաքրքրվեցի, թե ինչ ազգակցական կապ կա մի կողմից Թելունցի ու Նվարդի և մյուս կողմից՝ Արսեն Ամիրբեկովի միջև: Եվ թե հնարավո՞ր է, որ Արմենակ Թերունցը նրա մոտ պատսպարվի փախուստի մեջ գտնվելու ժամանակ: Ու պարզեցի, որ փաստորեն ազգակցական ոչ մի կապ չունեն: Բայց կար մի ուրիշ հանգամանք: Կասկածներ կային, որ իբր Արսեն Ամիրբեկովի և Նվարդի մոր հանցավոր սիրո արդյունքն է Նվարդը:

Այդ կասկածը, սակայն, իմ աչքում արդեն հիմքի էր վերածվում: Եվ իսկապես, չէ՞ որ քիչ չեն եղել անցյալում նման դեպքերը, զարմանալու առանձնապես հարկ չկար: Բայց մի հանգամանք, այնուամենայնիվ, զարմացնում էր ինձ, խորհել տալիս: Երկար տարիների ընթացքում և ոչ մի անգամ Արսեն Ամիրբեկովը չի մտածել Նվարդին նյութական որևէ օգնություն ցույց տալ (ես դա հաստատ գիտեի), ուրեմն, ինչո՞ւ հանկարծ այդքան քնքշասիրտ դարձավ: Սակայն մյուս կողմից էլ նրա արարքը շատ բնական ու մարդկային էր թվում: Է, ի՞նչ կա, գուցե այն ժամանակ չէր օգնում, որովհետև հնարավորություն չուներ, կամ գիտեր, որ Նվարդը լավ է ապրում: Իսկ հետո, թերևս, երբ լսում է Նվարդին հասած դժբախտության մասին, որոշում է օգնել նրան: Ի՞նչ կասկածելի բան կա: Եվ որքան ծանր լիներ ինձ համար, խոստովանում էի, որ այդտեղ արտակարգ ոչինչ չկար:

Ժամանակ չկորցնելու համար հենց Կիրովականից հեռագիր ուղարկեցի Կարագանդայի մարզային միլիցիայի վարչության պետին՝ խնդրելով ստուգել ու հայտնել մեզ, թե Սևրինսկ քաղաքում շարունակո՞ւմ է ապրել Արսեն Ամիրրեկովը և, ի պատիվ Կարագանդայի միլիցիայի աշխատողների, պետք է ասեմ, որ հաջորդ օրը Երևանում արդեն կարդում էի պատասխան հեռագիրը:

Այո, Արսեն Ամիրբեկովն ապրում է Սևրինսկում և քաղաքային ունիվերմագի դիրեկտորն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կարելի էր, իհարկե, անմիջապես լրացուցիչ հարցում կատարել՝ իմանալու համար, թե Նվարդն իսկապե՞ս Ամիրբեկովի տանն է ապրում, բայց մի քանի նկատառումներով հրաժարվեցի այդ մտքից և իմ ղեկավարների համաձայնությունն ստանալով, ճանապարհվեցի դեպի Կարագանդայի մարզի Սևրինսկ քաղաքը: Այն ժամանակ հաղորդակցության միջոցներն այսքան զարգացած չէին, այնպես որ չզարմանաք, եթե ասեմ, որ Սևրինսկ հասա միայն տասնութերորդ օրը:

Եվ... ի՜նչ հիասթափություն: Նվարդն այնտեղ չէր:

Մոտ չորս ժամ զրուցում էի Արսեն Ամիրբեկովի հետ՝ սկզբում նրա հոյակապ ու շքեղ առանձնատանը, իսկ հետո ունիվերմագի նրա առանձնասենյակում: Իմ առջև նստած էր վաթսունին մոտ, գեր, ճաղատ գլխով մի մարդ ու թավ հոնքերի տակից ակնհայտ անբավականությամբ ու ձանձրույթով ինձ էր նայում, կարծես ասելիս լիներ՝ «Այ մարդ, էլ բան ու գործ չունես…»:

Խոսում էր երկար մտածելով, դանդաղ, հատ – հատ, պատճառաբանելով, թե հայերենը մոռացել է, բայց երբ ես նրան առաջարկեցին ռուսերեն խոսել, չլսելու տվեց ու շարունակեց խոսել հայերեն:

Ու պատմեց, որ իսկապես, չորս տարի առաջ, լսելով, որ իրենց բարեկամուհի Նվարդը դժվարին վիճակում է, ինքը նրան դրամ է ուղարկել և առաջարկել երեխայի հետ գալ Սևրինսկ: «Բա էլ ո՞ր օրվա բարեկամներ ենք, որ նեղության մեջ չօգնենք իրար»: Նվարդը եկել է, գրանցվել իրենց տանը, ապրել իր աղջկա նման: Ու ինքը դեմ չէր, թող ապրեր՝ ինչքան սիրտը կուզեր, բայց դե ջահել, սիրուն կին էր...

Օրերից մի օր Ամիրբեկովը նկատում է, որ Նվարդն անտարբեր չէ Գիզոյի նկատմամբ: Ով է Գիզո՞ն: Վրացի մի լավ տղա, Արսեն Ամիրբեկովի ունիվերմագի ապրանքագետը: Գիզո Մայսուրաձե: Նա հաճախ էր լինում իրենց տանը: Դե, կովկասցիք Ռուսաստանում ոնց որ մի ազգ լինեն: Եվ ահա, նկատելով այդ, Ամիրբեկովը ինքը խորհուրդ է տալիս Նվարդին՝ ամուսնանալ Գիզոյի հետ: Ինչո՞ւ խորտակես ջահել կյանքդ, ամուսնացիր, ընտանիք կազմիր, երեխայիդ էլ հայր է պետք,— ասում է նա,— էլ ով գիտե, Արմենակը ե՞րբ լույս աշխարհ գա:

Նվարդը համաձայնում է, ասում, որ այդքանից հետո ոչ մի միտք չունի Արմենակին սպասելը, որովհետև նա այնքան ստոր ու խարդախ մարդ էր, որ հափշտակել է պետության գումարներն ու անհետացել՝ առանց մազաչափ իսկ մտածելու իր ու երեխայի ճակատագրի մասին: Ուրեմն էլ ինչո՞ւ ինքը պետք է սպասի նրան և, վերջապես, ինչքա՞ն կարող է սպասել: Ինքը համոզված է, որ նրան բռնել են ու մի տասնհինգ տարվա բանտարկության են դատապարտել: Էլ ո՞ւմ է պետք նման կյանքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ամիրբեկովի խորհրդով Նվարդը դիմում է ժողդատարան և իր ամուսնուց՝ Արմենակ Թելունցից ամուսնալուծություն է պահանջում: Գերագույն դատարանը հաշվի է առնում ստեղծված վիճակը, հաստատում է ապահարզանը, և մի քանի ամիս առաջ Նվարդը ամուսնանում է Գիզո Մայսուրաձեի հետ:

— Լավ հարսանիք արեցինք, իսկական զակավկասկի,— ասաց Ամիրբեկովը,— հետո նրանք զագս ընկան ու գնացին Սևրինսկից:

— Ո՞ւր,— հարցրեցի ես, թեև, չգիտես ինչու, հաստատ համոզված էի, որ Ամիրբեկովը անորոշ պատասխան է տալու:

— Ո՞ւր,— հարցիս հարցով պատասխանեց նա, ապա սովորականի պես դանդաղ, հատ – հատ ասաց,— էլ ո՞ւր, Գիզոյին առաջ էին քաշել, նշանակել մարզի «Հագուստառ» — ի գրասենյակի գլխավոր ապրանքագետ: Դե, նա էլ կնոջը տարավ հետը, ուրիշ ի՞նչ պետք է աներ:

Չեմ թաքցնի, ինձ համար այս գործը կորցրեց իր ողջ հետաքրքրությունն ու հրապույրը: Այսքան ժամանակ վատնել, այսքան չարչարվել, տանջվել հոգեպես և ի վերջո համոզվել, որ հանցագործին մոտենալու փոխարեն հազարավոր կիլոմետրերով հեռացել ես նրանից, այնքան էլ հեշտ չէ: Ի՞նչ պատասխան եմ տալու Երևանում: Ախր ես ձեզ սկզբից չասացի: Թեև թույլ, բայց ներքին շատ փոքր մի հույս ունեի, որ Արմենակ Թելունցին հանդիպելու եմ այստեղ՝ Սևրինսկում: Եթե հարցնեին՝ ինչո՞ւ, այնքան էլ համոզիչ չէին թվա իմ փաստարկները, բայց ես ինչ – որ ներքին ձայնով, ինչ – որ ենթագիտակցությամբ օրորում էի այդ հույսը:

Եվ ահա… վերջ: Ոչինչ չկա: Նվարդը ամուսնացել է կրկին: Ուրեմն նա ոչ մի նոր բան չգիտե Թելունցի մասին, որովհետև համոզված է, թե նրան արդեն ձերբակալել են: Ուրեմն ես ամեն ինչ նորից պետք է սկսեմ: Վերջ:

— Ձեզ մոտ ապրելու ժամանակ Նվարդը որևէ մեկին նամակ գրե՞լ է կամ ստացե՞լ է որևէ նամակ,— մի տեսակ տխուր հուսահատությամբ հարցրեցի ես:

— Ո՛չ,— անմիջապես պատասխանեց Ամիրբեկովը,— ոչ մի նամակ,— նրա ձայնը շատ անկեղծ էր հնչում:

— Բայց ինչո՞ւ, չէ որ նա քույրեր, եղբայր ունի և այլ բարեկամներ, ինչո՞ւ չի ուզում գրել նրանց, ինչո՞ւ է թաքցնում իր նոր ամուսնությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Էդ արդեն ինքը կիմանա, իրեն հարցրեք,— ասաց ունիվերմագի դիրեկտորը և հանկարծ կանգ առավ: Հանկարծ նրա թավ հոնքերի տակ թաքնված փոքրիկ, սև աչքերում ես ինչ – որ չարաճճի բան տեսա, ինչ – որ լուսավոր կայծեր, որ հայտնվում են այն մարդկանց աչքերի մեջ, որոնք ծիծաղում են մտքում:

Հետո այդ լույսերը մի ակնթարթում հանգան, և Արսեն Ամիրբեկովն ասաց մի տեսակ փոխված ձայնով.

— Այսինքն՝ ինչ իմանաս, մարդ է, էլի, գուցե թե նեղացել է իր բարեկամներից, որ իրեն չեն օգնել, գուցե թե ամուսինը՝ Գիզոն, չի թողնում, որ գրի: Իր ասածի ու շատ խանդոտ մարդ է:

— Ուրեմն շատ է խանդոտ, հա՞,— հենց այնպես, աննպատակ հարցրեցի ես:

— Շա՛տ է խանդոտ,— պատասխանեց Ամիրբեկովը:

Ես ոչինչ չունեի ասելու և ոչինչ՝ հարցնելու: Ես սաստիկ վիրավորված էի ու բարկացած՝ իմ մտքերի վրա, իմ փոքրիկ հույսի վրա, իմ անճարակության և Արմենակ Թելունցի ճարպկության վրա, ամեն – ամեն ինչի վրա: Ու այլևս ոչ մի ցանկություն չունեի տեսնելու Նվարդ Սիրավյանին, այսինքն ավելի ճիշտ՝ Նվարդ Մայսուրաձեին: Ինչի՞ մասին պետք է հարցնեի նրան: Ամուսնացել է, նոր ընտանիք կազմել... Միտք ունի՞ կրկին հիշեցնել նրան տխուր անցյալը, պղտորել նրա թերևս արդեն խաղաղված հոգին, մի՞թե դրա համար էի ես Երևանից հասել Կարագանդա: Չէ, այլևս աննպատակ է նրան տեսնելը, վճռեցի ես: Դե ինչ, Արմենակ Թելունց, այս անգամ էլ ինձ չհաջողվեց հանդիպել քեզ, չհաջողվեց գտնել քո ճանապարհը: Բայց համոզված եղիր, որ մենք կհանդիպենք, կհանդիպենք, որքան էլ դա անսպասելի լինի քեզ համար, որքան էլ դա հաճելի չլինի քեզ, կհանդիպենք եթե ոչ վեց, ապա տասը տարի անց, բայց, միևնույն է, չենք կարող չհանդիպել:

— Ե՞րբ է մեկնում Մոսկվայի գնացքը:

Ամիրբեկովը նայեց ժամացույցին:

— Ուղիղ երկու ժամ հետո,— նա նկատելիորեն աշխուժացավ,— եթե ուզում եք, ես հենց հիմա ձեզ համար տոմս կպատվիրեմ: Մերոնք են:

Նա ժպտաց առաջին անգամ, կկոցեց ձախ աչքը, և առանց իմ պատասխանին սպասելու, վերցրեց հեռախոսափողը:

— Եվ այսպես, տոմսը պատրաստ է,— կրկին ժպտաց նա,— ուրեմն գնում եք Հայաստան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երկաթուղային կայարանը բավականին հեռու էր, և ավտոմեքենան սլանում էր մեծ արագությամբ: Ես նայում էի Ամիրբեկովին ու զարմանում, թե տարեց այդ մարդը որքան հրաշալի է վարում: Հին կոճղ է: Այսպիսիները երկար են ապրում...

— Ինչո՞ւ չեք գալիս Հայաստան...

— Հայաստա՞ն,— թվաց, թե Ամիրբեկովը հառաչեց,— Հայաստա՛ն...— մթնեց, երկար ժամանակ լուռ էր: Հետո ասաց,— ինչո՞ւ գնամ, ոչ ոք չունեմ այնտեղ, սպասող չունեմ: Այստեղ էլ լավ է, փառք աստծո: Որտեղ հաց, էնտեղ կաց:

Ահա՛, այսպիսիները երկար են ապրում:

Դեռ քառասուն րոպե կար մինչև գնացքի գալը: Առաջարկեց մտնել ռեստորան: Չմերժեցի, չկարողացա մերժել: Լուռ ճաշում էինք: Մենք նման էինք այն մարդկանց, որ այլ տեղ չլինելու պատճառով, ակամա միևնույն սեղանի շուրջն են նստում: Եվ առաջին անգամ ես այդտեղ հստակ զգացի, որ հաճախ «ողջ լինես» արտահայտությունը ոչ մի չափով դիմացինիդ չի վերաբերում: Հենց այնպես, խոսք է, էլի:

— Ողջ լինեք:

— Ողջ լինեք:

Մարմինս մի տեսակ թմրել էր, գլխիս մեջ տաղտկալիորեն բզզում էր ինչ – որ բան, միօրինակ, նյարդայնացնող: Կարծես հեռու ինչ – որ տեղ էի ես, սարսափելի մենակ: Կարծես զարհուրելի ցուրտ էր շուրջս, և իմ այդ թմբիրը հենց ցրտից էր գալիս: Հետո հանկարծ զգացի, որ Ամիրբեկովը խոսում է, բայց ես չեմ լսում նրան, աշխատեցի հասկանալ նրա ասածը: Բզզոցը կտրվեց:

— Թշնամիս ձեր ձեռքը չընկնի,— ծիծաղում էր Ամիրբեկովը,— էլ պրծում չկա: Ո՞նց էլ կարողացել եք Արմենակին բռնել, է՛, ասում էին մեծ գործ է արել, չէ՞: Է, ախպե՛ր, Սովետից գողանալը հեշտ չի: Պետք է ազնիվ ապրես: Լավ եղավ, որ Նվարդս պրծավ էդ տղից: Մարդ պետք է մարդ լինի: Այ, օրինակ, Գիզոն, Նվարդի նոր ամուսինը, գիտե՞ք ինչ տղա է, երկու համալսարան է ավարտել, նստած, պատվով մարդ է, ոնց որ հայ լինի,— Ամիրբեկովը նորից ծիծաղեց,— ասենք՝ հայ, վրացի, ի՞նչ տարբերություն:

Սկզբում թվաց, թե ունիվերմագի դիրեկտորը պարզապես ծաղրում է ինձ: Ի՞նչ է դուրս տալիս: Եվ ինչո՞ւ է ծիծաղում: Ախ, հա, հարբած է, կարծում է, թե Թելունցը իսկապես բանտարկված է: Ես էլ եմ կարծես հարբած, գլխիս մեջ անտանելի բզզում է: Թյո՛ւ, ինչո՞ւ այսքան խմեցի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ասենք, հերն էլ անիծած, հիմա գնալու եմ ու էլ կյանքում երևի երբեք չտեսնեմ սրան: Թող ծիծաղի: Ո՞վ գիտե, գուցե կարոտել է հայերեն խոսելուն, խոսում է, մարդ է, էլի:

— Գնանք:

— Ո՞ւր:

Ամիրբեկովն էլի ծիծաղում է՝ անձայն, զայրացնող: Բայց ես չեմ զայրանում, ինձ համար ամեն ինչ միևնույն է: Հերն էլ անիծած:

— Թղթապանակը վերցրեք:

Հա, իհարկե, քիչ էր մնում մոռանայի, ամբողջ գործերս մեջն են: Չէ, վատ մարդ չի այս Արսեն Ամիրբեկովը: Մարդ է, էլի:

Ես գնում եմ նրա ետևից: Շոգեքարշը հեռվում փնչում է անհանգիստ, սուլում է: Բարձրանում եմ վագոն, մոտենում եմ պատուհանին, նայում ցած: Ամիրբեկովը կանգնած է ոտքերը լայն, հաստատուն տարածած, նայում է ինձ:

— Բարևեք Հայաստանին:

Ես հուզվում եմ, գլխով եմ անում: Հետո նա ինչ – որ բան է ասում՝ քայլելով դանդաղ հեռացող վագոնի կողքից, բայց ես ոչինչ չեմ լսում:

— Ի՞նչ:

— Զգույշ, չբացվեք, չմրսեք ճանապարհին, շատ լավ տղա եք, շա՛տ:

Չգիտեմ ինչու, բայց դարձյալ թվում է, թե նա ծաղրում է ինձ: Զարմանալի բան է, ինչո՞ւ է այդպես թվում: Երևի նրանից է, որ նա անձայն է ծիծաղում: Ինչպե՞ս կարող է մարդ անձայն ծիծաղել: Այսինքն՝ եթե մարդիկ կարողանում են անձայն լաց լինել, ուրեմն կարող են նաև ծիծաղել անձայն: Ի՞նչ կա:

«Չկա, չկա, չկա, չկա»,— թխկթխկացնում են անիվները: Գնացքը կամացուկ օրորվում է: Սևրինսկը մնաց այնտեղ, հեռվում՝ Ամիրբեկովի, Նվարդի, այդ Մայսուրաձեի հետ: Հերն էլ անիծած...

Ես հենց այդպես, հագուստով մեկնվում եմ չոր նստելատեղին...

Չգիտեմ ինչից արթնացա: Գուցե տարօրինակ երազ էի տեսել, կամ գուցե ուժեղ ցնցվել էր գնացքը: Բայց արթնացա անմիջապես ու նստեցի: Խոր ու մութ գիշեր էր: Պատուհանից այն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կողմ ոչ մի լույս: Ուղղակի սևի երանգներ, ուժեղ սև՝ երևի անտառ է. մի քիչ բաց՝ անտառը վերջացավ, դաշտ է. ավելի բաց՝ ժապավենի պես, ճանապարհ է թերևս: Ուրիշ ոչինչ: Գլուխս անտանելի ցավում էր: Դուրս եկա միջանցք: Ոչ որ չկար: Վագոնը քնած էր: Ջուրը սառն էր և շատ հաճելի: Երկար լվացվում էի: Գլուխս թեթևացավ մի տեսակ: Այլևս կուպե չմտա: Միջանցքում, պատուհանին հենված, նայում էի դուրս՝ սևի խաղերին, հազվադեպ երևացող աղոտ լապտերներին, որոնք անմիջապես ետ էին սլանում ու կորչում հեռվում: Մտածում էի: Այսինքն, ավելի ճիշտ, չէի ուզում մտածել, որովհետև գիտեի, թե ինչի մասին եմ մտածելու և որովհետև ամաչում էի այդ մտքերից: Այո՛, ինչ – որ մի տեղ աններելի, կոպիտ սխալ էի թույլ տվել, թերևս ճակատագրական սխալ: Ինչի՞ համար էի հասել այս հեռավոր վայրերը, ինչո՞ւ էի եկել Կարագանդա, մի՞թե միայն ունիվերմագի դիրեկտորի հետ զրուցելու և (ի՛նչ ամոթ) խմելու համար: Ի՞նչ պարզեցի, ի՞նչ եմ տանում ինձ հետ: Ոչինչ:

Այո, այո՛, ես ինձ պահել էի ամենաանիմաստ ձևով, մեծամիտ ու խռովկան մի տղայի պես, որը վստահ է, թե ամեն ինչ իր ուզածի պես պետք է լինի և առաջին իսկ անհաջողությունից կորցնում է գլուխը: Հենց այդպես է, որ կա: Դե, իհարկե: Հիմա նույնիսկ կարող եմ խոստովանել: Երբ գործուղում վերցրի դեպի Սևրինսկ, ես իմ վեցերորդ զգայարանով, փաստերի մի շարք տրամաբանական վերլուծություններով և վերջապես իմ ողջ էությամբ վստահ էի, թե Արմենակ Թելունցն այնտեղ է լինելու: Ճիշտ է, հարկ չհամարեցի այդ բոլորի մասին տեղյակ պահել ղեկավարությանը, բայց դա ոչ թե նրա համար, որ կասկած ունեի իմ ձեռնարկի նկատմամբ, ո՛չ, ավելի շուտ ես ուզում էի անակնկալի բերել նրանց՝ վերադառնալիս ինձ հետ հյուր տանելով Արմենակ Թելունցին:

Ասեմ, թե ինչու էի այդքան վստահ:

Նախ՝ շատ հավանական էր մոտ վեց տարվա փախուստից հետո Թելունցի հայտնվելը Կարագանդայի պես մի վայրում, որը հեռու է երկրի կենտրոնից և մեծ բնակչություն ունի: Հանցագործները երբեք սակավամարդ վայրեր չեն փնտրում, որովհետև մեծ քաղաքներում շատ ավելի հեշտ է աննկատ ապրելը: Հետո, հավանական էր, որ Նվարդն իր որևէ բարեկամի մոտ տեղափոխվի ապրելու, բայց դժվար թե նա որոշեր հասնել Կարագանդա, եթե, իհարկե, այնտեղ նրան չսպասեր ամուսինը: Բացի դրանից, Արսեն Ամիրբեկովը որտեղի՞ց կարող էր իմանալ Նվարդի հետ կատարվածը, երբ պատերազմն սկսվելուց հետո բացարձակապես ոչ մի կապ չի պահպանել Հայաստանի հետ: Եվ վերջապես՝ ինչո՞ւ նա պետք է այդքան խոշոր գումար ուղարկեր Նվարդին ու նրան հրավիրեր Կարագանդա: Հարցն այստեղ գումարը չէ, նա կարող էր ավելի մեծ քանակությամբ դրամ ուղարկել ինչ – ինչ հանգամանքներից ելնելով: Բայց ինչո՞ւ է հրավիրում մշտական բնակության մեկին, որին ինքը չի էլ տեսել, և որը ռուսերենին չտիրապետելով, Կարագանդայում անելու համարյա ոչինչ չունի և այլն, և այլն:

Այնինչ ես համոզված էի, որ տեղի է ունեցել հետևյալը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երևանից փախուստ տալուց հետո, Արմենակ Թելունցը երկար ժամանակ թափառել է՝ ճարպկորեն խուսափելով քրեական հետախուզության հետապնդումներից և, ի վերջո, բուն դրել երկրի հեռավոր քաղաքներից մեկում: Մի քանի տարի անց, համոզվելով, որ լիովին կորցրել է հետքերը և հավանորեն տեղեկություն ստանալով, որ այլևս իրենով չեն հետաքրքրվում, նա Արսեն Ամիրբեկովի միջոցով գումար է ուղարկում Նվարդին՝ առաջարկելով մեկնել Կարագանդա, քանի որ ինքը հնարավորություն չունի վերադառնալու: Եվ կինը որոշում է մեկնել: Նա այդ մասին հարկ չի համարում խորհրդակցել որևէ մեկի հետ, որովհետև գիտե, թե ուր է գնում և չի ուզում ավելորդ հետաքրքրությունների ու ենթադրությունների տեղիք տալ, որոնք կարող են ի վերջո գրավել հետախուզության ուշադրությունը: Ավելի լավ է այդպես աննկատ հեռանալը:

Ահա, հավանակա՞ն էր այս ենթադրությունը: Անշո՛ւշտ: Իհարկե, այն շատ խոցելի տեղեր ուներ, իհարկե, կարելի էր առանձին – առանձին կասկածի տակ դնել բոլոր կետերը: Բայց, նախ՝ ես ընտրության հնարավորություն չունեի (ուրիշ ոչ ոք չէր կարող ինձ նորություն հայտնել Արմենակ Թելունցի մասին) և երկրորդ՝ այդ վերսիան անչափ հրապուրում ու համոզում էր ինձ:

Ահա, այդքան խոր համոզված հասնում եմ Կարագանդա և տեղում անմիջապես պարզում, որ ոչ միայն քաղաքում, այլև մարզում Արմենակ Թելունց ազգանունով անձնավորություն գոյություն չունի: Սա առաջին հարվածը: Հասնում եմ Սևրինսկ, մի շարք որոնումներ կատարում միլիցիայի իմ ընկերների օգնությամբ: Դարձյալ ապարդյուն: Կապի բաժանմունքում ուսումնասիրում եմ մասնավորապես դրամական փոխանցումները և համոզվում, որ Արսեն Ամիրբեկովը Երևան ուղարկած դրամից բացի, այլևս ոչ մի դրամ չի ստացել կամ ուղարկել: Եվ կարծես ի լրացումն այդ բոլորի, պարզվում է, որ Նվարդը ամուսնացել է ունիվերմագում աշխատող մի ինչ – որ վրացու հետ և տեղափոխվել մարզային կենտրոն:

Ինչպես ասում են՝ իմ բոլոր խաղաթղթերը խփված էին:

Ահա թե ինչու անակնկալի եկա, կորցրեցի ինձ: Ինչի՞ էին նման իմ այդ զրույցները՝ Ամիրբեկովի հետ: Ինչո՞ւ ես անմիջապես չմեկնեցի Կարագանդա: Գուցե Նվարդը ինձ որևէ նորություն հայտներ Թելունցի մասին: Ո՞վ գիտե: Չէ՞ որ նա հիմա, նոր ամուսնությունից հետո, առանձնապես շահագրգռված չէր լինի թաքցնել ամուսնու մասին իր իմացածը: Գուցե նույնիսկ ավելին, ասեր՝ վրեժխնդիր լինելու համար: Ի՞նչ իմանաս, ո՞վ կհասկանա կնոջ հոգին: Չէ՛, ինչ էլ լիներ, ես պետք է մեկնեի Կարագանդա, պետք է խոսեի Նվարդի հետ: Իսկ Ամիրբեկովն ինչո՞ւ հանկարծ այնպես աշխուժացավ, երբ հարցրեցի Մոսկվա մեկնող գնացքի մասին: Մինչ այդ մռայլ էր, կասկածոտ: Հետո նրա սիրալիրությունը... Շտապ տոմս գտավ, իր անձնական մեքենայով կայարան հասցրեց, հյուրասիրեց: Ի՛նչ հիմար վիճակ էր: Ինձ թվում էր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ինքն է հարբած, այնինչ փաստորեն ես էի հարբած: «Ինչո՞ւ Հայաստան չեք գալիս»: Ջհանդամը: «Որտեղ հաց՝ էնտեղ կաց»: Եվ դրանից հետո ես նրա հետ բաժակ էի խփում: «Զգո՛ւյշ, չբացվես, դու շատ լավ տղա ես...»: Թյո՛ւ: Դե, իհարկե, ծաղրում էր: Նա ինչ – որ բան գիտեր: Միևնույն է: Ծիծաղում էր անձայն. «Բարևիր Հայաստանին»:

Գնացքն ուժգին ճռնչալով արգելակվեց, բայց պատուհանի ետևում միայն արդեն ծանոթ մութն էր: Ինչո՞ւ կանգ առավ՝ եթե կայարան չկա:

Քնաթաթախ ուղեկցողը միջանցք դուրս եկավ, հորանջեց դժգոհ:

— Հանդիպակաց գնացքին ենք սպասում:

— Հա՞...

Հաջորդ րոպեին ես բացում էի վագոնի դուռը:

— Ո՞ւր, էստեղ ոչինչ չկա:

— Մոռացել եմ...— թոթովեցի ու ծեր ուղեկցողի ապշած հայացքի տակ իջա դեպի խավարը: Հեռվից լսվում էր մոտեցող գնացքի հնքն ու տագնապահար սուլոցը: Գնացքը մեկնում էր Կարագանդա:

Ցերեկվա ժամը երեքին հասա հանքագործների մեծ քաղաքը, սափրվեցի արագորեն ու գնացի հասցեների սեղան: Արդեն որոշել էի անելիքս: Նպատակահարմար չգտա գնալու «Հագուստառ» — ի գրասենյակ, որտեղ աշխատում էր Գիզո Մայսուրաձեն: Ի՞նչ կարող է ասել ինձ: Հետո, ո՞վ գիտե, գուցե և Նվարդը թաքցրել է նրանից իր ամուսնու հետ կապված պատմությունը, գուցե ասել է, թե այրի է ինքը:

Քանի դեռ աշխատանքային ժամը չի ավարտվել, անմիջապես կարելի է գնալ Նվարդի մոտ, խոսել նրա հետ, գուցե և պայմանավորվել վաղը հանդիպելու և ավելի հանգամանորեն զրուցելու համար:

— Գիզո Օթարևիչ Մայսուրաձե: Շևչենկոյի փողոց № 27, բնակարան 12:

Տասը րոպե հետո ես բարձրանում էի հինավուրց մի շենքի աստիճաններով, որը մի ժամանակ հավանաբար իբրև հանրակացարան էր ծառայել: Երկար միջանցքի երկու կողմերում նեղլիկ դռներ էին: Յուրաքանչյուր դռան առջև ֆաներայից խոհանոցանման մի անկյուն էր կառուցված՝ էժանագին օճառի հոտով, կաթող լվացարաններով ու նավթավառներով: № 12 բնակարանը միջանցքի ծայրում էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բախեցի դուռը: Լռություն: Քիչ սպասելուց հետս բախեցի կրկին: Ու հանկարծ լսվեց մանկական մի ձայն.

— Ներս մտեք:

Ներս մտա: Չնայած անհյուրընկալ մուտքին, սենյակները հիանալիորեն էին կահավորված, ավելի շուտ՝ շքեղ, քան ճաշակով: Ննջարանի հատակին փռված գորգի վրա խորանարդիկներով ամրոցներ էր կառուցում փոքրիկ, սևաչ մի տղա:

Նվարդի որդին է:

— Ո՞ւր է մայրդ, փոքրիկ:

— Մարուսյա մորաքրոջ տանն է, կանչե՞մ: — Բավականին վարժ ռուսերենով պատրաստակամություն հայտնեց տղան ու, առանց պատասխանի սպասելու, միջանցք վազեց:

Նստեցի սեղանի մոտ դրված աթոռներից մեկին ու հետաքրքրությամբ սկսեցի շուրջս դիտել: Չէ՛, վատ չեն ապրում: Ինչպես երևում է, «Հագուստառ» — ի գլխավոր ապրանքագետը միայն աշխատավարձով չի բավարարվում:

— Դինգ – դոնգ, դինգ – դոնգ,— հնչեց սենյակի լռության մեջ:

Նայեցի պատի ժամացույցին: ժամը 4 – ն էր: Ինչ էլ ճոխ ժամացույց է, հավանաբար Գերմանիայից է բերված: Ներքևում ինչ – որ խոսքեր են գրված: Երևի «Բարի լույս»: Հետո հայացքս ժամացույցից ցած սահեց, և ակամա նայեցի այդ ժամանակներում յուրաքանչյուր տան մեջ հանդիպող մեծադիր ընտանեկան նկարին: Նվարդն էր, իսկ նրա կողքին, կարճ, սրածայր մորուքով…

— Ի՞նչ,— ակամա բացականչեցի ես ու վեր ցատկեցի աթոռից:

Նկարից ինձ էր նայում Արմենակ Թելունցը:

Նա էր: Ոչ մի կասկած: Այո՛, շատ փոխված, այո՛, մորուքով, բայց նա էր: Ի՞նչ գործ ունի այստեղ այդ նկարը: Սպասիր: «Գիզոն շա՛տ խանդոտ է»: Ինչպե՞ս կարող էր խանդոտ մարդը թույլ տալ, որ իր սենյակում պատից ժպտա իր կնոջ նախկին ամուսինը: Չէ, անհնար է:

«Ի՞նչ, չլինի՞ թե… — ես լսում էի սրտիս տրոփյունը: — Սպասիր, ուրեմն այդ վրացի Գիզոն… »:

— Ի՞նձ էիք հարցնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես շրջվեցի դեպի դուռը: Նվարդն էր: Նա ինձ էր նայում հանգիստ, հետաքրքրություն արտահայտող աչքերով, սպասողական: Ուրեմն չճանաչեց: Եվ որտեղի՞ց կարող է ճանաչել՝ մեկ անգամ է տեսել, այն էլ վեց տարի առաջ:

Ես կարողացա վերագտնել իմ սառնասրտությանը: Ավելի լավ, որ չճանաչեց, թե չէ՝ ո՞վ գիտե, մեկ էլ տեսար աղմուկ բարձրացրեց, հավաքեց հարևաններին: Թելունցը հիմա ուր որ է կգա, գուցե լսի աղմուկը և խույս տա կրկին: Ի՞նչ անել:

— Գիզոյին եմ ուզում, — ասացի ես ու տվեցի գնացքի ճանապարհին տեսած կայարաններից մեկի անունը, — Լուբինցայից եմ եկել, գործ ունեմ հետը:

— Նստեք, նստեք, խնդրեմ, հիմա ուր որ է՝ կգա:

Ես նստեցի ու սկսեցի աչքի անցկացնել սեղանին դրված թերթերը: Սակայն զգում էի, որ Նվարդը շարունակ ինձ է նայում, գուցե սկսում է հիշել: Գուցե մտածում է, որ ինձ տեսել է ինչ – որ տեղ: Ի՞նչ անեմ, եթե դուրս գամ ու զանգահարեմ միլբաժին, խնդրեմ միլիցիոներներ ուղարկեն, կկասկածի լիովին ու կխանգարի ինձ, հետո ի՞նչ առիթով դուրս գամ: Իսկ եթե ներս մտնի, ճանաչի ու սկսի դիմադրել... Նման շարունակությունը ինձ չէր հրապուրում:

Իսկ Նվարդը գնալով ավելի ու ավելի անհանգիստ էր դառնում: Նույնիսկ մի անգամ վեր կացավ բազմոցից, բայց կրկին նստեց:

— Հա՞յ եք, — լսեցի ես հայերեն: Բայց հանկարծակիի չեկա:

— Ի՞նչ,— հարցրեցի ռուսերեն:

Նվարդը շիկնեց սաստիկ ու էլ չկրկնեց հարցը: Կարծես թե հանգստացավ մի քիչ:

— Վաղո՞ւց եք ճանաչում Գիզոյին:

— Գիզոյի՞ն: Վաղուց, — ասացի ես, լսելով միջանցքում հնչող տղամարդու, ծանր կոշիկների մոտեցող ձայնը: — Շա՛տ վաղուց: Բայց, ահա, կարծես թե նա է:

Դուռը բացվեց անշշուկ ու սենյակ մտավ Արմենակ Թելունցը՝ արդեն արծաթախառն մազերով, փոքրիկ, սև մորուքով և ճակատին հայտնված խորը, շեղ սպիով: Նա նայեց ինձ, հետո հարցականորեն կնոջը ու նորից ինձ՝ թեթևակի կկոցելով աչքերը և կնճռոտելով ճակատը: Ես շարունակեցի նստած մնալ: Բայց հապաղելն այլևս ոչ մի իմաստ չուներ:

— Բարև ձեզ, Արմենակ Թելունց,— ասացի ես հատ – հատ, բարձրաձայն,— վերջացնե՛նք: Ամեն մի պատմություն իր վերջն ունի: Ձերը շատ երկարեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նվարդը սուր ճչաց ու ընկավ բազմոցին: Թելունցը գունատվեց վայրկենապես, օրորվեց՝ ասես մի ներքին, ծանր հարվածից ու ձեռքը դեպի կոկորդը տարավ: Նա շնչահեղձ էր լինում:

— Խորհուրդ չեմ տա աղմկել,— ասացի ես, բարձրանալով ու աջ ձեռքս չհանելով գրպանիցս, — թող նույնիսկ հարևանները չնկատեն: Գնանք: Տղաներն սպասում են դրսում:

Նա ուզեց ինչ – որ բան ասել, բայց չկարողացավ: Ես բացեցի դուռը և Թելունցին դուրս հրավիրեցի: Նվարդը դեռ բազմոցին հեկեկում էր: Ակամա դուրս եկավ, քայլեց իմ առջևից՝ սասափելի գունատ ու փշրված: Ողջ ճանապարհին մենք ոչ մի բառ չփոխանակեցինք: Միայն երբ իջնում էինք միլիցիայի բաժնի օրապահություն, Թելունցը հանկարծ հարցրեց կամացուկ.

— Բայց դուք... դուք երեկ մեկնել էիք ախր:

— Այո, — ասացի ես, — մեկնել էի, բայց Արսեն Ամիրբեկովը շտապեցրել էր մի քիչ: Ես ուզեցի նախ տեսնել ձեզ:

Ահա՛ բոլորը: Եվ հենց այնտեղ, Կարագանդայի միլիցիայի վարչության քննիչներից մեկի սենյակում իմ և Արմենակ Թելունցի, նույն ինքը՝ Գիզո Մայսուրաձեի միջև տեղի ունեցավ այն զրույցը, որը պետք է կայանար ուղիղ վեց տարի առաջ, Երևանի Սպանդարյանի շրջանի միլիցիայի բաժնում:

«Արարատ» տրեստի մատակարարման բաժնում Արմենակ Թելունցի կատարած չարաշահումների հարցը դեռևս վեց տարի առաջ մանրազնին ուսումնասիրված էր և նրա վերաբերյալ քրեական գործը ավարտված: Ու ինձ թերևս այլևս ոչինչ չէր խանգարի նրան անմիջապես Երևան տեղափոխելու, եթե նրա անունը մինչև վերջ մնար Արմենակ Թելունց: Բայց իմ առջև նստած էր ոչ միայն Արմենակ Թելունցը, այլև Գիզո Մայսուրաձեն: Շատ կարևոր էր պարզելը, թե ինչ մեթոդով է նա կարողացել երկար տարիներ շարունակ խուսափել հետախուզությունից, որտեղի՞ց է ձեռք բերել ուրիշի անձնագիր և ի՞նչ միջոցներով, և վերջապես ինձ հետաքրքրում էր նրա գործունեությունը Սևրինսկի ունիվերմագում:

Դրա համար անհրաժեշտ եղավ ևս մեկ ամիս, որը ես անցկացրի Կարագանդայում և Սևրինսկում: Եվ ի վերջո, մարզային դատախազության և միլիցիայի օրգանների ջանասեր օգնության շնորհիվ, ինձ հաջողվեց մերկացնել ոչ միայն Գիզո Մայսուրաձեին, այլև Արսեն Ամիրբեկովին և նրանց հետ հանցագործների մի մեծ խմբի, որը տարիներ շարունակ գործում էր Սևրինսկի առևտրական օբյեկտներում:

Առանց մեծ դժվարության կարողացանք պարզել նաև Թելունցի անվանափոխման գաղտնիքը, որի հեղինակը, ինչպես և պետք էր սպասել, Արսեն Ամիրբեկովն էր: Զինվորական մի ինչ – որ փաստաթղթի վրա, որը պատկանելիս է եղել լեյտենանտ Գիզո Մայսուրաձեին,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ամիրբեկովը փակցնում է Թելունցի նկարը և հաջողացնում անձնագիր ձեռք բերել նրա անվամբ: Շարունակությունը արդեն հայտնի է ձեզ: Ամիրբեկովը Թելունց — Մայսուրաձեին ունիվերմագ է ընդունում և նրան դարձնում իր խարդախությունների հանցակիցը: Երկու տարի անց, չկարողանալով մոռանալ Նվարդին ու որդուն, Թելունցը վճռում է նրանց Սևրինսկ կանչել: Եվ հետո, դարձյալ Արսեն Ամիրբեկովի խորհրդով, տեղի է ունենում Արմենակի ու Նվարդի ամուսնալուծությունը և նոր ամուսնությունը:

Չեմ ուզում թաքցնել, ես մեծ բավականությամբ գրեցի այդ ծեր ու փորձված գայլի կալանքի օրդերը: Եվ երբ միլիցիոներները նրան կալանատուն էին տանում, չկարողացա զսպել ինձ: Իհարկե, ինձ չէր սազում նրան պատասխանել իր իսկ խոսքերով, բայց ես շատ էի չարացած, շատ տառապանքներ էր պատճառել նա ինձ և ոչ միայն ինձ:

— Զզույշ, չմրսես, Ամիրբեկով,— ասացի ես,— կարծեմ բանտը այնքան էլ արևոտ չէ:

— Եվ շատ էլ լավ եք արել, ընկեր գնդապետ,— բացականչեց լեյտենանտ Սիմոնյանը,— ով էլ լիներ, չէր դիմանա: Տես սրիկային:

Այդ ակամա բացականչությունը միանգամից սթափեցրեց բոլորին:

— Սարգիս Արտաշեսովիչ, բայց ախր դուք ո՞նց չէիք վախենում, — դեռևս պատմածի տպավորության տակ, դողացող ձայնով հարցրեց լեյտենանտի կինը՝ Կարինեն,— պրեդստավլյա՞յեշ, ամեն ինչ հնարավոր էր:

— Ի՞նչ,— զարմացավ գնդապետը:

— Ախր երբ մեն – մենակ այդ Թելունցի հետ դուրս եկաք նրանց տնից, չէ՞ որ նա ամեն ինչ կարող էր անել: Էլ հո որևէ սպասելիք չունե՞ր: Կհրեր ձեզ ու կփախչեր, գուցե և դանակ կամ ատրճանակ ուներ գրպանում: Մեն – մենակ...

— Սիմոնյան,— ծիծաղեց գնդապետը՝ դառնալով լեյտենանտին,— Կարինեն առաջադիմական քայլեր է կատարում հետախուզության բնագավառում: Եվ դա, երևի, քո շնորհիվ, չէ՞...

Լռեց: Լրջացավ:

— Բարեկամներ,— ասաց նա,— ճիշտ հարց տվեց Կարինեն: Եվ կհավատա՞ք, հետագայում ես ինքս շատ եմ տվել ինձ այդ հարցը: Այո՛, զարմանալի էր, որ Թելունցի պես ճարպիկ ու սառնասիրտ մարդը հանձնվեց առանց փոքր իսկ դիմադրության: Եվ այդ այն դեպքում, երբ նրա գրպանում իսկապես որ մի փոքրիկ խաղալիք կար: Այո՛, հիմա ինձ թվում է, թե նա այն ժամանակ փախչելու հնարավորություններ ուներ, նախ՝ արդեն համոզվել էր, որ դրսում ոչ մի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«տղաներ» էլ ինձ չեն սպասում, հետո, այնքան էլ դժվար չէր անհետանալ օրը ցերեկով, բանուկ փողոցում, բազմության մեջ, երբ ես կրակելու հնարավորություն իսկ չէի ունենա: Բայց չդիմադրեց, փորձ անգամ չարեց, թեև ես չէի բռնել նրա ձեռքը: Հետագայում ես հաճախ եմ տվել այդ հարցը. ինչպե՞ս Թելունցը հանձնվեց առանց որևէ դիմադրության, անվերապահորեն…

— Հավատացեք, ընկե՛ր գնդապետ, որ հետագայում ես էլ եմ ինձ տվել այդ հարցը:

Սեղանի շուրջը նստողները շրջվեցին դեպի այն մարդը, որն ասաց այդ խոսքերը:

Մատուցողն էր:

Նրան արդեն մոռացել էին: Գնդապետի պատմությունը նրանց հեռու էր տարել ճաշի սեղանից, ռեստորանից ու Երևանից, և նրանց երևակայության մեջ ստեղծվել էր պատկերը բոլորովին այլ մի մարդու, որը գտնվում էր ինչ – որ տեղ՝ ձյունների մեջ, հեռավոր Սևրինսկում:

Հիմա նրանց առջև կանգնած էր ալեհեր, բարեկիրթ շարժումներով մի մարդ՝ ռեստորանի մատուցողի սև համազգեստով, ճերմակ թիթեռնիկ – ժապավենով, և տխուր ժպտում էր:

— Հավատացեք, ընկե՛ր գնդապետ, ես էլ ինձ հաճախ եմ տվել այդ հարցը: Ես բանտում տասը տարի շարունակ ինձ տվել եմ այդ հարցը ու եկել եմ այն եզրակացության, որ ես չէի կարող փախչել, որ ես իրավունք չունեի փախչելու: Այո, այո, փախչելու համար էլ իրավունք է պետք, և մարդ ինքը պետք է տա իրեն այդ իրավունքը: Ես շատ էի հոգնել… ուրիշի անունով:

Մատուցողը, լռեց, և բոլորն էլ միանգամից նկատեցին, որ ռեստորանում ոչ ոք չկա: Ոչ ոք: Բոլոր սեղաններն էլ դատարկ էին վաղուց ու ծածկված շրջված աթոռներով: Ամբողջ ռեստորանը թաղված էր խավարի մեջ և մենավոր մի լապտեր էր վառվում միայն նրանց գլխավերևում, պատին:

Սահակյանը շփոթված հազաց:

— Ընկեր Թելունց,— ասաց նա,— ես այս պատմությամբ ձեզ ակամա վիշտ պատճառեցի: Ներեցեք ինձ, խնդրում եմ:

…Դրսում ձյունը, շարունակում էր տեղալ ծանր ու մեծ փաթիլներով, ասես որոշել էր ծածկել ամեն ինչ, սպիտակով պատել փողոցները, քաղաքը, աշխարհը, որպեսզի ամեն ինչ մաքուր ու անբիծ լինի, որ երբեք, ոչ մի տեղ սև բիծ չլինի, չմնա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐԳԻԾԱԿԱՆ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ոսկե ձկնիկը

Կենցաղային սպասարկման բնագավառի ամենահամեստ աշխատողներից մեկը՝ Համբարձում Սանթրոսյանը, որին բարեկամները փաղաքշաբար Համիկ էին անվանում, իր սեփական մոտորանավակով ձուկ էր որսում Սևանա լճում:

Երբ առաջին անգամ նետեց կարթը, դուրս բերեց մի բավականին խոշոր կողակ.

«Դու ինձ պե՞տք ես»,- անբավական քրթմնջաց Համիկը և ձուկը կրկին ջուրը նետեց:

Երբ երկրորդ անգամ նետեց կարթը, որսաց մի հսկայական սիգ: Համիկը միայն մի պահ հաճույքով դիտեց կեռիկից ազատվելու համար փայլփլուն ձկան գործադրած հուսահատական ճիգերը, ապա արհամարհանքով ժպտաց.

«Հիմար, դո՞ւ ում ես պետք: Քեզ նմանները երկու ռուբլով խանութներում թափված են»:

Եվ լիճը նետեց ձուկը:

Իսկ երբ երրորդ անգամ ջրից դուրս հանեց կարթը, կեռիկից կախված օրորվում էր մի... մի իսկական, մի բնական, մի սքանչելի իշխան ձուկ:

«Ես քեզ կերա»,- հրճվանքից դողալով՝ խանդավառ բացականչեց Համիկը:

Բայց կատարվեց հրաշք:

Իշխան ձուկը հանկարծ մարդկային լեզու առավ և վիրավոր շրթունքները շարժելով - մրմնջաց.

- Թո՛ղ ինձ, թո՛ղ, Համի՛կ, թո՛ղ ինձ անվտանգ,

Քեզ կվճարեմ թանկագին փրկանք...

- Վա՞յ,- ապշեց Համիկը,- էդ դո՞ւ ես խոսում:

- Հա՛,- ասաց իշխանը:

- Երանի մեզ,- գլուխն օրորեց Համիկը,- իբր թե խոսացողները քիչ են, ձկներն էլ են սկսում խոսել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես սովորական ձուկ չեմ,- ասաց իշխանը,- ես...

Համիկը մեղմորեն ժպտաց.

- Էդ ի՞նչ ես ասում: Ուրեմն ես չգիտե՞մ, թե ինչ ձուկ ես դու: Դու ոսկե ձկնիկ ես, ոսկե... Քո կիլոն արդեն երեսուն ռուբլով էլ ձեռքներս չի ընկնում:

- Ես կախարդական ձուկ եմ,- ասաց իշխանը:

- Բա որ կախարդական չլինես, էդ գինը կունենա՞ս,- ծիծաղեց Համիկը:

- Բայց ես կարող եմ կատարել քո բոլոր ցանկությունները,- ասաց իշխանը:-Հրամայի՛ր և կունենաս այն ամենը, ինչ ուզում ես... Միայն թե բաց թող ինձ...

Համիկը մի պահ մտածեց.

- Իսկ ի՞նչ կարող ես անել ինձ համար:

- «Վոլգա» ավտոմեքենա ուզո՞ւմ ես,- հարցրեց ձուկը:

Համիկը քմծիծաղեղ և մատով ցույց տվեց ափը: Ափին կանգնած էր մի բոլորովին նոր «Վոլգա» ավտոմեքենա:

- Այդ դեպքում գուցե առանձնատուն,- հարցրեց ձուկը:

- Մեկը Աղվերանում ունեմ, մեկն էլ Սև ծովի ափին: Ես շարքային աշխատող եմ, ինձ դրանից ավելին չի հասնում,- համեստորեն ասաց Համիկը:

- Ճապոնական տեսամագնիտոֆոնի մասին ի՞նչ կասես,- հարցրեց ձուկը:

- Մի՛ մանրացիր,- բարկացավ Համիկը,- և արժանապատվությունդ մի՛ կորցրու:

- Բա ի՞նչ անեմ,- հուսահատությունից լողակները կոտրատեց իշխան ձուկը:-Դո՛ւ ասա՝ ի՞նչ ես ուզում, և ես կկատարեմ քո յուրաքանչյուր ցանկությունը: Ախր ես կախարդական ձուկ եմ, տեսնո՞ւմ ես, խոսում եմ...

Համիկը կեռիկի վրայից հանեց իշխան ձուկը, մատներով բռնեց խռիկներից, նայեց աչքերի մեջ ու ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե հիմա դո՛ւ ինձ լսիր: Ես ամեն ինչ ունեմ, հասկանո՞ւմ ես: Ես ոչնչի կարիք չեմ զգում: Միակ բանը, որ մեկ-մեկ սիրտս ուզում է, դո՛ւ ես... Ու դու էլ հազիվ ձեռքս ես ընկել: Այնպես որ՝ խոսես, թե չխոսես, ինձ համար ոչ մի նշանակություն չունի, իշխա՛ն ջան: Ես քեզ ուտելու եմ:

Եվ կերավ:

1984թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շերլոկ հոլմսը հրազդանի ձորում

— Հետքերը չտրորել,— զգուշացրեց նշանավոր խուզարկուն և հանկարծ անձայն ծիծաղեց, ինչպես միայն ինքը կարող էր:

Նրան ուղեկցում էին միլիցիայի տեղամասային տեսուչ Սրապը և երիտասարդ, գրավիչ մի կին, որի դեմքը գունատ էր ու թախծոտ: Կինը մեծ ջանքերով էր զսպում արցունքները, վախենալով փչացնել կոպերի և թարթիչների բաց մանուշակագույն ներկը:

Նկատելով, որ հռչակավոր խուզարկուն լուռ ծիծաղում է, կինը ցնցվեց.

— Դուք ինչ-որ բա՞ն նկատեցիք, պարոն Հոլմս:

— Երդվում եմ ծխամորճովս,— ասաց Հոլմսը, բերանից այնքան ժամանակ հեռացնելով ծխամորճը, որ կարողանա արտասանել այդ խոսքերը,— երդվում եմ ծխամորճովս, տիկին, որ ես ստույգ կարող եմ նշել հանցագործության օրը:

— Ինչպե՞ս,— ապշեցին տեղամասային տեսուչն ու գրավիչ կինը: Դուք կռահեցի՞ք: Ուրեմն, ե՞րբ է եղել դա:

— Դեպքը տեղի է ունեցել մարտի 30-ին,— ձորի քար լռության մեջ արտասանեց խուզարկուն:

Տեսուչը գունատվեց նախանձից:

— Ինչ խորաթափանցություն,— մրմնջաց նա,—— ինչի՞ց եզրակացրիք, պարոն:

— Դատարկ բան է, սիրելիս,— անվրդով ասաց Հոլմսը: — Ահա, տեսնո՞ւմ եք, այստեղ, խոտերի վրա ամենուրեք լրագրեր են թափված: Եթե փոքր ինչ ավելի ուշադիր նայեք, կտեսնեք, որ դրանք բոլորն էլ կրում են մարտի 30-ի ամսաթիվը: Եզրակացությունը ծնվում է միանգամից: Դեպքը տեղի է ունեցել մարտի 30-ին: Այդպես չէ՞, պաշտոնակից:

Տեղամասային տեսուչ Սրապը շփոթված մի ոտքից մյուսին հենվեց:

— Համարձակվում եմ ասել, պարոն Հոլմս, որ դրանք «Երեկոյան Երևան» թերթի համարներ են և, ուրեմն, բաժանորդներին են հասել հաջորդ օրը, առավոտյան... Ուրեմն, դեպքը պետք է որ տեղի ունեցած լինի մարտի 31-ին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նշանավոր խուզարկուն երկար ժամանակ տարակուսած մեկ լրագրերին էր նայում, մեկ տեսուչ Սրապին և այնպիսի հուզմունքով էր ծխում ծխամորճը, որ նրա դեմքը մի քանի վայրկյան չէր երևում ծխի քուլաների մեջ:

— Հըմ,— ի վերջո փնթփնթաց նա,— ո՞վ կկռահեր: Երեկոյան թերթը՝ առավոտյան: Սրամիտ է մտածված:Սա վկայում է, որ մենք գործ ունենք կանխամտածված հանցագործության հետ... լավ, շարունակենք: Այստեղ խնջույքի են հավաքված եղել քառասունութ հոգի: Նրանց հետ եղել է նաև անգլիացի կիսագրագետ մի պատանի՝ Փոխոս արտառոց ազգանունով:

— Պողոսն է, Պողոսը,— բացականչեց գրավիչ կինը,— քրոջս տղան է, անգլիական թեքումով դպրոցում է սովորում: Բայց դուք ինչպե՞ս իմացաք այդ, պարոն Հոլմս:

Հոլմսը ներողամտաբար ծիծաղեց իր անձայն ծիծաղով:

— Դա դժվար չէր իմանալ, տիկին: Այդ Փոխոսը իր անունը դանակով փորագրել է ահա այս ծառի բնին: Եվ քանի որ հայտնի է, որ մարդիկ պատին կամ ծառին գրում են իրենց աչքերի ուղղությամբ, ապա դժվար չէ եզրակացնել, որ նա կամ պատանի է եղել, կամ լիլիպուտ:

— Ապշեցուցիչ է,— անսքող հիացմունքով բացականչեց թովիչ կինը:

— Պարոն խուզարկու, իսկ ինչի՞ց եզրակացրիք, որ նրանք քառասունութ հոգի են եղել,— հարցրեց տեսուչը:

— Սիրելի բարեկամ,— արժանապատվությամբ ասաց Հոլմսը,– վստահեցնում եմ ձեզ, որ ես չէի կարող հանցագործ աշխարհի սարսափը դառնալ առանց այդ տարրական գիտելիքների: Նրանք քառասունութ հոգի են եղել, պարոն Սրապ, որովհետև խնջույքի վայրում մորթել են մեկ ոչխար, մեկ խոզ, խմել են տասներկու շիշ կոնյակ, քառասունութ շիշ գարեջուր, կերել և այս ու այն կողմ են թափել հարյուր երեսունվեց մետր այս սպիտակ-լայն ու տափակ բանից…

— Լավաշ,— ազգային արժանապատվությամբ հուշեց Սրապը:

— Շնորհակալություն, պաշտոնակից: Լավաշ: Հիմա տեսնո՞ւմ եք, թե որքան հասարակ բան է: Պարզ տրամաբանություն: Միայն թե որոնենք բաժակները... Ես այստեղ միայն չորս բաժակ եմ տեսնում:

— Որովհետև այստեղ միայն չորս հոգի են եղել,– մռայլ ասաց Սրապը: .

Հոլմսի ծխամորճը դողաց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ինչպե՞ս թե ,- ասաց նա: Տասներկու շիշ կոնյակ... քառասունութ շիշ գարեջուր... մեկ ոչխար... մեկ խոզ... և չորս խո՞զ, ներեցեք, այսինքն չորս հոգի՞...

— Այո,— համեստորեն պնդեց տեղամասային տեսուչ Սրապը:

Հոլմսի գլուխը կրկին մի քանի վայրկյան կորավ ծխամորճից ելնող խիտ ամպերի մեջ: Հրազդանի ձորով անցնող քամին պատառոտում, տանում ծառերի սաղարթներին էր փռում նրանց ծվենները:

— Երդվում եմ ձեռնափայտովս, որ մոռացել եմ հետս բերել,— վշտացած ասաց խուզարկուն,— որ սա ամենամութ գործն է իմ հետախուզական գործունեության մեջ: Ես հավատում եմ ձեզ, պարոն Սրապ, բայց այդ դեպքում ինչո՞ւ են այդ չորս... մարդիկ այնքան բան գնել, որ այսքանն էլ ստիպված են եղել թափել խոտերի վրա: Ինչո՞ւ այնքան ուտելիք չեն վերցրել իրենց հետ, որքան անհրաժեշտ է:

— Ազգային առանձնահատկություն է, պարոն,— կամացուկ ասաց տեղամասային տեսուչ Սրապը:

— Բայց դուք հո չե՞ք կարող չնկատել, որ նրանք ինչ-որ բանից սաստիկ ջղայնացել են, վիճել ու կռվել են և արդյունքը եղել է ջարդված շշերի այս կույտը,— հանկարծ բորբոքված հարցրեց խուզարկուն:

— Համարձակվում եմ առարկել,— անայլայլ առարկեց տեղամասային տեսուչը: Նրանք չեն կռվել: Նրանք ուրախ են եղել և հարբած:

— Հարբա՞ծ, ինչի՞ց եզրակացրիք, պարոն Սրապ:

— Որովհետև, ընկեր Հոլմս, — ասաց Սրապը: Նրանք երկար ժամանակ փորձել են դատարկ շշերով խփել ջարդել էլեկտրասյան լապտերը, բայց չեն կարողացել: Ահա հետքերը լապտերի մոտ, ահա ջարդված շշերը:

Անվանի խուզարկուն անգլերեն քորեց ծոծրակը:

— Իսկ ինչո՞ւ են լապտերները ջարդում: Սպորտի նոր ձև՞ է:

— Ըմմ, այո՛, զվարճանում են:

— Ա՛հ,— բացականչեց Հոլմսը: Ինչո՞ւ ինձ հետ չէ դոկտոր Վաթսոնը, որ հայհոյեր երկուսիս փոխարեն: Դուք ինձ ծաղրո՞ւմ եք, ինչ է, պարոն Սրապ: Ուրեմն նրանք զվարճանալու՞ նպատակով են կոտրատել այս ծառերը, ջարդել ցայտաղբյուրը: Հին հունական քանդակների

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

օրինակով կոտրատել մարզիկի այս արձանի բազուկները… Շատ կատակասեր քաղաքացիներ ունեք, պարոն Սրապ:

Տեղամասային տեսուչ Սրապը բացել էր բերանը ինչ-որ բան ասելու համար, բայց հենց այդպես էլ արձանացավ: Լսվեց սրտակեղեք մի ճիչ, ընկնող մարմնի ձայն և ահասարսուռ մի հեկեկոց:

Հոլմսը և Սրապը շրջվեցին անմիջապես: Նշանավոր խուզարկուն ձեռքը տարավ դեպի ատրճանակը, բայց ոչ ոք չկար: Միայն ջահել ու գրավիչ կինն էր ծնկել գետնին, նախապես ոտքերի տակ լրագիր փռելով:

— Բայց իմ ամուսինը, իմ ամուսինը, որտե՞ղ է նա: Տվեք ինձ իմ ամուսնուն,— հեծկլտում էր նա: Օ՜, մի՞թե սա նրա ազնիվ արյունն է:

— Բայց դա խոճկորի արյուն է, տիկին,— անգլիական նրբավարությամբ նկատեց Հոլմսը:

— Իսկ դուք արյան խմբերը ստուգե՞լ եք,— պոռթկաց դժբախտ կինը,— գուցե համընկնո՞ւմ են: Գուցե ձեզ միայն թվո՞ւմ է: Գուցե մյուս՝ ձեր ասած ոչխարի արյունն է իմ ամուսնունը: Օ՜, իմ հեզ գառնուկ, որտե՞ղ ես դու: Պարոն Հոլմս, գթացեք ինձ, գտեք իմ ամուսնուն սպանողին, չէ՞ որ դուք Հոլմսն եք:

— Բայց նախ հարկավոր է ձեր ամուսնուն գտնել, տիկին,— ասաց նշանավոր խուզարկուն,— և հարկավոր է գտնել նրա մյուս ընկերներին: Եթե նրանք քառասունութ հոգի չեն, ինչպես ես եմ կարծում, այլ ընդամենը չորսը՝ ինչպես իմ պաշտոնակից Սրապն է պնդում, ապա նրանք մեռել են բնական մահով, որկրամոլությունից, և ուրեմն նրանց դիակներն ինչ որ տեղ մոտակայքում կլինեն:

Հոլմսը իր հետաքննական կյանքի ողջ ընթացքում այդքան երկար չէր խոսել, դրա համար էլ լռեց և մի քանի անգամ խոր շունչ քաշեց:

Եվ այդ լռության մեջ իբրև ատրճանակի կրակոց հնչեց Սրապի ինքնաապտակը: Նա ձեռքն այնպես ուժեղ խփեց իր ճակատին, որ երկար ժամանակ ուշքի չէր գալիս: Եվ հազիվ մրմնջաց գունատված շուրթերով.

— Դուք իսկապես մեծ մարդ եք, ընկեր Հոլմս: Ո՞նց գլխի չէի ընկնում: Դուք ասացիք «մոտակայքո՞ւմ»: Դե, իհարկե, նրանք «Փարվանա» ռեստորանում կլինեն: Նրանք ինձ դեռ պատասխան կտան Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ կանաչը տրորելու, ծառերը ջարդելու, արձանը հաշմելու և զազրախոսելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ աջ ձեռքով ատրճանակի դատարկ պատյանը բռնած տեղամասային տեսուչ Սրապը սլացավ դեպի ռեստորան:

— Կա՛նգ առ,— այդ վայրկյանին լսվեց ահեղագոչ մի ձայն:

Սրապը քարացավ տեղում ու ետ նայեց: Հոլմսն ու գրավիչ կինը ևս վախեցած շրջվեցին դեպի ձայնը:

Վազելով նրանց էր մոտենում կարճահասակ, գիրուկ մի մարդ՝ ծանր հևալով և վանդականախշ թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը.,.

— Կա՛նգ առ,—— գոռաց նա կրկին: Այդ ի՞նչ եք անում, ի՞նչ եք ձեզանից բաներ հնարում: Դու ի՞նչ ես չափազանցնում,— բղավեց նա կնոջ վրա: Ի՞նչ ես ողբերգություն խաղում: Ո՞վ է տեսել, որ կինը այդքան սրտանց լաց լինի կորած հարբեցող ամուսնու համար: Զևականորեն մի քիչ թնկթնկա, հերիք է: Դուք, ընկեր Եղոյան,— ասաց նա, դիմելով Հոլմսին,— հոյակապ եք, այդպես էլ կշարունակեք: Իսկ ձեզ, ընկեր Նազարյան, ո՞վ է թույլ տվել սցենարից դուրս խոսքեր ասել: Զազրախոսել բառն այստեղ կա՞... կա ծառերը ջարդել, կանաչը տրորել, արձանը հաշմել...

— Դե, էդ բոլորը առանց զազրախոսելու կլինի՞,— նեղացած ասաց Սրապը,— բա էլ որտե՞ղ մնաց դերասանի ստեղծագործական ինքնուրույնությունը, ընկեր ռեժիսոր:

— Վերջ տուր քննադատությանը,— բղավեց ռեժիսորը,— ժողովում չես:

Նա ուժգին ծափ տվեց ու գոռաց.

— Ուրեմն՝ բոլորը սկզբից: Ուշադրություն…Գնացի՛նք…

— Վախ, վա՛խ,— հայերեն հառաչեց անգլիացի նշանավոր խուզարկուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անելանելի վիճակ

Նոր դիրեկտորը շատ զգայուն ու նուրբ մարդ էր.

— Անհարմար եմ զգում ձեզ դիտողություն անել,— շիկնելով ասում էր նա իր վարորդին,— բայց երբ վարում եք մեքենան, հիշեք, որ ես մեջն եմ:

Նա միշտ կրկնում էր այդ խոսքերը, սկսած այն օրվանից, երբ աշխատանքից հետո վարորդը նրան տուն էր տարել և, կարծելով, թե դիրեկտորը դուրս եկավ, մեքենան մտցրել էր գարաժ, փակել էր դուռն ու գնացել իրենց տուն:

Եվ նոր դիրեկտորը գիշերն արթնացել էր մեքենայի մեջ, գարաժում:

— Կներեք, որ զգուշացնում եմ,— ասում էր նա վարորդին,— Բայց խնդրում եմ հաշվի առնել, որ մեր աշխատանքը չնորմայավորված աշխատանք է: Կառավարությունը մեզանից պահանջում է աշխատել գիշեր և ցերեկ: Եվ մենք էլ աշխատում ենք: Ուրեմն բացառված չէ, որ ես քնեմ ցերեկը, քանի որ գիշերն աշխատել եմ:

Եվ նույնն ասում էր կնոջը՝ հակառակ տեսանկյունից:

Ու քնում էր:

Իսկ հենց որ արթնանում էր, սկսում էր խոսել: Եվ խոսում էր մեղմ, փաղաքուշ ձայնով, հոգածությամբ: Աշխատողներին հերթով իր մոտ էր կանչում ու երկար զրուցում, հետաքրքրվում նրանց կյանքով, հոգսերով, ապրելակերպով… Վերջում ավելացնում էր, որ նրանց համարում է իր աջ ձեռքը:

— Շատ կարգին մարդ է, իսկական դեմոկրատ,— ասում էին նրա մասին առաջին օրերին:

Եվ նորից աշխատողներին իր մոտ էր կանչում, երկար զրուցում նրանց հետ, հետաքրքրվում նրանց կյանքով, հոգսերով, ապրելակերպով…

— Տարօրինակ մարդ է,— ասում էին նրա մասին հաջորդ օրերին:

Նա վախենում էր առանձնասենյակում մենակ մնալ, որովհետև չէր իմանում ինչ անել: Հենց որ հերթը վերջանում էր, դուրս էր գալիս, բռնում առաջին իսկ հանդիպած աշխատողին ու ասում էր մտազբաղ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ես ձեզ էի որոնում, ներս անցեք, հիմա կգամ..

Վերադառնում էր մի կես ժամ հետո, զարմացած նայում էր նրան, ում կանչել էր և հարցնում էր սիրալիր՝ կնճռոտելով ճակատը,

— Ներեցեք, ինչո՞վ կարող եմ ծառայել:

Դուք եք ինձ կանչել,— ամաչելով ասում էր աշխատողը:

— Ախ, հա, ներող եղեք, այնքան հոգսեր կան, նախ ուզում էի իմանալ, թե ինչ կարող եք ասել ձեր բաժնի պետի մասին... Ձեր կարծիքը ես շատ բարձր եմ գնահատում, որովհետև, այո, այո, ձեզ համարում եմ իմ աջ ձեռքը:

— Բաժնի պետը ես եմ,— ամաչելով ասում էր բաժնի պետը:

— Գիտեմ, գիտեմ… ուզում էի հարցնել բաժնի աշխատողների մասին: Եվ ընդհանրապես ձեր հոգսերի, ընտանեկան դրության, երեխաների մասին: Ներեցեք, բայց ամոթ է, միասին աշխատում ենք, բայց դեռ ինչպես հարկն է չենք ճանաչում իրար...

Բաժնի պետն անհարմար էր զգում ասել, որ այդ հարցերին ինքը պատասխանել է անցյալ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին: Եվ նորից սկսում էր պատմել նյութը հետաքրքիր դարձնելու համար ավելացնելով ընտանիքի անդամների թիվը, փոխելով զբաղմունքը, կրթական ցենզը և սոցիալական դրությունը:

Իսկ երբ մի քանի անգամ դիրեկտորը իր առանձնասենյակը հրավիրեց միջանցքում պատահաբար հայտնված երեք-չորս անծանոթ քաղաքացիների ու ստիպեց մանրամասն պատմել իրենց կենսագրությունը և տեղեկացրեց, որ նրանց համարում է իր աջ ձեռքը...

— Հիմարի մեկն է,— եզրակացրին աշխատողները:

Բայց նա բոլորովին էլ հիմար չէր: Հիմարը հիմարաբար կզբաղվեր որևէ հարցով: Բայց նա ոչնչով չէր զբաղվում:

— Տրանսպորտ է պետք,— ասում էին նրան:

— Ես տրանսպորտի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

— Թուղթ է պետք,— ասում էին նրան:

— Ես թղթի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Կադրերի հարցը պետք է վերանայել,— ասում էին նրան:

— Ես կադրերի հարցով չեմ զբաղվում,— ասում էր նա:

Եվ որպեսզի հետագայում թյուրիմացություններ չծագեն, լայն խորհրդակցություն հրավիրեց և հանդես եկավ ընդարձակ ճառով: Ասաց, որ բարեկամաբար խնդրում է ամեն դատարկ բանով չզբաղեցնել իրեն: Որ իրեն բոլորովին չեն հետաքրքրում տրանսպորտը, թուղթը, թանաքը, կադրերը, կապի միջոցները, աշխատավարձը, պարտավորությունները, ֆինանսները: Որ իրեն հետաքրքրում է երեք բան, առաջինը՝ պլանը, երկրորդը՝ պլանը, երրորդը՝ պլանը:

— Իսկ այդ պլանը ինչպե՞ս կատարենք,—- հարցրեց նոր ընդունված միամիտ մեկը:

— Չգիտեմ,— ասաց դիրեկտորը:

Եվ նա չէր կեղծում: Նա իսկապես չգիտեր:

— Հաստատ հիմար է,— պնդում էին ոմանք:

— Հաստատ հիմար չէ,— առարկում էին մյուսները: Հիմարը կասեր՝ գիտեմ:

Այդ թեմայի քննարկումը տևեց մի քանի ամիս, բայց այսպես թե այնպես աշխատողները դադարեցին դիրեկտորի առանձնասենյակը մտնել: Նրան տեսնում էին թե չէ՝ փախչում էին, մտազբաղ դեմք ընդունում և իրենց սենյակը քաշվում: Հենց որ նա մեկին բռնում էր ու իր առանձնասենյակն էր տանում, մյուսը մարդասիրությունից ու կարեկցանքից դրդված բացում էր առանձնասենյակի դուռը ու բղավում.

— Մայիս, Մոսկվայից հեռախոսով քեզ են ուզում:

— Մի րոպե,— երախտագիտությամբ ժպտում էր Մայիսն ու անհետանում:

Երբ դիրեկտորը միջանցք էր դուրս գալիս, միջանցքն ամայանում էր: Երբ ստիպված մտնում էր որևէ բաժին, աշխատողները «հիմա գալիս եմ» ասելով սրտապատառ դուրս էին փախչում սենյակից:

Զարհուրելի բան էր. ոչ ոք այլևս չէր ուզում նրան պատմել իր կենսագրությունը: Ոչ ոք այլևս չէր ուզում նրա աջ ձեռքը լինել: Եվ խեղճ դիրեկտորը այդպես, միայն ձախ ձեռքով, տնային կալանավորի պես շրջում էր իր ընդարձակ առանձնասենյակում, չիմանալով ինչ անել, սարսափելով պարտավորեցնող մենակությունից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ ի՞նչ, հնարը կարծես թե գտավ: Չքնեց ընդամենը երեք գիշեր և այնպիսի մի դիվային միջոց հորինեց, որ աշխատողները ստիպված պետք է լինեին դուրս չգալ նրա առանձնասենյակից:

Հենց հաջորդ օրը աշխատակիցների ցուցակը դնելով սեղանին, նա այբբենական կարգով երեք հոգու նկատողություն հայտարարեց, իսկ մեկին էլ խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով: Եվ որովհետև քարտուղարուհին աշխատանքի չէր գալիս, հրամաններն իր ձեռքով փակցրեց միջանցքի տախտակին: — Հիմա կգան բողոքելու,— ձեռքերը շփելով, քմծիծաղ տվեց նա:

Բայց ոչ ոք չեկավ:

Պարզվեց, որ առաջին երկուսը վաղուց ազատված են աշխատանքից, իսկ այն մեկը, որ խիստ նկատողության էր արժանացել վերջին նախազգուշացումով, մեռել էր յոթ ամիս առաջ՝ թոքերի բորբոքումից:

Երկու օր սպասելուց հետո, նա զանգահարեց երրորդին, որ նկատողություն էր ստացել:

— Ես ձեզ նկատողություն եմ հայտարարել,— շշնջաց նա,— բարի եղեք ինձ մոտ գալ:

— Չեմ գալիս:

— Ինչպե՞ս թե չեք գալիս: Դուք իրավունք չունեք: Եկեք խոսենք, խնդրում եմ:

— Չեմ ուզում խոսել:

— Ինչո՞ւ:

— Ես ձեզ հետ խոռվ եմ:

— Խոռո՞վ,— զարմացավ դիրեկտորը: Այսինքն՝ ինչպե՞ս թե խոռվ եք:

— Որովհետև ինձ նկատողություն եք հայտարարել, երբ ես գործուղման մեջ եմ եղել:

— Դե, տեսնո՞ւմ եք,— ուրախացավ դիրեկտորը: Երևի թյուրիմացություն է: Եկեք զրուցենք:

— Խոռով եմ,— համառեց պատժվածը: — Եվ վերջ:

— Երեխա մի եղեք,— խնդրեց դիրեկտորը:

Ի պատասխան՝ պատժվածը «հըմ» արեց, հասկացնելով, որ չի ուզում խոսել ու կախեց լսափողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ապշած դիրեկտորը զանգահարեց տեղկոմի նախագահին, տեղկոմի նախագահը հայտարարեց, որ ինքն էլ է խռով, որովհետև, գիտե՛ք ինչ, առանց նրա կարծիքը հարցնելու խիստ նկատողություն է հայտարարվել հանգուցյալին:

Խեղճացած դիրեկտորը ըստ ցուցակի զանգահարեց իր բոլոր աշխատողներին և սարսափով պարզեց, որ բոլոր աշխատողներն էլ խռով են իրենից:

Նա երկար նստեց լսափողը ձեռքին, գլուխը աշխատակիցների ցուցակին հակած, հետո հանկարծ ծիծաղեց բարձրաձայն, միջանցք նետվեց, հերթով բացեց բոլոր դռները ու բղավեց քրքջալով.

— Չէ, չէ, չեմ խաղում, որ խռով եք, մատներս բացեք… որ խռով եք, մատներս բացեք,,.

Եվ համառորեն նույնը պահանջեց հոգեբուժական հիվանդանոցի գլխավոր բժշկից:

— Բա ասում էիք՝ հիմար է,— նույն պահին տեղկոմի նիստում գլուխը նախատինքով օրորում էր նախագահը: Երբևէ տեսած կա՞ք, որ անխելք մարդը խելագարվի:

Եվ այդ թեման մեր հիմնարկում քննարկվում է մինչև օրս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հարգելի պատճառ

Ո՞վ կմտածեր, թե այդպիսի բան կպատահի:

Ո՞վ կսպասեր, թե մեր հիմնարկի պետն այդ օրն աշխատանքի կգա ճիշտ ժամին, առավոտյան ժամը իննին:

Ուղիղ երկու տարի, հանած արձակուրդներն ու գործուղումները, նա աշխատանքի էր գալիս ժամը տասնմեկին: Եվ մենք հիանալի գիտեինք, թե ինչու: Ընկեր Ատոմյանը աշխատանքից հետո սիրում էր խմել: Եվ որովհետև ուշ էր հարբում, ուշ էլ քնում էր:

Ահա ամբողջ գաղտնիքը:

Իսկ աշխատանքի գալիս էր բարեխղճորեն, նույնիսկ կարելի է ասել՝ չափից ավելի պարտաճանաչ կերպով՝ առավոտյան ճիշտ ժամը տասնմեկին:

Եվ որովհետև երբևէ չէր խախտում այդ ժամը, նրա գալուց հինգ րոպե առաջ մենք արդեն զբաղեցրած էինք լինում մեր տեղերը: Չխկչխկում էին փայտե ու երկաթե հաշվիչները, ցրիչներն արագ-արագ այս ու այն կողմ էին գնում, համազարկեր էին տալիս մեքենագրուհիները:

Ընկեր Ատոմյանը ժպտում էր մեզ, գլխով էր անում բարյացակամորեն և մտնում իր առանձնասենյակը:

Սկսվում էր աշխատանքային օրը:

Իսկ այդ չարաբաստիկ օրը թե ինչ է պատահում, ո՞վ կարող է իմանալ. հիվա՞նդ է լինում ընկեր Ատոմյանը, թե խմիչքի ընկերներն են բացակայում, ստույգ հայտնի չէ, բայց առավոտյան ուղիղ ժամը իննին հայտնվում է հիմնարկի շենքի առաջ:

Հայտնվում է, նայում դռան կողպեքին ու մնում զարմացած: Մոլորված քայլում է շենքի շուրջը, մի քանի անգամ կարդում է հիմնարկի անունը, մտածելով, թե գուցե սխալ տեղ է եկել և անհրաժեշտ է համարում հարցնել անցորդներից մեկին.

- Ներեցե՛ք, այսօր շաբա՞թ է, թե կիրակի:

- Երեքշաբթի է, ընկե՛ր ջան,- քայլերն արագացնելով ասում է անցորդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Չէ, այստեղ մի խորը թյուրիմացություն կա»,- մտածում է ընկեր Ատոմյանը՝ տեղավորվելով բետոնե սանդուղքին: Եվ սկսում է սպասել:

Չանցած երեսունհինգ րոպե, համերաշխորեն հորանջելով հայտնվում են շենքի պահակն ու տեղկոմի նախագահը:

- Սամսո՛ն,- ատամների արանքից հարցնում է ընկեր Ատոմյանը,- որտե՞ղ էիր:

- Կ-կինս հիվանդ էր,- կողպեքը չկարողանալով բացել՝ կակազում է պահակը:

- Դու բժի՞շկ ես: Գրավոր նկատողություն,- կտրում է դիրեկտորը:-Իսկ դո՞ւք, տեղկոմի ընկեր նախագահ...

- Տ-տրոլեյբուսը ուշացավ... տ-տրամվայը...

- Ոտքով գայիք, ինչպես ես եմ եկել,- խորհուրդ է տալիս ընկեր Ատոմյանը:-Գրավոր խիստ նկատողություն:

- Բա էդ բոլորը որ մեզ եք տալիս, մեզանից հետո եկողներին ի՞նչ եք տալու,- դուռը բացելով - հարցնում է Սամսոնը:

Նրա միամիտ հարցը անպատասխան թողնելով՝ դիրեկտորը մտնում է իր առանձնասենյակը, և հինգ րոպե անց անհոգ երգելով ընդունարան մտած քարտուղարուհի-մեքենագրուհի Սիմային կարգադրում է սեփական ձեռքով գրել նկատողություն ստանալու սեփական հրամանը:

- Ռուբե՛ն Պավլովիչ, կյանքումս առաջին անգամ ուշացել եմ և... նկատողություն,- շրթունքները հուզմունքից ներկելով՝ արդարացիորեն տրտնջում է Սիման:

- Որպեսզի առաջինը վերջինը լինի,- փիլիսոփայորեն նկատում է ընկեր Ատոմյանը:

Այնուհետև նա քարտուղարուհուն նստեցնում է ձախ կողմում, իսկ խիստ նկատողություն ստացած տեղկոմի նախագահին՝ աջ կողմում, և սկսում է անօրինակ մի հաշվեհարդար անակնկալի եկած, խուճապի մատնված մեր համերաշխ կոլեկտիվի հետ: Ընդ որում՝ ծայրահեղ ջանասիրությամբ նրան օգնում է տեղկոմի նախագահը, շփոթեցնում, խաչաձև հարցեր է տալիս ուշացած միամիտ մարդկանց, պահանջում, որ բոլորն առնվազն գրավոր խիստ նկատողություն ստանան:

- Չէ՛, չէ՛, ազնվորեն ասե՛ք, ինչո՞ւ եք ուշացել,- չարախնդորեն հարցնում է նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուշացածների պատասխանները առանձին ինքնատիպությամբ չեն փայլում: Կոլեկտիվի հիսուն տոկոսը հայտարարում է, թե հիվանդ էր կինը կամ ամուսինը, որին հետևում է տեղկոմի նախագահի քմծիծաղը.

- Դուք բժի՞շկ եք: Խիստ նկատողություն:

Մյուս հիսուն տոկոսն էլ ազնվորեն խոստովանում է, թե մեղավորը տրոլեյբուսն էր, ավտոբուսը կամ տրամվայը, որին ի պատասխան տեղկոմի նախագահը, նվիրվածորեն նայելով հիմնարկի պետին, նետում է հեգնանքով.

- Տրանսպորտը, հա՞, իսկ չէի՞ք կարող ընկեր Ատոմյանի նման ոտքով գալ: Հը՞... խիստ նկատողություն:

Ժամը տասնմեկին տասնհինգ րոպե պակաս հիմնարկի պետի զայրույթը իր գագաթնակետին հասավ, երբ առանձնասենյակի կիսաբաց դռնից լսեց Սիմայի փեսացու և համատեղության կարգով կադրերի գծով տեսուչ Մացակի ձայնը.

- Սի՛մ, ազի՛զ, շեֆն ինչպես միշտ չկա՞...

- Կա՛մ,- որոտաց Ատոմյանը,- ես կամ, իսկ դուք հեռացված եք աշխատանքից:

- Հեռացնելու համար տեղկոմի համաձայնություն է պետք,- նկատեց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

- Ես համաձայն եմ,- ասաց տեղկոմի նախագահը:-Օրվա վերջին որոշումը պատրաստ կլինի: Մեր կոչումն է օգնել դիրեկցիային՝ հիմնարկում աշխատանքային օրինակելի կարգ ու կանոն հաստատելու համար:

- Տեղկոմի նախագահը դեռ տեղկոմ չէ,- հեգնանքով նետեց Սիման:

Տեղկոմի նախագահը նրան նայեց սպանիչ արհամարհանքով:

- Պա՛հ,- ասաց նա,- այ քեզ նորություն: Տեղկոմը այդ ես եմ: -Եվ այնպիսի կեցվածք ընդունեց ինչպիսին հավանաբար Լյուդովիկոս թագավորներից մեկն էր ընդունել «պետությունն այդ ես եմ» նախադասությունն արտասանելուց հետո:

Հաջորդ տասնհինգ րոպեում տեղկոմի համաձայնությամբ աշխատանքից հեռացվեցին նաև տնտեսվար Միտուշը և դիրեկտորի տեղակալ Հայկազը, որն անցյալ ժողովում մեծ-մեծ խոսում էր գիտատեխնիկական հեղափոխության մասին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջոհերին չօգնեց ոչ մի պատճառաբանություն:

- Ես մատտեխսնաբ էի գնացել,- ասաց Միտուշը:

- Աղբի մեքենային էի սպասում,- արդարացավ Հայկազը: Բայց ընկեր Ատոմյանն անդրդվելի էր:

- Պարտավոր էիք ինձ տեղյակ պահել,- կտրեց նա:-Դրանք հարգելի պատճառաբանություններ չեն:

Եվ ահա այդ շիկացած մթնոլորտում, երբ նկատողություն, խիստ նկատողություն ստացած և աշխատանքից հեռացված ողջ կոլեկտիվը ընդունարանում հավաքված մռայլ լռում էր, ինչպես քրմերի երգչախումբը «Աիդա» օպերայի երկրորդ գործողության երրորդ պատկերում, դուռը բացվեց և ներս մտավ ֆիզկուլտհրահանգիչ Շահենը:

- Օ՛, հավաքվել եք ՊԱՊ-ի նորմաները հանձնելո՞ւ,- ուրախ ժպտալով հարցրեց նա:

Եվ երգչախումբը նրան նայեց կարեկցանքով, սպասումով և չարախնդությամբ:

- Իսկ տատիդ հարսանիքը միտդ չի՞ գալիս,- մեներգեց աշխատանքից հեռացված Միտուշը:

- Որևէ հարգելի պատճա՛ռ գտիր, թշվառակա՛ն,- շշնջաց խիստ նկատողություն ստացած գրադարանավարը,- պետն այսօր ժամը իննին է աշխատանքի եկել:

Շահենը գունատվեց, ետ նայեց դեպի դուռը, տատանվեց մի պահ, նայեց կոլեկտիվին, ամաչեց ու երերուն քայլերով մտավ առանձնասենյակ:

Եվ երգչախումբը շունչը պահեց կիսաբաց դռան առաջ:

- Որտե՞ղ էիր,- գլուխը ծանրորեն բարձրացրեց ընկեր Ատոմյանը:

Ֆիզկուլտհրահանգիչը լուռ էր:

- Գուցե կինդ հիվա՞նդ էր,- հեգնեց տեղկոմի նախագահը:

- Ո՛չ,- ասաց Շահենը:

- Գուցե տրոլեյբո՞ւսն էր ուշանում,- խայթեց քարտուղար-մեքենագրուհի Սիման, որի աչքին աշխարհը մթնել էր՝ կադրերի գծով տեսուչ Մացակի ազատման հրամանը իր ձեռքով գրելուց հետո, և անգիտակցաբար տեղկոմի նախագահի ճամբարն էր անցել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ է, ֆիզկուլտկոմիտե՞ էին կանչել,- արհամարհանքով հուշեց հիմնարկի պետը:

- Ո՛չ, ընկեր Ատոմյան:

- Ուրեմն ինչո՞ւ ես ուշացել, ասա:

- Անհարմար եմ զգում ասել,- մրմնջաց Շահենը:

- Ասա՛, ասում եմ:

- Անկեղծորե՞ն ասեմ:

- Իհարկե, անկեղծորեն:

- Խմել էի:

- Ի՞նչ: Ինչ ասացի՞ր...

- Երեկ շատ էի խմել... Երկար... առավոտը չկարողացա վեր կենալ:

- Հեռացնել,- ֆիզկուլտհրահանգչի լկտիությունից ցնցված բղավեց տեղկոմի նախագահը:- Տեղկոմը համաձայն է:

- Հեռացնել,- ճչաց քարտուղար-մեքենագրուհի Սիման:

Իսկ ընկեր Ատոմյանը լուռ էր: Նա Շահենին էր նայում համակրանքով, ներողամտությամբ և խորին ըմբռնումով:

- Իսկ հիմա ո՞նց ես,- հարցրեց նա:-Գլուխդ չի՞ ցավում:

- Լավ եմ, ընկեր Ատոմյան,- ասաց Շահենը:

- Դե, գնա՛, գնա՛ աշխատիր,- գլխով արեց ընկեր Ատոմյանը:

Կոլեկտիվն ալեկոծվեց, մեջը քար նետված ջրափոսի նման, երբ Շահենը ընդունարան մտավ:

- Հեռացրի՞ն,- կեղծ կարեկցանքով հարցրեց տնտեսվար Միտուշը:

- Ինչո՞ւ պիտի հեռացնեին,- ժպտաց Շահենը,- ես հարգելի պատճառ ունեի: Խմել էի երեկ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ դատապարտված կոլեկտիվը զարմանքի ճիչ արձակեց, ինչպես քրմերի երգչախումբը «Աիդա» օպերայի երրորդ գործողության երկրորդ պատկերում, երբ հայտնի է դառնում Ռադամեսի դավաճանությունը:

1977թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հնազանդեցնողը

Սենյակի երեք պատերին, ամենուրեք, փակցված էին հին ու նոր ազդագրեր, որոնց վրա հիմնականում գազաններ էին՝ ահասարսուռ, բաց երախներով, երկար, կարմիր լեզուներով: Եվ պլակատային այդ ողջ գրականության մեջ, մտրակը ձեռքին, տարբեր դիրքերով կանգնած էր վերոհիշյալ գազանների հնազանդեցնողը, հաղթամարմին Սմբատ Ահեղյանը՝ անփույթ, հմայիչ, կարելի է ասել՝ կախարդիչ ժպիտով: Անվախ, քաջակորով այդ մարդը երկու-երեք նկարում ժպտում էր նույնիսկ առյուծի երախից, ուր չգիտես ինչու մտցրել էր իր գլուխը:

Սենյակի չորրորդ պատը գոյություն չուներ: Փոխարենը վանդակաճաղեր էին, որոնց ետևում, նեղլիկ վանդակների մեջ, արագ-գործնական և նյարդային քայլերով ետ ու առաջ էին անում առյուծն ու վագրը, նման այն հիմնարկի պետին, որը քարտուղարուհուն ուղարկել է տեղակալի ետևից և անհամբեր սպասում է, որ հենց տեղակալը ներս մտնի, նկատողություն հայտարարի:

Վանդակաճաղի մոտ, խոր բազկաթոռի մեջ ընկղմված, ոտքը ոտքին գցած, նստած էր այդ ողջ տնտեսության տերը, գազանների նշանավոր հնազանդեցնող Սմբատ Ահեղյանը: Նրա առջև, ցածրիկ սեղանիկին կոթնած նստած էր ռադիոյի թղթակիցը, գրեթե պատանի, որը նկատելիորեն գունատված դեմքով ստեպ-ստեպ երկչոտ հայացք էր նետում վանդակաճաղերին:

— Սկսե՞նք, Սմբատ Տաճատիչ,— հարցրեց տղան՝ ձեռքը մագնիտոֆոնի կոճակին տանելով:

— Սկսենք,— որոտաց հնազանդեցնողի բասը:

Տղան ասես կերպարանափոխվեց, չգիտես ինչու ուղղեց փողկապը, հազաց, ժպտաց բարեհամբույր և մի քիչ էլ ներողամտորեն, սեղմեց մագնիտոֆոնի կոճակը և թեքվեց միկրոֆոնի վրա:

— Հարգելի ռադիոլսողներ,— ասաց նա տաք, մտերմիկ ձայնով,— մեր միկրոֆոնը գտնվում է պետական կրկեսում, գազանների ականավոր, այսպես ասած՝ սանձահարող, հանրաճանաչ արտիստ, հայ դյուցազն Սմբատ Ահեղյանի աշխատասենյակում:

Թղթակցի ձայնն օտար էր, առյուծն զգաց այդ և ահեղ մի մռնչյուն արձակեց: Թղթակիցը ցնցվեց, բարձրացրեց գլուխը, տագնապով վանդակին նայեց, բայց հանդիպելով հնազանդեցնողի ներողամիտ ժպիտին, շարունակեց ռեպորտաժը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սմբատ Տաճատիչի թիկունքում, իմ դիմաց տեղավորված են վագրի և առյուծի վանդակները: Ձեզ հասնո՞ւմ է նրանց ահավոր մռնչյունը: Նա մի պահ լռեց, որպեսզի ժապավենը արձանագրի մռնչյունը: Օ, սա մի հիասքանչ տեսարան է՝ վարժեցնողն իր սաների հետ: Եվ ահա, թանկագին ռադիոլսողներ, ձեր ցանկությամբ ուզում եմ մի քանի հարց տալ մեր սիրելի վարպետին: Թույլ կտա՞ք, Տաճատ Սմբատիչ:

— Սմբատ Տաճատիչ,— ուղղեց հնազանդեցնողը:

— Դե, իհարկե, ներեցեք, Սմբատ Տաճատիչ, ձեր և ձեր սաների համբավը տարածված է ողջ աշխարհում: Ձեր գազանները հասել են ամենուրեք, կանգնել ամենաբարձր պատվանդաններին: Դուք համառ ու քրտնաջան աշխատանքով կարողացել եք...— թղթակիցը ոգևորվելով մոտեցավ վանդակին, բայց հուժկու մռնչյունը նրան կրկին դեպի մագնիտոֆոնը նետեց, ու նա շարունակեց գրեթե իներցիայով, կակազելով,— ըը՛, կարողացել եք հնազանդեցնել անապատի հզոր տիրակալներին:

— Տեղդ, Ինգա,— առանց շարժվելու, ծուլորեն նետեց վարժեցնողը:

Թղթակիցը ոգևորվեց.

— Օ՛, եթե այս վայրկյանին, հարգելի ռադիոլսողներ, տեսնեիք, թե Ինգա անունով հրեշն ինչպես սարսափով ետ դարձավ և ինչպես է քծնանքով տարուբերում պոչը, ապա բոլորդ էլ ինձ հետ կծափահարեիք վարպետին:

— Դե դա դատարկ բան է,— համեստորեն նկատեց վարժեցնողը:

— Սմբատ Տաճատիչ,— խաղացկուն ձայնով շարունակեց թղթակիցը,— ասացեք խնդրեմ, ինչպե՞ս եք կարողանում զսպել, հնազանդեցնել այս… այս գազաններին: Մի՞թե չեք վախենում, որ պատառոտեն ձեզ:

— Ըը՛մ, գազանները հետաքրքիր բնավորություն ունեն,— ասաց վարժեցնողը,— նրանք ահեղ են վախկոտների հանդեպ: Նրանք, այո, այո՛, ճանաչում են վախկոտներին և անմիջապես հարձակվում են նրանց վրա: Ակբար, պառկիր:

Վագրը, որին ուղղված էին հնազանդեցնողի խոսքերը, կաղկանձեց խղճալի ու մեկնվեց հատակին:

— Օ՛, իսկապես, անմիջապես պառկեց գազանը,— հուզված արձագանքեց թղթակիցը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Իսկ ուժեղ մարդկանցից նրանք վախենում են,— ժպտաց Ահեղյանը,— ու թեև մեծ դժվարությամբ, սակայն հնազանդվում են ի վերջո: Ի՛նգա, նստիր անմիջապես,— որոտաց նա ճաղերին զարկվող առյուծի վրա,— Այդպե՞ս:

— Սմբատ Տաճատիչ, մեր ունկնդիրներին հետաքրքրում է, թե բնավորության ինչպիսի գծեր, հատկանիշներ են պետք գազաններ վարժեցնող դառնալու համար: Այդ հարցի հետ թղթակիցը բարձրացավ տեղից և միկրոֆոնն ավելի մոտեցրեց Ահեղյանին:

— Նստի՛ր, ասում եմ,— գոռաց Ահեղյանը:

Թղթակիցը սարսափահար ընկավ աթոռին:

— Ձեզ հետ չեմ, երիտասարդ,— ծիծաղեց վարժեցնողը,— պարզապես պստիկը չարություններ է անում: Ուրեմն, այսպես՝ գազաններ վարժեցնելու գործին նվիրվող մարդը նախ պետք է ուժեղ կամք ունենա: Ընդգծում եմ՝ ուժեղ: Ավելին՝ անկոտրում, համառ կամք: Նստի՛ր անմիջապես,— գոռաց նա, բայց տեսնելով, որ թղթակիցը կրկին վախեցած նստեց աթոռին, ժպտաց: — Ձեզ հետ չեմ, երիտասարդ: Եվ պետք է լինի քաջ, աներկյուղ, հպարտ: Ընդգծում եմ՝ հպարտ: Եթե նույնիսկ ինչ-որ պահի նա երկյուղ զգա, ոչ մի դեպքում չպետք է ցույց տա, թե վախենում է: Այլապես վերջ, ֆինիշ, ինչպես ասում էր իմ հանգուցյալ մարզիչ Կորյուն Ասլանիչ Պարթևյանը:

— Ինչպե՞ս թե, ուրեմն, նա…— կմկմաց թղթակիցը:

— Այո, նրան կերավ հենց այս Ինգան: Էռիր, փիսիկ,— քնքշորեն ասաց նա առյուծին, որն իր անունը լսելով, գոմոռաց ու լայն բացեց երախը՝ ասես ատամնատեխնիկի հրահանգով ցուցադրելով ահռելի ժանիքները:

—Ինչպե՞ս թե... կերավ,— մրմնջաց թղթակիցը:

— Սովորականի պես,— ուսերը թոթվեց վարժեցնողը: — Կորյուն Ասլանիչն Ինգային վարժեցնում էր մի բարդ համարի: Արտիստը գլուխը մտցնում է գազանի երախը: Ապահովության համար Կորյուն Ասլանիչը փորձերի ժամանակ միշտ ինձ էր առաջարկում գլուխս Ինգայի բերանը տանել: Եվ առյուծին ստիպում էր ծնոտները սեղմել այնքան, որ ես ողջ մնամ:

— Եվ ի՞նչ...

— Եվ այն, որ երբ ելույթի ժամանակ ինքը գլուխը գազանի բերանը տարավ, առյուծը ճշտությամբ կատարեց նրա հրահանգները, երախը փակեց ճիշտ այնպես, ինչպես վարժվել էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Բա ինչպե՞ս... ը ը կերավ,— կակազեց թղթակիցը:

— Բանն այն է, որ իմ գլուխը բավականին փոքր է Կորյուն Ասլանիչի գլխից, հասկանո՞ւմ եք,— աչքով արեց Ահեղյանը: Տեղդ, անկո՛ւշտ,— մեղմորեն սաստեց նա Ինգային:

— Եվ... այդքանից հետո դուք չե՞ք վախենում նրա հետ աշխատել,— սարսափով լի աչքերը չհեռացնելով առյուծից, հարցրեց թղթակիցը,

Ահեղյանը ժպտաց,

— Վախենալու ի՞նչ կա: Այն էլ ասեմ, որ Ինգան իմ գազանների մեջ ամենախելոքն է: Տես ինչպես է կոտրատվում: Նա արդեն գիտե, որ իր մասին եմ խոսում: Ավազա՛կ: Ինչ քնքուշն է, չէ՞...

— Շշ՛...շա՛տ...— գլխով արեց թղթակիցը: Իսկ վարժեցնողն ուրիշ ի՞նչ հատկություններ պետք է ունենա, Սմբատ Տաճատիչ:

Ահեղյանը բարձրացավ տեղից, ձեռքերը մեջքին դրեց, ձգվեց, ապա նստեց ու շարունակեց:

— Ես արդեն ասացի՝ վարժեցնողը պետք է ունենա կամք, քաջություն, համառություն, հպարտություն, ուժ, ներքին մեծ զսպվածություն, գերարագ ռեակցիա՝ վտանգից խուսափելու և այն կանխելու համար, երկաթե...

«Երկաթե» բառի վրա Ահեղյանը հանկարծ պատանու թեթևությամբ ցատկեց տեղից, ձգվեց, հետո կծկվեց մի տեսակ և աչքերը չգիտես ինչու դարձան թախծոտ ու աղերսական:

Թղթակիցը զարմացած նայեց այդ կերպարանափոխությանը և վարժեցնողի հայացքի ուղղությամբ ետ նայելով, դռան մեջ տեսավ նիհարիկ, կարճահասակ մի կնոջ, որի աչքերը փայլում էին չարությամբ:

— Երկաթե ի՞նչ,— ինքնաբերաբար հարցրեց թղթակիցը, հայացքը դարձնելով մագնիտոֆոնի սահող ժապավենին:

— Երկաթե...— թավ ձայնով սկսեց Ահեղյանը և հանկարծ վայրկենապես անցավ քնքուշ բարիտոնի: Լսում եմ, Էլյա ջան:

— Ջանդ քեզ պահիր,— սեղմված շրթունքների արանքից նետեց փոքրիկ-մոքրիկ կինը,— դեռ ինձ շա՞տ պետք է սպասեցնես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Էլյա ջան,— այնքան բարակ ձայնով սկսեց վարժեցնողը, որ թղթակիցն ակամա չորս կողմը նայեց, որոնելով խոսողին,— Էլյա ջան, ը-ընկերը ռ-ռադիոյից է, մ-մենք, մ-մենք...

— Ուրախ եմ,— սպանիչ ժպիտով, բոլորովին էլ ոչ ուրախ կտրեց կինը: Ուրեմն, չե՞ս գալիս: Հիանալի է: Այդ դեպքում ես գնում եմ:

Ահավոր մի լռություն տիրեց սենյակում: Առյուծն ու վագրն էլ չգիտես ինչու սսկվել-մնացել էին վանդակների հեռավոր անկյուններում:

— Գալիս եմ, ինչպե՞ս չեմ գալիս,— արդեն շատ բարակ, լիրիկական սոպրանոյով երգեց վարժեցնողը,— ինչպե՞ս կարող եմ չգալ, հոգյակս...— Նա այս ու այն կողմ ընկավ, աճպարարի ճարպկությամբ հայտնաբերելով պիջակն ու գլխարկը:

— Գալիս եմ...

Եվ այստեղ թղթակիցն զգաց, որ հաղորդումը ձախողվում է: Միկրոֆոնը որպես ջահ ձեռքին բռնած, նա կտրեց վարժեցնողի ճանապարհը և կանգնելով նրա ու փոքրիկ-մոքրիկ կնոջ միջև, հարցրեց մուրացկանի համառությամբ.

— Երկաթե ի՞նչ, Սմբատ Տաճատիչ:

— Ի՞նչ երկաթ, է...— դեռևս բարակ ձայնով նեղսրտեց հնազանդեցնողը՝ նվիրված աչքերը թղթակցի գլխի վրայով հառած հեռացող կնոջը:

— Վարժեցնողը երկաթե ի՞նչ պետք է ունենա...

— Կամք, երիտասարդ,— որոտաց հնազանդեցնողը,— վճռականություն, անվախ սիրտ և հպարտություն: Ընդգծում եմ՝ հպարտություն: — Եկա, Էլյա ջան... արդեն քեզ մոտ եմ:

Թղթակիցը, որին Սմբատ Տաճատիչն անցնելիս անզգուշորեն մի կողմ էր նետել, ասես երազի մեջ, երերալով մոտեցավ մագնիտոֆոնին.

— Հարգելի ռադիոլսողներ,— ասաց նա՝ վագրի ու առյուծի ահավոր մռնչյունների տակ ցուցաբերելով երկաթե կամք, վճռականություն և հնազանդեցնողին հատուկ մյուս բոլոր հատկությունները,— սրանով թույլ տվեք ավարտել մեր հարցազրույցը պետական կրկեսից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իմ խելոք բալիկները

Խենթի տեղ կդնեն այն մարդուն, ով հանկարծ հարցնի խելո՞ք երեխաներն են լավ, թե չար, չլսող, անկարգ երեխաները:

Կասեն դա նման է տափակ սրամտություններին, երբ մեկն ասում է.

- Ավելի լավ է մարդ կուշտ լինի, քան քաղցած:

- Ավելի լավ է մարդ հարուստ լինի, քան աղքատ:

- Ավելի լավ է մարդ գլխին մազ ունենա, քան չունենա:

Եվ այլն և այլն:

Կասեն՝ իհարկե խելոք երեխաներն ավելի լավ են: Դա՞ ինչ հարց է:

Եվ կսխալվեն:

Ես էլ նախկինում հավատացած էի, թե խելոք երեխաներն ավելի լավ են, քան...

Բայց հիմա ամենևին էլ այդ կարծիքին չեմ:

Որովհետև իմ երեխաները խելոք երեխաներ են:

Դա միայն իմ կարծիքը չէ: Ես գիտեմ, բոլոր ծնողներն էլ հիացած են իրենց երեխաներով: Բայց նրանց մեջ, թերևս, ես բոլորից շատ այդ իրավունքը ունեմ: Իմ երեխաները իսկապես խելոք են: Փորձեք խաղի ամենաթունդ պահին երեխային կանչել բակից: Նա ձեզ այնպիսի պատասխաններ կտա, որ մի շաբաթ գետինը կմտնեք, կամաչեք հարևանների աչքին երևալ: Բայց իմ տղաները... Երկրորդ անգամ ձայնս չեք լսի: Անմիջապես հայտնվում են վերևում: Կամ աղջիկս՝ մեծը: Հենց նկատեց, որ մի քիչ անտրամադիր եմ, անմիջապես ինքն է ափսեները լվանում, հատակը մաքրում, եղբայրներին ճաշ տալիս: Եվ երեքն էլ հավաքվում են շուրջս:

— Մայրիկ ջան, ի՞նչ անենք, որ դու քեզ լավ զգաս,— ասում է անհանգստացած աղջիկս:

— Գնա՞մ խանութից մածուն բերեմ,— տեղից վեր է թռչում ավագ որդիս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ փոքրիկս գրկում է ինձ, սեղմվում է այնպես քնքուշ, նայում է ինձ այնքան սիրով ու նվիրված, որ սիրտս ուռչում է հուզմունքից:

— Դու աշխարհի ամենալավ մայրիկն ես,— շշնջում է նա՝ համբուրելով ձեռքերս:

Ամենալավը չգիտեմ, բայց մայրերից թերևս ամենաերջանիկն էի ես... մինչև երեկ:

Իսկ երեկ ահա թե ինչ պատահեց: Սրտի նոպա ունեցա և, ինչպես լինում է նման դեպքերում, տրամադրությունս ընկավ: Հանկարծ մտածեցի, որ մի օր այ այսպես, դարձյալ սրտի նոպա կունենամ, ավելի ուժգին և... և երեխաներս կորբանան: Չգիտեմ ինչու, բայց հանկարծ այնպես խղճացի ինձ: Այսինքն, ճիշտն ասած, ավելի շատ երեխաներիս խղճացի: Պատկերացրի, թե նրանք որքան են վշտանալու, ինչպես են ողբալու, ինչպես են խեղճանալու կյանքում և նստեցի ու մի լավ լաց եղա: Հետո ամուսնուս խղճացի: Ինչպե՞ս պետք է պահի-պահպանի երեխաներին: Երեք երեխա: Իհարկե, ստիպված կլինի ամուսնանալ: Միշտ է, երբ խոսք է լինում այդ մասին, նա միշտ կատակում է, թե խելքը գլխին մարդը մի անգամ ամուսնանալուց հետո նման սխալ երկրորդ անգամ թույլ չի տա, բայց չէ, կտխրի, կտխրի ու կամուսնանա: Ես հո նրան լավ գիտեմ, ամեն ինչ կանի հանուն երեխաների: Եվ խեղճ մարդը կմնա երկու կրակի արանքում: Մի կողմից նոր, ջահել կինը, մյուս կողմից երեք երեխաները: Այդ նորը կպահի՞ երեխաներին, կխնամի՞ այնպես, ինչպես ես էի խնամում (այդ չարաբաստիկ «էի» արտահայտության վրա նորից սրտակեղեք լաց եղա), մայր կդառնա՞ իմ լավ, իմ խելոք բալիկների համար: Բայց ենթադրենք թե ուզենա: Ասենք՝ այնքան սիրի ամուսնուս, որ ցանկանա մայր դառնալ իմ զավակներին: Զավակներս կընդունե՞ն նրան: Այն էլ ինձանից հետո: Այնպիսի մորից հետո, որին նրանք աստվածացնում են: Չէ, իհարկե: Նրանք այնքան էլ փոքր չեն, որ հայրը խաբի, ասի, իբր իրենց մայրիկն է, Մոսկվայից է եկել: Արդեն մեծ են երեխաներս և ինձ ոչ ոքի, ոչ ոքի հետ չեն փոխի: Երբեք:

Անկեղծ ասած, այդ միտքը հանգստացրեց ինձ: Բայց անմիջապես էլ ակամա խղճահարությամբ լցվեցի այն մյուսի, ջահել կնոջ նկատմամբ, որը փաստորեն ինչ-որ տեղ զոհելով իրեն, ուրախություն չի գտնելու մեր ընտանիքում:

Օրինակը հենց մեր դիմացի պատշգամբում է: Ջահել, գեղեցիկ կին է: Սիրելով և հավանաբար նաև խղճալով երկու երեխաների հետ միայնակ մնացած մեր հարևանին, ամուսնացել է հետը, ամեն ինչ անում է երեխաների համար, ամեն ինչ՝ լողացնում է, հագցնում, կերակրում, ավելի լավ է խնամում, պահում, քան նրանց հանգուցյալ մայրը: Եվ ի՞նչ, վարձատրվում է միայն ապերախտությամբ: Աղջիկները նրա կյանքը թունավորում են, հալածում, բամբասում, հետապնդում են: Չեն թողնում հոր հետ տնից դուրս գա, չեն թողնում մազերը հարդարի, նոր հագուստ հագնի: Ամուսինը հանգուցյալ կնոջ մուշտակը նոր կնոջն էր տվել: Պարզապես պատառոտելով պոկեցին վրայից, հետն էլ պատշգամբից կախված ողբաձայն հայտնելով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

աշխարհին, թե նոր մայրը ծեծում է իրենց, քաղցած է թողնում, թե ուզում է թունավորել իրենց և թե հայրն էլ դանակ է սրում, իրենց համոզում է քաղաքից դուրս զբոսանքի գնալ, որ սպանի Հրազդանի ձորում:

Կարճ ասած՝ դժոխք է դարձել տունը:

Իսկ եթե նույնը նաև մե՞ր տանը կատարվի: Ի՞նչ կլինի իմ խեղճ ամուսնու վիճակը, մտածեցի ես: Հարկավոր է խոսել, անպայման խոսել երեխաների հետ:

Կանչեցի նրանց, գրկեցի մեկ-մեկ, համբուրեցի ու լաց եղա:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ ջան,— անհանգստացան նրանք:

— Բալիկներ ջան,— ասացի ես: Գիտեք, որ ես հիվանդ եմ, արդեն մեծ եք, պետք է հասկանաք, որ հնարավոր է ամեն ինչ, հնարավոր է, որ ես մահանամ:

— Ինչ ես ասում, մայրիկ ջան,— լաց եղավ աղջիկս,— ոչինչ էլ չի լինի, այ կտեսնես, կառողջանաս:

— Դեղ բերե՞մ,— իսկույն տեղից վեր թռավ ավագ որդիս: — Խմիր, կանցնի, մայրիկ ջան:

— Չի անցնի,— բարկացա ես: Եվ լռեք, երբ ձեզ հետ մեծերը խոսում են:

Ախր խելոք են իմ բալիկները: Լռեցին անմիջապես և տխուր-տխուր ինձ են նայում:

— Բա ես առանց քեզ ի՞նչ կանեմ, մայրիկ ջան,— վախեցած թնկթնկաց փոքրս:

Գրկեցի նրան և աշխատելով պահել արժանապատվությունս , հեկեկոցս խեղդելով ասացի.

— Այ, հենց դրա համար էլ հավաքել եմ ձեզ, իմ զավակներ: Եվ ուզում եմ լրջորեն խոսել ձեզ հետ: Գիտեմ, սիրում եք ձեր հորը, և նա արժանի է դրան: Երբ ես... ես չլինեմ,— նկատելով, որ նրանք կրկին ուզում են բողոքել, բարձրացրի ձայնս,— երբ ես չլինեմ, ուզում եմ, որ դուք ավելի խելոք լինեք, ավելի սիրեք ու հարգեք ձեր հայրիկին: Խոստացեք, որ այդպես կլինի:

— Խոստանում ենք,— միաբերան բացականչեցին իմ խելոք բալիկները:

— Նա դեռ երիտասարդ է,— ասացի մեծահոգության լացակումած պոռթկումով,— և հավանաբար նոր մայրիկ կբերի ձեզ համար:

— Մենք նոր մայրիկ չենք ուզում,— հուսահատ աղմկեցին նրանք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Պիտի ուզեք,— ինչ-որ ներքին ուրախությամբ, բայց այնուամենայնիվ ջղայնացա ես,— եթե ինձ սիրում եք, պիտի ուզեք: Մի՞թե պետք է նմանվեք մեր դիմացի պատշգամբի չար աղջիկներին: Մի՞թե դուք իմ զավակները չեք: Մի՞թե կարող եք վշտացնել ձեր հորը, չհարգել ձեզ խնամող այդ նոր մայրիկին: Ընդհակառակը, պետք է այնպես պահեք ձեզ, որ այդ խեղճ կինը լավ զգա այստեղ, երջանիկ լինի: Խոստացեք, որ այդպես կլինի:

— Խոստանում ենք,— կամացուկ ասացին նրանք:

— Ավելի բարձր և անկեղծ,— իմ մեծահոգությունից շնչասպառ պահանջեցի ես:

— Խոստանում ենք,— ոգևորված, անկեղծությամբ երդվեցին երեխաներս:

Եվ հանկարծ զգացի, որ չափն անցել եմ:

— Այ, հիմա արդեն հանգիստ եմ, — ասացի՝ զգալով, որ սիրտս ուր որ է կպայթի:

— Ախր ես ի՞նչ անեմ, նոր մայրիկ չեմ ուզում,— բարձրաձայն լաց եղավ փոքրիկս՝ ասես կրկին կյանք պարգևելով ինձ:

Բայց մեծերը անմիջապես հարձակվեցին նրա վրա:

— Ձայնդ կտրիր, ինչպես մայրիկն ասում է, այնպես էլ կլինի, — սաստեց աղջիկս:

— Ի՞նչ է, մայրիկին պետք է վշտացնե՞ս,— բարկացավ ավագ որդիս,— կսատկեցնեմ, եթե մեր նոր մայրիկին չլսես:

— Լավ, լավ, կլսեմ,— վախեցավ փոքրիկս,— բա ո՞վ ճաշ կեփի ինձ համար,— թույլ-թույլ առարկեց նա:

— Ես կեփեմ,— ասաց մեծ աղջիկս, — հետո, դու որտեղի՞ց գիտես, որ նոր մայրիկը ավելի լավ ճաշեր չի եփի: Գուցե մենք խնդրենք, որ հայրիկը վարպետ խոհարարուհի բերի մեզ համար:

— Բա ինձ ո՞վ դպրոց կտանի,— արդեն պարզապես սեփական խիղճը հանգստացնելու համար, կամացուկ ասաց փոքրիկս:

— Ես կտանեմ,— վճռեց ավագ որդիս: Հետո դու մի մոռացիր, որ տանը մեզ շտապեցնող չի լինի այլևս և դպրոցից վերադառնալիս կգնանք կինո՝ նոր մուլտեր կնայենք, կմտնենք խանութները, կթափառենք փողոցներում, ծամոն կառնենք, կծամենք:

— Ինչ լավ կլինի,— անկեղծ ուրախացավ փոքրիկս: Իսկ դո՞ւ ինձ կլողացնես, քույրիկ ջան, թե՞ նոր մայրիկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Չէ մի, նոր մայրիկին պիտի անհանգստացնենք,— ասաց աղջիկս,— ես կլողացնեմ քեզ, կպառկեմ կողքիդ, հեքիաթներ կպատմեմ:

— Իսկ ես կլուծեմ խնդիրներդ և իմ լուսանկարչական ապարատը քեզ կտամ,— քրոջից ետ չմնալու համար ասաց ավագ որդիս, որն իմ ողջ ժամանակ (թյո՛ւ) իր ապարատը նույնիսկ հեռվից ցույց չէր տալիս նրան:

Ոգևորված և հուզված գրկեցին իրար և օրորվելով բարձրաձայն սկսեցին երազել իրենց նոր կյանքի, նոր մայրիկի ու նոր պայծառ հեռանկարների մասին, որ նրանց առջև բացում էր իմ վաղաժամ մահը:

Սիրտս կանգ առավ զայրույթից՝ տեսնելով ապերախտության այդ ցույցը: Բայց մի վայրկյան անց արդեն ծիծաղում էի: Ծիծաղում էի սրտանց, լիաթոք, առողջ ծիծաղով, այնպես, որ երեխաները շրջվել ու զարմանքախառն հիասթափությամբ ինձ էին նայում:

Ախր չէ՞ որ ես նրանց հասցրեցի այստեղ:

Չէ, պետք չէ հիվանդանալ:

Չէ, եթե հիվանդ էլ ես, ոչ ոքի չպետք է ասել:

Եվ ամենակարևորը... Պետք է աշխատես, որ երեխաներդ այնքան էլ խելոք, պատրաստակամ ու լսող չլինեն:

Հավատացեք ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երեք անհայտով հավասարում

/Հոգեբանական դետեկտիվ՝ հումանիտար թեքումով/

Նստած էին իրար դիմաց կապիտան Աբելյանը և ուսանող պրակտիկանտ Սաթյանը: Նստած էին իրար դիմաց սերունդները: Հանցագործ տարրերի դեմ մղված անողոք կռիվներում թրծված, մեծ փորձ ձեռք բերած և փոխարենը գանգուր մազերից զրկված հին հետախույզը և նոր-նոր կյանք մտնող գանգրահեր պատանին, որն անհամբեր դեպի կռիվ էր մղվում, սարսափելով այն մտքից, թե մինչև ավարտի համալսարանը, աշխարհում այլևս քիչ թե շատ խելքը գլխին հանցագործ չի մնա:

Կապիտանը շատ էր կանգնել վտանգի դեմ-հանդիման և վախ ասած բանը չուներ, բայց հոգու խորքում չէր կարող գոնե իրեն չխոստովանել, որ երկյուղ էր կրում այդ նորաթուխ պրակտիկանտից: Հենց որ Սաթյանը ներս էր մտնում, կապիտանը ցնցվում էր ակամա: Նա ցնցվեց նաև հիմա:

— Մի կարգին գործ տվեք, ընկեր Աբելյան,— ասաց Սաթյանը:

— Նոր գո՞րծ: Իսկ այն սպանության գործն ի՞նչ արեցիր:

— Բացահայտեցի, ընկեր Աբելյան: Հանցագործը խոստովանեց և հնդկական փափուկ օթոցի միջից հանեց ու ինձ տվեց ֆիննական դանակը, որի շեղբի վրա տուժողի արյունն էր:

Կապիտանը կարմրատակեց:

— Բայց ես հարյուր անգամ հարցաքննել եմ այդ սրիկային նույն այդ հնդկական փափուկ օթոցին նստած, ինչո՞ւ ինձ չխոստովանեց:

Պրակտիկանտը թոթվեց ուսերը:

— Մի կարգին խճողված գործ տվեք, ընկեր Աբելյան,— նորից խնդրեց նա:

Կապիտանը քորեց նախկին գանգրահեր գլուխը:

— Սրապյանից վերցրու ոսկերչական խանութի կողոպուտի գործը: Չբացված գործ է, ծանոթացիր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ո՞րն է չբացված,— ծիծաղեց Սաթյանը: Մի թեթև պատմեց, ասացի գնացեք խանութի վարիչի տուն, թթվի տակառը կրկնակի հատակ ունի: Զարդերն այնտեղ են:

— Հետո՞,— գունատվեց կապիտանը:

— Քիչ առաջ զանգահարեց: Ասաց՝ զարդերը հայտնաբերել են, բայց մի քիչ կուշանան, որովհետև արտակարգ թթու է:

Կապիտան Աբելյանը թթու հայացքով նայեց սկսնակ հետախույզին:

— Հիմա ինձնից ի՞նչ ես ուզում, այ տղա,— հարցրեց անկեղծորեն:

— Գոնե մի քիչ լուրջ հանցագործ, մի քիչ բարդ, խճճված գործ, դե, ինչպես ասեմ, գոնե երկու-երեք անհայտով հավասարում, որպեսզի հնարավորություն ունենամ շարժել ուղեղս: Շատ եմ խնդրում,— աղերսեց պրակտիկանտը: Որ գնամ համալսարան, ընկեր Թովմասյանին ի՞նչ պատասխան եմ տալու:

Այդ պատանին հանցագործներին այնքան թեթևությամբ էր մերկացնում, որքան կապիկը բանանը: Եվ այնքան հեշտությամբ էր բացում ամենախճճված գործը, որքան մարգարիտ որոնողը՝ ոստրեն: Իր պրակտիկայի վեց օրերի ընթացքում նա բառի բուն իմաստով բացահայտել էր երկու սպանություն, երեք կողոպուտ, երեք դանակահարություն և բառի փոխաբերական իմաստով մերկացրել էր տասնհինգ սպեկուլյանտների, դրամաշորթների ու խաղամոլների: Բացի դրանից, իր նախաձեռնությամբ, հայտնաբերել էր ալիմենտ վճարելուց խուսափող երկու չարակամի և ուղղակի կեղծ մորուքից բռնելով ու ձգելով բաժին էր բերել գերեզմանատներում սխալ ձայնով «Տեր ողորմյա» երգող մի ծպտված տերտերի:

— Ես քեզ համար որտեղի՞ց այդքան հանցագործ գտնեմ, այ տղա: Սա հո Տեխասը չէ՞,— իրավացիորեն վրդովվեց Աբելյանը:

— Բա ի՞նչ անեմ, պրակտիկաս դատա՞րկ անցնի,— խեղճացավ Սաթյանը:

Կապիտան Աբելյանը երկար-երկար նայեց պրակտիկանտ Սաթյանին: Նայեց ճիշտ այն հայացքով, որով հեքիաթի չար թագավորն էր նայում յոթ սարի ու յոթ ձորի ետնից արքայական խնձորը, անմահական ջուրն ու հազարան բլբուլը բերող անպատկառ փեսացուին ու տենդորեն մտածում, թե էլ որտեղ ուղարկի նրան, որ այլևս ետ չգա:

Հետո կապիտան Աբելյանը ձեռքը խփեց լայն ճակատին, անաղմուկ բարձրացավ տեղից, մոտեցավ չհրկիզվող պահարանին, կտրուկ շարժումով բացեց դուռը, ինչ-որ թվեր հավաքելով մի փոքրիկ դռնակ էլ բացեց և այնտեղից դուրս բերեց մի բարակ թղթապանակ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Վերցրու,— վատ թաքրած չարախնդությամբ ասաց նա:

— Սա ի՞նչ է,— անփութորեն հարցրեց պրակտիկանտը:

— Կարճված գործ:

— Սպանությո՞ւն է:

— Գողություն:

— Ի՞նչ են գողացել:

— Կոշիկներ:

— Կոշիկնե՞ր... Եվ դուք ձեր վիթխարի փորձով ու հմտությամբ չե՞ք կարողացել բռնել կոշիկների գողին,— զարմացած հարցրեց պրակտիկանտը՝ ասես հարևանցի, սակայն բավականին սևեռուն մի հայացք նետելով կապիտանի բոլորովին նոր, փայլփլուն կոշիկներին:

Հետախուզության պետը շիկնեց պատանու նման, նստեց և աթոռի տակ ետ տարավ կոշիկները:

— Առեղծվածային պատմություն է,— ասաց նա: Հանցագործը կամ հանցագործները պատուհանից մտել են քաղաքացի Սիմոն Հրեղենի տուն հենց այն ժամանակ, երբ նա խաղաղ քնած է եղել, մահճակալի մոտից վերցրել են նրա գրեթե նոր կոշիկները, պահարանից ևս մի զույգ բոլորովին նոր կոշիկ և անհետացել:

— Իսկ դեպքի վայրում որևէ հետք չե՞ն թողել,— արագ հարցրեց պրակտիկանտը:

— Հետքեր չեն թողել,— ասաց կապիտանը,— բայց փոխարենը մահճակալի մոտ թողել են մի զույգ տրեխ:

— Ի՞նչ, — զարմացավ պրակտիկանտը:

— Տրեխ:

— Իսկ ի՞նչ բան է տրեխը:

Կապիտանը ժպտաց ներողամտորեն և հնարավորություն ստացավ թփթփացնելու պրակտիկանտի ուսին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Տրեխը, երիտասարդ, կոշիկ է, որ ժամանակին հագնում էին մեր գյուղացի հայրերը: Դրանք կարում էին եզան կամ խոզի կաշվից…Այ այսպիսի ցցված սուր քթերով…

— Ախ, մոկասի՞ն,— կռահեց պրակտիկանտը: Ուրիշ որևէ բան չե՞ն տարել տնից:

— Ահա առեղծվածը,— հառաչեց կապիտան Աբելյանը: Պատկերացնո՞ւմ ես, Սաթյան, ձեռք չեն տվել ոչ կանխիկ դրամին, ոչ բյուրեղապակուն և ոչ էլ նույնիսկ մագնիտոֆոնին:

Պրակտիկանտ Սաթյանի ճակատի ջիղը շարժվեց:

— Իսկ այդ Սիմոնը ինչո՞ւ է հրեղեն,— հարցրեց նա,— ինչի՞ց եք ենթադրում…

— Հրեղեն նրա ազգանունն է,— ավելի լայն ժպտաց կապիտանը: Այսինքն՝ նրա գրական անունը: Սիմոն Հրեղենը բանաստեղծ է:

— Բանաստե՞ղծ,— գանգուր մի մազափունջ մատի վրա փաթաթելով, մտախոհ կրկնեց պրակտիկանտը: Բանաստեղծ… Գուցե երկրպագունե՞րն են գողացել նրա կոշիկները՝ իբրև հիշատակ:

Կապիտան Աբելյանը փոթկացրեց.

— Հիմա ո՞վ է բանաստեղծություն կարդում: Այն էլ երիտասարդ բանաստեղծներին: Իմ կարդացած վերջին բանաստեղծությունն օրինակ, «Մարոն» է եղել:

— Ինչ-որ մեկը փորձել է խաղալ նրա հոգու հետ: Դա կատակ է:

Կապիտան Աբելյանը թափահարեց գլուխը:

— Սիմոն Հրեղենը այդ կարծիքին չէ: Կամ գուցե հումոր չունի, ես ինչ իմանամ: Հոգիս հանել է անիծածը: Երեք անգամ մինիստրի մոտ է գնացել չափածո բողոքով:

— Կոշիկների համա՞ր,— հոնքերը կիտեց պրակտիկանտը: — Իսկ գուցե… գուցե Շիրվանզադեի «Արտիստի» նման նա իր կոշիկների կրունկների մեջ ոսկինե՞ր է ունեցել պահած:

— Բանաստեղծ և ոսկի՞,— այս անգամ բացահայտ քրքջաց Աբելյանը: — Եթե մարդ փող ունենա, էլ ինչո՞ւ պետք է բանաստեղծություն գրի:

Պրակտիկանտ Սաթյանը ամոթից կարմրեց: Եվ հենց դա էլ օգնեց նրան: Դեպի դեմքը բարձրացող արյան հորձանքի հետ նրա գիտակցությանը հասավ մի կայծ, դեռ չձևավորված, մարմին չառած մի կռահում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ընկեր կապիտան, զանգահարեցեք ձեր պաշտոնակցին՝ ուսանողական թաղամասից, և խնդրեք մեզ ուղարկել իրենց մոտ գտնվող նույնատիպ գործը:

— Ենթադրում ես, թե այնտեղ է՞լ են բանաստեղծի կողոպտել,— զարմացած հարցրեց Աբելյանը:

— Համոզված եմ:

— Այս մեկը բացեցիր, հիմա էլ ո՞ւրիշ գործ ես ուզում,— խնդմնդաց կապիտանը:

— Ներեցեք, իհարկե, ընկեր Աբելյան, բայց մանուկ հասակում ի՞նչ խաղեր էիք խաղում:

Կապիտանի աչքերը երազկոտ դարձան:

— Փոքր ժամանակ… դե, չլիկ-դաստա, երկար էշ, հավալա…

— Իսկ յոթ քարանի չէի՞ք խաղում, գնդակով:

— Մեզ գնդակ որտեղի՞ց, այ տղա,— տխրեց կապիտանը:

Եվ պրակտիկանտ Սաթյանը բացատրեց, որ երբ մութն ընկնելիս գնդակը երբեմն կորչում էր, որպեսզի գտնեին, մի նոր գնդակ էին նետում նույն ուղղությամբ և վազում ետևից: Եվ ճիշտ որ՝ տեսնում էին, որ երկու գնդակն էլ ընկած են իրար մոտ:

— Ուրեմն երկրորդ գործը քեզ դրա՞ համար է պետք,— ի պատիվ իրեն անմիջապես կռահեց կապիտանը: Որպես երկրորդ գնդա՞կ:

— Ճիշտ այդպես:

Կապիտան Աբելյանը հեռախոսով մի համար հավաքեց:

— Եղիշ,— գոռաց նա: Բարև: Աբելյանն է: Ձեր շրջանում հո գողություն չի՞ կատարվել:

— Բանաստեղծի տնից,— հուշեց Սաթյանը:

— Բանաստեղծի տնից,—կրկնեց Աբելյանը: Ի՞նչ: Ինչ են տարե՞լ: «Ժիգուլի՞»… Գողը բռնվա՞ծ է: Ո՞չ:

Պրակտիկանտ Սաթյանը որսի հոտն առած քերծեի նման հուզմունքից դողաց, փայլող աչքերով նայեց կապիտանին և նրա ուշադրությունը գրավելու համար մատով թխկթխկացրեց գրասեղանին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ներս մտեք,— գոչեց կապիտանը:

— ՉԷ, չէ, ես եմ,— հիշեցրեց Սաթյանը: Ասացեք, եթե հանցագործը դեպքի վայրում որևէ իր է մոռացել կամ թողել, թող գործի հետ ուղարկեն:

— Եղիշ,— գոռաց կապիտան Աբելյանը,— եթե հանցագործը դեպքի վայրում որևէ իր է մոռացել կամ թողել, գործի հետ ինձ ուղարկիր: Ի՞նչ…— նա բարձրացավ տեղից ու ասես ականջներին չհավատալով, հարցրեց նորից: Ի՞նչ... Չէ, չէ, ուղարկում ես, ի՞նչ անեմ… իբրև թե մեզ մոտ քի՞չ կան: Լավ:

Նա ցած դրեց լսափողը ու հազիվ լսելի մրմնջաց.

— Էշ… ավանակ:

— Ո՞վ, այդ Եղի՞շը,— հետաքրքրվեց պրակտիկանտը:

— ՉԷ, ա՛յ տղա,— ծիծաղեց կապիտան Աբելյանը: Ուղղակի հանցագործները բանաստեղծ Արշալույս Ծովունու ավտոտնակից գողացել են նրա «Ժիգուլի» ավտոմեքենան և փոխարենը ի՞նչ ես կարծում, ի՞նչ են թողել… մի էշ...

— Է՞շ, սովորակա՞ն...

— Էշի արտասովորը ո՞րն է, Սաթյան,— նորից ծիծաղեց Աբելյանը,— հը , հիմա ի՞նչ ես ասում: Սա էլ քո երկրորդ գնդակը:

Պրակտիկանտ Սաթյանը գանգուր գլուխը ափերի մեջ առավ: Մտքերը արագ-արագ շարժվում ու բզզում էին նրա գլխում՝ փեթակի գազազած մեղուների պես: Խոցված արժանապատվությունը ելք էր պահանջում: Հանկարծ նա ընդոստ շարժումով ետ նետեց գանգուր մազերը, նայեց պատուհանից դուրս ու…

Ու հենց այդ ժամանակ ամուր շրխկալով կրնկի վրա բացվեց դուռը և առանձնասենյակի շեմին հայտնվեց զզգզված մազերով, քերծված ձեռքերով, ցնցոտիներ հագած մի բարձրահասակ երիտասարդ:

— Բանաստեղծ Սանասար Զովասար,– որոտաց նա:

— Ահա և երրորդ գնդակը, Սաթյան,— քրքջաց կապիտան Աբելյանը:

Բանաստեղծն անմիջապես խոժոռվեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Երրորդ գնդակը խաղից դուրս վիճակից խփվեց: Ես դարպասի ետևում էի նստած: Խնդրում եմ չվիճել ինձ հետ: — Բայց նկատելով, որ ոչ ոք չի պատրաստվում վիճել իր հետ՝ բանաս-տեղծը անցավ բուն խնդրին: Նա ձախ ձեռքը կրծքին դրեց, աջը մեկնեց դեպի հետախույզները ու ինչպես հիմա ամենուրեք ընդունված է ասել, ի խորոց սրտի կերկերուն ձայնով բացականչեց:

— Իմ միլիցիան իմ պահապանն է:

— Ճիշտ է,— հուզված հաստատեց Աբելյանը:

— Ուրեմն պահպանեցեք և պաշտպանեցեք ինձ, ես անմեղ զոհ եմ,— շարունակեց բանաստեղծը՝ ձեռքերի տեղերը սկզբունքորեն փոխելով, այսինքն՝ աջ ձեռքը դնելով կրծքին և ձախը մեկնելով հետախույզներին:

Պրակտիկանտ Սաթյանը դանդաղորեն բարձրացավ տեղից:

— Ձեզանից ի՞նչ են գողացել և ի՞նչ են թողել դեպքի վայրում,— կտրուկ հարցրեց նա:

— Ինձ են թողել դեպքի վայրում,— շշնջաց բանաստեղծը: — Ինձ՝ Սանասար Զովասարիս,,.

Եվ պատմեց մի սահմռկեցուցիչ պատմություն:

Գիշերվա ժամը երեքին Սանասար Զովասարը արթնանում է դռան զանգից: Համոզված լինելով, որ զանգողը հերթապահությունից վերադարձող բուժքույր կինն է, նա հենց այդպես կիսաշապիկ-կիսավարտիքով բացում է դուռը և առանց նայելու ետ դառնում, որպեսզի շտապ անկողին մտնի: Նույն վայրկյանին մի ծանր ձեռք փակում է նրա բերանը և բանաստեղծը ինչ-որ զզվելի քաղցրավուն փալասի հոտ է առնում:

— Քլորոֆորմ,— նետեց պրակտիկանտը: Եվ դուք ուշագնաց եղաք:

— Չեմ հիշում,— ասաց բանաստեղծը: Բայց որ ուշքի եկա՝ հիշում եմ: Դա սարսափելի էր: Ինչպես որ եղել էի, կիսաշապիկ-կիսավարտիքով ինձ նետել էին հողոտ ու քարքարոտ մի դաշտ: Խոտի ցողունները անգթաբար ծակոտում էին իմ բազմաչարչար մարմինը: Այո, այո', խոտը միայն հեռվից է գեղեցիկ: Մոտիկից ծակծկում է: Իմ կողքին այս ցնցոտիներն էին ընկած: Ստիպված հագա: Բերանումս սաստիկ քաղցրահամ կար: Եվ հանկարծ ջուր նկատեցի, աղբյուր էր, բայց շատ ներքևում էր, հողից էլ ցած… հոգիս դուրս եկավ մինչև խմեցի: Դեռ վայրենի ենք, վայրենի: Մի՞թե չէր կարելի բարձրացնել ջուրը, ցայտաղբյուր կառուցել այդ դաշտում: Եվ ո՞վ պետք է դա անի:

— Դեպքի վայրը ձեզ ծանոթ չէ՞ր, ընկեր Զովասար,— հարցրեց կապիտան Աբելյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սկզբում ծանոթ չէր, բայց երբ լավ նայեցի շուրջս, հասկացա, որ իմ ծննդավայրի մոտերքում եմ: Հեռվում արեգակի շողերով ողողված մեր գյուղն էր: Թեև շատ դժվարությամբ, բայց ես նույնիսկ մեր տունը գտա՝ մենավոր ընկուզենու տակ: Երկու ժամ տևեց մինչև մայրուղի հասա և պատահական մի ավտոմեքենայով եկա այստեղ:

— Իսկ ինչո՞ւ գյուղ չգնացիք, ձեր տուն,— հարցրեց կապիտանը: Թե՞ այնտեղ հարազատներ, ազգականներ չունեք:

— Որքան գիտեմ մի քանիսը կան, մասնավորապես հայրս,— ասաց բանաստեղծը: Բայց դե կտրվել ենք իրարից, օտարացել: Հետո ես ի՞նչ պետք է անեի գյուղում: Ցեխ, թրիք, մլակ, մոծակ... Այս անիծյալ քաղաքին այնպես ենք սովորել, որ... նողկում եմ, ատում եմ... Սակայն...

— Իսկ այդ հանցագործները ի՞նչ նպատակով էին... առևանգել ձեզ,— ինքն էլ ակամա վերամբարձ ոճով հարցրեց Աբելյանը: Ձեր բացակայության ժամանակ հանգիստ կողոպտե՞լ էին ձեր տունը:

Բանաստեղծը ցնցոտիի անցքի միջից քորեց ծունկը:

— Ոչ մի բան, պատկերացնո՞ւմ եք, ոչինչ չէին տարել, նույնիսկ նոր լույս տեսած բանաստեղծությունների գիրքս տեղում էր:

Կապիտանի զգոն աչքը նկատեց, թե ինչպես «Բանաստեղծությունների գիրք» արտահայտության վրա ջղաձգորեն ցնցվեց պրակտիկանտ Սաթյանի աջ հոնքը: «Նյարդերը չեն դիմանում,— ոչ առանց գոհունակության մտածեց նա: Է , տղա ջան, բա որ իմ տարիքին հասնես, ի՞նչ պիտի անես»: Իսկ բարձրաձայն ասաց,

— Նույն ձեռքն է:

— Ի՞նչ է, մեկ ուրիշի բերանն է՞լ են փակել,– ձեռքը վախեցած բերանին տարավ բանաստեղծը:

Նրան ոչ ոք չպատասխանեց: Կապիտան Աբելյանը բազմանշանակ հայացքով պրակտիկանտ Սաթյանին նայեց՝ նրան հրավիրելով շարունակել հետաքննությունը, սակայն գանգրահեր պատանին տարուբերեց գլուխը:

Նրա հետ ինչ-որ շատ տարօրինակ բան էր կատարվում: Ասես միանգամից կորցրել էր հետաքրքրությունը թե՛ գողության արտասովոր դեպքերի, թե՛ բանաստեղծի առեղծվածային առևանգման, թե՛ կապիտանի ապրումների նկատմամբ: Նրա դեմքը միայն անտարբերություն էր արտահայտում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Իհարկե, քեզ համար ի վերջո ի՞նչ կա, ամեն ինչի համար ես եմ պատասխան տալու», — դառնությամբ մտածեց կապիտանը և դարձավ բանաստեղծին:

— Ընկեր Զովասար, դուք թշնամիներ ունե՞ք:

Սանասար Զովասարը արհամարհանքով ժպտաց.

— Ինչպես կարող է տաղանդը թշնամիներ չունենալ,— համեստորեն ասաց նա: — Բոլոր անտաղանդ գրողներն ու քննադատներն իմ թշնամիներն են:

— Իսկ դուք չե՞ք ենթադրում, թե ով կարող էր ձեզ հետ... այդ խաղը խաղալ,— հարցրեց կապիտանը:

— Սպասեք, ուրեմն դուք սա խա՞ղ եք համարում,— ոտքի կանգնեց բանաստեղծը, դուք սա խաղ եք համարում, հա՞ ... Այդ դեպքում թույլ տվեք հարցնել, թե ինչ տեսակ խաղ է սա՝ նարդի՞, դոմինո՞, թե՞ տապկնոցի... խաղ է, հա՞... հիմա ես այնպիսի խաղ կխաղամ ձեր գլխին...

Կապիտան Աբելյանը հսկայական ջանքեր գործադրեց, մինչև որ կարողացավ հանգստացնել գազազած բանաստեղծին: Բանաստեղծին հանգստացրեց, բայց ինքը չէր հանգստանում: Պրակտիկանտ Սաթյանի անտարբերությունը սպանում էր նրան: Ոչ մի հարց, ոչ մի միջամտություն: Երեխայի նման նստել ու տնակներ է նկարում՝ ծուռ ծխնելույզից երկինք բարձրացող ծխի քուլաներով: Կարծես թե այս ամենը նրա հետ ոչ մի կապ չունի:

— Հարգելի ընկեր Զովասար,— ասաց կապիտան Աբելյանը: Դուք պատմեք ձեր կյանքի, շրջապատի, ծանոթների մասին... գուցե ես կարողանամ որևէ թել գտնել այս հանգույցը քանդելու համար:

Բանաստեղծը բարձրացրեց իր հպարտ գլուխը:

— Իմ կյանքը, իմ շրջապատը, ինձ տանջող հարցերը իմ ստեղծագործությունների մեջ են: Բանաստեղծություններից դուրս ես կյանք չունեմ: Իսկ եթե դուք չգտնեք իմ դեմ փաստորեն մահափորձ կատարած մարդկանց, վստահեցնում եմ, որ դուք էլ կյանք չեք ունենա: Ինչ չէ՝ չէ, բայց գրել հո մենք գիտենք...

Եվ այդպես էլ գլուխը բարձր պահած, ցնցոտիները ծածանելով դուրս եկավ:

Կապիտան Աբելյանը անզորությունից ու հուսահատությունից կրճտացրեց ատամները և, ինչպես ընդունված է, իր ողջ զայրույթը, հոգում կուտակված ողջ մաղձը ուղիղ գծով հասցեագրեց ենթակային:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դե խոսիր է՛, ընկեր Սաթյան... բերանդ ջուր ես առել ու նստել տներ ես նկարում: Խոսիր է՛, ընկեր Շերլոկ Հոլմս... իբր թե մեր գործը քիչ էր, Եղիշի գործն էլ բերեցիր կապեցիր գլխիս… Ես կյանքումս իբրև իրեղեն ապացույց միայն էշ չէի ունեցել, դա էլ ունեցա: Այսինքն, թե որ գործից հանեն, ի՞նչ պիտի անեմ... էշ պիտի պահեմ, էլի...

Պրակտիկանտ Սաթյանը բարձրացրեց գլուխն ու ժպտաց.

— Միտք չունի,— ասաց նա:

— Ի՞նչը միտք չունի:

— Էշ պահելը,— ասաց պրակտիկանտը: Շարունակեցեք հանգիստ աշխատել՝ ի սարսափ հանցագործ աշխարհի:

Կապիտանը տնքաց.

— Եվ քո կարծիքով այս անիծյալ բանաստեղծի գործը ինձ էժան կնստի, հա՞ ...

— Երեսունչորս կոպեկ:

— Ի՞նչ երեսունչորս կոպեկ, այ տղա,— նորից գայրացավ կապիտանը:

— Այս գործը բացելը արժե երեսունչորս կոպեկ, բայց դուք պետք է վճարեք, ընկեր Աբելյան, դե, ինչպես ասեմ, ես ուսանողական թոշակով ապրող մարդ եմ:

— Ի՞նչ երեսունչորս կոպեկ,— գոռաց հանցագործ աշխարհի սարսափը:

— Առավոտյան լսեցի, որ ձեր թոռնիկը ձեզ կարգադրում էր գունավոր մատիտներ գնել, ճի՞շտ է:

— Հա, բայց դա ի՞նչ կապ ունի:

—Ուրեմն հենց հիմա գնացեք գրախանութ, գնեք այդ մատիտները և հետն էլ մի քանի օր առաջ լույս տեսած «Երիտասարդ ձայներ» բանաստեղծությունների ժողովածուն: Արժե երեսունչորս կոպեկ:

— Ձեռ ես առնո՞ւմ, այ տղա,— տխրեց կապիտանը:

— Գաղտնիքն այդ գրքի մեջ է,— լրջորեն ասաց պրակտիկանտը: Կներեք, որ ձեզ եմ խնդրում գրախանութ գնալ: Բայց դա գործի համար է պետք: Եվ պետք է գնաք ոտքով: Ես ուզում եմ, որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ձեզ տեսնեն գրախանութ մտնելիս: Իսկ փողոցում այնպես պահեք գիրքը, որ վերնագիրը երևա...

— Դետեկտիվ ես խաղո՞ւմ, Սաթյան...

— Իհարկե,— ասաց պրակտիկանտը:

Կապիտանը տարուբերեց գլուխը, տարակուսանքով նայեց պրակտիկանտի լուրջ աչքերին, հառաչեց ու դուրս գնաց: Իսկ երբ մի քանի րոպե անց վերադարձավ, նրա ձեռքին «Երիտասարդ ձայներ» ժողովածուն էր և էլի ինչ-որ մի գիրք:

— Եվ քո կարծիքով գաղտնիքն այս գրքի մե՞ջ է,— թերահավատորեն հարցրեց կապիտանը...— Երբ ուզեցի, ականջներին չէին հավատում, այնքան ուրախացան, որ հետն էլ մի արտակարգ վեպ տվեցին:

— Դուք էլ կուրախանաք, դուք էլ, կապիտան,— ծիծաղեց պրակտիկանտ Սաթյանը և բացեց ժողովածուն: Տեսնենք ովքեր կան: Ահա, բոլորը մերոնք են՝ Սիմոն Հրեղեն, Արշալույս Ծովունի, Սանասար Զովասար... Սա՞ ով է, Հայկ Հեռատե՞ս... Դե լավ, սկսենք սկզբից: Տեսնենք ի՞նչ է գրում, օրինակ, Սիմոն Հրեղենը... «Իմ տրեխները»:

Օձից խայթվածի նման կապիտանը վեր թռավ տեղից.

— Տրեխնե՞րը... ասում ես՝ տրեխնե՞րը...

— Ես չեմ ասում, Սիմոն Հրեղենն է ասում.

Քունքերս աշխարհի ժամանակն են հաշվում,

Դժգոհությունը պարուրել է ինձ:

Մի պոկեք, մի պոկեք, մի պոկեք ինձ հողից:

Այս կոշիկները, այս կոշիկները

Կրունկներով անգամ ինձ կտրում են հողից:

Իսկ ես ասում եմ՝ լսեցեք ինձ, մարդիկ,

Քննություն չէ հողը...

Որ կտրվեցիր՝ էլ չես հանձնի նորից...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մեզ չի ների հողը:

Ինձ բռնել է դողը:

Ես եմ, ես եմ, ես եմ

Հենց իմ բախտի գողը...

Ես կոշիկ չեմ ուզում, կոշիկներս տարեք:

Եվ հողը համբուրող տրեխներս բերեք:

Տրեխներս բերեք...

— Պահ,— ձեռքը ճաղատ ճակատին խփեց կապիտան Աբելյանը,— դա հո բանաստեղծություն չի, ուղղակի դեպքի արձանագրություն է, տեղազննության ակտ:

Պրակտիկանտ Սաթյանը թերթեց ժողովածուն:

— Հիմա անցնենք Արշալույս Ծովունուն…

— Էշը գտիր, էշը գտիր, — խաղի մեջ մտնելով անհամբերությամբ բացականչեց Աբելյանը:Էշի մասին կլինի, չէ՞, Սաթյան:

— Անպայման,— հաստատեց պրակտիկանտը: Սա չէ, սա չէ... Ահա, էշը...

Պապս էշ ուներ:

Սև, տխուր էշ էր: Սատուրնի նման:

Պապս էշով էր գնում ջրաղաց,

Երկնքի աստղերն իջնում էին ցած,

Ջրուցում պապիս ու սև էշի հետ:

Հեքիաթներ պատմում, ոսկե հեքիաթներ,

Ինչպիսիք միայն աստղերը գիտեն:

Իսկ ես էշ չունեմ: Միայն «ժիգուլի»

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շագանակագույն:

Թեև շատերն այն կոչում են «Ջորի»,

Բայց իրեն հարգող ոչ մի մոլորակ և ոչ մի աստղ

Ներքև չի իջնում, հեքիաթ չի պատմում...

Ո՛չ ջորուս, ո՛չ ինձ,

Ոսկե հեքիաթներ, ինչպիսիք միայն աստղերը գիտեն:

Ուրեմն, տարե՛ք, տարե՛ք «ժիգուլիս», նվիրում եմ ձեզ:

Տվեք ինձ հեքիաթ, տվեք մի սև էշ...

Բա էլ ի՞նչ ես ուզում, շան որդի,— ուրախությունից գոռաց կապիտան Աբելյանը: Էշ էիր ուզում՝ էշ են տվել: Էլ ինչի՞ ես բողոքում: Սաթյան ջան, ախպերս, խնդրում եմ մի տես այդ Ջովասարի՞ն ինչու են տարել...

Այնինչ պրակտիկանտ Սաթյանը արդեն գտել էր անհրաժեշտ էջը.

Դաշտերի բարակ առուներով

Հոսում է իմ կարոտի զգացումը:

Աչքերս հոգնել են քաղաքներից,

Ինձ հալածում են անտենաները:

Ի՞նչ գործ ունեմ ես այս երկնաքերծ անապատում,

Թե գութ կա ձեր սրտում,

Պոկեք ինձ խեղդող փողկապս,

Պատառոտեք իմ կոստյումը անձուկ,

Ու նետեք ինձ հեռու, իմ մանկության դաշտերը,

Որտեղ աստղերը ճչում են խավարում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Տարել էին, էլի, տարել էին, ինչո՞ւ փախար,— դռան կողմը նայելով չարախնդաց կապիտանը: Սաթյան, տղաս, բայց այս անգամ ինձ պետք է ասես, թե ե՞րբ գլխի ընկար, ե՞րբ գտար գաղտնիքը:

Սաթյանը ամոթխած ժպտաց.

— Հենց սկզբում, երբ ինձ բացատրեցիք, թե ինչ բան է տրեխը: Եվ մեկ էլ վերջում, երբ Սանասար Զովասարն ասաց, թե իմ կյանքն իմ բանաստեղծությունների մեջ է: Խոստովանեք, ընկեր Աբելյան, որ երբեք ավելի սրամիտ հանցագործության չեք հանդիպել:

— Բան չեմ ասում,— ասաց կապիտանը: Բան չեմ ասում, բայց հիմա ո՞նց պիտի գտնենք այդ սրամտության հեղինակներին: Ի վերջո ավտո են տարել, կոշիկներ են տարել.,.

Պրակտիկանտ Սաթյանը մոտեցավ բաց պատուհանին:

— Գողացած ավտոմեքենայի համարը զրոներո՞վ էր սկսվում,— հարցրեց նա:

— Հա,— ասաց կապիտանը, — 00-03:

— Ներքևում կանգնած է,— ասաց պրակտիկանտը:

Մինչև պատուհանին մոտենալը, կապիտանը մի քանի անգամ խորը շունչ քաշեց, հետո թեքվեց, նայեց ցած, ու ատրճանակի պատյանը բաճկոնի տակ ձեռքով ամուր բռնած վազեց դեպի ելքը:

— Իմ ետևից, Սաթյան,— բղավեց նա:

Իսկ երբ պրակտիկանտը «Երիտասարդ ձայները» ձեռքին հանգիստ քայլերով փողոց դուրս եկավ, կապիտանը շփոթված կանգնած էր ավտոմեքենայի մոտ:

— Փախել են,— մրմնջաց նա,— մեքենան թողել են ու փախել...

Սաթյանը ներողամտորեն ժպտաց:

— Չեն փախել,– ասաց նա,— որովհետև մտադրություն չեն ունեցել փախչելու: Ահա, իմ կարծիքով այս թուղթը ամեն ինչ կբացատրի:

Բանալին ավտոմեքենայի դռան վրա էր: Սաթյանը բացեց դուռը, վարորդի նստատեղից մի քառածալ թուղթ վերցրեց և կարդաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Բարև ձեզ, կապիտան Աբելյան և պրակտիկանտ Սաթյան: Երբ ընկեր կապիտանը գրախանութ մտավ և գնեց «Երիտասարդ ձայներ»-ը, մենք հասկացանք, որ դուք հասկացել եք: Գործը համարեք կարճված: Բայց միաժամանակ խնդրում ենք կարճել նաև երիտասարդ գրողների լեզուն: Հերիք է «ժիգուլի» նստած իբր թե էշ երազեն, նորառճ կոշիկներ հագած՝ տրեխներ պահանջեն և խնդրեն ետ բերել իրենց իբր թե վարդագույն մանկությունը: Գործը համարեք ավարտված, բայց մենք մեր գործունեությունը ավարտված չենք համարում: Նրանք ինչ-որ ցանկանան իրենց բանաստեղծությունների մեջ, մենք իրականացնելու ենք: Քանի որ այդ բանաստեղծները առաջին անգամ են կեղծում, մենք ներում ենք նրանց և վերադարձնում Արշալույս Ծովունու ավտոմեքենան, ինչպես նաև Սիմոն Հրեղենի կոշիկներն ու Սանասար Զովասարի կոստյումը, որոնք գտնվում են մեքենայի պահատեղում: Սա թող նրանց համար լինի ահեղ նախազգուշացում: Ըստ որում, խնդրում ենք հատկապես զգուշացնել երիտասարդ բանաստեղծ Հայկ Հեռատեսին: Թող մեր համբերությունը չչարաշահի:

Մի խումբ երիտասարդ ընթերցողներ»:

— Պահ,— մի ժամվա մեջ երկու անգամ իր հովիվ պապի զարմանքով զարմացավ կապիտան Աբելյանը: Սաթյան, եղբայրս, մի տես այդ Հեռատե՞սն ինչ է ուզում:

Պրակտիկանտն արագ-արագ թերթեց ժողովածուն:

— Հիը… ահա… ահա…

Թե խղճում եք ինձ, հանեք ու տարեք,

Գայլերին նետեք արյունոտ սիրտս:

Ո՞ւմ է պետք սիրտը, այս անսիրտ դարում…

Կապիտան Աբելյանը բռնեց սիրտը:

— Անմիջապես զանգահարիր այդ կարճատես Հեռատեսին ու ասա, որ այլևս հիմար-հիմար բաներ չգրի: Նման ընթերցողներից, Սաթյան, ամեն ինչ կարելի է սպասել: Ինչ ասում են, անում են: Թեև ամեն ինչից անկախ շատ կուզենայի տեսնել այդ ընթերցողներին…

— Դե ուրեմն՝ տեսեք, — ասաց Սաթյանը,— համոզված եմ, որ նրանք հեռու չեն և մեզ են հետևում: Տեսեք, տեսե՛ք…

Կապիտան Աբելյանը նայեց շուրջը: Ամենուրեք առանձին-առանձին, զույգերով ու խմբերով ջահել տղաներ ու աղջիկներ կանգնել, հետախույզներին էին նայում, նայում էին ու ժպտում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սաթյան, ի՞նձ է թվում, թե իսկապես բոլորը ժպտում են,— հարցրեց կապիտանը:

— Ժպտում են, ընկեր Աբելյան:

— Հետո, դա քեզ չի՞ անհանգստացնում:

— Ժպիտն ինչո՞ւ պետք է անհանգստացնի, ընկեր Աբելյան: Իմ կարծիքով ժպիտից չպետք է վախենալ, ծիծաղից պետք է վախենալ:

Կապիտանը Սաթյանին նայեց հիացած ու նույնիսկ մի տեսակ հպարտությամբ:

— Դու մեծ հետախույզ կդառնաս, տղաս: Հավատա խոսքիս:

— Հավատում եմ, եթե չեք ծիծաղում,— ասաց Սաթյանը:

Եվ երկուսն էլ առանց վախենալու ծիծաղեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ինչ բան է ծիծաղը

Մի թերթից ինձ առաջարկեցին երգիծական պատմվածք գրել:

— Քանի՞ էջ է պետք,—գործնականորեն հարցրի ես:

— Երեք և կես:

Ծիծաղս եկավ: Երեք և կես էջում ի՞նչ երգիծանք: Պատմվածքի համար ինձ երեք և կես էջ միայն նախաբան է հարկավոր: Ես սովորաբար տասը էջից պակաս բան չեմ գրում, նույնիսկ՝ դիմում: Երեք և կես էջ: Իսկապես ծիծաղս գալիս է: Բայց պետք է փորձեմ: Ինձ համար դատարկ բան է երեք և կես էջ գրելը: Այսպես թե այնպես տասնչորս տարի է, ինչ երգիծական գործեր եմ գրում: Երեք և կես էջն ի՞նչ է: Մի անեկդոտ պատմեմ՝ կպրծնի: Լավ, պատմեմ, բայց ո՞ր անեկդոտը: Չէ, այն մեկը բոլորը գիտեն, երբ պրոֆեսորը դասախոսության է գալիս մի ոտքին կարմիր, մյուս ոտքին՝ սև կոշիկ: Ուսանողները ծիծաղում են:

— Պրոֆեսոր,– հարցնում են նրանք, մի՞թե դուք այնպիսի կոշիկներ չունեք, որ երկուսն էլ միևնույն գույնի լինեն:

Պրոֆեսորն ասում է ամաչելով.

— Ճիշտն ասած՝ չունեմ: Տանը մի զույգ էլ կա՝ բայց դարձյալ մեկը կարմիր է, մյուսը՝ սև:

Իսկապես, ծիծաղելի է, չէ՞: Բայց նախ այս անեկդոտը բոլորը գիտեն, և հետո, խոստովանեմ, ինձ այնքան էլ ծիծաղելի չի թվում: Ծիծաղելու ի՞նչ կա ,եթե մարդն իսկապես նույն գույնի կոշիկներ չունի: Ավելի շուտ, վշտանալ կարելի է:

Չէ, այս մեկը չեղավ: Բայց ի՞նչ գրեմ: Ինչ մտածում եմ՝ լուրջ բաներ են: Իսկ ինձ թվում էր, թե այնքան ծիծաղելի դեպքեր գիտեմ: Գուցե մեր Խաչիկյանի մասին պատմեմ, հը՞: Տարօրինակ, շատ տարօրինակ մարդ է: Բոլորի անունները խառնում է: Ստեփան Մարկոսյանին ասում է Մարկոս: Ազատ Բաղդասարյանին՝ Բաղդասար: Եվ այնպիսի զարմանալի հիշողություն ունի, որ մեր Լևոն Կիրակոսյանին էլ պապի անունով է կանչում՝ Ղազար: Թե որտեղից է նրա պապի անունը իմացել՝ ապշել կարելի է: Մի անգամ Խաչիկյանը մոռանում է, որ տուն պիտի գնա ու իր առանձնասենյակում նստում է մինչև գիշերվա ժամը երկուսը: Մեկ էլ հանկարծ տեսնում է, որ ժամը երկուսն է: Երկար մտածում է, ցերեկվա՞ երկուսն է, թե գիշերվա: Ի վերջո զանգահարում է շենքի պահակին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Եփրեմ,— հարցնում է նա Սահակին,— ցերե՞կ է թե գիշեր: Որ դրսում մութ է, ճի՞շտ է:

— Ճիշտ է,— ասում է Սահակը:

— Դե, իմ վարորդ Նազարին ասա, թող վերև բարձրանա ինձ մոտ գա:

Վարորդ Մուկուչը վերև է բարձրանում, մտնում պետի առանձնասենյակը և կանգնում դռան մոտ: Կանգնում է հինգ րոպե, տասը, տասնհինգ րոպե, բայց Խաչիկյանը նրան չի նկատում, գրում է: Վարորդը ստիպված է լինում հիշեցնել իր մասին:

— Ընկեր Խաչիկյան, դուք ինձ կանչե՞լ եք:

Խաչիկյանը զարմացած նայում է նրան ու չի հիշում կանչե՞լ է, թե չէ,

— Է, ինչպե՞ս ես Նազար,— հարցնում է նա:

— Լավ եմ, շնորհակալություն,— ասում է Մուկուչը:

— Կինդ, երեխանե՞րդ ինչպես են:

— Ոչինչ, լավ են:

Խաչիկյանը մի քիչ էլ է գրում, հետո ակնոցի վրայից նայում է վարորդին...

— Է, ամուսնացա՞ր, Նազար, թե էլի պարապ-սարապ ման ես գալիս:

— Պարապ-սարապ ման եմ գալիս,— ասում է Մուկուչը:

— Դե լավ է, լավ,— ուրախանում է Խաչիկյանը,— հիմա կվերջացնեմ, կգնանք, նստիր, նստիր:

Մուկուչը նստում է, իսկ Խաչիկյանը շարունակում է գրել: Անցնում է հինգ րոպե, տասը, տասնհինգ րոպե, իսկ Խաչիկյանը շարունակում է գրել: Մեկ էլ հանկարծ նայում է ժամացույցին ու գլուխն օրորելով պտտում է հեռախոսի սկավառակը:

— Եփրեմ,— հարցնում է նա պահակ Սահակին,— բա քեզ չասացի, որ Նազարին ինձ մոտ ուղարկես:

— Ընկեր Խաչիկյան, ես այստեղ եմ,— տեղից բարձրանում է Մուկուչը:

— Վա՞յ,— ապշում է Խաչիկյանը,— այ տղա, այդ ե՞րբ ես ներս մտել, որ չեմ զգացել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ահա թե որքան տարօրինակ մարդ է մեր ընկեր Աբիսողոմյանը: Ի՞նչ Աբիսողոմյան, ախ, հա, ներեցեք, մեր ընկեր Խաչիկյանը: Այո, տարօրինակ մարդ է, բայց այդ մասին ինչ գրեմ, քի՞չ տարօրինակ մարդիկ կան: Աշխարհը տարօրինակ մարդկանցով լցված է: Նստես ու բոլորի մասին գրե՞ս: Ո՞ւր կհասնի:

Չէ, երգիծանք չի ստացվում:

— Գուցե սուրճ խմես,— իմ տառապանքը տեսնելով հարցնում է կինս,— օրացույցում կարդացել եմ, որ Բալզակը գրելիս սուրճ էր խմում:

— Նա սուրճ էր խմում, որ վեպ գրի, իսկ ինձ երեք ու կես էջ տեղ են տվել,— բարկանում եմ ես,— կոնյակ տուր ինձ:

— Ինչ կոնյակ,— հարցնում է կինս,— Հարավսլավական «Վինյա՞կ», Բուլղարական «Պլիսկա՞», Ֆրանսիական «Կամյո՞ւ», թե՝ պարզապես «Մարտինի»…

— Պարզապես հայկական որևէ կոնյակ,— ասում եմ ես:

Կինս ինձ է նայում խեղճ-խեղճ:

— Հայկական կոնյակ որտեղի՞ց գտնեմ,— ասում է նա: — Ամբողջ աշխարհը հիմա հայկական կոնյակ է խմում: Մի երկու շիշ ունեմ, հյուրերի համար եմ պահում: Հայկական կոնյակ չկա:

— Ուրեմն դու հյուրերին ավելի շատ ես սիրում քան ի՞նձ,— խանդից գունատվում եմ ես: — Հայկական կոնյակ չկա: Չգիտե՞ս, որ մի ամիս առաջ համամիութենական համտեսի ժամանակ մեր դրոշմակիր բոլոր կոնյակները ոսկե մեդալներ շահեցին:

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է կինս,— հետաքրքիր է, թե այդ ոսկիները հանձնողները ո՞րտեղից են կոնյակ գտել համտես անելու համար…

Ծիծաղելի է, չէ՞, եթե գրեմ երգիծական պատմվածք, այս մեկը անպայման կգրեմ: Այս ի՞նչ դժվար է երգիծաբան լինելը, տեր աստված: Ծիծաղելու բան ես պատմում, լացդ է գալիս, լաց լինելու բան ես պատմում՝ ծիծաղդ է գալիս: Հա, վերջապես մի իսկական զավեշտական պատմություն հիշեցի:

Ես մի ընկեր ունեմ Մարգար անունով: Իսկ Մարգարը մի սիրած աղջիկ ունի: Աղջիկն էլ՝ առանձին սենյակ: Ամռանը նրանք թափառում են փողոցներում, այգիներում, իսկ ձմռանը չգիտեն ինչ անեն: Հենց տղան ուզում է ասել «Ես քեզ սիրում եմ», ամեն բառը օդի մեջ սառցալուլա է դառնում, ընկնում գետնին, աղջիկը սայթաքում է, և անախորժություններ են սկսվում: Հիմա կհարցնեք, թե ինչու այդ առանձին սենյակը չեն գնում: Որովհետև դժվար է,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

որովհետև այդ առանձին սենյակը գտնվում է մի միջանցքում, որտեղ տասնութ այդպիսի առանձին սենյակներ կան: Եվ բոլոր դռներն իրար նման են: Եվ ամեն մի դռան ետև մի բարեկամ է ապրում՝ քեռի, հորեղբայր, մորաքույր, ծնողներ, հորաքույր: Եվ այդ բոլոր բարեկամները կազմակերպված ձևով չեն սիրում Մարգարին: Ուրեմն ի՞նչ անի խեղճ Մարգարը: Այնինչ նա շատ է ուզում գնալ այդ առանձին սենյակը, ասում է՝ այնտեղ այնքան հետաքրքիր է: Ասում է՝ ինքն ու իր սիրած աղջիկը նստում են այնտեղ, այդ առանձին սենյակում և խոսում, զրուցում են քաղաքատնտեսության, միջազգային դրության, ժողովուրդների բարեկամության, տիեզերքի յուրացման գործում տեղի ունեցող իրադարձությունների և այլ, և այլ հարցերի շուրջ:

Բայց աղջկա չար բարեկամները չեն ուզում, որ նրանք օգտակար զրույցների շնորհիվ բարձրացնեն իրենց գաղափարական-գեղարվեստական մակարդակը: Եվ աղջկա չար բարեկամները սպառնում են Մարգարին: Ուրեմն ի՞նչ անի խեղճ Մարգարը: Սպասում-սպասում է, որ լիովին մթնի, գալիս հուշիկ քայլերով վեր է բարձրանում, միջանցքի մուտքի մոտ հանում է կոշիկները, դնում թևի տակ: Ախ այդ անիծյալ ճռճռան տախտակները): Կամացուկ-կամացուկ, շունչը պահած, ինչպես բանաստեղծն է ասում. «Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև» Մարգարն անցնում է միջանցքով և վերջապես կանգ առնում այն դռան առաջ, որտեղ, ինչպես ինքն է ասում, սիրած աղջկա հետ երկար-երկար զրուցում են միջազգային դրության և այլ հարցերի մասին: Կանգնում մի քիչ, ականջ է դնում, հետո կամացուկ հրում, բացում է դուռը և... հայտնվում է աղջկա չար քեռու ողջ գերդաստանի առաջ, պայծառ լուսավորված սենյակում՝ գունատ դեմքով, վառվող աչքերով, կոշիկները թևի տակ:

Վերադարձի ճանապարհը Մարգարը անցնում է անհամեմատ կարճ ժամանակում, անգիտակցաբար բարելավելով հանրապետության վազքի բոլոր ռեկորդները՝ իրենից բավականին ետ թողնելով չար քեռուն, չար հորեղբորը, չար, չար, չար մորաքրոջ-քրոջ-հորաքրոջը և նրանց նետած գնդերն ու սկավառակները, նիզակներն ու ցախավելները: Սպորտի մեջ թույլատրվում է միայն երեք փորձ, տարաբախտ Մարգարը տասնութ փորձ է կատարել ցանկալի առանձնասենյակում երկար-երկար զրուցելու համար, որից տասնյոթը ավարտվել է անհաջողությամբ:

Բայց համառ է Մարգարը, մի անգամ ճիշտ նպատակակետում հայտնվելը այնպես է ոգևորել նրան, որ մինչև այսօր էլ գիշերները բարեխղճորեն այցելում է աղջկա մեկ այս, մեկ այն բարեկամին, գունատ դեմքով, վառվող աչքերով, կոշիկները թևի տակ:

Խոստովանենք, որ սա ծիծաղելի է: Այսինքն՝ ծիծաղելի է մի կողմից: Մարգարն, օրինակ, ինձ պատմելու ժամանակ բոլորովին չէր ծիծաղում: Հումորի զգացում չունի, թե ինչ, չեմ հասկանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ, վերջապես, ի՞նչ բան է ծիծաղը: Ծիծաղելին հիմնականում այն է, ինչ ուրիշների հետ է կատարվում: Նույնը երբ մեզ հետ է կատարվում, դառնում է ողբերգություն:

Հետաքրքիր է, չէ՞: Չէ, այսօր մի քիչ փիլիսոփայորեն եմ տրամադրված, երգիծանք չի ստացվում: Ստիպված պետք է լինեմ կյանքիս մեջ առաջին անգամ չկատարել խոստումս:

Կներեք, հարգելի խմբագրություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անակնկալ

Նրանք կանգ առան ռեստորանի նախասրահում: Ուրախ աղմուկ կար, նվագ, հուրհրան ջահեր, օդի հոսանք, որ ֆիզիկայի համապատասխան օրենքով տաք վիճակում դուրս էր գալիս շքամուտքից և նույն շքամուտքից ներս մտնում սառը վիճակում: Սառը վիճակում ներս մտնող օդի հոսանքի մեջ հայտնվում էին նորանոր զույգեր՝ երջանիկ, վառվռուն դեմքերով, խոսում էին քնքշորեն, նուրբ, զգացմունքով, ասում էին.

— Սիրելիս:

— Խնդրեմ:

— Եթե կարելի է:

— Օ, ինչ եք ասում:

Նրանք, որ կանգ էին առել ռեստորանի նախասրահում, իրար նայեցին :Կինը երկնչոտությամբ ձգեց ամուսնու թևից և նայելով նրա ակնոցին, որի ապակիների վրա շրջված արտացոլվել էր շենքի գունավոր ռեկլամը, «հարմար, էժան, կահավետ է», մեղմիկ շշնջաց.

— Գվիդոն, սիրելիս, ինչո՞ւ ինձ բերեցիր այստեղ: Նոր տարվա այս գիշերով ընկնելու է տրամադրությունս: Այդ կեղտոտ բաժակները, ափսեները, մատուցողներն՝ իրենց բիրտ շարժուձևերով, նրանց անգրագիտությունը թվաբանությունից… Տարրական գումարում անգամ չգիտեն:

— Դե, այդ մեկը չէ,— ժպտաց մարդը, որին Գվիդոն անվանեցին,— այդ մեկը չէ: Գումարման հարցում, սիրելիս, նրանք ֆանտաստիկ երևակայություն ունեն: Նույնիսկ բազմապատկման են հասցնում…

Բայց նա դեռ չէր ավարտել իր ապագա բարդ ստորադասական նախադասությունը, որը կարծես թե ոչ մի բարենպաստ միտք չէր պարունակելու մատուցողների հասցեին, երբ բացվեց դիմացի ապակեպատ դուռը և հայտնվեց սարկավագի՞, թե էստրադային արտիստի հագուստով մի մատուցող ոտքից գլուխ սև, սպիտակ թիթեռնիկ-փողկապով: Նա գլխի թեթև խոնարհումով ողջունեց զույգին, հեռուստատեսության ստուդիայի մեկնաբանների արժանապատվությամբ շնորհակալություն հայտնեց ուշադրության համար, որ հատկապես իրենց ռեստորանն են եկել և տեղեկացավ, թե ինչպիսի՞ սեղան կուզեին ընտրել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Մեկուսի, եթե հնարավոր է,— չգիտես ինչու շիկնելով խնդրեց տղամարդը:

— Օ, խնդրեմ,— ասաց մատուցողը,— այս սեղանը թերևս ամենահարմարն է: Պատուհանից հիանալի տեսարան է բացվում: Ահա կերակրացանկը տիկին:

Կինը փոքր-ինչ զարմացած մեկ մատուցողին նայեց, մեկ էլ կերակրացանկին և ցանկություն հայտնեց, որ ամուսինը պատվիրի: Այնժամ ամուսինը ծալեց կաշեկազմ կերակրացանկը և սևեռուն նայեց մատուցողին,

— Ընկեր,— ասաց նա,— այսպիսի ցուցակներ շատ եմ տեսել: Ինչ էլ հարցնեմ, ասելու եք՝ չկա: Ավելի լավ է բանավոր թվեք եղածը:

— Ինչ որ նշված է, կա,— թեթևակի վիրավորված պատասխանեց մատուցողը: Կարող եք չանհանգստանալ:

— Ի՞նչ եք ասում: Այդ դեպքում բերեք մեզ համար... ահա սառը թառափ, ձիթապտուղ, սալաթ պոմիդորով և վարունգով...

Մատուցողը, որը սղագրողի ճարպկությամբ նշումներ էր անում, հանկարծ բարձրացրեց գլուխը և հարցրեց մտախոհ.

— Սալաթը ձիթայուղո՞վ կհաճեիք,թե քացախով:

— Ձիթայուղով,— ասաց կինը:

— Քացախով,— ասաց տղամարդը:

— Հասկացա,— ժպտաց մատուցողը: Կմատուցեմ առանձին –առանձին:

Այս անգամ տղամարդը մտախոհ նայեց մատուցողին, շնորհակալություն հայտնեց շփոթված և խնդրեց բերել նաև մրգահյութ ու պանիր:

— Ինչպիսի՞ պանիր,— տեղեկացավ մատուցողը,— սովետակա՞ն, շվեյցարակա՞ն, հոլանդակա՞ն, ռոկֆո՞ր, Եղեգնաձորի՞, բրինզա՞, չանա՞խ, Արագածի՞ , թե՞լ...

— Թել,— հմայված շշնջաց կինը:

— Իսկ կարելի՞ է խո-խո-խորոված,— կակազեց տղամարդը:

— Ինչո՞ւ չէ, բայց եթե թույլ կտաք, ես ձեզ համար կպատվիրեմ խորոված իշխանաձուկ: Գիտե՞ք ինչ, խորովածը թարմ մսից չէ,— հոգածությամբ զգուշացրեց մատուցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կարիք չկա ասելու, որ հաճախորդներն անմիջապես համաձայնեցին և հուզված տղամարդը խնդրեց նաև կոնյակ՝ երկու հարյուր գրամ և մի շիշ շամպայն:

— Շամպայնը դա՞ռը, կիսադա՞ռը, քա՞ղցր, կիսաքա՞ղցր,— հետաքրքրվեց մատուցողը:

Եվ հանկարծ տղամարդը գունատվեց:

— Լսեք, դուք հո մեզ չե՞ք ծաղրում,— ջղային հարցրեց նա:

— Ներեցե՞ք,— խոնարհվեց մատուցողը,— ձեզ չհասկացա:

— Գվիդոն, դու քեզ կորցնում ես,— միջամտեց կինը: — Կիսաքաղցր, խնդրում եմ, և եթե կարելի է՝ սառույցով:

— Մեզ մոտ շամպայնը միայն սառույցով են մատուցում:

— Տեր աստված, դու ինձ համբերություն տուր,— մրմնջաց տղամարդը կամացուկ,— եղբայր, սա ի՞նչ բան է, երեկ չէ՞ր, որ շամպայնը մատուցում էիք գոլ ջրի մեջ թրջած լաթով:

— Ի՞նչ, դու երեկ այստե՞ղ ես եղել, Գվիդոն,— ձայնի մեջ խոր թաքնված սպառնալիքով հարցրեց կինը:

— Ոչ, սիրելիս, ես ընդհանրապես եմ ասում,— վախեցավ ամուսինը,— տղաները պատմում էին, որ...

— Այո-այո, դուք իրավացի եք,— հանկարծ հիշեց մատուցողը,— սառույց արտադրող սարքը մի օր չէր աշխատում: Կներեք: Սուրճ կուզեի՞ք վերջում:

— Անպայման:

— Դու որևէ բան հասկանո՞ւմ ես,— ասաց ամուսինը, երբ մատուցողը հեռացավ:

— Հիանալի,— բռնկվեց կինը,— հիանալի եմ հասկանում, որ դու երեկ այստեղ ես եղել: Միայն թե առայժմ չգիտեմ՝ ում հետ: Իհարկե... նոր եմ հասկանում, թե ինչու է ինձ ռեստորան բերում, խիղճը տանջում է: Մի առարկիր:

Գվիդոնը գործադրեց նման տխուր վիճակում գտնվող տղամարդու դարավոր փորձը և ի վերջո կարողացավ համոզել, որ ինքն անմեղ է, թեև կինն այդ փայլուն պաշտպանականից հետո, այնուամենայնիվ, իբրև ռազմատուգանք պահանջեց, որ Գվիդոնը իր համար նոր մուշտակ գնի, «Կոսմոսի» փոխարեն ձեռք բերի իսկական «Գանկա» տիպի կահույք և մորը համոզի անորոշ ժամանակով տեղափոխվել ավագ որդու տուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հայտնվեց մատուցողը՝ ձեռքին սպիտակ մեխակների մի սքանչելի փունջ:

— Ներեցեք, տիկին, ինձ թվաց, թե դուք մեխակներ եք սիրում,— ասաց նա,— եթե այդպես չէ, ես հենց հիմա ձեզ վարդեր կբերեմ:

— Ոչ, ոչ, դուք կոռահել եք,— հաճելիորեն զարմացավ կինը,— պաշտում եմ սպիտակ մեխակները…

— Շնորհակալություն,— ժպտաց մատուցողը,— իսկ հիմա կբերեմ խորտիկները, ամեն ինչ պատրաստ է:

Նրա հեռանալուց հետո տղամարդը պոռթկաց՝ իր զարմանքին խառնելով այն ամբողջ վիշտն ու ցավը, որ նա դեռ զգում էր քիչ առաջ կնոջը խոստացած ռազմատուգանքի պատճառով:

— Լսիր, դու որևէ բան հասկանո՞ւմ ես:

Կինը թոթվեց ուսերը և ասաց զիջողաբար.

— Ոչինչ, ոչինչ չեմ հասկանում:

— Ախր այդպես չի կարող լինել,— դառնացած ասաց տղամարդը,— սա այնքան անբնական է. այստեղ մի մեծ հանելուկ կա՝ դավադրության նման մի բան; Եթե մատուցողն ասեր. «Սա է, ուզում եք կերեք, ուզում եք՝ չէ», կամ կոպիտ վերաբերվեր, թերևս կբարկանայի, բայց ավելի հանգիստ, ավելի ապահով կզգայի ինձ:

— Գիտե՞ս ինչ,— մեխակները հոտոտելով, քնքշացած ասաց կինը,— Գուցե նոր տարվա առթիվ արտակարգ ուշադրություն են դարձնում, գուցե և մեզ բախտ է վիճակվել լավ մատուցողի հանդիպել: Լինում է, չէ՞:

— Չէ, սիրտս չի դիմանա,— տնքաց տղամարդը,— ախր սա կարծես ամեն ինչ դիտմամբ է անում: Ո՞վ է տեսել, որ այսքան արագ մատուցեն: Ո՞վ է տեսել… Տես, տես, բաժակները մաքրությունից նույնիսկ փայլում են:

— Կներեք, որ մի փոքր ուշացրի,– շշնջաց մատուցողը և սկսեց արագ-արագ տեղավորել ափսեները:

— Ընկեր, դուք ինձ կներեք, բայց որպեսզի այս գիշեր կաթված չստանամ, խնդրում եմ պատասխանեք իմ մի հարցին:

— Խնդրեմ,— թեքվեց մատուցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Գվիդոն…— խնդրեց կինը:

— Սպասիր,— նրա ձեռքը հեռացրեց տղամարդը: Լսեք, հարգելի ընկեր, հարգելի բարեկամ: Ի՞նչ է պատահել:Ես կխենթանամ: Ինչո՞ւ չեք կոպտում, ինչո՞ւ չեք վիրավորում: Ինչո՞ւ ափսեները կեղտոտ ու թաց չեն, ինչո՞ւ չեք խառնել պատվերները և թառափ ձկան փոխարեն, օրինակ, բժշկական երշիկ բերել:Ի՞նչ է պատահել այստեղ: Ես պետք է իմանա՞մ, թե ոչ: Այլապես սա այնքան անսովոր, անբնական ու… զզվելի է, որ ոչնչի ձեռք չենք տա:

— Գվիդոն…

— Ներեցեք, տիկին,— մեղմ, գրեթե թախծոտ ձայնով ասաց մատուցողը,— ցավոք, ընկեր Գվիդոնը միանգամայն իրավացի է: Այո: Մեզ մոտ թերություններ շատ կային: Սակայն, հավատացնում եմ ձեզ, մինչև երեկ: Երեկ առավոտյան արհմիութենական ընդհանուր ժողով էր: Եկել էր նաև մեր մինիստրի տեղակալը: Շատ խոսեցինք, գտանք, որ այդպես շարունակել չի կարելի և պարտավորվեցինք նոր տարուց աշխատել այլ ձևով, նոր ձևով, մոտավորապես այսպես: Ահա ամբողջ գաղտնիքը: Դե, մենք էլ՝ մատուցողներս, որոշեցինք՝ ինչու սպասել նոր տարուն, երբ կարելի է սկսել այսօրվանից: Ճիշտ է, դեռևս այնպես չի ստացվում, ինչպես հարկն է, սակայն…

— Ինչ եք ասում, ինչ եք ասում, պարզապես հրաշալի է,— ասաց կինը:

— Սրտիցս կարծես մի ծանր քար ընկավ: Շնորհակալություն, ընկեր,— ասաց տղամարդը:

— Խնդրեմ, դա մեր պարտքն է,— ասաց մատուցողը,– թույլ տվեք լցնել ձեր բաժակները:

— Հիմա տեսնո՞ւմ ես,— ասում էր կինը:

— Բայց ասում էի, չէ՞ , որ այստեղ մի գաղտնիք կա,— ասում էր տղամարդը: Եվ վերջապես, դո՛ւ չէիր ուզում ռեստորան գալ: Դե, ողջ լինես, սիրելիս:

— Ողջ լինենք, հոգյակս: Զարմանալի բան է, բայց տրամադրությունս այնպես բարձրացավ: Ինչու ամենուրեք արհմիութենական ժողովներ չեն անցկացնում: Հաճելի է, չէ՞:

— Որքան քիչ բան է պետք երջանիկ լինելու համար,— ասաց տղամարդը,— մի քիչ ուշադրություն, մի քիչ ժպիտ, մի քանի սիրալիր խոսք…

— Եվ մի քիչ կոնյակ,— ասաց կինը, ու նրանք խմեցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Այո, այո, և ահա ես երջանիկ եմ,— ասաց տղամարդը: — Սիրում եմ քեզ: Եվ ոչ միայն քեզ: Բոլորին: Նույնիսկ այն ճաղատ թմբկահարին, այն պառավ երգչուհուն, մեր այս ազնիվ մատուցողին…

— Ես էլ,— ասաց կինը:

— Դե, դե, հանկարծ չսիրահարվես նրան,— ծիծաղելով սպառնաց տղամարդը:

Եվ նրանք նստեցին երկար-երկար, հիշելով շատ քնքուշ ու շատ կարևոր խոսքեր, որ երբևէ ժամանակ չէին գտել իրար ասելու: Էստրադայից թախծոտ ու մեղմ նվագ էր հնչում: Պատուհանի ետևում ծանր ու մեծ փաթիլներով իջնում էր ձյունը՝ սպիտակ մաքրությամբ, ծածկելով ամեն ինչ: Իսկ ուղիղ կեսգիշերին հանկարծ մի խոր լռություն տիրեց և այդ լռության մեջ, ինչպես եկեղեցում, հանդիսավոր ղողանջով տասներկու անգամ զարկեց հրապարակի մեծ ժամացույցը: Պայթեց ցնծության աղմուկը, մարդիկ գրկեցին իրար, համբուրեցին՝ ազնվացած, հուզված, անկեղծացած: Իսկ տղամարդն ու կինն այնքան ներշնչված էին, այնքան բարի, որ կինը նույնիսկ համաձայնեց երկու ամսով հետաձգել ամուսնու մոր արտաքսումը սեփական տնից:

— Հրաշալի գիշեր անցկացրինք, այնպես չէ՞:

— Գվիդոն,— շշնջաց կինը: Այնքան ուրախ եմ: Եթե դեմ չես, մենք հաճախ կգանք այստեղ:

— Իհարկե,— ծիծաղեց տղամարդը,— բայց դա կախված է նաև մատուցողի թվաբանական գրագիտությունից: Չէ՞: Հիմա կտեսնենք:

Կարծես կռահելով, որ խոսքն իր մասին է, արագորեն նրանց սեղանին մոտեցավ մատուցողը:

— Լսում եմ ձեզ: Վերջնահաշի՞վը: Խնդրեմ, յոթ ռուբլի վաթսուներկու կոպեկ:

— Այդքան քի՞չ,— ուրախ զարմացավ տղամարդը: Դուք երևի սխալ հաշվեցիք:

— Ոչ, ոչ, ամեն ինչ ճիշտ է,— չարաճճիորեն ժպտաց մատուցողը: Դուք մոռացել եք նոր կարգը:

— Խնդրեմ, ստացեք ութ ռուբլի: Շատ զգացված ենք:

— Մի րոպե: Ահա մանրը:

— Հարկավոր չէ, խնդրում եմ:

— Տիկին, դուք ինձ վիրավորում եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Եղբայր, այս ի՞նչ օր է,— զգացվեց տղամարդը,— այդ դեպքում թույլ տվեք սեղմել ձեր ազնիվ ձեռքը:

Հետո նրանք հեռացան երջանկացած: Իսկ երբ նրանք հեռացան երջանկացած, մատուցողը շրջվեց ու... սկսեց ծիծաղել քահ-քահ: Նա խփում էր ծնկներին ու ծիծաղում էր: Ձեռքերով սեղմում էր կողերն ու ծիծաղում էր: Եվ ծիծաղեց այնքան, մինչև թուլացած նստեց աթոռին, հենց այն աթոռին, որը դեռ պահում էր Գվիդոն կոչվող քաղաքացու մարմնի ջերմությունը:

— Ի՞նչ է պատահել, տո,— հարցրեց նրա տարեց գործընկերը:

— Ախր, ախր դու չգիտես,— ծիծաղից խեղդվելով ասաց մատուցողը,— քիչ էր մնում լաց լինեին: Հավատացրի, թե չգիտեմ ովքեր են: Կինը երբ ասաց Գվիդոն, ես մատս կծեցի: Մեր դիրեկտորն ասել էր, որ ստուգելու նպատակով մեզ հյուր է գալու ինքը՝ առևտրի գլխավոր տեսույչ Գվիդոն Մարկոսովիչը: Պատուհանի տակի սեղանին հունական դրոշակ էի դրել, ամբողջ օրը ոչ ոքի չթողեցի նստել: Բայց դու միայն դրա մռութին նայեիր, մռութին, շատ մազալու տիպ էր:

— Ո՞վ,— պատմությունից երևի զվարճացած, ծիծաղի միջից հարցրեց նրա ընկեր մատուցողը:

— Գվիդոն Մարկոսովիչն, ո՞վ:

— Գվիդոն Մարկոսովիչը հրեն մեր դիրեկտորի հետ առանձնասենյակում նստած խմում է:

— Ի՞նչ: Ուրեմն էս Գվիդոնը...

— Ուրիշ Գվիդոն է եղել,— շարունակելով քրքջալ, ասաց տարեց մատուցողը:

Մատուցողը մի պահ մնաց անշարժ, հենված սեղանին, հետո հանկարծ վեր թռավ տեղից, նետվեց դեպի դուռն ու սանդուղքով սլացավ ներքև: Բայց երջանիկ ամուսիններն արդեն չկային: Մատուցողը շքամուտքից հրապարակ ելավ տաք հոսանքի հետ: Բայց երջանիկ ամուսիններն այնտեղ էլ չէին: Այնժամ մատուցողը գոռաց դատարկ հրապարակով մեկ:

— Գողեր, գողեր, խաբեբաներ...

Ու նրա ձայնը խուլ արձագանք տվեց շրջակա շենքերի ձյունոտ կամարների տակ:

Բացվում էր նոր տարվա առաջին առավոտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տառապանքի ուղիներով

Ո՞րն է ամենաճանր վիճակը:

Հազար-հազար պատասխան կարող եք տալ, սակայն դրանցից և ոչ մեկը ճշմարիտ չի լինի, եթե... եթե խմբագրության աշխատող չեք:

Ամենաճանր վիճակը հեղինակի նյութը մերժելու արարողությունն է:

Ահա կանգնած է քո դեմ, մեկնել է բանաստեղծությունների տետրն ու աչքերը հառել է քեզ: Կարդում ես, իսկ նա քեզ հետ մտքում թերթում է էջերն ու շրթունքներն անձայն շարժելով արտասանում: Բոլորն անգիր գիտի անաստվածը: Ո՞նց էլ անգիր է արել: Ախր սարսափելի վատ ոտանավորներ են: Դժվար է ավելի վատ գրել: Բայց, իհարկե, մերժելն անհամեմատ դժ վար է:

— Գիտե՞ք ինչ— ասում եմ, նայելով նրա երկնագույն, վճիտ ու թափանցիկ աչքերին,— ինձ թվում է, թե ձեզ ավելի շատ արձակը կհաջողվի: Սրանք էլ վատը չեն,– անմիջապես ավելացնում եմ, նկատելով նրա ձեռքի սպառնագին շարժումը: Բայց այն չեն, էլի: Այ, փորձեք կարճ պատմվածքներ, նովելներ գրել: Այժմ բանաստեղծությունն առանձնապես...

Հիմա կթողնի ու կգնա:

Չէ՛, նրանցից չէ: Լայն, պայծառ ժպտում է, ձեռքը ձախ ծոցագրպանն է տանում, հանում ու սեղանին է դնում պատմվածքների մի պարունակ:

— Գրում եմ, գրում,— ասում է,— կարդացեք:

Կարդում եմ ու դողում: Հիմա ի՞նչ անեմ: Ո՞ւմ մտքով կանցներ, թե պատմվածքներ էլ կունենա, գոնե մի քիչ, ա՛յ, այսքան՝ պատմվածքի նման լիներ: Գոնե ազգակցական, արյունակցական հեռավոր ինչ-որ կապ ունենար պատմվածքի հետ: Այդ ժամանակ գուցե տպագրեինք «Մեր ընթերցողների ստեղծագործությունները» փրկարար խորագրի տակ: Բայց, չէ, ի՞նչ բարեկամություն, ի՞նչ ազգակցական կապ:Էրիվ որբ են այս ընկերոջ պատմվածքները:

— Գիտե՞ք ինչ,— ասում եմ, աշխատելով չնայել նրան,— մի տեսակ... այսպես... ըըը, պատմվածքներ են, այո, հանգեր չկան... Չկան, չէ, ոչ ոք չի կարող ասել թե կան... բայց, բայց մի տեսակ վերլուծականը շատ է: Գուցե փորձեիք գրախոսական...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նկատելով, որ նա ձեռքը սառնասրտորեն աջ ծոցագրպանը տարավ, ես գունատվեցի ու վայրկենապես փոխեցի մտադրությունս:

— Չէ, չէ, ոչ թե գրախոսական այլ թատերական ռե-ցե...

Նրա ձեռքն արդեն անդրավարտիքի ձախ գրպանում էր: Եվս մի ակնթարթ և...

— Ոչ, ակնարկ, ակնարկ, ահա թե ինչ, ձեզանից ակնարկագիր կստաց...

Բայց սա արդեն մղձավանջ է: Հիմա նա անդրավարտիքի աջ գրպանից կհանի ու...

Հետագա մի քանի վայրկյանների ընթացքում համոզվեցի, որ ակամա՝ տիկնիկային թատրոնի դերասանի վտանգավոր ուղիով եմ գնում: Արագորեն նշմարելով նրա ձեռքի շարժումները, ես նոր խնդիրներ էի առաջադրում պատուհաս հեղինակին և ստանում վայրկյանական ռեակցիա:

— Առակ...

Ձեռքը պիջակի արտաքին ձախ գրպանում է:

— Ֆելիետոն...

Աջ գրպանում է:

Ուշադիր հետևում եմ: Այլևս գրպան չի մնացել: Ահա, հիմա կհաղթեմ: եվս մի հարված: Բայց ինչո՞վ, ինչո՞վ: Է՞լ ինչ հանձնարարեմ: Հիմա եմ զգում, թե որքան ծանր է եղել այն թագավորների վիճակը, որոնք իրենց համար վտանգավոր մարդկանց ուղարկել են անմահական խնձոր, հազարան բլբուլ կամ թևավոր ձի բերելու: Այսպիսի մարդը ձին անդրավարտիքի փոքր գրպանից էլ կհանի: Ա՛խ, ինչպես էի մոռացել: Այդ գրպանիկը դեռ կա: Բայց, լավ, ի՞նչ կարող է նա պահել այնտեղ: Սպասիր, գտա:

— Վեպ պիտի գրես, վեպ, ահա թե ինչ: Մեծ, ընդարձակ, հարյուր մամուլանոց մի վեպ,— ասացի ես, հուսահատորեն նրա անդրավարտիքի փոքրիկ «պիստոնչիկ» գրպանիկին նայելով:

Նա աջ ձեռքի երկու մատը դանդաղորեն դեպի գրպանիկն է տանում: Եթե երկու մատով հարյուր մամուլանոց վեպ հանեց այդ գրպանիկից, ես տեղն ու տեղն ինքնասպանություն կգործեմ,

Դրանից հետո այլևս ապրել չարժե:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Թույնի կաթիլներ

Հնուց ի վեր ամենաանպատիվ, արհամարհելի, նզովքի արժանի արարքը համարվել է գուժկանությունը: Գուժկան, բոթաբեր մարդկանց անվանել են ագռավ, բայղուշ, բվեճ: Նրանց տեսնելիս անիծել են, փոխել են ճանապարհը, խաչակնքվել են: Իսկ թագավորներն իրենց անսահմանափակ իշխանությունից օգտվելով, հրամայել են կտրել այն մարդու լեզուն, որը համարձակվել է տեղ հասցնել բոթը, ահագուժել, հրամայել են սպանել գուժկանին, որ եկել կանգնել է թագավորի առաջ ու հայտարարել.

— Իմացած լինես, որ քո թշնամին հարձակվել, գրավել է քո քաղաքները, գլխատել է եղբորդ, անարգել է ծնողներիդ գերեզմանը...

Եվ, իմ կարծիքով, այս հարցում թագավորները ճիշտ են վարվել:

Վատ լուր հաղորդելը սոսկալի ծանր պարտականություն է և, ուրեմն, այն պետք է կատարել զգուշորեն, նրբությամբ, մեծ տակտով: Թող տարօրինակ չթվա, բայց վատ կամ տխուր լուր հաղորդողը նախ և առաջ պետք է դրա իրավունքն ունենա, բոթն ստացող մարդու մտերիմը լինի, բարեկամը, հարվածը կասեցնողը լինի ու մեղմողը: Այլապես, շատ ավելի լավ է, որ մարդ չիմանա էլ, թե ինչ է պատահել իրեն, եթե դժբախտությունը կանխելն ուշ է արդեն, և դեպքին տեղեկանա բնականոն ընթացքով, իր ժամանակին:

Ընկերներիցս մեկը պատմում է.

Մի օր առավոտ վաղ ինձ արթնացրեց հեռախոսի զանգը: Զարմացա, ո՞ւմ եմ պետք եկել այդ ժամին: Վերցրեցի լսափողն ու ավելի զարմացա. իմ ծանոթ լրագրողներից մեկն էր, որ երբևէ ինձ զանգահարած չկար:

— Բարի լույս:

— Բարի լույս: Այս ժամին...

— Զարմացա՞ր, որ զանգ եմ տալիս: Չէի կարող չզանգահարել: Գիտե՞ս ինչ է եղել:

— Ի՞նչ է եղել:

— Այ մարդ, քո մասին մի զզվելի նյութ է տպագրվել մեր թերթում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ի՞նչ...

Դե, իհարկե, կատակում է:Ի՞նչ պետք է գրեն իմ մասին: Բայց ի՞նչ կարիք կա կատակելու այս ժամին: Սիրտս տհաճ, անհանգիստ բաբախում է:

— Չէ, ի՞նչ կատակ,— նույնիսկ նեղացած հայտարարում է ծանոթս,— գրել են ու այն էլ շատ կոպիտ, նույնիսկ քաղաքական մեղադրանքներ կան: Ուզո՞ւմ ես կարդամ...

Ու, առանց սպասելու, կարդում է, կարդում է՝ շեշտելով ամենավիրավորական բառերը, կարդում է մի տեսակ բավականությամբ, ասես արտասանում է, ասես հենց ինքն է գրել: Կոկորդս սեղմվում է, ցավում է սիրտս, զայրույթից խեղդվում եմ: Ոչ միայն գրածի համար, չէ, գրածը զրպարտություն է և կհերքվի, ինձ ավելի շատ վշտացնում ու բարկացնում է այդ իմ ծանոթի դերը, առույգ տրամադրությունը, առոգանությունը:

— Հետո՞,— հարցնում եմ:

— Էլ ի՞նչ հետո:

— Կարո՞ղ եմ այնպես անել, որ դա չտպագրվի:

— Ո՞նց թե չտպագրվի,— նույնիսկ ծիծաղում է նա,— արդեն տպագրված է: Թերթից եմ կարդում: Նոր բերեցին:

Քիչ է մնում հայհոյեմ:

— Ուրեմն, ինչո՞ւ ես առավոտ շուտ արթնացնում: Որ աչքալուսա՞նք տաս, որ շնորհակալությո՞ւն հայտնեմ: Կգնայի աշխատանքի՝ կիմանայի: Ինչո՞ւ ես շտապում, ինչո՞վ ես օգնում ինձ, ի՞նչ մարդ ես դու...

Նա ասես թե շփոթված ու վիրավորված ինչ-որ բան է քրթմնջում «ուշադրության», թե «լավության» մասին, բայց ես նետում եմ լսափողը և արդեն թունավորված եմ:

Եվ դեռ «բարի լույս» է ասում՝ տհաճ, ցավեցնող լուրը հայտնելուց առաջ: «Բարի լույս»: Ի՞նչ բարի լույս, երբ լույս-առավոտն արդեն խաթարված է, երբ ցնցված ու գրգռված շտապում ես թերթ գնելու, չես լսում կնոջդ խոսքերը, կոպտում ես երեխաներիդ ու չես պատասխանում հարևաններիդ «բարի լույս»-ին:

Եվ իրոք, ի վերջո, ի՞նչ նպատակ ուներ նա, ի՞նչ նպատակ ունեն նրա նմանները, երբ շտապում են ժամ առաջ դառն ու չար լուրեր հաղորդել, թունավորել մարդկանց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց սա դեռ ամենավատը չէ, սա դեռ, ինչպես ասում են, փոքրագույնն է չարյաց: Նույնիսկ առարկողներ կլինեն, կասեն՝ մեծ բան չէ, մարդը եղածն է հայտնում, կասեն միևնույնը չէ՞, վաղ թե ուշ իմանալու էիր: Եվ նրանք, գուցե, որոշ չափով իրավացի են: Բայց ի՞նչ ասես ոմանց, որ չեղած բանն են հայտնում քեզ, հորինում են, իրենց մտքերը վերագրում ուրիշին, բամբասում…

Խաղաղ, պայծառ կիրակի է: Երեխաներիդ թևից բռնած, ուրախ ծիծաղով, կատակով մանկական այգի ես գնում: Թվում է՝ ոչ մի բան չի կարող փչացնել տրամադրությունդ: Բայց ահա հանդիպում է մեկը.

— Օ, ողջույն, ողջույն, սրանք քո՞ երեխաներն են:

— Իհարկե,— զարմանում ես դու:

— Յա,— ապշում է ծանոթդ,— բա ասում էին լքել ես երեխաներիդ:

— Ե՞ս, ո՞վ է ասում, այ քեզ հիմարություն:

— Ասում են, էլի, լեզվի տակ հո ոսկոր չկա: Ասում են, թե հեռացել ես տնից, երեխաներիդ ալիմենտ չես տալիս, դատարանում ծեծել ես կնոջդ, մանր խուլիգանության համար…

— Բայց ո՞վ է ասում, ո՞վ է ասել, ո՞վ է…

— Ո՞վ էր, է, սպասիր, չէ, չեմ հիշում: Դե դա ի՞նչ կարևոր է, տեսնում եմ, որ ամեն ինչ լավ է, դե, ապրես, ապրես…

Թփթփացնում է ուսիդ, հեռանում, և հանկարծ դու զգում ես, որ լավ տրամադրությունից հետք անգամ չի մնացել: Քայլում ես ու մտածում՝ ո՞վ այդպիսի զրպարտություն տարածած կլինի, հերթով մտաբերում ես քեզանից որևէ հարցով դժգոհ ծանոթներիդ, զայրանում ես, խոսում ինքդ քեզ, վիճում և… մնաս բարով, լավ տրամադրություն, ծիծաղ ու կատակ, մնաս բարով, մանկական այգի: Իսկ այդ «ծանոթիդ» հենց այդքանն էլ հարկավոր էր:

Զարմանալի է, բայց կան մարդիկ, որ տանել չեն կարողանում ուրիշի երջանկությունը, խաղաղ, հանգիստ կյանքը, նրանց թվում է, թե իրենցից պակասում է ինչ-որ բան, երբ դու ուրախ ես, գոհ ես, որ դու նրանց հաշվին ես աշխատանքում առաջ գնում, արժանանում պարգևի ու խրախուսանքի, որ դու նրանց փոխարեն ես ապրում ու շնչում:

Եվ սկսում են, գործի են դնում թույնի կաթիլները… Քիչ-քիչ, թեյի գդալով: Տարիներ շարունակ աշխատում ես մեկի հետ, նստում նույն սենյակում, միասին նախաճաշում: Բնավորությունդ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սովորություններդ, կյանքդ անգիր գիտի: Բայց մի օր էլ հանկարծ (հատկապես, երբ քեզ լավ ես զգում) հարկ է համարում բացականչել.

— Հա, մոռացա ասել: Երեկ տրոլեյբուսով կայարան էի գնում, մեկ էլ լսեցի, որ կողքիս աթոռին նստածները քո մասին են խոսում:

— Ի՞նչ էին ասում:

— Ասում էին, թե շնորհքով հաշվապահ է, բայց շատ ագահ է, աչքաճակ, բարձր աշխատավարձ է ստանում, երեխա էլ չունի, բայց գյուղի այգու իրենց խնձորները Սիբիր է տանում, որ թանկ գնով վաճառի: Ասում էին, թե իբր եղբորդ երեխաներին փողոց ես նետել ու զավթել նրանց բնակարանը, թե կինդ հուսահատությունից կախել է իրեն… Տեսնո՞ւմ ես ինչ ստոր մարդիկ կան…

— Ովքե՞ր էին,

— Ես ի՞նչ իմանամ, ուղևորներ էին, էլի:

— Լավ, բայց դու հո գիտե՞ս, որ ես բարձր աշխատավարձ չեմ ստանում, որ հինգ երեխա ունեմ, որ քաղաքում եմ ծնվել, որ եղբայր էլ չունեմ, բնակարան էլ…

— Գիտեմ, իհարկե:

— Բա ինչո՞ւ չասացիր նրանց:

— Ե՞ս: Անծանոթ մարդիկ էին, ի՞նչ ասեի: Գլո՞ւխ դնեի հետները:

— Իսկ ինչու ես ինձ ասում: Ես որտե՞ղ գտնեմ նրանց, որ համոզեմ, թե սխալվում են: Եվ, վերջապես, դո՞ւ ինչու ես այդ հիմարություններն ինձ հայտնում:

Եվ միշտ նեղանում են.

— Եղա՞վ: Երբ քո մասին նման բաներ եմ լսում, էլ ո՞ր օրվա ընկերդ ու բարեկամդ եմ, որ չզգուշացնեմ: Դե եկ ու լավություն արա…

Մեկն այսպես, մյուսն այնպես, տարբեր ձևերով ու տարբեր չափերով, սակայն նույն նպատակներով ու նույն անազնվությամբ սրսկում հա սրսկում են թույնի կաթիլները: Եվ նրանց առաջն առնելը գրեթե անհնար է: Անհնար է, որովհետև քրեական և ոչ մի օրենսգրքում պատիժ չի սահմանված գուժկանների, զրահակիր զրպարտիչների, առերևույթ ժպիտով ու հոգածությամբ մարդկանց կյանքը թունավորողների նկատմամբ: Անհնար է «գրեթե»,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

որովհետև մի ելք կա միայն, որ բոլորը միահամուռ, մի չգրված օրենքով բամբասողներին, «ուրիշի» ասածը հաղորդողներին, նենգ բանբերներին դիտեն իբրև առաջին դեմք, իբրև ստոր տեղեկությունների աղբյուր և բռնեն հենց նրանց օձիքից, նրանց կանչեն պատասխանատվության:

Թեև, իհարկե, ամենաճիշտն այս հարցում՝ հին թագավորների դիրքն է եղել երևի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նվերը

Նոր տարվա առավոտ է: Կինը լավ տրամադրությամբ՝ երգի տակտով շարժվում է սենյակում, դասավորում սեղանը: Հայտնվում է ամուսինը, նա նույնպես ուրախ է, մոտենում է կնոջը:

— Բարի լույս, և նորից շնորհավոր նոր տարիդ:

— Շնորհակալություն, քո նոր տարին նույնպես, և շնորհակալություն ուշադրության համար:

— Բայց չկարծես, թե ամուսինդ այնքան անշնորհք է, որ չի մտածել որևէ նվերով նշել այս նոր տարին: Գիտես, որ ես միշտ կարողացել եմ, թեկուզ երեք ռուբլիով, գոնե մի մեխակ բերել քեզ:

— Գիտեմ, սիրելիս, գիտեմ...

— Բայց այսօր ոչ միայն մեխակ, այլև աշխարհի բոլոր ծաղիկներն էլ եթե բերեի, ինչպես գուսան Աշոտն է ասում «Հազար ծաղիկ թե որ ինձ տան, յար առանց քեզ ինչի՞ս է պետք,,,», դու այնքան չէիր ուրախանա: Քեզ ուրիշ նվեր եմ տալու այսօր:

— Ի՞նչ նվեր, Բագրատ ջան:

— Չէ, այդքան շուտ ասողը չեմ:

— Ի՞նչ, ի՞նչ, Բագրատ ջան:

— Դե ասա, դու ինձ սիրո՞ւմ ես:

— Ուու, նո՞ր պետք է ասեմ: Ի նչ, ի՞նչ:

— Չէ, ասա, սիրո՞ւմ ես, սիրո՞ւմ ես:

— Դե, սիրում եմ, դե ասա, սիրում եմ... ի՞նչ, ի՞նչ...

— Վարդ, օդ, լազուր, գետակ, արև...

— Չհասկացա: Ի՞նչ:

— Ակրոստիկոս արա,— հրճվանքով բացականչեց ամուսինը, — առաջին տառերն ասա:

Կինը սկսեց մտածել, և դա հաջողվեց նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Վ... ռ... լ... գ... ա... Վոլգա՞, ճամփորդության ենք մեկնելու Վոլգա գետո՞վ, Բազրատ ջան:

— Ոչ, ոչ, մեր «Վոլգայով» ենք ճանապարհորդելու, անուշս, մեր «Վոլգայով», բաա՞, այդպես կզարմանաս: Պատկերացնո՞ւմ ես, թաքուն հերթի էի գրվել, հերթս հասել է, ուզում էի քեզ անակնկալ մատուցել: Եվ ահա «Վոլգա»… Ահա քեզ նոր տարվա, իմ նվերը...

— Կատակո՞ւմ ես:

— Ի՞նչ կատակ, ազնիվ խոսք: Պատկերացնո՞ւմ ես, ես նստում եմ ղեկի մոտ, դու նստում ես կողքիս, իսկը, իսկը այն անեկդոտի նման. «Մարդ պիտի նստի քովս» հա, հա, հա, իսկ երեխաները…

— Ո՞ւմ երեխաները:

— Մեր երեխաները, ո՞ւմ:

— Իմ երեխաներն այդ մեքենան չեն նստի:

— Վախենո՞ւմ ես, չկասկածես, վարորդական իրավունք ունեմ: Ուրեմն, ես կնստեմ ղեկի մոտ, իսկ դու կողքիս... Հա, իմիջիայլոց, դու ո՞ր գույնն ես սիրում, տարբեր գույներ կան, միասին կգնանք, կընտրենք ամենալավ գույնի մեքենան…

— Հա, հա, ես գիտեմ, թե ով կնստի կողքիդ:

— Դու, ո՞վ...

— Չէ, չէ, ես լավ գիտեմ… «Վոլգա»… իբր մինչև հիմա շատ էինք երեսը տեսնում, հիմա էլ «Վոլգա» է առնում, երանի մեզ, էլ ի՞նչ հոգս ունեմ, ամուսինս սրանից հետո «Վոլգա»-ով է ման գալու: Դե գնա գտիր…

— Վայ, վայ, վայ, ինչեր ես ասում... Մի լավ գույնի մեքենա կառնենք, ամառը միասին կնստենք ու...

— Ո՞ւմ հետ կնստես, ոտքով ման գալուց հոգնել եք, հա՞:

—Ո՞վ...

— Դու շատ լավ գիտես, թե ով, ինձ միամիտի տեղ ես դրել, հա՞: Գնա նոր տարվա առթիվ նրան ուրախացրու, նրան…

— Ո՞ւմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դու լավ գիտես, թե ում... «Վոլգա»... իհարկե, մինչև հիմա ամաչում էիր նրանից, որ տաքսիով էիր զբոսանքի տանում:

— Ումի՞ց...

— Դու լավ գիտես ումից: Հոլովներով է խոսում. ով, ում, ումից: Ուրախացնելու բան գտավ, քանի ես ողջ եմ, այդ «Վոլգա»-ն մեր տունը չի մտնի:

— Վայ, անուշ ջան,— փորձեց կատակել ամուսինը,— «Վոլգան» իհարկե տուն չի մտնի, մի լավ թիթեղյա տնակ կդրնենք բակում...

— Ուրեմն դեռ ծաղրում ես, հա՞, ուրեմն իմացիր, կամ «Վոլգան», կամ ես...

— Դու՝ «Վոլգան» քո մեջ: Թյու, խելքս թռցրել եմ, «Վոլգան», դու էլ մեջը:

— Ոչ, ոչ, ոչ...

— Այո, այո, այո , կգնեմ ամենալավ գույնի մի ավտոմեքենա...

— Գնա, գնա այն աղջկան ասա...

— Հիմար բաներ ես ասում... Ուրեմն կգնամ, ամենալավ գույնի մի աղջիկ կառնեմ...

— Այ ապրես, հիմա սրտինդ ասացիր, ի՞նչ գույնի աղջիկ: Գուցե միասին ընտրենք... Հը՞, գուցե կապույտ աղջիկ՝ «Ակաթի ու կաթի պես հոգեթով», հա՞ ...

— Ի՞նչ աղջիկ, լավ, լավ, մի տեղանոց մոտոցիկլետ կառնեմ, պրծա՞նք...

— Նրան էլ ուսիդ կտանես, չէ՞ ... ձևը կգտնես...

— Լռիր:

— Չեմ լռի, այսօր չեմ լռի,— լաց եղավ կինը,— նոր տարի է, դու պետք է լռես...

— Այս տարի՞ էլ,— տխուր-տխուր հարցրեց Բագրատը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Համերգ պատշգամբիմ

Ո՞վ հարևան չունի

Ես էլ ունեմ հարևան: Ճիշտ է, բախտի բերումով մենք մի բնակարանում չենք ապրում, բայց դժբախտության բերումով ապրում ենք մի շենքում:

Մեր պատշգամբները թեև հեռու են, բայց իրար են նայում, և առաջին օրը, երբ մենք նոր շենք տեղափոխվեցինք, դա ինձ շատ զվարճալի թվաց: Դուրս ես գալիս պատշգամբ, և որովհետև դիմացդ ոչ Մեծ Մասիս կա և ոչ էլ Փոքր, ոչ պուրակ կա և ոչ էլ գետ, ստիպված նայում ես դիմացիդ պատշգամբին, հետո աչքերդ ակամա հառում պատուհանին, պատուհանից ներս անցնում, դիտում կահավորանքը և մարդկանց շարժումը: Ու երբեմն քեզ թվում է, թե մարդկային մի փոքրիկ ակվարիում ես դիտում:

Շատ զվարճալի է:

Ահա իմ հարևանը հանեց իր քաղաքացիական շորերը, հագավ ընտանեկան շերտավոր մի տաք հագուստ, քնքշորեն ետ հրեց սեղանին դրված ափսեն, մեղմորեն գրկեց կնոջը, պատշգամբ դուրս եկավ ու դիտում է ինձ, հետո մեր պատշգամբը, հետո մեր սենյակը, հետո նորից ինձ ու գոչում է չթաքցրած ցնծությամբ.

— Շնորհավոր նոր տունդ, հարևա՛ն:

— Շնորհակալություն, ձեր տունն էլ շնորհավոր,— անկեղծությամբ գոռում եմ ես:

— Դու մուղամներ սիրո՞ւմ ես,— հարցնում է հարևանս:

Ես հանկարծակիի եմ գալիս: Ի՞նչ կապ ունի նոր տունը

մուղամների հետ:

— Ի՞նչ իմաստով,— ճչում եմ տարակուսանքով:

— Հիմա կլսես,— բղավում է նա ու տուն է մանում:

Ես էլ եմ տուն մտնում և նստում եմ թե չէ՝ ականջիս է հասնում ախորժալուր մի երգ, սրտամորմոք մի ձայն, որ հոսում է մերթ մեղմ, մերթ կամացուկ ելնում ու ճախրում է օդում, մերթ սլանում է վեր ու ճռվողում գարնան արտույտի նման, մերթ ծառս է լինում, վարարում է,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հորդում ու գետի պես խփում ափերին: Հետո կրկին մեղմանում է միանգամից ու քնքուշ մատներով խաղում է սրտիս լարերի հետ:

Երգն ինձ պատշգամբ է դուրս բերում: Հարևանս է: Այսինքն՝ ոչ թե հարևանս, այլ նրա «Խաղաղություն» կոչվող ռադիոընդունիչը, որը տիրաբար բռնել է պատշգամբի կեսը, մյուս կեսը զիջելով հարևանիս և մագնիտոֆոնին: Նվագը մի վայրկյան լռում է:

— Լա՞վ է, հարևան ջան,— բակով մեկ հնչում է հարևանիս բասը:

— Հոյակապ է,— բացականչում եմ ես:

Ու նվագը նոր թափ, նոր ավյուն է ստանում:

Մինչև ուշ գիշեր ես լսում էի նույն այդ ախորժալուր երաժշտությունը և քնեցի սարսափելի հոգնած: Երազիս մեջ զրուցում էի ռուս մեծ նկարիչ Ռեպինի հետ: Նա նայում էր ինձ մռայլ հայացքով ու մատը վեր բարձրացրած՝ ասում. «Ես միշտ սիրել եմ երաժշտություն: Երբ երկար ժամանակ չեմ կարողացել լսել, կարոտել եմ»:

Ես նրա հետ չէի վիճում:

Հաջորդ օրն աշխատանքից հետո հոգնած տուն դառնալով, պառկեցի մի քիչ քնելու, երբ ահավոր մի ձայն օձիքիցս ամուր բռնած ինձ խլեց Մորփեոսի գրկից: Վեր թռա ու քնաթաթախ պատշգամբ դուրս եկա, կարծելով, թե ինչ–որ դժբախտություն է պատահել: Չէ, սխալվել էի, հարևանիս «Խաղաղությունն» էր:

— Հը, ո՞նց է,— որոտի միջից որպես կայծակ փայլատակեց հարևանիս ճիչը:

Անկեղծորեն ասած՝ վատ էր. կրկին նույն երգը, որ նախորդ օրը լսել էի 42 անգամ և որը հոսում էր մերթ մեղմ ու մերթ կամացուկ ելնում... և այլն: Հետո՝ տրամադրություն չունեի, հետո՝ ուզում էի հանգստանալ: Վատ էր, ու ես միայն գլխով արեցի:

Լավատես էր մարդը: Գլխի իմ այդ անմեղ շարժումը ընդունելով որպես ջերմ հավանություն, ռադիոընդունիչի բռնակը այնպես պտտեցրեց, որ ես օրորվելով սենյակ վերադարձա ու ձեռքերով բռնեցի գլուխս: Չօգնեց: Գնացի լողասենյակ, ամուր փակեցի դուռը ու բացեցի ցնցուղի ծորակը: Չօգնեց: Նվագը վարարում, հորդում ու գետի պես խփում էր ափերին... և այլն:

Չորրորդ օրը ես չէի ուզում աշխատանքից տուն դառնալ: Զգում էի, որ դանդաղորեն խելագարվում եմ: Այն երգը, իմ սիրած այն երգը, որ մերթ մեղմանամ էր... և այլն, հիմա դամոկլյան սրի նման ամենուրեք և ամեն վայրկյան իմ գլխին էր կախված, հետևում էր ինձ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հետապնդում էր ու հալածում: Նույն երգը լսել 97 ժամ՝ անընդհատ 15 րոպեն մեկ, առանց ընդմիջման, երբ նույնիսկ կապիտալիստական երկրներում քաղաքական բանտարկյալներին ընդմիջումներով են տանջում:

Շրջեցի հենց այնպես, աննպատակ և սեփական տունս դարձա չգիտես ինչու գաղտագողի, երկչոտ, անաղմուկ քայլերով, կեսգիշերն անց: Եվ, հրա՞շք էր, ինչ է, մուղամը չկար: Փոխարենը էստրադային թեթև մի նվագախումբ մեծ զվարթությամբ կատարում էր իմ սիրած երգերից մեկը՝ «Մարինան»: «Մարինա, Մարինա, Մարինա»,— մեկ անգամ չբավարարվելով կանչում էր երգիչը:

«Բարեփոխություն՝ հօգուտ ինձ,— մտածեցի ես՝ մի տեսակ գորովանքով լցվելով հարևանիս նկատմամբ,— մարդը մուղամից Մարինային է անցել»:

Այո, հարևանս էր, բայց ոչ նույնը: Մուղամի հարևանս դիմացի ակվարիումում ռադիոընդունիչն էր փորփրում: «Ուրեմն՝ աստված կա,— չարախնդացի ես,— կա: Անեծքս տեղ է հասել»:

Ու սկսեցի մեծագույն հաճույքով ունկնգրեչ «Մարինան»: Տասնհինգ թե տասնվեց անգամ Մարինային կանչելուց հետո

տղամարդը լռեց:

— Լա՞վն է,— այս անգամ հնչեց մի այլ տղամարդու ձայն:

Շրջվելով ձայնի կողմը, տեսա մյուս՝ արդեն կողքի հարևանիս, երիտասարդ մի տղայի, որ գլխի և ուսերի զարմանալի ճարպիկ շարժումներով կրկնում էր «Մարինա»-ի ռիթմը:

«Լավն է»,– ուզեցի ասել ես, բայց ամբողջ կյանքում անընդհատ «Մարինա» լսելու հեռանկարը ինձ սարսափեցրեց: Տառապանքս փորձ ուներ, և ես խուսանավեցի:

— Ոչինչ,— ասացի սառը քաղաքավարությամբ:

— Իսկ այս մյո՞ւսը,— ասաց նա և անհետացավ:

Շնչառությունս կարգավորվեց: Ուրեմն հիմա մի ուրիշ բան կնվագի: Եվ... կրկին հնչեց «Մարինան»: Այս անգամ մեկը չէր, յոթ թե ութ առողջ տղամարդ ամբողջ կոկորդով Մարինային էին կանչում:

Խուճապահար տուն մտա: Հարևանս նվագարկիչի ասեղը փոխելու ժամանակ մի քանի անգամ ձայն տվեց, բայց ես չարձագանքեցի: Հեռախոսս մի քանի անգամ զանգեց, լսափողը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չվերցրի: Դռան զանգը երկար ժամանակ հնչում էր, տեղիցս չշարժվեցի: Ինձ թվում էր, թե այդ բոլորն էլ երիտասարդ հարևանս է, որը միայն պետք է հարցնի.

— Իսկ այս մյո՞ւսը...

Եվ այս անգամ «Մարինան» հնչեցնի Պյատնիցկու անվան մեծաշնորհ և մեծածավալ երգչախմբի կատարմամբ:

Չեմ ավելացնի: Գիշերվա ժամը երեքին ես այնպես էի ատում նախկին սիրելի Մարինային, որ եթե ձեռքս ընկներ՝ տեղնուտեղը կխեղդեի ու ինքնակամ կհանձնվեի դատաքննչական օրգաններին: Երևի դրանից էր, որ քնեցի շատ անհանգիստ ու վայրիվերո երազներ տեսա: Մեկ ինձ թվում էր, թե Մարինան միայնակ երգչի հետ մեր կենտրոնական հանրախանութում է և բողոքի գիրք է պահանջում: Մեկ էլ իբր միլիցիայի 6—7 աշխատողներ Մարինային տուգանում են փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար և բոլորը միասին բղավում. «Մարինա, Մարինա, Մարինա»: Հետո էլ, թե իբր ես վարսավիրանոցում սափրվում եմ, և հանկարծ ներս է մտնում հանգուցյալ բանաստեղծ Գյոթեն ու ասում ինձ չթաքցրած նախատինքով.

— Ես միշտ կարողացել եմ ավելի լավ աշխատել երաժշտություն լսելուց հետո:

Այդ երազներից ես ի գիտություն ընդունեցի միայն հարգարժան Գյոթեի խոսքերը և հաջորդ գիշեր Մարինայի և Խան Շուշինսկու ոչ այնքան համերաշխ դուետի ներքո (հարևաններս գործարար մրցության մեջ էին) մի հոդված գրեցի:

Այդպիսի բան կյանքումս չէր եղել: Խմբագիրը երեք անգամ կարդաց հոդվածս, ամեն անգամ կասկածով նայելով վրաս, հետո վախվորած զգուշությամբ հարցրեց,

— Քեզ ի՞նչ է պատահել: Ոչինչ չեմ հասկանում: Գույնդ...

— Գյոթեն ու Մարինան...— հառաչեցի ես ու, ինչպես ասում են, գողացող շուրթերով պատմեցի ողջ եղելությունը:

— Ոչինչ չես կարող անել,— ասաց մեր աշխատողներից մեկը,— քաղսովետի որոշմամբ մարդիկ մինչև գիշերվա ժամը մեկը ինչ ձայներ ասես կարող են հանել:

Այո, ոչինչ չես կարող անել, քաղսովետի որոշումն այդպիսին է: Բայց հո այդ որոշումը չի՞ ասում, թե ռադիոընդունիչներն ու մադնիտոֆոնները պետք է պատշգամբում դնել և ոչ թե տանը, թե ձայնը պետք է բարձրացնել մինչև վերջին «դո»–ն, թե նույն երգը պետք է նվագել ոչ պակաս, քան 87 անգամ, թե պետք է հասնել նրան, որ բոլոր հարևանները ինքնասպանություն գործեն կամ կամովին վտարվեն քաղաքից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Դա արդեն դաստիարակության հարց է, գաղափարի հարց է, բնավորության հարց է,— ասաց մեր աշխատողներից մյուսը։

«Դաստիարակություն, գաղափար, ճաշակ, բնավորություն» բառերը կրկնելով, ծանր խոհերով տուն դարձա այն ժամանակ, երբ Խան Շուշինսկին ռևանշ էր վերցնում։ Նա առանց շունչ քաշելու երգում էր տասնհինգ րոպե, երբ Մարինան երեք րոպեն մեկ մի վայրկյան հանգստանում էր։

«… Ճաշակ, բնավորություն» մտմտալով վերցրեցի «Իմաստուն մտքերի աշխարհում» գիրքը («Զնանիե» հրատարակչություն, տիրաժ 300 000, գինը՝ 59 կոպեկ, Մոսկվա, 1962 թ.) և ուզեցի իմանալ, թե աշխարհի մեծագույն մտքերը ի՞նչ են ասել վերոհիշյալ հասկացությունների մասին։ Բացեցի և հաղթական ճիչ արձակելով պատշգամբ դուրս եկա։

— Ուշադրությո՛ւն,— բղավեցի ես այնպիսի ձայնով, որ Խան Շուշինսկին և Մարինան սարսափահար լսեցին։

Ես կրքոտ մի շարժումով բարձրացրեցի գիրքս ու գոչեցի այնպես, որ ոչ միայն հարևաններս, այլև ողջ Երևանը լսի.

— Յուրաքանչյուր մարդու բնավորությունը ազդում է այլ մարդկանց երջանկության վրա, նայած թե ի՞նչ կարող է տալ այդ բնավորությունը՝ վնա՞ս, թե օգուտ։ Ադամ Սմիթ։ Անգլիացի տնտեսագետ։

Այս ազդու խոսքերը արտասանելուց հետո ես վերջնականապես թողեցի պատշգամբը։

Համերգը շարունակվեց։

Ու հիմա մտածում եմ. եթե Գյոթեն մեր շենքում ապրեր, կկրկնե՞ր արդյոք իր խոսքերը՝ թե «Ես միշտ կարողացել եմ ավելի լավ աշխատել երաժշտություն լսելուց հետո»։

Դժվար թե…

1964 թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խղճի գիշերային այցը

Զը՛նգ... հնչեց գիշերային լռության մեջ։

Ապրանքագետ Գարեգին Վարդանյանը մատը հեռացրեց զանգի կոճակից ու ականջ դրեց։ Ոչ մի ձայն։

— Համա թե քնում ես, կնիկ,— կամացուկ փնթփնթաց նա՝ խոսքերն ուղղելով փակ դռան կողմը,— աչքս թեքում եմ թե չէ, Մաթևոսի գիրկն ես ընկնում։

Այստեղ ապրանքագետ Գարեգին Վարդանյանը մոռացավ զանգը ու մի պահ մտորեց Մաթևոս անվան շուրջը։ Մի քանի օր առաջ նրանց մոտ մեկը զեկուցում էր կարդացել «Քուն և երազ» թեմայով։ Մի քանի անգամ այդ լուրջ, ակնոցավոր մարդն ասաց, որ երբ մարդիկ ուզում են քնել, Մաթևոսի թե Մոթևոսի, թե նման մի «ոսի» գիրկն են ընկնում։ Թե ինչու, Գարեգինը ոչինչ չհասկացավ։ Բայց ինչպես միշտ, զեկուցող վերադասի խոսքերն ընդունեց ի գիտություն։

Նա նորից սեղմեց զանգի կոճակն ու այս անգամ շատ պարզ լսեց երկար տարիների իր կյանքի ընկերուհու՝ Թագուհու հողաթափերի ծանոթ քստքստոցը։

— Ո՞վ է,— լսվեց ետևից։

— Իսկ դու ո՞ւմ էիր սպասում իշխանուհիս։

— Քեզ, իշխանս,— հեգնանքով ասաց Թագուհին ու բացեց դուռը,— քեզ էի սպասում պալատական բժշկիդ հետ։

— «Բժիշկ» բառի վրա Գարեգինը մի թեթև այլայլվեց։ Ճիշտ որ, ախր ինքը խոստացել էր իր ծանոթ հեղինակավոր բժշկին հրավիրել տուն։ Կինը հազում էր վերջերս։

— Դե, Թագուհի ջան, մի նեղանա,— ասաց նա, աշխատելով հանել վերարկուն ու գլխարկը,— ես, դե գիտես, էլի։ Մի փոքր ուշացա։ Ա՛յ, հենց հիմա, հենց հիմա կգնամ ու կկանչեմ։

— Մի երկու ժամ էլ սպասիր, թող լուսանա նոր կգնաս,— ասաց կինը, օգնելով ամուսնուն՝ հագուստը հանելու դժվարին ու պատասխանատու գործում։— Այդպես բարձրացրու թևդ, թեքվիր մի քիչ, հիմա այս մեկը...

— Ինչու՞, ու՞շ է,— հարցրեց ամուսինը, ծուլորեն բացուխուփ անելով աչքերը։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Այնքան էլ չէ: Գիշերվա ժամը չորսն է:

— Դե, դե, առանց երգիծանքի և հումորի,— նեղացավ Գարեգինը, հետո նայեց ժամացույցին ու ժամացույցը գցեց ցած, — Վա՜յ, տես, է՛, իսկապես, ժամը չորսն է:

Ու այնպիսի մի նախատինքով նայեց կնոջը, ասես Թագուհին էր մեղավոր: Հետո հառաչեց.

— Ազնիվ խոսք, ես մեղավոր չեմ: Այ, հենց այսօր, դուրս եկա աշխատանքից, տուն էի գալիս, մեկ էլ ճանապարհին մեր պահեստապետ Սերոբը հանդիպեց: Խոսեցինք դեսից–դենից, մեկ էլ թե՝ գնանք մի-մի բաժակ բան խմենք: Դե, ախր ո՞նց մերժես: Կնեղանա մարդը, ամբողջ սրտով էր ասում: Գնացինք, մի–մի բաժակ խմեցինք, մեկ էլ Վարազը եկավ, թե՝ իմ խաթեր 50-50 գրամ... է, հետո՞, ես էլ մարդ եմ, չէ՞, իրենք ինձ հյուրասիրեն, ես չէ՞.... Մի շիշ կոնյակ բերել տվի, նստեցինք: Հետո Սերոբը թե՝ գնանք մեր տուն: Չէ, առաջ Վարազենց տուն գնացինք, հետո մտանք մեր դիրեկտորի տուն, նրան էլ վերցրեցինք ու գնացինք Սերոբենց:

— Ախր թող խմելն, էլի,— կամացուկ մրմնջաց Թագուհին, Գարեգինի անօգնական գլուխը բարձին վստահելով.— ա՛խ, որտեղից եկավ ձեր այդ... այդ հարբեցող դիրեկտորը:

— Դե, դե, դիրեկտորիս մասին ոչ մի խոսք: Հասկացա՞ր: Շատ էլ ընկերական, պատվավոր ու, եթե կուզես իմանալ, հարգանքով մարդ է:

— Ա՛խ, երանի առաջ տանեին,— ամբողջ սրտով մաղթեց Թագուհին,— ու տեղը նոր մարդ բերեին ստամոքսի խոցով: Էլ հո չէի՞ր խմի:

— Ուրեմն ես կամք չունեմ, հա՞,— փորձեց բարկանալ Գարեգինը:

— Է՛, լավ չես անում, Գարեգին,— շարունակելով իր զեկուցումը՝ «Ալկոհոլը ու նրա վնասները» թեմայով, ասում էր Թագուհին,— ամեն օր խմում ես: Առավոտյան գնում ես, գիշերը գալիս: Մոռացել ես տունդ: Շուտով երեխաներդ քեզ երևի «քեռի» կանչեն: Իսկ ես հիվանդ եմ, ամեն ինչ չեմ հասցնում...

Գարեգինը մի ուժեղ ծակոց զգաց սրտի արվարձաններում ու շրջվեց մի կողքի: Այդ խիղճն էր, որ այցի էր գալիս նրան:

— Դե լավ, լավ, թող քնեմ, շարունակությունը հաջորդ համարում,— քրթմնջաց նա:

Բայց խիղճը սկսել էր իր գործը: Եվ այստեղ ապրանքագետ Գարեգին Վարդանյանը հանդես եկավ մի լուռ մենախոսությամբ, որի իմաստն այն էր թե, իսկապես, ինքը ոչ լավ ամուսին է, ոչ էլ բավարար հայր: Ճիշտ է, աշխատավարձը բարեխղճորեն տուն է բերում, բայց միայն այդքանը: Նա մի կարգին չգիտի էլ, թե ինչ է կատարվում իր ընտանիքում և տան գումարը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վերջանալու մասին իմանում է միայն այն ժամանակ, երբ Թագուհին, մեղավոր ժպիտով, առավոտյան նրա առջև է դնում քաղցր թեյ ու հաց։

Իսկ թե կինն ինչպես է կազմակերպում տնտեսությունը, ինչպես է հասցնում ամեն բան՝ առավոտ վաղ փայտ կոտրում, վառարանը վառում, հետևում երեխաների դասերին, լվանում, արդուկում ու մաքրում հագուստները, շուկա գնում, ճաշ պատրաստում, մասնակցում ծնողական ժողովներին, ինչ-որ բարձեր ասեղնագործում, ինչ-որ կոմպոտներ հնարում... «Չէ՛, առնվազն անազնվություն է դա»,— ինքնաքննադատաբար խարազանեց Գարեգին Վարդանյանը Գարեգին Վարդանյանին։ Եվ որտե՞ղ է քո խիղճը, ընկե՛ր։

Մի նոր սուր ծակոց անմիջապես մատնանշեց խղճի տեղը, և Գարեգին Վարդանյանը վերջնականապես անձնատուր եղավ։

«Վաղվանից,— վճռեց նա,— ես դառնում եմ այլ մարդ։ Բավական է, էլ չեմ խմելու։ Չե՞մ կարող, դեռ կտեսնենք։ Նույնիսկ դիրեկտորն էլ առաջարկի, չեմ խմի։ Շատ ստիպի, կասեմ ստամոքսի խոց ունեմ, կտեսնես, ընկեր դիրեկտոր,— սպառնաց նա մթությանը,— որ առանց խմելու էլ կարող եմ տղամարդ լինել»։

Երբեք նա այդքան ուժեղ ու վճռական չէր զգացել իրեն։ Այդ էր պատճառը, որ մի տեսակ հպարտությամբ լցվեց իր նկատմամբ։ Այն միտքը, որ նա այսուհետև ամբողջ հոգով օգնելու է կնոջը, նույնիսկ արցունքներ առաջացրեց նրա աչքերում։

Նա մի պահ անասելի ցանկություն զգաց երկարել ձեռքը ու մեղմ, շատ մեղմ, շոյել կնոջ՝ արդեն ճերմակել սկսող մազերը, աշխատանքից կոշտացած ձեռքերն ու քնքուշ-քնքուշ խոսքեր ասել, մոտավորապես հետևյալ ձևակերպումով՝ «Իմ լավ, իմ միակ Թագուհի, վաղվանից ես նոր մարդ եմ այլևս. դու ինձ կտեսնես առավոտյան...»։

Այդպես հուզված ու գոհ ապրանքագետ Գարեգին Վարդանյանը քնեց։

…Եվ ահա առավոտյան նա արթնացել է բոլորից վաղ։ Քնքշորեն համբուրում կնոջ ականջը, ուղղում երեխաների վերմակները, խանդաղատանքով նայում նրանց քթիկներին, ապա գնում է ցախանոց։ Վառարանը հուրհրաց ծիածանի բոլոր գույներով, սենյակը տաքացավ, թեյնիկը սկսեց ուրախ սուլել։ Բռնելով ծանոթ եղանակը, Գարեգինը ևս սուլելով գնաց խանութ, գնեց №4 գործարանի հացը, վերադարձավ, սեղանը կարգի բերեց ու արթնացրեց Թագուհուն։

Թագուհու դեմքին այնպիսի մի զարմանք նկարվեց, որ Գարեգինը չկարողացավ զսպել ծիծաղը։

— Այս բոլորը դու ...— մրմնջաց կինը։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Ես, ի՞նչ կա որ,— հանգիստ պատասխանեց Գարեգինը,— դա իմ պարտքն է: Չէ՞ որ ես այս ընտանիքի հայրն եմ:

Կինը գրկեց ամուսնուն:

— Դե, լավ, լավ, ի՞նչ մի բան եմ արել,— շիկնեց Գարեգինը, ոչ առանց դժվարության պոկվելով կնոջ գրկից ու, երեխաների թաթիկները բռնելով, դուրս տարավ տնից: Տղային դպրոց տարավ, աղջկան՝ մանկապարտեզ, իսկ ինքը գնաց աշխատանքի: Աշխատում էր արտակարգ եռանդով: Բոլոր պաշտոնակիցները հիացած նրան էին նայում, իսկ դիրեկտորը նույնիսկ ասաց.

— Նայում եմ քեզ ու հիանում, Գարեգին, դու իսկապես լավ աշխատող ես: Գնանք ռեստորան, այսօր ես եմ հյուրասիրելու քեզ:

— Ո՛չ չեմ կարող,— քաղաքավարի, բայց չտեսնված վճռականությամբ մերժեց Գարեգինը,— զբաղված եմ: Նախ՝ երեխաներիս խոստացել եմ կինո տանել, և երկրորդ՝ կինս հիվանդ է: Ես չեմ կարող նրան մենակ թողնել:

Տան ճանապարհին նրան հանդիպեց Սերոբը:

— Չգնա՞նք մի-մի բաժակ...

Գարեգինը սկզբում ուզում էր ասել, թե ստամոքսի խոց ունի, բայց հրաժարվեց այդ մտքից: «Եվ ինչո՞ւ պետք է կեղծեմ»: Ու ասաց վճռական.

— Ոչ, Սերոբ, ես այլևս ոգելից խմիչքներ չեմ օգտագործում և նույնը խորհուրդ եմ տալիս քեզ:

Սերոբը շփոթված հեռացավ: Շփոթված ետ-ետ քաշվեցին նաև Վարազն ու Վաղոն, որոնք այնուհետև հանդիպեցին նրան:

Գարեգինը երեխաներին տուն տարավ: Արագորեն, առանց ճաշելու, գնաց ու տուն հրավիրեց իր ծանոթ բժշկին, ճաշից հետո երեխաների համար կարդաց Թումանյանի «Չախ-չախ թագավորը», պահմտոցի խաղաց, որին մասնակցեց նաև երջանկությունից շառագունած Թագուհին: Հետո ընտանիքի բոլոր անդամները ռադիոյի հետ միասին երգեցին մի երգ, որը ռադիոն այդ օրը արդեն չորրորդ անգամ էր հաղորդում:

Այնուհետև Գարեգինը ծանոթացավ որդու օրագրին և օգնեց նրան պատրաստելու դասերը: Իսկ երեկոյան, երբ արդեն քնել էին երեխաները, Գարեգինը խոհանոցում էր: Ճիշտ է, Թագուհին կտրականապես արգելեց նրան մասնակցել ճաշասպասքի լվացման կամ չորացման աշխատանքներին, բայց և այնպես Գարեգինը չհեռացավ խոհանոցից: Նա կնոջը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատմում էր իր աշխատանքի մասին, այն մասին, որ որոշել է այս տարի ոչ թե մենակ, այլ ամբողջ ընտանիքով ծովափ գնալ, և էլի ու էլի շատ հաճելի բաներ:

— Իմ իշխան,— ասաց նրան Թագուհին, երբ պատրաստվում էին քնելու,— ես խոսք չեմ գտնում արտահայտելու իմ երջանկությունը: Չնեղանաս, բայց ուզում եմ ասել, որ այս օրը ամենապայծառ, ամենաուրախ օրն է իմ կյանքում:

— Դե, դա հասկանալի է, իմ իշխանուհի,— մեղմությամբ պատասխանեց Գարեգինը, զարմանքով նկատելով, որ կնոջ մազերը կրկին սևացել են,— դա հասկանալի է: Ի՞նչ ես տեսել դու: Բայց ոչինչ, սրանից հետո ավելի լավ կլինի, ա՛յ կտեսնես: Ես ազնիվ խոսք եմ տալիս: Գո՞հ ես:

Նա սպասում էր, որ Թագուհին կասի՝ «գոհ եմ», բայց ոչ մի ձայն չլսվեց:

— Գո՞հ ես,— կրկնեց Գարեգինը՝ կարծելով՝ թե Թագուհին չլսեց իր խոսքերը, բայց դարձյալ ոչ մի պատասխանի չարժանանալով, այս անգամ նայեց կնոջը:

Թագուհին նրան էր նայում նախատինքով ու տրտմությամբ:

— Ի՞նչ է, ուրեմն էլի՞ գոհ չես,— անասելի վիրավորված բացականչեց Գարեգինը,— գոհ չես, հա՞...

— Իսկ ինչի՞ց գոհ լինեմ: Նրա համար, որ աշխատանքից ուշացե՞լ ես,— հնչեց Թագուհու ձայնը ինչ-որ մի այլ տեղից, հեռվից...

... Ու ապրանքագետ Գարեգինը արթնացավ քնից:

Ուժեղ տրորեց աչքերը, մի կերպ բացեց կոպերը, նայեց ժամացույցին: Փոքր սլաքը քայլում էր 10–ի վրայով:

— Զանգ տուր հիմնարկ, հայտնիր, որ հիվանդ եմ, ու մի բաժակ բան տուր՝ գլուխս ցավում է,— ասաց նա մռայլ:

Նրան մի պահ թվաց, թե կինը դանդաղում է: Սաստիկ բարկացավ ու դեռ երազի ազդեցության տակ, աշխատած, բայց չգնահատված մարդու ցասումով գոչեց.

— Ի՞նչ, ես այդպես նայում, գոհ չե՞ս...

Կինը թոթվեց ուսերը, տարուբերեց գլուխը և գնաց իր հերթական պարտականությունները կատարելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

1961 թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ լսափողը անբանի ձեռքին է

Նստել, աշխատում ես եռանդով: Քեզ անհրաժեշտ է շտապել՝ կարևոր հանձնարարություն է: Եվ մեկ էլ «զը՛նգ»...

Վերցնում ես լսափողը՝ թեթև դժկամությամբ: Չվերցնել չես կարող, հենց դրա համար էլ դրված է հեռախոսը: Վերցնում ես ու...ոչ մի ձայն.

— Ալո՛:

Նույնիսկ աղմուկ չկա:

— Ալո՛, լսում եմ:

Ու մեկ էլ «կլըթ»՝ հեռախոսն անջատվում է: Տարակուսած վայր ես դնում լսափողը ու կրկին անցնում աշխատանքի: Մտքերիդ թելն, ինչպես ասում են, արդեն կտրվել է, ճիգ ես գործ դնում կենտրոնանալու, երբ նորից՝ «զը՛նգ»:

— Ալո՛:

Ջուր են ջանքերդ: Չորրորդ, թե հինգերորդ զանգից հետո (դիմացիր, եթե կարող ես) ականջիդ սկսում ես նյարդայնանալ, ընկնում է տրամադրությունդ, այլևս չես կարողանում կենտրոնանալ, ու երբեմն մտքումդ կամ ցածրաձայն օգտագործում ես այնպիսի խոսքեր, որ քեզ էլ պատիվ չի բերում:

Ու նորից՝ «զը՛նգ»

— Լսում եմ:

Հեռախոսի մեջ հնչում են զսպված ծիծաղ, ինչ-որ ձայներ, իսկ ապա մեկն ասում է.

— Իզուր ես լսում, հա, հա հա ,— և անջատվում է հեռախոսը:

Կատակում են... Ինչ-որ մեկը անգործությունից տառապելով, ձանձրույթը փարատելու համար որոշել է զվարճանալ: Եվ ահա զվարճանում է: Նրան զվարճություն է պատճառում քո նյարդայնանալը, նա ուրախանում է, որ քեզ խանգարում է, ստիպում է հուսահատ բղավել... Ահա, իսկ հիմա կարելի է մեկ ուրիշ համար հավաքել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց եթե նման մեկը պարզապես միացնում ու անջատում է հեռախոսագիծը, ապա ոմանք միայն դրանով չեն բավարարվում: Նրանց զրուցընկեր է հարկավոր, և ահա կրկին հնչում են ազդանշանները: Լսափողը վերցնում ես:

— Բարև ձեզ,— հնչում է մի ձայն, որը սովորաբար հակառակ սեռի ներկայացուցչի է պատկանում:

— Բա րև ձեզ: :

— Ինչպե՞ս եք:

— Լավ եմ, ո՞վ է հարցնողը:

— Չճանաչեցի՞ք:

— Ոչ:

— Ի՛ նչ, ուրեմն արդեն մոռացե՞լ եք: Այ, այ, այ, չէի սպասում, այդքան շու՞տ: Իսկ ես կարծում էի ճիշտ չեն ոմանք, երբ ձեզ մեղադրում են բյուրոկրատության և մեծամտանալու համար:

— Ո՞վ եք, ընկեր (ուհի):

- Ոչ, չեմ ասի, հիշեցեք:

Բարկանում ես, բայց ի՞նչ արած՝ լարում ես հիշողությունդ, հին մեղքերդ ես մտաբերում... ապարդյուն: Ձայնը ծանոթ չէ:

— Ուրեմն չե՞ք հիշում:

— Լավ դա ի՞նչ նշանակություն ունի, զանգահարել եք, ուրեմն գործ ունեք, ասացեք:

— Ա՛, բարկանում եք, իսկ առաջ չէիք բարկանում: Առաջ դուք այնքան լավն էիք: Ուրեմն չհիշեցի՞ք...

— Ո՛չ,— բղավում ես դու,— ո՛չ, ո՛ չ, չեմ ճանաչում, չեմ հիշում, չեմ ուզում ճանաչել, ես ձեզ... ձեր...

Ու վայր ես դնում լսափողը: Բայց անհայտ «երկրպագուդ» չի հուսահատվում, նա նորից է զանգահարում, նորից է խոսում, նորից ինչ-որ չեղած, բաներ է հիշեցնում, մեղադրում քարասրտության, անխղճության և մարդկային ու ոչ մարդկային զանազան թուլությունների մեջ, և ի վերջո, հասնում է իր նպատակին: Իսկապես, քիչ հետո զգում ես, որ ձայնդ ա՛րդեն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սովորական մահկանացուի ձայնի նման չէ, ծիծաղում ես հիստերիկորեն, պոկում վերնաշապիկիդ կոճակը, թանաքը թափում սեղանին, գրիչի ծայրը ջարդում և... և վերջաժպես բացում հիմնարկի աղքատիկ դեղարկղը գլխացավի դեմ հաբ ընդունելու համար։

Բայց սա էլ դեռ ամենասարսափելին չէ։ Հեռախոսային այդ խուլիգանը քեղ միայն անձնապես է տանջել։ Կարելի է յոլա գնալ դեղահարեր ընդունելով։ Իսկ ի՞նչ կասես, երբ աշխատանքից հետո տուն գնալով նկատում ես, որ կինդ նստել է արցունքոտ աչքերով ու, նայելով անկյունում խաղացող երեխաներին, լսելի ձայնով մրմնջում է.

— Խաղացեք, խաղացեք, իմ անբախտ, իմ անմեղ, իմ որբ գառնուկներ։

— Ի՛նչ է պատահել,— անհանգստանում ես դու։

— Որտե՛ղ էիր ժամը 2-ին,— դատախազի ձայնի նման սառը հնչում են կնոջդ խոսքերը,

— 2-ի՞ն, սպասիր, հիշեմ, 2-ի՞ն, հիմնարկում եմ եղել,

Ոչ, զանգահարեցի, տեղում չէիր։

— Ինչպես թե, ես այսօր ոչ մի տեղ չեմ գնացել, գուցե դիրեկտորի մոտ էի։ Դե, իհարկե, 2-ին։

Իհարկե, իսկ ինչո՞ւ հենց 2-ին։

— Բայց ի՞նչ կա վերջապես դրանում։ Ի՞նչ է պատահել...

— Իսկ ո վ է Լուսյան,—արագորեն հարցնում է կինդ՝ նպատակ ունենալով քեզ շփոթեցնել ու պարզել «գաղտնիքը»։

— Ի՞նչ Լուսյա։

— Դու ավելի լավ գիտես։ Չգիտես, չէ՞։ Իսկ ժամը 2-ին ի՞նչ գործ ունեիր նրա հետ կինոթատրոնում, հը՞։ Անմեղ դեմք մի ընդունիր, ես ամեն ինչ գիտեմ։ Ահա թե ինչու երեկ հետս կինո չեկար։ Դու արդեն քո հետաքրքրությունն ունես, չէ՞։

— Ես կինո չեմ գնացել, ես ոչ մի Լուսյա չեմ ճանաչում, ո՞վ է քեղ այդպիսի հիմարություն ասել։

— Իմ աչքով եմ տեսել,— կտրում է կինդ,

Երկար տանջանքներից հետո պարզում ես, որ նա երբեք էլ «իր աչքով» որևէ բան չի տեսել, նրան պարզապես զանգահարել է ինչ-որ մեկն ու ասել. «Խեղճ կին, դու տանը նստել ես,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կարծում ես սիրելի ամուսինդ աշխատում է, այնինչ նա հենց նոր դուրս եկավ կինոյից մի կնոջ հետ թևանցուկ, այդ կնոջ անունը Լուսյա է։ Քո ամուսինը վաղուց է նրա հետ... Մի քանի օր առաջ էլ միասին ունիվերմագում էին»։

Եվ որքա՜ն ջանքեր, որքա՜ն փաստարկներ, երբեմն նույնիսկ երդումներ են անհրաժեշտ լինում, որպեսզի կնոջդ համոզես, թե այդպիսի բան չի եղել... Ի վերջո, կինդ համոզվում է, բայց... կասկածը մնում է։

Իսկ այդ զանգահարողին՝ «բարի ընկերուհուն», հենց այդ է պետք... ինչ-ինչ պատճառներով նա տանել չի կարողանում, երբ որևէ ընտանիքում տիրում է համերաշխություն, փոխադարձ հարգանք, երջանկություն։ Նա պատրաստ է ամեն միջոցի դիմել, որպեսզի կնոջ կամ ամուսնու մոտ կասկած առաջանա։ Մնացածը պարզ է. եթե կասկածը կա, ուրեմն թունավորված է նրանց կյանքը։ Իսկ որպեսզի կասկած առաջանա, շատ բան հարկավոր էլ չէ... Պետք է միայն վերցնել լսափողը, ու հավաքել այդ ընտանիքի բնակարանի համարը։

Ի հարկե, ոչ բոլորն են ընկնում ծուղակի մեջ, իհարկե, շատ շատերը ծիծաղում, կամ առավելագույն դեպքում զայրանում են նման խուլիգանների կեղտոտ արարքների վրա։ Բայց չէ՞ որ կան նաև միամիտներ։ Հենց նրանց համար են նախատեսվում այդ զանգերը։ Եվ, թող զարմանալի չթվա, եթե ասենք, որ քիչ ընտանիքներում չեն անախորժություններ առաջացել հեռախոսային այդ զանգերի պատճառով։

Հեռախոսը մարդկային մտքի ամենահրաշալի ստեղծագործություններից մեկն է։ Այն շքեղություն չէ, այլ անհրաժեշտություն յուրաքանչյուր հիմնարկում, յուրաքնաչյուր տան մեջ։

Բայց այդ նույն հեռախոսը անասելի չարիքի է վերածվում, երբ լսափողը գտնվում է անբանի, դատարկապորտի ձեռքում, չարասիրտ, սևահոգի, թունոտ մարդկանց ձեռքում, որոնք գիտակցաբար, թե անգիտակցաբար ջանում են խանգարել մեր աշխատանքը, անդորրը, խախտել մեր հավասարակշռությունը, թունավորեի մեր կյանքը, որոնք, յուրաքանչյուր հեռախոս օգտագործում են միայն նրա համար, որպեսզի շշուկով, կեղծելով ձայնը թույն արտաշնչեն.

— Գիտեք ինչ, ձեր ամուսինը... ձեր կինը... ձեր ընկերը...

Եվ պետք է անմիջապես ասել, որ Երևանի հեռախոսային ցանցի դիրեկցիան էլ, ինչպես հարկն է, չի պայքարում հեռախոսային այդ խուլիգանների դեմ։ Հեռախոսից օգտվող բոլոր մարդիկ էլ գիտեն, որ երբ խուլիգանը խոսում ու վայր է դնում լսափողը, դեռևս գիծը չի անջատվում։ Նրան հեշտությամբ կարելի է մերկացնել, եթե ինքդ վայր չդնես լսափողը և մեկ ուրիշ հեռախոսով անմիջապես զանգահարես հեռախոսային ցանցի դիսպետչերին։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց փաստերը ցույց են տվել, որ նման դեպքերում հեռախոսային ցանցի աշխատողները հանդես են բերում ծայրահեղ անտարբերություն:

— Մենք իմացանք, թե որտեղից էր,— ասում են նրանք հանգիստ:

— Ես էլ եմ ուզում իմանալ, թե ո՞վ է իմ թշնամին կամ ինձ հետ հիմար կատակներ անողը:

— Չենք կարող ասել:

— Ինչո՞ւ

— Այդպիսի կարգ չկա:

Իսկ կա՞ այնպիսի կարգ, որը թույլատրում է խուլիգաններին հեռախոսը ծառայեցնել կեղտոտ նպատակների համար: Ո՞չ: Ուրեմն, հեռախոսային ցանցի հարգելի ընկերներ, բարի եղեք մեզ հետ միասին պայքարելու այդ խուլիգանների դեմ, դատապարտելու, մերկացնելու նրանց, այ լապես…

— Զը՛նգ...,— այդ իմ հեռախոսն է: Մի տող է մնացել, որ, ավարտեմ ֆելիետոնը, բայց չեն թողնում: Վերցնում եմ լսափողը: `

— Այո՛, լսում եմ...

Գծի այն ծայրում քար լռություն:

— Ալո՛, ալո՛, դե, խոսեք, վերջապես…

Ոչ մի ձայն:

Ես բարկանում եմ սաստիկ, ջղերս լարվում են: Քիչ է մնում վերցնեմ գրածս ու ծայրեծայր կարդամ իմ «համր» զրուցակցին, գուցե հասկանա՞: Հետո մտածում եմ. բայց չէ՞ որ միայն նա չէ, չէ՞ որ քիչ չեն նման դատարկապորտները:

Ես նետում եմ լսափողը ու երերուն քայլերով ֆելիետոնը տանում մեքենագրատուն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դժբախտություն

Ամեն ինչի մեղավորը շոգն էր: Երևանն այս ի՞նչ է դարձել, եղբայր: Գարնանն այնպիսի անձրևներ են թափվում, որ թվում է, թե որտեղ որ է՝ ասֆալտը ճեղքելով արմավենիներ դուրս կգան... Իսկ ամառը… Դե, ինչ ասեմ, ինքներդ տեսնում եք, էլի: Մարդ չի կարողանում գարեջրի մի կրպակից մյուսը հասնել: Այնպիսի շոգ է անում, որ ինչպես մեր գրողներից մեկն է ասում՝ ստեպ-ստեպ ոտքերիդ տակ ես նայում, տեսնես հո չե՞ս հալվել-պրծել: Ահավոր բան է, ինչպես պատկերավոր ասում է մեր գրողներից մյուսը:

Եվ ահա, այս ահավոր շոգին, զեկուցումներ կազմակերպող մի հիմնարկ ինձ հանձնարարեց զեկուցում գրել նոր լույս տեսած մի գրքի մասին և, իհարկե, շոշափել նաև հեղինակի կենսագրության առավել նշանակալի կետերը: Հեղինակի կենսագրության մեջ, բարեբախտաբար, շոշափելու բան չկար: Դա մի կյանք էր՝ սերտորեն կապված ժողովների, վեհաժողովների, հանձնաժողովների և ժողովածուների հետ, թեթև ու դատարկ մի կյանք, որի առաջին ածականը երբեք չի կարելի օգտագործել նրա գրքի կողքին: Սոսկալի ծանր գիրք էր: Երկու կիլոգրամ: Ես վճիտ մարդ եմ և երբեք չէի համաձայնի գրախանութից տուն տանել այդ բեռը, եթե զեկուցումներ կազմակերպող հիմնարկի պետը շատ չխնդրեր և ապա՝ չգայթակղեր ինձ:

— Բարձր հոնորար եմ տալիս,— ասաց նա:

— Եվ վերամբարձ կռունկ,— հիշեցրեցի ես:

— Ինչո՞ւ,— զարմացավ նա:

— Գիրքը տուն տանելու համար,— ասացի ես:

Հիմնարկի պետը ծիծաղեց, ոտքերի թաթերին բարձրանալով թփթփացրեց ուսիս և վերամբարձ կռունկի փոխարեն ինձ հատկացրեց հիմնարկի «Վոլգա» ավտոմեքենան, չգիտես ինչու՝ երկար ժամանակ հեռախոսով թույլտվություն խնդրելով իր կնոջից:

Ինձ ավտոմեքենայով չես խաբի, իհարկե, բայց հոնորարի խնդիրը մի քիչ բարդ է: Բանն այն է, որ թեև շատ եմ լսել և ինքս էլ երբեմն ասում եմ «փողը հող է», «փողը ձեռքի կեղտ է» և նման այլ թևավոր խոսքեր ու իմաստուն ասացվածքներ, բայց այդ անտեր հողը չգիտես ինչու միշտ քիչ է լինում իմ գրպանում և կռիվները՝ մի կտոր հողի համար, անպակաս մեր տնից: Այդ և սոցիալ-կենցաղային մի շարք այլ հանգամանքներից դրդված, ի վերջո տուն տարա հինգ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ֆունտանոց գիրքը, դրեցի սեղանիս, մի բարձիկ էլ դրեցի աթոռին, որ նորմալ բարձրությունից կարողանամ նայել էջերն ու սկսեցի կարդալ:

Ինչ ուզում եք ասեք, սակայն մեր մոտ դեռևս լուծված չէ քրեական ծանր հանցանք գործող անձանց պատժաչափի խնդիրը: Ծայրահեղ դեպքում տասնհինգ տարի կամ գնդակահարություն: Գնդակահարություն՝ թրըխկ և վերջ: Հետո՞: Դա եղավ պատի՞ժ: Իմ խորին համոզմամբ, այն դեպքում, երբ գնդակահարությունը ևս չի օգնում, հանցագործին կարելի է պարտադրել կարդալ մեր առնվազն մեկ կիլոգրամանոց վեպերից որևէ մեկը: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչպիսի տպավորություն. հերթական երկարաբեղ հերթապահ միլիցիոները գոչում է. «Ոտքի, դատարանը գալիս է»: Հանդիսավոր քայլերով ներս են մտնում ժողովրդական դատավորն ու ժողովրդական ատենակալները, որոնք, հասկանալի է, մեզ մոտ միանգամայն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դահլիճն առանձնանում է, և խորին լռության մեջ մետաղաձայն հնչում է դատավճիռը. «Հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության… .այսինչ-այսինչ հանցանքների համար, քրեական օրենսգրքի այսինչ-այսինչ հոդվածներով դուք՝ հանցագործ, դատապարտվում եք պատժի առավելագույն չափի… (այստեղ մեղադրյալը թեթևացած շունչ է քաշում, կարծելով, թե գնդակահարությամբ կպրծնի, բայց դատավորը շարունակում է անայլայլ) դատապարտվում եք կարդալու մեր ժամանակակից համբավամեծ գրողներից մեկի նոր լույս տեսած երկու կիլոգրամանոց գիրքը»: Առանց ժամանակ կորցնելու այդ վայրկյանին պետք է նայել մեղադրյալի դեմքին: Նա սաստիկ գունաթափվում է՝ նուրբ-բրդյա գործվածքեղենի-մահուդի կոմբինատից երկու ամիս առաջ դուրս եկած մահուդի նման, երերում ու բռնում է սիրտը:

— Խնայեցեք, կախեք,— մրմնջում է նա ու զարհուրած տապալվում երկարաբեղ հերթապահ միլիցիոների ոտքերի տակ:

Այդ երևակայական թշվառականի նման ես էլ այլևս չէի ուզում ապրել: Ուզում էի մեռնել: Քսանչորսերորդ էջում արդեն խելագարվում էի՝ հեղինակն ասպարեզ էր հանել վաթսունյոթ անուն-ազգանուն: Այդ անուն-ազգանունները, ավելորդ գլխացավանք չպատճառելու համար, խոսում էին նույն ոճով, նույն բառերով և վաթսունյոթն էլ իրենց միտքը վերջացնում էին նույն լավատեսական տրամադրությամբ՝ «Ես լիահույս եմ»: Տասնհինգերորդ էջում վաթսունյոթն էլ անհետանում էին և հրապարակ էին ելնում ութսունչորս նոր անուն-ազգանուններ: Զարմանալի շատ անուններ ունի մեր ազգը և հեղինակը ճարպկորեն օգտվել էր դրանից: Բայց ամենից շատ ինձ ապշեցրեց նրա ստեղծագործական մեթոդը: Նա հերոսներ չէր փնտրում, նրանք պարզապես հանդիպում էին: Իր ընտանիքի բոլոր տասներկու անդամների կենսագրությունը ներկայացնելուց հետո, հեղինակը հեռախոսով զանգ էր տալիս մի քանի հոգու և տեղնուտեղը պատմում նաև նրանց կենսագրությունը: Դուրս գալով միջանցք և նկարագրելով նաև հարևանների կենսագրությունները, իջնում էր սանդուղքով՝ հերթով նկարագրելով մուտքի հարևանների և նրանց ազգական-բարեկամների կենսագրությունները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հարյուր վաթսունյոթերորդ էջում փողոց ելնելով, մինչև նրբանցքից դուրս գալը, պատմում էր բոլոր իրեն բարևած մարդկանց կենսագրությունները և աշխատանքի էր գնում ոչ թե տաքսի ավտոմեքենայով (ստիպված կլիներ բավարարվել միայն վարորդի կենսագրությամբ), այլ վաթսունվեց տեղանոց լեփ-լեցուն ավտոբուսով: Երեք հարյուր քառասունիններորդ էջում...

Կնոջս օգնությամբ գիրքը տեղափոխեցի մահճակալիս վրա: Սողալով մտա գրքի տակ, ծնկներով պահեցի ու երբ վաթսունվեցերորդ ուղևորը հեղինակին ասաց. «Գուցե մենք այլևս չհանդիպենք, բայց ես լիահույս եմ», անգիտակցաբար քնեցի: Մղձավանջային քուն էր: Մեկ տեսնում էի, որ հեղինակը գազազած բռնել է օձիքս, թափահարում է ու գոռում. «Պատմիր կենսագրությունդ»: Մեկ էլ՝ իբր ավտոբուսի վաթսունվեց միանման ուղևորները՝ վարորդի կարգադրությամբ ինձ պառկեցնում էին գերեզմանի փոսի մեջ: Ես ճչում էի, աշխատում դուրս պրծնել նրանց ձեռքերից, երբ մեկ էլ հեղինակը մի մեծ գերեզմանաքար գրկած, բերեց-գցեց ինձ վրա: Գոռացի սարսափից ու վեր թռա… Գիրքն ընկած էր կրծքիս:

Ես խեղճ մարդ չեմ, ուրիշ ժամանակ գրողի ծոցը կուղարկեի գրողին էլ, նրա երկու կիլոգրամանոց թուղթն էլ, բայց հիմա չէի կարող: Ամառ էր, շոգ, մեր բոլոր հարևանները ծովափ էին գնացել, իսկ ես հող, այսինքն՝ փող չունեի: Իսկ կինս ասում էր, «Բա ուրիշները…»: Երբ կինդ ասում է «Բա ուրիշնե՛րը», կամ պետք է կնոջդ սպանես, կամ քեզ, այլ ելք չկա:

Ատամներս կրճտացնելով, հիշելով Կամոյին ու Զոյա Կոսմոդեմյանսկայային, կամքի ուժով ստիպված գրեցի գրախոսությունը և ջղայնությունից այնքան գովեցի գիրքը, որ ով լսեր՝ զզվեր:

Գրեցի ուղիղ յոթանասունհինգ էջ ու տարա վերոհիշյալ հիմնարկի պետին:

Հիմնարկի պետն ինձ տեսնելով այնպես զարմացավ, ինչպես հեքիաթներում թագավորներն են զարմանում, երբ չար պառավի խորհրդով անմահական ջրի ուղարկված փեսացուն մեկ էլ հանկարծ վերադառնում է շիշը թափահարելով:

— Բերեցի՞ր,— մրմնջաց նա:

— Բերեցի,— ասացի ես:

— Հիմա ո՞ւմ տանք գրախոսելու,— հարցրեց նա:

— Ի՞նչը,— հարցրեցի ես:

— Գրախոսականը,— ասաց նա:

— Գրախոսականը գրախոսելո՞ւ,— զարմացա ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սա էլ նոր փորձանք: Ո՞ւմ կարելի է գտնել: Այդ ո՞ր դժբախտն է կարդալու գիրքը՝ գումարած իմ գրախոսությունը: Այդպիսի մարդուն կենդանի-կենդանի պետք է ապակե պահարանում դնես, քորոցով ամրացնես պատին: Եվ, այնուամենայնիվ, հայտնվեց: Ինքն ինչ երազ էր տեսել, չգիտեմ, գուցե նրա կինն է՞լ էր ասել,«Բա ուրիշները…», բայց եկավ: Իսկական գրականագետ :

— Հոգիս,— ասաց նրան հիմնարկի պետը,— պետք է փրկես, բարձր հոնորար կտամ:

— Գրախոսությունն ո՞վ է գրել,— գործնական հետաքրքրվեց գրականագետը:

— Տաճատը,— ասաց հիմնարկի պետը:

— Լավ,— անմիջապես համաձայնեց նա,— կանենք:

«Կանենք»-ը ոճ է: Շատ մարդիկ կան, որ իրենց մասին խոսելիս կամ գրելիս ասում են «մենք»: Դրա համար էլ բոլորովին չանհանգստանալով, իմ ծանոթ գրականագետի նկատմամբ կարեկցության ու չարախնդության խառը զգացումով փողոց դուրս եկա: Դե թող կարդա: Բայց հենց փողոցի անկյունում գրականագետը բռնեց ինձ:

— Տաճատ, — հարցրեց նա, — գիրքն իսկապե՞ս կարդացել ես:

— Իհարկե,— ասացի ես:

— Տաճատ, — ասաց գրականագետը,— մենք հին ընկերներ ենք, դու այն մարդկանցից ես, որին ոչ մի վատություն չեմ արել: Ազնիվ խոսք, չես հավատա, բայց չեմ էլ բամբասել: Արի ինձ վատություն մի արա՝ դու կարդացել ես, հերիք է, ինքդ էլ քո գրախոսության մասին մի գրախոսություն գրիր, բեր՝ ես կստորագրեմ:

— Ինչպե՞ս կարելի է,— վրդովվեցի ես:

— Կարելի է, կարելի է,— հանգստացրեց նա,— հիմա ամեն ինչ կարելի է: Հիմա գրողներից ոմանք իրենք են իրենց գրքերի մասին գրախոսություն գրում և ուրիշի անունով տանում խմբագրությունները, պահանջում, որ տպագրեն: Կարելի է: Իսկ քոնն իսկի գիրք էլ չի, ընդամենը գրախոսություն է:

— Չեմ կարող,— գրպանումս արհիմիութենական անդամատոմսս շոշափելով ասացի ես,— դա անազնվություն է:

— Անազնվություն է, ազնիվ մարդ գտիր,—կտրեց նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ազնիվ մարդ գտիր: Հեշտ է ասելը: Իսկ կինս ասում է. «Բա ուրիշները…»: Իսկ բոլոր հարևաններս ծովափում են... Շան որդի, դրա համար էր ասում. «կանենք»: Ոճ է, բա ի՞նչ է...

Տուն դարձա սաստիկ բարկացած, հանվեցի, մի կողմ դրեցի արհմիութենական գրքույկս ու գրեցի իմ գրախոսության գրախոսականը: Գրեցի հուզված, տենդագին և, ինչպես հարկն է, մի քանի դիտողություններ արեցի ինքս ինձ: Որ օբյեկտիվության հոտ փչի: Կասեն, թե լրիվ գովել է: Այդպես էլ բարկացած, գրախոսությանս գրախոսությունը տարա, հանձնեցի գրականագետին:

— Ստորագրիր ու տար հանձնիր,— նետեցի արհամարհանքով:

Ա՛յ քեզ լկտի մարդ.

— Իսկ որ դու հանձնես, ի՞նչ կլինի,– ասաց ստորագրելուց հետո,— դու գրել ես, դու էլ հանձնիր:

Մի կերպ համոզեցի, ամաչում եմ, բայց նույնիսկ աղերսեցի: Փափկեց, տարավ:

Իսկ մի քանի օր հետո ես գնացի: Հիմնարկի պետը «Ջերմուկ» էր խմում:

— Գիտես ինչ,— ասաց նա,—— գազ չունի: Բայց ի՛նչ գլուխ ունի մեր գրականագետը: Ոնց է գրել: Չկարողացա իոսքիցս դուրս գալ, իսկապես շատ բարձր հոնորար տվեցի:

— Ուրեմն լա՞վ է,— շոյված ինքնասիրությամբ, բայց հոնորարի հիշատակությունից քիչ գունատված հարցրեցի ես:

— Հիանալի է: Վերցրու, ծանոթացիր: Ինչ ասեմ: Իհարկե, ցավալի է, բայց ոչինչ անել չենք կարող: Այնպիսի էական դիտողություններ է արել, որ նման վիճակում ձեր գրախոսականն ընդունել հնարավոր չէ:

Ես դեռ ժպտում էի, հետո միանգամից զգացի, որ կործանվում եմ:

—Ինչպե՞ս թե, իմ գրախոսության գրախոսականը ընդունել եք, իսկ իմ գրախոսությունը... գրախոսականի... գրախոսականը... ես օբյեկտիվության համար...

Ի՞նչ անեմ, ինչպե՞ս ասեմ, որ ես եմ գրել, որ ես եմ ինքս ինձ... Որտե՞ղ գտնեմ նրան... Հիմա ծովափում կլինի, հեղինակի հետ: Իսկ կինս ասում է՝ «Բա ուրիշները... »:

Եվ ո՞վ է տուժում, հա-հա: Այդ գրքի միակ ընթերցողը: Միակ, դժբախտ ընթերցողը: Ընթերցողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄՆԱՑԱԾԸ ԴԱՏԱՐԿ ԲԱՆ Է

Մարդ պիտի բախտ ունենա:

Որ բախտ չունեցար, մնացածը դատարկ բան է: Մեր կադրերի տեսուչ Սահակը երևի հոգեկան խռովքի պահին, իմ աչքի առաջ ամբողջ կես ամսվա աշխատավարձը տվեց և պատմական հուշարձանների պաշտպանության վիճակախաղի հարյուր տոմս գնեց: Ձեռքին մնաց մեկ ռուբլի: Մտածեց-մտածեց, մի տոմս էլ գնեց ու տեղնուտեղը նվիրեց մեր գլխավոր հաշվապահին:

Իհարկե, արդեն կռահում եք, թե ինչ եղավ:

Սահակի հարյուր տոմսերը ոչինչ չշահեցին, իսկ գլխավոր հաշվապահը շահեց «Վոլգա» ավտոմեքենա, որի կարիքը չուներ, որովհետև իր ունեցած «Վոլգան» էլ փողոցում էր կանգնեցնում: Նրա ապերախտ որդին զավթել էր հոր ավտոտնակը և այնտեղ իր «Մերսեդեսն» էր պահում:

Ինչ աներ խեղճ մարդը... ստիպված, ուղղակի հուսահատությունից խեղդվելով, շուկայական գնով վաճառեց շահած «Վոլգան»:

Այնպես որ... մնացածը դատարկ բան է:

Իհարկե, հարյուր տոկոսանոց անբախտ մարդիկ չեն լինում, անբախտությունն էլ իր ոլորտներն ու գոտիներն ունի: Մեկն, օրինակ, կնոջ գծով է անբախտ, մյուսը՝ հիմնարկի պետի գծով, երրորդը՝ նարդու գծով և այլն, և այլն...

Այ հենց այդ «և այլն»-ի մեջ է մտնում իմ անբախտությունը: Ես էլ անբախտ եմ լուսանկարչության գծով: Այսինքն, ես երևի միակ մարդն եմ, որ այս ծեր հողագնդի վրա ոչ մի լուսանկար չունեմ: Ոչ մի: Թեև արդեն քառասուն տարեկան եմ:

Հիմա կհարցնեք, բա անձնագիրը՞:

Կասեմ: Եվ հենց ամեն ինչ սկսվեց այդտեղից:

Ծնվել ու մեծացել եմ լեռնային հեռավոր մի գյուղում, որտեղ անձնագիր գոյություն չուներ, և ուրեմն չկար նաև լուսանկարի կարիք: Երեսուն տարեկան էի, երբ քաղաք եկա, և անձնագրի լուսանկարի համար մտա առաջին իսկ պատահած լուսանկարչատունը: Մի քիչ վախենում էի, հատկապես աչքերիս ընկած լույսից, բայց ամեն ինչ հաջող անցավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մի շաբաթ հետո եկա, որ ստանամ նկարները: Լուսանկարիչը մի մեծ կույտ փայլուն թղթեր հանեց ու մեկ ինձ, մեկ այդ թղթերին նայելով սկսեց փնտրել: Եվ երևի գտավ, որովհետև ինձ մեկնեց, ինչպես ասում են, ոտ ու գլուխ նկարված երկու թերթ: Նայեցի ինձ նայող դեմքերից մեկին, հետո շրջեցի ու նայեցի մյուս կողմից, հետո առանձին-առանձին նայեցի բոլոր այդ ութ դեմքերին ու մրմնջացի:

— Սա ե՞ս եմ:

— Բա ո՞վ է,– հարցրեց լուսանկարիչը:

Չեմ ասի, թե ես չգիտեմ ինչ եմ: Սովորական մարդ եմ: Իսկ այդ նկարի մարդու աչքերը շիլ էին: Մազերն իմն էին, բերանն ու քիթը իմն էին, բայց աչքերը...

— Ընկեր,— ասացի ես, — խնդրում եմ ուշադիր ինձ նայեք: Ես շի՞լ եմ:

— Բա ի՞նչ ես,— ասաց լուսանկարիչը: Վերցրու և տուր իմ երկու ռուբլին:

Հանկարծ զգացի, որ կաթված եմ ստանում...

— Ուրեմն երեսուն տարի շիլ չեմ եղել, հիմա՞ շլացա:

— Ա՛յ ընկեր, դու հո փորձանք չե՞ս,— բարկացավ լուսանկարիչը: Ես ֆոտոգրաֆ եմ, հասկանո՞ւմ ես: Հո յուղաներկով չե՞մ նկարում: Ինչ որ կաս, էն է դուրս գալիս:

— Ուրեմն դուրս է գալիս, որ ես շի՞լ եմ:

— Իհարկե,— ասաց լուսանկարիչը:

— Եթե ես շիլ լինեի, երեսուն տարվա մեջ մեկն ինձ չէ՞ր ասի:

— Գուցե թե խնայել են, ես ի՞նչ իմանամ,— ասաց լուսանկարիչը: Վերցրու քո նկարները և տուր իմ երկու ռուբլին:

— Չեմ տա,— ասացի ես,— սրանք իմ նկարները չեն:

— Քոնն են ու շատ էլ նման են:

— Իմը չեն:

— Երկու ռուբլին...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Չեմ տա...

Լուսանկարիչը հանկարծ վեր թռավ տեղից ու բռնեց ձեռքս:

— Արի գնանք, — ասաց նա սպառնալի:

Չհասցրեցի հարցնել, թե ուր: Նա ինձ գրեթե քարշ տալով փողոց տարավ:

— Ընկերուհի, ընկերուհի, — ձայնեց անցնող մի կնոջ,— խնդրեմ նայեք, այս քաղաքացին շլդիկ չէ՞:

— Ի՛նչ եք անում, պետք չէ,— խնդրեցի ես:

— Հայրիկ, հայրիկ,— ձայն տվեց մի ուրիշ անցորդի, մի րոպե, այս քաղաքացին շլդիկ չէ՞:

— Լավ, լավ,— հանձնվեցի ես,— երկու ռուբլու համար ինձ խայտառակ մի արեք: Շլդիկ եմ, շլդիկ եմ,— բղավեցի ես,— վերցրեք ձեր դրամը, ի սեր աստծո...

— Թե չէ՝ եսի՞մ,— բավարարված ժպտաց լուսանկարիչը:

Անձնագրի համար հորեղբորս նկարը տարա: Այդ օրվանից մինչև այսօր լուսանկարչատուն չեմ մտել և երբեք չեմ անցնում այն մայթով, որտեղ լուսանկարչատուն կա: Վախենում եմ: Ինչ ուզենան՝ կանեն:

Նկարվելու հազար առիթ է եղել: Փախել եմ: Հաստատ համոզված եմ, որ եթե նկարվեմ, աչքերս շիլ են լինելու: Կամ գուցե իսկապե՞ս շիլ են: Չէ, եթե շիլ լինեին, մի՞թե մեկը չէր նկատի: Այսինքն՝ գուցե խնայո՞ւմ են: Է, հիմա ո՞վ է ում խնայում...

Չէ, մարդ պիտի բախտ ունենա: Մնացածը դատարկ բան է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կատակ

Հինգ տարի առաջ Կիսլովոդսկում, արհմիութենական առողջարանում էի: Հենց առաջին օրը ճաշարանում ծանոթացա բարեհամբույր, սրտաբաց մի մարդու հետ:

- Հարավի՞ց եք, - հարցրեց նա՝ ժպտալով նայելով սեւ մազերիս:

- Հարավից եմ:

- Իսկ ես Հյուսիսից եմ, - ասաց նա՝ ժպտալով ցույց տալով իր շեկ մազերը:

- Ուրախ եմ, - ներկայացա ես, - Տիգրան:

- Ուրախ եմ, - ներկայացավ նա, - Միշա:

- Լավ է, - ուրախացա ես, - ընկերություն կանենք այստեղ:

- Չի լինի, - ասաց նա - Ես վաղը մեկնում եմ:

Երկուսս էլ լռեցինք:

Երեւի իմ դեմքին շատ էր տխրությունը, որովհետեւ Միշան փորձեց սփոփել ինձ:

- Ոչինչ, - ասաց նա, - նամակ կգրենք իրար:

Ես զլխով արեցի:

- Դու սունկ սիրո՞ւմ ես, - հարցրեց Միշան:

Սունկը իմ գիտակցության մեջ միշտ թունավորման, շտապօգնության, աղիների լվացման եւ մահվան հետ է կապված, բայց նա այնպիսի զգացմունքով արտասանեց այդ բառը, որ ես փակեցի աչքերս, երանությամբ գլխով արեցի ու հետն էլ հառաչեցի սքանչացած.

- Ա՛խ…

- Ես քեզ սունկ կուղարկեմ, - ոգեւորվեց Միշան: - Մեր տեղերում սունկը, ըհը..., - նա ձեռքով ընդգրկեց ճաշարանը:

- Ի՛նչ նեղություն, - ձեւացնելով, թե հավատում եմ, հրաժարվեցի ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Նեղությո՛ւն, - ծիծաղեց Միշան։ - Սունկը մեզ մոտ ոնց որ… ոնց որ ձեզ մոտ քարը։ Թափված է։ Միայն թե կռացիր։ Անձրեւից հետո ամեն շաբաթ ու կիրակի անտառում ենք։ Հաց-մաց ենք վերցնում, ձկան, խոզի կամ տավարի մսի պահածո, եթե ճարում ենք, ու մտնում ենք անտառ…

- Իսկ ի՞նչ է, տավարի պահածո ձեզ մոտ չկա՞, - հարցրեցի ես, - մեր խանութներում թափված են։

- Ա՛խ, - աչքերը փակած երանությամբ հառաչեց Միշան։

- Ես քեզ կուղարկեմ, - սրտանց ասացի ես։

- Ի՞նչ նեղություն, - ձեւացնելով, թե հավատում է, հրաժարվեց Միշան։

Մի խոսքով, հաջորդ օրը Միշային ես հյուսիս ճանապարհեցի։ Իսկ քսաներեք օր անց, երբ տուն եկա, կինս սեղանին դրեց երկու արկղ։

- Սա ի՞նչ է, - հարցրեցի զարմացած։

- Սունկ, - ասաց կինս։

- Որտեղի՞ց, - ապշեցի ես։

- Հյուսիսից։ Քո անունով է ստացվել։ Ինչ-որ Միխայիլ Լվովիչ…

Մեծ դժվարությամբ հիշեցի։

Այ քեզ Հյուսիս։ Ա՛յ քեզ հիշողություն։ Այ քեզ Միշա։ Հումորի զգացում չունե՞ր, ինչ է… Դրանք ինչ ասում՝ անո՞ւմ են։

Ատիպված ես էլ երկու արկղ պատրաստեցի։ Խոզի մսի պահածո տեղավորեցի դրանց մեջ (պարզվեց, որ տավարի մսինը մեզ մոտ էլ խանութներում թափված չէ), դատարկ մնացած անկյունները լցրեցի ընկույզով, չամիչով…, Մի-մի կտոր էլ բաստուրմա եւ սուջուխ փաթաթեցի, հետն էլ մանրամասն հրահանգ, թե ինչպես պիտի կտրտել ու ինչպես ուտել եւ ուղարկեցի Հյուսիս։

«Պրծանք», - թեթեւացած շունչ քաշեցի ես։

Բայց, ինչպես պարզվեց հետագայում, իմ շունչ քաշելը վաղաժամ էր։ Հոկտեմբերյան հեղափոխության օրը, նոյեմբերի 7-ին մի նոր ծանրոց ստացա։ Հյուսիսից։ Միշան էր ուղարկել եւ հետն էլ մի նամակ։ Նամակի մեջ գրված էր, թե քանի որ երաշտ է եղել այս տարի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դժբախտաբար, սունկ այլեւս ուղարկել չի կարող, բայց խնդրում է մեծ տոնի առթիվ բարեկամաբար ընդունել մի տուփ ֆրանսիական օծանելիք տիկնոջս համար, կաշվե ձեռնոցներ՝ ինձ համար եւ Կուկրինիկսների 18 ռ. ալբոմը՝ որդուս համար:

Շատ հուզվեցի եւ անմիջապես ինձ խանութները նետեցի՝ մսի պահածո գնելու, բայց պարզվեց, որ մեր խանութներում էլ երաշտ է եղել, նույնիսկ խոզի մսի պահածո չկա: Ի՞նչ պետք է անեի, Նոր տարի էր գալիս: Չեխական բյուրեղապակուց մի սքանչելի սափոր ունեինք: Փաթաթեցի, ուղարկեցի:

Փետրվարի 23-ին, Կարմիր բանակի օրվա առթիվ, Միշայից մի հրաշայի ծալովի սեղան ստացա: Եւ անմիջապես, ելք չունենալով, սրտի ցավով նրան ուղարկեցի Վաղարշակ Սարգսյանի փոքրիկ մի կտավը, որ իմ հարստությունն էր: Ուղարկեցի այն հաշվով, որ ստանա Մարտի 8-ին, կանանց միջազգային օրը:

Եւ այն, ինչ ի պատասխան ստացա ապրիլի 1-ին՝ սուտասանների միջազգային օրը, ուղղակի ցնցեց ինձ: Միշան ինձ էր ուղարկել խոհանոցային ֆիննական կահույք, կից նամակում նշելով, որ շատ է ամաչում երաշտի պատճառով:

Ես էլ գրեցի, որ ինքս էլ սոսկալի ամաչում եմ երաշտի պատճառով, դրա համար էլ խնդրում եմ եղբայրաբար, Մայիսի 1-ի առթիվ ընդունել մեր նոր ստացած հունգարական «Վիոլետա» ճաշասենյակի կահույքը:

Ապրիլի 12-ին, Գագարինի պատմական թռիչքի օրը, Միշան մեզ սառնարան ուղարկեց:

Մայիսի 5-ին, մամուլի օրվա առթիվ, ես նրան ուղարկեցի մեր գունավոր հեռուստացույցը:

Մայիսի 9-ին, Հաղթանակի օրը, Միշան մեզ «Պետրոֆ» դաշնամուր ուղարկեց, որն ինչպես երեւում էր, այնքան էլ նոր չէր: Ըստ որում, ասես համաճարակ ընկած լիներ… «ռե» ստեղներից ոչ մեկը չէր աշխատում:

Հունիսի 1-ին, երեխաների պաշտպանության միջազգային օրը ես Հյուսիս ուղարկեցի իմ «Ժիգուլի» ավտոմեքենան, որը դեռեւս մի երկու տարի կաշխատեր, եւ մի քանի օր անց՝ Տանկիստների օրը, ստացա Միշայի «Վիստրել» շարժիչավոր նավակը, որը նա միացրել էր մի հին «Մոսկվիչ» ավտոմեքենայի եւ վերածել ամենագնացի: Ըստ որում, կից գրության մեջ բավականին զգուշությամբ հասկացրել էր, որ գազը շատ չսեղմեմ, թե չէ՝ մեկ էլ տեսար երկնքում հայտնվեցի:

Չերկարացնեմ: Հյուսիս-Հարավ բարեկամություն ընկերության 4-րդ տարեդարձի օրը, երբ Միշայից երկաթե նոր դուռ ստացա՝ հարավսլավական կողպեքով, նայեցի շուրջս, զննեցի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գրպաններս ու համոզվեցի, որ այլեւս ոչինչ չունեմ ուղարկելու Հյուսիսի իմ բարեկամին։ Մի անգամ եւս հայացքս պտտեցրի մեր ունեցվածքի վրա, բայց ոչինչ-ոչինչ ուղարկել հնարավոր չէր, որովհետեւ, ինչ մեր տանը կար՝ Միշայի ուղարկածներն էին։

Ելք չկար։

Ես տեղադրեցի նրա ուղարկած երկաթե դուռը, հարավսլավական կողպեքի բանալին գրպանս դրեցի, բռնեցի չգիտես ինչու ժամանակից շուտ ծերացած կնոջս ձեռքը եւ որդուս ու մեր բարեկամության ընթացքում մեր տանը հայտնված հարսիս ու թոռներիս հետ միասին Անտառի աշխատողի օրը թռանք Չելյաբինսկ։

Միշան ու իր ընտանիքը օդանավակայանում սիրով դիմավորեցին մեզ, իրենց տուն տարան եւ մեզ խնդրեցին զգալ այնպես, ինչպես մեր տանը։

Բայց առանց ասելու էլ մենք հենց այդպես էլ զգում էինք։ Միշայի տան ամբողջ եղած-չեղածը մեր ուղարկածներն էր։

Ինչպես սիրալիր տանտերեր, մենք նրանց եւս տուն հրավիրեցինք։ Սակայն տանը քնելու տեղ չկար։ Ես անմիջապես գրպանիցս հանեցի մեր երեւանյան տան բանալին ու մեկնեցի Միշային։

- Վերցրու, բարեկամ, - ասացի ես։ - Ընդունիր եղբայրաբար Զկնորսների օրվա առթիվ։

Միշան հուզվեց։ Հանքափորների առաջիկա օրվա առթիվ նա ինձ մեկնեց իր տան բանալին եւ ողջ ընտանիքով թռավ երեւան։

Այս տարի առատ են անձրեւները։ Շաբաթ ու կիրակի օրերը ամբողջ ընտանիքով անտառում ենք անցկացնում, սունկ ենք հավաքում, որն ուղղակի թափված է ամենուրեք, ինչպես Հայաստանում քարը։

Վերջերս երկու արկղ սնկի պահածո ուղարկեցի Միշային՝ հողագործների օրվա առթիվ, իսկ երեկ, շախմատիստների միջազգային օրվա առթիվ ստացանք երկու ծանրոց Միշայից։ Հարավցի մեր բարեկամը մեզ էր ուղարկել խոզի մսի պահածո, իսկ դատարկ մնացած տեղերում լցրել էր ընկույզ ու չամիչ։ Բացի այդ նա մի-մի կտոր բաստուրմա եւ սուջուխ էր ուղարկել եւ հետն էլ մանրամասն հրահանգ, թե ինչպես պիտի կտրատել եւ ուտել դրանք։

Ես մանր-մանր կտրատում եմ բաստուրման, ուտում ու մտածում թե տեսնես ինչպես կավարտվի այս պատմությունը, եթե հանկարծ նորից երաշտ լինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մո՞ւկ թե՛ կատու

(Դիսերտացիոն աշխատանքի թեզիսներ)

Մինչև ե՞րբ պետք է տևի այս պատմական անարդարությունը, ասացեք խնդրեմ: Օրինական հարց է ծագում: Ինչո՞ւ շների պաշտպանության ընկերություն գոյություն ունի, ինչո՞ւ բարեսիրտ ու սրտացավ մարդիկ են համարվում կատուների ոհմակներ պահողները: Ինչո՞ւ պաշտոնական լրագրերն անգամ երբեմն-երբեմն հանդես են գալիս նույնիսկ ի պաշտպանություն արյունարբու գայլերի, ինչո՞ւ զանազան նողկալի զեռուններ ու մոծակներ իրենց պատվավոր տեղն են գրավում բնության պաշտպանության կարմիր գրքում, շրջապատվում հոգատարությամբ և ուշադրությամբ, իսկ մկները, մեր մկները, մեր սովորական, տնական, կարելի է ասել ընտանեկան մկները, դուրս են մնում ուշադրությունից:

Եթե խոսքը վերաբերում է բնության ներդաշնակությանն ու համաչափությանը, եթե երկրագնդի վրա գոյություն ունեցող ոչ մի շնչավոր ավելորդ չէ և որևէ խմբի տեսակի ոչնչացումից աղետալի կերպով կխախտվեն կենդանական աշխարհի հավասարակշռությունն ու ներդաշնակությունը, ապա ինչո՞ւ է ամենուրեք կոչ արվում ոչնչացնել մկներին: Մի՞թե մկները ևս նույն աստծո արարածները չեն:

Եթե ավելի անկեղծ լինենք. մուկը մլակի չա՞փ էլ չկա, ինչ է:

Ինձ կարող են հակադրվել, ասել, թե մկներից օգուտ չկա: Չեմ հասկանում. իսկ մոծակի՞ց ինչ օգուտ: Իսկ մողեսի՞ց ինչ օգուտ, կամ ռնգեղջյուրի՞ց ինչ օգուտ: Եվ վերջապես միթե՞ ամեն ինչ կարելի է դիտել օգուտի տեսակետից, մենք հո այն աշխարհում չե՞նք ապրում, որտեղ տիրում է միայն շահը:

Իսկ եթե մի քիչ ավելի խորանանք հարցի մեջ և ինչպես ասում են՝ ձեռքներս մեր խղճին դնենք, ապա պետք է խոստովանենք, որ մկները իրենց ուժերի և համեստ հնարավորությունների չափով բավականին օգնել և օգնում են մարդկությանը: Հենց թեկուզ նրանով, որ մեզ համար պատրաստվող դեղորայքը նախ և առաջ բռերով մկներին են տալիս՝ տեսնեն կապրե՞ն, թե կսատկեն: Եվ նրանով, որ մեզ վիրահատելուց առաջ մկներին են վիրահատում՝ նույն նկատառումներով: Եվ նրանով, որ մեզ երկինք թռցնելուց առաջ մկներին են տիեզերք ուղարկում և ստուգում, թե ինչպես են նրանք դիմանում քաղցի և անկշռելիության պայմաններում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես նորից իմ ընդիմախոսի ձայնն եմ լսում, թե իբր դրանք սպիտակ մկներ են: Եվ արհամարհանքով շրջվում եմ այդ ձայնի կողմը: Իսկ ի՞նչ նշանակություն ունի գույնը: Մուկը մուկ է՛ սև լինի թե սպիտակ: Մենք հո այն աշխարհում չե՞նք ապրում: Գույնը արա՞տ է, ինչ է: Մեր գույնն ի՞նչ է, շա՞տ է սպիտակ:

Ինչպես վերին դատաստանի դիմաց, պետք է խոստովանեմ, որ ես էլ մինչև հիմա մոլորված եմ եղել, ընկել եմ սանլուստան հրատարակած բրոշյուրների ազդեցության տակ և անազնիվ պայքար եմ մղել մկների դեմ: Ոչնչացրել եմ նրանց ինչով կարողացել եմ, որոգայթներ եմ հյուսել, թակարդներ եմ տեղադրել, հալածել եմ ավելով, հատակը մաքրելու փայտով, կոշիկներով՝ հատկապես աջով և ընդհանրապես ձեռքս ընկած ամեն ինչով: Կռվել եմ ինչպես հավասարը հավասարի դեմ, հաշվի չառնելով մեր կշիռների հսկայական տարբերությունը և ակամա հարգանքով եմ լցվել իմ հակառակորդների նկատմամբ: Ինչպե՞ս կարող ես չընդունել այդ փոքրիկ արարածների համառությունը, հաստատակամությունը, բարդ իրավիճակներում խելացիորեն կողմնորոշվելու ունակությունը, որ այնքան պակասում է մեր ֆուտբոլիստներին, նրանց կենսունակությունն ու միշտ վեր, դեպի վեր ձգտելու անզիջում կամքը: Ուշադրություն դարձրե՞լ եք. բազմահարկ շենքում, բնակիչներից շատ առաջ նրանք են նվաճում բոլոր հարկաբաժինները, ամենավերին հարկերն անգամ: Այնինչ ոմանք կարծում են, թե նրանց տեղը ներքնահարկն է:

Սին մտածելակերպ, ինչպես սիրում են ասել իմ հորեղբայր Իշխանն ու Հրանտ Մաթևոսյանի քեռի Իշխանը, որոնք բնականաբար տարբեր մարդիկ են:

Ինչևիցե, հարկ եմ համարում արիաբար խոստովանել, որ մկների դեմ մղված կռվում ի վերջո հաղթանակի դաշտը, այսինքն տվյալ դեպքում մեր խոհանոցը, մկներին մնաց: Ես ոչ առաջինն եմ, և ոչ էլ կարծում եմ, վերջինը: Ով կարողացել է հաղթել մկներին, թող առաջինը քար նետի ինձ վրա, ինչպես գրված է մարդկության առաջին դասագրքում: Ես պարտվեցի, և ահա այդ հարցում է, որ ամաչում եմ, ստիպված, փոքրոգիորեն ինձ օգնության կանչեցի կատվին: Ես՝ այսինքն բնության ամենակատարյալ ստեղծագործությունս, մկների դեմ ծավալած իմ պայքարում դաշնակից ընտրեցի կատվին, և հիմնական մեղավորը իմ մտավորական շրջապատն էր:

- Քեզ միայն կատուն կփրկի,- ասում էր մեկը:

- Իմ առակները կարդա՝ կտեսնես,- գիրքը ձեռքս էր խոթում երկրորդը,- վերջում, բարոյախոսության մեջ, միշտ կատուն է հաղթող դուրս գալիս:- Մկները կատվի հոտը որ առան՝ վերջ,- համոզում էր երրորդը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դե, եթե կատվի հոտն էլ բավական է մկների հերն անիծելու համար, ավելի լավ է ձագ բերել տուն, մտածեցի ես: Ձագին կարգ ու կանոն սովորեցնելը հեշտ է: Դպրոցն ավարտելուց հետո մեր բակում չէի եղել: Հանուն կատվի հինգ հարկ ցած իջա, հասա բակ, մի կատվի ձագ գտա ու ինչպես ենթադրում եք՝ հինգ հարկ ոտքով բարձրանալով բերեցի տուն: Հետո նորից իջա, ծանոթացա ներքևի հարևանների հետ, բահ խնդրեցի, այգուց մի քիչ հող քանդեցի, լցրեցի տոպրակի մեջ ու բերեցի տուն: Հողը լցրեցի «Ադիդաս» ֆիրմայի կոշիկներիս տուփի մեջ ու կատվին էլ դրեցի հողին, որ եթե որևէ բանի կարիք ունենա, հողի վրա անի: Բայց «Ադիդասի» տուփը կատվին դուր չեկավ, և նա առանց դույզն իսկ անհարմար զգալու ինչ որ իրեն պետք էր արեց բազմոցին՝ չինական ծածկոցի վրա: Ես նրան նորից տեղափոխեցի տուփի մեջ, համբերությամբ, բայց բավականին խիստ նախատեցի հակասանիտարական վարքագծի համար, բայց երևի չափն անցել էի, որովհետև կատուն դուրս պրծավ ձեռքիցս ու անհետացավ իմ աշխատասենյակում: Իսկ մինչև որ գտա, իր սև գործը վախից արդեն տեսել էր հենց իմ բազկաթոռի վրա:

Նրա կերակրելու հարցը շատ ավելի բարդ դուրս եկավ: խանութի կաթը չխմեց, ֆոթացրեց արհամարհանքով ու մի կողմ քաշվեց: Հացից ընդհանրապես հրաժարվեց, հրաժարվեց նաև «Զբոսաշրջիկի նախաճաշ» ձկան պահածոյից և չանախ պանրից: Թեթևակի հոտ քաշեց 2 ռ. 90 կոպեկ արժողությամբ դիետիկ երշիկից, ու ես նրա կնճռոտած դեմքից ու դողացող բեղերից հասկացա, որ մտադիր է հացադուլ հայտարարել:

Անկեղծորեն ասած՝ շատ զայրացա: Մենք, որ մարդ ենք, էլի մեզ ստիպելով, չմեռնելու համար ուտում ենք այդ երշիկն ու խմում այդ կաթը, սա իրեն ինչի՞ տեղ է դրել: Ես զայրույթից կատվի վրա շպրտեցի թառափաձկան կտորը, որ մեծ դժվարությամբ ձեռք էի բերել ծանոթ-անծանոթների միջոցով, թանկ գնով, ինձ համար: Եվ ի՞նչ: Մազաչափ իսկ չվիրավորվելով՝ կերավ: Կերավ ու մի տեսակ կատվային նախատիքով ինձ է նայում. թե իբր՝ եթե էսպիսի ուտելիքներ ունես՝ տուր: Ի՞նչ կարող ես անել, մի բան որ սկսել ես, պետք է վերջացնես, մկներն էլ արվեստի նման զոհեր են պահանջում: Մի խոսքով սեղմեցի ատամներս, ձգեցի գոտիս, ծխելը թողեցի, սահմանափակեցի ճաշաբաժին- օրաբաժինս, մեկընդմիշտ հրաժարվեցի ոգելից խմիչքներից և ամբողջ միջոցներս, ուժերս, կապերս, ծանոթներիս, ընթերցողներիս օգտագործեցի կատվի օրավուր աճող պահանջմունքները բավարարելու նպատակին: Ես ինձ զրկեցի ամեն ինչից, այո, ես չանախ պանիր էի ուտում, իսկ կատուն միայն՝ ծակոտիներով շվեյցարական: Ես կիլիկի էի ուտում, կատուն՝ թառափաձուկ: Ես դիետիկ երշիկ էի ուտում, կատուն՝ լենինականյան սերվիլատ: Իսկ մկները, մեր համեստ, ժուժկալ մկները փշրանքներով էին բավարարվում:

Բան չեմ ասում, հա, մկների հոտն իսկապես կտրվեց մեր խոհանոցից: Բայց հիմա էլ ամբողջ տունը կատվի հոտով է լցված: Անիծյալն ագահաբար ուտում էր ընտիր-ընտիր խորտիկները, իսկ մենք ամեն առավոտ մահճակալի տակից, բազմոցի ու բազկաթոռների վրայից,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ամենաանսպասելի ֆանտաստիկ տեղերից, ասենք, կակտուսի ծաղկամանի միջից, պատուհանի գոգից, ստերիո-մագնիտոֆոնի ռեպրոդուկտորի ետևից, փակ գրապահարանի միջից կատվի աղբն էինք հավաքում, որից փաստորեն շան հոտ էր գալիս: Այսինքն՝ ափսոս չէ՞ շունը: Հենց կատվի հոտ էր գալիս:

Հոտը դեռ մի կողմ: Կատուն երկու ամսում շարքից հանեց մեր հարավսլավական կահկարասին, որ հինգ թոռնիկ միասին չէին կարող անել: Ճանկռտեց, խզբզեց, փչացրեց կահույքիս ողորկ կողերը, քրքրեց պաստառները, ծվեն-ծվեն արեց վարագույրները, ծածկոցները, պատռեց, դուրս թափեց բարձի փետուրները:

Մի խոսքով իմ ամենամոտավոր հաշվումներով, երեք հարյուր մուկ այնքան վնաս չէին կարող հասցնել մեզ, որքան այդ մի չարաբաստիկ կատուն:

Ու ես խորին համոզմունքով ձեռքս վերցնելով գրիչը՝ տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար իբրև դիսերտացիայի թեմա ներկայացնում եմ «Մո՞ւկ, թե՛ կատու» իմ ապագա աշխատանքի թեզիսները:

Այո, մո՞ւկ թե կատու: Այս է խնդիրը: Ավելի ձեռնտու է մո՞ւկ պահել տանը, թե կատու:

Թեև ինձ համար հարցական չկա: Ես գերադասում եմ մուկը և համոզված եմ, որ ինձ հետ թեկուզ ներքուստ, բայց լիովին համաձայն են հանրապետության սանիտարական մարմինները: Ես կարծում եմ, որ նրանց գաղտնի համակրանքը ևս մկների կողմն է, որովհետև ենթարկվելով բռնի որոշումների, նրանք ձևացնում են, թե իբր կատաղի պայքար են մղում մկների դեմ, այնինչ իրականում, ինչպես ժողովուրդն է ասում՝ մատը մատին էլ չեն խփում:

Հանուն մկների զարգացման ու բարգավաճման: Հանուն պատմական արդարության: Հանուն կենդանական աշխարհի ճիշտ հաշվեկշռի ու ներդաշնակության:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանկության համը

Մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Ու պատահական չէ, որ մարդիկ հյուրասիրության ժամանակ առաջինը նկատում եվ ընտրում են այն կերակուրները, որ ծանոթ են իրենց մանկուց:

Մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Խղճի դեմ չգնամ, իմ կինն էլ է հիանալի ճաշեր եփում: Մի անգամ առողջարանում ինձ բուժող բժշկուհին նույնիսկ երկար զրույց ունեցավ նրա հետ:

- Եթե ուզում եք, որ ձեր ամուսինը նիհարի եվ առողջ մնա, -ասաց նա,-անհամ ճաշեր եփեք:

- Ի՞նչպես թե անհամ,- զարմացավ կինս:

- Անհամ, անհամ,- հաստատեց բժշկուհին,- սա այն դեպքն է, որ ինչքան վատ, այնքան լավ: Այդ թեմայով նույնիսկ հետաքրքիր դիսերտացիա կա:

Սակայն այդ հետաքրքիր դիսերտացիան չօգնեց մեզ: Ինչ արեց-չարեց խեղճ կինս չկարողացավ անհամ ճաշեր եփել: Եվ նա մեղավոր չէր: Այլ կերպ ինչպե՞ս կլիներ: Այդ նույնն է, թե անհամ կերակուր եփողին խորհուրդ տաս, թե այսուհետեվ համով եփիր:

Եվ այնուամենայնիվ կնոջս խոհանոցում կար մի ճաշատեսակ, որը չէր ստացվում: Խոսքս վերաբերում է տապակած կանաչ լոբուն: Զարմանալի բան է, շատ ավելի բարդ կերակուրներ հոյակապ ստացվում էին: Ասենք՛ տոլման, Էջմիածնի բոզբաշը կամ կճուճով չանախը: Իսկ լոբին չէր ստացվում:

- Մի նեղանա, Գոհար,- ափսեն մեղմորեն մի կողմ հրելով, ասում էի ես,-բայց այն չէ:

- Ախր ի՞նչը այն չէ,- վշտանում էր Գոհարը:- Ի՞նչը այն չէ՞:

Չգիտեմ,- ասում էի ես,- բայց մայրս այս ճաշը ուրիշ տեսակ էր եփում:

- Ինչ տեսակ, ասա, ես էլ փորձեմ,- համառում էր Գոհարը:

- Չգիտեմ,- ասում էի ես:-Չգիտեմ, Գոհար: Բայց նրա տապակած լոբին ուրիշ համ ուներ: Մի տեսակ...Մի խոսքով, բացատրել չեմ կարող:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մի քանի օր անց Գոհարը նորից տապակած կանաչ լոբի դրեց սեղանին: Ես տարակուսանքով նայեցի նրան: Սակայն կնոջս դեմքին խորհրդավոր ժպիտ կար:

- Փորձիր, փորձիր,- ասաց նա,- բոլոր խոհանոցային գրքերը կարդացել եմ: Հարցրել եմ լավագույն խոհարարներին: Ինչ մեղքս թաքցնեմ, նույնիսկ տիկին Թագուհուն էլ եմ հրավիրել ու նրա խորհուրդներով եմ պատրաստել: Սրանից լավ տապակած լոբի աշխարհում չի կարող լինել:

Ես փորձեցի աշխարհի այդ ամենալավ տապակած լոբին եվ ամաչելով ափսեն կրկին ետ հրեցի:

- Ուզո՞ւմ ես կեղծեմ,- ասացի ես:- Ի՞նչ ես ուզում՝ կեղծե՞մ: Չի ստացվում, էլի Գոհար ջան, չի ստացվում: Ախր սա բոլորովին ուրիշ բան է: Սա իմ մոր սարքած կանաչ լոբին չէ:

Գոհարը գոգնոցը աչքերին տարավ ու վազեց խոհանոց՝ մի կուշտ լաց լինելու: Իհարկե հիմար բան է ստացվում: Իհարե, տանջում է խիղճս: Բայց ես ի՞նչ անեմ: Ու խղճահարությունից բացի, մի ուրիշ զգացում էլ է պարուրում ինձ: Դե, եթե չես կարողանում, մի եփիր, ո՞վ է քեզ ստիպում: Եթե դուք չեք կարողանում գոնե այնպես պատրաստել ճաշը, ինչպես մեր տառապած մայրերն էին անում պատերազմի ու սովի ծանր տարիներին, մթերքների բացարձակ պակասության պայմաններում, ուրեմն մի արեք, էլի: Սա՞ ինչ նոր մրցություն է:

Դրանից հետո երկար ժամանակ մեր սեղանին տապակած կանաչ լոբի չէր երեւում:

Մինչեվ երեկ:

Երեկ ես աշխատանքից տուն եկա անասելի քաղցած: Ժամանակ չէի ունեցել հիմնարկում նախաճաշելու: Հակառակի նման էլ Գոհարը դպրոց էր գնացել՝ ծնողական ժողովի, եվ ես սարսափով տեսա, որ ճաշի սեղանը պատրաստ չէ: Խոհանոցում հին սովորությամբ ծնգծնգացնելով բացեցի բոլոր կաթսաների կափարիչները, բայց ամեն տեղ միայն, ինչպես ընդունված է հիմա ասել կիսաֆաբրիկատներ էին: Պատրաստի ճաշ չկար: Վերջին հույսս մնացել էր թավան: Բարձրացրի կափարիչը ու սրտնեղությամբ փակեցի անմիջապես: Տապակած կանաչ լոբի էր:

Ճիշտ է ասել Լոնգֆելլոն. «Կնոջ համառությունը միայն ծովահենի համառության հետ կարելի է համեմատել»:

Բայց ես շատ էի քաղցած, ի՞նչ կարող էի անել: Մի քանի անգամ խոհանոցում արագ-արագ այս ու այն կողմ գնալուց հետո, կրկին մոտեցա թավային, սրտնեղած բարձրացրի կափարիչը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ու հենց թավայից պատառաքաղով մի քիչ լոբի վերցրի: Եվ անմիջապես էլ զգացի, որ սա հենց այն է, որ կա: Մորս եփած ճաշի հոտն եկավ:

Հաջորդ վայրկյանին բերնեբերան լցրել էի ափսեն եվ ուտում էի վայելքով, հափշտակված, յուրաքանչյուր գդալի հետ խանդաղանդանքով լցվելով Գոհարի նկատմամբ: Այնուամենայնիվ որքան պատվախնդիր տանտիրուհի է, ո՞վ գիտե ինչքան է փորձել, մինչև որ կարողացել է հասնել այս մակարդակին, պատրաստել ճիշտ մայրիկիս նման, մայրիկիս դեղատոմսով:

Ես դեռ շարունակում էի ուտել, երբ դռան չխկոց լսվեց ու միջանցքում հնչեց Գոհարի ոտնաձայնը:

- Շնորհակալություն, Գոհար,-բղավեցի ես: Այ, իմ ուզածը հենց սա էր, էլի: Լոբին այս տեսակ պետք է լինի:

- Այսինքն ինչպե՞ս,- խոհանոց մտնելով հարցրեց Գոհարը:

- Հենց այսպես,- ասացի ես,- հենց այսպես, վերջապես իմ մանկության օրերի համն առա, Գոհար: Մայրս հենց այսպես էր տապակում կանաչ լոբին:

- Գոհարը սկզբում ինձ նայեց զարմացած, կարծես թե ուզեց ծիծաղել, բայց չծիծաղեց ու մեկ էլ տեսա, որ նրա աչքերում արցունքներ են հայտնվել:

- Այդ ո՞նց ես կարողացել ուտել,- ասաց նա կամացուկ, խղճահարությամբ: - Քոռանամ ես... Ախր յուղը դեռ չեմ գցել... Ուշանում էի...

- Հա, այդպես էր... Եվ այնուամենայնիվ, ինչ ուզում եք ասեք՝ մոր եփած ճաշից համով բան աշխարհում չկա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զրույց նարդու սեղանի շուրջը

Նախքան ձեռքը զանգի կոճակին տանելը, Սարգիս Նաղդյանը երկար ժամանակ կանգնած էր երրորդ հարկի աստիճանավանդակում, և զանազան կետերից դիտում էր երկաթապատ դռան վրայի բրոնզե տախտակիկը, որի վրա սև տառերով գրված էր՝ «Մ. Կ. Քոչարյան»:

«Զարմանալի բան է, — հուզված մտածում էր Սարգիս Նաղդյանը,— ուրիշի համար սա երևի շատ հասարակ անուն է, չէ՞. «Մ. Կ. Քոչարյան»: Դրա մեջ ի՞նչ կա: Բայց երբ ես եմ կարդում, մարմնովս դող է անցնում: Հա, իհարկե,— հեգնանքով ժպտաց Սարգիս Նաղդյանը,— որովհետև այդ ուրիշը միայն կարդում է: Իսկ ես այդ սև տառերի ետևում տեսնում եմ իրեն Մարկ Կարպիչ Քոչարյանին:

Աստիճանավանդակում երեք դուռ կար: Երեք դռան առջև էլ միատեսակ փալասներ: Սարգիս Նաղդյանը մտածեց, որ իր համար դատարկ բան է մյուս երկու դռների զանգի կոճակները սեղմելը: Իրանց տեսեք՝ ովքեր են որ: Ինչ որ «Ա.Ն. Բալյան» և ինչ որ «Ն. Պ. Սուքիասյան»: Ուզենա ձեռքով էլ կթակի դուռը: Բայց այս մյուսը. «Մ. Կ. Քոչարյան»: Ինչ էլ սև տառեր են: Նա նունիսկ բարկացավ իր խեղճության վրա, քայլեց, քայլեց ու ջղայնացած կոշիկները սրբեց այն մյուս երկու դռների առջև գցած փալասների վրա: Ու նորից նայեց երկաթապատ դռանը:

«Լավ, ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել,— սրտնեղած ասաց նա,— սովորական մի բան: Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Լավ է անում: Նրա տեղը մեկին պե՞տք է նշանակել: Իհարկե: Իսկ ի՞նչ կլինի, եթե ինձ նշանակեն: Ոչինչ էլ չի լինի: Այսինքն՝ իրենց համար ոչինչ էլ չի լինի, իսկ ինձ համար հոյակապ կլինի: Պարզապես՝ հոյակապ: Հիմա հարկավոր է սեղմել այս անիծյալ երկաթապատ դռան զանգի կոճակը, ներս մտնել, կոնյակի այս հինգ շիշը դնել անկյունում, բայց այնպիսի մի տեղ, որ Մարկ Կարպիչը միշտ տեսնի, խոսել դեսից-դենից և իմիջիայլոց Մարկ Կարպիչին հիշեցնել, որ Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Այդքան բան » :

Նա լցվեց վճռականությամբ, նույնիսկ խստացավ դեմքը, կտրուկ շարժումով բարձրացրեց ձեռքն ու մոտեցրեց զանգի կոճակին: Նրան թվում էր, թե հիմա ուր որ է էլեկտրական հոսանքը կխփի իրեն, բայց դրա փոխարեն դռան ետևում կլանչոց լսվեց:

— Ես եմ, Սաքոն,— բարակ ձայնով ներկայացավ Սարգիս Նաղդյանը:

Սկզբում նրան շատ կասկածամտորեն դիտեցին երկաթապատ դռան ապակե ուռուցիկ աչքից: Հետո ներսում մի ինչ-որ ուրիշ դուռ բացվեց: Հետո երկար ժամանակ ինչ-որ երկաթներ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

էին չխկչխկում ու զնգզնգում: Հետո երկաթապատ դուռը կիսաբաց եղավ ամուր զնգացնելով երկաթե շղթան և կիսաբաց դռնից երևաց տիեզերագնացի նման գլխին երկաթե կեռեր ու անտենաներ ունեցող պառավ մի կին:

«Ջոքանչն է»,— անսխալ կռահեց Սարգիս Նաղդյանը և կոնյակի շշերը անձնագրի նման առաջ պարզած մտավ լայն հյուրասրահը:

Մարկ Կարպիչը խոր բազկաթոռից համակրանքով նայեց նրան:

— Բարև ձեզ, Մարկ Կարպիչ,— լայն ժպիտով ասաց Սարգիս Նաղդյանը:

— Ա՛, Սաքո, արի, արի: Այ տղա, չե՞ս ամաչում, էդ ձեռքինդ ի՞նչ է,— գլուխը համակրանքով օրորելով հարցրեց Մարկ Կարպիչը:

— Ըը՛, կոնյակ է, Մարկ Կարպիչ, երեխաների համար, ըը՛ , շատ չեմ բերել, Մարկ Կարպիչ, ընդամենը հինգ շիշ է, մարոչնի...

— Ո՛ւ, ավազակ,— սիրալիր քմծիծաղով ասաց տանտերը,— դիր այդտեղ: Բայց մյուս անգամ... Դե, մոտ եկ, մոտ եկ՝ տեսնեմ ինչ ես ասում:

— Ըը՛, ոչինչ, ես այստեղից կասեմ... ոտքերս…

— Ոչինչ, առանց ոտքերի արի…— խնդմնդաց Մարկ Կարպիչը,— շատերն առանց գլխի են գալիս…

Սարգիս Նաղդյանը սրտանց ծիծաղեց հիմնարկի պետի սրամտության վրա և այնուամենայնիվ հրաժարվեց մոտենալ:

— Ես ձեզ միայն մի րոպե կզբաղեցնեմ... Կներեք, Մարկ Կարպիչ, բայց երևի դուք արդեն գիտեք, որ Սողոմոն Դրաստամատիչը թոշակի է անցնում: Պատահաբար մտածեցի, թե...

— Նարդի խաղալ գիտե՞ս, այ տղա,— հարցրեց Մարկ Կարպիչը:

— Ի՞նչ,— զարմացավ Սարգիսը,— դե, այսինքն, հա, այսինքն՝ դուք ոնց որ կուզեք: Ասում էի՝ Սողոմոն Դրաստամատիչը...

— Դե մի էն նարդին բեր: Ա՛յ տղա, կարի մեքենան չեմ ասում,— ծիծաղեց Մարկ Կարպիչը: Նարդին, նարդին:

— Բերեցի, բերեցի,— օրորոցի նման զգուշորեն նարդին բռնած մոտեցավ Սարգիս Նաղդյանը: Ուրեմն Սողոմոն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Երկա՞ր, թե կարճ,— հարցրեց Մարկ Կարպիչը:

— Կարճ կասեմ, կարճ կասեմ: Ուրեմն...

— Այ տղա, ասում եմ, երկա՞ր ես խաղում, թե կարճ…

— Ախ, հա՛, ինչպես ուզում եք,— տխուր ձայնով ասաց Սարգիս Նաղդյանը:

— Քեզ հետ կարճը կսազի...— վճռեց հիմնարկի պետը: — Դե գցիր, ես գցեցի ջհար: Դո՞ւ ինչ բերեցիր, լավ չեմ տեսնում: Փա՞նջ է:

— Իսկ դուք ո՞րն եք ուզում: Ախ, հա, սե է:

— Թե չէ՝ ինձ թվաց փանջ է: Ջութ սե,— բղավեց Մարկ Կարպիչը,— այսպես...

— Այո, այսպես,— սրտապնդվեց Նաղդյանը: ուրեմն Սողո...

— Իքի բիրդ խաղա,— զգուշացրեց հիմնարկի պետը:

— Է՛, էլ խաղալու բա՞ն թողեցիք,— թույլ-թույլ ծիծաղեց Նաղդյանը: Բոլորը խառնվել են իրար: Էն մեր տեղկոմի կեղտոտ… փանջ ու ջհար… նախագահն էլ...

— Հափ եկ, ի՞նչ էր ասում:

— Ասում էր… դու շեշ...

— Ի՞նչ...

— Չէ, չէ, ձեզ չէր ասում… Ասում էր Սողոմոն Դրաստա…

— Այ տղա, ինչի՞ չես կտրում…

— Ե՞ս կտրեմ,— անհանգստացավ Սարգիս Նաղդյանը, զգալով, որ ողջ խաղը, այսինքն՝ Սողոմոն Դրաստամատիչի պաշտոնը, ձեռքից թռչում է: Դուք կտրեք, էլի... էնպես կտրեք, որ Սողոմոն Դրաստամա...

— Շեշ ու եկ…

— …տիչի փոխարեն...

— Ի՞նչ տիչի: Գյալա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

— Սողոմոն Դրաստամատիչի…

— Ի՞նչ է, ուզում ես նրա տեղը… դո՞ւ բարա…

— Հա, հա, ես բարա, — շտապով ասաց Սարգիս Նաղդյանը: Այսինքն՝ որ ես…իքի բիր…

— Ախ, թե մի շեշ ու սե,— կատաղությամբ նետեց Մարկ Կարպիչը:

Ջառերը շրխկոցով ընկան հատակին ու կորան:

— Այ տղա, Սաքո, մի տես գետնին ինչ է,— շրթունքները սեղմելով հարցրեց Մարկ Կարպիչը:

— Իսկ դուք ի՞նչ եք ուզում,— սեղանի տակից ճաղատ գլուխը դուրս հանած տեղեկացավ Սարգիս Նաղդյանը: Չէ, չէ, ի՞նչ եք ուզում:

— Մի տես բե՞շ չի:

— Բեշ է, բեշ է…

— Թյու,— վշտացավ Մարկ Կարպիչը: Գյալա է:

— Շեշ է, շեշ է,— հուսահատ աղաղակեց Սարգիս Նաղդյանը:

Խաղը շարունակվեց: Տարաբախտ զառերը շրխկոցով այս ու այն կողմ էին նետվում, մեկ մոտեցնելով, մեկ էլ տանել-հեռացնելով անիծյալ Սողոմոն Դրաստամատիչի անիծյալ պաշտոնը:

— Այ տղա, շա՞տ պիտի այդտեղ նստես, ինչո՞ւ դուրս չես գալիս,— զարմացավ Մարկ Կարպիչը:

— Հա էլի, ցավդ տանեմ, ես էլ այդ եմ ասում,— աշխուժացավ Սարգիսը ,- ասում եմ դուրս գամ ու Սողոմոն Դրաստամատիչի…

— Քարերդ, քաքերդ, ինչո՞ւ դուրս չես գալիս…

— Քարե՞րս…Ուզում եք դո՞ւրս գամ,— մրմնջաց դժբախտ ենթական,— ըհը, դու շեշ:

— Դու շե՞շ: Որտեղի՞ց բերեցիր, այ տղա: Հենց ինձ է, որ զույգ չի գալիս… Ինչ բախտ ունես…

«Չի լինի՞ բախտներս փոխենք,— մտքում համարձակ չարախնդաց Սարգիս Նաղդյանը: Դե փոխենք, է՛: Իմ զառի բախտը քեզ, քո անձնական բախտն ինձ: Հը՞»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց բարձրաձայն ասաց կերկերուն ձայնով,

— Այ, էստեղից բերեցի… էսպես գցեցի… Թյու, դու բեշ…

— Յա, այ տղա, բռնո՞ւմ ես, հո խաղամոլ չե՞ս: Դրա համա՞ր ես աշխատանքից ուշանում, հա՞: Գիշերները խաղում ես, ցերեկները աշխատանքի ժամանակ քնում, հա՞:

Ամեն մի «հա»-ի հետ Սարգիս Նաղդյանը ցնցվում էր սարսափից մտքում անիծելով այս նարդին էլ, զառերն էլ, Սողոմոն Դրաստամատիչին էլ, իր բախտն էլ:

Եվ հեռախոսի զանգը նրան փրկության աղաղակ թվաց:

Մինչ Մարկ Կարպիչը խոսում էր հեռախոսով, Սարգիս Նաղդյանը հասցրեց հանել նրա խաղաքարերի գրեթե կեսը: «Լավ, այս ապաշնորհը ոչ մի քար դուրս չէ՞ր եկել, ինչ է»— արդար զայրույթով հարցնում էր ինքն իրեն, նորանոր քարեր հանելով: Հանգստացավ միայն այն ժամանակ, երբ հիմնարկի պետի անկյունում քարերի թիվը դարձավ երկու: Ինքը չորս քար ուներ: Մարկ Կարպիչը վերադարձավ սեղանի մոտ՝ հեռախոսային զրույցից ավելի բարկացած ու գրգռված: Բայց խաղատախտակին մի հայացք նետելուց հետո խաղաղվեց:

— Ավազակ, ավազա՛կ,— համակրանքով ասաց նա: Դե գցիր տեսնենք, զառդ ինչ է ասում:

— Զառս ինչ պետք է ասի,— նվիրված աչքերով պետին նայելով, սրտապնդված շտապ-շտապ ասաց Սարգիս Նաղդյանը: — Այ, ես ասում էի, քանի որ Սողոմոն Դրաստամատիչը աշխատանքից դուրս է գալիս, ինձ նշանակեք նրա տեղը: Ի՞նչ կլինի…

— Զառից կերևա,— բարեհոգաբար գլխով արեց պետը:

— Չեմ գցի, — մանկական կամակորությամբ հրաժարվեց Սարգիսը: Չեմ գցի, հանձնվում եմ, հանձնվում եմ, Մարկ Կարպիչ:

— Չես գցի, չես տեսնի,— ասաց պետը:

«Տեր աստված,— վայրկյանապես հավատացյալ դառնալով մտքում աղաղակեց Սարգիս Նաղդյանը,— հանկարծ զույգ չտաս, հա՞: Զույգ չտաս, հա՞»,— կրկնեց նա՝ վախենալով, թե հանկարծ աստված կարող է լավ չլսել:

— Դե գցիր – անհամբերությամբ գոչեց Մարկ Կարպիչը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Սարգիս Նաղդյանը նետեց զառերը: Զառերը ցատկոտեցին, գլորվեցին տախտակի վրայով և երբ կանգ առան, Սարգիսը դեռևս դեպի վեր, աստծուն էր նայում: Հետո հայացքը գցեց զառերին բարձրացավ տեղից, օրորվեց ու մրմնջաց.

—Ի՞նչ, դու շե՞շ: Սուտ է, սուտ է, իհարկե, սուտ է… դու շեշ չէ… ուռա, այսօր ապրիլի մեկն է: Նա կեղծ ուրախությամբ նայեց Մարկ Կարպիչի աչքերին և նրանց սառը փայլի մեջ կարդաց իր հույսերի կործանումը: Ուրեմն՝ թռավ, ամեն ինչ թռավ… Սողոմոն Դրաստամատիչի պաշտոնը, հինգ շիշ կոնյակը…—Չէ, չէ,— մրմնջաց նա,— Ի՞նչ դու շեշ: Սա ի՞նչ դու շեշ է… Ըհը, տե՞ս, իքի բիր, ըհը՝ ջհար ու եկ, ըհը՝ սե բայ դու, ըհը՝ լուր-դա-լուր…ըհը, էս ինչ շոգ է, ինչո՞ւ են ծառերը ծաղկել… էս ինչո՞ւ են բոլորը վերարկու հագել… Գլուխս, գլուխս… Անուշ, հե՛յ Անուշ, դո՛ւ հասցրեք, դո՛ւ…

Երբ Սարգիս Նաղդյանի բազմաչարչար մարմինը վերջնականապես փռվեց աթոռի վրա, Մարկ Կարպիչը հուզված բարձրացավ տեղից և մոտեցավ հեռախոսին:

— Այո, այո, շտապօգնությո՞ւնն է,— բղավեց նա,— ալո, շտապօգնությո՛ւն, Եփրեմ ջան, դո՞ւ ես, հա՛, ես եմ: Վաղը քրոջդ տղային ինձ մոտ ուղարկիր, մի տեղ էլ բացվեց: Հը՞: Հա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իմ շրջապատը

-Հայրի՛կ,- ասաց տղաս,- հեռախոսային կցասարք են վաճառում, առնենք, էլի:

- Առնենք, ի՞նչ անենք,- ասացի:

- Վեց թիվ հավաքելու փոխարեն մի կոճակ ես սեղմելու,- ասաց տղաս,- և՛ ժամանակի խնայողություն է, և՛ էներգիայի: Իսկ հիմա գիտես, չէ՞, թե ինչ ուշադրություն է դարձվում խնայողության հարցերին:

- Իսկ իմ աշխատավարձի խնայողության հարցերը քեզ չե՞ն հետաքրքրում,- հեգնեցի ես:

- Հայրի՛կ,- թեթև նախատինքով ձայնեց տղաս, և բոլոր հարցերը լուծվեցին:

Մարդ ինչ ուզում է թող լինի, միայն թե սեփական երեխաների աչքին ժլատ չերևա:

- Իսկ քանի՞ հոգու հետ կարող եմ խոսել այդ սարքով,- հարցրեցի ես:

- Քսան,- ասաց տղաս:

- Որքա՞ն:

- Քսան:

- Ա՛յ տղա,- ուղղակի քրքջացի ես,- դու իմ շրջապատին ծանոթ չե՞ս: Դու չգիտե՞ս, որ ես հարյուրավոր, եթե չասեմ հազարավոր հարազատներ, ազգականներ ու ընկերներ ունեմ, էլ չեմ խոսում իմ միլիոնավոր ընթերցողների մասին,- համեստորեն ավելացրի ես:

- Դե նրանց հետ քո գրքերով և հեռուստատեսությամբ հիանալի խոսում ես, էլի,- շոյեց ինձ տղաս:

Շողոքորթությունը ամենանողկալի բանն է, բայց շատ է դուրեկան:

Ես հանձնվեցի: Էլեկտրոնիկա-84-ը մտավ մեր տուն: Տղաս անմիջապես այն կցեց հեռախոսին, թուղթն ու գրիչը ձեռքը վերցրեց ու հարցրեց.

- Ուրեմն՝ սկսում ենք: Առաջինն ո՞ւմ ենք գրում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եղբորս, ո՞ւմ,- առանց մտածելու ասացի ես:

Գրեց:

- Երկրորդը գրիր քրոջս,- ասացի անհոգ, թեև հետն էլ տենդորեն մտածում էի, թե որն է քրոջս հեռախոսի համարը... ու այդպես էլ չհիշեցի:

- Երրորդը...

- Երրորդը գրիր Խորենին... Չէ՛, ավելի շուտ Վարդգեսին... թեև ինչքան հիշում եմ՝ Վարդգեսի համարը պետք է փոխված լինի...

- Հինգերորդը...

- Հինգերորդը... - մտածեցի ես,- հինգերորդը... Գուցե Գևորգին գրենք, հը՞...

- Գրենք,- ասաց տղաս:

Իհարկե, սխալ է սարքի այդ սուղ հնարավորությունների մեջ Գևորգի անունը գրելը: Որով-հետև ես նրան զանգ եմ տալիս շաբաթը և նույնիսկ ամիսը մեկ: Իսկ ամիսը մեկ կարելի է վեց թիվ էլ հավաքել: Ձեռքերս չեն կոտրվի: Բայց ի՞նչ արած՝ ոչինչ, թող գրի:

Վեցերորդ, յոթերորդ և ութերորդ կետերի տերերին գտնելու համար պահանջվեց երկու ժամ: Պարզվեց, որ այնքան էլ հեշտ չէ գտնել այնպիսի ընկերներ, որոնք հացի կամ ջրի նման պետք են քեզ: Իսկ թե դու ես նրանց պետք, թող նրանք էլեկտրոնիկա-84 գնեն ու մտածեն քո անունը գրելու մասին: Դո՞ւ ինչու պիտի գրես:

Մի խոսքով՝ իններորդ կետի համար ոչ մի թեկնածու չգտա: Տղաս ինչ-որ անուններ էր տալիս, բայց ես գլուխս էր թափահարում: Չեն բռնում: Մեկը կա, բայց հենց զանգ եմ տալիս, ինչ որ բան է ուզում ինձնից... Մեկն էլ կա, լսափողը վերցրեց թե չէ՝ իր պետից է բողոքում արդեն երեսուն տարի... Մեկն էլ կա, որ իսկի չեմ էլ ուզում զանգ տալ...

- Վե՛րջ,- ասացի ես հոգնած:

- Հայրի՞կ,- չգիտես կարեկցանքով, թե հեգնանքով հարցրեց տղաս,- ո՞նց թե վերջ: Բա քո շրջապատը... ընկերները... բա միլիոնավոր...

Ես նրան նայեցի խեղճացած:

- Տեսա՞ր, որ ես էլ մնացի զարմացած,- անկեղծությամբ ասացի ես,- բայց մտածում եմ... ամենամտերիմ... ամեն օրվա համար... Ուրեմն էլ չկան... Դժվար է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տղաս ծիծաղեց.

- Ի՞նչն է դժվար, ուզո՞ւմ ես մնացած կետերում մի րոպեում իմ ընկերների անունները գրեմ: Հա՞: Լևոն, Կարեն, Արմեն, Աշոտ, Վաղարշակ, Գագիկ... Ափսոս կետերը վերջանում են, իսկ ես դեռ ինչքա՜ն ընկերներ ունեմ...

Ես նրան նայեցի չգիտեմ կարեկցանքով, թե հեգնորեն.

- Երբ իմ տարիքին հասնես և քո տղան քեզ համար էլեկտրոնիկա-2014 գնի, կհիշես ինձ: Մենք դեռ ոչինչ, փա՜ռք աստծո: Մի կերպ պահեցինք մեր ընկերությունը: Տեսար, չէ՞, մինչև հինգը հասցրեցի: Իսկ երբ դու քո ընկերների անունները գրես՝ այն ժամանակ կտեսնես:

- Կապրենք՝ կտեսնենք,- վստահ ծիծաղեց տղաս:

- Կտեսնենք,- անվստահ ասացի ես:

1984թ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Քալանթարյան Ա. Փ.

Ք 141 Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները

Տարբեր են «Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները» ժողովածուի պատմվածքների ստեղծման տարեթվերը, իրադարձությունների ժամանակներն ու վայրերը, բազմազան են բարձրացվող խնդիրները, սակայն այդ բոլոր ստեղծագործությունների համար ընդհանուր է մարդու հոգեկան աշխարհի քննությունը դժվարին ու բախտորոշ իրավիճակներում:

Մարդը նիայնակ ու միայն իր համար չպետք է ապրի: Սա է ժողովածուի հիմնական գաղափարը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org